

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» հրատարակչություն  
2023





Վարդապետ  
Գրիգոր Եղիշ

Ա Հ Ա Զ Ա Ւ Գ  
Պ Ա Հ Ա Ն Զ

ՀԱՅ ԿՅԱՆՔԻ  
զ զ ա ս տ ն ւ թ յ ա ն  
վ ե ր ա ճ ա ն ա չ մ ա ն  
վ ե ր ա հ ա ս տ ա ն մ ա ն

ՀՏԴ 1/14:323

ԳՄԴ 87+66.3

Վ. 301

### Վարդան Գրիշենց

- Վ. 301 Ասագանգ-պահանջ հայ կյանքի զգաստության, վերաճանաչման, վերահաստատման: Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2023, 456 էջ:

Գրքում ամփոփված են հեղինակի բազում տարիների մտուրումները, վերլուծություններն ու եզրահանգումները՝ հայության՝ տոհմիկ ուղղուց շեղվելու պատճառների, դրանց հետևանքով ծագած ու, ամենայն հավանականությամբ, դեռ ծագելիք տկարությունների, նեղությունների, վտանգների և դրանց առաջն առնելու, կասեցնելու հնարավորությունների մասին:

Միաժամանակ այս գիրքը գիտակցված անվիատ հաստատակամությամբ անհապաղ գործելու յուրօրինակ ու նաև շատ պարզ հիշեցում է՝ համաձայն մեր մեծ, իմաստուն, սուրբ նախնիների՝ մեզ ավանդած ժառանգության: Եվ դրան այդպիսին՝ գիրքն ուղղված է յուրաքանչյուր հայի ու հայուհու՝ անկախ տարիքից, պաշտոնից, կոչումից, ընկերային վիճակից ու ապրելավայրից:

ՀՏԴ 1/14:323

ԳՄԴ 87+66.3

ISBN 978-5-8080-1501-2

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2023

## ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Մեր երկրի և աշխարհասփյուռ հայության իրապես տագնապալի վիճակի ահազանգն է հնչեցվում Վարդան Գրիշենցի նույնանուն «Ահազանգ» գրքում, որը սկսվում է տագնապալից այն հարցադրմամբ, թե արդյո՞ք դեռևս շուտ կամ անհարկի է ազգային ահազանգի հնչեցումը: Երկրորդ հարցադրումը վերաբերում է այդ ահազանգը նախ՝ մեր սրտերում և գիտակցության մեջ հնչեցնելուն, որովհետև ահազանգի հնչեցման պատճառը մեր հասարակության, այդ թվում՝ երիտասարդության՝ գնալով վտանգավոր չափեր ընդունող հոգեզրկումը, բարոյագրելումը և նյութապաշտությունն է:

Այս գիրքը որպես ազգային բարոյական հավաքական ահազանգ է հնչեցվում՝ կանգնեցնելու, Շահան Շահնուրի բնորոշմամբ, «Նահանջ առանց երգի» ընթացքը:

Ահազանգի հնչեցումը կարևորվում և իմաստավորվում է, որովհետև հոգեբարոյական այս նահանջը դեռևս հնարավոր է կանգնեցնել և վերատիրանալ մեր ազգային տոհմիկ նկարագրին, որով և իրապես տերը դառնալ մեր հայրենիքի:

Ահազանգը պետք է հնչեցվի այն ժամանակ, երբ դեռևս հնարավոր է **Վայրընթացը կանգնեցնել և հարկ եղածը փոխել**, այլապես անդառնալիից հետո այն կվերածվի սգերգի և ուժքվիեմի, որոնցով, դժբախտաբար, այնքան հարուստ են մեր գրականությունը և երաժշտությունը:

Այս գիրքը՝ որպես «Ահազանգ», ոչ թե սգերգ է, այլ «Զարթիք»՝ Ներսես Շնորհալու նույնանուն նշանավոր ստեղծագործությունից մինչև այս վերնագրով 18-19-րդ դարերի ստեղծագործությունները, և որպես «Զարթիք, լա՛ո»՝ վերստին հնչեցված Մշո դաշտի հարազատ զավակ Վարդան Գրիշենցի կողմից:

Գիրքը, նվիրված լինելով մեր ժողովրդի ազգային հոգեստ վերածնության հարցին, գրված է մաթեմատիկական զարգացման կուրս ընթացքով:

Ի դեպ, եթե նշված չէ հոդվածի գրության վայրը, ուրեմն՝ հեղինակն իր մտածումներն ու մտահոգությունները թղթին է հանձնել Երևանում:

Ինչպես որ բժիշկն է բուժման համար նախ տալիս ախտորոշումը, այնպես և սույն գրքի առաջին՝ «Արատներ, թերացումներ» գլխում վերնագիրն իսկ հուշում է, որ ներկայացվում են մեր ազգին պատուհասող թերությունները, որոնք նրան շեղում են ազգավայել և քրիստոսաշավիդ ընթացքից: Այն արտահայտվում է հեռացնամբ և խեղաթյուրված ընթրոնմանք մեր հայրերից ժառանգված հայ ազգային գաղափարախոսության:

Նման հարցադրմանբ՝ փրկությունը կսկսվի հայության հոգեբարոյական վերածնունդով: Ինչպես նշում է հեղինակը, նման վերածնունդն արտաքուստ շատ հեշտ է թվում, որովհետև նյութական ներդրումներ չի պահանջում, և միաժամանակ անասելիորեն դժվար է, քանի որ հիմնված է հոգեպես վերափոխվելու, նախորդ պետականագուրկ ընթացքում կուտակված արատները թրափելու վրա:

Որպես այդ վերածնության կարևոր նախապայման՝ նշվում է նաև Թարգմանչաց շարժման վերակենդանացումն «արդի պայմաններում, ժամանակակից միջոցներով»:

Սովորաբար մենք խոսում ենք սոցիալական բներացվածության, հասարակության՝ աղքատների և հարուստների բաժանման մասին: Այս գրքում ընդգծվում է մեկ այլ հիմնարար բաժանման՝ հավատի վրա հիմնված հոգևոր-քարոյական արժեհանակարգը կրողների և հավատագուրկների՝ ըստ այդն և այդ նախասկիզբը չունեցողների միջև բաժանման մասին: Որքան մեծ է երկրորդների տեսակարար կշիռը, այնքան թույլ են ազգային դիմադրողականությունը և ազգային վերածնման ունակությունը:

Նշվում է, որ ինչպես նյութական բներացվածությունը հաղթահարելու ճանապարհին վտանգավոր են սոցիալական կտրուկ ցնցումները, այնպես և հոգևոր դիմադրողականության կազմակերպումն ու գորացումը պետք է իրականացնել աստիճանական քայլերով՝ հետևողականորեն դարձի բերելով ազ-

գային-հոգևոր ծշմարիտ ուղուց հեռու գտնվողներին և հատկապես նոր սերնդին:

Մեր Եկեղեցու հայրերը կյանքը համեմատում էին մրրկածուփի ծովի հետ, որի խորտակիչ ալիքներն էին գործված մեղքերը: Քրիստոս անվանվում էր այն բարի նավապետը, ով այդ ծովից ապահով նավահանգիստ է հասցնում մեր կյանքի նավը: Նույն ձևով հեղինակը «օտար և վտանգավոր օվկիանոս» է անվանում մեր ազգային արժեհամակարգից դուրս գտնվող տարածքը: Ֆիզիկականի ու հոգևորի զուգահեռով ասում է, որ եթե ջրային տարածքում քարտեզների և չափիչ սարքերի միջոցով կարելի է խուսափել ավազախրումից կամ խութերին բախվելուց, ապա օտար արժեքների օվկիանոսում նավարկելիս, այն էլ առանց քարտեզի և չափիչ սարքերի, անխուսափելի է խորտակումը: Օտար խարկանքների օվկիանոսները կրկնակիրեն են վտանգավոր իրենց գրավչությամբ: Ասվածին հաջորդում է դառը և տիտուր հարցադրումը՝ իսկ ո՞վ է հետ պահելու մեր նավը նավաբեկության տանող պայմաններից ու ճանապարհից:

Այդ ճանապարհը, Վարդան Գրիշենցի դիպուկ բնորոշմամբ, «քունավոր քաղցրություն» է, որից հետ կպահի ազգային համապատասխան միջավայրի ստեղծումը՝ հիմնված մեր հոգևոր անանց արժեքների վրա:

Նյութականի ու բարոյականի շարունակվող զուգահեռով նաև ընդգծվում է, որ այսօր մեծ չափեր ընդունած ինֆյացիան իր հերթին արդյունք է հոգևոր արժեքների արժեզրկման՝ գնաճից և սղաճից մինչև ազգի, պետականության և հայրենիքի տարրեր տարածքների վտանգման հետևանքներով:

Մտածումների և զուգահեռների այս շղթան գալիս և հանգում է հոգևոր սննդին, որ ինչպես մարմինը չի կարող ապրել առանց սննդի և կամ կրունավորվի վատ սննդից, այնպես և մեր հոգիներն են վտանգված «անորակ սննդառությամբ և թերսնուցմամբ»:

Նույն պատկերն է ներկայացնում նաև վիրուս-մեռք հարաբերակցությունը: Առաջինը մարմինն է ախտահարում, և երկ-

րորդը՝ հոգին ու ազգային դիմադրողականությունը:

Գիրքը գոված է հայաստանյան իրողություններին քաջածանոթությամբ, որն առավել անմիջական և ընկալելի է դարձնում շարադրանքը մեր կյանքից վերցված օրինակներով։ Վերջիններս միաժամանակ ծառայում են առկա ննան բարքերի ժխտմանը։ Այսպես, որպես բնորոշ օրինակ, հեղինակը հիշատակում է «տանիք» արատավոր հասկացությունը, երբ որևէ պաշտոնատար շահադիտական նպատակով հովանավորում և «տանիք» է դառնում որևէ մեկի ապօրինի, կոռումպացված, հանցավոր գործունեությանը կամ այդպիսի արարքներին։

Նկատի ունենալով «տանիք դառնալու» տարածված արատավոր այս երևույթը՝ Գրիշենցը ցավով հարց է տալիս, թե ցածր հասկացողություն եղող նյութական տանիք որոնելիս արդյոք ինչո՞ւ մենք չենք հիշում երկնային և հավերժական «Տանիք», որն իրապես ապավեն է բոլորին։

Ընդհանուր մնայում արժեքների հետ կապված հարցադրումներից անդրադարձ է կատարվում նաև առօրյա կյանքի մանրութ թվացող հարցերին՝ կանացի անպատշաճ զգեստներ, որսագողություն, ծխել և այլն, որոնք, սակայն, ստեղծում են այն պարարտ բացասական միջավայրը, որում արդեն տեղի են ունենում առավել մեծ հոգեբարոյական ձևախեղումները։

Մարդկության պատմությունը վկայում է, որ բոլոր այն բերդերը, որոնք թշնամին չի կարողացել գրավել դրսից, հաճախ գրավվել են ներսից։ Այս իրողությունը գեղարվեստորեն ընդհանրացել է «տրոյական ձի» արտահայտության մեջ։ Այս ըմբռնմանը համահունչ ձևով, «Ահազանգի» առաջին գլխում մեր ժողովորին սպառնացող վտանգները, բարոյական մեղանչումները և ախտերը ներկայացնելուց հետո, երկրորդ՝ «Զգուշանալ տրոյական ձիուց» գլխում այն միտքն է ընդգծվում, որ անգամ այդ ամենն այնքան վտանգավոր և կործանարար չէ, եթե արտահայտվում է որպես արտաքին միջամտություն, ուստի հայության հակառակորդներն իրենց ծրագրերն իրականացնելու համար կատարողներ են որոնում մեր

Երկրի ներսում՝ մոլորեցնելով նրանց տարբեր կեղծ արժեքներով և գայթակղելով բազմածև խոստումներով։

Այս գլխում այն միտքն է ընդգծվում, որ Աստծու շավիով ընթացող մարդը չի կարող կուլ գնալ արտաքին նման ուժերին և համալրել մեր երկիր մտցված տրոյական ծիու ուժերի շարքը։

Տրոյական ծին, սակայն, ոչ միայն մեր երկրում է, այլև հաճախ տեղ է գտնում մեր հոգիներում և տարբեր մեղանչումներով մեզ տանում է կործանման՝ մեր հոգու բերդի հանձնմանը։ Այս հարցին են նվիրված սույն գլխի մի շարք հոդվածներ՝ բարոյական տարբեր չարիքների վկայակոչմամբ։ Յոգնոր առաքինությունների և մեղանչումների թվարկմանը այն միտքն է շեշտվում, որ ծշմարիտ ծանապարհից շեղվելը դառնում է այն տրոյական ծին, որը ներսից ավերում և հանձննում, թուլացնում է յուրաքանչյուրիս՝ ըստ այդմ թուլացնելով մեր ազգային հավաքական ուժը և ազգի ու Հայրենիքի պաշտպանությունը։

Մարդուն դեպ կործանում տանող չարի ուժը հեղինակը համեմատում է վիրուսի հետ՝ հետևյալ զուգահեռով։ ինչպես որ վիրուսը մարդու օրգանիզմում գտնվում է նիրիած վիճակում, քանի դեռ օրգանիզմի դիմադրողականությունն ուժեղ է, և գլուխ է բարձրացնում մարդու ֆիզիկապես թուլանալուց հետո, այնպես և մարդը, այս դեպքում հայ մարդը, քանի դեռ «չի չարաշահում իր Աստվածաշնորհ ազատությունը, իրեն տրված ազատ կամքը, առողջ, գորեղ է պահում իր հոգեբարոյական ինունիտետը՝ վարակամերժ կարողությունը»։

Հեղինակի բնորոշմամբ՝ այս ամենի առաջն առնելու համար հարկավոր է հոգնոր նոր Ավարայր նղել։

Ստեղծված հոգնոր և գաղափարական անհանդուրժելի վիճակը փոխելուն է նվիրված երրորդ՝ «Պետք է փոխվենք» («Լինելության պայման») գլուխը։

Փոխվելը բացատրվում է ոչ թե որպես անցյալի ավանդների հետ կապերի խզում, այլ հակառակ՝ անցյալի ավանդների նորովի կիրառում, ավելի ծիշտ՝ վերադարձ Ոսկեդարյան շրջանի Թարգմանչաց այն ավանդներին, որոնցից հեռացել

Ենք մի տևական ժամանակ: Նման փոփոխությամբ է պայմանավորվում մեր հետագա կենսունակությունը:

Վերափոխվելով նախնյաց ավանդներին վերադառնալն է մեկ անգամ ևս ընդգծվում չորրորդ՝ «Վերադարձ ակունքներին» գլխում: «Ակունք» բառը քանի որ որոշակի հարցերի տեղիք կարող է տալ, ուստի այս գլխի ենթավերնագրում՝ «Չափորոշիչների ուրվագծում և փարուների տեղորոշում», տրվում են այս բառի չափորոշիչները և ակունքին հասնելու միջոցները:

Ազգային հոգևոր ակունքներին վերադառնալու հարցում, ինչպես նախորդ աշխատություններում, այնպես և այստեղ, առանձնակի դեր է վերապահվում հոգևոր և աշխարհիկ իշխանություններին:

Նշվում է, որ հայ հերոսների օրինակն այն հիմքն է, որի վրա է խարսխվելու ազգային ոգով դաստիարակությունը:

Հոգևորի և նյութականի գործակեռն այս գրքում շարունակվում է առողջապահության նախարարության ու հոգևոր առողջության, արտակարգ իրավիճակների նախարարության և մեր հոգևոր միջավայրին սպառնացող արտակարգ իրավիճակի գործակեռներով՝ դարձյալ այն հարցադրմամբ, **որ մարմնի մասին մտածելիս հարկավոր է առաջին հերթին հոգու մասին մտածել:**

Արցախին նվիրված հիմնգերորդ՝ «Ահազանգ, որը չենք լսում» գլխում ցավով ընդգծվում է, որ Արցախը լայն ընդգրկմամբ ոչ միայն պատմականորեն, այլև նույնիսկ մեր ավագ սերնդակիցների ժամանակ գոեթե լիովին հայաբնակ էր, իսկ այսօր Աղբբեջանի տիրապետության տակ գտնվող մասերում լիովին հայաբափված է:

Քաջորդ կարևոր հարցադրումն ընդգծումն է այն իրողության, որ պատմությունը միայն պատմության համար չէ, այլ որ երբեւ կարող է կարևոր դեր կատարել քաղաքական գործընթացներում, տվյալ դեպքում՝ սահմանային հարցերի լուծման համար: Այժմյան «քարտեզագրական պատերազմը» դրա արտահայտությունն է:

Գրքի՝ Արցախին նվիրված գլուխսը կարևորվում է նաև միջազգային հարաբերությունների տեսանկյունից՝ մեթոդաբանական առումով, թե մեր օրերում և մերօրյա միջոցներով ինչպես պետք է պայքարել աղրբեջանական կեղծարարությունների դեմ, ինչպես պետք է կեղծարարներին միջազգային բացահայտման ու մեկուսացման ենթարկել:

**Հատկանշական է, որ Արցախի վերաբերյալ հոդվածները կարծես 2020 թվականի սեպտեմբերի 27-ից հետո գրված լինեն, հատկապես այն էջերը, որոնք որպես մշտարթում կոչ հիշեցնում են, որ մեր ամենօրյա կյանքին զուգընթաց պետք է պատրաստ լինել աղրբեջանական ագրեսիային:**

Արցախի դեպքում նաև առաջնային է համարվում մեր կյանքում հոգևոր-բարոյական սկզբունքների կիրառումը հետևյալ հարցադրմամբ. նման սկզբունքները չի կարելի խախտել, և այս պահանջ չպետք է տարօրինակ թվա, չպետք է լոկ քաղաքական մտածողություն ընկալվի: Ավելին՝ նշվում է, որ քրիստոնեական արժեհանակարգը պետք է գործադրվի նաև որպես **կիրառական քաղաքականություն:**

Իսկ 2020 թվականի սեպտեմբերից հետո գրված էջերը ոչ թե սոսկ փաստերի արձանագրում են, այլ նշվում է, որ առաջին հերթին պետք է վերացնել դրանք ծնող պատճառները:

Վերջաբանի փոխարեն 1981 թվականին օվկիանոսից այն կողմ գրված «Ահազանգ» վերտառությամբ **սքափեցնող հրապարակումն է**, որը կարելի է անվանել ինքնավերափոխմանն ու Յայ ազգային կրիտիկական զանգվածի ստեղծմանն ուղղվածքայլ ու կոչ:

«Ահազանգ» ընթերցելուց հետո՝ է պարզ դառնում, թե այսօրյա մեր ազգային-քաղաքական հիմնախնդիրներին նվիրված գործն ինչո՞ւ է ավարտվում ավելի քան չորս տասնամյակ առաջ Միացյալ Նահանգներում՝ սկյուռքյան պայմաններում գրված նման գգուշացմանք:

**Մի զգուշացմամբ**, որը կարող է Յայաստանի ու Արցախի Յանրապետություններն ու Սփյուռքն աստիճանական նահան-

ջից ու կորստյան ճանապարհից հետ դարձնելու նախադուռը դառնալ:

Վարդան Գրիչենցի այս գիրքը, ի թիվս մնացյալի, **Երկու հիմնական պատգամ է ուղղում ընթերցողին.**

**առաջինը՝** առանց հոգևոր իմաստնության ազգն անկարող է ունենալ ազգային պետականություն: Հոգևոր իմաստնությանն անհաղորդ ազգն անկարող է ազատ ու ինքնիշխան լինել. սպասավոր՝ թերևս: Այս իմաստով այդ պատգամը հիմնվում է այն ընթանման վրա, որ հավատը հոգու ազատության ակունքն է, իսկ հոգու ազատությունն արթնացնում է ազգի կենսական այն ուժերը, որոնք, ժամանակին թվացյալ անհնարինը հնարավոր դարձնելով, մեզ պարզեցին Ուկեղարը, Թարգմանչաց շարժումը, Վարդանանց դիմադրությունն ու շարժումը և այսօր էլ երաշխավորում են մեր ազգի, Երկրի ու պետականության վերելքը:

**Եվ Երկրորդ՝** հավատն ամենահաստատուն գրավականն է հասարակական հարաբերությունների ու կենցաղավարման՝ ժամանակներ առաջ մեր ունեցած այն մշակույթի վերականգնման, որում տեղ չունեն երկիրը քայլայնան տանող բացասական երևույթները (ընդհուպ մինչև նյութապաշտությունն ու կոռուպցիան), անսասանելի հենասյուներ ստեղծելով մեր ազգի, ընդհանրական Հայրենիք Հայաստանի և Հայոց պետության պաշտպանության, ամրապնդման, զարգացման ու ամեն ինչում վերելքի համար:

## ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

## Ն Ա Խ Ա Բ Ա Ն Ի Փ Ո Խ Ա Բ Ե Ն

### ԵՐԲ ԵՎ Ո՞Ր ԴԵՊՔՈՒՄ Է ՀՆՁԵՑՎՈՒՄ ՀԱՍՏՁԳԱՅԻՆ ԱՀԱՁԱՆԳԸ

Յայ իրականությունում արդյո՞ք շուտ և կամ անհարկի է ազգային ահազանգ հնչեցնելը:

Եվ արդյո՞ք շուտ ու անհարկի է այն հնչեցնելը նախնառաջ մեր սրտերի և գիտակցության մեջ.

- Եթե մեզանից շատերը և մեր մատաղ սերունդը՝ մանուկները, պատանիներն ու երիտասարդները, դեռ միայն մասանք, այլ ոչ թե լրիվ, գլխովին են ապակողմնորոշվում (չասելու համար՝ զոմբիացվում), և մեր սրտերն ու մտքերը դեռ լրիվ չեն գրավված և չեն վերահսկվում ու ուղղորդվում.

- Եթե մեր հասարակությունը դեռ լրիվ չի նյութապաշտացած և չի՝ հոգեզրկված, գաղափարազրկված, բարոյագրկված ու այլասերված.

- Եթե մեր ժողովուրդը դեռ լրիվ չի խորթացած ու չի՝ օտարացած իր տոհմիկ, Աստվածակերտ հնքնությունից.

- Եթե Սփյուռք կոչված մեր ազգի շուրջ երկու երրորդը կազմող հատվածն իր հարազատ ազգի հանդեպ դեռ լրիվ չի անտարբերացած և հայրենիք Յայաստանի ու նաև ինքն իր հանդեպ դեռ լրիվ չի օտարացած.

- Եթե հայ ազգի մոտ մեկ երրորդը կազմող հայրենաբնակ հատվածի մեկ մասն է միայն դեռ պաշտպանում պատմական Սուրբ Յայաստանից կոտորակված, սակայն փյունիկի պես հառնած այսօրյա Յայաստանի ու Արցախի Յանրապետությունները, որոնք հազիվ ազատագրված խորհրդային անաստված բռնակալությունից, իսկ Արցախը՝ նաև թուրք-ադրբեջանական հեղձուցիչ անմիջական տիրակալությունից՝ հայտնվեցին վեր-

Զինիս դաժան նախահարձակումների, և ի հավելումն դրա՝ հայտնվեցին նաև փափուկ թվացող մեթոդներով գործող տարբեր ծուլակների մեջ՝ հոգեզուրկ, երկերեսանի, կեղծավոր «բարի կամեցողների» և կամ «չեզոքների» միջև, որոնք մեզ հետ հարաբերվում են իբրև թե մարդասիրական նպատակներով.

- Եթե մեր հոգեկերտվածքին օտար, խորթ, թշնամական սայրերը մեր ազգի ուսկորին (ու նաև՝ ողնաշարին ու հոգուն) դեռ չեն հասել և կտրել-անցել,

**մի՞թե խոհեմ է չհարցադրելը, թե հապա ե՞րբ պետք է հնչեցվի հայոց ահազանգը՝ ազգային հոգևոր և ըստ այնմ՝ գաղափարական ու տոհմիկ բարոյական զգաստության, վերածանաչման ու վերահաստատման համար հայության հոգին, խիղճն ու միտքը զարթնեցնող ազգային ահազանգը:**

Կինչեցվի, երբ բանը բանից անցա՞ծ լինի, երբ այլս ճահճախրումից դուրս գալու ուժ, միջոց ու հնարավորություն չի՝ լինի, թե՝ կինչեցվի, քանի դեռ ուժ, միջոց, հնարավորություն կա՛ ազատ շնչելով դուրս գալու: Սակայն ո՞ւր են հայի գիտակցությունը, նախանձախնդրությունը, պատվախնդրությունը, պարտաճանաչությունն ու նաև խիղճը: Եվ մի՞թե հայի տածած Աստվածասիրությունն ու Աստուծո հանդեպ երկյուղն էլ սպառվել են, և հավատքը մեր մեջ այնքան է ցանքել, ու մեր հոգիները՝ նվազել, անզգայացել են, որ համակերպվում ենք մեր այս վիճակի հետ:

Բայց հայի տագնապած հոգին, հավատքի նախանձախնդրությամբ, պատասխանատվությամբ ու պատվախնդրությամբ, վաղո՞ւց՝ դեռ նախքան մեր ազգի մե՛ծ ողբերգությունը՝ ցեղասպանությունը, ահազանգել էր, և մայրերը երգելով կոչուն էին.

**Զարքնի՛ր, որդյակ, եռիշ քեզ, վե՛ր կաց...**

**Զարքնի՛ր, կոչեց ձայն հայրենյաց,**

**Կենաց-մահու ժամն հնչեց:**

Մենք ինչո՞ւ ենք այժմ հոգով, խղճով, գիտակցությամբ ու նաև կամքով կարծես ընդարմացել, նվաղել, անզգայացել և գաղափարապես նվաստացել: Յայ նայերը, եթե այդպես էին երգելով կոչում դեռ Յայոց ցեղասպանության ժամանակները, ապա այժմ՝ այսքանից հետո, այս վիճակում, այս պայմաններում (որ նույնիսկ պետականությանը ենք փառավորված) մի՞թե մեր դիմագրաված այդպիսի վտանգի առաջ հրամայակա՞ն չէ, որ *հայոց հոգու, խղճի և գիտակցության զանգակատումը հմտեցմի ազգային ահազանգը:* Եվ ինչեցնի ոչ թե հայոց հիմնականում հայրենաբնակ մեկ երրորդի ու դրա աշխատավոր դասի համար, այլ հնչեցնի համայն հայության բոլոր խավերի համար, ներառյալ ունենոր, իշխանավոր ու նաև իրեն նտավորական համարող խավը:

Ու այդ ահազանգը հնչեցվի, որպեսզի մեր ազգը լրիվ ու լիովին հոգեկանացած, գաղափարականացած, բարոյականացած ու նաև ինաստնացած, եղբայրացած և արիացած՝ բարձրացնի իր փրկության ու վերելքի քրիստոսապա՛շտ, խաչադավան խորհրդով ազգային դրոշը՝ *այն կոթողելու համար «Յայրենի լերանց» վրա* (ինչպես մի այլ երգ-կոչի մեջ է ասվում)` ի փրկություն ու վերելք հայ ազգի, հայրենիք Յայաստանի պետության, որով և հօգուտ նաև մարդկության ու ի փառս մեր հավատքի՝ Սուրբ Երրորդության՝ Ա Ս Ո Ւ Ծ Ո:

Եվ մեր այս *փրկության ու վերելքի* մեջ խոչընդոտմերից մեկը՝ մեր ազգի մեջ և հատկապես նրա հայրենաբնակ ու արտերկրի հատվածների միջև խորթություն և բաժանում առաջացնող *անվաստահությունը* (որ ազգի ու Յայրենիքի հանդեպ անտարբերություն ու օտարություն է առաջացնում), ձյան պես կհալչի, կվերանա, կչքանա՝ *հայության և յուրաքանչյուր հայի հոգևոր ու մտավոր տոհմիկ ազնվության վերականգնմամբ ու վերահաստատմամբ:* Իսկ դա հայի ու հայության կողմից ճանաչմամբ, ընդուննամբ ու կիրառմամբ, Յայ Ազգային Գաղափարախոսությամբ, որը բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա՝ Ավետարանով և Խաչով:

Սա է ազդարարում հայ ազգի հոգեկան կանչը. պատրա՞ստ է հայությունը և մանավանդ նրա հոգեւոր ու աշխարհիկ ղեկավարությունն ու մտավորականությունը, և անպայման նաև հայի խիղճն ու գիտակցությունը՝ ըստ արժանվույն արձագանքելու, որ փոխվի իր ընթացքը դեպի կյանքն իրական:

### ՎԱՐԴԱՆ ԳՐԻՉԵՆՑ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐԱՏԵՐ,

ԹԵՐԱՑՈՒՄ ԵՄ ԵՐ

24 - 02 - 2001թ.,  
վերանայված՝ 06 - 04 - 2020թ.

## **ԱՀԱԶԱՆԳ**

### **Ազգի ու հայրենիքի գոյության վտանգի և ԿՈՉ**

### **Հավատքի՝ ազգային կենարար Ժառանգության վերահաստատման ու վերակիրառման**

Մարդկային-ազգային գիտակից և պատասխանատու դիտարկման՝ ակնհայտ է դաշնում, որ հայոց քրիստոնեական հավատքն եապես տկարացած, ազգային գաղափարախոսությունը, որ բխում և հիմնված է այդ հավատքի վրա, հիմնովին աղավաղված և բարոյական արժեքները զգալիորեն արժեգրկված են:

Ծրջանցելով այս իրավիճակի նախորդ՝ պատմական հետևանքները՝ էապես անհրաժեշտ է նշել, որ այդ պատճառով հայությունը թե՛ հայրենիքում և թե՛ հատկապես արտերկրում հարածունորեն այլասերվում է՝ կորցնելով իր մարդկային-ազգային ժառանգական լավագույն հատկությունները և վտանգելով իր գոյությունը ոչ միայն որպես պետականակիր ազգ, այլև որպես ազգային ինքնություն:

Ու եթե հայության այս իրավիճակը չբարեփոխվի, ու ներկա ընթացքը շարունակվի, ապա ըստ մեր՝ 1700-ամյա հավատքով ընկալված պատմական օրինաչափության՝ դրա հետևանքը կլինի հայի մարդկային-ազգային գոյության ու արժանապատվության աղավաղումն ու անկումը: Բայց կա նաև դրանից անհամենատ ավելի վատը. ըստ մեր հավատանքի՝ հայը կորցնի իր հոգին...

Իսկ Աստվածորդին՝ մեր հավատքի Զորագլուխն ասում է. «Ի՞նչ օգուտ կունենա մարդ, եթե այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կործանի...» (Մատթ.16.26):

Եվ այս լույսի ներքո մեր ժողովրդի և հատկապես ղեկավարության ու նաև նտավորականության համար էականորեն անհրաժեշտ է ընթանալ, որ իրենց ներկայիս հոգեբարոյական, գաղափարական և կենսակերպի անկումային վիճակից առաջացող մարդկային-ազգային այլասերումն է հիմնական պատճառը՝

- ազգի ու հայրենիքի բոլոր փորձությունների, փորձանքների, վտանգների, դժվարությունների, ունեցած տարբեր տկարությունների և դրանց արդյունքում եղած և դեռ հնարավոր ավելի մեծ կորուստների,

- դրանք վերացնելու (կամ ավելի նախընտրելի է՝ դրանք կանխելու) մեր թե՛ գիտակցության և թե՛ ուժի ու զորության պակասի:

Դետևապես, ազգի ու հայրենիքի վերոնշյալ ճգնաժամային վիճակից դուրս գալու նպատակով պատշաճորեն պաշտպանվելու, կորուստները վերականգնելու և բոլոր բնագավառներում Հայաստանի ու ամբողջ հայության վերելքն արագ ու անթերի ապահովելու համար կան բազմաթիվ թե՛ անելիքներ և թե՛ միջոցներ ու հնարավորություններ, սակայն դրանք տեսնելու, ընթանելու և այդպիսով՝ նոր որակով ու նվիրումով այդ ճգնաժամային վիճակից դուրս գալու գործն սկսելու և հաջողությամբ ավարտելու նախապայմանը մեկն է՝ **հայության հոգեբարոյական վերածնունդը**: Այն է՝ **Աստվածահածո մարդկային-ազգային կյանքով ապրումը** մեր 17-դարյա Աստվածաշնորհ հավատքով, **Ավետարանի իմաստությամբ**, գիտությամբ, **Սուրբ Խաչի խորհրդի զորությամբ** և դրանցից բխող ու դրանց վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ:

Եվ այդ նախապայմանի կատարումը, որը որոշ տեսակետից պարզ ու ոյուրին է նրանով, որ համաշխարհային բանկերից վարկերի, բարերարների մեծ նվիրատվությունների, թանկարժեք գինվածությամբ բանակների, բարձրակարգ տեխնոլոգիական, ռազմարդյունաբերական կառույցների և նման այլ բաների կարիք չունի, սակայն, միաժամանակ, այդ նախա-

պայմանի կատարումը անկարելիի չափ դժվար է, և ինչքան էլ ցանկացել ու փորձել ենք, չի՝ ստացվել և չի՝ ստացվելու նաև այսուհետև, որովհետև մեր ցանկությունը, նպատակը և այն, ինչը որ դրա համար ներդնում էինք և հիմա էլ շարունակում ենք, մեր այնպիսի՝ հոգով, սրտով ու մտքով է արվում, որ անհնար է դարձնում վերոնշյալ նախապայմանի կատարումը:

Մինչդեռ որպեսզի այդ նախապայմանը կատարվի, անհրաժեշտ է, որ ազգը վերածնվի, իսկ դրա համար էլ հայր պետք է անպայման վերափոխվի՝ թոթափելով դարերի ընթացքում «վաստակած» ստրկահոգությունը, ստրկամտությունը, նյութապաշտությունը և նոր շտամներով ներմուծվող նյութապաշտության տարբեր տեսակների կոռումպացվածությունը:

Սակայն հայ մարդը (առավել ևս մարդկության այս վիճակում) առանց Արարիչ Յոր օգնության անզոր է, չի կարող վերափոխվել, հետևապես հայ ազգն էլ չի կարող վերածնվել:

- *Ուրե՞մն... Այդ նախապայմանն ապահովելու միակ միջոցը, հնարավորությունը, ծանապարհը St՞րն է:*

- Տերն էր, է՛ և լինելու է հավիտյանս: Ու առանց այս ճշմարտությունը տեսնելու, իմանալու, հասկանալու և կյանքում ըստ այնմ ընթանալու ո՛չ մի պտղաբերություն, ո՛չ մի հաջողություն, ո՛չ մի բարի արդյունք չի լինում, այլ, լավագույն դեպքուն, կարող է լինել ուրիշի, օտարի չորուցամաքին կարոտ մնալը:

Սակայն, ո՞վ հայ մարդ, սթափիվի՞ր ու քեզնից թոթափի՞ր դարերով աստիճանաբար «վաստակածդ» ստրկահոգությունը, ստրկամտությունը, նյութապաշտությունն ու նոր մուծվող բազմաբնույթ կոռումպացվածությունը, և ծանաչի՞ր քո իսկական ինքնությունը՝ հոգու ինքնությունը, և դրանով փոխվի՞ր, վերածնվի՞ր, որպեսզի կրկին արժանանաս քո Երկնային Յոր շնորհին և քո սուրբ նախնյաց ժառանգության փառքին:

Յայ մարդ, արա՛, վարփի՞ր այդպես. հեռու քեզնից *այդ պատասխանատվության* անտեսումը և կամ դրանից խուսափումը, որը կնշանակի մեր ազգի, Երկրի և պետության առաջնոյացած հոգեբարոյական, գաղափարական ու ըստ այնմ՝

մնացած բոլո՞ր բնագավառներում ճգնաժամերի անվերականգնելի խորացում: Եվ որպեսզի այդ արհավիրքը մեզ չպատուիասի, ու այդ կորստարեր վիճակում չհայտնվենք, այլ խուսափենք դրանից, հարկ է, որ ազգային ահազանգն անդադար այդ մասին ազդարարի, հիշեցնի, մինչև բոլորիս հոգու պարտքի գիտակցությունն զգաստանա, խիղճն արթնանա, կամքը զորանա ու սկսի գործել **այդ ազգային հոգու մեջ՝ պատասխանատվության կատարման համար՝ Աստուծո՛ օգնությամբ ու Նրա առաջ:**

Եվ փա՛ռք, պատի՛վ ու մեր ազգի գոհությունը Սուրբ Երրորդությանը՝ Աստծուն:

15 - 01 - 1999թ.

### **ԿԱՐԵՎՈՐ ՊԱՐՉԱՔԱՆՈՒՄՆԵՐ (Հոգեւոր իրականության հասարակական հասկացողության, ըմբռնման)**

Անաստվածությունը, գործածելով ամենայն աշխարհիկը՝ նյութը (անցողիկը, սինը, ունայնը), դարձել է կրոն, պաշտամունք՝ նյութապաշտություն: Եվ այն քառատրոփ արշավում է երկրագնդի երկարություններով ու լայնություններով՝ այլասերելու և գերելու համար նարոկանց մտքերն ու սրտերը և կործանելու հոգիները:

Այս արշավում անաստվածությունը հաջողություններ է գրանցում տարբեր պատճառներով, որոնցից գլխավորները, ըստ երևույթին, **երկուսն են:**

**Առաջինն այն է,** որ անհավատներն իրենց այդ արշավում ավելի հետևողական են, հարատև ու լավ կազմակերպված:

**Երկրորդը՝** չարը, իր գլխավոր գենքով՝ նյութապաշտությամբ ու կոռումպացվածությամբ, դեռևս տիրող է այս աշխարհում:

Իսկ ի՞նչն է դրանց հաղթողը՝ մարդու, մարդկության փրկությունը, եթե ոչ Աստուծո հավատքը, խաչն ու խաչապաշտությունը՝ շնորհված մեզ Արարիչ Յոր սիրով:

16 - 04 - 2004թ., ժամը 23:30

## ԻՆՉ ԿԱՐՃԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՆՇՆՈՐՀԱՎԱԼՈՒԹՅՈՒՆ

Աստծուց խնդրում ենք, երբ նեղն ենք, և մոռանում ենք, երբ լիանում ենք: Յաճախ էլ հարց ենք տալիս մենք մեզ և ուրիշներին. իսկ կլսի՞ մեզ, կհասնի՞ մեզ, կտա՞, ինչ ուզում ենք: Բայց չենք տեսնում արդեն իսկ տվածք, որ տվել է ամեն ինչ, որի մեջ մասը մենք չգիտենք, չենք տեսնում ու դեռևս երբեւ չենք էլ իմանալու:

Բայց մեզ տված ամեն ինչի մեջ է նաև ամենաէականը՝ հոգու փրկության հնարավորությունը՝ հավիտենական կյանքը, որ Արարիչը տվել է իր սիրով ու իր Միածին Որդու խաչելության գնով:

Եթե Արարիչ Յայրը մեզ համար իր սիրելի Որդու երկրային կյանքն է տվել, էլ ի՞նչ չի տա: Այսքանը կարո՞ղ ենք ըմբռնել, կարո՞ղ ենք իիշել և կարճատես, անզգամ ու երախտամոր չլինել...

Արարիչ Յայր մեր, Աստված, ներիր մեզ մեր բազում հիմարությունների համար, որ մեղք են կոչվում:

Եվ մեր ամբողջ հոգով, սրտով, մտքով ու գորությամբ շնորհակալություն Քո ողորմությունների ու անհամար բարիքների համար, որ տարածել ես մեզ վրա:

21 - 06 - 1999թ.

## Ո՞Վ, ՈՎՔԵ՞Ր

ՍԱՆԴԱԳՐԻԿՎԱԾ, ԾԱՆՐԱԲԵՇՆՎԱԾ, ՃՆՉՎԱԾ և կամ իմունիտետը կորցրած օրգանիզմը Ենթակա է դյուրին ախտահարման:

Բարու և չարի, դրականի ու բացասականի և, ընդհանրապես, հակադիր կողմերի մասնիկների կարողության հարաբերակցությունից է կախված մեկի կամ մյուսի հաղթանակը:

Յայ ազգի արյան կարմիր գնդիկների քանակի կրիտիկական աստիճանի պահպանումը պատմական նշանակության էական խնդիր է: Մենք պետք է միշտ իրազեկ լինենք, թե մեր ազգի իմունիտետը՝ վարակամերժությունը, վարակամերժ կարողունակությունը, ի՞նչ աստիճանի վրա է:

- Դրա հիման վրա միշտ գիտենանք նաև՝ ինչպես այն հասցնենք ու պահենք անհրաժեշտ բարձրության վրա:

- Եթե այն, այնուամենայնիվ, ընկնում է, ինչպես կանգնեցնենք անկումը, կամ եթե արդեն իսկ ընկել է, ինչպես բարձրացնենք:

- Եվ ո՞վ ու ովքե՞ր են զբաղվում, ովքե՞ր պիտի զբաղվեն դրանով, ովքե՞ր են պատասխանատու: Ու եթե նրանք չկան, ովքե՞ր են պատրաստակամ նախաձեռնելու՝ ինչեցնելով ազգային ահազանգը...

Ծաբաթ, 30 - 01 - 2010թ., ժամը 17:40

## ԷԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՏՐԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դիմադրություն և դիմադրողականություն, պաշտպանություն և պաշտպանունակություն:

Այս երկուսը՝ դիմադրությունն ու պաշտպանությունը, իրենց ունակություններով հանդերձ, լինում են նյութական և հոգեկան կամ, ինչպես արևամտյան ժամանակակից ըմբռնումը կգերադասեր անվանել, նյութական և բարոյական:

Սա՛ է իրականությունը մարդկության՝ առնվազն քաղաքակրթական կազմավորումից ի վեր: Այդ երկուսը՝ դիմադրությունն ու պաշտպանությունը, օրգանապես միահյուսված են. պիտի դիմադրես, որ պաշտպանվես, և ազգի, երկրի պաշտպանությունը պայմանավորված է դիմադրությամբ, իսկ պաշտպանունակությունը՝ դիմադրողականությամբ:

Ու այդ կերպ պայմանավորված է նաև նյութականը՝ հոգեկանով և բարոյականով:

Եթե հոգեկան-բարոյական դիմադրություն, դիմադրողականություն չլինի կամ թույլ, տկար լինի, ըստ այնմ կլինեն նաև նյութական պաշտպանությունն ու պաշտպանունակությունը, թեև մարդիկ լնդիանդապես, ներառյալ հայ իրականության մեջ, առաջնային, կարևոր և վճռական (առնվազն գործնականում) են համարում նյութական դիմադրությունը, պաշտպանությունը և դրանց ունակությունները, իսկ հոգեկան-բարոյականը՝ երկրորդական, լավագույն դեպքում, այլապես և տասներորդական: Եվ ըստ այնմ՝ ուշադրություն է դարձվում, հատկացվում են միջոցներ և այլն: Այդ իմաստով փաստ է, որ նյութական դիմադրության և հատկապես պաշտպանության համար կան կառույցներ, անձնակազմեր, ամեն տեսակ միջոցներ և գինվածություն, մինչդեռ հոգեկան-բարոյականի համար դրանք չկան: Եվ ամենավատը՝ բացակայում է նաև հասարա-

կական, պետական ու նաև հոգևորականության պատշաճ մտածումը, գուցեն մտահոգությունը, և չկա պատշաճ միջոցների հատկացում՝ առանց հաշվի առնելու, որ դրանով թուլանում, տկարանում, արժեզրկվում է նաև նյութական պաշտպանունակությունը, հետևապես և պաշտպանությունը:

Ինչո՞ւ է այդպես, ի՞նչ է կարելի և պետք է անել... Չէ՞ որ այսպես շարունակելով՝ շատ բան ենք կորցնում...

Ուրբաթ, 26 - 02 - 2010թ., ժամը 23:30

## **ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԵԾ ԲԱԺԿՆՈՒՄԸ**

Մարդկության մեջ գոյություն ունի մեծ բաժանում: Այն որոշ չափով առկա է նաև հայության մեջ և Հայաստանում:

Խոսքը սոցիալական, քաղաքական, կուսակցական, գործարար ու այլ շահերի տարբերության պատճառով եղած բաժանումների մասին չէ, խոսքը հոգևոր, գաղափարական, բարոյական ու ըստ այնմ՝ աշխարհայացքի ու կենսաձևի տարբերություններից առաջացած և դարավոր, և հատկապես նոր ժամանակների բաժանումների մասին է:

Բայց նախքան բարոյական ընթանումների տարբերության պատճառով առաջացող բաժանումները, **մեծ բաժանումն** սկսվում է հավատքի տարբերության պատճառով՝ հավատքի առ Աստված՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանով ու Խաչով և մասնավորապես Հիսուսի Քրիստոս լինելու՝ Նրա Աստվածության, Նրա Հարության ու Նրա Երկրորդ Գալստյան հավատքի առումով: Մնացած բոլոր տարբերություններն ածանցյալ են դրանից, բխում են այդ տարբերությունից: Միայն թե հավատագործները և մանավանդ քրիստոնեական հավատքից թշնամաբար շեղված-բաժանվածները միշտ չեն, որ հայտնում, խոստովանում են իրենց անհավատությունն ու թշնամությունը Հիսուս Քրիստոսի, Նրան հավատացողների և Նրա ճանապարհը փնտրողների հանդեպ, այլ իրենց մաղձը թափելով՝

Աենգ ու անհաշտ կրիվ են մղում նաև երեսպաշտությամբ, ստով, կեղծիքով ու խարդախությամբ:

Սա դարավոր վիճակ է, որ մարդկային պատմության տարբեր փուլերում մերթ սաստկանում, մերթ թուլանում է, սակայն երբեք չի վերանում և չի վերանալու՝ մինչև Տիրոջ Երկրորդ Գալուստը:

Այդ դարավոր վիճակի հատկանշական Երևույթներից է մարդկության ու ազգային մասշտաբով (որը վերաբերում է նաև ուղղակիորեն հայությանը) լավ կազմակերպված հակաքրիստոնեական բազմարնույթ պայքարը՝ ի տարբերություն քրիստոնյաների՝ հատկապես վերջին ժամանակներում թույլ կազմակերպված կամ հաճախ բոլորովին անկազմակերպ, տարերային և մեծ մասամբ պասիվ դիմադրության ու պաշտպանության:

Այդ իմաստով քրիստոնեության ու հակաքրիստոնեության և ըստ այդմ՝ մարդկային արժեքների ու հակաարժեքների միջև տեղի ունեցող պայքարում նկատելի է նաև իրական՝ քրիստոնեության դեմ պայքարի մեջ «անմեղ» զոհերի ներառվածությունը. նրանք, որոնք իրենց կարծիքով իբր միտված չեն հակաքրիստոնեական դիրքորոշման ու առավել ևս՝ պայքարի, սակայն իրականության մեջ ներառված են: Իրականության մեջ նրանք խարված, գերված հոգիներ են, որ իրենց մտածողությամբ ու գործերով (գուցեն անգիտակցաբար) ծառայում են չարին:

**Թող դարձյալ նշվի.** այդպիսիք ծառայում են չարին (ակտիվ կամ պասիվ, ուղղակի կամ անուղղակի) նաև հավատքի հանդեպ իրենց անհաստատությամբ, անհետևողականությամբ և մանավանդ տարակույսով, որոնք շատ վարակիչ են հատկապես աշխարհիկ մոլորություններով նյութականացող տկար հոգիների համար: Նրանք իրենց տարակույսով մեղսակցում են չարին, որովհետև այդ տարակույսը «տեսություն» դարձրած, տարբեր ձևերով և ուղիներով տարածելով՝ ապակողմնորոշում, շեղում ու օտարացնում են հատկապես հավատքի մեջ նոր հաստատվողներին, Քիսուսի Աստվածության և

տիեզերքի Տերը լինելու ճշմարտությունը դեռ նոր-նոր ճանաչողներին ու առավել ևս՝ Նրա Երկրորդ Գալստյանը դեռ նոր-նոր սպասել սկսողներին:

Այս վիճակի և դրա առաջացման պատճառների մասին տարբեր դավադրական անդրադարձները ինչպես վերը նշվեց, դժբախտաբար, առկա են նաև հայ իրականությունում: Այդ դավադրական անդրադարձները՝ որպես «միջազգային օրինաչափություն, օրինականություն ու ճշմարտություն», առավել ուժգնությամբ դրսկորվում են քրիստոնեական հավատքի և դրանցից բխող ու դրա վրա հիմնված գաղափարականության ու բարոյականության հանդեպ հաստատակամ հավատարմություն ցուցաբերողների և հատկապես դրանցով ապրողների ու դրանց համար ակտիվորեն գործողների դեմ:

Այդ դավադրական անդրադարձները, ինչպես անցյալում, այժմ էլ երևում, զգացվում և դիմագրավվում են, սակայն այդ զգացողությունն ու դիմագրավումը շարունակ թուլանում են, որովհետև դավադրությունը, հատկապես վերջին տասնամյակներում, ավելի շատ ու հաճախ (առայժմ կիսածածուկ) կատարվում է թիկունքից ու ներսից՝ բամբասանքներով, զրպարտություններով վարկարեկման, մեկուսացման և բոյկոտի բազում ներողներով ու միջոցներով:

*Ու երբ այս է ու, ըստ երևույթին, սրանից էլ վատ է դրությունը, ի՞նչ պետք է արվի: Ինչպե՞ս արվի, ու ամենակարևորը՝ ո՞ւմ կողմից:*

*Նախ՝ ի՞նչ պետք է արվի. համաժողովրդական դիմադրության հասունացում՝ աշխարհիկ ու հոգևոր հարազատ, ազնիվ, հնուտ և համարձակ դեկավաների կազմակերպական կառավարմանը ու առաջնորդությամբ՝ հաղթանակի հաշվարկով...*

*Ինչպե՞ս արվի. նախևառաջ՝ հավատքով, գաղափարականությամբ, բարոյականությամբ ու ըստ այնմ՝ պատասխանատվության զգացումով և հարատև հետևողականությամբ:*

*Ո՞վ սկսի անել. ազգի հոգեբարոյական, Ֆիզիկական ու գաղափարական անվտանգության պատասխանատունները:*

Ու այս բոլորի հետ՝ միշտ զգուշություն, սակայն ոչ այնպիսին, որը կրերի անգործության և դիմադրողականության ու պաշտպանունակության անկնան, դա **ընդունելի չէ:** Եվ պետք է նաև խուսափել, հեռու մնալ, զգուշանալ տարբեր սադրանքներից, սակայն առանց նվազեցնելու դիմադրությունը, այլ ընդհակառակը՝ մեծացնելով դիմագրավության ուժգնությունը՝ ի հաղթանակ ու ի կյանք:

Նույնպես շատ կարևոր է հաճապատասխան հմտությամբ զգուշացնել ու օգնել նորահաս յուրայիններին, բարեկամներին, «նույն խմորից» եղողներին այնպես, որ առավել զորանան, ու նաև իմաստնանա՝ նրանց դիմադրությունը, որպեսզի անզգուշությամբ զոհ չգնան վերոնշյալ սադրանքներին կամ չվնասվեն՝ հավատալով ստերին, բամբասանքներին ու «միամիտ տարակույսներին» կամ իբրև թե «անմեղ հարցադրումներին», այլ օգտվեն հոգեպես, բարոյապես և կազմակերպորեն:

Եվ մի տակտիկական օգտակար մեթոդ կարող է լինել հավատքին հավատարիմների պաշտպանության կազմակերպական այն մարտավարությունը, որ **գոնե առայժմ,** ըստ երևույթին, ճիշտ կլինի, ներառի հետևյալը. մինչդեռ «վետերան» ավագ սերունդը ըստ հարկի կարող է իրեն բացահայտել հարյուր տոկոսով և ձգտել իր գործունությունը հասցնել նույնպես հարյուր տոկոսի, սակայն նորահասների գործունեությունը (որ նպատակահարմար է՝ լինի նույնպես գործուն) լինի «կիսափակ»... մինչև որ Աստված պաշտպանության համընդիանուր և լայն ասպարեզ ու ճանապարհ բացի: Իսկ Աստված անպայման այդ ու այլ անհրաժեշտը կանի, ճանապարհները կրացի՝ տեսնելով հայության սրտի մաքրությունը:

Ուրեմն՝ մաքրենք մեր սրտերը՝ անհապաղ ու վճռական, Աստուծո օգնությամբ:

Փա՛ռք Նրան:

Երկուշաբթի, 08 - 12 - 2014թ., ժամը 19:10

## **ԱՐԴՅՈՒՔ «ԶԱՐԳԱՑՄԱՆ» ՎԱՅՐԸՆԹԱՑԻ ՄԵՋ ՉԵՆՔ**

Ըստ մեր 1700-ամյա հավատամքի՝ աշխարհում, բնության մեջ և մարդկային հասարակությունում, նաև մարդ անհատի մեջ կա սկիզբ (ծնունդ), զարգացում ու ավարտ՝ վերջ (մահ): Ու եթե կյանքի շարժումը (գործընթացը) եղել է ճիշտ, արդար, այսինքն՝ Աստվածապատգամ ու Աստվածահաճո, ապա կյանքի զարգացման ավարտը՝ վերջը (մահը), լինում է կենարար՝ ծնունդ, կյանք՝ հավիտենական:

Իսկ եթե զարգացումը (գործընթացը) եղել է սխալ, անարդար, այսինքն՝ անաստվածությամբ (Էլ չասած Աստուծո դեմ), ապա բնության և մարդկային հասարակության մեջ (նաև մարդ անհատի, ընտանիքի ու գերդաստանի մեջ և մարդկանց հարաբերություններում) դրա ավարտը՝ վերջը (մահը), լինում է... անկենդանություն ընդմիշտ, հավիտյան:

Եվ մարդկության մեջ ճշմարիտի կենսատու հաստատում՝ հոգեկան ընկալմանք, ըստ հոգեթնկալ երևույթի, եղել է և լինում է փուլերով, նաև վայրիկերումներով, արտահայտված ալիքային հաջորդականությամբ, տարբեր փուլերում՝ նաև առաջընթացով ու հետընթացով ու տարբեր արագությամբ՝ արագ, դանդաղ, երբեմն էլ՝ կանգառ:

Այդես է եղել Աստվածորդու մարդացման սկզբից:

Եվ մարդկությունը լույս տեսավ, լուսավորվեց, որով և առավել հոգեկանացավ, հրճվեց, բարձրացավ, սակայն ինչ-որ ժամանակ համարյա զանգվածաբար ուզեց վերադառնալ դեպի խավար (ինչես և ըստ Հին Կտակարանի՝ Մովսեսի առաջնորդությամբ, Եգիպտոսի ստրկությունից ազատագրվելուց հետո անապատում իսրայելացիների մեջ նրա դեմ տրտունք, բողոք, սպառնալիք և հետո՝ Եգիպտական ստրկություն վերադառ-

նալու ցանկություն ու պահանջ առաջացավ), բայց երբ խավարապատումից՝ կանգառ, քայլայումից՝ դարձ եղավ, և դեպի լույս, դեպի կյանք վերադառնալու ցանկություն ու խորանք առաջացավ, դա չմերժվեց նրան: Եվ նրա այդ շարժումը (գործնթացը) պարբերաբար շարունակվեց՝ հասնելով մեր դարաշրջան (ժամանակակից փուլ):

Եվ լինելով մարդկության մեջ՝ հայությունը ևս գտնվում է այդ փուլում (ինչպես և ամեն մեկս), որն անմիջական զգալիությամբ սկսեց հարածունորեն շեղվել դեպի խավարապատ, կորստարեր վայրընթաց:

Ի՞նչ տևողությամբ է լինելու ներկայիս փուլում այդ վայրընթացը, այն ե՞րբ կավարտվի, ու ե՞րբ Լույսը դարձյալ լիովին դուրս կմղի խավարը մեր միջից, ու ի՞նչ ձևերով կլինի այդ, խավանաբար, հնարավոր չէ ճշտորեն ասել: Սակայն հաստատ կարելի է ասել, որ լույսն անպայման պիտի հաղթի և դուրս մղի խավարը մարդկանց սրտերից, մտքերից և մարդկության հարաբերություններից, մարդկային կյանքից...

Այդ շարժումը կամ գործնթացն իր փուլերով տեղի է ունենում նաև հայության և յուրաքանչյուր հայի մեջ, և մենք գտնվում ենք մարդկային օվկիանոսում՝ որպես հայկական արշիակելագ:

Չի՞ ծածկի մեզ արդյոք **խավարի ցունամին**, եթե շարունակենք գտնվել մարդկային և մանավանդ դրա մեծ մասի առավել **խավար մակրոկլիմայի** մեջ: Ու եթե ընդունենք, որ այդ մակրոկլիման մենք չենք կարող փոխել, այդ դեպքում կարո՞ղ ենք, չէ՞ ընդունել նաև, որ մենք պարտավոր ենք նորոգել, պահել, պահպանել ու եթե հարկ է՝ նորոգ ստեղծել **մեր ազգային միկրոկլիման՝** Աստվածապատգամ, Աստվածահածո անաղարտ գոյությունը՝ հայ ազգային տոհմիկ հոգևոր, գաղափարական և բարոյական հարատև դիմադրությամբ, զարգացմանը ու ըստ այնմ՝ ապրելակերպով...

**Ծանր, մեծ ու հեռագնա պատմական նշանակության հարց,** որին, ըստ երևոյթին, շատ դժվար է պատասխանել, բացի՝ եթե պատասխանի համար ապավինենք մեր հավատքին՝

Յայկյան Աստվածաշնորհի հավատքին՝ արտահայտված նրա հաստատական ազատասիրությամբ ու առավել ևս, եթե մեր ազգի դարավոր անընկրկուն հավատարմությամբ ապավինենք Աստվածորդուն ու արժանանանք Նրա Խաչի գորությանը:

Ու այնժամ մենք մեր հավատքի հոգեկանությամբ, գաղափարականությամբ, բարոյականությամբ ու ըստ այնմ ապրելակերպով կասենք՝ *հաստատուն ոչ՝ խավարին ու հաստատուն այո՛ լուսին*. և մեր փորձությունները կչքանան, տառապանքները կվերանան, ու անձնապես, ազգովի ու պետությամբ կհամակվենք Սուրբ Յոգով:

Կարո՞՞ղ ենք հավատալ այս ճշմարտությանն ու իրականությանը:

#### **Ասվել է. «Յավատա՛ և կիրկվես»:**

Ուրեմն՝ հավատանք, հավատքով ընթանանք և հավատքը սիրով գործի վերածենք՝ հայ ազգի՝ ամեն ինչում լուսավոր վերելքի, նաև ի լուս համայն մարդկության, ու ամենաէականը՝ ի փառս Սուրբ Երրորդության՝ Աստուծոն:

Այս է թելադրում ահազանգը հայոց նահատակների, որին հոգով պարտավոր են անսալ յուրաքանչյուր հայ ծնված մարդ և նրանց գոյացրած Աստվածաշնորհ պետությունը: Գալով հայոց հոգևորականությանն ու հոգևոր իշխանությանը՝ Վստահաբար նրանք պետք է անսացած լինեն հայոց սրբացած հոգիների վերոնշյալ հոգեպարար թելադրանքին:

Տիրոջ ողորմաշատ օգնությամբ:

Չորեքշաբթի, 22 - 09 - 2010թ., ժամը 20:25, Արենք

## ԿՈՂՄԱՎՑՈՒՅՑՆԵՐԻ ՃՇԳՔՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑ

Մարդկության (բայց մենք խոսենք մեր մասին), իայի և հայության ազգային կյանքի «կողմնացույցները», ցավոք սրտի, արհամարհված, անտեսված են: Իսկ երբ այս կամ այն պարագայում, այս կամ այն պատճառով, այնուամենայնիվ, դրանց ուշադրություն է դարձվում, դրանք չեն ծառայում իրենց նպատակին, որովհետև փչացած կամ խախտված են (տեղից). ավելի շատ ապակողմնորոշում են, քան կողմնորոշում:

Այս ինչ տիտուր վիճակ է: Եվ ինչ խնդիր է հարուցում սա, երբ ոեւ ազգի տոհմիկ կերպարն ինչ-որ չափով պահպանած, հայ՝ մնացած և դրանով հային վայել կյանքով ապրել ցանկացող հողի մշակը, բանվորը, տնային տնտեսություն, մասնագետը, մտավորականը, ուսուցիչը, աշակերտը, ուսանողը, հոգևորականը, զինվորը, սպան ու պաշտոնյան փնտրում են հայ կյանքում իրենց տեղը՝ իրենց ազգային և քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, և նայում են «ազգային կողմնացույցին», որպեսզի կողմնորոշվեն մի կողմից՝ գլոբալացող, մյուս կողմից՝ փոքրացող, «իրար խառնվող» այս աշխարհում: Սակայն չի լինում, չի ստացվում, նայում են և տեսնում, որ սլաքը մեկ *N* ցույց տալիս, մեկ էլ՝ *W* կամ *S*, կամ էլ՝ *E*, և իր հայ ակունքներին, իր տոհմիկ ինքնությանը հավատարիմ, հարազատ մնալ ցանկացող բարի Կարապետն ու Յայանուշը չգիտեն՝ ո՞ր կողմն ընթանան, ո՞ր կողմին միանան, ո՞ր կողմին հավատան, որովհետև իրենց մարդկային-ազգային կյանքի ընթացքը որոշող գործիքը՝ «կողմնացույցը», խարարվել, այլասերվել և իր անսարքությամբ, փաստորեն, դավաճանել է:

- Ո՞վ է պատասխանառու դրա համար:

- Չարը՝ թշնամին, որ այդ նպատակն ունի և գործադրում է: Բայց հայը, հայությունը, մանավանդ հայ մտավորական, հոգլուրական և իշխանական վերնախավը չպետք է իր անտարբերությամբ նմանվի պահակակետը («պոստը») լքող կամ այնտեղ քնող զինվորին:

*- Իսկ ո՞վ դատի անտարբեր ու հանցավոր մեղապարտ-մերին:*

- Դժվար հարց է, որովհետև արդար մնացե՞լ է արդյոք, որ դատ անի, «առաջինը քար օցի»... Բոլորս ենք մեղապոր, մեղապարտ, որովհետև բոլորս էլ հանցավոր կամ էլ հանցակից ենք և շարունակում ենք այդպիսին լինել, մասամբ՝ անտարբերությամբ կամ վախսուտությամբ, մասամբ էլ՝ հուսահատությամբ, որը նույնպես չի արդարացվում: Ինչպե՞ս կարելի է, որ հայ քրիստոնյան վախենա կամ հուսահատվի ու անտարբերանա, խորթանա, դասալքի: Չե՞ որ մեր պաշտած խաչն ամենազոր է: Ու եթե մենք քրիստոնյաներ ենք հավատքով՝ իսկական, այլ ոչ թե ձևակա՞ն, ինչո՞ւ չենք ապավինում Խաչին և զինվոր ու զորանում Խաչով, այսինքն՝ հավիտյանս Տեր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի հավատքով, որ նշանակում է Արարիչ Յոր՝ Երկնքի և Երկրի, տեսանելիների ու անտեսանելիների Արարիչ Աստուծոն հավատքով, որը թե՛ մարդկային կյանքի և թե՛ հայ կյանքի «կողմնացույցները» միշտ սարքին ու լուսավոր է պահում, որպեսզի անկեղծ հավատացյալը «Երբեք ոտքը քարին չխփի...»:

Մեր մեծերը, մեր սուրբ նախնիները, մեր նահատակներն այդպես են իրենց մարդկային ու ազգային կյանքի ճիշտ ընթացքը գտել, որանով ընթացել և դրա հետագիծը, որպես սուրբ ժառանգություն, մեզ կտակել...

Բայց այս էական ճշմարտությունը մենք կարող ենք տեսնել, ճանաչել, հասկանալ և որդեգրել, եթե իսկապես, իրակա՞ն քրիստոնյաներ ենք: Եթե ոչ, չե՞նք, այդ դեպքում կան բաներ, որ պետք է անպայման անենք, որպեսզի լինենք, և բաներ, որ անպայման չանենք, որպեսզի լինենք: Զանելիքներից են՝ արհանարիելը, անտեսելը մեր նախնյաց հավատքի արդարու-

թյունը, զորությունն ու ճշմարտացիությունը, և չդադարել ամբողջ էռթյանք այն փնտրելուց, դրան ապավիճնելուց և դրանով ապրելուց: Իսկ անելիքներից է այն, որ թե՛ պատմականորեն և թե՛ ներկայիս մեր բոլոր անհաջողությունների, պարտությունների և կորուստների պատճառները փնտրենք մեր և հիմնականում մեր դեկավարության ու մտավորականության մեծ մասի՝ Աստուծո հավատքից (փաստորեն) հեռանալու և քրիստոսաներժ կեցվածք ընդունելու մեջ:

#### -Ուրեմն:

-Ուրեմն՝ զգաստանանք, մեղայի գանք, բոթափենք մեր վրայից հավատազրկության թմբիրը. հոգեպես վերածնվենք մեր նախնիների սուրբ հավատքով, վերափոխվենք մեր հավատքից բխող և նրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, բարոյականությամբ ու ըստ այդմ ապրելով՝ դառնանք ոչ թե «նոր» հայ՝ իբրև թե ժամանակակից, առաջադեմ (իսկ իրականում՝ փչացած, անպետք ու հետընթաց), այլ դառնանք մեր նախնյաց հարազատ՝ նոր հետևորդներ և լինենք նրանց հավատքի և դրանից բխող ու դրա վրա հիմնված գաղափարի ու բարոյական հավատարմության ժամանակակից ընթացքի առաջին շարքում՝ Աստվածաշնորհ մեր տոհմիկ դրոշով, նորոգ, սարքին, ճիշտ «կողմնացույցով» և խաղաղության, զարգացման ու բարգավաճման Երկնային «կաղաստրի» հաստատմամբ երաշխավորված ճանապարհային ու տեղագրական «քարտեզներով»:

Հայ նարդիկ, չընկճվենք, չվախենանք, չվիատվենք երեք: Իսկական ուժը մեր կողմն է, մեզ է սպասում, մեզ է փնտրում...

Զարթնիր, լա՛ո, կոչում են վերևից քո հարազատ, մեծ, քաջ և սուրբ նախնիները... Գունդ ի գունդ՝ առաջ:

Աստուծո օգնությամբ:

Կիրակի, 28 - 12 - 2003թ., ժամը 07:10

## **ՆԱԽԱՊԱՏՐԱՍՎԱԾ ՆԱՎԱՔԵԿՈՒՄՆԵՐ**

Առանց կողմնացույցի, քարտեզի, դեկի ու առագաստի, խարիսուլ մակույկով ո՞վ դուրս կգա նավարկության այն անծանոթ օվկիանոսում, որը պատրաստ է կլանելու և ստրկացնելու հոգիներ, մտքեր և սրտեր:

Բայց նավարկությունը հրապուրիչ է թվում, ընկալվում է գեղազարդ ու ցանկալի՝ Որիսևսին հրապուրող սիրենների կանչի նման, որը լսելով՝ մոռացության է մատնվում ինքնությունն, թուլանում է կամքք, ու դու այլևս չես կարող որոշում ընդունել, որովհետև դու այլևս քեզ չես պատկանում ու այլևս դու չես գնում, այլ քեզ քշում-տանում են, և կորցնում ես եռությունն, որովհետև ընկել ես չարի լարած ծուլակը՝ ի կորուստ ոչ միայն մարմնով, այլև հոգով, և ոչ միայն այժմ, այլև ընդմիշտ, հավիտյանս...

Հետևապես ինչո՞ւ ես դուրս գալիս քո նախնիների, քո մեծ ու սուրբ հայրերի խորթ համարած տարածություն, ո՞վ է քեզ կանչում այնտեղ, ինչո՞ւ է իբրև թե բարեկամորեն քեզ հրավիրում, երբ ինքն էլ հայտնապես չարախնդում է, թե՝ «ձրի պանիրը միայն մկան թակարդում է լինում»։ Բայց հիմա քեզ միայն «ձրի պանիր» չի հրամցնում, այլև «հազար ու մեկ գիշերների» շվայտությունն է գովազդում՝ խոստումներով սին։

Եվ դա բնական օվկիանոսը չէ, ուր պետք է լինես, և որի խութերն ու հոսանքները կարող են քարտեզել, հողմերն ու ալիքները՝ կանխատեսել և սովորել անվտանգ նավարկել քո՛ կամքով, քո՛ նապատակով և ի շահ քեզ ու քո յուրայինների։

Դա չարի սարքած օվկիանոսն է, որի խութերը նենգաստելջ են, հոսանքները՝ մոլորեցնող, հողմերն ու ալիքները՝ արհեստական-դավադիր և միշտ անկանխատեսելի՝ հափշտա-

կելու, խորտակելու և գերելու խարվածների մտքերը, մարմիններն ու հոգիններն ի կորուստ...

Ո՞րն է, ինչպե՞ս է կոչվում այդ օվկիանոսը, որ մեզ կանչում է խարկանքով, և մենք գնում ենք տենչանքով՝ մտամոլոր, անպատճաստ ու անկարող պայքարելու նրա ալիքների դեմ և կուլ չգնալու նրա անդունդներին... Եվ ո՞ւր է մեր ազգային այն հաստատությունը, կառույցը, որ դարերով պաշտպանում էր հայության այդպիսի փորձություններից ու փորձանքներից: Եվ դրա չերևալը, չիննելն իր անզորությա՞ն, անտարբերությա՞ն հետևանքով են, թե՞ ինքն էլ է խարված և քշվում-տարվում է...

Եվ մեզ կանգնեցնո՞ղ չկա, ահազանգո՞ղ չկա և կողմնորոշո՞ղ չկա, ընդհակառակը, խարդախ օտարին միացած՝ յուրայինն էլ է դրդում ու հրում գնալ խարդախ հրապույրների կորստաբեր ճամփաներով՝ դեպի հոգեկուլ օվկիանոս...

Զարրնի՛ր, լա՛ո, խաչտ վերցրո՛ւ, ուղղվի՛ր, իմաստնացի՛ր, զորացի՛ր, դիմադրի՛ր, որ պաշտպանես եռթյունդ ու ապրես գլուխոդ բարձր, ճակատդ՝ բաց, պատվով, զորեղ ու երջանիկ...

03 - 12 - 2015թ., ժամը 01:00

## ԴՈՒ Ո՞Վ ԵՍ, ՈՐ...

Ռու ո՞վ ես, որ խոսում ես Աստուծո մասին, երբ չես ճանաչում և չգիտես, թե ով է Նա:

Ինչպե՞ս ես խոսում Աստուծո մասին, նաև դատողություններ անում ու այդ մասին ուրիշներին էլ հայտնում, երբ չես ճանաչում և չգիտես, թե ով է Նա:

Եվ երբեք չես էլ կարող ճանաչել ու իմանալ, թե ով է Նա, եթե չճանաչես, չհավատաս և չպաշտես Նրա Միածին Որդուն՝ Յիսուսին:

Իսկ ինչպե՞ս ճանաչես, հավատաս և պաշտես Քրիստոս Յիսուսին, երբ դա անհնար է, եթե սիրտդ չմաքրես ու այն մաքուր չպահես:

Իսկ ինչպե՞ս դա անես՝ միշտ Նրան նայելով, Նրա խոսքին անսալով, Նրանից սովորելով և Նրա պատգամներով ապրելով:

Այդ անելու համար ասվել է.

«Հիսուսին նայենք, միայն Հիսուսին»:

«Հավատա՛ և կփրկվես»:

«Կյանքը Նրանով է»:

05 - 06 - 2012թ.

## **Ո՞Ր ԼԵԶՈՒՆ ԵՆՔ ԸՆԴՈՒՆՈՒՄ, ՀԱՍԿԱՆՈՒՄ**

Զայների ներդաշնակությունը, թվում է, երկնայինի հետ հաղորդակցության լեզու է: Եվ ի տարբերություն խոսքի, որի արտահայտելու կարողությունն ըստ երևոյթին անսահման չէ, երաժշտությունը, երաժշտական լեզվի արտահայտման կարողությունը անսահմանափակ են թվում: Իսկ մենք այժմ մեր ազգի մեջ և Յայաստանում խոսո՞ւմ ենք այդ լեզվով, կա՞ն, մնացե՞լ են մեղեդիներ, ձայներ, որ այդպես խոսեն և մեզ՝ ժողովրդին, խոսեցնեն երկնքի հետ:

Իսկ «պորոն ձայների լեզվով» մի՞թե կարելի է ունենալ այդպիսի հաղորդակցություն: Թե՞ այլևս պետք չունենք այդպիսի հաղորդակցության, որովհետև արդեն իսկ քանված հոգեկանությունից՝ մեր սիրտն ու խիղճը պլաստիկ են դարձել:

Չանտեսե՞նք, չարհամարհե՞նք, չշոշանցե՞նք երկնապարգևների հոգեկանությունը, ազատագրվե՞նք չարից՝ հավատարին լինելով հավատքին:

18 - 12 - 2003թ., ժամը 18:00

## ԼՐԱՑՆՈՂ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Կրկնությունը, նանավանդ ստեղծագործ կրկնությունը, որը որոշակի նոր երանգով լրացնում, ամբողջացնում, ավելի արտահայտիչ, նաև գեղեցիկ է դարձնում ու կատարելագործում է առաջնայինը, բնության փիլիսոփայության արտահայտությունն է մարդու թե՛ ուսուցման և թե՛ վայելքի համար՝ բխող Աստվածային սիրուց:

Պատկերացնենք, որ երաժշտությունը, պոեզիան, կերպարվեստը, քանդակագործությունը, ճարտարապետությունը և այլն, և այլն, կրկնության նորանոր երանգներով ստեղծված չի-նեին: Նույնը և՝ սերն ու բարությունը, բուսական ու կենդանական կյանքը, տիեզերքն ու ժամանակը, Աստուծո՞ւ ամեն ինչի ստեղծագործությունը՝ իր Միածին Որդու միջոցով, որ իր հավերժական նույնությունը՝ կայունությունն ու Լույսը, կրկնում է ստեղծագործական օրինաչափության նորանոր երանգներով (նաև մարդու արարման և իր շնորհով կատարելագործման՝ հավատքի միջոցով առ Ավետարանն ու Խաչը), իր կատարյալի հավերժականության սիրով, որի արտահայտությունն իր գրառատ ներողամտությունն է, որ պաշտպանում, պահպանում է մարդու, մարդկության և մարդկային կյանքի, տիեզերքի հետ ներդաշնակությունն ըստ Երկնայինի, Տերունական աղոթքի:

**«...Քո կամքը լինի երկրի վրա, ինչպես որ երկմքում է...»:**

Բարոր կրկնության հատկության՝ հարատև վերածննդի և հավերժ ներդաշնակության դեմ է գործում չարը՝ նպատակ ունենալով խախտել դրանք՝ մարդկության հետ միասին, մեջն էլ՝ հայն ու հայությունը:

Եվ դա՛ պետք է զգուշացվի մեր ազգային ահազանգով:

Աստվածագո՞ւթ ԱՐԱԶԱՆՎ՝ հայի ու հայության փրկության. դուրս գալու համար չարի աստվածամերժ, կորստաբեր

համատարած ընթացքից՝ նաև օրինակ ցույց տալով իր եղբայր, քույր մարդուն ու մարդկությանը: Եվ այդ ու դրա նման ամեն ինչ՝ օգնությամբ ու ի փառս Արարիչ Հոր, Որդու և Սուրբ Հոգու՝ Աստուծու:

Կիրակի, 13 - 01 - 2013թ., ժամը 22:00

## **ՄՄՐԴԿՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԸ ԶԱՐԹՈՇՔ Է ՊԱՀԱՆՁՈՒՄ (Նույնպես և հայ կյանքն է պահանջում)**

Այլևս կասկած կա՞՝, որևէ մեկը կարո՞ղ է տարակուսել, որ քրիստոնեության վրա համընդիանուր գրոհ է իրականացվում՝ բազմաթիվ ու բազմատեսակ, տեսանելի ու անտեսանելի միջոցներով և նորանոր դավադրական մեթոդներով:

Քրիստոնեության դեմ անհաշտ թշնամական գրոհ է տեղի ունենում, որովհետև թշնամությունը Յիսուս Քրիստոսի դեմ է այնպես, ինչպես երբ գրպարտում, չարախոսում, ծաղրում, նենգաբանում էին Նրան ու հետո էլ՝ «Խա՛զ հանիր, խա՛զ հանիր, վերցրու Նրան» գոռալով՝ պահանջում Նրան կյանքից գրկել: Իսկ այժմ էլ Նրա հավանքը վերացնելու՝ նրանց հայտնի ու բաքուն նենգավոր նպատակը և չար գործերը շարունակվում են:

Ու երբ դա տեղի է ունենում Յիսուս Քրիստոսի դեմ, նշանակում է նաև յուրաքանչյուր քրիստոնյայի դեմ է՝ կորստյան մատնելու համար նրան թե՛ հոգեպես և թե՛ ֆիզիկապես՝ **առաջին հերթին հավատազուկելով՝ գաղափարազրկելով և բարոյապես այլասերելով:** Ըստ Երևույթին, սրա նասին այլևս որևէ կասկած չկա, գոնե յուրաքանչյուր բանական անձի ու հասարակության համար:

Բայց եթե չկա այդպիսի կասկած, ապա ինչո՞ւ, ինչպե՞ս է լինում, որ քրիստոնյաները մեծ նասանք լոռուն են՝ կարծես ընդարձակած անտարբերությամբ կամ հուսահատությամբ...

Սակայն իայ քրիստոնյան ինչպե՞ս կարող է հուսահատվել, տկարանալ և ուրացողի պես անտարբեր լինել ու իր կեցվածքով գուցե նաև ջուր լցնել չարի՝ հակաքրիստոսի ջրադացին:

Ինչպե՞ս է լինում սա, այ իայ մարդ: Չո նախնիքը՝ պապերն ու տատերը և նրանց տատերն ու պապերը, Տիրոց հանդեպ իրենց հավատքը չուրացան Տարոնում, Վասպուրականում, Կարինում, Զեյթունում, Շիրակում, Արարատյան դաշտում, Սյունիքում, Արցախում ու հայրենիքի այլ տեղերում ու նաև դրսում, դաժան տարագրության մեջ, ուր իայն իր հայությունը և հարազատ մարդկային-ազգային ինքնությունը պահում էր հավատքով ու սրբությամբ, հիմա ինչո՞ւ, ինչպե՞ս է լինում, որ դու շեղվել ես նրանցից և Արևմուտքի քո հավատակիցներից շատերի պես տեղի ես տալիս, լռում, համակերպվում, հանձնվում ես, որը նշանակում է նաև համագործակցություն քո էռության, քո հավատքի թշնամիների հետ, մանավանդ քո երեխաների, թռոների, քո ազգի մատաղ սերնդի սրտերն ու մտքերը գերելով, ստրկացնելով՝ նրանց հոգիները սպանել ուզողների հետ:

Ոչ շատ վաղ անցյալի արհավիրքների առաջ կանգնած իայ մայրերի կոչը՝ «Զարթնի՛ր, որդեա՛կ, յուշ բեր, վեր կաց...»-ը՝ որպես ազգային ահազանգ, ինչում է և մեր օրերում՝ հիշեցնելով նաև պատգամները մեր նախնիների, մեծերի, սրբերի ու վասն հավատու և վասն հայրենյաց նահատակների, թե ինչպե՞ս են պաշտպանվում ու պահպանվում ազգը, հայրենիքն ու պետությունը՝ Աստուծո օգնությամբ:

Փա՛ռք Նրան:

\* \* \*

Դայի ազնիվ գիտակցությամբ ու մաքուր խղճով կարո՞ղ ենք ասել, որ մեր հայրերի քրիստոնյա ազգն ու քրիստոնյա հայրենիք Դայաստանն այժմ էլ նույնն են հավատքի մեջ, ինչպես ավետարանական վկայությամբ՝ Դիսուս Քրիստոսը՝ Տերը, նույնն է երեկ, այսօր և հավիտյանս: Մենք մի՞թե չեղված, հեռացած մեր ազգի լուսավոր հավատքից և նույնիսկ

կամաք թե ակամա, ուղղակի կամ անուղղակի չենք գործում մեր ինքնության ու էության հավատքի դեմ: Այս հարցը դրված է մեզանից յուրաքանչյուրի և հատկապես մեր հոգևոր, աշխարհիկ ու մտավորական դեկավարության առաջ: Ու նաև ինչպիսի՞ն կլինեն այդ հարցի՝ «այո» կամ «ոչ» պատասխանի հետևանքները: Չէ՞ որ դա կապ ունի ոչ միայն մեր անձերի, այլև մեր ազգային, պետական ու նաև մարդկային գոյության պաշտպանության հետ...

10 - 01 - 2019թ.

## **ՀՊԱՆՑՅԱԼ ԴԻՏԱՐԿՈՒՄ**

Ամանորը՝ Նոր տարին, աշխարհիկ տոն է, ու թեև տոնակատարության համար պաշտոնապես հատկացվում է երկու օր, մեր հանրային (պետական) ու մասնավոր հեռուստաընկերությունները երկու շաբաթ գիշեր-ցերեկ աղմկալից «տոնում են» (այն էլ հաճախ հեթանոսաբար), իսկ Սուրբ Ծննդյան տոնը, որի իմաստը կյանքի լուսավորումն է հավիտյան... հայատանյան հեռուստաընկերությունների մեջ մասի կողմից չի տոնվում, չի նշվում ըստ իր իմաստի: Ամանորի համեմատ՝ 1/10 չափով իսկ չի նշվում:

Այո՛, նախախորհրդային միջազգային սեկույարիզմը, հետո խորհրդային աթեիզմը՝ աստվածամերժությունն ու աստվածամարտությունը, այնուհետև ժամանակակից սեկույարիզմը և նորո՞գ նյութապաշտությունը մեզ դաստիարակել, դաստիարակում և մղում են դեպի ունայնություն ու անկենդան կորուստ: Սակայն մեր նախնիք (մեղա՝, մեղա՝) ոչխար չէին, մենք ինչո՞ւ ենք այդպիսին դառնալով՝ քշվում, տարվում հոգիների անդունդ...

Ո՞ւր եք, Վարդանանք: Ո՞ւր եք, Ղևոնդյանք:

Եվ ո՞ւր են մեր ազգի հոգեկան, գաղափարական և բարոյական գիտակցությունն ու քաջությունը: Իսկ իսկ՝ լրի՞կ է կորել...

Կիրակի, 27 - 11 - 2011թ., ժամը 20:00

## **ՄՈՒՏԱԳԻԱՆ**

### **(Մուտացիան մեր ազգային գիտակցության մեջ)**

Ըստ երևույթին՝ մեր այսօրյա ազգային ինքնագիտակցության, որով և պարտաճանաչության և պատրաստակամության մեջ երևացող մուտացիան արդյունք է այն մուտացիայի, որը տեղի է ունեցել մեր մարդկային-ազգային «հոգեկանության, ազգային գաղափարականության և հայ տոհմիկ բարոյական արժեհամակարգի»՝ ժամանակակիցներիս ընթանական և դրանց հանդեպ հավատարմության մեջ:

Յայ ազգային էության մեջ տեղի ունեցած այդ մուտացիան և դրա հետևանքները, այս կամ այն չափով, առկա են հայության բոլոր հատվածների ու խավերի մեջ և հատկապես իրենց բնօրրաններից բռնազորվածների մեջ. տարոնցիների՝ մշեցիների, սասունցիների և Տարոնի ու շրջակա այլ վայրերի սերունդների մեջ, մանավանդ որ վերջիններս, ինչպես և Արևմտյան Յայաստանի այլ նահանգներից սերվածները, գրկված են իրենց հայրենի բնօրրանի առանձնահատուկ հայ կյանքից՝ մշակույթից, կենցաղից, սովորություններից, ավանդույթներից և հոգեբանական մթնոլորտից: Այս ինաստով առավել ու առանձնահատուկ անբարենպաստ վիճակում է հատկապես արտերկրի հայությունը:

- Ի՞նչ կարելի է անել, ինչպես կանգնեցնել հայի էության մուտացիայի գործընթացը և վերականգնել նրա Աստվածակերտ բնիկ, տոհմիկ, հարազատ էությունը:

- Մարդկության ու մեր ազգային պատմական ուրույն փորձով և մանավանդ մեր բազմադարյան հավատքի տրա-

մարանությամբ՝ այդ հնարավոր է ու կարելի է անել հայության հավատքի վերածննդով, որով և՝ գաղափարական, որով էլ՝ բարոյական վերածնունդներով ու ըստ այնմ՝ համապատասխան ժամանակակից ապրելակերպով:

- Հայության ու Հայաստանի ո՞ր պատասխանատու կառույցները և պաշտոնյաները պետք է ծրագրեն, կազմակերպեն ու կենսագործեն մեր ազգային հոգեկան, գաղափարական ու բարոյական վերածնունդը:

- Այդ հարցի սպառիչ և անանց հստակությամբ ու հեղինակությամբ պատասխանը վաղուց տվել են մեր ազգի մեծերը, սրբերը, նահատակները՝ մեզ ժառանգություն թողած իրենց պատգամներում և իրենց ապրած կյանքի օրինակներով: Միայն թե այն հասկանալու, ըմբռնելու համար մեզ հարկ է հավատքով՝ խիղճ ու գիտակցություն, եթե դրանք մնացել են մեր մեջ՝ զերծ ամենայն ձևականությունից:

Աստված մեզ գրա:

Չորեքշաբթի, 30 - 04 - 2003թ., Ժամը 04:40

## **ԿԱՏԱՐՎԱԾԻ ՀԱՎԱՏՔՈՎ ԸՆԿԱՆՈՒՄԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Աստված հայ ազգն ստեղծեց՝ իր սիրեցյալ Հայկին համակելով իր Հոգով:

Եվ Սուրբ Հոգով իմաստնացած Հայկը, դառնալով արդարամիտ ու ազատասեր, մերժեց չարի՝ «բարվոք կյանքի» խոստումը:

Եվ Աստվածաշնորհ հավատքի վստահությամբ անվախացած՝ նա չերկյուղեց չարի՝ նաև իրեն ու իր տոհմը ոչնչացնելու սպառնալիքից ու այն կիրառելու քանակական զորության առավելությունից, այլ հավատարմությամբ իր Արարիչ Հոր շնորհած հավատքին՝ կրվեց, հաղթեց ու դարձավ հիմնադիրնահապետն Աստվածատեղ հայ ազգի:

Եվ ազատասեր Յայկի ազան հոգով հայ ազգի գոյությունը կատարումն է Արարիչ Յոր կամքի, նպատակի, ծրագրի:

Եվ Աստվածաշնորհ հավատքին հայոց հավատարմությունն ու Սուրբ Յոգով համակված հայ հոգու (և ինչ որ բխում է դրանից) գոյության սրբությամբ պահպաննան հետևողական, հարատև ծառայությունը գոյացնում է հայ կյանքի ինաստը՝ **Յայկականությունը<sup>1</sup>**:

Եվ այդ ինաստը խորապես արտահայտվում է Յայ Ազգային Գաղափարախոսությամբ (ՂԱԳ): Միակ ՂԱԳ-ով: **Այս ՂԱԳով, որը բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա՝ Ավետարանով և Խաչով:**

Եվ սա հոգեպարար գոյությունն է հայկականության:

Եվ սուրբ է, և քաղցր է, և հավերժությամբ է պարուրում հայկականությունը:

Եվ Երկնքում մարդկային-ազգային տիրագույն Եղելություն է գրանցվում, Երբ այս աշխարհում հայ ծնված մարդն անցնում, գնում է կյանքից՝ առանց տեսնելու, զգալու, ապրելու Արարչաբուխ հայկականության կենարար Էռթյունը՝ դրա լույսը, քաղցրությունը և Աստվածասիրությունն ու Աստվածապաշտությունը՝ Երկրայինից դեպի Երկնային, Երկրից դեպի Երկինք:

\* \* \*

Եվ Երկրայնորեն իսկ իմաստավորված մեր ՂԱԳ-ի դեմ դարավոր թշնամական արարքների և դրանց հետ մեր ներքին վարակվածության նյած պայքարի պատճառած վնասները խեղել ու զգալիորեն նվազեցրել են հայ մարդու և հայության բարեմասնությունները:

<sup>1</sup> **Խմբագրի կողմից.** քանի որ այս և Վարդան Գրիշենցի այլ իրատարակություններում հաճախ է հանդիպում «**Յայկականություն**» հիմնարար Եզրույթը (տերմինը), ուստի, փոքր-ինչ խախտելով «Ահազանգի» և հատկապես «Արատներ, թերացումներ» գլխի նյութերի տրամաբանական շղթան, նպատակային համարվեց հաջորդ հոդվածում ներկայացնել հեղինակի՝ **«Յայկականության»** ըմբռնման ավելի հստակ շարադրանքը:

Եվ սա, լինելով էապես կորստաբեր, սակայն համարյա լիովին անտեսված վտանգ, **ահազանգում է:** Ահազանգում է՝ պահանջելով ազգի և մանավանդ նրա կրիտիկական զանգ-վածի կողմից համապատասխան անդրադարձ:

Գոնե այժմ, երբ բազում դարերի պետականազրկությունից հետո պետականացած ենք, և պետական մակարդակի կարող են լինել մեր պաշտպանության ու վերականգնման միջոցներն ու ջանքերը, ապա «Ուշքի եկ»-ը պետք է նոր հնչեղությամբ կոչվի, ահազանգի, որպեսզի թուներ հանի առաջին հերթին հայության հոգին, խիղճն ու միտքը՝ գաղափարը, որ դրանք լիովին ազատագրվեն, մաքրվեն ու հայորեն ապրեն, գործեն հայկականության՝ մարդկային-ազգային Աստվածապատգամ, Աստվածահածո ու Աստվածասեր կյանքի համար, որը նաև հօգուտ մարդկության է ու ամենաէականը՝ ի փառ Սուլը երրորդության՝ Աստուծու:

## ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Հայկականությունն** աշխարհիկ հայ մարդու՝ քրիստոնեական հոգեկիր կյանքով ապրումն է: Եվ դրա մեջ ամեն ինչ է՝ հայ ազգը, հայրենիք Հայաստանը, հայ ընկերությունը, ընտանիքը, հասարակությունը, սերը, գիտակցությունը, կրթությունը, գիտությունը, մշակույթը, կենսակերպը և միշտ ու ամեն ինչում բարուն հետևելը՝ հավատարմությամբ Հայոց տոհմիկ հավատամքին:

Հայ Ազգային Գաղափարախոսության (ՀԱԳ) համաձայն՝ կարող է լինել հայ՝ իսկական, իրական, այսինքն՝ բովանդակալից հայկականությամբ և հայ՝ օտարացած, ծնական, այսինքն՝ բովանդակագուրեկ հայկականությամբ:

Հայկականությունը ոչ թե լոկ ժառանգական, այլ ժառանգական-հոգեկան, բարոյական, գաղափարական հատկություն է և դրանց հիման վրա միայն՝ նաև լեզվական, մշակութային և

հայրենակցական պատկանելություն ու քաղաքացիական կարգավիճակ: Եվ վերջինս՝ քաղաքացիական կարգավիճակը, ոչ թե քաղաքական-վարչական կարգավիճակի առումով լոկ անձնագրով է, այլ նախևառաջ ազգային պատկանելության հոգեբարոյական պարտքի գաղափարական գիտակցությամբ:

Այս գիտակցությամբ է, որ հայի Հայկականությունը բովանդակալից է: Բովանդակություն, որը կերտվում է Հայ Ազգային Գաղափարախոսությամբ: Եվ հայն իր կյանքի իմաստը գտնում և նպատակը հանարում է ծառայելն Աստծուն՝ ծառայելով իր ազգին՝ հայությանը, որպեսզի իր ազգն էլ ծառայի Աստծուն՝ ծառայելով մարդկությանը, որպեսզի մարդկությունն էլ ծառայի Աստծուն՝ միշտ, ամենուր, ամեն ինչում:

Հայ Ազգային Գաղափարախոսության հետ ամենահարազատ ու սերտ առնչությունն ունի Տարոնական ոգու գաղափարը:

Տարոնական ոգին գոյացած է Ավետարանի և Խաչի հավատքի հավերժական շնորհից, սրբությունից, բարությունից, իմաստությունից, գիտությունից, արդարամտությունից, քաջությունից ու Աստուծո՞ն՝ Ազգի և մարդկության նկատմամբ անսասան, անխախտ սիրուց՝ հաստատագրված Մամիկոնեից Ուխտով:

Իսկ ի՞նչ է Տարոնը հայ ազգի համար: Տարոնը նախևառաջ Ոգի է, Աստվածաշունչ Ոգի, որը հավիտյան է: Տարոնական Ոգին Հավատքի աղբյուր է, և այդ հավատքից ու հավատքով՝ գաղափարախոսություն, հավատարմություն և ծառայություն՝ անմահ հոգու պարտքի հավիտենական հատուցման գիտակցումով: Գիտակցում, որը սրբագրոծվեց և հավերժացավ Վարդանանց նահատակությամբ՝ վասն Հիսուսի և վասն Ազգի...

Տարոն աշխարհն իր ոգով հայ պետականության գաղափարի հայրն է, Արարատյան աշխարհն իր ոգով՝ մայրը:

**Հայկականությունը բաղկացած և միավորված է.**

մեկ ազգից՝ հայ,

մեկ հայրենիքով՝ Հայաստան,

և մեկ հավատքով՝ քրիստոնեություն:

Այս Երրորդությամբ իր գոյության էությունը բաղկացնող Երրորդությունը սնում, պահում ու իմաստավորում է Հայկականությունը:

Հայկականության որակը, կենսունակությունը և գոյության հարատևությունը պայմանավորված են իր էության բաղադրության՝ Երրորդության որակով:

Եվ այդ Երրորդության հոգին (հիմքը և գլուխը) հավատքն է:

Հավերժական էության՝ քրիստոնեական հավատքի աղբյուր Աստվածաշնչի համաձայն՝ Աստվածային լույսով՝ սիրով շնորհված հավատքն արդարացնում, ստեղծագործում և կյանք է տալիս: Աշխարհն ու մարդկությունը դրանով են կայացել և գոյատևում են: Եթե որևէ ժամանակ աշխարհի և մարդկության մեջ այդ հավատքը «կրիտիկական» չափից նվազի, դրանց գոյությունը կդադարի:

Եվ ինչ աստիճանի որ լինում են ազգի այդ հավատքը և հավատքով գործերը, այն աստիճանի են լինում ազգի կենսունակությունը, գոյավիճակը, դրությունը, հնարավորությունը և հարատևությունը:

Այն հայը, որ Հայ Ազգային Գաղափարախսությամբ՝ ազգային ոգով, դրանց բխող գիտակցությամբ ու նաև ֆիզիկապես, հաղորդվում է իր ծնողների՝ Տարոնի ու Արարատյան աշխարհների էությանը և կյանքի բոլոր հանգրվաններում ապրում է այդ էությամբ, անմահանում է...

Մարմինը, ուր հոգին կարող է ապրել, ազգն է:

Եվ մարմնի տունը, ուր ազգը կարող է պահպանվել, զարգանալ, աճել և բարգավաճել, հայրենիքն է՝ Հայաստանը:

Հոգին՝ հավատքը, եթե Աստված մի՛ արասցե, պատուհասվի, տկարանա ու կորչի, ապա կկորչի նաև մարմինը՝ ազգը, ու անպայման նաև մարմնի տունը՝ Հայաստանը:

Սակայն եթե պատուհասը մարմնին՝ տանը հասնի, բայց հոգին առողջ մնա, ապա մարմինը՝ տունը, ինչպիսի տխուր, բացասական վիճակում էլ լինի, կլինի միայն ժամանակավոր, և նրա փառքի, պատվի և կենսունակության ու կենսաբերության

Վերականգնումն ու վերելքը նույնպես կլինեն միայն ժամանակի հարց:

**Դայլկականության արժեքներից**, որպես միջուկ, դարերի ընթացքում եղել են հավատքից բխող հայ հոգևոր մշակույթը և հոգեկանությամբ ձևավորված Աստվածաշնչյան հայ կրթադաստիարակչությունն ու գիտությունը: Եվ՝

-**Դայլկականությունն Աստվածաստեղծ մարդկային ընտանիքի ազգային ազնվազարմ տեսակի հայկական բովանդակությունն է:**

- **Դայլկականությունն ունեցել է մարդկային ուրույն հոգեկերտվածք, խառնվածք և նկարագիր, որոնք սերում են մարդու մարդկայնացման հոգեվիճակի սկզբնավորումից: Թե այժմ դրանցից ինչքա՞ն է մնացել, եական նշանակությամբ հարց է, որն աղերս ունի լուծվելու ազգային և պետական բացահայտմամբ:**

-**Դայլկականության հավատադրոշն այդ հոգեկերտվածքից, խառնվածքից ու նկարագրից աշխարհընկալումն արդյունք է (մարդկային) Դայլկականության տոհմիկ հավատանքի և գաղափարականության, որոնք ազգային լեզվամտածողությամբ ձևավորել են հայի տոհմիկ մշակութային զգայունությունը (զգացողականությունը) և դրա արտահայտությունը:**

-**Դայլկականությունը**, լինելով մարդկային ընտանիքի ազնվազարմ ազգային տեսակի էության հայկական բովանդակությունը, կազմում է մարդկային խառնվածքի և նկարագրի հատուկ տեսակ: Այդ տեսակի հոգեկանությունը, զգայունությունը սերում են մարդու մարդկայնացման հոգեվիճակի սկզբնավորումից: Այն նման է իր Դայլկական բնաշխարհի ուրույն հատկություններին և խորքում կրում է Աստվածակերտության հավատքի դրոշմը: Այդ հավատքից առաջացող աշխարհընկալման արդյունք է Դայլկականության տոհմիկ գաղափարականությունը, գաղափարապաշտությունը և դրան ավելացրած՝ հայի հոգեմտավոր զգացողությամբ պայմանավորված տոհմիկ մշակույթը:

**- Դայկականության** հավատադրոշմ հոգեկանությունը շնորհնելավ պատրաստականությանք ընկալեց Աստվածության խորհուրդը և դրանով՝ Քրիստոսի Աստվածության ծշմարտությունը՝ կյանքի ծշմարտությունը: Որով և Աստվածաշնորհ Ավետարանի ու Խաչի հավատքով հայկականությունը հաղորդվեց իրական կյանքին՝ ստանալով որակական թռիչքի թևեր...

**- Դայկականությամբ** հայն անպայման ունեցել է և այժմ էլ հաստատապես ունի Երկրադաքացիություն. մեկն այս աշխարհի (մեկ և ավելի) քաղաքացիություն (անկախ իր վիճակից ու ապրած վայրից) և մյուսը՝ հիմնականը՝ Աստուծոն Երկնային Արքայության, որը նաև իր աշխարհիկ կյանքում քաղաքացիություն է, սակայն՝ հոգևոր:

Ու իր այդ հոգևոր քաղաքացիությանը գիտակից ու հավատարիմ հայը տարբեր է, նա ուրիշ է. նա ազնիվ, հաստատուն ու կենսատու հայ է: Նա ունի հատկություններ և կարողություններ, որոնցից գուրեկ է Երկրում նաև Երկնային քաղաքացիությամբ չհամակված հայը:

Նույնը վերաբերում է և համայն հայությանը՝ որպես ազգ:

**- Դայկականությամբ** Երկրադաքացի հայի և հայության հատկություններն ու կարողությունները հավատքով հիմնված են հոգեկանության վրա, որով վերածվում են նաև հոգևոր ասպետության՝ ազնիվ ու անձնուրաց հավատարմությանը, հերոսությամբ, քաջությամբ և նման շատ այլ առաքինություններով, որոնք գործադրություն են հետևողական և հարատևորեն:

Դայի ու հայության և դրա Երկրադաքացիության այդպիսի որակի հարատևության պայմանը հոգեկանության, գաղափարականության, բարոյականության և կենցաղավարության բացարձակ կոռումպագերծությունն է:

**- Դայկականությամբ** այդպիսի Երկրադաքացի հայի ու հայության կյանքի ապրումն ընթանում է Երկրային սուրբ ասպետությամբ և հավերժանում է Երկնային Երանությամբ:

**- Դայկականությունն Աստվածատուր մարդկային արժեք** է: Դայկականությամբ են կազմված մեր՝ հայերիս մարդկային եռթյունն ու ազգային արժեքը, թեև մենք՝ հայերս, բավականին

մոռացել ենք ու այլևս լավ չենք ճանաչում և չենք գիտակցում այդ երկուսը՝ մեր մարդկային էռթյունն ու մեր ազգային արժեքը՝ այդ երևույթի բոլոր բացասական հետևանքներով:

- Դայը չպետք է արևմտականանա, Եվրոպականանա, ամերիկականանա, ռուսանա, չինացիանա, պարսկանա, վրացիանա, թքանա և այլն: Դայը պիտի մնա հայ, և եթե պետք է ինչ-որ ...անա...ականանա, ապա թող լիարժեք հայանա, հայկականանա:

**Ազգի կայացում:** Դայության հատվածները ճյուղերն են, բունը Դայաստանն է (իր ժողովրդով և իշխանությամբ), արմատը հավատքն է, որից բխում են և որի վրա հիմնված են Դայկականության գաղափարախոսությունը և բարոյականությունը: Դետևապես, եթե Դայաստանը հայ ծառի բունն է, ապա նրան պահողը և սնողը արմատներն են, որոնք ամենուր են, ուր կա հավատքն ու հավատավոր հայը՝ Դայկականության գաղափարով և բարոյականությամբ:

Կամ այլ կերպ ասած՝ պետք է կայացնել ազգը, որպեսզի կայանա երկիր Դայաստանը թե՛ կայուն իշխանությամբ ու պաշտպանությամբ և թե՛ զարգացող տնտեսությամբ, մշակույթով, կրթությամբ և կարողունակ քաղաքականությամբ: Այդ բոլոր կայացումների կառուցման շաղախը հավատքն է՝ հայոց բերդը, իսկ քարը՝ հավատավոր հայը: Դայոց բերդը, որպեսզի դիմանա ամեն տեսակ փորձություններին ու արհավիրքներին, գրանիտե քարերով պետք է կառուցվի, այլ ոչ թե հում աղյուսի կտորտանքներով... Եվ քանի որ ամեն մի շարանի համար անկյունաքարեր են պետք, ապա բոլոր հավատավոր հայորդները թող լինեն հայոց բերդի գրանիտե քարերը և անկյունաքարերը: Ուստի իրար միանանք հավատքի շաղախով՝ հոգևոր ցեմենտով, որն ամուր է ու անքակտելի: Այդ դեպքում բոլորս մարդ և հայ կրառնանք ու կյանք կունենանք: Ու այս հավատքով ծառայելով՝ մեզանից ո՞չ մի մազ չի պակասի, այլ կշնորհվի ԿՅԱՆՔ, երջանկություն երանությամբ՝ հավիտյան: Դանենք, նետենք մեր սրտից, մտքից և մեր միջավայրից տարակույսը, որը հավատքի թաքուն, հետևապես

առավել նենգ ու կորստարեր հակառակորդն է, որը որդի նման կրծում է հայոց կաղնու արմատները: Մրբվենք՝ մաքրվենք ու ամրանանք Աստվածաստեղծ մարդկային ընտանիքի հարազատ Հայկականության հավատքով, գաղափարով և բարոյական արժեքներով:

Եվ փառքը, պատիվն ու հայ մարդու և հայության սերն ու հավատարմությունը

**ՀԱՎԵՐԺ ՆՐԱՆ՝ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆԸ՝ ԱՍՏՈՒՆ:**

Հուլիս, 2003թ.

### **ՀՈՒՇԱՐՁԱՆԵՐ՝ ԱՌԱՆՑ ՀՈՒՇԵՐԻ (Առանց տեղեկության, գիտելիքների և նշանակության հասկացողության)**

Մեր հուշարձանները շատ չեն, հատկապես պատմական հուշարձանները (շատերը ոչնչացվել են կամ մեզնից հեռացվել): Բայց այն էլ, ինչ ունենք, դրանց իմաստը լավ չգիտենք՝ որպես ազգ և հասարակություն: Կարծես թե այդ գիտենալը միայն պատմաբանների, արվեստաբանների, ազգագործեների և նրանց նմանների գործն է, մասամբ գուցե և գրոսաշրջիկների հետ շփվող «գիդերի»...

Եվ նույնը վերաբերում է հայոց Մատենադարանի շատ նյութերի:

- Այս իրականությունը մի բան ասո՞ւմ է:

- Իհարկե՛, ասում է:

- Որևէ նշանակություն ունի՝ մեր ազգային ինքնագիտակցության, պետական նոտածելակերպի և քաղաքացիական գրագիտության ու պարտաճանաշության տեսակետից:

- Ունի, այն էլ՝ բավականին շատ:

- Ո՞վ, ովքե՞՞ր պետք է զրադաշտ առաջին հայացքից գուցե աննշան բվացող այս բացը լրացնելու գործով:

- Հարցնենք մեր իշխանությանը, մտավորականությանը և ոչ վերջին հերթին՝ մեր հոգևորականությանը:

Շաբաթ, 30 - 08 – 2014թ., ժամը 23:15

## **ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՈՊՈՒՏԸ ԿԱՍԵՑՆԵԼ Է ՊԵՏՔ**

Հայոց պատմության (աշխարհիկ և կրոնական) դասավանդումն ի՞նչ վիճակում է հայաստանյան ու նաև Սփյուռքի դպրոցներում:

Հազարամյակների ընթացքում հայոց ու շատ այլ ազգերի պատմությունները և որոշ քարտեզներ՝ Մեծն Ալեքսանդրի արշավանքներից առաջ և դրանից հետո եկող ժամանակաշրջանների մասին, Հայկական բարձրավանդակը ներկայացնում են որպես հայոց օրրան-հայրենիք, ինչպես օրինակ՝ Խոալիայի մայրաքաղաք Յոնմի կենտրոնում քանդակված-տեղադրված Յոնմեական կայսրության քարտեզում...

Ու այդ մասին քսենոֆոններ, հերոդոտոսներ և այլք, սկսած հովանեսներից, հռոմեացիներից, պարսիկներից, արաբներից, ռուսներից, տարբեր այլ եվրոպացիներից ու ասիացիներից մինչև հենց իրենք՝ բուրքերը, ի դեմս Օսմանյան կայսրության՝ Մեծ Հայքը և Փոքր Հայքը հայոց ծննդավայր-հայրենիք են ներկայացրել, ուր հայերը հազարամյակներ ապրել են, կերտել, պաշտպանել են այն և հարկ եղած դեպքում զոհվել են իրենց հայրենիքի համար: Իսկ պատմական այս փաստն ինչո՞ւ այժմ առավելագույնս հանրահայտ չենք դարձնում: Հայ պատմագիտությունը և ընդհանրապես հայոց գիտությունը, մշակույթը, արվեստը աշխարհատարած հայությունը և մանավանդ հայոց ինքնիշխան պետությունն ինչո՞ւ համաշխարհային տեղեկատվությամբ այդ չեն կարողանում անել: Չե՞ն կարող ճշմարիտ իրազեկմանը մերկացնել, մեղադրել և մեկուսացնել իբրև պատմաբան ներկայացող այն ստախոս ու խարդախ կեղ-

ծարարներին, որոնք «պատմության և գրականության» անվան տակ խաբում են աշխարհին ու նաև իրենց ժողովուրդներին, ազգային ատելություն և թշնամություն սերմանում: *Բայց այս եղելությունը մեզ ինչո՞ւ չի ահազանգվում: Չէ՞ որ պատմության նման հանցագործ նենգափոխումները նշանակում են ռազմական նախահարձակման ագրեսիայի նախապատրաստում հայ ազգի և նրա կոտորակված հայրենիքի՝ Դայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների հանդեպ:*

Ամբո՞ջ հայությունը պետք է ամբո՞ջ մարդկությանը վեր հանի՝ համալսարաններով ու ակադեմիաներով, գրադարաններով, թանգարաններով, բառարաններով, հանրագիտարաններով, արվեստով, գրականությամբ, ֆիլմերով և նման այլ միջոցներով: Եվ դա անհրաժեշտ է անել, որովհետև հասել ենք մի օրի, երբ հարկ է հիշեցնել, ապացուցել (զավեշտական է հնչում), որ Դայաստանը հայերի հայրենիքն է: Սակայն պետք է իրազեկել ու ապացուցել նաև, որ դա ժխտողները կա՞մ ստերին գոհ դարձած անգետ, անգրագետներ են, կա՞մ էլ՝ գիտակցաբար ստախոս, խարդախ, դաժան ու այդպիսով՝ մարդատյաց կեղծարարներ, դավադիրներ ու նաև հանցագործներ՝ ստոր շահագիտությամբ: Ու դրանք արվում են նաև որպես նախապատրաստություն նոր նախահարձակման և նոր ցեղասպանության համար:

Դետևապես, այս իրականության առջև եթե մինչև հիմա, մեղմ ասած, բավականին անտարբեր ու անգիտակ ենք մնացել և մեր աջ ու ձախ կողմերի ստախոս կեղծարարներին թույլ ենք տվել, որ զանգվածորեն խարեն, շատերին կաշառեն, մեղսակից դարձնեն, իրենք իրենց գիտական տիտղոսներ շնորհեն, ապա գոնե այսուհետև պետք է զգաստանանք, համապատասխանաբար կազմակերպվենք ու գործենք՝ մերկացնելու և տարբեր միջոցներով արժանի հակահարված հասցնելու մեր ազգին ու հայրենիքին սպառնացողներին ու այլ ժողովուրդների համար էլ հույժ վտանգավոր գործողություններով զբաղվողներին:

Շաբաթ, 21 - 12 - 2003թ., ժամը 00:00,  
Վաշինգտոն մայրաքաղաք

## ԱՆ, ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Չգնանք շատ հետ, խոսենք նոր և նորագույն պատմության մասին (առաջմն չխոսելով այսօրյա իրականության փաստագրման մասին)։ ովքե՞՞ր են գրել մեր պատմությունը, ի՞նչ դիրքերից են գրել. ինչպիսի՞ շահագրգռությամբ և հայ ազգային հոգեբարոյական, գաղափարական ու գիտակցական ի՞նչ մակարդակով են գրել... Ունե՞նք մենք գիտական-քննական պատմություն՝ զերծ ազգային հատվածական, կուսակցական, քաղաքական ու օտարամուտ գաղափարական և մշակութային շահագրգռությունից և կա՞ն սիրողականությունից։ Եթե այո՛, ո՞ւր է այն, ո՞րն է այն, իսկ եթե ո՛չ, չկա, ապա ինչպե՞ս ճանաչենք մեզ, թե ովքե՞՞ր ենք մենք, ինչո՞ւ ենք այսպես, այս վիճակում, այս օրին և իմանանք նաև, թե ո՞րն է ճիշտն ու սխալը, որպեսզի գիտենանք, թե ինչպես ընթանանք և ինչից հեռու մնանք ու երբե՞ք չնոտենանք...»

Ըստ երևույթին, արդե՛ն իսկ ուշացած, մեր ազգը կարիք ունի պատմագիտական, բայց անպայման նաև հոգենոր, գաղափարական ու ըստ այնմ՝ բարոյական առումներով և Աստվաշնչյան օրինաչափություններով ու չափանիշներով դիտել, տեսնել և գնահատել մեր պատմական կյանքի տարբեր փուլերի և բնագավառների ընթացքն ու հետևանքները։

Ըստ երևույթին՝ Մովսես Խորենացու ժամանակներից հետո այդպիսի պատմագիտությունն սկսեց նվազել, աղավաղվել ու անհետանալ։ Անհրաժեշտ է այն վերականգնել...

Ազգը պետք է հստակ տեսնի, թե երբ է Աստված գոհացել մեր արածներից և չարածներից և երբ՝ ոչ։ Ու երբ ենք մենք մեր արածներով ու չարածներով շեղվել մեր Աստվածապատգամ

պարտականություններից և հիմա կրում ենք դրա հետևանքները:

Այս կարիքը, այս պահանջը պետք է անպայման բավարարվի:

### **ԱՅՆ ՀԱՅՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ Է:**

Այս մասին ի՞նչ է նտածում Հայոց հայրապետությունը: Չէ՞ որ պատմությունն Աստվածաշնչյան ավետարանական օրինաշափությամբ ընկալող պատմաբան մշակները սակավ են տվյալ հունձրի համար, և հայոց հոգևորականության սերտ ու գործնական մասնակցությունը, որպես պատմաբան-մեկնաբան, թե՛ անհրաժեշտ պայման է խնդրի պատշաճ կատարման համար և թե՛ լիովին համահունչ է մեր հոգևորականության կոչումին ու պարտականությանը... Սկսե՞նք:

Ի դեպ, այս խնդրի վերաբերյալ մոտ վեց տարի առաջ ՀԱՅՔ գիտահետազոտական-ծրագրային հաստատության համեստ նախաձեռնությամբ մի սեմինար-խորհրդակցություն, իսկ հետո էլ մի գիտաժողով տեղի ունեցավ Երևանում և շարունակվեց Օշականում ու Արցախում՝ Գանձասարում:

Դարկ է կրկնել դրանց կազմակերպումն ու անցկացումը, սակայն այս անգամ ո՞չ թե խնդրի արձարձման, այլ ուղղակիորեն խնդրի փաստացի կատարումը կողմնորոշելու և խթանելու համար՝ Տիրո՞ջ օգնությամբ:

Պետք է գործել նաև այս ուղղությամբ, որովհետև (ինչպես մինչև հիմա եղել է) հետագա մեր ընթացքներում մոլորվելը՝ իր բոլո՞ր հետևանքներով, կլինի համարյա անխուսափելի:

Փոսն ընկած լինելու մասին ահազանգելն այնքան կարևոր չէ, ինչքան նախ՝ փոսի առկայության մասին ահազանգելը, և երկրորդ՝ ավելի կարևոր՝ ահազանգը լսելն ու փոսը չընկնելը: Որում Տե՛րն էլ կօգնի:

Չորեքշաբթի, 22 - 02 - 2017թ.

## **ԱՌԱՋ ԵՆՔ ԳՆՈՒՄ, ՏԵՂՔԱՅՑԼ ԱՆՈՒՄ, ԹԵՇ ՀԵՏ ԵՆՔ ՇՊՐԾՎՈՒՄ**

Մեզնից շատերը և մեր պաշտոնական շրջանակները շատ են ուզում, որ մեզ՝ հայերիս, և մեր երկիր Հայաստանը օտար-ները ճանաչեն, ո՞ղ աշխարհը ճանաչի: Ուզում ենք, բայց այդ ցանկությունը շատ առաջ չի գնում: Ուրիշ տեսանկյունով եթե նայենք այդ հարցին, կատացվի, որ աշխարհը կամ գոնե Եվրոպան և Մերձավոր Արևելքը մեզ ավելի լավ էին ճանաչում մեր պետականազուրկ ժամանակներում, քան այժմ, եթք անկախ պետությամբ ազգ ենք: Եվ դա, բնականաբար, ունի պատճառներ, որոնց մասին խոսակցությունը թողնելով այլ ժամանակի, այլ առիթի՝ աշխատենք բերել ասվածի՝ մեր կողմից վկայված կոնկրետ փաստեր՝ առանց մեկնաբանությունների:

Մինչև 1930-ական թվականները, չհաշված սփյուռքում տպագրված Եվրոպայի քարտեզներում (ֆրանսիայում տպագրված ֆրանսիական քարտեզներում, Հունաստանում տպագրված հունական քարտեզներում, Գերմանիայում տպագրված գերմանական քարտեզներում, Բուլղարիայում տպագրված բուլղարական քարտեզներում և հավանաբար նաև շատ Եվրոպական ու այլ երկրներում) թուրքիայի այժմյան տարածքի մոտավորապես Սեբաստիա (Սվագ) քաղաքից մինչև թուրքիայի արևելյան սահմանը գրված էր լինում Ա Ր Ս Ե Ն Ի Ա՝ որպես աշխարհագրական անվանում: 1960 թվականին՝ Մոսկվայի Կրեմլում գրոսաշրջության ժամանակ, տեսել ենք, որ Լենինի թանգարանացված աշխատասենյակում՝ իր աշխատասեղանի հետևի պատին ամրացված մոտավորապես 150x100սմ մեծությամբ ապակեպատ շրջանակի մեջ դրված Եվրոպայի քարտեզում (բնականաբար պետք է տպված լիներ նախքան 1924 թվականը) թուրքիո վերոնշյալ այդ տարածքի՝ Հայկական

լեռնաշխարհի վրա մեծ տառերով՝ որպես աշխարհագրական անվանում, նույնպես գրված էր Ա Ր Ս Ե Ն Ի Ա:

Միանք այդ ժամանակներում երևացածներն են: Մեծ հավանականությամբ, նույնը կար ավելի վաղ ժամանակներում ու ավելի շատ երկրներում: Այդ մասին տեղեկացել ենք նաև ֆրանսիահայ հայտնի գիտնական-քարտեզագետ Զատիկյանի մինչև 1960 թվականի հրատարակումներից, ինչպես նաև 1961թ. Միսիթարյան միաբանության գիտնական-վարդապետի՝ Երևանում, Ակադեմիայի շենքում (Արովյան փողոցի վրայի «փոքր ակադեմիայի» շենքը, որն այժմ չկա) ունեցած՝ «Հայկական լեռնաշխարհում հայի մարդաբանական գերակշիռ ներկայությունը» թեմայով դասախոսությունից:

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում նման փաստական տվյալները, վկայությունները, ըստ երևույթին, վերացել են (հավանորեն, ոչ առանց որոշ կողմի կատարած ընդհատակյա ջանքերի): Դրա փոխարեն չեղած տեղերում ի հայտ էր եկել Ադրբեջան անվանումը: Օրինակ՝ ԱՄՆ-ի աշխարհահրչակ «National Geographic» ընկերության՝ այդ տարիներին հրապարակած՝ ինձ հայտնի Եվրոպայի քարտեզներում իրանի հյուսիսային մասի վրա (կարմիր տառերով՝ որպես աշխարհագրական տարածք) գրված էր Azerbayjan...

Բայց երկի բոլոր երկրների քարտեզներում էլ (վերջնականապես՝ 1939-ից, «օրը ցերեկով, չեղած տեղից») Թուրքիո քարտեզի արևմտյան մասի վրա հայտնվեց Սիրիայից առկված պատճական Ալեքսանդրետը (ի պատիվ հերթական հաղթանակի՝ հիմնված Ալեքսանդր Մակեդոնացու կողմից, ապա «հսկենոերուն» վերանվանված քաղաքը), իսկ նույն Թուրքիո քարտեզի արևելյան մասում սահմանը միացավ Խորհրդային Խախչևանին: Եվ տարբեր աճպարարությունների շարունակմաբ էլ քարտեզների վրա Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հետ Հայաստանի սահմանը վերացավ, ու ԼՂԻՄ-ը դարձավ անկլավ...

Այս և սրա նման այլ օրինակներն արդյո՞ք կցուցանեն (և սա դեռ լիակատար մեկնաբանություն չէ), որ ադրբեջանցի-

ները, իրենց «մեծ եղբօր» հորդորներով և կամ ղեկավարությամբ, դեռ այն ժամանակներից սկսել էին պետականորեն ավելի գործուն, «գործնական» և հետևողական լինել, քան հայերը: Բայց եթե այդպես է, մի՞թե դա վկայություն չէ, որ նրանք, բացի քանակական առավելությունից, նաև որակական առավելություն էին ունենում: Մի հանգամանք, որը հայության ղեկավարությունը (եթե ազգային իմաստով այն լիարժեք գոյություն ուներ) պետք է լրջորեն հաշվի առներ, հետևություններ աներ ու ըստ այնն գործեր: Իսկ եթե դրությունն այդ է, արդյոք դա չի՝ նշանակում, որ մեծ ուշացումով իսկ պետք է անհապաղ հնչեն հայոց բոլոր զանգերը՝ տագնապ ազդարարելու և թունդ հանելու հայոց սրտերը, մտքերն ու հոգիները, նաև անպայման խիղճը՝ պատասխանատվությամբ իրենց Արարիչ Յոր առաջ և իրենց նահատակ-մարտիրոսների հոգիների առաջ:

Մի խոսքով, եթե մենք չզգաստանանք, չփոխավենք, մեղայականով դարձի չգանք և չուղղվենք, արդյո՞ք մեր Արարիչ Յայրն ու մեր նահատակ սրբերը մեզ կներեն: Իսկ եթե ոչ, չեն ների, դա ի՞նչ կնշանակի մեր անձնական ու ազգային գոյության համար: Եվ բացի մեր գոյությունից, ի՞նչ կնշանակի նաև մեր զավակների ու նրանց զավակների՝ մեր թոռների, մեր սերունդների և հայ անվան իսկ գոյության համար:

Եվ վերոնշյալ ու նման այլ հարցումների հավանական պատասխաններից առաջացած սարսափով գոչենք, աղաշենք. «Յայր Աստված, գթա՛ և օգնի՛ մեզ, որ քեզ հաճելի մտքով, խղճով ու նաև միասնությամբ և հարատև հետևողականությամբ գործենք այսուհետև՝ մեր ազգի ու հայրենիքի գոյության, վերելքի և քո փառքի համար»:

Ծաբաթ, 17 - 09 - 2011թ., ժամը 05:40

## ԹՈՒՆԱՎՈՐ «ՔԱՂՑՔՐՈՒԹՅՈՒՆ»

Մարդկությունը (հայությունն ու Հայաստանն էլ մեջը) քառատրոփ գնում է դեպի նյութը, նյութականությունն ու նյութապաշտությունը, աշխարհիկը և ժամանակավորը՝ հարստություն, իշխանություն, գովաբանություն, փառք և հաճույք, հաճույք ու հաճույք... Լավ ապրել:

Ինչպես և մարդկության պարագայում, հայության ու Հայաստանի ընթացքը մեծապես ուղղված է դեպի այդ հորձանուտը, որ քշում է դեպի նյութապաշտության և մեր մարդկային-ազգային ինքնության այլասերման, որով և մեր եւրյան կորստի:

Կյանքի նյութականացում, հարստություն, իշխանություն, փառք ու հաճույք՝ «շաքարակալված» կյանք, որի «քաղցրապատումը» թունավորում է հայի Աստվածատուր հոգին, որով և կորստյան մատնում հայ կյանքը... Մինչև իսկ հայկականությունը:

Եվ մեր ազգային ու պետական օրգանիզմը, հայրենի երկիրը, ազգային նվիրական իղձերը և դրանց կատարման միջոցները, հնարավորությունները հաշմվում ու ամլանում են:

Ազգն ու հայրենիքը երբ այդ պայմաններում են, հայ մարդը մի՞թե չպետք է զգաստանա՛, մտահոգվի՛ ու ելք փնտրի...

Եվ ո՞րն է այդ ելքը:

**Այդ հարցի ամենահակիրծ պատասխանը.** հայը, հայությունը, իրենց համազգային ու պետական կարողությամբ, նախևառաջ պիտի վերականգնեն իրենց մարդկային-ազգային հոգեւկանությունը, գաղափարականությունը, բարոյականությունը, և ըստ այնմ՝ ապրելակերպը: Այդպիսով, հայ մարդն ու հայությունը մարդկության շրջապատում, աշխարհի մակրոկիմայի մեջ ուզած թե չուզած մնալով հանդերձ, այն էլ լիարժեք

Աերկայությամբ, զուգահեռաբար պիտի ստեղծեն իրենց ուրույն շրջապատը՝ ազգային հարազատ միկրոկլիման՝ գոյատևելու ու նաև քանակապես և որակապես աճելու համար, մինչև ժամանակը գա (մեղքի ջրերը քաշվեն, մաքուր ցամաքը երևա), և հնարավոր լինի իր «միկրոկլիմայի» դրները բացել դեպի ջրագերծ (մեղսագերծ) երկիր...

Ուրբար, 19 - 12 - 2003թ., ժամը 19:10

## **ՊԱՏՐՄՆՔ ՄԱՀԱԲԵՐ**

Աշխարհի շատ մարդկանց և աշխարհի այդ մասերում եղող մեր ազգակիցներից շատերի համար էլ երանություն է համարվում Լաս Վեգասում (խաղատնային «արդյունաբերությամբ» և թերևաբարոր «շոուների» հագեցվածությամբ ԱՄՆ-ի անապատակենտրոն այդ քաղաքում) լինելը: Մարդիկ գնում են, կամ ովեր չեն կարող, երազում են գնալ այնտեղ, ինչպես ուխտավորներն են երազում ուխտատեղի մասին: Ու եթե շատ փող էլ չունեն՝ այնտեղի խաղատներում «ծախսելու», այնուամենայնիվ գնում են՝ հպարտանալու համար, որ իրենք էլ են գնացել, եղել Լաս Վեգասում: Իսկ ունարներից շատերը, մանավանդ արդեն խաղանող դարձածները, գնում են՝ զգալու մասնակցության «բերկրանքը», նյութական և զգացական շռայլությունը, շվայտությունը, նաև՝ «վայելելու «շոուները» և իբրև թե բարձրակարգ հասարակության փայլը»...

Իսկ իսկակա՞ն մարդկային և իսկակա՞ն հայկական հասկացողությամբ ու տեսակետից նրանք իրականում այնտեղ արդեն ոչ թե ինքնակամ են գնում, այլ քշվում, տարվում են իրենց նյութականացած ունայն զգացմունքներից՝ միտքվելու մարդկային-ազգային հոգեկան, գաղափարական և բարոյական կորստի ճահիճը՝ իսկակա՞ն մահը...

Ի՞նչը կարող է փրկել մարդում, այդ թվում՝ եղբայր ու քույր հային, եթե ոչ արթնությամբ իսկումը և ճանաչումն ու

գիտակցումն իր ինքնության, իր էության և իր կոչման:

Եվ ինչպես հայը կարող է ճանաչել ու գիտակցել իրականում իր ով լինելը, եթե ոչ հավատքի և դրանից բխող ու դրա վրա հիմնված գաղափարի (Յայ Ազգային Գաղափարախոսություն) ու բարոյականության (հայ ազգային բարոյականության տոհմիկ արժեհամակարգ՝ մարդկային-ազգային դաստիարակությամբ:

Եվ հայը որտեղից կարող է գտնել այդ հավատքը (և այն, ինչ բխում է դրանից), եթե Աստված շնորհի...

Եվ Աստված շնորհեց այդ հավատքն իր սիրելիներին՝ Իր Միածին Որդու հեղած արյան գնով, որպեսզի Նրա Ավետարանով ու Խաչով փրկվեն, ազատվեն, դուրս գան նյութի ունայնության կորստաբեր ընթացքից և ըստ այնմ իմաստավորելով իրենց կյանքը երկրում՝ արժանանան երկնային կյանքի հույսին անկուտրուն:

Եվ մարդկության վրա ծագեց փրկության հավիտենական լույսը, և հայերն առաջիններից էին, որ այն տեսան. հայոց պետությունն այդ լույսից առաջին լուսավորվողն էր: Եվ հավատքի շնորհի՝ իմաստության, գիտության, հանճարի և զորության ու կարողության արդյունք պտուղներով բավականին երկար սնվեցին ու սնեցին իրենց ազգն ու պետությունը՝ այդ պտուղներից նաև իրենց պարտքը հատուցելով իրենց Արարչին ու Փրկչին... Եվ նո՞ր, սրբագրոծված հայ կյանք առաջացավ: Ու այդ կյանքը նաև մեր ժառանգությունն է, եթե հավատարիմ լինենք նրանց շնորհընկալ հավատքին:

Իրերը, եթե իրենց անունով կոչվեն, իսկ դրա ժամանակը վաղուց է եկել ու անցել, անհնարին է իր ինքնության, իր էության և իր կոչումին գիտակից անձը, հասարակությունը (խոսենք հայության մասին) ձգտի «Վայելել» լասվեզասները և մասնակից դառնալ ժամանակակից սողոմ-գոմնորին...

Չէ՞ որ փաստ է, որ այդ լասվեզասների մտահղացումը, ծրագրումը, ֆինանսավորումը, կազմակերպումն ու գործարկումը կատարված են և հետևանք են հանցավոր աշխարհի նյութապաշտության, կոռումպացվածության և դավադիր մտքի՝

կազմակերպված ոճրագործության գերիշխող առկայության: Մի՞թե հային չի զգաստացնում այն փաստը, որ նաֆիոդ կոչված չարն իր կորստաբեր նպատակն իրագործում է՝ հիմնականում հենվելով մարդու հավատազրկության, գաղափարագրկության և բարոյագրկության վրա՝ գործածելով դրանց արդյունք մարդկային տկարությունները՝ հոգեզուրկ նյութապաշտությունը, հոգեզուրկ եսամոլությունը, հոգեզուրկ շահամոլությունը, հոգեզուրկ հեշտամոլությունը, նաև անսկզբունքայնությունն ու վախսկոտությունը և ընդհանրապես «ոսկե հորթին» նրա ենթարկվածությունը:

Եվ մի՞թե հայի ինքնության, եռթյան և կոչումի նկատմամբ (եթե, իհարկե, դրանց անկեղծ զգացումն ու գիտակցությունը դեռ կան) խղճի խայթ ու հոգեկան ամոթ չի առաջացնում այն փաստը, որ լասվեզասներին հետևելու և դրանց տրվելու ի՞ր իսկ կոռումպակիր ձգտումով ու ապրումով կենսազրկում է ինքն իրեն և իր ազգն ու մարդկային ցեղը և դրանով տուրք տալով հանցակիր աշխարհին, հոգեկան մեղքին՝ տկարացնում և ոչնչացնում իր անձնական ու ազգային հոգեբարոյական և գաղափարական վարակամերժ կարողությունը:

Եվ այս վիճակն ու դրա հեռանկարը կարծես դեռ բավական չեն հիմնականում արտերկրի հայությանը, բազում լասվեզասներ են հայտնվել նաև հայոց երկրում. լուսազարդ խաղերով և տարբեր գայթակղիչ գովազդներով փորձում են իրենց գոհերին հրապուրել՝ խեղճերին՝ շահ, իսկ ուներներին՝ հաճույք ստանալու սին պատրանքով...

Եվ հոգեկան, գաղափարական ու բարոյական կորստաբեր խավարը տարածվում է հայ իրականությունում... Վկան՝ այդ «գործի» ընդարձակումը նաև Հայաստան հայրենիքում: Փա՛ռք Երկնային Տիրոջը, որ Նրա շնորհով մեր հայրենիքի Արցահի հատվածում արցախցիները (գոնե տեսանելիորեն) իրենց մաքրեցին այդ ախտից, դուրս եկան դրա կորստաբեր խավարից:

Եվ համաճարակային բնույթ ստացող այս ախտահար խավարը, դժբախտաբար, համակուն կամ արդեն իսկ համակել

Է նաև հայ կյանքի տարբեր ոլորտներ, բնագավառներ: Եվ այն էլ ոչ միայն նյութական, այլև մտավոր, քաղաքական, կրթական, մշակութային և նույնիսկ (ո՞վ սարսափի) հոգևորական ոլորտները...

Բայց ո՞ւր են ազգի պատասխանատուները, ո՞ւր են մեր հայրապետության հավատքի արծվենի հայացքը, հսկողությունը և Հանրապետության պաշտոնեության հարազատ, գիտակից ու արդար բազուկը...

Ի՞նչ է, տեր չկա՞ այլև...

Բոլորո՞վ ենք գլորվում, զահավիժում...

Չո՞ երթաս, ա՞զգ:

Լրի՞վ ենք կուրացել ու չե՞նք տեսնում:

Բացը, սակայն, միայն դա՛ չէ.

Ծա տ բաներից ենք դատարկված...

Աստված մեզ գրա, օգնի և նորից

Շոգի, գիտակցություն ու կա՞նք հաղորդի:

Ուրբաթ, 09 - 03 - 2001թ., Ժամը 04:50

## ԱԶԳԸ ՄԻ՞ԹԵ ՀԻՊՆՈՍԻ ՄԵԶ Է

Արդյո՞ք ազգը հիպնոսացած՝ անգիտակից, անտեղյակ է իր ինքնությունից, իր վիճակից, իր ընթացքից ու անտարբեր է իր ապագայի հավանականությանը:

Բայց ո՞վ է հիպնոսացնողը:

Ինչո՞ւ, ի՞նչ է ուզում մեզանից. արդյոք հասե՞լ է իր ուզածին...

Ո՞վ ենք մենք, ի՞նչ ենք ուզում, ո՞ւր ենք գնում, ինչո՞ւ ենք գնում: Եվ արդյոք մե՞նք ենք գնում, թե՞ քշվում-տարվում ենք: Այդ դեպքում ո՞վ է քշող-տանողը, և ո՞ւր ենք հասել, ինչի՞ ենք հասել, ի՞նչ վիճակում ենք: Եվ ի՞նչ կլինի դրա հետևանքը...

Իր բնականոն գոյությունը (գոնե մի կերպ) արդյոք պահ-

պանո՞ւմ է մեր ազգը: Իսկ եթե չի պահպանում, դրա գիտակցումն ի՞նչ աստիճանի է ընդհանրապես ազգի և մասնավորապես նրա պատասխանատու խավերի ու տարրերի մեջ՝ նախնական-մանկակա՞ն, թե՞ ուշացած-զառամյալ աստիճանի, կամ ել՝ ոչ մեկը, ոչ ել մյո՞ւսը, այլ մեղքի չար թմբիրով անզգայացած, դրանից տարված և խորթացած է իր իսկ Աստվածատուր ինքնության հանդեպ: Իսկ փրկության, վերակերտման, վերականգնման միջոց կա՞:

Կան շատ միջոցներ, որոնց գոյացումը, կիրառումն ու արդյունավորումը պայմանավորված են մեկ գերագույն միջոցով՝ Խաչով:

Խաչը փրկել է ու միշտ կփրկի, եթե... եթե մաքուր սրտով և սրբված ձեռքերով է բարձրացվում՝ Տիրոջ շնորհով՝ հետևելով ու կատարելով Նրա պատգամները:

Այդ շնորհը՝ իրենց հոգեկանությամբ և գործերով շնորհընկալ մեր նախնիք, մեր (իսկակա՞ն, այլ ոչ թե այժմ ամեն մեկի մտքով անցնող) մեծերը, մեր սրբերը, նահատակները մեզ ժառանգություն են քողել: Դա մեր սուրբ ու կենսատու ժառանգությունն է, որին կարող ենք արժանանալ մեր հավատարմությամբ Խաչին՝ հոգով, գաղափարով, բարոյականությամբ ու ըստ այնն ապրելակերպով:

Փա՛ռք Աստուծո, որ այժմ ունենք ազգային աշխարհիկ ու հոգևոր իշխանություններ, որոնք կարո՞ղ են հայ ազգն այդ ժառանգությանը հասցնել, եթե իրենք իրենց ազատագրեն խորթություններից: Այնժամ փոխանակ խելակորույս վիճակում ազգի նյութական «պոտենցիալը» փնտրելու, կտեսնեն, կճանաչեն, կսնվեն ու ազգը կսնուցեն այդ սուրբ ժառանգության կարողության ներուժով, որն ամեն ինչ է բովանդակում, որ կենսատու է՝ այժմ և հավիտյանս:

Չորեքշաբթի, 29 - 01 - 2003թ., ժամը 08:15

## ԱՊՐԵԼ Ո՞Ր ԲԱՐՈՅՑԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐՈՎ

**Ապրել ոչ թե չար աշխարհի, այլ երկնայինին հարազատ, բարոյական արժեքներով:** Այդ արժեքներով ապրել երկրի վրա, Հայաստան երկրում, հայ աշխարհում և որպես ՀԱՅ՝ մարդկության մեջ...

**Զգաստ լինել, զգույշ լինել և միշտ վստահ ու համոզված լինել,** որ մեր արժեքների մեջ չեն սողոսկել նյութապաշտի, կոռումպացվածի, պոռնիկի, ամբարտավանի ու անաստվածի «արժեքներ», այլ միշտ կայուն ու հաստատ են Աստուծո որդի Քրիստոսի ծառա՝ հայի սուրբ արժեքները՝ արտահայտված հայկականությամբ, այն է՝ հավատքով, գաղափարով, բարոյականությամբ ու ըստ այնմ՝ կենցաղավարությամբ: Եվ դրանցով կյանքի ապրումն աշխարհում՝ ամենուր, ուր էլ լինի, բայց միշտ՝ Հայաստանը սրտում և ամբողջ կարողությամբ՝ նրա՝ համար:

- Սա լիովին պա՞րզ է, հասկանալի և ընդունելի՞ է:
- Թե՛ այս է և թե՛ ոչ:
- Եթե այդպես է, այդ դեպքում մեր ազգային ու պետական ո՞ր հաստատությունները և ովքե՞ր պետք է լրիվ ու հստակ պարզեցնեն, պարզաբանեն մեզ, մեր որդիներին և թռուներին, թե վերոնշյալի վերաբերյալ հայության ուղղված որ պատգամը ո՞չ թե երկիմաստ «թե՛ այս և թե՛ ոչ է», այլ հաստան «այս» է, և ոչ մի դեպքում «ոչ» չէ:

Սուրբ Էջմիածին, խնդրում ենք: Հայ հոգևորական, ո՞ւր ես... Եվ հայ հեկավարություն ու ամեն մի նախանձախնդիր հայ...

Թե չէ մեր տոհմիկ, հարազատ արժեքների մեջ, մեր երկրում (թողնենք, թե ինչ է կատարվում այլուր, աշխարհում) բավականին երկար ժամանակից ի վեր հավատքն ուրացածների, կեղծ մտավորականների, կեղծ հոգևորականների, գողական-

ների, խուժանների և մինչև իսկ «գործարարի» անվան տակ այլասերված խարդախների «արժեքներն» են սողոսկել: Մեր սուրբ նախնիների, մեր հերոսների, մեր իրավ հոգևորականների ու մտավորականների և ոչ պակաս՝ մեր արիասիրտ ու պատվախնդիր պապերի ու տատերի արժեքները, երկար ժամանակ բացահայտ արհամարհանքի ընթարկվելով, հասել են կորստյան աստիճանի ու այլևս գործնականում չեն կիրառվում, հատկապես մեր հասարակական, քաղաքական և գործարար հարաբերություններում:

Ո՞ւր է տանում մեզ բարոյական արժեզրկումը (ինֆյացիան կամ բարոյականության «ազատ անկումը») և ո՞ւր կարող է հասցնել: Ի՞նչ վտանգներ, արգելքներ, խոչընդոտներ է հարուցում մեր բնականոն կյանքը կերտելու ընթացքին ու շեղում մեզ **հարազատ հանգրվաճին** հասնելու ճանապարհոց: Այն ինչպես ու ինչքանո՞վ է տկարացնում և մինչև իսկ ոչնչացնում մեր հոգեկան վարակամերժ կարողությունը, բարոյական ամրությունն ու դիմադրողականությունը: Արդյո՞ք հոգեբարոյական և գաղափարական ՄԻԱՎ-ը (СПИԴ (սպիդ), AIDS (էիդս) դրանք չի վարակել արդեն:

Եվ արդյո՞ք դրանից չէ մեր կորուստների, դժվարությունների, հետամնացության ու անկումային ընթացքների և վիճակների պատճառը: Ո՞վ, ովքե՞՞ր են կոչված, ովքե՞՞ր են պարտավոր և կարող ու ի վիճակի են ախտաճանաչելու և ճիշտ դեղատոնս ու բուժում նշանակելու, դարման, վերականգնում նատուցելու, ապահովելու: Ովքե՞՞ր են դրա համար պարտավոր՝ իրենց կոչումով, ընտրությամբ, խղճով, պատվով ու գիտակցությամբ ազգի ու մարդկության առաջ ու իրենց հավիտենական հոգով՝ Աստուծոն առաջ:

Թող առաջ գան նրանք...

Յայի մարդկային-ազգային Ահազանգը կոչում է:

Երկուշաբթի, 04 - 06 - 2012թ., ժամը 17:40

## ԵՐԿՈՒՄԻՑ ՌԵ ՃԻՇՏ

Պատմության ընթացքում (տարբեր ժամանակաշրջաններում) իսկական իմաստունները, իսկական մարգարենները իշխանությունների (վերնախավի) կողմից համարյա միշտ էլ հալածվել, երբեմն նաև պատժվել և նույնիսկ զոհվել են այն պատճառով, որ չեն բաքցրել իսկական իմաստությունը՝ հոգեկանության իմաստությունը, որով և իսկական, ճշմարիտ մարգարենությունը, ու չեն եղել կեղծ, երեսպաշտ, վախսութ ու ստախոս:

Այժմ հազվադեպ հանդիպող նրանց նմանների հանդեպ գոնե բացահայտ հալածանք չկա, սակայն իրականության մեջ կա կեղծավո՞ր, մեկուսացնո՞ղ ու նսենացնո՞ղ «մեծարուն», և պատիժ էլ չկա, այլ կա կեղծ, փարիսեցիական համաձայնություն, և դա կարող է երկու պատճառ ունենալ. նման իշխանությունները (վերնախավը).

**ա)** կամ, այնուամենայնիվ, ինչ-որ չափով փոխվել են և լավանալու, իմաստնանալու միտում են ցուցաբերում,

**բ)** կամ էլ այնքան են ընկել, որ իմաստության նշույլ իսկ չի մնացել, ու առավել ևս չի մնացել ճշմարտությունը՝ մարգարենությունն ընկալելու և դրանից օգտվելու հատկությունն իսկ:

**Երրորդ** գուցե կարող է լինել այն, որ թեև այդպիսի իշխանություններն այդ դրական հատկանիշները չունեն, և ճշմարտության ընկալումն էլ պակասել է, բայց պակասել է նաև նվազագույն ուղղամտությունն ու ճշմարտությունը ճանաչելու քաջությունը՝ տեղի տալով խորամանկությանը, կեղծավորությանը, շահամոլությանը և վախսկութության հասմող իբր թե զգուշավորությանը, որոնցով իշխանություններն այլևս այն ամենն են լինում, ինչ որ ստոր ու վնասակար է, քան իրենց կոչումին հավատարիմ լինելը:

Եվ վախկոտությունը գուցե արդեն մուտք է գործել նաև մե՞ր կյանք, շա՞տ է տարածվել և շատ էլ առաջ է գնացել: Բայց ինչո՞ւ. չէ՞ որ մեր անցյալի մեծերից մեզ ասվել, ավանդվել է, որ «վախը թերահավատության նշան է, թերահավատությունը մենք վաղուց ենք մերժել մեզանից»... Ինչպե՞ս կարելի է վախենալ և պարտքը կատարելուց խուսափել՝ հավատքով գիտենալով, որ վերևում Տեր կա՝ ամենահզոր, ամենաբարի, ամենաարդար ու ամենակալ:

Ո՞ւր է կոչնակը, ո՞ւր է ահազանգը, ինչպե՞ս դուրս գալ այս վիճակից, փոխվել՝ մարդ դառնալ, հայ դառնալ, Աստվածահածո որդի՝ դառնալ՝ Նրա օգնությամբ ու Նրա փառքի համար: Որով և՝ փրկություն ու վերելք հայ ազգի, մայր Յայաստանի և հօգուտ նաև մեր մերձավորների՝ համայն մարդկության:

09 - 09 - 2012թ.

## ՀԱՅՏԱՌՅԱՑՈՒՆ ՆՈՅԻՆ (Խորիուրդ)

Նոյին հայտնությունը եղավ, երբ երկիրը լցվեց չարագործություններով և պղծությամբ: Ու եղավ ջրիեղեղ, մարդկության կործանում՝ իր պղծության ու չարագործությունների հետ միասին:

Գետերն ու լճերը, ծովերն ու օվկիանոսները, հողն ու օդն ունեն ինքնամաքրման բնական հատկություն, սակայն դրա հետ ունեն նաև աղտոտման «քույլատրելի» սահման ու աստիճան: Երբ ապականումն այդ սահմանն ու աստիճանն անցնում է, առաջանում են կենսագրկություն, մաս և կորուստ:

Ինչպիսի՞ն է այսօրյա մարդկության վիճակը, և դրա մեջ մեր՝ հայ ազգի վիճակը: Ինչպիսի՞ն է հոգեկան և դրանից բխող գաղափարական, բարոյական ու ըստ այնմ՝ ապրելակերպի անաղարտությունը, և այդ տեսանկյուններից ինչպիսի՞ն է մեր

Վերաբերմունքը հայ ազգի, մեր հայրենիք Հայաստանի ու պետականության հանդեպ: Ըստ Երևույթին, անաղարտության չափանիշները գոնե մասամբ, ինքնըստինքյան (բնագդաբար) պահպանվում են, որպեսզի սահմանից դուրս ապականում և մահ չառաջանա: Այն մահը, որը ոչ թե թշնամիների կարողությամբ նրանց նախահարձակման արդյունք է, այլ մեր հոգևոր, գաղափարական, բարոյական ու ըստ այնմ՝ ապրելակերպի անաղարտության չափի անկման ու ապականության բարձրացնան հետևանքով է առաջանում ու տարածվում:

Հողի, ջրի, օդի, մի խոսքով՝ միջավայրի անաղարտության պահպանմամբ, լավ թե վատ, շատերն են զբաղվում. աշխատում են, պայքարում: Իսկ հոգեկան, գաղափարական, բարոյական ու ըստ այնմ՝ ապրելակերպի և ամեն տեսակ, ներառյալ՝ ժողովուրդ-ժողովուրդ, ժողովուրդ-պետություն հարաբերությունների անաղարտության կենսական չափից, մակարդակից ցած չընկնելու համար աշխատող ու պայքարող կա՝ մեր երկրում, կա՞ն մեր ազգի մեջ: Ովքե՞ր են, ո՞ւր են, ինչպիսի՞ արդյունքների են հասել, գրանցել. հույս կա՝ հաջողության, թե՝ լճացած, անօգնական ու անկումային վիճակում են նրանց՝ ջանքերի չվերածված լոկ մտքերն ու ցանկություններն իսկ:

Մեր կյանքի համարյա բոլոր ասպարեզների գործունեությունում կիրառվում են հաշվապահություն ու հաշվետվություն, որոնք, եթե գոյություն ունի իրական ժողովրդավարություն, ապա թափանցիկությամբ նատուցվում, ներկայացվում են շահագրգիռ կողմերին:

Թե ինչ չափով ու որակով է այդ կատարվում մեր ազգի ու պետության մեջ, դա այլ հաղո՞ւ: Սակայն երբ հարցը վերաբերում է մեր ազգային ինունիտետին՝ ինունային համակարգին՝ վարակամերժ կարողությանն ու կենսունակության վիճակին, և լնդիանրապես մեր անձնական ու ազգային ներաշխարհի անաղարտության կամ ապականության վիճակին, դրա «կարմիր գիծն» անցնելու վտանգմերի կամ արդեն իսկ եղած ավերների վերաբերյալ պատշաճ հաշվարկ ու «հաշվապահություն» կատարվո՞ւմ են և ճշգրիտ հաշվետվություն ներկա-

յացվո՞ւմ է հայությանը: Ովքե՞ր և ո՞ր կառուցները, ո՞ր հաստատություններն են պարտավոր այդ անել, ազգին, հանրությանը գեկուցել, ներկայացնել, ծանուցել (ու իրենք իրենց ևս), այդ մասին միշտ իրազեկ պահել ու ըստ այնմ դիրքորոշվել և գործել ու գործել...

Եվ այդ գեկուցման, իրազեկման մեջ ներառեն նաև այդ մարդկային ու ազգային արժեքների և հատկությունների պաշտպանության ու պահպանման, զարգացման ու բարձրացման հաշվարկները, ծրագրերը և դրանց կենսագործման համար իրենց պատրաստվածության աստիճանն ու գործունեության արդյունքները:

Մետք է Աստվածակերտ մեր ազգի ու Աստվածապարգև մեր հայրենիքից կոտորակված այս տարածքի վրա մեզ շնորհված պետության վիճակի այս ի՞նչ տեսակի «հաշվապահություն» ու ի՞նչ տեսակի հաշվետվություն է: Իսկ վիճակի մասին «առողիտ» կոչվածից չե՞նք վախենում: Բայց պետք է վախենալ, այն էլ՝ շա՛տ, որովհետև մեր փողերով վարձվող «առողիտից» բացի կանա Երկնային կանոններով գործող անաշա՞ր ու անկաշա՞ր «առողիտ», որի բացահայտումները բացարձակ ճշգրիտ են, արդար են, ու վերջնական գնահատումները՝ անփոփոխ, և որոշումները՝ անբեկանելի՝ հավիտյան հավիտենից:

Ապականության «կարմիր գիծն» անցած սրտերն ու մտքերը գուրկ են այդ հասկացողություններից. Ժողովրդի պատասխանատվության մեջ է ընկնում, որ իր կյանքի դեկն այդ-պիսիների ձեռքը չընկնի:

Այդպիսի պատասխանատվությանը տեր կանգնող ժողովրդին Աստված կօգնի:

13 - 12 - 2015թ., ժամը 07:00

## ԵՐԱՇԽԻՔ ԳԻՏՈՒԹՅԱՆ

Որևէ երաշխիք կա՞՝, որ զգում ենք ամեն ինչ, լսում ենք ամեն ինչ, տեսնում ենք ամեն ինչ և գիտենք ամեն ինչ։ Դազիվ թե մարդկային գիտությունը հանձն առնի ապացուցել, թե այդպիսի երաշխիք գոյություն ունի։ Բայց հակառակը, որ այդպիսի երաշխիք չկա (որովհետև չի կարող լինել), հազիվ թե ապացուցման կարիք ունենա...»

Մենք հավատքով գիտենք, որ Աստված ստեղծեց երևելիները և (մարդու համար) աներևույթները։ Որոշ աներևույթներ, օրինակ՝ որոշ ճառագայթներ, ալիքներ և այլն, մենք չենք ընկալում, սակայն ընկալեցինք հատուկ սարքերով։ Նույնպես և էլեկտրոնային մանրադիտակներով և տիեզերական հեռադիտակներով ընկալեցինք նոր միկրոսկոպիկ ու մակրոսկոպիկ գոյություններ։ Մենք չգիտենք, չենք ընկալում նաև որոշ քիմիական տարրեր, բայց հենվելով որոշ երևույթների վրա՝ **տրամարանությամբ** (Մենդելեևի) ինացանք դրանց մասին, ներառյալ դրանց հատկությունները և դրանց որոշակի տեղը օրինաչափության (աղյուսակի) մեջ։

Ինչո՞ւ մենք, մենդելեևների տրամաբանությունը և դրա հիման վրա ճանաչումն ու օրինաչափությունը գիտական համարելով, ընդունում և մանավանդ կիրառում ենք ու դրա օգուտն էլ գիտենք և ստանում ենք, սակայն ահա Գրիգոր Լուսավորչի, Սահակ Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի, Մովսես Խորենացու, Վարդան Մամիկոնյանի, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Տարեացու, Ներսես Շնորհալու և շատ ու շատ ուրիշների, մինչև Միհրար Սեբաստացիների ու նրանց նմանների տրամաբանությունը և դրանից բխող ճանաչումն ու օրինաչափությունը, որը հանգեցնում է Արարչի և Նորա Միածին Որդու հավատքին, գիտական և նույնիսկ գերգիտական չենք համարում, ինչպես

մեր շատ վայ-գիտնականները, վայ-մտավորականներն ու դրանց նման քաղաքական, հասարակական և պետական գործիչները (դրանց մեջ արդյոք հայ «հոգևորականներ» էլ են գտնվում), փաստորեն, չեն ընդունում, ու ամենավատը՝ ըստ այնմ չեն գործում, որոշումներ ընդունում ու ապրում, որպեսզի շարքային մարդիկ էլ նույնն անեն. մեր մեծերի, սրբերի՝ մեզ թողած Աստվածատուր պատգամներին անսան և ըստ այնմ ապրեն ու գործեն...

Նրանք այդպես են վարվում, չեն ընդունում, որպեսզի ի՞նչ. «հասարակ» և «ոչ գիտական» չերևա՞ն... Իսկ մի՞թե մեր Սուրբ Յայրերը՝ մեր մեծերը, մեր սրբերը, որ իրենց հավատքով և դրանից բխող ու դրա վրա կիմնված իրենց համոզմունքով և գաղափարով ապրեցին, իրենց կյանքը նվիրեցին, պակա՞ս գիտական էին...

Սա ի՞նչ տրամաբանություն է, ո՞վ հայոց «գիտակներ», «զարգացածներ», որով հատկապես շուրջ երկու դար է, ինչ մոլորեցվում է մեր հավատավոր, բարի ու հավատարիմ ժողովուրդը: Եվ դժբախտաբար, դա արվում է նաև մեր որոշ կղերականների մասնակցությամբ, ովքեր ևս ուզում են «գիտական» ու «առաջադեմ» երևալ...

Սա պարզապես տգիտություն է, թե՝ ավելի շուտ՝ հոգեգրկություն, խավարամտություն և չարագործություն: Ե՞րբ պիտի զգաստացում առաջանա՝ այլևս չմեղանչելու համար երկնային ճշմարտության ու մեր ազգի եռթյան առաջ, մեր մեծերի, մեր սրբերի, մեր նահատակ ժողովորդի առաջ, ու ամենաահավորը՝ պիղծն ու կորստաբերը՝ մեր Արարիչ Յոր առաջ:

\* \* \*

Չարլզ Դարվինը մեկն էր, որ իր հնարած «տեսությամբ» անաստված դարձավ ու դրանով ազդեց շատերի վրա: Նա չարի դրդմանք և նրան ծառայելով՝ հնարեց իր «տեսությունը», որ դրա միջոցով ևս մեծ զանգվածներ մոլորվեն, կորչեն: Ինչպես և հարաճունորեն լինում է...

Սակայն դա ընդմիշտ չի լինի, դրա վերջը կգա Տիեզերական օրինաչափությանք:

Եվ մեր ազգի հավիտենական ահազանգն անաղմուկ, բայց անլռելիորեն զգնության ու զգաստության է կոչում հայ մարդուն, հայությանը և մանավանդ հոգեսոր ու աշխարհիկ ղեկավարությանն ու մատադ սերնդին՝ երբեք չշեղվելու, չխոտորելու, այլ միշտ, բոլոր պայմաններում հավատարիմ լինելու Աստվածորդու հավատքին, Արարիչ Յոր կամքին:

Ծաբաթ, 05 - 02 - 2011թ., ժամը 00:00

## **ՄՆՈՒԴ. ԱԽՏԱՀԱՐՈՂ ԵՎ ՏԿԱՐԱՑՆՈՂ, ԹԵՇ ԶՈՐԱՑՆՈՂ**

Ինչպես որ մեր մարմնին որոշակի հաճախականությամբ սնունդ է պետք, այն էլ լիարժեք սնունդ՝ վիտամիններով (և ոչ միայն դրանցով) հարուստ, այնպես էլ մեր հոգուն է պետք՝ նույնպես հաճախ և դեռ ավելին... Ու ինչպես մեր մարմնները պետք է մարզվեն, կոփվեն, որպեսզի առողջ, անուր և տոկուն լինեն, այնպես էլ մեր հոգիներն առողջ, անուր, տոկուն պահելու համար հարկավոր է մարզել, կոփել, առողջ պահել՝ լսելով Աստվածաշունչ խոսքը, կատարելով պատգամները, աղոթելով ու հավատքին հավատարմությամբ, օրինապահությամբ և բարի գործերով ինքնարբուխ ծառայելով հայ ազգին, հայրենիք Յայաստանին, պետությանը և դրանով նաև մարդկությանը:

Արդյոք մեր հոգիները տկարացած չե՞ն անորակ սմնդառությամբ ու թերսնուցմանբ:

Արդյոք մեր հոգիները ախտահարված չե՞ն արատավոր ու կենսագործ սնուցմամբ, որը կյանքի սպառնալիքով մեզ պարտադրվել էր 70 տարի, և դրանից հետո էլ լափիշորեն, տարբեր խարկանքներով մեզ մատուցում է նյութապաշտ, անբարոյական ու աստվածամերժ աշխարհի՝ հատո՞ւկ թիրախավորելով մեր մատադ սերնդին:

Եվ մարմնի սնուցման անորակության և մանավանդ պակասի համար կարող ենք հարայ-հրոց գտել, մինչև իսկ հանցանք գործել և կամ նվաստանալ:

Իսկ հոգևոր սովահարությունից փրկվելու համար մենք մատը մատին խփում ենք, թե՞ անտարբեր ենք, կարծես հոգով, մտքով, գիտակցությամբ ու կամքով ընդարձացած լինենք...

**Ո՞ւր են մեր հոգևոր մատակարարումն ու հոգևոր (դրանով նաև՝ գաղափարական և բարոյական) առողջապահությունը: Ու նաև դրանց անվտանգությունը, պաշտպանությունը, և ոչ միայն այդ, այլ նաև դրանց անշեղ վերելքը...**

Չէ՞ որ առանց դրանց անվտանգության, պաշտպանության, հարատև զորացման և վերելքի չենք կարող լիարժեք ու միշտ ապահովել մեր սահմանների ու երկրի պաշտպանությունը, նաև հայօգուտ քաղաքականությունը և կրթությունը, գիտությունը, տնտեսությունը, նշակույթը ու նաև ազգի միասնությունը, նրա արդյունավետ գործակցությունը և մնացած բնագավառները:

Ինչպես կարող ենք հաջողել տնտեսական ու ամեն տեսակի այլ մրցակցություններում, դիմանալ դժվարություններին ու հաղթական դուրս գալ և վախճառական կամ այլասերված ստահակի պես չմտածել դասալքության և հայրենիքը լրելու, փախչելու նասին:

Ի՞նչ պետք է անել, ինչպես անել, ովքե՞ր, ո՞ւմ հետ, ե՞րբ պետք է անել: Չէ՞ որ ժամանակը չի սպասում, և բանը բանից անցնելուց հետո ինչ էլ արվի՝ իզուր է լինում:

Ո՞ւր է, ինչո՞ւ չի լսվում հայ ազգի, հայրենիք Հայաստանի ու Աստուծու հանդեպ սեր ու պատասխանատվություն գգացող դեկավարների ձայնը...

**Ու եթե այդպիսի ձայն չկա, լռություն է, հավանաբար պետք է, որ յուրաքանչյուր հայրողի ձայն բարձրացնի, ահազանգի՛ ու նաև պաշտպանության դրո՛շ բարձրացնի՝ հավատքով, խղճով, գիտակցությամբ ու պատասխանատվությամբ՝ Տիրոջ առաջ ու ապավինելով Նրան:**

Երկուշաբթի, 06 - 08 – 2012թ., Խալկիդիկի, Հունաստան

## **ՉԱՆՏԵՍԵՇՆՔ ԷՎԿԱՆՔ**

Սնունդը միայն տվյալ պահի քաղցը բավարարելու համար չէ, այլ նաև օրգանիզմի բնականոն կենսունակության ապահովման համար է, ներառյալ՝ օրգանիզմի առանձին մասերի աշխատանքի ապահովման և նույնիսկ դրանց «անվտանգության» և կամ վերականգնման համար է:

Մեր ընդունած սննդի տեսակները (օրինակ՝ ճարպը, շաքարը, աղը, ալկոհոլային թունդ խմիչքները) շատ դեպքերում հակասում են մեր օրգանիզմի պահանջներին և նույնիսկ վնասում օրգանիզմին, հատկապես տարիքային դրոշ շոշաններում և մանավանդ երբ ճիշտ եղանակով չեն պատրաստվում ու ճիշտ քանակությամբ, ճիշտ ժամանակին չեն օգտագործվում:

Պարզվում է, որ սնունդը, մարդու օրգանիզմի (մեքենայի) եռանդն (էներգիան) ապահովելուց բացի, օրգանների (հանգույցների) «յուղման» դերն էլ է կատարում:

Սակայն համի ցանկությունը շատ հաճախ շեղում է ճիշտ սննդառությունից, հատկապես փոքր և մանավանդ «մեծ» երեխաների պարագայում:

Ուրեմն՝ ճիշտ սննդելու համար նախևառաջ հարկ է ունենալ գիտելիքներ և փորձառություն, կամք և գիտակցություն, կազմակերպվածություն ու կարգապահություն և դրանց հետ խիլճ, պատասխանատվություն, իհարկե, նաև նյութական միջոցներ:

**Այս առումով կյանքը, մարդկային պատմությունը փաստում են, որ համապատասխան կրթությունը, մշակույթը և դաստիարակությունն էական գործոններ են ճիշտ սննդառության, հետևապես և այս աշխարհում առողջ, երկարատև ու գործուն կյանքի համար:**

Իսկ հոգու սմբառության՝ հավերժակա՞ն կյանքի համար էական գործոնը, որ Յիսուսի Աստվածության հավատքն է, մեր կրթությունը, մշակույթը, դաստիարակությունը մեզ տալի՞ս են: Ակնհայտ է՝ ոչ կամ ոչ բավարար: Սակայն քանի որ կյանքը, մարդկային պատմությունը փաստում են, որ առանց այդ էական գործոնի՝ հավատքի, ամեն ինչ փո՛ւց է՝ ունայնություն ունայնությանց, ապա այս աշխարհում իսկակա՞ն օգուտը ավետարանական խրատը, պատգամն է. «**Յիսուսին նայենք, միայն Յիսուսին»:**

\* \* \*

Ատամնաբուժության զարգացման համար աշխարհում մեծ գումարներ են ծախսվում. ակնկալությո՞ւնը... շահույթի ապահովում՝ տրամադրելով մարդկանց ցավազերծ բուժում, ծանելու առավել հարմարություն, ատամնաշարերի գեղեցկություն և այլն: Մոտավորապես նույնը կատարվում է արյան ճնշման, սրտի աշխատանքի կարգավորման և այլ բուժումների ու ցավազրկումների համար դեղերի հայտնաբերման գիտահետազոտական աշխատանքների վրա՝ ծախսերի ու այլ առումներով: Եվ այս բոլորը կատարվում են ցավազերծման, առողջության, նույնիսկ գեղեցիկ տեսքի ու, ի վերջո, կյանքի հարմարավետ պայմանների, գուցեև երկարակեցության համար:

Իսկ չպատերազմելու, մարդկանց զանգվածաբար չսպանելու և դրա համար բոլոր տեսակի պատերազմներն օրենքից դուրս հռչակելու և իսպառ վերացնելու համար անհրաժեշտ աշխատանքների վրա ինչքա՞ն է ծախսվում: Ու եթե չի ծախսվում կամ քիչ է ծախսվում, ինչո՞ւ: Ի՞նչ է, մարդկությունը կորցրե՞լ է հավատքը, խիղճը, տրամաբանությունը, բարոյականությունը ու նաև իր հաշվենկատությո՞ւնը և, ի վերջո, իր լավ լինելու համար մտածելու և գործելու ունակությո՞ւնը ևս:

- Յավանաբար՝ ո՞չ: Դա՛ չէ պատճառը:

- Յապա ո՞րն է պատճառը:

- Ըստ երևույթին՝ հոյս չունենալը, թե որևէ կերա կկարողանա դադարեցնել պատերազմները:

- Ի՞նչո՞ւ:

- Որովհետև պատերազմները դադարեցնելու միակ և ուղիղ միջոցը մարդու և մարդկության փոխվելն է չարից դեպի բարին, անարդարից դեպի արդարը: Իսկ դրան այս աշխարհի մարդը՝ «Ես»-ը, համաձայն չէ, նույնիսկ դեմ է:

- Ի՞նչո՞ւ:

- Որովհետև եթե դեմ չլինի ու համաձայնի, նշանակում է մարդը, մարդկությունը պիտի զգան, մտածեն ու ապրեն երկնային, հոգևոր չափանիշներով, հոգևոր կյանքով, հոգու համար, մինչդեռ հիմնականում ուզում են ապրել հակառակ կերպ՝ նյութական, աշխարհիկ չափանիշներով, մարմնավոր կյանքով, մարմնի համար, չնայած Ավետարանում (*Կյանքի սահմանադրությունում*) ասված է, որ մարմնի մեջ սերմանողը մարմնից ապականություն կինծի, իսկ հոգու մեջ սերմանողը հավիտենական կյանք կինծի...»

Մեր նախնիներից շատերը լավ ծանոթ էին ավետարանական այդ պատգամին, դրան հավատում էին, դրանով ապրում էին և դա էլ մեզ ժառանգություն են թողել: Դիմա մենք պետք է մտածենք, թե ինչ ենք անելու, ինչն ենք ընտրելու, ինչպես ենք ապրելու:

Իսկ ի՞նչն է ավելի օգտակար (նաև «շահեկան»)՝ ապականությո՞ւնը, թե՝ կյանքը: Այսինքն՝ ապականությո՞ւնը, մա՞հը՝ մեռնել՝ մնալով ինչպես կա՞նք, թե՝ կյանքը (այն էլ հավիտենական), եթե փոխվենք:

Առանց Աստուծոն խոսքի և Նրա Որդու՝ Սուլբ Հոգուց ծնունդի՝ մարդայնացման, մեռնելներից հարության ու Երկրորդ Գալստյան հավատքի՝ անխուսափելի է մահը: Մինչդեռ Աստուծոն խոսքով և հավատքին հավատարմությամբ՝ հաստատ է կյանքը այժմ և հավիտյանս Երկնային արքայությունում:

- Այդքան դժվա՞ր է դրան հավատալը:

- Դժվար չէ հավատալը, երբ չարը բացահայտված, զսպված, մեկուսացված և անզոր է խաբելու: Իսկ երբ չարը անզուսապ, ազատ, զորացած ու նաև ստոր գաղտնիությամբ և դավերով է գործում, անհաշտ պատերազմ է մղում փրկության

հավատքի դեմ, ապա ոմանց համար հավատալը դժվարանում է. բայց (խոսելով մեր ազգի մասին) մեր նախնիների կողմից շատ հաղթանակներ են տարվել այդպիսի պատերազմներում: Նրանք հավատացել, հավատքով գործել ու ապրում են հավերժական կյանքով Աստուծո Արքայությունում՝ սկսած մեր ազգի հիմնադիր Հայկ Նահապետից մինչև Վարդանանք, Ղևոնյանք և դարերի ընթացքում նրանց հետևած մեր բյուրավոր նախնիները:

**Իսկ հիմա ինչո՞ւ ենք դժվարանում, չենք կարողանում լիարժեք հետևել նրանց օրինակին: Ի՞նչն է խանգարում:**

- Խանգարում են աշխարհում չարի ձեռք բերած աննախադեպ հաջողությունները, հատկապես մեր ժամանակներում նրա քառատրոփի արշավով կատարած՝ հոգիների զանգվածային գերեվարումները՝ մեր տկարացմանք:

- **Ինչո՞վ ենք տկարացել:**

- Փաստացի անհավատությամբ և դրա հետևանք նյութապաշտությամբ ու կոռումպացվածությամբ:

- **Ի՞նչ կապ ունեն դրանք չարին դիմադրելու հետ:**

- Անմիջական կապ ունեն, որովհետև մեր՝ հատկապես ժամանակակիցներիս նյութապաշտությունն ու կոռումպացումը չարիք են ոչ միայն նյութական, այլև առաջին հերթին՝ հոգեկան, գաղափարական և բարոյական, որոնք համակում և խաթարում են կյանքի մեր ընկալումը, ըմբռնումը, դրանով կենցաղը, ապրելակերպը և շատ բաների հանդեպ վերաբերնունքը...

- **Իսկ ինչպես կարելի է դրանցից ազատ մնալ, չազդվել ու հաղթող լինել:**

- Խախ՝ սիրելով Յորը, Որդուն, Սուլը Յոգուն՝ Աստծուն, և կատարելով Նրա պատվիրանները, որոնք, ինչպես Սուլը Ավետարանում է ասված, «ծանր չեն, այլ թեթև»: Եվ ամեն անձ, հավաքականություն ու ազգ, որ ճշմարտորեն հավատում է Աստծուն և հավատարմորեն ու հետևողականորեն՝ միշտ, ամենուր, ամեն ինչում կատարում է Նրա կամքը, անվերապահ հաղթում է չարին և նրա իշխանությանը՝ «աշխարհին»:

Եվ հայ ազգը, հազարամյակների իր գոյության ընթացքում հիմնականում հավատարիմ է մնացել Արարիչ Յորը, նվիրվել ու կատարել է Նրա կամքը:

Եվ այժմյան հայությունն էլ, եթե այդպիսի ժառանգությանը հավատարիմ մնա, ի վիճակի կլինի դիմադրել, դիմանալ ու հաղթական դուրս գալ չարի ամեն տեսակ փորձություններից. միայն թե հավատանք ու հավատքով ապրենք, գործենք, ինչպես մեր նախնիներն էին հավատում և հավատքի գործեր կատարում:

Ծաբաթ, 21 - 03 - 2015թ., ժամը 22:00

## **ԿԵՂԾ ՈՒ ԻՍԿԱԿԱՆ ՀՈԳԵԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Կեղծ հոգեկանությամբ հավատացյալը, մանավանդ կղերականը, ինչպե՞ս կարող է ապրել որպես քրիստոնյա:

Ստալինիզմը որոշ հաջողություններ գրանցեց շնորհիվ նրա, որ ճանաչելով ռուսական ոգին՝ հասկացավ, որ ռուս մարդը, ինչպիսին էլ լիներ նրա վրա գործադրվող ապակողմնորոշման ճնշումը, ի վերջո, չի՝ պաշտպանի խորհրդային իշխանությանը (խորհրդային ռեժիմը), սակայն կրծքով կպաշտպանի Մայր Ռուսիան: Ու այդ հասկացողությամբ մշակեց և կիրառեց իր ընդհանուր ներքին քաղաքականությունը, մասնավորապես ռուս ազգի և դրա հետ նաև խորհրդային ռեժիմի տակ գտնվող այլ ազգերի՝ այսպես կոչված սովետական գաղափարականությամբ դաստիարակությունը, որի հիմքում իր հնարած խորհրդային «հոգեկանությունն» էր՝ իր «խորհրդային բարոյականության» նորմերով հանդերձ: Եվ դա որոշ փոփոխություններով՝ «գիշումներով», ակտիվորեն օգտագործեց, երբ Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբում իր գոյությունը մազից կախվեց, և իր նպատակին հասավ...

Սակայն մարդկության զարգացման օրինաչափությանը խորթ ու կեղծ այդ տեսությամբ մոտենալով՝ ստալինիզմը դա-

տապարտված էր, երկար կյանք չէր կարող ունենալ և չունեցավ, քանի որ գոյություն ունի **իրական, հարազան հոգեկանություն**, որով և **բարոյականություն՝ իր սկզբունքներով հանդերձ:**

Եվ դա նաև հարատև է, ընդմիշտ կենսատու և մարդկային կյանքն ինաստավորող, որովհետև այն Աստուծոն հավատքիվ առաջացած հոգեկանություն է, ինչն այսօր (խոսելով մեր մասին) ողի պես պետք է հային, հայ ազգային օրգանիզմին, Հայաստան երկրին և պետությանը, ինչպես և համայն մարդկությանը: Ու քանի որ դա՝ ճշմարիտն ու իրականը, ապա ամենայն տրամաբանությամբ հայության աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների հիմնական ու առաջնային նպատակ-խնդիրը պետք է լինի հայ կյանքի համընդհանուր հոգեկանացումը Ավետարանով և Խաչով:

Ծաբաթ, 30 - 06 - 2012թ., ժամը 06:50

### **ՀԱՅ ՄԱՐԴ, ՀԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆ, ՎԵՐ ԿԱՅ**

Հայի ինքնության, նրա էության և գոյության դեմ նենգ ու դաժան պատերազմ է մղվում: Հայի և հայության դեմ տարվող հոգեբարոյական ու գաղափարական այդ պատերազմում պաշտպանվելու համար հայության մեջ **չի լի մտածվում համապատասխան քայլերի դիմել՝ գոնե վաշտեր կազմել, մինչդեռ այդ կրվում մեր պաշտպանությունը վաղուց ի վեր պահանջ ունի բանակի՝ հարազատ, բարեխիղճ, հնուտ ու հոգով ասպետական հրամանատարությամբ, ռազմավարությամբ, մարտավարությամբ, գլխավոր շտաբով, թիկունքի ծառայությամբ և ներքին ու արտաքին քաղաքականությամբ:**

Բայց հայ մարդն հ՞նչ անի, երբ այդ կրվում ազգով իբր մտահոգները, ազգային իբր գործիչները կուսակցություն և բա-

րեգործություն խաղալուց այն կողմ չեն անցել: Եվ այդ կորստաբեր վիճակի մասին ահազանգ էլ չի հնչեցվել...

Շատ վատ է, երբ հայության համար դժվար է լինում միասնակա՞ն լինել այն ժամանակ, երբ իրավիճակն ու ընդհանուր դրությունը վաղուց դա են պահանջում: Ու մանավանդ պահանջում են, որ ամեն օր՝ գիշեր թե ցերեկ, յուրաքանչյուր հայ ուխտյալի նման անմիջապես հասանելի և բարձրակարգ հմտությամբ կազմ ու պատրաստ տրամադրելի լինի համապատասխան գործողության համար որևէ պահանջված վայրում...

29 - 10 - 2009թ., ժամը 23:10

## **ԵՎ ԴԱՐՁՅԱԼ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ասել ենք ու նորից ենք ասում, ինչո՞ւ: Ինչո՞ւ ամեն տեսակի վիրուսի համար, որ կարող է անցնել մեր երկրի սահմաններից ներս և մեզ վարակել հարբուխով, հավի կամ խոզի գրիպով, կամ վարակել մեր խոզերին, կովերին ու այլ անասունների, որա ոեմ մենք կարանտիններ ենք սահմանում, ստուգումներ ենք կատարում, ախտազերծիչներ ենք գործածում և օդանավակայանում ժամանակներին հարցաթերթիկներով ենք դիմավորում, ստուգումներ անում՝ իմանալու համար, թե արդյոք որևէ տեղից որևէ վարակ՝ բացիլ, վիրուս մեր երկրի չի բերվում:

- Իսկ դա ի՞նչ է, լավ չէ, վա՞տ ենք անում:

- Ո՞չ, շատ լավ է, լավ ենք անում, բայց ինչո՞ւ ենք միայն այդ նպատակով անում, իսկ հոգևոր, գաղափարական և բարոյական վիրուսների դեմ, որ քայլայում են մեր հասարակության, մեր ազգի հոգեբարոյական և գաղափարական իմունիտետը, դրանց վարակամերժ կարողությունը և ախտահարում են մեզ, մանավանդ մեր մատաղ սերնդին, համարյա ոչինչ չենք անում: Ավելին, եթե մի ժամանակ, երբ կախյալ վիճակում էինք,

այդ վիրուսները մեզ ճենգափոխանցվում կամ բռնափոխանցվում էին իիմնականում օտարաստեղծ խորթ գրականությամբ, կրթությամբ, տեղեկատվությամբ, արվեստով և այլն, ապա այժմ դա մեր հանդեպ արվում է մեր իսկ կողմից, մեր միջոցներով, մեր հեռուստաալիքներով, այլ ՁԼՍ-ներով, ամեն տեսակի էլեկտրոնային միջոցներով և մեր էլ մասնակցությամբ:

Եթե հիվանդանալուց խուսափելու համար (հավի, խոզի, էշի ու էլ չգիտես ինչ վիրուսներից) պաշտպանվում ենք պետական ծրագրերով և գիտական, վարչական ու այլ միջոցներով, ապա ինչո՞ւ նույնը ու ավելին չենք անում մեր և մեր երեխաների հոգիները, մտքերը թունավորումից ու հաշմությունից պաշտպանելու համար:

Ո՞վ, ովքե՞՞ր են շահագրգուված, որ մենք ախտահարվենք, վարակվենք, զոնբիանանք ու մեր ինքնությունից խորթանալով՝ մենք մեզ կորստյան մատնենք, մեր սրտերի ու մտքերի ազատազրկմամբ հոգեկան, բարոյական ստրկացման ենթարկվենք:

Չէ՞ որ այդ հասկանալով ու գնահատելով և մանավանդ շատ բանում զղացակով ու մեղա զալով՝ հոյս կլինի, որ կարժանանաք ներումի, շնորհի և դրանցով՝ ամենայն իմաստության, զորության, կարողության ու նաև անգերազանցելի՝ օգնության՝ կանգնեցնելու այդ կորստաբեր վայրընթացը, որը պատճառ է նաև բոլոր մյուս վայրընթացների, և սկսելու մի վերընթաց, որը հիմք է դառնալու մեր ամեն ինչի առավելագույն բարձրացման...

Նախ՝ ներում ու շնորհ, և ապա՝ խելք, խիղճ:

Ազգային մեր ո՞ր կառույցները, ծառայություններն են պատասխանատու և պարտավոր պաշտպանել մեր ազգը, հասարակությունը, մատադ սերունդը, որպեսզի մենք մենք լինենք՝ մեր հարազատ ինքնությամբ և տոհմիկ, բարոյական կենցաղավարությամբ, մտածելակերպով, նպատակով, կամքով և գործերով, որպեսզի չկորչենք աշխարհի երեսից ու ամենաէականը՝ Աստուծու աչքից:

Մեր ազգի մեջ խղճի ռեանիմացիա կատարվո՞ւմ է:

Ուրախալի է, որ տարածքով ոչ շատ մեծ մեր երկու հանրապետություններում բազմաթիվ բժշկական կենտրոններ են ստեղծվում՝ վերակենդանացման բաժանմունքներով, ուր վերականգնվում են մարդու սրտի, թոքերի, մարմնի տարբեր մասերի, անդամների աշխատանքը, արյան բնականոն հոսքը և այլն:

Սակայն մեղանչած հոգու պատճառով ծանրացած խղճի, մոլորված մտքի ու ախտահարված գիտակցության վերականգնումը հայ կյանքում, Հայաստան երկրում, հայ իրականությունում ո՞ր հաստատությունների ո՞ր բաժանմունքներում կարող է արվել:

Արդյո՞ք չպետք է մտածել և նույնիսկ մտահոգվել այդ մասին և գործել, գործել ու գործել հավատքով, սիրով, խղճով և պատասխանատվության զգացումով ազգի, մարդկության և մանավանդ Արարիչ Հոր առաջ:

Մեր աշխարհիկ ու հոգևոր իշխանություններն ի՞նչ են ասում այդ մասին. շարքային հայ մարդիկ ո՞ւմ լսեն, ո՞ւմ հետևեն, ե՞րբ, ինչպե՞ս...

Աստված մեզ հասնի:

Երեքաբթի, 14 - 04 - 2009թ.

## **ԶԵՎԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԸ ԱՌԱՎԵԼ ՎԱՏ, ՔԱՆ ԱՆՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ, ԻՍԿ ԾԱՀԱԴԻՏԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԸ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՆԿՈՒՄ**

Խորին և հավատավոր պատասխանատվությամբ դիտարկելով հայության և մասնավորապես Հայաստանի հասարակական որոշակի գոյագիծակը՝ կարևորագույն անհրաժեշտություն է առաջանում զգալու, հասկանալու և բնորոշելու այժմյան հայության մեջ ու Հայաստանում դարերով պաշտպանված, պահպանված ու դավանած հայոց հավատքը արդյո՞ք անխախտ և իսկական տոհմիկ է, թե՞ տարբեր ժամանակներում, տարբեր

պատճառերով, խորթ ազդեցությունների ենթարկվելով՝ մակերեսային և ձևական է դարձել՝ առնվազն մասամբ: Եվ դրա հետևանք եղող մեր տկարացումը ազգի ո՞ր խավերի, որ հաստվածների մեջ ինչ չափերի է հասած:

Իսկ կարո՞ղ է մեր մեջ նաև շահադիտակա՞ն «հավատք» ել է առաջացել, որը դուլյզն-ինչ չափով իսկ եթե լինի, նշանակում է աշխարհում անկաշկանդ, քառատրոփ արշավող «հոգևոր» անբարոյականության վարակով ախտահարվելու լուրջ վտանգի տակ է մեր ազգը, կամ արդե՞ն իսկ վարակված է:

Աստված մի՝ արասցե, եթե վիճակն այդպիսին է կամ կարո՞ղ է լինել. այդ դեպքում հայ ազգի հոգևոր, գաղափարական և բարոյական առողջապահության ո՞ր հաստատությունը կամ հաստատությունները, ո՞ր դեկավարը կամ դեկավարներն են պատասխանատվություն կրում հայության ու Հայաստանի մեջ ձևական, առերևույթ կամ շատ ավելի վատ՝ շահադիտական «հավատքի» առաջացման և տարածման համար և պարտավո՞ր են համապատասխան՝ հավատավո՞ր վերաբերմունքով և միջոցներով ջանալ դրանք և դրանց պատճառած ավերներն անհապաղ վերացնել:

Եթե մեր ազգային հոգին աղավաղող ու օրգանիզմն անդամալուծող այդ երևույթն առկա է, ապա կասկածից վեր է, որ դրա հարուցիչներից առաջնայինն հոգեկան և գաղափարական կոռումպացվածությունն է, որով և հոգեկանության, գաղափարականության և բարոյականության աղճատումը, նվազումը, մինչև իսկ վերացումը և նյութապաշտության, անտարբերության ու այլասերության ավելացումը կամ տիրական դառնալը:

Դրա համար, սակայն, դեկավար-պատասխանատունների հետ նաև մասնագետ և բուժող սրտացավ բժիշկներ են պետք՝ հայ հասարակության ուրույն ախտորոշման և բուժման դեղատոմներն առաջարկելու, և հմուտ կազմակերպիչներ՝ դեղերը հայթայթելու, կիրառելու համար:

Ուրեմն՝ ո՞ւր են նրանք, ինչո՞ւ առաջ չեն գալիս, եթե նրանք էլ ախտահարված չեն: Ու եթե նույնիսկ առարկություն լինի, թե մեր հասարակությունն այդպիսի և դրանց նման

ախտերով չի՝ տառապում, չի՝ քայքայվում, չի՝ տկարանում ու չի՝ կենսագրկվում, միևնույն է, նրանք պետք է առաջ գան իրենց պարտքը կատարելով՝ ստուգելով, կանխարգելիչ միջոցներ առաջարկելով այդ ու նման ախտահարումների դեմ:

Բայց դրա համար ազգային տիրական ոգի, գիտակցություն, պարտաճանաչություն և նվիրում է պետք, որ բերում է հոգո՞ւ պարտքի կատարման Աստուծո՞ւ առաջ:

Ո՞ւր եք, դարերի ընթացքում ձեր կյանքի գնով հայ ազգի տեր և ծառա՝ Վարդանանք, Ղևոնդյանք և մեր դարաշրջանի նվիրյալ նժդեհանձնաններ: Մեր ազգի հավատքը, գաղափարականությունը և բարոյականությունը պարունակող ձեր ոգին, կամքն ու գործն են պետք՝ որպես սպեղանի մեր ազգին, հասարակությանն ու ամեն տեսակի դեկավարությանը: Սփռե՛ք դրանք մեր սրտերի և մտքերի մեջ, որ հոգևորվենք, ոգևորվենք և վերակայանանք՝ որպես հավատավոր, ազնիվ ու առողջ ազգ, երկիր ու պետություն՝ ի փրկություն և վերելք մեզ, մեր սերունդներին, հօգուտ նաև մարդկության և ի փառս բոլորի Արարիչ Երկնավոր Յոր՝ Ա Ս Ո Ւ Ծ Ո:

Հինգշաբթի, 11 - 03 - 2010թ., Ժամը 01:10

## **ՄԵՂՔԸ ՏԿԱՐԱՑՆՈՂ ՈՒԺ Է**

Այո՛, համեմատած շատ ազգերի ու երկրների հետ, տկա՛ր է հայ ազգը, ու այդ վիճակում է և Յայաստանը՝ կոտորակված, ճնշված, սեղմված ու մեկուսացված: Տարատեսակ դեպքերի բերումով և գործոնների ազդեցությամբ է առաջացել մեր ազգի ու երկրի այս վիճակը, սակայն դրանցից ամենաազդեցիկը, վնասակարը, կործանարարը մեղքի գործոնն է, որի ազդեցությունը հաջորդաբար կուտակվել է մեզ վրա և գործում է մեր մեջ:

Այդ մեղքի կուտակումը կարող էր և լիովին խորտակել մեր ազգի ու երկրի կայունությունը, և ոչնչացնել մեր գոյությունը, եթե մեզ չօգներ մեր նախնիների՝ իրենց հավատքի

հանդեպ հավատարմության համար ստացած շնորհը, որը մեր Արարիչ Յոր ողորմածությամբ, որպես ժառանգություն, փոխանցվել է ազգի սերունդներին, որից այժմ, ըստ երևույթին առանց նույնիսկ գիտակցելու, օգտվում ենք՝ պահպանելով մեր ազգային ու պետական որոշակի կայունությունը ներքին ու արտաքին, տարածաշրջանային և միջազգային տարրեր բնույթի կլանիչ ալեկոծություններում:

**Ու եթե այդ շնորհով երբևէ գիտակցենք Աստվածապատգամ, իսկական ազգային՝ արժանապատիվ գոյության ռազմավարություն ունենալու անհրաժեշտությունը և անկեղծ, հետևողական ու հարատև ջանքեր գործադրենք դրա ստեղծման համար, ապա չմոռանանք, որ դրա նախարանը և առաջին իսկ գլուխը, որպես հիմնական նյութ, անդրադառնա մեր ազգի, երկրի և նորաստեղծ պետության վրա կուտակված, բանձրացած, կարծրացած իին և հարածունորեն շարունակվող նոր մեղքերի կործանիչ, խորտակիչ բերից ծերբազատմանը:**

Իսկ այդպիսի հայ ազգային իսկակա՞ն ռազմավարության հաջող մշակումը և լիարժեք կենսագործումը պայմանավորված են մեր ազգի ու պետության դեկավարության և մասնավորապես հայոց բանակի, ազգային անվտանգության ծառայության, ոստիկանության և ընդհանուրապես ուժային, իրավական, կրթական համակարգերի, մտավորականության և ոչ վերջին հերթին՝ նաև կղերականության ազնվացման՝ մինչև իսկ սուրբ աստիճանի:

- Որպեսզի դառնանք կարող ու արժանի՝ գլխավորելու, առաջնորդելու, ուսուցանելու, կրթելու, հոգևորելու և իրենց իսկ օրինակով պատրաստելու Աստվածավախ, Աստվածասեր, մարդասեր, շնորհալի, հմուտ, աշխատասեր, բարեգործ և իր ազգային Աստվածապարգև ինքնությանը առավել հավատարին հայություն:

- Որպեսզի այնժամ համակվենք Աստվածապարգև հոգեկանությամբ, գաղափարականությամբ, բարոյականությամբ ու արժանի դառնանք ծառայելու մեր Արարիչ Յորը՝ Աստծուն՝

ծառայելով մեր ազգին, հայրենիք Հայաստանին և պետությանը:

- Որպեսզի հայության մեջ դադարի մեղքի կուտակումը, սրբվեն, մաքրվեն սրտերը, և առաջանա համատարած բարություն՝ սրբացնան մի գորեղ ու շեշտակի գործընթացով:

- Որպեսզի դրանով կանաչ ու լուսավոր ճամփա բացվի մեր ազնվացնան, արիացնան ու անկեղծացնան համար:

- Որպեսզի մեր տկարացնան փոխարեն մեր մեջ մենքը տկարանա, վերանա՛, և դրանով շատ բան փոխվի մեր ազգի, հայրենիքի և պետության մեջ, ինչպես անխղճությունը, ազահությունը, անպատասխանատվությունը, անբարոյականությունը, գոռողամտությունը, փառամոլությունը, նյութապաշտությունը, կոռուպցիան ու այլ մոլորությունները:

- Որպեսզի դրանք դառնան մոռացված մի հուշ, այնքան հեռու նոր սերմողի իրականությունից, որ դրա մասին նրանց բացատրելու մեջ դժվարություն ունենան լրագրողները, ուսուցիչները, գիտնականները, ծնողները և բոլոր ողջամիտ հայերը:

- Որպեսզի խորհրդային Միության տարիների ու հատկապես «ստալինյան» երևույթի հետ կապված հուշերը դառնան նմուշօրինակ սարսափազդու մղձավանջների, այլ ոչ թե կարոտախտի, ինչպես ժամանակ առ ժամանակ, ուղղակի կամ անուղղակի, գիտակցաբար կամ անգիտակցաբար, այն ի հայտ է գալիս մեր իրականությունում:

- Որպեսզի ընդհանրապես խուսափենք մեղանչումից, զարբնենք, զգաստանանք հոգեկորույս թմբիրից և գերծ լինենք ամեն տեսակ մեղքից:

Մեղք՝ մեր սուրբ նախնյաց առաջ, մեղք՝ մեր նահատակների առաջ, մեղք՝ մեր հաջորդ սերունդների առաջ, և ամենասարսափելին՝ մեղք՝ մեր Արարիչ Յոր՝ Աստուծու առաջ:

Ահազանգենք այդ մասին, պաշտամանվենք դրանից, հաղթահարենք այն ու դառնանք իրապես ազատ ու իրապես երջանիկ՝ մեր Արարիչ Յոր՝ Փրկիչ Տիրոջ հովանու ներքո՝ այժմ և հավիտյանս:

Ծաբաթ, 17 - 09 - 2011թ., ժամը 05:40

## **ՀՈԳՈՒ ԵՎ ՄՏՔԻ ԶԳԱՍՏԱՑՈՒՄ**

Արտակարգ իրավիճակների ծառայություն. շատ լավ է, որ ունենք, այն էլ նախարարության կարգավիճակով:

Սակայն հայության ու Հայաստանի համար ամենաարտակարգ իրավիճակը մեր մարդկային-ազգային ինքնության ու եռթյան հարածունորեն կորստաբեր դարձող իրավիճակ լինելով հանդերձ՝ մենք այդ վիճակից դուրս գալու և պաշտպանվելու, պահպանվելու կառույց չունենք: Ինչ որ ունենք և ինչ որ ի վիճակի ենք տրամադրել, ուղղված է, այն էլ՝ մասամբ, երևացածների, նյութականի անվտանգության պաշտպանությանը: Յոզենորը և դրանից բխող գաղափարականն ու բարոյականը մեծ չափով անտեսված են: Իսկ սա մի իրավիճակ է, որը պահանջում է **համազգային ահազանգում՝** զգաստացնող հայի հոգին, գաղափարը, բարոյականը և խիղճը, միտքն ու պարտաճանաչությունը... Մանավանդ ազգի և պետության ղեկավարների, պատասխանատուների:

Ո՞վ, ովքե՞ր և ո՞ր հաստատությունները, ծառայությունները, կառույցներն են պարտավոր և պատրաստ՝ հնչեցնելու **ազգային ահազանգը՝** ազդարարելու վտանգը և հայտարարելու, հայտնելու փրկության ուղին, ընթացքը և միջոցը:

Ազգը գիտի՝ այդ մասին, գիտի՝, թե ո՞ւր նայի, ումի՞ց, որտեղի՞ց սպասի որանց հայտնությունը: Իսկ ով որ գիտի և կամ պարտավոր է գիտենալ, գիտակցո՞ւմ է իր պարտքի մասին, պարտաճանա՞չ է:

Ո՞ւր են հայոց խիղճը, գիտակցությունը և պարտաճանաչությունը, որ բարձիթողի են արել հայոց աշխարհատարած գոյությունը, կյանքը և հայոց Աստվածատուր Հայաստան հայրենիքը, պետությունն ու պետականությունն էլ հետը...

**Խիղճ և գիտակցություն:**

Միայն հավատքով փոխվելով և գորանալով կկարողանանք դրանք անհապաղ փնտրել, գտնել և հայության՝ մեր հայրենիք Հայաստանի և հայ կյանքի մեջ դրանք դարձյալ պատվաստել, աճեցնել ու գորացնել...

- Որ ի՞նչ լինի:

- Որ կյանք ունենանք, չկորչենք, այլ ապրենք, նաև՝ մեր երեխաները, սերունդները և մեր ազգը, երկիրն ու պետությունը:

- Առանց դրա չե՞նք կարող կյանք ունենալ, չկորչել ու ապրել: Ապա մեր մեծացող զորքը, մեր զենքն ու զրահը, մեր վարչարարությունը, տնտեսությունը, ազգային ու միջազգային քաղաքականությունը և նման բաները, որ ունենք, և ավելանում են, դրանք բավարար չե՞ն:

- Ո՞չ, երիցս ոչ, դրանք բավարար չե՞ն, որովհետև սին, ամուլ ու անկարող են գործելու, պաշտպանելու ու արդյունավորելու հայ կյանքը՝ առանց յուրաքանչյուր հայի ու համայն հայության առողջ ու արթուն խորհ (որն առնչված է ազգի սուրբ հավատքի և հոգեկանության հետ) և ազգային ինքնագիտակցության (որն առնչված է ազգի գաղափարի (Հայ Ազգային Գաղափարախոսության) և բարոյականության (հայության բարոյական արժեհամակարգի հետ)։ Որոնց անեղծ ու հաստատուն առկայությանք են առաջանում անձի ազնվությունն ու ազգային ազնվականությունը՝ հայ ազգի և նրա պետականության գոյության համար անհրաժեշտ թթվածինը:

Մենք չենք կարող վերացնել դարերի ընթացքում մեր կրած այն արտակարգ ծանր ճնշումների, տառապանքների և կորուստների հետևանքները, որոնք մեր մեջ մթնեցնելով շատ բան՝ առաջացրել են կյանքի ապակողմնորոշում և նյութապաշտություն՝ եսամոլություն, փառամոլություն, իշխանամոլություն, հաճույքամոլություն, ստախոսություն, ազահություն, կոռումպացում և կորստաբեր նման այլ ախտեր, մոլություններ, որ համակել են շատերիս և միտում են տիրական դաշնալ հայ կյանքում:

Իսկ դրանք տանում են դեպի թե՛ մարդկայնության և թե՛

հոգեկանության անկումի, որով և մեր ազգության, հայության ու հայկականության կորստի, մեջն էլ մեր նախնյաց հայրենիք Հայաստանից մեզ մնացած ներկայիս Արցախի ու Հայաստանի Հանրապետությունները (որպես կերպ՝ շուրջ ու գելի): Եվ այդ ճանապարհով շատերս ենք գնում՝ շատո՞նց ի վեր: **ԵՎ Ո՞Կ հնչեցնի մեր այս վիճակի հոգեցո՞նց ահազանգը:**

Ու այս իրավիճակից դուրս գալու, ազատվելու համար չկա ազգային հոգեբարոյական փրկության ծառայություն (դարերի ընթացքում գործողը տարբեր պատճառներով դարձել է անկարող, ու ինքն իսկ կարիք ունի...), և առկա այս գերարտակարգ դրության մասին չկան ոչ մի ազդ ու ազդարարություն. զանգերն էլ լռել են, ահազանգ չի հնչում...

Բայց պետք է, կենսականորեն անհրաժեշտ է, որ հայության ազգային ահազանգը հնչեցվի և հնչեցվի ոչ թե ինչ-որ հեղափոխության համար, այլ վերածննդի՛, հավատքի՛, գաղափարականության, բարոյականության, ազնվության և դրանցով՝ հայաշո՞նչ ազգային անկեղծ ծառայության վերածննդի՛ ի վերելք հայ ազգի, հօգուտ նաև մարդկության ու ամենաէականը՝ ի փառս մեզ հավատք ու կյանք շնորհող **Աստուծոն:**

Երեքշաբթի, 05 - 06 - 2012թ., ժամը 08:30

## **ԵԹԵ ՃԻՇՏ Է, ԱՊԱ ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐԵԼ**

Ասվել է, որ կա հայ մարդու և հայ սերունդների հոգևոր ու ֆիզիկական առողջապահության տեսություն, որն առնչվում է Հայ Ազգային Գաղափարախոսությանը (ՀԱԳ):

- Արդյո՞ք այդպես է:

- Այո՛, այդպես է, կա ուղղակի առնչություն, քանի որ մեր ազգի հոգևոր և ֆիզիկական առողջությունը պահպանվում է նախևառաջ ՀԱԳ-ով, որը բխում է և հիմնված է Աստուծոն հավատքի վրա՝ Ավետարանով և Խաչով:

- Իսկ եթե այդպես է, ապա մի՞թե հայ մտքի արդի էական հարցերից չպետք է լինի նաև այն, թե մենք ծանո՞թ ենք արդյոք մեր ՀԱԳ-ին՝ ծանաչելու, հասկանալու համար հայ մարդու, հայության և սերունդների առողջապահության տեսությունը, փիլիստիվայությունը, և թե ընդհանրապես կա՞ այդպիսի բան:

- Իհա՛րկե, կա, չի՛ կարող չլինել:

- Որտեղի՞ց իմանանք:

- Նախ՝ մեր հավատքի ուսմունքից, հիմնականում Աստվածաշնչից, որանից բխող և որա վրա հիմնված ՀԱԳ-ից ու նաև մեր մեծերի, սրբերի պատգամներից: Եվ վերջապես մեր ազգի և ընդհանրապես մարդկության հոգևոր ժառանգությունն է այդ հարցերի պատասխանները տալիս:

- Արդյոք ժամանակ ունե՞նք այդ բոլոր պրպտումներն անելու:

- Դա արդեն այլ հարց է. Եթե ժամանակ չունենք, ուրեմն տվյալներ տկարության, ցավի, տառապանքի ու նաև ամորի խառնարաններում՝ կորստաբեր հիվանդություններում: Բայց եթե մենք որան արժանի՛ ենք մեր ապականված գիտակցության և ձևական հավատքի մեջ անպետք լինելու պատճառով,

ապա մեղք չե՞ն մեր զավակները, թոռները, սերունդները, որ այդ մեղքը նրանց վզին էլ մնա:

Խոսակցությունը կարծես թե հասավ մի մռայլ հանգրվանի, սակայն, ըստ Երևույթին, չվերջացավ: Մտածելիք, խոսելիք ու նաև անելիք դեռ շատ կա՝ անկախ նրանից՝ մենք «ժամանակ ունե՞նք, թե՞ չունենք»: Եվ մեր խոդի ու գիտակցության ահազանգի դոդանջները լսո՞ւմ ենք, թե՞ ոչ:

Եվ բացի դրանից, ՀԱԳ-ի գոյությունը, դերն ու նշանակությունը կարող ենք ընկալել, հասկանալ դարավոր պատմական փաստից: առանց իսկական ազգային գաղափարախոսության հայ ազգը, հայությունը, հայկականությունը չէր կարող գոյատևել մոտ հազարամյա պետականազրկության և պետական կազմակերպմամբ ազգային պաշտպանության բացակայության պայմաններում: Պայմաններ՝ արտակարգ սպառնալից հայ մարդու և հայ ազգի ինչքի, պատվի ու կյանքի համար: Առանց զորե՛ն գաղափարի, գե՛րգաղափարի, որ բխում է և հիմնված է Աստուծոն հավատքի վրա, հայի ու հայության համար անհնարին կիներ պահպանել ազգային ինքնությունը՝ ոչ միայն օրերի, ամիսների, այլև դարերի՝ ընթացքում՝ հոժարաբար վճարելով դրա ահավոր գինը: Եվ միաժամանակ, ո՛վ զարմանք, նույնիսկ օտար վայրերում, հայրենազուրկ վիճակում և նույնիսկ թշնամո՛ւ նայրաքաղաքում ոչ միայն պահպանելու, այլև զարգացնելու ազգային մշակությը:

Սա հավատքի գաղափարով համակված ազգի ապրում է...

Փա՛ռք այն պարզեղին:

Երեքշաբթի, 09 - 01 - 2018թ., ժամը 01:10

## ԵԹԵ ՀՈԳԻԴ ԵՎ ՄԻՏՔԴ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ ԵՆ, ԻՆՉՊԵ՞Ս ԶՍՊԵՍ ՈՒ ԼՈԵՍ

*Հիմի՞ էլ լոենք, եղբա՛րք, հիմի՞ էլ...  
Ու. Պատկանյան*

«Յիմի՞ էլ լոենք, եղբա՛րք, հիմի՞ էլ...»:

Ասել են մեզանից առաջ հայերը:

Եվ հիմա, երբ մեր գլխին այլևս չկա՞ն սուլթանները, գլխավոր քարտուղարները, մե՞նք էլ լոենք, եղբայրնե՛ր:

Թշնամուց չենք վախենում, տարբեր կողմերի «բարեկամների՞ց» վախենանք և լոենք, եղբայրնե՛ր:

Յապա մեր մեծե՞րը, սրբե՞րը, նահատակնե՞րը, մի՞թե մեզ կասեն՝ «հիմա՝ էլ լոեք», թե՞ կասեն. «Այլևս չպե՞տք է լոել, ու այլևս պետք է նաև գործել, գործել ու գործել»:

Նաև բա՛կ է, ինչքան մեր ներքին խնդիրների մասին էլ լոեցինք և ճշմարտության լույսը ձեռքի ափով ծածկեցինք...

Յամաձայն մեր նախնիների մեզ սուրբ ժառանգություն թողած սուրբ հավատքից բխող և դրա վրա հիմնված Յայ Ազգային (անանց) Գաղափարախոսության (ՅԱԳ) ու նաև համաձայն հայ դպրավոր Ուխտի՝ ո՞չ է հայը, և նա ի՞նչ պիտի անի (ու նաև չանի), որպեսզի մնա ազա՛տ, ազնի՛վ ու անպա՛րտ հոգով հայ՝ պարտաճանաչ պաշտպանելու իր ազգը կորստաբեր ճանապարհներից, խնդիրներից և ունենա ազգային պետական Աստվածապատգա՛ն վերելք՝ արժանանալով Արարիչ Յոր Արքայության հովանավորությանը, պաշտպանությանն ու օգնությանը:

Այս հարցերի պատասխանը հայոց ժամանակակից իշխանությունը չի տալիս, ժամանակակից մեր գիտությունը,

կրթությունը, մշակույթը և մտավորականությունը նույնաես չեն տալիս: Չի տալիս նաև ժամանակակից, այսպես կոչված, միջազգային համայնքը, հանրությունը՝ իր համացանցերով: Եվ սա լավ չէ, բայց գուցե հասկանալի է: Անհասկանալին, զարմանալին ու նաև ցավալին այն է, որ այսօր Յայաստանյաց սուրբ Եկեղեցին ևս այս հարցերին պատասխանելու, ըստ երևոյթին, ո՞չ կոչում ու պարտականություն, ո՞չ էլ տրամադրություն է ցույց տալիս:

Չխոսելով մարդկության վիճակի մասին՝ տպավորություն է ստեղծվում, որ ազգովին, հոգով ու մտքով ընդարձացած վիճակում լցված ենք մի խարխուլ նավի մեջ, որն առանց դեկի և կողմնացույցի, թույլ շարժիչով տարուրերվում է խարդախ խութերով լի օտար ջրերում և չար ալիքների կողմից քշվում դեպի խորտակում ու կորուստ՝ «օտար ամայի» ափերի՝ կյանք կլանող մեղքերի հորձանուտներում: Եվ էական ինաստով այդ անտեր, մոլոր ու կորստաբեր նավի մեջ են նաև մեր երեխաներն ու թուները, մեր ազգի մատաղ սերունդը՝ մեր ազգի, հայրենիքի ու պետության ապագան...

Իսկ ի՞նչ է պատահել, ինչո՞ւ է այդպես. ի՞նչ է՝ մեր ի՞նչն է պակասել, որ այս վիճակի մեջ ենք և չենք տեսնում և դրա համար էլ հարկ եղածը չենք անում և գիշերներն էլ հանգիստ քնում ենք:

Բայց այստեղ, արդար լինելու համար, գուցե պետք է ճշտում կատարենք. այնքան էլ ճիշտ չէ գիշերները մեր հանգիստ քնելը: ճիշտն այն է, որ եթե շատերս գիշերները հանգիստ քնում ենք, հապա բլոտ-մլոտն ամբողջ գիշեր, մինչև լուսանալն ովքե՞ր են խաղում, դատարկ սերիալ-մերիալներն էլ ովքե՞ր են նայում և նայթ քլարեներում ու կազինոներում ովքե՞ր են գիշերները «հաճույք» ստանում...

**Պատճառք**, ուրեմն, ինչ որ բանի կամ խելքի պակասը չէ, որը չենք տեսնում, չենք զգում, չենք մտահոգվում և անհապաղ հարկ եղած ջանքերը չենք գործադրում՝ դուրս գալու այս կորստաբեր վիճակից, այլ իմքնագիտակցության պակասը, հոգու և մտքի խորք ու արհեստական սնուցումից մեր ազգային

հավաքական խղճի նվադելը պլաստիկ դարձած մեր սրտերի և նյութապաշտությունից ցանաքող մեր հոգիների մեջ: Եվ դարման, բուժում կա՝ խղճի պակասի հոգեկորույս այս դրությունից: Ելք կա՝ այս վիճակից: Ո՞ւմ հարցնենք, ո՞վ կպատասխանի, չէ՞ որ ժամանակ չունենք, բոլորս խիստ զբաղված ենք: Ինչո՞վ... Տերը մեզ հասնի: Բայց հարկ եղած բարոյականությունը մնացե՞լ է մեր մեջ, որ Տիրոջը խնդրենք:

Սրան-նրան տարբեր բաների համար, արհեստական ժայռը մեր դեմքերին, թախանձագին խնդրում ենք: Իսկ Յո՞րը՝ Արարիչ ու Ամենակա՞լ Հորը մեղա գալով խնդրո՞ւմ ենք:

- Բայց ինչպե՞ս կարող ենք այդ անել, երբ դրա համար սիրութ պետք է լինի մաքուր, հոգին էլ՝ ազատ են հպարտ, առողջ:

- Ուրեմն՝ այդ պետք է անել, պետք է նախևառաջ այդ կողմ ուղղել մեր ժամանակն ու ջանքերը: Որովհետև եթե դա չանենք, ուրիշ անելու բան էլ չի լինի, ու եթե ինչ-որ բան էլ լինի, ապա արվածն «ավագի վրա» կլինի՝ իր բոլոր կորստաբեր հետևանքներով...

**Ինչո՞ւ, որովհետև Աստված կա՛:**

08 - 04 - 2004թ., ժամը 08:20

## «ԿՈՒՇԱ»՝ ՏԱՐԱՆԻՔ

Դայաստանում շատերն են փնտրում «տանիք». փնտրում են, աղաչում են, հաճոյախոսում են, խոստանում են և հատուցում, վճարում դրա համար: Դատուցման, վճարման տարբեր ձևեր ու չափեր կան՝ կախված «տանիքի» կարևորությունից, կարողությունից, ինչքանով է այն տարածվելու «պաշտպանյալի» վրա, և գուցե նաև այլ բաներից:

Միշտ առկա է ձգտումը մոտ լինել «տանիքին», շփվել հետը և ինչքան հնարավոր է՝ նրա ուշադրության կենտրոնում լինել, հաճոյանալ նրան, համակրանքը շահել...

Ինչո՞ւ: «Պաշտպանյալի» հիմնական խնդիրներից է իր գործերի առջևից արիեստական խոչընդոտները վերացնելը և «կրիշայի» պաշտպանության ներքո՝ մեծ ու փոքր ավագակներից կամ մանր-մունք պարագիտներից անվճակ մնալը:

Անկախ նրանից, թե այդպիսի վերաբերնունքով, այդպիսի «տանիքի» հովանավորության ձգտելը արդարացված է կամ ոչ, կա մի շատ էական հարց. եթե, այնուամենայնիվ, այդպիսի ժամանակավոր և խախուտ «կրիշա» ունենալը օգտակար, անհրաժեշտ ու հետևաբար տրամաբանական է համարվում, ապա ինչո՞ւ այդ տրամաբանությանը չենք հետևում, երբ մեզ մի ուրիշ՝ անհամեմատ ավելի կարևոր, օգտակար ու անհրաժեշտ «տանիք» միշտ է պետք: Օրինա՞կ: Օրինակ՝ «տանիք» մեր հոգու մաքրության, մեր մարդկային արժանապատվության և մեր տոհմիկ հայկականության պահպաննան համար, որպեսզի թե՛ մեր երկրային և թե՛ երկնային կյանքի համար կանաչ ճանապարհ ունենանք: Որպեսզի մեր վերելքի խոչընդոտները վերանան, ու աշխարհի ամեն տեսակի վիրուսներից, ախտերից, վարակներից գերծ մնանք մենք ու նաև մեր ընտանիքները, մեր

ազգն ու հայրենիքը՝ և դա՝ նաև հօգուտ մարդկության՝ Աստվածային «Տանիքի» ներքո:

Մենք, որ մեզ ընդհանրապես խելոք ենք համարում, ճիշտ տրամաբանող և գործնական, ինչո՞ւ թեկուզ նույն կերպ միշտ չենք ծգտում մոտ լինել այդ «Տանիքին», շփվել հետք, Նրա ուշադրության արժանանալ, Նրան հաճոյանալ, համակրանքը շահել... ինչո՞ւ: Որովհետև այդ «Տանիքն» իբր թե «Նաղդ» չէ... նույնիսկ չի երևո՞ւմ: Դրա՞ համար ենք մենք ամեն կերպ ծգտում այս աշխարհի «տանիքների» ուշադրության արժանանալ, դրանց համակրանքը շահել, հաճոյանալ, որովհետև դրանք տեսնո՞ւմ ենք, և մեզ կոնկրետ, «Նաղդ» օգո՞ւտ են բերում, ի տարբերություն այն «Տանիքի», որը չենք տեսնում:

Բայց մի՞թե չենք տեսնում մեր այդ սուրբ, հզոր ու հավերժական «Տանիքը», որ հակառակ հավատքի հանդեպ մեր անհավատարմության և հակառակությունների, ուրացումների բազում դեպքերի, նաև այլ տարբեր մեղանչումների՝ Նրա ամենահաս զորության, բարության ու ողորմության շնորհիվ մենք շնչում ենք, տեսնում, լսում ենք, ուրախանում, գոհանում ենք մեր ընտանիքներով, երեխաներով, թռոներով և հակառակ թշնամիների շատության ու զորության՝ ապրում ենք մեր ազատ կյանքով, հայրենիքով ու ապագայի հաղթական վերելքների հույսով:

Ուրեմն՝ փնտրենք ոչ թե մեր շրջապատի ավագակաբարո «կրիշաները», այլ ամբողջ հոգով, ամբողջ սրտով և հավատքի գործերով ձգտենք մոտենալ ու նաև հարազատ դառնալ Տիրոջ հավերժական «Տանիքն»...

Ու երբ նորից գիտակցենք, կիասկանանք, որ իրականում Տիրո՞ց «Տանիքն» է ի զորու եղել մեզ պաշտպանելու չարի ամեն տեսակի խոչընդոտներից և կորստաբեր փորձություններից, փորձանքներից, որով և այժմ կանք: Այդ գիտակցելով՝ չձգտենք դեպի Նա, որովհետև ձրի է տալիս իր պաշտպանությունը, այլ ձգտենք, որովհետև Նա Սուրբ է, մեզ ամենաամենահարազան է, և մենք մեր ամբողջ հոգով, սրտով, մտքով ու եռթյամբ պատկանում և սիրում ենք մեր Արարիչ

Յորը, Միածին Որդուն և Սուրբ Յոգուն՝ ԱՍՏԾՈՒՆ. դրա՝ համար ձգտում ենք դեպի Նա:

Եվ սա է եղել հայ մարդու և մեր հայ ազգի ու հայրենիք Քայաստանի տոհմիկ, հարազատ գիտակցությունը և միշտ է. ռազմավարական քաղաքականությունն է եղել և միշտ է... Եվ դրանցից ավելի՝ մեր անխախտ հավատքն է եղել և միշտ լինելու է: Իսկ այդ հավատքի հանդեպ մեր անընկրկուն ու հարավետ հավատարմությունը մեր ազգի արժանապատիվ գոյության անանց երաշխիքն է:

\* \* \*

Յիրավի, ով խելացի ու շահագրգիռ հայ, եղի՛ր իրապես այդպիսին ու նաև «գործնական»՝ սիրելով, հուսալով ու ապավինելով քո Արարիչ Տեր Աստծուն: Ապրի՛ր Նրա Որդու՝ քեզ պարզեած Ավետարանի լուսով, ինաստնացի՛ր նրա հավատքից բխող և դրա վրա հիմնված քո հայ ազգի գաղափարով (Յայ Ազգային Գաղափարախոսություն), վեհացի՛ր դրա բարոյականությամբ (հայ ազգային բարոյական համակարգ) և աշխատի՛ր, ստեղծագործի՛ր, զարգացի՛ր, բարգավաճի՛ր ու հավերժ վայելիր Տիրոջ խաչի անանց շնորհը՝ զորությունն ու կենսատվությունը:

08 - 04 - 2013թ.

## **ՄՏՔԵՐԻ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ**

Դայ մարդը եթե իր ազգի, հայրենիք Դայաստանի և պետության համար ապրի ու գործի, ապա դրանց պաշտպանության և վերելքի համար նրա այդ վարմունքը, էլ չասած՝ նաև պայքարը (նույնիսկ առանց որևէ անձնական կորստի) անպայման արդյունք կտան. ինքն էլ լիովին կգոհանա այդ արդյունքից և միշտ կշարունակի իր այդ վարմունքը:

Սակայն հաճախ է պատահում, որ երբ հայ մարդու ներդրումը ազգին, հայրենիքին, պետությանը լիովին չի հատուցվում կամ լիովին անհատույց է մնում կամ, առավել ևս, երբ հայրենիքը, դժվարության մեջ լինելով, իրենից ավելի շատ է պահանջում, քան ինքն ակնկալում է, որ փոխարենը կարող է ստանալ, այդ դեպքում լինում է, որ հայրենիքը (երբեմն նաև ազգը) դառնում է «աչքի փուշ», և փախչելու ճանապարհներ են փնտրվում՝ գերծ մնալու և չկրելու, չբաժանելու հայրենիքի, ժողովրդի և պետության դիմագրաված դժվարությունները. Ժամ առաջ տղաների էլ փախուստը կազմակերպվի, քանի դեռ զինվորական ծառայության տարիքի չեն հասել:

Բայց այդ անողների ճնշող մեծամասնությունը, ըստ երևույթին, լինելով ունեոր և «զարգացած» խավերից, հետևապես հագեցած նաև խորամանկ փաստաբանությամբ, իրենց մեկնումը, փախուստի և դասալքության փոխարեն, ներկայացնում են որպես երկրում չարդարացված տնտեսական դժվարությունների և կամ երկրում անիրավությունների, կոռուպցիայի և նման թերությունների հետևանքը:

Սակայն մեկը հարցնի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որը, իմիջիայլոց, նրանք պատկերացնում են որպես տնտեսական ու ժողովրդավարական դրախտ, տնտեսական դժվարություններ ու անօրինություններ չե՞ն եղել և չկա՞ն. Եղել

Են ու կան՝ անչափ, բայց դրա համար երկրից քանի՞ ամերիկացի է փախել: Ու, այնուամենայնիվ, եթե կան փախածներ, նրանք ի՞նչ տոկոս են կազմում: Իսկ գործարար նպատակով մեկնող բազում ամերիկացիների մեջ կա՞ն գոնե մի քանիսը, որ ամեն տարի ԱՄՆ-ի հարկային ծառայությանը հաշվետվություն չեն ներկայացնում և արտերկրում իրենց շահածի համաձայն՝ ԱՄՆ-ին հարկեր չեն վճարում: Կամ եթե ուշացրել են հարկերի վճարումը, ապա Միացյալ Նահանգների հարկային ծառայության նշանակած տուգանքը և ուշացնան ժամանակի համաձայն տոկոսն էլ հետը չե՞ն վճարում: Օրինակ՝ մեզ քաջածանոթ ամերիկացի հանրահայտ գրողներից մեկը երկրորդ աշխարհամարտից հետո մի ժամանակամիջոց Եվրոպայից ԱՄՆ չեր վերադառնում, որովհետև պիտի բավականին մեծ գումար կազմող իր չվճարած հարկերը, վճարումների ուշացնան համար տուգանքները և ուշացնան ժամանակամիջոցի համաձայն՝ հարկերի տոկոսները վճարեր կամ երկարատև բանտ նատեր... Եվ նա իր երկրի հարկային ծառայության հետ (որը շատ հաճիս այդ հնարավորությունը տալիս է) բանակցեց, սակարկեց, որ իրեն ժամանակ տրվի՝ ներկայացված բավականին մեծ հաշիվը մասնաբաժիններով փակելու համար: Եվ վերադարձավ ԱՄՆ՝ կատարելով հարկային բոլոր պահանջները՝ վճարելով իր հեղինակած գրքերի հոնորարմներից ստացված եկամուտների հարկերը և ուշացնան համար տուգանքներն ու տոկոսները:

Մեր «ազատականներն» Ամերիկայի Միացյալ Նահանգների օրինականության, օրինապահության, տնտեսական հնարավորությունների ու կարողությունների մասին «լեկցիաներ» կարդալու հետ լավ կլիներ հիշեն, թե Միացյալ Նահանգներն ինչպես գոյացավ, ինչպես զարգացավ, հզորացավ, հարստացավ՝ անցնելով բազում ու երկարատև փորձությունների ու ընկերային ճգնաժամերի ընդմիջով, պետականացավ ու գոյատևում է: Օրինակ՝ ինչպե՞ս Զիկագոն անօրինականության ու ավագակատիրական (գանգստերական) մայրաքաղաքից հատկապես գյուղատնտեսական գործարարության մայրաքաղաքի

համաշխարհային հռչակ ստացավ: Նա այդպիսին դարձավ իր բնակիչների փախուստո՞վ, թե՞ նրանց հետևողական ու հարատև աշխատանքով, պայքարով ու նաև զոհեր տալով: Դեհ ուրեմն, թո՛ղ իրենք էլ ամերիկացիների օրինակով վարվեն իրենց երկրի հանդեպ, այլ ոչ թե փախչեն և ուրիշներին էլ այդ հանցավոր փոքրոգության, քուլամորթության օրինակ դառնան, խրախուսեն՝ Հայաստան հայրենիքը և պետությանը մեղադրելով: Ու այդ անելու փոխարեն արդար, ճիշտ և օգտակար կլիներ՝ ներսում և դրսում իրենց ստացած եկամուտներից հայրենիք Հայաստանին իրենց հարկերը վճարեն ու նաև այլ պարտականությունները կատարեն: Եվ սա ուղղակի կամ անուղղակի վերաբերում է նաև արտերկրում ապրող այդ տեսակի հայերին, որ միայն իրենց ես-ը գոհացնելու համար երբեմն տուրիստ չգան Հայաստան, իրենց ցույց տան, „shou off“ անեն՝ գլուխ գովեն և հայրենի իշխանություններից բանբասեն կամ նրանցից մեղալ ու հեռուստաեթեր ակնկալեն...

Ո՞ւր մնացին ամոթը, խիղճը, մարդկայնությունն ու հայկականությունը: Իսկ Աստծուց՝ երկյո՞ւղը և հավիտենական հատուցո՞ւմը...

Ասում ենք՝ խելոք ենք, բայց պետք է իրապես ու իսկական խելոք լինենք, որը առանց խղճի չի՝ լինում՝ Աստուծոն հավատքով արտահայտվող: Դրա մասին է ահազանգում նաև հայոց անլոելի զանգակատունը:

Երկուշաբթի, 15 - 11 - 2010թ., ժամը 21:00

## ԵՎՍ ՄԵԿ ԱՀԱԶԱՆԳ

Դարերի ընթացքում տարբեր երկրներում հասարակության մեջ բարոյականություն երևույթը բնորոշվում էր հիմնականում կնոջ բարոյականությամբ. համարյա նույնը՝ նաև հայ հասարակության մեջ էր բնորոշվում (և մինչև հիմա էլ շատ թե քիչ դա մնացել է) կնոջ շարժուձևով, հագուկապով, դիմահարդարմամբ (կամ ոչ դիմահարդարմամբ) և նույնիսկ խոսակցությամբ՝ բառապաշարով, խոսելաձևով: Եվ տևական մի ժամանակաշրջան բարոյական («կարգին») համարվող կնոջ այդ բնորոշիչ հատկությունները տարբերվում էին անբարոյականների, մասնավորապես մարմնավաճառ կանանց ցուցաբերած և իրենց բնորոշ համարվող հատկություններից: Եվ ի՞նչ, հասարակության մեջ, հատկապես ընտանիքներում շատ կարևոր խնդիր և մեծ ծգտում կար աղջիկներին դաստիարակել, կրթել և սովորեցնել այնպես, որ հատկապես հագուկապով, շարժուձևով, խոսելաձևով ու դիմահարդարմամբ նմանվեն պարկե՛շտ կանանց և իրենց արտաքինով ոչ մի դեպքում մարմնավաճառ կանանց նման չերևան:

Եվ այդ դարավոր երևույթն առաջացրած միտումը երևի հայտնի չէ, թե երբ (և որ կողմից ու ինչ նպատակով) սկսեց փոխվել. ի հայտ եկավ իգական սեռի՝ գեղեցիկ, հետաքրքիր, հրապուրիչ երևալու (երևի բնական) ցանկությունն ու ծգտումը կապել, բավարարել, պատճառաբանել ինչ-որ կողմերի ստեղծած, տարածած իբր նորաձևությանը (նոդային) հետևելով: Իսկ նորաձևությունն էլ, չգիտես ինչու, ջանք է արվում (գնալով ավելի շատ) անպայման առնչել պոռնոյի՝ մարմնավաճառների արտաքին ձևերի, երևույթների հետ: Եվ արդեն աշխարհի շատ վայրերում այդ «նորաձևությունը» ծգտում է իգական սեռի գեղեցիկ (գուցեն հրապուրիչ) երևալու բնական ծգտումը դրսե-

րել ո՞չ թե կանացի հայացքի, ձայնի, խոսքի, նիստուկացի, վարպելակերպի և նույնիսկ իմաստության, խոհեմության, բարության ու առողջ, երջանիկ ընտանիք ստեղծելու հատկություններով, այլ անառակություն դրսերող «մոդայիկության» արտահայտություններով...

Այս երևույթը, որը, ամենայն հավանականությամբ, առնչվում է տարբեր գործոնների հետ, ըստ երևույթին, պարունակում է պատմություն, ընկերաբանություն, հոգեբանություն, փիլիսոփայություն և անպայնան հավատքի գործոնը, հանգամանքը:

Ու այդ առումով շատ կարևոր է նկատի ունենալ, որ այդ երևույթը վերաբերում է նաև բարու և չարի միջև ընթացող դարավոր պայքարին... Յետևապես, ո՞ր ազգի, ո՞ր հասարակության և դրա մեջ ո՞ր ընտանիքների, ո՞ր անհատների ինչպիսի՝ տրամաբանությամբ և ամենակարևորը՝ ի՞նչ խղճով ու ինչպիսի՝ հավատքով, ո՞ր կողմին ու ինչի՞ն հետևելը վճռական նշանակություն կունենա նրանց էլույան վիճակի ու այդ վիճակի դեռ ինչպիսին լինելու համար.

- խավարի մեջ է և մնալու է խավարի մե՞ջ,
- խավարի մեջ է և գնալու է դեպի լո՞ւս,
- լույսի մեջ է և գնալու է դեպի խավա՞ր, թե՝
- լույսի մեջ է և գնալու է դեպի հավերժական լույս:

Իսկ այդ առումով ի՞նչ ենք տեսնում մեր օրերի աշխարհի գոյնե մեծ մասում և, դժբախտաբար, նաև Քայաստանում: Նորածնությունը՝ մոդան է որոշում պոռնոյի և պարկեշտի արտահայտությունը՝ շատ հաճախ պոռնոյի կողմնապահությամբ: Ու եթե պարկեշտության կողմը դա չի ընդունում և վրդովվում, դրա դեմ տարերային փորձեր է անում՝ հանրայնորեն բողոքարկելու, գուցեն մի քիչ դիմադրելու, հատկապես մեր տոհմիկ բարոյական արժեհամակարգին հավատարիմ մնացած ընտանիքներում և հիմնականում մեր այդ մարդկային-ազգային արժեքների պահպանմանը նախանձախնդիր գյուղական վայրերում, ապա «պոռնո սերմանող» գործակալները, իրենց կողմն արած որոշ ԶԼՄ-ների հետ միասին, ավելի մե՛ծ ազրեսիվությամբ հար-

ծակվելով ու տարբեր կեղծ-դավադիր միջոցներ կիրառելով (նաև արտասահմանյան փորձի հիման վրա), աստիճանաբար «փայլուն» հաղթանակներ են գրանցում այլասերման իրենց նպատակներում: Շպարն աստիճանաբար պոռնոյի տեսք է ընդունում, և կանաց մարմնի՝ դարերով ծածկված մասերն օրը ցերեկով փողոցներում է ցուցադրվում՝ սովորական հագուստը լողազգեստի, գիշերանոցի կամ ներքնազգեստի վերածելով...

Բայց եթե այդ զգեստները ծովափին անհրաժեշտ ամառային կամ ննջասենյակային զգեստ են, ապա ցուրտ եղանակին ևս այդ ոճով, մոտավորապես այդպես զգեստավորվելով ու փողոցներում երևալը, բացի բարոյական, սոցիալական ու նաև արական՝ հատկապես (այն էլ «տաքարյուն ազգի») երիտասարդների համար հոգեբարոյական, զգացական և այլ խնդիրներ առաջացնելուց, նաև առողջապահական լուրջ խնդիրներ են դեռատի կանաց համար...

Ահա թե ինչպես և բազմաթիվ ինչպիսի խնդիրներ ստեղծելով է ներդրվում պոռնոն մեր կյանքում: Եվ ի՞նչ անեն դեռևս իրենց գիտակցությունն անաղարտ պահած և «նամուսն ու աբուռը» չկորցրած ծնողները և տատիկ-պապիկներն այս «նորաձևության» ագրեսիայի առաջ, որին որոշ բացառությամբ զինակցում են հեռուստատեսությունն ու մամուլը, ել չասած անբարոյականության, պոռնոյի մի այլ ծանր իրետանու մասին, որ կոչվում է «ինտերնետ», եթե այն անզգույշ, տգիտորեն ու անբարոյական զգացումով գործածվի:

Ու եթե մեկն ասի, թե մենք ի՞նչ կարող ենք անել, երբ ամբողջ մարդկությունն է այդ ճամփով գնում, այն էլ զարգացած, հարուստ երկրների առաջնորդությամբ, որոնցից մեր սովորելու մասին չորս կողմից տրվող խորհրդական հաճախ հրամանի նման են ինչում, դրա պատասխանը կարող է հետևյալը լինել. Եթե ուրիշներն իրենց աչքը հանում են, պարտադի՞ր է, որ մենք էլ նույն անենք՝ կուրանանք: Դապա ո՞ւր է մեր նահատակ ազգի՝ չարից անվախ ու անպարտ ոգին, քաջությունը...

Եվ մի դատողություն էլ: Ըստ երևույթին՝ բավականին գրագետ, բանինաց, զարգացած և փորձագետների, մասնա-

գետների պակաս չունեցող ազգ ենք. սոցիոլոգներ, սեբսուլոգներ և էլ չգիտես ինչ «ոլոգներ», ինչքան ասես ունենք, բայց այդքան «խելորների» մեջ ինչո՞ւ չի ասվում, որ մեզ տեսանելի այդ հոգեկան, գաղափարական, բարոյական և ֆիզիկական այլասերումները սառցալեռան միայն գագաթն են, ու երբ դրանք և դրանց հետևանքներն էլ ամբողջությամբ ի հայտ գան, այլևս ուշ կլինի դրանցից զերծ մնալու համար որևէ բան անելը, բացի... կորստյան հանձնվելուց:

Եվ ցավալի է, որ այս մասին չեն ահազանգում և վճռական, հետևողական ու հարատև պայքար չեն մղում մեր ազգային, պետական, հոգևոր և մտավորական պատասխանատվություն կրողները, այդ բնագավառներում իրավունք և պարտականություն ունեցողները: Մի՞թե այլևս չեն վախենում իրենց հոգին կորցնելուց: Թե՞ նրանց մեջ արդեն հոգուն հավատացող էլ չի մնացել. խոսքը կա, բայց ինքը՝ հավատքը, հետևապես և վախն ու ակնածանքը չկան: Ու եթե դրանք չկան, ուրեմն՝ հավատքին հավատարմությունը ևս չկա, չի մնացել: Այսինքն՝ չի մնացել մեր ազգի նախնածին ամենաէական հատկությունը՝ հավատքին հավատարմությունը՝ հայ ազգի բարության, ամրության, տոկունության և հաղթանակներով գոյության գործոնն ու կրվանը: Եվ մեր ամենամեծ կորուստն այն է, որ դա չի մնացել այնպես, ինչպես պետք է լիներ, ներառելով հայության գոնե մեծ մասը, իր հոգեկան, գաղափարական, բարոյական վիճակով (որ արտահայտվում է մասնավորապես կյանքի ըմբռնումով, աշխարհայացքով, արարքներով ու կենցաղով), և որ առանց դրանց անկարելի է այդ հատկություններն ունենալ:

Այս ինաստով, թեև մենք՝ հայությունը, համընդիանուր այդ վիճակի միջինից, ըստ երևույթին, մի քիչ էլ բարձր ենք. ավելի լավ, ավելի զորեղ և բարենպաստ դրության մեջ ենք, սակայն.... Սակայն այսի կարողանա՞նք օգտագործել մեր այդ առավելությունը՝ վճռականորեն փոխվելու, վերածնվելու և չտարվելու դեպի համընդիանուր կորստյան անկում: Մինչդեռ եթե կարողանանք հաղթահարել այդ փորձությունն ու վտանգները, ապա այդ հաղթանակով կսկսվի մեր շեշտակի՝ վերելքն

ամեն ինչում, քանի որ դրանով կարժանանաք նաև մեր մեծերի, մեր սուրբ նախնիների, մեր նահատակների՝ մեզ թողած ամենաեական ժառանգությանը՝ **Աստուծո հավատքին հավատքարմությամբ**, կը նքանանք Նրա ճանապարհներով, պատգամներով, կդառնանք Նրա ազգը, Նրա ժողովուրդը և անցյալի՝ 301 թվականի պես՝ Նրա նախընտրելին:

**Զարթնի՛ր, լա՛՛, Դայկյան ու Վարդանանց ցեղի որդի:**

Զարթնե՛ք, հա՛յ այր ու կին, տարեց ու երիտասարդ, սա հին չարի նոր պատերազմն է, որ մղվում է ամեն մարդու և հայ մարդու դեմ:

«Զարթնի՛ր, որոյակ, ուշքի եկ, վե՛ր կաց, պատերազմի ձայնն ինչեց, զարթնի՛ր կոչեց ձայնն հայրենյաց, կենաց-մահու ժամն ինչեց...»: Երգեցին հայ մայրերը՝ նախազգալով ու ահազանգելով ցեղասպանական ու հայրենիքի կորստյան վտանգը, սակայն նրանց կոչը բոլորը չսեցին կամ ուշ լսեցին, և այն դարձավ «ձայն բարբառոյ յանապատի»՝ անօգուտ...

Բայց այժմ՝ այդքանից հետո, ահազանգն ա՛յլ է. Երկնայի՛ն է ահազանգը՝ առավելապես ուղղված մեր հոգիներին, սրտերին, մտքերին ու գիտակցությանը, որպեսզի վերածնվե՛նք Աստուծո հավատքով, վերակերտվե՛նք մեր մեծերի, սրբերի կերպարով ու ըստ այնմ՝ խղճով և գիտակցությամբ, կամքով և վճռականությամբ ու նաև հարատև հետևողականությամբ ապրենք և գործենք՝ կատարելով մեր անմահ հոգու անանց պարտքը Աստուծո, մարդկության ու մեր ազգի հանդեպ: Ու նաև մեր ազգի ապագայի, այն է՝ մեր երեխաների, թոռների, սերունդների հանդեպ: Եվ այդ անելու արժանի կդառնանք՝ հավատարիմ մնալով մեր հայրերի հավատքին՝ այդպիսով պաշտպանելով, պահպանելով մեր Աստվածատուր հայ մարդկային-ազգային ինքնությունը մարդկության ընտանիքում:

Եվ դա պետք է անենք, որովհետև (թող բոլորն իմանան) Աստված կա՛... և կա՛ Նրա արդա՛ր հատուցումը:

15 - 06 - 2009թ.

## **ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԽՈՐԹ ԱՐՏԱՀԱՅՑՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Մեր հեռուստատեսային (խոսենք մեր մասին) հաղորդումներում ի՞նչ է նշանակում կնոջ համար երևալ սեբսուալ, ունենալ սեբսուալ տեսք:**

Ի՞նչ է նշանակում լավ հագուստ, որն ընդգծում է կնոջ մարմնի այն մասերը, որով ինքը երևում է առավել սեբսուալ (կամ նրա այդպիսի հագնվածքն ընդգծում է նրա սեբսուալությունը): Կարո՞ղ է պատահել, որ դա նշանակում է երևալ սեռական հարաբերության համար առավել ցանկալի: Բայց ցանկալի, ցանկություն առաջացնող ո՞ւմ համար՝ իր ամուսնո՞ւ, իր սիրած տղամարդո՞ւ, թե՞ տասնյակ, հարյուրավոր կամ հազարավոր տարրեր տղամարդկանց, գուցեև միասեռական կանանց համար:

Մի՞թե ակնհայտ չէ, որ այդ նույն նպատակով մեր ժողովուրող, հատկապես նոր սերունդն է թիրախավորվում, և այլասերման, ինչ-որ չափով, նույն վճար հասցնելու համար են նաև մեր ռադիոհեռուստատեսային՝ հատկապես որոշ ալիքների օտարածին անբարու երաժշտությունը, երգերը, պարերը և շոուների անբարու կատակները...

Սա ի՞նչ վիճակ է...

Սրանք որտեղի՞ց, ի՞նչ ծրագրեր են, որ հաղորդվում են որպես տեղեկատվություն, որպես մշակույթ կամ զվարճանք ու նաև ներկայացվում են որպես ճաշակավոր, հետևապես և ընդօրինակելի «ճաշակ, նորաձևություն ու առաջադիմություն»:

Եվ հարց է նաև, թե ինչպիսին է այս ներմուծվող ու այն կապելով արդեն նաև հայրենիքում արտադրվող «մշակույթի» տարածմամբ զբաղվող հեռուստաալիքների ստեղծողների, կազմակերպողների, կիրառողների նպատակը:

Այդպիսով, ո՞ւր է գնում հայաստանյան հեռուստատեսության ու նաև ռադիոյի զգալի մասը: Ովքեր և ինչո՞ւ են մեզ և հատկապես մեր մանուկներին ու երիտասարդությանը քշում այդ կորստաբեր ուղղությամբ... իսկ ովքե՞ր և մեր ո՞ր հաստատությունները, կառույցները պարտավոր են անդրադառնալ մեր այս և նման վիճակներին, պարտավոր են վերացնել դրանք ու դրանց հետևանքները, որոնք այլասերման ավերներ են գործում մեր ազգի մեջ՝ մեր հայրենիքում:

Ովքե՞ր, ինչպե՞ս, Ե՞րբ կկանգնեցնեն նշյալ ու դրանց նման չարիքները: Չարիքներ, որոնք կատարվում են մեր հարազատ, սակայն ապակողմնորոշված (գուցեն արդեն այլասերված) կողմների միջոցով, այսինքն՝ մեր իսկ ձեռքերով:

Անկասկած, սա ևս այն երևույթներից է, որ կարիք ունի Երկնային ողորմության ու ներգործության՝ առաջին հերթին՝ մեր հոգիների, սրտերի, խոճի և գիտակցության վրա:

Խնդրե՞նք այդ ներգործությունը՝ ամեն մեկս առանձին ու նաև ազգովի՝ բոլորս միասին:

Կիրակի, 27 - 09 - 2015թ., ժամը 15:00, Մոսկվա

## **ՄԻ ՊԱՀ, ԵՐԲ ՏՐԱՍՎԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԿԱ Է**

Այդպիսի պահին, եթե նայենք իայ և մասնավորապես հայաստանյան իրականությանը, մեզ հետ կատարվող անհասկանալի շատ բան կա, որոնցից մեկը ծխախոտի գործածությունն է, որի մեջ կարծես ազգովին, առնվազն մանկամտությանը ենք համակված:

Մյ մարդ, այ հայ մարդ, որ Աստված քեզ լավ խելք է տվել և կյանքում՝ պատմականորեն ու նաև մեր օրերում, ո՞ւր էլ լինում ես, շատ հաճախ որպես հաջողակ արհեստավորի, գործարարի, վաճառականի, բարձրակարգ մասնագետի և նման այլ շնորհըներով ես հանդես գալիս, ինչո՞ւ ես ախտահարում քո մարմինը, օրգանիզմը ու նաև ախտահարում ես շրջապատդ ու այլոց՝ քո օրինակով՝ նաև քո և ուրիշների երեխաներին և դրանով նաև քո հոգին ու խիղճը: Մի բան, որի հետևանքը կարող է անմիջապես չերևալ, բայց բնականոն օրինաչափությամբ՝ այն շատ չի հապաղում և անպայման զգացվում է տկարությամբ, տարբեր աստիճանի ցավերով ու կորուստներով: Անհամենատ ավելի վատ և կորստաբեր, կործանարար հետևանքներն առաջանում են նրանից, որ ծխախոտամոլությունը (ինչպես և այլ մոլություններ) նշանակում են հակառակություն անձնական, հասարակական, պետական և հատկապես ցավալի՝ մեր զավակների, թոռների ու ընդհանրապես մեր մատադ, անմեղ սերնդի առումով:

Եվ դրա համար մի՞թե չպետք է ազգային ահազանգ հնչեցվի, որպեսզի իայ մարդիկ վերացնեն ծխելը, դադարեցնեն «սեփական ծեռքով սեփական աչքը հանելը»՝ իրենց թունավորվելը, ուրիշներին թունավորելը, ստեպ-ստեպ հիվանդանալը ու ժամանակից (Արարշի որոշածից) շուտ կյանքից հեռանալը: Եվ դա, ունենալով անձնական, ընտանեկան, հա-

սարակական, ազգային, պետական վա՛տ հետևանքներ, նաև դե՛մ է Արարիչ ու Ամենակալ Հորը:

Ի՞նչ է եղել, ի՞նչ է պատահել հայի տրամաբանությանը, ինչո՞ւ ենք մանկամտորեն մոտենում այդ կորստաբեր երևոյթին ու անզգամի անտարբերությամբ վերաբերվում դրան...

Ասվել է, որ մեր ազգի գրագիտությունն աշխարհում առաջին տեղերից մեկն է գրավում. շա՛տ լավ, դրա համար փառք ու պատիվ մեզ, բայց ո՞ւր մնաց այդ գրագիտությունը, երբ աշխարհի համարյա բոլոր կողմերում հասկացված լինելով հանդերձ, որ ծխախոտի գործածումը նաև մոլություն է, որը գերում, կամազրկում, ստրկացնում, վնասում և դանդաղ ինքնասպանության է հասցնում, դու թույլ ես տալիս, որ դա քեզ հետ տեղի ունենա. ո՞վ հայ մարդ, քի՞չ էին քեզ ստրկացնողները, իիմա էլ նիկոտինի՞ն ես ստրուկ դաշնում և կյանքի հանձնում:

Այս ի՞նչ վիճակ է, փոխանակ սահմաններդ, երկիրդ ու երեխաներիդ պաշտպանելու, ընտանիքդ ու հայրենիքդ շենացնելու, ծխախոտամոլ «քեֆին» համար քո (և ո՞չ միայն քո) Աստվածածուր կյա՞նքն ես խեղում, սպանում...

Այս ի՞նչ վիճակ է, որ մեր հայրենիքում դա պատշաճորեն չի հասկացվում, չի ճանաչվում, և այդ կորստաբեր ու նաև ամոթալի վիճակին անհապաղ ու վճռական վերաբերմունք չի ցուցաբերվում: Եվ ցույց չի տրվում ոչ միայն համարյա համատարած (ինչ ցավ ու ամոթ), նաև շարունակվում է պետական բազմաթիվ պաշտոնյաների, հոգևորականների, իրավապահների, բժիշկների, ուսուցիչների, մշակութային գործիչների, մտավորականների և ոչ պակաս ցավ ու ամոթ՝ գիտակից համարվող բազմաթիվ պապիկ-տատիկների կողմից ու նաև (սա արդեն գերարտակարգ իրավիճակ է՝ պետության առաջին դեմքերի կողմից):

Այս ի՞նչ վիճակ է՝ տիհասությա՞ն, տգիտությա՞ն, նեխածությա՞ն, թե՞ պարզապես մի հանցավոր վիճակ: Եվ ո՞ւր են նրանք, որ կոչված և պարտավոր են թույլ չտալ, որ լինի այդ-պիսի վիճակ, իսկ եթե արդեն կա, անհապաղ վերացնեն այն:

Պետք է զգա՞լ, հասկանա՞լ, հավատա՞լ, վստա՞հ լինել, որ եթե մի պահ զգաստանա՞նք ու տրամաբանենք (հատկապես մեր հոգևոր ու աշխարհիկ ղեկավարությունը և իրավ մտավորականությունը, եթե Վերջինս կա՛, մնացել է), այդ դեպքում ոչ միայն մեր տներից, աշխատավայրերից և նույնիսկ փողոցներից, այլև Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքներից և գյուղերից անհապաղ դուրս կմղվի ծխախոտամոլությունը: Եվ այդ անելով՝ մեր երկրի իշխանությունը և բոլորս, տարրեր ձևերով, միջոցներով ու լեզուներով, աշխարհին կօանուցենք, **որ մեր հայրենի տարածքը՝ ԴՅ-ն, զերծ է ծխախոտի վարակից.**

- «Մեր երկրի Հայաստանում այլևս ծխախոտամոլներ չկան, ու այդպիսիներն ել չեն ընդունվում, մինչև չազատվեն այդ մոլությունից. իրենք չվճասագերծվեն և ուրիշներին ել չվճասեն»:

- «Մենք զերծ ենք ծխախոտամոլությունից և կոչ ենք անում բոլորին, որ նույնն անեն, ազատագրվեն»:

- «Պատրաստ ենք անշահախնդրորեն օգնելու աշխարհի մեր եղբայրներին, քույրերին ու բոլոր մերձավորներին՝ ձերբազատվելու ծխախոտամոլությունից: Դիմե՛ք մեզ՝ առանց որևէ երկմտանքի»:

Իսկ հայ հոգևորականությունը, մեղա գալով, որ իր մեջ ծխախոտամոլներ է ունեցել (և գուցե դեռ կան) ու դրանով նաև իր հարազատ հոտին վատ օրինակ է ծառայել, ըստ երևույթին, երկու դեր ունի կատարելու. առաջինը՝ աղոթել այդ մոլությունից մեր ազգի հնարավորինս շուտ ազատվելու համար, երկրորդը՝ քարոզել, պատզամել, որ յուրաքանչյուր հայ մարդ ևս աղոթի՝ խնդրելով Տիրոջը օգնել մեր ազգին, հայրենիքին և պետությանը՝ անփորձանք ապրելու և Աստվածահածո կյանք ունենալու համար՝ խաղաղ, համերաշխ ու ամեն մոլությունից զերծ մարդկության մեջ:

Երեքշաբթի, 05 - 06 - 2012թ., ժամը 08:30

## **Ի՞ՆՉ ԿԼԻՆԻ, ԵԹԵ...**

Ի՞նչ կլինի, եթե դադարեն «նարկոտրաֆիկը» (թմրադեղերի միջազգային տարածումը) և ընդհանրապես միջազգային «նարկոբիզնեսը» (թմրադեղերի արտադրությունն ու վաճառքը):

Կլինի այն, որ մի շարք երկրների գյուղացիության մի գգալի մասը կտուժի. բազմաթիվ ընտանիքներ կգրկվեն իրենց եկամուտներից, կաղքատանան, գուցեև սոված մնան: Միաժամանակ, աշխարհի բազմաթիվ երկրների քաղաքներում ու տարրեր բնակավայրերում թմրադեղերի, հատկապես մանրածախ «բիզնեսի» մեջ թվով «աշխատատեղեր» կկորչեն, «աշխատողները» գործազուրկ կդառնան, և շատ ապօրինի հարստացողներ կսնանկանան, և նրանց սպասարկող բիզնեսներն էլ կտուժեն:

Եվ դրա հետ կառաջանա նաև մի այլ երևույթ. հատկապես որոշակի երկրների ազգային բյուջեների միջիարդավոր դոլարներ չեն վատնվի «նարկոբիզնեսի» և «նարկոտրաֆիկի» դեմ մղվող միջազգային վտանգավոր պայքարուն, շատ երկրներում էլ չեն լինի «մաֆիական» ներքին պատերազմներ՝ մեծակորուստ, դաժան հետևանքներով, և ամենակարևորը՝ չեն խեղվի միջինավոր թմրանոլների թե՛ ֆիզիկականը և թե՛ հոգեկանը, միջինավոր ընտանիքներ չեն քայլայվի ու դժբախտանա, և բազում հասարակություններ ներկայիս մեծ մասշտաբներով չեն այլասերվի ու բարոյագրկվի...

**Եվ այս ու նման պատճառներով է, որ աշխարհը, մարդկությունը թմրադեղերի դեմ ընտրել է պատերազմ, այլ ոչ թե հանդուրժողականություն, համակեցություն և խաղաղություն:**

Դամբնիհանուր նույն, սակայն ընդգրկումով որական ավելի մեծ ազդեցություն կունենա, եթե դադարեն ծխախոտի

արտադրությունը, վաճառքն ու գործածությունը, որով կնվազեն հիվանդանոցների մահճակալները և դեղորայքի գործածումը, կնվազեն վաղաժամ մահացությունները, հարազատների ցավը, որբ երեխաները, կնվազեն անձնական, ընտանեկան ու ազգային բյուջեների և տարբեր այլ միջոցների վատնումները, կնվազեն դժբախտ պատահարներն ու այլ դժբախտություններ: Դրանց փոխարեն կլավանա ժողովրդի և, մանավանդ, մատաղ սերնդի, երիտասարդության առողջությունը, կբարձրանան մարդկանց աշխատունակությունը, արտադրողականությունը, ինչպես նաև իսկական տրամադրությունը, և կբարձրանան, կլավանան նաև մարդկանց գիտակցությունը, կամքը, նկարագիրը և դեռ շատ ուրիշ կարևոր բաներ:

Եվ այս հաշվարկների հետ հույժ օգտակար կլինի հաշվարկել նաև պոռնոտրաֆիկի (պոռնկության հատկապես բռնի՝ տարածման), պոռնոգրաֆիայի (հատկապես մանկական) ու ամեն տեսակ պոռնոների դադարեցման օգտաշատ հետևանքները անձերի, ընտանիքների, համայնքների, ազգերի և մարդկության համար:

**Եվ չմոռանանք նաև հաշվարկել հույժ կորստարեր հետևանքները,** որոնք հիմնականում և գլխավորապես կապված են անկումային խախտումների հետ՝ մարդկային խղճի, գիտակցության, կամքի, կազմակերպվածության, կարգապահության, ու ամենակորստարերը՝ կապված են Աստվածավախության ու Աստվածասիրության կորստի հետ:

Այս հարցերի շարքում դեռ անդրադարձ չեղավ, չխոսվեց մարմնավաճառության, մանկապղծության և նման այլ գերաստիճան պղծությունների «հարուցիչների» մասին, որոնց համար ոչ մի հաշվարկի հետևից չպետք է ընկնել ու նաև չպետք է որևէ «ծակ փաստաբանական պաշտպանությունների» ծուղակներում խճճվել, այլ որպես արտակարգ դրությունում արտակարգ վտանգ՝ տեղնուտեղն այրել և փոշին ցրել այնպես, որ այլևս այդպիսի բառերն անգամ չինչեն հայոց լեզվով և որևէ այլ մարդկային լեզվով...

Եվ դրա համար, ոչ թե նաև «մարդու իրավունքների» լարախաղացության, այլև պղծության վճռական վերացում է պետք, միաժամանակ՝ միամիտ կամ անտեղյակ մարդկանց իրազեկելով, որ սրբապղծություն է «մանկապղծությունը» հունարեն եզրույթով անվանել «պեղոֆիլիա», որը թարգմանվում է «մանկասիրություն» կամ «տղայասիրություն»:

Դատկապես պղծության դեմ պայքարում շատ կարևոր է չընկնել որպես «մարդասիրական» կամ «մարդու իրավունքներ» ներկայացվող թակարդները: Այլ լինել հավատքով՝ զգո՞ն, զգա՞ստ ու խորագե՞տ՝ ապավինելով Արարիչ Յոր զորությանը:

14 - 08 - 2009թ.

## **ՄՏՔԵՐ ԵՎ ՀԱՐՑԵՐ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

- Մարդու իրավունքը պետք է պաշտպանվի յուրաքանչյուր անձի կողմից:

Յուրաքանչյուր մարդ նախ պետք է ինքը հարգի, պաշտպանի և պահպանի իր հետ առնչվող անձանց, մարդկանց իրավունքը, օրինակ՝ իր ընտանիքի անդամների, ազգականների, ընկերների, հարևանների, աշխատակիցների, ինչպես նաև փողոցով քայլող յուրաքանչյուր անձի (թույլ տալով, որ նա հանգիստ անցնի ճանապարհային անցումներով՝ առանց մերենանքշելու նրա վրա՝ սարսափագդու ազդանշանների «սիգնալների» տարակի տակ: Իհարկե, հետիոտն էլ պետք է հարգի վարորդին և ապօրինի ու անհարկի «չցցվի» նրա առաջ...):

Մյուս կողմից մարդասպանի, մանկապղծի և նման ոճիրներ գործողների կյանքը խնայելն արոյո՞ք մարդու իրավունքն ու ազատությունը հարգել ու պաշտպանել է նշանակում, արդյո՞ք դա մարդասիրություն է նշանակում (հետո էլ, խնայելով ոճրագործի կյանքը, ժողովրդավար երևալու համար մտածել, թե ինչպես պետք է ոճրագործ ճիշճաղի համար արժանապատիվ

կեցություն ապահովել՝ համապատասխան կացարան, սնունդ, տեղեկատվություն, սպորտային միջոցներ ու այլ հարմարություններ տրամադրելով։ Ու այդ ամենը նաև չարագործի զոհերի՝ երեխանների բերանից կտրելու գնով…):

Ենիշտ է, որ մենք քրիստոնյա ազգ ենք և պետք է սիրենք ու ներենք։ Եվ այս հարցում «քայց» ասելով որևէ բացառություն չպետք է անենք, շեղում չպետք է ունենանք և դրա համար որևէ պատճառ չպետք է «բռնենք»։ Յետևապես, մենք էլ որևէ բացառության, շեղման ու պատճառի նասին չենք խոսի, կասենք միայն, որ մեր սուրբ հավատքին հետևելով՝ բռնապետին, ազգը հարստահարողին, մարդասպանին և մանկապիղօթին ներելուց առաջ իսպառ վերջ տանք մինյանց դեմ պատերազմելուն, միմյանց սպանելուն, ընդիհանրապես մարդկության մեջ ու հատկապես քրիստոնյա կոչված ազգերի միջև... Եթե տնտեսական շահերի, տարածքային անբողջականության և կամ ազատությունների, անկախության ու նման այլ իրավունքների հանդեպ սպառնալիքների պարագայում պատրաստականություն է լինում, ու իրավունք է վերապահվում ռազմարշավներ կատարելու, մահաբեր ռումբեր, հրթիռներ տեղալու բնակավայրերի, հարյուրհազարավոր քաղաքացիների, ներառյալ անմեղ երեխանների վրա, ընդհուա միջուկային գենք գործածելու, ապա անմեղ մարդուն սպանելու կամ իրեշտականման նանուկին պղծելու համար մի փամփուշտ չպետք է արձակվի պիղծ ճիշադի վրա։

Ով որ իրեն իրավունք վերապահի ասելու, թե այդպիսինի վրա փամփուշտ չպետք է արձակվի, նա պետք է նաև պատասխանի, թե **ինչո՞ւ** ոռումբեր ու հրթիռներ նետվեցին Եվրոպայի, Մերձավոր Արևելքի, Ասիայի ու այլ վայրերի քաղաքների վրա և դեռ նետվում են, և բոլորովին անմեղ հազարավոր կանայք ու երեխաններ են զրիվում, և դա հանցանք չի համարվում...։

Եվ դեռ շատ **ինչուներ** կամ, ինչպես միջազգային, այնպես էլ մեր՝ հայ ազգային, հասարակական ու անհատական առումներով ու նաև հայ պատմական և մեր իսկ ժամանակի

առումով: **Ինչուներ**, որոնց տրված Երկնային պատասխանների հանդեպ աշխարհը (Ներառյալ հայաշխարհը) անտարբեր է՝ առանց անդրադառնալու, որ այդ պատասխանները պարունակում են բազում անլուծելի համարվող խնդիրների լուծումներ ու ամեն տեսակ փորձանքներից, փորձություններից, չարիքներից փրկվելու միջոցներ, ճանապարհներ...

Ծաբաթ, 21 - 10 - 2017թ., ժամը 14:00

## **ՍԹԱՓՎԵԼ, ԶԳԱՍՏԱՆԱԼ**

Անասակա՞ր է, ամո՞թ է, մե՞ղք է, որ կան անթույլատրելի բաններ, որոնք արվում են օրը ցերեկով՝ բոլորիս աչքի առաջ ու Երկար ժամանակ: Բայց այդպես երկիր ու պետություն պահել կլինի՞: Երեխա մեծացնել, ընտանիք պահել կլինի՞:

Չգնանք դեպի ազգի ու երկրի մեծ քաղաքական հարցերը, տնտեսաֆինանսական գործունեությունը և մեր կրթության, մշակույթի ու բավական խորթացած ապրելակերպի Երևույթները, որոնց լավացումն իբր թե երկարատև, այն էլ տարբեր օտարների օգնությամբ և խրատներով, ուսումնասիրությունների, քննարկումների, վերլուծությունների, էլ չգիտես՝ ինչերի և ֆինանսավորումների կարիք ունի, այլ որպես օրինակ՝ անդրադառնանք վայեմի ու ակնհայտ այն վնասակար ու ամորթալի Երևույթին, որի մասին ԶԼՄ-ներով էլ տարիներով հաղորդվում, գիտականորեն լուսաբանվում և կառավարական որոշումներ են ընդունվում: Խոսքը վերաբերում է ծովերից ու փարթամ անտառներից գուրկ մեր երկրի ռազմավարական նշանակության Սևանին ու մի քիչ էլ այս ու այն կողմ մնացած անտառատարածքներին, որ շարունակաբար ապօղինի չհատվեն և նման ձևով ձուկ չորսան: Որովհետև դրանից բազմաբնույթ վնասները կրելու է մեր մեծ հայրենիքից Աստուծո ողորմածությամբ մնացած մեր փոքրածավալ ու միջազգային հաղորդակցությունից մեծ չափով մեկուսացած հանրապետությունը, որը և մեր ազգի,

հատկապես հայրենազուրկ հայության գոյության վերջին հույսն է: Բայց տարիներով ի՞նչ է տեղի ունենում:

Ապօրինի կտրված անտառափայտը, որ մատիտի պես չի թաքցվում գրաբանում՝ բեռնատարներով տեղափոխվում է մեր իսկ երկրի ճանապարհներով, «նկատող չկա»: Եվ սիդ ձուկը (որ հենց դրա որսի արգելված ժամանակ) լայնորեն վաճառվում է ոչ միայն մեր շուկաներում, այլև մեր ռեստորանների ճաշացանկերում իր նշանավոր տեղն է գտնում, և Սևանի ափամերձ ռեստորաններից սիդ ձկան խորովածի հոտն ու ծոլիչը տարածվում են ամբողջ շրջապատում, իբրև թե այդ մենք չենք զգում, չենք տեսնում, բայց ձուկն ուտում ենք: Սա օրենքի ու նաև խղճի և գիտակցության խախտում չէ<sup>5</sup>: Իհարկե, խախտում է: Դրա վնասակար լինելը հասկանալի չէ<sup>6</sup>: Իհարկե, հասկանալի է, ի վերջո, մենք անհուսորեն տգետ, չհասկացող մարդիկ չենք: Ուրեմն՝ դա նաև վա՞տ է: Իհարկե, վատ է, քանի որ ակնհայտորեն վնասակար է ոչ միայն էկոլոգիական, տնտեսական, այլև ու ավելի վատ՝ մեր ազգային հոգեբանության, օրինապահության, կարգապահության, ազնվության ու խղճի առկա վիճակի առումով:

Դժվար է պատկերացնել, որ հասել ենք այն աստիճանի, որ ամեն ժամ հարյուրավոր մեր հայրենակիցներին մատուցվող ապօրինի որսացված սիգը ոչ թե գոնե մեծացած, որսի համար հասունացած, այլ այդ չափից դեռ մի քանի անգամ փոքր է... Մի քան, որ երբեք չի արվում ոչ միայն զարգացած, այլև զարգացումից դեռ շատ հեռու եղող երկրներում...

Ինչ-որ մեկը, ինչպես ժամանակին է ասել, «հնձածդ խոտ չի<sup>7</sup>», այժմ էլ կարող է մտածել ու ասել, թե ինչի մասին է խոսքը, ի՞նչ կա մտահոգվելու. «Եղածը ձուկ չի<sup>8</sup>», այդ մանր-մունր ծառակտորների մասին էլ արժե<sup>9</sup> ահազանգել: Եթե այդպիսի մեկը կա, նրան պետք է ասվի, որ խոսքը ոչ թե «մանր-մունր ցախին ու ձկներին» է վերաբերում, այլ այս մեր քիչ մնացած անտառներին և միակ նշանակալի ջրատարածք Սևանին, բայց դրա հետ և շատ ավելի մեր ազգի պատվին է վերաբերում ու մեր ազգային գիտակցությանը և ոչ միայն...

Եվ եթե մի պահ օրենքի խախտումը և հասցվող նյութական վնասը մի կողմ թողնենք, հապա մեր ամո՞թը, իսի՞դը և տարրական օրինապահությունն ու ազգային-քաղաքացիական գիտակցությունն ո՞ւր են, ո՞ր «սելավն» է եկել տարել: Մի՞թե այդպիսով կարելի է եկամուտ ստանալ, մի՞թե այդ միջոցներով կարելի է երկիր ու տուն պահել, երեխաներ մեծացնել... Էլ չասած՝ նրանց հայ քրիստոնյայի ու քաղաքացիական, հայրենասիրական դաստիարակությունը՝ որպես հայրենիքի, բնության և սահմանների պաշտպանի ու ազգի ամեն տեսակ վերելքի գործունեության ժառանգորդի և նվիրյալի: Ի՞նչ է, արդեն մեր հոգինե՞րն էլ են անզգայացած:

Մինչեռ եթե մեր մեջ գոնե մի նշույլ իսկ մնացած լինի մեր ազգի մեծերի, սրբերի, նահատակների հավատքից, ազնվությունից և խղճից ու գիտակցությունից, ապա այն, ինչի մասին, որ միայն ասվել է, թե արգելված է, ուրեմն պետք է ո՞չ մի դեպքում չանել: Իսկ օրենքում, եթե մի բանի մասին ասված է անել, պետք է անհապա՞ղ ու լիովին անել, իսկ այն, որ չպետք է անել, երբեք ու ոչ մի դեպքում չանել... Մանավանդ որ օրենքում ասվածի հետ նաև բացատրվում է, թե ինչ պատճառով է այդ օրենքն ընդունված: Դա պետք է լիովին բավարար լինի հայրենի օրենքի յուրաքանչյուր տառի հարյուր տոկոսով պահպաննան համար: Եվ պետք է այդպես լինի Յայաստանի քաղաքացու համար ոչ թե պատժվելու վախից, այլ, հիմնականում, նրա խղճի և գիտակցության, պատվի ու հայրենասիրության, քաղաքացիական պարտաճանաչության և նրա ստացած դաստիարակության պատճառով: Այսքան հանգանքներ կան, թեև դրանցից մեկն էլ բավական կլիներ, որ հայ լինենք և մարդ լինենք:

Եվ ուշագրավ է, որ տարիների ընթացքում նշյալ ու այլ բնագավառներում բոլորիս հասկանալի վնասները գալիս են ոչ թե մեր հակառակորդներից, թշնամիներից, այլ դրանք գործում ենք մենք՝ մեր ձեռքով, օրը ցերեկով բոլորի՝ ներառյալ երկրի իրավապահների ու դեկավարության աչքի առաջ... **Արոյո՞ք այդ երևույթը մի հայելի չէ, որ ցույց է տալիս մեր իսկական**

**Վիճակը:** Ու եթե նայելով այդ հայելում՝ չե՞նք փոխում մեր վիճակը, չե՞նք մաքրվում, սրբվում առաջին հերթին հոգեբարոյական այլանդակություններից, ապա հանցավորներին տարբեր տեղեր փնտրելու փոխարեն մտածենք, որոշենք, որ պարտավոր ենք անհապաղ մեզ դուրս բերել մեղքերով լի վիճակից:

Ի վերջո, մի՞թե չպետք է սրավիվենք, հաշիվ տանք մեզ և որոշենք, թե ինչպես պիտի ապրենք: Ոչ թե ապրենք որպես խաշով ու դոլմայով հայ կամ կիսահայ, կամ էլ՝ մի կերպ իբրև հայ, այլ ապրենք որպես իսկական, լիարժեք հայ՝ արժանի մեր մեջ, սուրբ, նվիրյալ նախնիների օրինությանը և հավատարիմ նրանց պաշտօած, պաշտպանած ու մեզ որպես սուրբ ու կենարար ժառանգություն փոխանցած հավատքին:

Եվ այդպիսով ապրենք մարդավարի-հայավարի՝ Աստվածասիրությանք, մարդասիրությանք, պատվով, խղճով, գաղափարով, բարոյականությանք և դրանցով կիմնենք անպայման ապահով, բարեկեցիկ ու արժանապատիվ՝ հօգուտ նաև մարդկության ու ամենաէականը՝ ի գոհություն մեր Արարիչ Հոր:

Կիրակի, 14 - 11 - 2010թ., Ժամը 21:10

## ՄԵՐԺԵԼԻ ԵՆ ԲՈԼՈՐ ԶԱՐԻՔՆԵՐԸ

- Չարի՞ք է թմրադեղը:

- Այո՛:

- Ճի՞շտ է դրա արգելումը:

- Այո՛, շատ ճիշտ է, և դրա արգելումը պետք է կատարվի բազմակողմանի միջոցներով, հետևողականորեն, հարատևորեն ու ամենայն խստությամբ, որպեսզի այն իրապես վերացվի, այլ ոչ թե տասնամյակներով համարյա ամբողջ աշխարհում շահարկվի:

- Բայց ինչպե՞ս է բացատրվում թմրադեղի գործածման վնասակարությունը, իրավական և կամ բարոյական ինչպիսի հիմնավորմանք է այն արգելվում, հալածվում և պատժվում: Ու

արդյոք դրանով չի՝ ոտնահարվում մարդու իրավունքը նրանով, որ ոչ միայն արգելվում են թմրադեղի արտադրությունը, տեղափոխումը, պահեստավորումն ու վաճառքը, այլև դրա ազատ գործածումն անձի կողմից:

Սրա մասին, ըստ Երևույթին, հանրահայտ բացատրություն չկա կամ առնվազն զանգվածային ու ամենօրյա տեղեկատվության մեջ չի հանդիպում: Բայց կարելի է ենթադրել այդ բացատրությունը. թմրադեղի ինքնակամ գործածումը վնասակար է մարդու առողջությանը ու նաև մոլություն է, որն առաջացնում է կախվածություն՝ կամագրեկություն, խեղելով անհատի կյանքը: Եվ դրանով իսկ հակահասարակական է և դրա համար պատժվում է նյութական ու ֆիզիկական հսկայական միջոցների ներդրմամբ:

Բայց հարց է առաջանում. արդյո՞ք միայն թմրադեղի գործածումն է այնպիսի հակահասարակական մոլություն, որի պատճառով կարելի է անտեսել անձի կամքն ու իրավունքը՝ անելու այն, ինչ ինքը ցանկանում է անել իր անձին, այլ ո՞չ թե ուրիշին:

Եվ ըստ Էության թմրադեղն այդպիսի կախվածություն առաջացնող միակ մոլությունը չէ, կան և ուրիշները:

Ո՞ւմ հարցնենք: Բժիշկների՞ն, էլ ո՞ւմ: Շատերը կասեն, որ քիչ թե շատ՝ նույն կախվածությունն առաջացնող վնասակար մոլություններից են, օրինակ, գինեմոլությունը, խաղամոլությունը, ծխախոտամոլությունը, սեռամոլությունը, որոնք նույնապես կամագրեկում են մարդուն, բարոյագրեկում, խեղում նրա ինքնությունը, վնասում նրա ընտանիքին, հատկապես երեխաներին, հետևաապես և հասարակությանը... Ինչո՞ւ դրանք չեն արգելվում, և ո՞րն է դրա պատճառը: Ինչո՞ւ տարբեր միջոցներով խստագույնս չի արգելվում միասեռականությունը: Եվ ոչ միայն չի արգելվում, այլև նույն այդ մարդու իրավունքի, դրա ազատ ինքնադրսնորման պատճառաբանությամբ տարբեր ծներով պաշտպանվում, հովանավորվում և նույնիսկ գովազդվում է այդ մեծագույն մոլությունը:

Ումի՞ց պետք է բացատրություն պահանջվի այս Երկու

չափ երկու կշռի համար: Երկրի իշխանություններից: Իսկ անտարբերության համար գուցե նաև կղերականությունից, մտավորականությունից...

Միասեռականության վճասն անձի, ազգի և մարդկության համար անհամենատելիորեն մեծ է, որովհետև, բացի մյուս մոլությունների պատճառաօք վճասներից, սպառնում է նաև մարդկային գոյին: Այն, իր դաժան ագրեսիվությամբ ու անխղությամբ հանդերձ, իրեն բարի, խեղճ, մեղմ ձևացնելով ու նենգորեն օգտագործելով մարդկային հետաքրքրասիրությունը, ազատամտությունը, հանդուրժողականությունը և այդպիսով ընդունված օրենքները, խարդախ մեթոդականությամբ աստիճանաբար ներթափանցում է հասարակության ու հատկապես մատաղ սերնդի մեջ՝ բազում կեղծ հրապույրներով և հատկապես գործածելով արվեստը, մշակույթը, կրթությունը, տեղեկատվությունը, իրավաբանությունը, այլ միջոցներ և հատկապես իր համարյա անսպառ ֆինանսները:

Ուշագրավ է, որ չարաշահվում են նաև լեզվամտածողությունը, բառակազմությունը, բառերի նշանակությունը: Մի հանգանանք, որն ապացուցում է այդ չարիքի կողմից միջոցների օգտագործման բազմազանությունը... Օրինակ՝ այդ մոլության տարածողները կարողացել են հասնել նրան (իսկ ինչպես են կարողացել, դա շատ կարևոր, այլ հարց է), որ նույն սեռի մարդկանց միջև սեռական անբնական հարաբերությունը՝ միասեռականությունն անվանվի «մարդկային սեռականություն» (միջազգային գործածվող *homosexuality*), իսկ երկսեռ բնական հարաբերությունն անվանվի «մարդավախություն» (*homophobia*):

Եվ դրանից առավել դավադիր, խարդախ և ստոր է հասնել նրան, որ մանկապղծությունը միջազգայնորեն *pedophilia* անվանվի, որը հունարեն նշանակում է «տղայասիրություն» կամ «մանկասիրություն»: Մարդկության ամենաքստմնելի ոճիրը (դա որևէ գազան իսկ չի անում) տարբեր երկրների մարդիկ հանգիստ կոչում են մարդկային մեծագույն սուրբ հատկությամբ՝ սեր, սիրել...

Փա՛ռք հայոց լեզվին, որ իրերն իրենց անունով է կոչում՝ «մանկապղծություն» և «մանկապիղծ», բայց... Բայց ի՞նչ դժբախտություն. աստիճանաբար Սուլը Քայաստանում ևս սկսել են այդ արարքը «պեղոֆիլիհա» կոչել, այն էլ պաշտոնական և պրոֆեսիոնալ ամբիոններից: Ո՞վ կասի՝ սա ի՞նչ բուժում է պահանջում:

Քայտնի է, որ կան *philanthropia* - մարդասիրություն, արմենօֆիլիհա, ռուսօֆիլիհա, անգլօֆիլիհա (հայասիրություն, ռուսասիրություն, անգլասիրություն) և այլ ազգերի նկատմանք նման արտահայտություններ, որոնք նշանակում են այդ ազգերի նկատմանք սեր, հարգանք, համակրանք, բարեկամություն, հոգատարություն: Բայց այդ հասկացողության՝ սիրո, բարեկամության, հարգանքի, հոգատարության և նման գգացումների մեջ ինչպե՞ս մտցնել մանկապիղծին, որը մարդկության ամենամեծ, ամենաահավոր, ամենաստոր հանցագործն է, և որի պատիժը նախևառաջ Երկնային է. **«Եվ ով որ ինձ հավատացող այս փոքրիկներից մեկին գայթակղեցնի, նրա համար լավ կլինի, որ նրա պարանոցից էշի երկանաքար կախվի և ընկղզվի ծովի խորքը»** (Մատթեոս 18.6-7):

Ի՞նչ անենք: Ինչքա՞ն լրենք: Բայց չէ՞ որ մենք մա՛րդ ենք: Եվ զավակներն ենք մի ազգի, որի նախնյաց համար Աստվածասիրությունն ու մարդասիրությունը և դրանցից բխող պատիվը կյանքի գլխավոր, հիմնական ապրումն են եղել: Դրա համար նրանք այն իրենց կյանքի գնով իսկ հաստատ են պահել:

Լա՛վ, ասենք՝ անզգայացել ենք. արդիական կոչված գիտությունը, մշակույթը, արվեստը, գրականությունը և զանգվածային տեղեկատվությունը (հեռուստատեսություն, սոցիալական ցանցեր, կայքեր և նման բաներ) մեզ կամաց-կամաց «զոմբիացրել» են հոգեկանության, գաղափարականության, բարոյականության ու պետականամետության առումով, բայց ո՞ւր մնաց մեր անմեղ երեխաների, թոռնիկների սուլը կյանքի՝ մարմինների և հոգինների պաշտամությունը՝ պահպանությունը բորենուց էլ վատ մարդանման ճիվաղներից՝ նրանց անմեղ կյանքերը պղծությամբ՝ ամենանվաստացուցիչ կերպով խոր-

տակել ջանացողներից: Եթե այդ վտանգը (որը բոլորին կործանումն է) ու նաև այդ վտանգի առաջն առնելու մեր պարտքի զգացումը չկարողանան մեզ գիտակցության բերել, մեզ հայդարձնել, մարդու դարձնել, այդ դեպքում իրավունք չունենք երբեւ մոմ վարելու, խաչակնքելու, ոչ էլ դեպի երկինք նայելու:

Ինչպես պիտի կարողանանք այսուհետև ապրել, եթե մեր այդ պարտքը չկատարենք: Առանց դրա իրավունք ունենալո՞ւ ենք, նաև կարողություն էլ ունենալո՞ւ ենք պաշտպանելու մեր ազգն ու հայրենիք Հայաստանը ամեն տեսակի ոհնակներից, որ ատամները սրած՝ շրջապատել են մեզ:

Հավատքի ու արդարության տրամաբանությամբ՝ ոչ, չենք կարողանալու, որովհետև զրկված ենք լինելու թե՛ այդ իրավունքից և թե՛ կարողությունից: Եվ այդ զրկվածությունը հաստատված կլինի երկնքից:

Մտածենք այդ մասին, մտահոգվենք այդ մասին ու ըստ այնմ ապրենք ու գործենք՝ անկեղծորեն, հետևողականորեն ու հարատևորեն, որպեսզի միշտ մնանք անփորձանք, մնանք լույսի մեջ՝ հեռու խավարից, հաճությամբ ու օգնությամբ Արարիչ Յոր՝ **ամենաբարի, ամենաարդար, ամենազոր ու ամենակալ Աստծո:** Փառք, պատիվ և մեր հավատարմությունն ու սերը Նրան՝ հավիտյանս հավիտենից:

Ուրբաթ, 17 - 03 - 2006թ., ժամը 21:30

## **ԵՐԵՍՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՍՊԱՇՏՈՒԹՅԱՄԲ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՐԿՐՆԵՐ, ԲԱՅՑ Ո՞Ր ՀԱՐՑՈՒՄ**

Երեսպաշտությունը, կեղծավորությունը հաճախ լինում են նրանց կողմից, որոնք ուրիշներին սովորեցնում են այդպիսին չլինել: Ինչպես դա անում էին փարիսեցիներն իսրայելում երկու հազար տարի առաջ, և Տերը խարազանում էր նրանց:

\* \* \*

Աստվածաստեղծ բնական միջավայրի անաղարտության ամենուրեք, բազում խախտումներից հետո տեղեկատվությամբ լսում, կարդում ու դիտում ենք, թե ինչպես են զարգացած երկրների բարեսերների ձեռնարկումներով բնապահպանական պետական ու մասնավոր ծրագրերով «որսում» վնասված ճայեր, վայրի բաղեր, այլ թռչուններ՝ մաքրելու համար նավթից և բուժելու դրանց վնասված թևերն ու մարմնի այլ մասերը, որ նրանք կարողանան... ապրել: Ու այդպես փրկվում են հարյուրավոր կամ հազարավոր վայրի թռչուններ...

Կեցցե՛ մարդկության բարեսիրությունը, սերը բնական միջավայրի, կենդանական աշխարհի հանդեպ ու հատկապես հրաշալի թռչունների նկատմամբ:

Դրա համար մարդկությանը թող տրվի մարդասիրության մի մե՛ծ մեղալ՝ մարդու կողմից թռչնափրկության պատկերով: Սակայն մեղալի մյուս կողմի պատկերն ինչպիսի՞ն կլինի...

- Չե՛նք խոսում պատերազմների, ցեղասպանությունների, ջարդերի միլիոնավոր զոհերի մասին:

- Չե՛նք խոսում քաղցկեղից, սիրտ-անոթային ու այլ հիվանդություններից տարեկան միլիոնավոր մահացությունների մասին:

- Չենք խոսում նաև ճանապարհային, արդյունաբերական ու այլ պատահարների զոհերի, ոչ էլ թնրամոլության, որկրամոլության, գինենոլության, ծխախոտամոլության և նման այլ մոլությունների պատճառներով մահացությունների մասին։ Դրանց թիվը շատ-շատ մեծ է, քան վերջերս թռչնագրիպից տեղի ունեցած մահացությունների թիվը, բայց...

Բայց շուրջ յոթ միլիարդ մարդկության մեջ հարյուրների (գուցեև հազարների) մահացությունը (իհարկե, նաև համաճարակի նկատմամբ երկյուղը, որ կարող էր ավելի մեծ թվով կյանքեր խլել) պատճառ դարձավ, որ համարյա համամարդկային պատերազմ հայտարարվի վարակիչ համարվող թռչնատեսակների դեմ։

Եվ լուրերում տեսնում ես մարդկանց, որ վազում են հավերի հետևից հավանոցներում, բակերում, փողոցներում բռնում և ի՞նչ ցասումով են այդ ընտանի թռչուններին մտցնում պարկերի մեջ ու հրկիզում, հրկիզում, ու հրկիզում հարթ գետնի վրա, փոսերում և էլ ուր հասնի... ի՞նչ է, այդ ընտանի բոլոր թռչնատեսակնե՞րն են վարակված ու վարակակիր։ Շատ տարակուսելի է. մեծ հավանականությամբ՝ դրանց մեծ մասն առողջ է, բայց... Եվ ի՞նչ, հոգատարությունը, խնամքը, պաշտպանությունը միայն վայրի՞ թռչունների համար է...»

- Իսկ երբ մարդիկ են օրիասական վիճակում գտնվում՝ կիմ, երեխա, տարեց, նրանց նկատմամբ անխտիր գոնե նույն հոգատարությունը (ինչպես նավթակալած վայրի թռչունների հանդեպ) լինո՞ւմ է...»

- Ըստ երևոյթին՝ չի լինում. մարդիկ միմյանց ողբերգություններին շատ հաճախ մարդավայել չեն անդրադառնում, որպես ավետարանական մերձավոր չեն վերաբերվում...

Բայց պետք է այդպես անդրադառնալ ու վերաբերվել, և մենք՝ հայերս, նույնպես ու առավել ևս։ Մանավանդ որ մենք մինչև հիմա էլ ողբերգական արհավիրքների շատ կրողներից ենք ու եթե ոչ լիարժեք ու հետևողական պաշտպանություն, ապա գոնե որոշ հոգատարություն, խնամք ստացել ենք։ Իսկ պաշտպանությունը և ամեն ինչ, որ պետք է վերապրումի հա-

մար, ստացել ենք Տիրոջից, որ մեզ այդքան փորձանքներից ու փորձություններից փրկելով՝ հասցրել է մինչև այսօր և նույնիսկ վերապետականանալու է արժանացրել:

Մնում է միշտ շնորհակալ ու հավատարիմ լինենք Տիրոջը, որ արժանացնում է մեզ իր բարեհաճության ու օգնությանը: Եվ իր շնորհով՝ միշտ անկեղծ, հետևողական ու հարատև ջանքերով ծառայենք իրեն և ուշադիր լինենք մեր մերձավորների հանդեպ... Եվ այդ մասին մեզ թող միշտ հիշեցնի հայի ոչ միայն ահազանգը, այլև դրանից ավելի կարևոր և հայի հոգեբուխ պարտաճանաչությունը:

Ծաբաթ, 08 - 11 - 2014թ., ժամը 21:40

### **ԻՐԱՎ ՇԱՆՍՊԱՅՐՀ ՈՒ ԱՆԵԼՔՆԵՐ (Քարդ, դժվար և միաժամանակ՝ պարզ, ոյուրին ու պատվավոր)**

Կարծես օրինաչափություն է դարձել, որ այս աշխարհի հզորներն իրենց ենթակայության կամ ազդեցության տակ եղող երկրների համար (Վերջին հաշվով) ինքնակամ օրենքներ սահմանեն, պայմաններ դնեն և տարբեր միջոցներով (իրավական կամ ոչ) պահանջեն դրանց կատարումը: Ու եթե այդ երկրները չեն հապատակվում, չեն ենթարկվում ու չեն կատարում պահանջվածը, նրանց հանդեպ կիրառվում են պատժամիջոցներ՝ տարբեր ճնշումներ, սահմանափակումներ, մեկուսացումներ և մինչև իսկ կազմակերպվում են ներքին խռովություններ, իշխանափոխումներ ու այլ փոփոխություններ: Իսկ երբ իրենց ենթակայության կամ ազդեցության տակ եղողներից դիմումներ են հղվում հզորներին՝ դրամաշնորհներ կամ վարկեր ստանալու, նրանց միություններին անդամակցելու կամ որևէ այլ խնդրի համար, այդ դեպքում, եթե չոր մերժում չի լինում, ապա ուղղակի ներկայացվում են դիմումների բավարարման որոշա-

կի պայմաններ, պահանջներ, և բավականին ցինիկորեն պարբերաբար ստուգվում է դրանց կատարումը:

- Այս բոլորը կարծես վաղուց պարզ ու հայտնի է, ի՞նչ կարիք ու իմաստ կա դրանց նորից անդրադառնալու...

- Անդրադառնալու կարիքն ու իմաստը վերաբերում են հիշեցմանը: Մեր ազգին ու բոլորիս հիշեցնել, որ եթե այս աշխարհի հզորների կողմից առաջարկի տեսքով կամ այլ ձևերով պարտադիր պարտավորությունները հեզորեն ընդունում ենք, ըստ երևույթին, որպես ուրիշ տարբերակ չունեցող օրինաչափություն (ինչպես և հաճախ լսվում է հայ պաշտոնակատարների ու առավել ևս գործարարների կողմից՝ «փոքր ազգ, փոքր երկիր ենք, ի՞նչ կարող ենք անել՝ բացի համակերպելուց, հպատակվելուց և կատարելուց...»), ապա ինչո՞ւ չենք անդրադառնում, չենք կատարում այս աշխարհի ոչ թե ժամանակավոր փոփոխական հզորների (որ այսօր կան, վաղը չկան), այլ տիեզերքի հավերժ Յզորի՝ մեր Արարիչ Յոր՝ Աստուծո՛ ու Աստվածորդո՛ պահանջներն ու պայմանները: Մանավանդ որ Երկնային թագավորության պահանջ-պայմանները՝ պատգամները, ոչ թե շահադիտական, խորը և մեր դեմ են, այլ ընդհակառակը՝ մեր իսկ բարորության, մեր օգտի համար են, այժմ և հավիտյանս:

Ինչո՞ւ չենք անդրադառնում Աստվածային խոսքին, պատգամներին, այլ ընդհանուր առնամբ արհամարհում, մերժում և նույնիսկ լինում է, որ չարախոսում և դրանց դեմ պայքարում ենք: Ինչո՞ւ: Որովհետև Աստված բարի՞ է, սիրող, ներող ու համբերո՞ղ և դրա համա՞ր չենք վախենում ու ամբարտավաճանում ենք:

Սակայն ինչի՞ նման է դառնում մարդկությունը, դրա մեջ և հայությունը, եթե չարաշահում է Արարիչ Յոր բարորությունն ու համբերությունը: Շատերս այս աշխարհի գայլերին, շակալներին լսում, ենթարկվում, նրանց առաջ հարգալից («հա ցիոռկահ») կանգնում ենք, իսկ Տիրո՞ջը. կյանք Պարգևողի սիրո և բարության առաջ ամբարտավաճանո՞ւմ ենք: Բայց այդ վարքը չարությունից (ուրացումից, դավաճանությունից) բացի նաև

տգիտություն, հետամնացություն ու անմտություն է, որ չենք հասկանում, հաշվի չենք առնում մեր այդպիսի վարքի հետևանքները և մեծամտանում, գոռողանում, անզգամանում ենք Նրա առաջ, Ումից փախուստ չկա ոչ մի տեղ, ոչ մի կերպ, երբեք: Եվ հետևում է Տիրոջ հատուցումը, որը հասնում է մինչև մարդու, ազգի, երկրի, պետության ուղնութունը և ներառում է սերունդներին...

Եվ այս դրության մեջ վատից վատն էլ լինում է, երբ զգաստանալու, զղացու և մեղա գալու փոխարեն ժամանակների ընթացքում և սերունդների մեջ ավելի շատ լսվում է՝ «Վայ, չգիտեինք, որ այսպես կլիներ» կամ՝ «Ես ինչ անբախտ ենք, կյանքն ինչ դաժան է, այսքան պատուհա՞ս...», «Անարդա՞ր աշխարհ», «Ո՞վ արդարություն, թքել եմ քո ճակատին», «Ո՞ւր էիր... »:

Բայց մի՞թե չգիտեինք և մինչև հիմա էլ դեռ չգիտե՞նք, որ մեր ազգի դարավոր, կործանարար տառապանքներն ու արյունալի կորուստները գուցեն մի կողմից հատուցումներ են, որոնք որպես քավություն՝ պետք է անմռումք կրենք, մյուս կողմից էլ կարող է դասեր և կամ հատուկ խնդիրներ են, որոնք փառքի, ամեն ինչում վերելքի՝ ու երանելի կյանքի՝ են վերածվում՝ մեր հավատարմությամբ մեզ շնորհված 1700-ամյա հավատքին:

Մոռացե՞լ ենք, որ մեզ, մանավանդ առաջնությանք տրված հավատքի շնորհի մասին մեծ մասամբ հիշում ենք, երբ ուզում ենք օտարներին զարմացնել ու հպարտանալ... Եթե դա է քրիստոնյա կոչվելու մեր շարժառիթը (նոտիվացիան), ու մենք այդպիսին ենք դարձել, պետք է մտածենք՝ այդ դեպքում ի՞նչ անունով մեզ կոչենք: Եվ մտածենք նաև, թե մեզ վայել այդ անունն արդյո՞ք մեր երեխաներին, թոռներին և սերունդներին ևս վայել կլինի: Այդ անվան համար նրանք մեզ կհարգե՞ն, կօրինե՞ն և կուգենա՞ն նմանվել, թե՝ մեզ կանիծեն, մեզնից կզգվեն ու մեր անուններից կզատվեն, կիեռանան: Գուցեև այդ պատճառով խորը ու պիղծ կողմերի ճանկն էլ ընկնեն, որի համար մեղքը մեր վզին կավելանա, մեղքի մեջ լիովին կիրվենք...

Այս աշխարհի հզորների հրամանները, պայմանները չկատարելու կամ դրանց կատարման ժամկետները չպահելու պարագայում պատիժները հստակ նշվում, ներկայացվում են ժողովուրդներին, նրանք էլ, դա հաշվի առնելով, վախենում, զգուշանում, զգաստանում են, և մենք էլ նրանց հետ՝ հլու-հնազանդ կատարում ենք՝ փորձից գիտենալով, որ այս աշխարհի հզորների դեմ «խաղ չկա»: Լա՛վ, այդպես վարվելը գուցեն խոհեմ ու տրամաբանական է: Սակայն ոչ թե այս աշխարհի («այսօր կա, վաղը չկա») հզորների, այլ Երկնային հավերժ Ամենահզորի (որ մեզ ստեղծել է ու պահպանում է) պատվիրանները, պահանջները մեզ տրված ժամանակամիջոցում՝ մեր ապրելամիջոցում գոնե նույն զգուշությամբ ու ճշտությամբ կատարո՞ւմ ենք. կամ գոնե այդ մասին հիշում և փորձ իսկ կատարո՞ւմ ենք, թե՞ դրա համար նտածելու ժամանակ չունենք: Մեր ժամանակը հազի՞կ է բավարարում թլուտի ու այլ խաղերի, էլ չասած անբարդյական հավաքների, հաճույքների, ամեն տեսակ ապօրեն «բիզնեսների» ու այլ հարաբերությունների համար:

Եվ այս իրականության պայմաններում ո՞ւր են Երկնային թագավորության այս աշխարհի մեր ազգի ներկայացուցիչները՝ պատվիրակները՝ հոգևորականները, որ Երկնային Յոր անունից խոսում և մեզ՝ մեղավորներիս, մեղքերի թողություն էլ են տալիս: Ինչո՞ւ Տիրոջ պես բարի, հարազատ հովիկ չեն դառնում. նաև ինչո՞ւ պարանից խարազան չեն շինում ու տաճարից՝ Յայաստան սուրբ Երկրից, ամեն տեսակի խաղանոլների, պոռնկամոլների, իշխանամոլների ու այլ «մոլների» սեղանները շուրջ տալով (պաշտոններից վրնդելով)` հայոց սրտերը չեն մաքրում ու ամեն տեսակ չարություն, անհավատարմություն, Երեսպաշտություն և մասամբ նորին՝ ազգից դուրս չեն թափում:

Չէ՞ որ այդ անելը և դա իրենց հոտին էլ սովորեցնելը Երկնային պատգամ-պահանջներից է և իրենց կոչումի պարտականություններից՝ որոնց անհաղորդ մնալն ու անտեսելը թե՝ Երկրային և թե՝ մանավանդ Երկնային հատուցում է ստանում:

Այսպիսի մտածողությունը, դատողությունն ու մտահոգությունն արդյոք անսովո՞ր են հնչում, անհարի՞ր հայի ներկայիս ընկալումներին ու ընթանումներին: Ու եթե, ամենայն հավանականությամբ, այո՛, այդպես է, ապա գուցե հարց առաջանա, թե հիմա ինչու է այստեղ հնչեցվում «անսովորն ու անհարիրը»:

Հնչեցվում է, որովհետև այն ծշմարիտ է և կենսականորեն օգտակար է, հետևապես և անհրաժեշտ է: Իսկ եթե ինչ-որ տեղ, ինչ-որ ժամանակ, ինչ-որ կողմից անփութությամբ, անպատասխանատվությամբ կամ տղիտությամբ, կամ էլ չարությամբ համարվում է՝ իբրև թե այդպիսի բան չկա, իրականում դրանք չեն դադարում այդպիսին լինել:

Եվ «մոռացողները» կրում են դրա պատասխանատվությունը, ինչքան էլ փորձեն այդ իրականությունից փախչել կամ դրա արդեն իսկ հետևանքների համար անհեթեթ պատճառներ փնտրել... Չէ՞ որ որևէ օրենք խախտելու դեպքում անհնարին է պատասխանատվությունից խուսափել՝ դրա մասին մոռանալու կամ այն չիմանալու պատճառաբանությամբ:

- Ուրեմն այսպիսի դրությունից ելք կա՞:

- Դավատքով միշտ ելք կա: Մեր Երկնային Յոր գքությամբ:

- Ի՞նչ պետք է անել:

- Զգաստանալ ու մեղա գալ անմիջապես, ազգովին ու պետականորեն, մեր հոգիներից, սրտերից ու մտքերից թոթափել, վաճել հավատագրկությունից ու նյութապաշտությունից առաջացած այլասերման, խորթացման ու անտարբերության թմբիրը և ապրել հավատքի ու հայկականության կյանքով, գործել՝ կատարելով մեր մարդկային, ազգային ու ընտանեկան պարտականությունները. Աստուծո օգնությամբ և Նրա փառքի համար:

ԳԼՈՒԽԱ ԵՐԿՐՈՐԴ

ԶԳՈՒՔԾԱՆԱԼ

ՏՐՈՅՑԱԿԱՆ

ԶԻՒՔՑ

Երեքշաբթի, 12 - 10 - 2010թ., ժամը 02:50, Գորիս

## ԼՈՒՅՄ ԻՐԱՎԱԾՆ ԵՎ ԿԵՂԾ, ԿԵՆՍԱՑՈՒ ԵՎ ԿՈՐՍԱԲԵՐ

*Եվ նրանց ասաց. «Դնչո՞ւ եք քննել,  
վեր կացեք, աղոթեցնք, որպեսզի  
փորձության մեջ չըմկնեք»:  
(Ղոկաս 22.46)*

Մարդը (խոսենք մեր մասին), հայ մարդը կանգնած է երեսի մի կողմով դեպի լուսը, իսկ մյուս կողմով՝ դեպի խավարը:

Այս վիճակն այնքան է օրինաչափ դարձած, որքան ցերեկն ու գիշերը և դրանց գոյությունն ու հարաբերությունը:

Սակայն կա մի եական հանգամանք, որը վերաբերում է իրավես լինելուն, լինելիությանը, այսինքն՝ վիճակի բնատուր ու իրական, դրական գոյությանը, որի աղավաղնանք շահագրգուված կողմն՝ չարը, թշնամին, կորստաբերը և դրա եւրեյան խավարն է, որն արհեստականորեն լուսավորում է (ժամանակավորապես), և դրանով լուսավոր կողմի վրա շղարշ է գցվում և մթնեցվում է (ժամանակավորապես): Եվ սա կատարվում է նպատակով՝ խարելու, ապակողմնորոշելու և կորստյան մատնելու (խոսելով մեր մասին) հային: Ու երբ հայն ընկնում, ենթարկվում է այդ վիճակին՝ կորցնելով իր հոգևոր գգոնությունը, անտեսելով Տիրոջ պատգամները, Նրա գգուշացումները, ապաստացվում է մի վիճակ, երբ այլևս հայը նայելով չի տեսնում և լսելով չի իմանում: Ու երբ չարի արհեստական, ժամանակավոր լուսի «մարտկոցը» («բատարեան») բնականորեն դատարկվում, անզորանում է և իր բնության մշտական խավարն է պատում ու իրական լուսի վրայից ել շղարշը, քողը հանվում, չքանում է, ապա ժամանակավոր մութը փարատվելով մշտական կենարար լույսն է ճառագում, սակայն հային այն չի հասնի: Չի հասնի, եթե հայը գգալիորեն գտնվի չարի, ստի,

կեղծի և կորստաբերի իշխանության տակ՝ «անդունդի մյուս կողմում»: Եվ այդ մասին է, որ Ավետարանում ասվում է. «Եվ այս բոլորից բացի, մեծ վիհ կա մեր և ծեր միջև, եթե ուղենան այստեղից ծեզ մոտ անցնել, չեն կարողանա, ոչ էլ այդտեղից մեկը կարող է մեզ մոտ անցնել» (Պուկաս 16.26):

Ուրեմն՝ հայե՞ր, զգո՞ն լինենք, արթուն մնանք և մեր հավատքի ժառանգության գենք ու զրահը վայր չդնե՞նք, այլ ըստ մեր կոչումի՝ սպառազինված լինենք հոգևոր արթնությանք, ի վիճակի լինենք միշտ կատարելու մեր հոգու պարտքը մեր զավակների, սերնդի, սերունդների, մեր ազգի առաջ, որով և կապահովվի դրանց իրական, եական, կենսական անվտանգությունը, ինչպես նաև ընդհանուր կեցությունը՝ հարատև, ընդմիշտ:

Ամեն մի հայ թող մի «լավ թափ տա» իրեն՝ ստուգելու համար, թե արդյոք չարի բազմատեսակ ուտնձգություններից, բազմաբնույթ նետարձակումներից արդեն չի՝ խոցվել իր Աստվածակերտ ինքնությունը, այն չի՝ նասնաւովել չարի, ստի, կեղծի կործանիչ հարվածներից: Իր հոգին և սիրտը, միտքն ու գաղափարը, բարոյականությունն ու կենցաղավարությունն անաղարտ մնացե՞լ են, նրանց անաղարտությունը պահպանվա՞ծ է:

Թե չէ բնապահպանության հայրենի ու արտասահմանյան ջատագովները մեզ ազդարարում, զգուշացնում, հորդորում են մեր օդն ու ջուրը և մնացյալը մաքուր, անաղարտ պահելու մասին, և լավ են անում, շատ շնորհակալ ենք, բայց ո՞վ մեզ ազդարարի, ահազանգի և զգուշացնի մեր հոգևոր, գաղափարական ու նաև բարոյական ոչ թե «շրջապատի», այլ հենց կյանքի առանցքի՝ և մեր էության աղավաղման, ախտահարման ու ապականման մասին: Ու ըստ հարկի նաև ցույց տա և հորդորի, թե ինչպես կարող ենք մաքրվել, սրբվել և վերականգնել մեր անաղարտությունը Աստուծոն հավատքի, ազգային գաղափարականության և տոհմիկ բարոյականության մեջ, որպեսզի մեղքի վիհը մեզ չբաժանի իրական, մշտական, հավիտենական ԿՅԱՆՔԻՑ:

Եվ ո՞վ կարող է հային (ինչպես յուրաքանչյուր մարդ եակի) այսօր (ինչպես և միշտ) փրկել, եթե ոչ Նա՛, Ով ստեղծեց նրան ու դարերով ապահովելուց, պահպանելուց հետո նաև փրկեց նրան իր Միածին Որդու արյան գնով։ Ուրեմն՝ Նրա՛ն դարձնենք մեր հայացքները, Նրա՛ն նայենք, Նրա՛ պատգամները վերիիշենք, Նրանից դարձյալ սովորենք և դրանք կատարենք՝ մեր կյանքի ապրում դարձնենք, որպեսզի խորտակումից ու կործանումից դարձյալ փրկվենք։ Եվ մեզ միշտ հաստատ լինի. «Ճավատում ենք և համոզված ենք, որ միայն Աստվածորդու հավատքով ու Նրա պատգամները կատարելով հաստատապես «կա հայուն փրկություն...»։

Ամեն ինչ ասված է, հստակեցված է մեր՝ մեղավորներիս փրկության սիրույն, բայց «ասողին լսո՞՛ և պետք»... Ուրեմն՝ լսենք, տեսնենք և կատարենք, որպեսզի ԱՊՐԵՆՔ այժմ ու հավիտյան հավիտենից: Ամեն:

Ծաբաթ, 15 - 11 - 2014թ., ժամը 10:45

## **ԱՍՏՈՒԾՈՒՅՑ ՎԱԽԵՆԱԼ ԵՎ ՄԱՐԴԿԱՆՑԻՑ ԱՄԱՉԵԼ**

Ժախ՝ Աստծուց և ամոթ՝ մարդկանցից:

Այս երկու «գործոնները», որոնք զգալիորեն գոյություն ունեին, կիրառվում ու «աշխատում» էին (արդյունք էին տալիս) մարդկության, հատկապես միաստվածական կրոններ դավանող ժողովուրդների, հետևապես և հայության մեջ, դրանց մեծ մասում, վաղուց ի վեր ակնհայտ արագությամբ վերանում են՝ բացասական խոր ազդեցություն թողնելով անհատների, ընտանիքների, հասարակությունների, ազգերի (հետևապես և մարդկության) հարաբերությունների ներդաշնակության, խաղաղության ու ընդհանուր իսկական առաջադիմության վրա՝ իրենց բոլո՞ր հետևանքներով...»

Սակայն վախճ Աստծուց (Ում սերը լույս է, անսահման բարի և կենսատու) հարկ է հասկանալ որպես վախ՝ ցած ընկնե-

լուց այնքան, որ չարի ազդեցության տակ կարող են վերանալ կամ պակասել ցանկությունն ու պահանջը հաղորդ լինելու Աստուծոն խոսքին, Նրա պատգամներին, որը նշանակում է սկիզբ կամ արդեն իսկ օտարացում ու հեռացում Աստծուց: Եվ այդ վիճակում ամենաահավորն ու ամենակորստաբերը (նույնիսկ ակնթարթի տևողությամբ իսկ, ամենաթեթև) տարակույսի, կասկածի առաջացումն է Յիսուսի Աստվածության, Նրա Քրիստոս լինելու և Նրա հարության, Երկրորդ Գալստյան, հետևապես և մեր հոգու անմահության ու հավերժական արդար հատուցման հանդեպ...

*Ուրեմն՝ Աստծուց չի՝ կարելի վախենալ. պետք է վախենալ Նրա հանդեպ մեր մեղանչումից, Աստվածորդուն ուրանալուց և հոգու կորստյան մատնելուց:*

Իսկ մեր հոգին՝ մեր ներքին, իսկական եսը, անաղարտ, անարատ ու ազատ պահելը և լուսավոր, հավերժական կյանքին արժանանալը նախևառաջ ու ամենից շատ մեր Երկնավոր Յո՛ր ցանկությունն է: Իսկ դրա հակառակը չարի, սատանայի նպատակն է:

*Մենք պետք է վախենանք չարին հպատակվելուց, նրա կամքը, նրա ուզածը կատարելուց և կամ դրանց նպաստելուց:*

Եվ ի՞նչը կփրկի մեզ այդպիսի անկումից, եթե ոչ մեր Արարիչ Յոր լո՛յս սերը, որ իր Միածնի միջոցով մեր մեջ էլ ծագեցրեց, պատվաստեց: Ամո՛ւր մնանք այդ սիրո մեջ, դրանով պաշտպանվենք, դրանով ապրենք ու դրանով գործենք, որպեսզի օրը ցերեկով աշխարհում տարածվող խավարը չպատի մեզ, այն էլ՝ ազգովի:

*Եվ մեր անխախտ լույս հավատքը մեզ պահպան այդ անկումից:*

Եվ մեր սերն ու հարատև հավատարմությունը՝ մեր հավատքի Զորագլխին:

Ամեն:

Ծաբաթ, 07 - 07 - 2012թ., ժամը 07:40

## **ԱՍՏԾՈ ԵՎ ՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ**

Աստծո նասին մարդը կարող է իմանալ, հասկանալ, գիտենալ ոչ թե այնքան, ինչքան ինքն ուզում է, այլ ինչքան իրեն տրվում է: Սակայն կա անչափ մե՞ծ ու էական դժվարություն Աստվածածնաշման համար, և դա (հավատքով ընկալմանք) Աստծո և մարդու բնությունների անհամատեղելիությունն է, որից էլ՝ հոգու և նյութի, երկնայինի ու երկրայինի, հոգևորի ու աշխարհիկի տարբերությունը: Սակայն այդ տարբերությամբ հանդերձ՝ Աստված հնարավորություն ընձեռեց մարդուն ճանաչելու իր կամքն ու այն կատարելու պատգամները, իմանալու իր նասին (այնքան, ինչքան ինքն է ուզում) մարգարենների ու, ի վերջո, իր Միածին Որդու միջոցով: Իսկ մարդու՝ Աստծո բնությունը ճանաչելու, իմանալու և հասկանալու Աստվածաշնորհ հատկությունը հավատքն ու հավատարմությունն է Աստծո Խոսքին:

Եվ Աստված ուզեց, որ իր Խոսքն ամբո՞ղջ մարդկությանը հասնի: Եվ դրա համար Աստված մարդացավ՝ իր Միածին Որդուն ուղարկելով աշխարհ, որպեսզի ով տեսնի Նրան, տեսնի Հորը, ով լսի Նրան, լսի Հորը, ով ճանաչի Նրան, ճանաչի Հորը, և ով հավատա Նրան՝ Որդուն, իրապես հավատա Հորը՝ Աստծուն՝ Որդուն ուղարկողին:

Քայ մարդ, դու, որ Աստվածորդու մարդացման սկզբից ևեր վայելում ես մարդկությանը տրված այդ շնորհը և 17 դարից ի վեր քո ազգային-հոգևոր զգացումներով ու ազգային լեզվանտածողությամբ կարող ես դարձյալ պետականորեն վայելել քո ազգին տրված այդ շնորհը, այսօր, սակայն, մի՞թե չես անզգայացել, «սառել» այդ շնորհի հանդեպ, որն ինքը կյանք լինելով իմաստավորում և փրկում է քո և քո սերնդի կյանքը: Չաե՛տք է այդ կյանքը դարձնել «խաղ ու պար»՝ ընկալվող ու կիրառվող միայն հորիզոնական հարթությամբ:

Այո՛, ծիշտ է, որ այդ շնորհը կյանք է նաև հորիզոնական ընթացքով՝ ուտել, խմել, հագնել, ծեմել, վայելել՝ տնտեսությամբ, կրությամբ, մշակույթով և այլն, սակայն այդ շնորհը նաև ու **առաջին հերթին** կյանք է ուղղահայաց ընթացքով, ոչ թե դեպի ներքև սլացող, անկումային ընթացք, այլ վերասլաց, երկնային ընթացք:

Մեր նախնիք մեծ մասամբ և հիմնականում ապրել են վերասլաց կյանքով, որով մենք ևս և մեր երեխաները, մեր թոռները և նրանց թոռներն էլ կարող են այդպես ապրել և պետք է ապրեն ու վայելեն, բայց կա խոչընդոտ: Ու այդ խոչընդոտը այլասերումն է: Յեռու մեզնից այլասերումը՝ հոգևոր, գաղափարական, բարոյական ու ըստ այնմ՝ կենսաձևի այլասերումը, որ արդեն իսկ համակելով մարդկությանը՝ համակում է նաև մեր ազգին, իսկ մենք կարծես ընդարձացած կամ անտարբերացած, անզգայացած ու անզոր դիտում ենք՝ առանց անդրադառնալու, միջամտելու ու եթե պետք է՝ պայքարելու և փրկելու այլասերումից մեզ ու մեր սերունդը, մեր հայրենիքն ու պետությունը:

**Զգո՞ւշ լինենք:** Ծա՛տ զգույշ, որովհետև կյանքում մեր ներկայիս կեցվածքը և դերակատարությունը, շատ բաներում՝ նաև անտարբերությունը, բափթիվածությունն ու անգործությունը դատապարտելի են, մեղանչում են, որովհետև դրանք նշանակում են արհամարհանք Տիրոջ խոսքին, պատգամին ու, ի վերջո, նաև ավելին. ուրացում, դավաճանություն՝ մեզ համար խաչի վրա Նրա հեղած արյան հանդեպ:

Չարի հնարքներից է մահացու այլասերումը ներկայացնել պլայան լուսավորությամբ՝ խաբելու համար:

**Զգո՞ւշ,** այդ լուսն իրականում խավար է՝ տանող դեպի անդունդ, տառապանք և կորուստ հավերժական: Իսկ մեզ համար, որպես մեր ազգի մեծ ու սուրբ նախնիների ժառանգություն, Տիրոջ շնորհով վերապահված է իրական լուսը՝ տանող դեպի կյանք երանելի... եթե նրանց նման հավատարիմ մնանք հավատքին՝ հավատարմությամբ մեր Աստվածատուր ազգին, հայրենիքին, պետությանը, որով և մարդկությանը:

Երեքշաբթի, 28 - 06 - 2009թ., ժամը 23:20

### **ԿՈՒՐՈՒԹՅՈՒՆ**

**(Որը դեռ կյանք ունի, եթե հոգուն չի վերաբերում)**

Արդյոք հոգեպես կո՞յլը ենք և չե՞նք հասկանում մեր կուրությունը: Իսկ եթե հասկանում ենք, որ չենք տեսնում, ինչո՞ւ չենք ուզում ու չենք ջանում այդ կուրությունից բուժվել, որպեսզի դեռ լինենք ու խսկական կյանք ունենանք, իրապես ապրենք:

Սակայն մենք, որ ավետարանական խոսքով՝ «ընկած էինք, բայց ոչ կորած» և մեզ հասած բազում ցնցումներից խարիսվելով ու խարիսափելով հանդերձ, այնուամենայնիվ, վերապրումի ճանապարհներ էինք փնտրում, գտնում ու մեր երկարատև դիմացկունությամբ նաև վերակազդուրվում և շարունակում մեր ազգային ընթացքը, սակայն հետո՝ 19-րդ դարի վերջերից, երբ մեր նորաթուխ, օտարընթաց վայ դեկավարներին թվաց, թե սեկուլյար գաղափարներին և սեկուլյար քաղաքակրթությանը հետևելով՝ իրենք ավելի օգտակար ճանապարհի վրա են, խլեցին ազգի կառավարման դեկը: Եվ մեր ժողովուրդը, կամա թե ակամա, ընդհանուր առնանք քշվեց իրեն խորթ ու վճասակար ուղղություններով: Պատմական երևույթ, որ մինչև հիմա այս կամ այն ծևով դեռ շարունակվում է, և մնում ենք ապակողմնորոշված, ճիշտ ճանապարհը չենք փնտրում, այլ լավագույն դեպքում հետ ու առաջ դրկում ենք՝ ավա՞ն, մեր դեկավարներով ու առաջնորդներով, ուսուցիչներով և քարոզիչներով հանդերձ... Բայց դրա «լավագույն» հետևանքը, չարյաց փոքրագույնը մեր հոգևոր ու ազգային էության ուրացումն է և դրանցից հեռացումն ու օտարացումը, իսկ մեծագույն չարիքը եապես կենսագրկված՝ մեր հանձնվելն է չարին՝ ի հավերժ կորուստ:

\* \* \*

Երբ շփոթվում, խառնվում է հոգեկան տրամաբանությունը, և կյանքի սկզ սպիտակ ու սպիտակը սկ է ընկալվում, և ճշմարիտն ու իրականը ծուռ հայելու մեջ ենք տեսնում, այնժամ խարխվում, աղավաղվում է նաև հարազատի, ծշտի ու օգտաշատի մեր ընկալման և գնահատման հատկությունը, և վերջինն սկսում է առաջնայինի տեղ ընդունվել, իսկ առաջնայինը՝ ապարդյունորեն վերջին տեղերում փնտրվել կամ բոլորովին չփնտրվել, արհամարհվել: Եվ եական հարցադրում. հայի տոհմիկ նախասիրություն, ցանկություն և բնածին կամք, ուժ, գորություն և կարողություն գոնե ինչ-որ չափով մնացե՞լ է՝ ճիշտն ու ճշմարիտը փնտրելու և գտնելու համար:

Ու ազգի կողմից իր կյանքի նկատմամբ այս ապակողմնորոշումը վերաբերում է թե՛ մեր հանապազօրյա և թե՛ հեռագնա խնդիրներին, կարիքներին, պահանջներին, որոնք եական նշանակություն ունեն միշտ՝ այսօր, վաղը և հավերժ:

Մենք, կարծես, ի տարբերություն մեր նախնիների, մեր մեծերի, մեր սրբերի ու մեր նահատակների (ի դեպ, վերջիններիս թիվը բացարձակ առումով գուցե աշխարհում մեծերից չէ, սակայն հարաբերական առումով շատ մեծ է), ստացվում է, որ փոքրարիվ ազգ ենք, բայց երկնքում մեծարիվ բարեխսուներ՝ «լորրինգ» ունենք, այլևս չենք մտածում և հոգ չենք տանում «մեծ ապագայում»՝ երկնքում, մեր հոգիների ինչ վիճակում լինելու մասին, այլ միայն այսօրվա և մեր մարմինների մասին ենք մտահոգվում, մանավանդ՝ մեր դեկավարությունը, թեև Տիրոց կողմից մեզ ասված է, պատգամված ու ուսուցանված է, թե նախևառաջ ինչի՝ մասին պետք է մտածենք, հոգ տանենք և ինչը առաջին հերթին ջանանք առողջ, կենսունակ և գործուն պահել, **որպեսզի մեռած հոգով չմահանանք...**

Մարդկության մասին մտածելը թողնենք առայժմ մի կողմ և վերոնշյալ ըմբռնումով անդրադառնանք մեր անձի ու մեր ազգի վիճակին. իմնականում մեծ, շատ մեծ ամտարբերություն, շփոթություն ու ապակողմնորոշում է առկա մեր հայ իրականությունում...

Վազում ենք կյանքի ստվերի՝ հետևից՝ չնկատելով կամ անտեսելով իսկական կյանքը, աշխատում, տանջվում, հաճախ խախտումներ, երբեմն էլ հանցանքներ ենք գործում՝ իր լավ՝ ապրելու, երջանիկ լինելու համար, մինչդեռ իսկական երջանկությունն արհամարհում, անտեսում, դուրս ենք մղում մեր կյանքից:

Այնուամենայնիվ, շատ լավ է, որ նաև ցանկություն ունենք դուրս գալու շատ հարցերում մեր տկար, թշվար ու կաշկանդ-ված վիճակներից և զորեղ ու հարուստ ազգ դառնալու, նաև այդպիսի երկիր և պետություն ունենալու, բայց դրան հասնելու մեր ջանքերը հակառակ ուղղությամբ ենք գործադրում:

Ինչո՞ւ է այդպես, ինչո՞ւ չենք հասկանում, չենք տեսնում, չենք ուղղվում: Ինչո՞ւ, որովհետև չարի՝ թշնամիների՝ մեր նկատմանք դաժան ու երկարատև ջանքերի և մեր էլ շեղումների արդյունքում մեր հոգին տկարացել ու նաև կորցրել է երկնապարզ տեսողությունը. չի տեսնում կամ շատ սխալ է տեսնում: Ինչո՞ւ, որովհետև մեր կամքը տկարացել, մասամբ էլ աղավաղվել է, և դրանց բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարն էլ խամրել, անզգայացել ու մասամբ այլասերվել է, ինչպես և մեր բարոյականությունը:

Անդրադառնալ պետք է մեր այս վիճակին: Անտարակույս, պետք է, հատկապես նրանք պետք է անդրադառնան, ովքեր ի պաշտոնե կոչված և պարտավոր են խորամուխ լինելու, լուծումներ գտնելու, ծրագրելու, դրա կենսագործումը կազմակերպելու ու ըստ այնն ազգը, երկիրը և պետությունն առաջնորդելու, կառավարելու: Եվ մտածենք նաև, որ ինչպես առաջնայինն ու կարևորը հագուստը կամ տունը չէ, այլ դրանց մեջ գտնվող մարմինը և դրա բարեկեցությունը, այնպես էլ մարմինն ու ապրուստը չեն կարևոր, այլ հոգին և նրա հավերժ գոյության վիճակը:

\* \* \*

Տարիներով լսվում էին հատկապես մեր ազգի մեծագույն հատվածի՝ Սփյուռքի կուսակցապետերի կոչերը և համարյա

Առևյուղ բովանդակությամբ՝ Եկեղեցիների խորաններից հնչող կղերականների քարոզները, թե մեր մշակույթն է կարևոր, մշակույթը և մեր լեզուն. մնացած բոլորը երկրորդական են, պահպանենք հայ մշակույթը և լեզուն, որպեսզի չկորչենք, գոյատևենք...

Բայց մեր ազգի մեծերը, սրբերը և վասն հավատո ու վասն հայրենյաց նահատակները, ըստ մեր հավատքի պատվիրանների, այլ բան են պատգամում, և մեր (ու նաև մարդկության) պատմության տրամաբանությունն էլ այլ բան է ասում, ու ամենակարևորը՝ այլ բան է ասում մեր կյանքի սահմանադրություն Ավետարանում Փրկչի Աստվածային խոսքը. «Եթե ամբողջ աշխարհն իսկ շահես, բայց հոգին կորցնես, օգուտդ ի՞նչ է»: Այո՛ ու երիցս այո՛, ոչ մի օգուտ չունես, ոչ մի բան էլ չունես, որովհետև ինքոդ իսկ կորած ես և չկա՞ս այլևս՝ որպես Աստվածակերտ ինքնություն:

Իհարկե, մշակույթը շա՛տ կարևոր է: Նաև շատ կարևոր է և մշակույթի հիմնասյուններից լեզուն: Ինչպես և շա՛տ կարևոր են հայրենի հոնը և պետականությունն ու պետությունը, բայց դրանց կարևորությունը չի՝ կարելի համեմատել հավատքի և դրանից բխող ու դրա վրա հիմնված գաղափարի և բարոյական արժեհամակարգի կարևորության հետ: Չի՝ կարելի համեմատել, որովհետև ազգի հավատքը՝ հոգեկանությունը, և դրանից բխող ու դրա վրա հիմնված գաղափարը, բարոյականությունը և կենսակերպը, ապրելակերպը էական ու առաջնային նախապայման են, որպեսզի մնացած՝ թե՛ երկիրը և պետականությունն ու պետությունը, թե՛ լեզուն ու մշակույթը և մնացած ամեն ինչը լինեն, գոյատևեն, գորանան, գարգանան, աճեն ու բարգավաճեն...

Նայը պետք է հասկանա՛ այս ճշմարտությունը: Թեև ներկայիս աշխարհում, մեր օրերում դա անսովո՞ր է հնչում, բայց պետք է հասկանա. հոգո՞վ, սրտով ու նաև մարդկային-ազգային գիտակցությանը հասկանա, որ եթե կորցնի այս երրորդությունը՝ **հավատք, գաղափար և բարոյականություն**, այլևս ոչ մի բան, ոչինչ չի ունենա՛ ո՛չ ազգային ինքնություն, ո՛չ էլ երկիր

ու պետություն։ Նույնիսկ եթե Ենթադրենք, որ միջազգային գարգացումների ինչ-որ բերմանք ազգը հավաքվի և կերտի մեծ երկիր ու հզոր, հարուստ պետություն (նավթը գետերի պես հոսի, լեռները ուսկի դառնան, և երկրի սահմանները՝ ծովից ծով), սակայն եթե կորցնի իր հոգեկանությունը, գաղափարականությունը, բարոյականությունը և ըստ այնմ՝ կենցաղավարությունը, այսինքն՝ իր հավատքը, մարդկային-ազգային ինքնությունը, որով և իր էությունը՝ իր հոգին, ապա ընդհանուր գարգացումների բերումով ինչ նվաճում էլ ունենա, ինչի էլ հասնի և դեռ ինչ էլ որ ձեռք բերի, ի վերջո, «շուն ու գելի» բաժին կդառնան, կկորցնի, ինքն էլ հետը կկորչի։

Չե՞նք հավատում սրան, նայենք մարդկության և մեր ազգի պատմությունը, նայենք մեր նախնիների, մեր իսկական մեծերի կյանքը, փորձը և պատգամները։ Բայց նախնառաջ ու առավել ուշադրությամբ անսանք Արարիչ Յոր շնչով գրված խոսքին և Աստվածորդու Ավետարանի պատգամներին, որի համար դարերի խորքում մեր մեծերին շնորհվեցին հայոց տառերի գյուտը և սերունդներին ուսուցանումը...

\* \* \*

Կա մի ազգ երկրագնդի վրա, ոչ պակաս հին, քան մերը և ոչ պակաս ներկայություն ու դերակատարություն ունեցող այսօրվա կյանքում, քան մենք։ Բայց այդ ազգը հազարամյակներով գրկվեց իր երկրից, ոչնչացավ նրա պետությունը, սփռվեց անբողջ աշխարհում և ծաղրի, արհամարհանքի, ատելության ու հալածանքների պայմաններում մոռացավ ոչ միայն իր գիրն ու լեզուն, այլև շատ բան իր մշակույթից ու ապրելակերպից՝ փոխարինելով դրանք միանգամայն օտարով, բայց... Բայց հավատարիմ մնաց և պահեց իր հավատքն ու գաղափարական և բարոյական ինքնությունը։ Այդ ժողովուրդը խոսեց իր ապրած բազում երկրների լեզուներով (սակայն իր ուրույն բարբառով ու առօգանությամբ), մեծ չափով ընկալեց այդ երկրների մշակույթը (բայց առերես), հարմարվեց նաև ապրելաձևին (հաճախ ավելի լավ, ավելի ցայտուն ցուցա-

դրմամբ, քան բնիկ ժողովուրդները), բայց հավատարիմ մնաց, պահեց ու կիրառեց իր նախնյաց հավատքը և այդ անելով՝ հոգով, գաղափարով ու բարոյական արժեհամակարգով կազմակերպեց իր «ներքին աշխարհը» և ազգային ուրույն (գաղտնի) կյանքը՝ մեղա գալով և սրտանց հավատալով ու պաշտելով Աստծուն:

Այդ ազգը, որ իր հոգևոր ու բարոյական անհավատարմությանը ունեցած շեղումներին, որպես հատուցում՝ երկար դարերի ընթացքում «քափառականի ցուցը ձեռքին» աշխարհով մեկ հալածվեց, ճնշվեց, ծաղրվեց, վտարվեց, տառապեց ու կորուստներ կրեց, սակայն այդ ընթացքում մեղա գալով և իր հավատքի հավատարմությունը վերականգնելով՝ կարողացավ ստեղծել իր ներքին (հոգևոր-գաղափարական ու մշակութային) հայրենիքն ու պետությունը և կատարել իր գոյության պատմական խնդիրը՝ հավատքով հոգեպես, ֆիզիկապես և կազմակերպութեն պահպանել աշխարհասփյուռ, բարձր արդյունավետությանը գործուն ազգային գոյություն: Այս ռազմավարական խնդիրի կատարման հիման վրա նոր խնդիր դրվեց. ի վիճակի դառնալ պատմական երկրում դժվարագույն, բարդագույն և հույժ վտանգավոր պայմաններում մեծագույն նվիրվածությամբ, կազմակերպվածությամբ, հնարանտությամբ ու նախնառաջ անձնուրաց նվիրվածությամբ համարյա զրոյից ստեղծել ազգային իրենց բնակչությամբ պետություն և այն (բազում հակառակորդներից) պաշտպանող քաղաքական, դիվանագիտական, գիտական, կրթական, տեղեկատվական, հատուկ ծառայությունների և, իհարկե, ոչ վերջին հերթին՝ մարտական ու ֆինանսական գերակշիռ գորություն: Եվ միաժամանակ դրանց գուգահեռ՝ երկիր-սփյուռք կայուն, հարատև, գործնական և հույժ օգտաշատ հարաբերություններ:

Իրենց կողմից այդ Աստվածապատգամ համարող նպատակը կենսագործելու համար այդ ազգի ճնշո՞ղ մեծամասնությունը բազում դարերի ընթացքում **առերես** ամեն ինչ եղավ, ամեն ինչ կրեց, ամեն ինչ դարձավ, բայց հոգով, հավատքով, գաղափարով, բարոյական արժեհամակարգով ու նաև ներքին

(մասամբ՝ թաքուն) կենցաղով իր ազգային ինքնությանը (որ իր հավատքով է արտահայտվում) հավատարին մնաց, իիմնականում ընդհատակյա, ծպտյալ պայմաններում:

Եվ այդ երկարատև փորձությունների մեջ նրա հոգևոր, գաղափարական և բարոյական ինքնության հանդեպ հարատև, անսասան հավատարմությունը նորագույն պատմության ընթացքում, նոր, արտակարգ դաժան փորձությունների և կորուստների ենթարկվելով իսկ, դիմացավ, չխախտվեց, այլ այդ պայմանների համաձայն վերակազմակերպվելով իրենց ազգային ռազմավարության մեջ, պտղաբերեց. այդ մարդիկ գտան կորցրածը՝ լեզուն էլ, գիրն էլ, արվեստն ու մշակույթն էլ ու դեռ ինչ որ անհրաժեշտ է ուրույն ազգի բնականոն գոյության ու զարգացման համար: Վերակերտեցին ինչ որ պետք էր և վերականգնեցին պետությունը, այն էլ՝ բավականին կենսունակ, դիմացկուն ու հզոր:

Եվ այդ շատ տեսակետներից անհնարին համարվողն արեցին, երբ արդեն իսկ շատ հիմնական բաներ էին կորցրել:

Այնուամենայնիվ, դա արեցին՝ հավատարմությամբ պահելով հիմնականը, էականը, կենսականը՝ իրենց հավատքը և դրանից բխող և դրա վրա հիմնվող իրենց ազգային գաղափարը ու ըստ այդմ՝ մշակույթը: Եվ դա արեցին ընդհանուր առմամբ անկեղծ՝ կոռումպազերծ ու եսակենտրոնազերծ նվիրվածությամբ՝ ազգային պետության ստեղծման, պաշտպանման և զարգացման, կայացման, հզորացման համարյա համընդհանուր ծառայությամբ: Ծառայություն՝ անկախ տարիքից, սերից, նախկին վաստակից, ներկայի դիրքից և անկախ աշխարհի ո՞ր երկրում ապրելուց, ունեցած քաղաքացիությունից, կարգավիճակից:

Եվ հաջողության ու վերելքի համար ոչ մի գաղտնիք չկա, երբ խոսքը վերաբերում է ազգային հավատարմությանը՝ Աստուծո հավատքին, դրանից բխող և դրա վրա հիմնված ազգային գաղափարին ու բարոյական արժեհամակարգին, որոնք կյանքում կիրառվում են ազգի ճնշող մեծամասնության ու հատկապես ամեն կարգի դեկավարության կողմից՝ գործով,

ապրելակերպով, կենցաղավարությամբ ու ընդհանրապես կյանքով:

Եվ եր մենք՝ հայերս, հետևողական ու հարատևորեն հավատարիմ էինք մեր հավատքին (ընդ որում մեր հավատքը կատարյալ է, որովհետև և Հորը, և Որդուն, և Սուրբ Յոգուն դավանող է) և գաղափարապես ու բարոյապես ապրում էինք հավատքով, այդ ժամանակ մենք մեղվի նման հավատարիմ ու օգտակար էինք լինում մեր հոգենոր էռությանը, որով և մարդկային-ազգային ինքնությանը, նույնիսկ եր ճնշված, հարստահարված ու սիրված էր մեր ազգը, և կոտորակված ու գերված էր մեր հայրենիքը: Ու այդ հատկություններով տոգորված, հազարավոր մողոնների հեռավորությամբ օտար վայրերում հայ գրչության՝ գրի ու լրագրության աշխարհում առաջին տպագրություններն էինք ստեղծում. գերված հայրենիքի ազատագրության և նրա ժողովրդավարական սահմանադրության մասին էինք մտածում, մշակում, գործում՝ ազգի հոգենոր և մտավոր առողջության, գործունեության և զարգացման համար, հեռավոր երկրներում վաճեր, եկեղեցիներ ու կրթարաններ էինք կառուցում և ի հավելումն այդ բոլորի՝ մեր Սուրբ Էրգորում ու նաև այլ՝ օտար երկրներում էլ, անկախ գոյություն ունեցող պայմաններից, հայկականությունն էինք վերակերտում՝ ինքնության ճանաչման և պահպանման տեսակետից առաջ անցնելով նույնիսկ պետություն ունեցող շատ այլ ազգերից:

Իսկ իհմա՞ մեր օրերո՞ւմ. թեև ավելի շատ ուսայալներ, ավելի շատ հարուստներ ունենալով ու նաև մեր ազգային պետության առկայությանք հանդերձ, պետականության տեսակետից թվաքանակով և ծնով կանք, բայց բովանդակությամբ ու արդյունքներով այն չենք և կարծես կորցնելու վրա ենք նախկինում այլ վայրերում ավելի ծանր պայմաններում մեր շահած թե՛ բարի անունը և թե՛ վստահությունը: Ինչո՞ւ: Որովհետև մեծ մասամբ նահանջեցինք հավատքի մեջ՝ դավաճանելով մեր էռությանը ու այն ստեղծողին, պարգևողին: Եվ նյութը դրեցինք հոգուց առաջ՝ սկսելով դառնալ, կարծ ասած, նման հեթանոսի, նյութապաշտի...

\* \* \*

**Եթե կույրը չի տեսմում, դա չի նշանակում, որ ոչ մի բան չկա, արև ու լուս էլ չկա:**

Սակայն ըստ մեր հավատքի՝ միշտ էլ հույս կա, որ հավատք ունեցող կույրը կտեսնի և կտեսնի նաև այն, որ երբեք տեսանելի չէ անհավատին: Մեր Տերը դրա՛ համար աշխարհ եկավ, չարչարվեց, խաչվեց, թաղվեց ու հարություն առավ, որպեսզի ով Նրան հավատա, այդ տեսողությունն ունենա:

Սակայն Նրա արյան հեղման շնորհիվ տեսողություն ստացած կույրը, եթե նորից հոգով կուրանա, այլս դատապարտված կլինի հավերժ խավարի: Զգույշ լինենք, որ դա մեզ՝ հայերիս էլ չվերաբերի (կամ ինչքան վերաբերել է՝ բավական է, այլս չվերաբերի): Մտածենք այդ մասին և հավատքով անենք այն, ինչ պետք է, որպեսզի երբեք, ոչ մի դեպքում այդ օրը չընկնենք:

### **Ոչինչ չի կորչում, ոչինչ չի մոռացվում:**

Մայրաքաղաք Երևանի կենտրոնում՝ ներկայիս Ամիրյան փողոցում (բոլշևիզմից դարձի եկած), Եղիշե Չարենցի անվան դպրոցի տեղում կանգնած էր հայ հավատացյալների կողմից որպես հոգու պարտք կառուցված հայկական մի հոյակապ եկեղեցի, որը խորհրդային ժամանակաշրջանում վերածվել էր կինոթատրոնի՝ «Կինո անաստված» անվամբ, իսկ Երկրորդ աշխարհամարտի ավարտից շատ չանցած՝ քանդվեց:

Ինչ-որ Երկրաշարժից կամ արտերկրյա թշնամիներից քանդվեց: Ոչ, քանդվեց հայ կոչված մարդկանց կողմից՝ հայ դեկավարների որոշնամբ: Զարմանալի, ցավալի, աներևակայելի, բայց իրակա՞ն եղելություն:

Դայ մարդը, որ միշտ կովել, պաշտպանել է իր եկեղեցին, Հայկական Երկրորդ կոչված հանրապետությունում ստիպված էր իր ծեռքով քանդել, այն էլ՝ հայ մարդկանց ծափողույնների և հրճվալից բացականչությունների ներքո. «Խավարը վերացրինք, որ լուսավոր ապագա կառուցենք»...

Ինչո՞ւ, ինչպե՞ս եղավ այդ ահռելի փոփոխությունը. Եղավ հայի հոգեբարոյական բռնադատմամբ, որն իր նյութապաշտական բնույթով դեռևս չի վերացել, դեռ մնում է մեր մեջ: Դրա պարզ ու ակնհայտ վկայություններից է անկախացած Հայաստանի հեռուստատեսությամբ խորհրդային հանցավոր կեղծիքներով ստեղծված ֆիլմերի ցուցադրումը, որոնցից մեկն ավարտվում է իրականության ահավոր բռնադատմամբ՝ դարերի անկախազուրկ գոյությունից հետո ծով արյան գնով հազիվ ստեղծված ու ոտքի կանգնող Հայաստանի Հանրապետության՝ բազում կողմերի նենաց ու դաժան դավադրությամբ բռնի վերացումը, գոչելով. «Բացվում էր լուսավոր առավոտը Հայաստանի վրա, և մենք ցնությամբ գնում էինք ընդառաջ՝ նվիրելով նրան մեր սրտի ձայներից, մեր բաղձանքներից հյուսած փրկության քայլերգը»:

Բացի երևանից, հայոց սրբավայրերի քանդումներ եղան նաև Խորհրդային Հայաստանի այլ կողմերում, ինչպես և Խորհրդային Վրաստանում, Խորհրդային Ադրբեյջանում և Խորհրդային այլ վայրերում (Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանում նման քանդումներն առանձին դիտարկման ու գնահատման նյութ են): Ու այդ քանդումներն ուղեկցվեցին երկրորդ աշխարհամարտում հայերի հարյուրիազգարավոր զոհերով (որոնց զգալի մասը օսմանյան թուրք ոճրագործ տիրակալների և նրանց «հանրապետական» կոչված ֆաշիստ հետևորդների կատարած հայոց ցեղասպանությունից և ոռւս ու հայ բոլշևիկների բռնություններից փրկվածներ կամ նրանց որդիներն էին):

Իսկ այդ բոլորի փոխարեն հայ մարդիկ իրենց մայրաքաղաքի տիրող բարձունքի վրա ստիպված կառուցեցին հայ ժողովրդին այնքան ցավեր ու կորուստներ պատճառած Իոսիֆ Ստալինի՝ աշխարհում ամենամեծ արձանը և վայրը կոչեցին «Մոնումենտ»:

Այն ժամանակ շատ բաներով տկար էինք, անզոր և բոլշևիկաբարո բռնուսուցումներից (մանկապարտեզից մինչև բուհ, գյուղից՝ կոլխոզից, մինչև գործարան ու այլ տեղերում

տարվող «ագիտացիայից և պրոպագանդայից») բավականին ապակողմնորոշված ու նաև անզգայացած էինք (թեև որոշ, մեղմ ասած թվացյալ պատկերացումներով այն ժամանակ իբր ծաղկում էինք): Եվ պետք է շատ զգույշ լինենք, լավ մտածենք, որ այժմ էլ այդ վիճակում չգտնվենք, որովհետև թեև իբր բավականին զարգացել ենք, բազմաթիվ քաղաքագետներ, հասարակագետներ, փորձագետներ, ինչպես նաև վերլուծական (այն էլ ռազմավարական) կենտրոններ էլ ունենք, բայց քանի դեռ եապես չենք վերականգնել մեր հոգեկանությունը և դրանից բխող ու դրա վրա հիմնված գաղափարականությունն ու բարոյականությունը, ապա եթե դեռ լիովին իսկ կույր չենք, մեր հոգեկան տեսողությունը թույլ է, վերականգնված չէ: Եվ ըստ երևույթին, դա վերաբերում է մեր ազգի համարյա բոլոր հատվածներին, խավերին ու մասնավորապես ղեկավարությանը՝ բոլոր ոլորտների: **Եվ ստացվում է այն, ինչ որ կա ներկայիս հայ իրականությունում. կույրն ուզում է առաջնորդել կույրի՞ն... Դեպի ո՞ւր...**

Եվ, ով սարսափի, այդ «առաջնորդվողների» մեջ մեր զավակներն ու թոռներն են, մեր նոր սերունդը:

Իսկ կուրությունից մեզ ո՞վ և ի՞նչը կփրկի, եթե ոչ Արարիչ Յոր Աստվածային գութը, ողորմությունը և Նրա Սիածին Որդու՝ մեր մեղքերի համար Խաչի վրա հեղած արյունը, որ մեր կենարար հույսն ու փրկությունն է, եթե... եթե անկոտրում հավատարմությամբ հաստատ պահենք մեր հայրերի հավատը մեր կյանքի ընթացքում և գործերում: Այդ դեպքուն կունենանք նաև աջակցությունը մեր ազգի անմահների՝ մեր մեծերի, մեր նահատակների, մեր սրբերի, որոնց հոգիներն այժմ թեև սիրով, բայց և ցավով նայում, հետևում են մեզ ու նաև բարեխոսում են մեր ու մեր նոր սերնդի համար... Եվ դա մեր ազգի փրկության ու պահպանման հատուկ ռեսուրսն է՝ անզնահատելի ու անփոխարինելի, և դրանից մեր ու սերունդների առավելագույնս օգտվելը պայմանավորված է նախևառաջ սիրով ու մեր հավատարմությամբ Յոր, Որդու և Սուլը Յոգու հավատքին ու այդ հավատքով մեր գործերով՝ հանդեպ մեր հայ ազգի, հայրենիք

Հայաստանի, դրա պետականության (որով և՝ մարդկության): Աստվածաշնորհ օգնությամբ:

Մենք էլ մեր պարտքն ու սովորությունը դարձնենք՝ աղոթել, խնդրել, և կյանքի մեր ընթացքն ըստ այնմ ուղղենք, այսինքն՝ հոգով գնանք, ինչպես Ավետարանում է ասված. «Յոգով գնացեք և մարմնի ցանկությունը չեք կատարի, որովհետև մարմինը ցանկանում է հոգուն հակառակ»: Այսինքն՝ հավատքով և նյութապաշտությունից ու կոռումպացումից զերծ ապրենք, զերծ ընթանանք, զերծ գործենք: Ու նաև ըստ այնմ պայքարենք մեր իսկ էության համար: Որպեսզի մեր էությունը չկորցնենք, այլ պահպանենք ու նաև հոգու տեսողությամբ ընթանանք, որ կյանք ունենանք մենք և մեր զավակները, թոռներն ու սերունդները, հայոց ազգը, հայրենիք Հայաստանը, պետականությունն ու պետությունը: Եվ դա կլինի հօգուտ նաև համայն մարդկության, ու ամենաէկականը՝ ի փառս Սուրբ Երրորդության՝ Աստուծո:

Կիրակի, 29 - 01 - 2017թ., ժամը 23:30

## **ԱՆԵՐԵՎԱՆԻ ՅՈՒՆԱՅԻՆ ԱՎԱՋԱՆՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՔ ԻՐԱԿԱՆՈՒՄ ՊԻՂԾ ԵՆ ՈՒ ԿՈՐՍԱՔԵՐ**

«5-րդ, 6-րդ շարայուները» չեն կարող ստեղծվել ու բազմանալ հավատացյալ, գաղափարական ու բարոյական, ազնիվ, հայրենագետ ու հայրենասեր հայերից, այլ առաջանում են այդ արժանիքներից ու հատկանիշներից զուրկ այլասերվածներից, որով և՝ ծախվողներից...

Իսկ այլասերումն սկսվում է հոգեկանության տկարացումից, նվազումից, անբավարարությունից, որպես հավատագրկության հետևանք: Մրան հետևում են գաղափարագրկությունն ու այնուհետև բարոյականության և ըստ այնմ՝ կենցաղավարության աղավաղումն ու փշացումը, որոնք առնչված են մարդկային-ազգային սրբությունների, ավանդությունների և

մշակութային ու կենցաղային առանձնահատկությունների հետ, ներառյալ՝ կրթությունն ու դաստիարակությունը:

Ու երբ չարք, թշնամին նվաճում և տիրում է մեր ազգի ու հատկապես մատաղ սերնդի մի զգալի (կրիտիկական) չափի սրտերի ու մտքերի վրա, դրանով տեղավորվում է նաև մեր ազգի կառավարման՝ օրենսդիր, գործադիր ու դատական համակարգերում, որով և կրթական, մշակութային, տեղեկատվական հաստատություններում: Եվ ի՞նչ, այն, որ հայ մարդը, հատկապես տղաներն ու աղջիկներն սկսում են մտածել, բարոյապես ծևավորվել ու արդյունքում նաև հավատավորվել այդպիսի կողմերից ստեղծված և կառավարվող մարդկային-հայկականությանը խորք տեսություններով, որոնք տանում են դեպի առերևույթ, իբրև թե մարդկային-հայկականության հոգևորը, մտավորը, գաղափարականն ու նաև կենցաղայինը (մեջն էլ ազգային մոդայի, նորաձևությունների հանդեպ հակումը), սակայն իրականում գլխահակ քշում, տանում են դեպի «Բարելոնի աշտարակ», որտեղից էլ մեծ հավանականությամբ՝ դեպի «Սոլոմի ու Գոմորի» մարդկային գարշելիություն՝ իր բոլոր պիղծ, խայտառակ և կորստաբեր հետևանքներով:

Բայց սա չի՝ կարող հեռանկար լինել Հայկյան ազգի՝ Վարդանանց ժառանգներ հայության համար: Հայությունը չի՝ կարող այդպիսի հեռանկար ունենալ՝ ցավալի մեր մեծերի, սրբերի, նահատակների հոգիների համար, թշվար ու վնասակար՝ մեր իրականության համար և ամոթալի ու կորստաբեր՝ մեր սերունդների համար:

Այդպիսի հետևանք-հեռանկարի տանող ո՞րևէ պատճառ անընդունելի, վճռականապես մերժելի՝ պետք է լինի դեռ հայերեն մտածող, զգացող ու ապրող յուրաքանչյուր հայի համար: Սա առավել ևս այդպես պետք է լինի նրա հոգևոր ու աշխարհիկ դեկավարությունների համար, պետության ու Եկեղեցցու համար և օրինական բոլոր միջոցների գործադրմամբ պետք է վերացվի՝ դեպի պղծություն ու կորուստ տանող ո՞րևէ այդպիսի պատճառ: Ան պետք է վճռականորեն դուրս մղվի, վերացվի և

**Վի՛խարինվի** դեպի լուս, սրբություն ու կյանք պարզեց գործոններով, նախադրյալներով՝ Տիրոջ կամքով:

Այս **Վի՛խարինման** են արժանի Յայլի, Մեսրոպի, Վարդանի և նրանց նմանների ժառանգ հայությունը և նրա սերունդները: Այդ արժանիքը կլինի հայոց կուր հավատքով միասնությամբ, որի առկայության հաստատ երաշխիքը մեր ազգի հոգևոր ու աշխարհիկ միասնությունն ու գործակցությունն է: Ինչպես հոգու և մարմնի՝ միմյանց լրացնելով է մարմնի գոյությունը:

Սեպտեմբեր, 2011թ.

## ՆԵՆԳՈՒԹՅՈՒՆ

Նենգությունը կարողության արտահայտությունն է չարի՝ սատանայի, և բխում է դրա սուտ, խարդախ ու կորստաբեր եռթյունից: Ու այդ եռթյան կատաղությունը կամ լինում է բացահայտ, ցավալի ու արյունալի, կամ լինում է քողարկված, թաքնված, չերկացող՝ ներկայանալով բարետես, բարի, բարեհանբույր, կենսախինդ տեսքով՝ որպես կրթված, խելացի, բարեկիրթ այրեր և կանայք կամ երկրների նպատակներ և դրանք գործադրողներ: Բացի սրանցից, ներկայանում է նաև բարձր գրագիտությամբ և նույնիսկ գիտականորեն ձևակերպված ու մարդասիրությամբ հնչող գաղափարներով, կոչերով, ծրագրերով, բայց բոլորն էլ իրականում պարուրված են լինում չարի քայլայիշ, խժողո, ոչնչացնող նպատակով ու կարողությամբ:

Եվ մարդկության մեջ, աշխարհում չկա մի ուժ, մի կառույց, մի համակարգ, որ կարողանա հասկանալ (թե՝ արտաքին, թե՝ ներքին) չարի դիմակագերծ եռթյունը, նպատակն ու կարողությունը և ոչ էլ ի զորու լինի կասեցնել ու ոչնչացնել դրանց կիրառությունը, գործադրումը, բացի քրիստոնեական հավատքի սրբության իմաստությունից, կարողությունից, գորությունից և մեր հավատքի անձնական, հավաքական ու ազգային-պետական կյանքից՝ Յայաստանյայց առաքելական

սուրբ Եկեղեցու հոգևոր առաջնորդությամբ. պայմանով, որ այն սուրբ պահվի՝ կղերականության և բոլորիս սրբությամբ:

Կարո՞՞ Ենք մեր հոգևոր հայրենիքը՝ Աստվածորդու իջած Վայրը՝ Էջմիածինը և Աստվածապարզն Յայրապետական գահը սուրբ՝ կենսատու, գորեղ, դիմացկուն, գործուն ու փորձություն ներից գերծ պահել... ոչ թե միայն մոմ վառելով և ոչխար մատադելով, այլև մեր սրբությամբ: Սրբությամբ, և դրա մեջ ամեն ինչով՝ թե՛ հոգեկանով, թե՛ նյութականով, թե՛ նվիրումով և թե՛ ամենայն վստահությամբ ու աջակցությամբ, պաշտպանությամբ: Որով և այդ նույնը կանդրադառնա մեր բոլորի վրա. մեր անձերի, մեր ընտանիքների, համայն հայության, հայրենիք Յայստանի, պետության ու մեր ամեն տեսակ իշխանության վրա:

Իսկ ի՞նչ է սրբությունը, և ինչպե՞ս կարող են սրբանալ հայը, նրա ընտանիքը, ազգը, որով և նրա պետականությունը, պետությունը և ամեն տեսակ իշխանությունը:

- Նախևառաջ՝ Արարիչ Յոր՝ Աստուծո սիրով ընկալված ու այդպես էլ կյանքում արտահայտված հավատքով՝ Աստվածորդու Ավետարանով և Խաչով:

- Այդ հավատքով՝ ամբո՞ջ հոգով, սրտով, մտքով, գորությամբ ու եռթյամբ սիրելով Աստծուն և այն ամենը, ինչ Նա ստեղծել է, առաջին հերթին՝ մեր մերձավորին՝ հային ու բոլորին, բոլոր Նրա ստեղծածներին:

- Յարատու ու անխախտ հավատարմությամբ՝ հավատքին, Ավետարանի պատգամներին, ուսմունքին և Խաչի խորհրդին՝ միշտ, ամենուր, կյանքի բոլոր պայմաններում ու հանգրվաններում, զգնությամբ, հետևողականությամբ ու նաև Ավետարանի ինաստությամբ, գիտությամբ և Խաչի զորությամբ:

- Յավատքով սրբանալու անձնական, հոգեկան ցանկությամբ, մղումով, ջանքով ու էապես նվիրվելով ու նաև այդ հոգեկանից բխող և դրա վրա հիմնված ազգային ու համարդկային գաղափարական ու բարոյական ապրումով:

Շաբաթ, 06 - 10 - 2012թ., ժամը 08:00

## ԴԵՊԻ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ

Անաստված գիտակցությունը գուրկ է ինաստությունից, քանի որ ինաստությունը նիայն Աստվածային է, Նրանից է շնորհվում: Անաստված գիտակցությունը կարող է լինել աշխարհիկ ամեն տեսակ գիտությամբ, հնտությամբ և կարող է ունենալ աշխարհիկ, նյութական ամեն տեսակի հաջողություններ (առաջընթաց ու վերելք, իշխանություն և հնարավորություններ), սակայն ոչ իրական երջանկություն՝ հոգեկան գոհունակություն, որ ստացվում է հոգու հավատարմությամբ գործերի դիմաց:

Դայաստանում մի մեծ (և հույժ պատասխանատու) խմորում է տեղի ունենում, մի «անտեսանելի, ընդհատակյա» պայքար, որը միակողմանի է. միայն մեկ կողմի հարձակումով: Իսկ մյուս կողմը միայն դիմադրում է, այն էլ՝ տարերայնորեն, որը թիւ թե շատ կարելի՝ է համարել դիմադրություն, բայց ոչ կազմակերպված, համակարգված և կառավարվող դիմադրություն:

Նրանք, ովքեր բարու և ճշմարիտի՝ Աստվածորդու հետևողները, վկաներն ու ծառայողները պետք է լինեին, մի կողմից մեծ նասամբ կարծես դարձել են խեղճ, թույլ, շվարած, իներտ, իսկ մյուս կողմից՝ եսակենտրոն, գոռողամիտ, ամհետևողական, անուշադիր և, վերջին հաշվով, անկարող՝ **կրելու Տիրոջ Խաչը և գնալու Նրա հետևից՝ միշտ, ամենուր, ամեն ինչում:**

Ինչպես կարելի է փոխել մեր այս վիճակը դեպի հավատքի Աստվածավախ ու Աստվածասեր հետևողականությամբ համարձակ, հարատև ու լուսավոր հավատարմություն Տիրոջ՝ Աստվածորդուն, դեպի Նրա պատգամած կյանքը, ապրումը և գործերը:

Ո՞ւմ դիմես, ինչպես դիմես. խնդրե՞ս, թե՞ պահանջես, համոզե՞ս, թե՞ պարտադրես՝ թեկուզ բարոյապես, բայց Աստծո

խոսքով... Այս պարագայում, կարծ ասած, լրիվ մոռանալով քո **Ես-ը**, գուցե լավ է լինել այն մեծ ականջներով կենդանու պես, քան թե լինել գեշ: Որովհետև այս դեպքում՝ «գեշ լինել» չուզելը կարող է նշանակել Տիրոջ ավետարանական հարցադրումը՝ ո՞ւմ հաճելի թվալու մասին՝ Աստծո՞ւն, թե՞ մարդկանց:

Ոետք է զգույշ, շատ զգույշ լինել, որովհետև «էշ չինելու» և մարդկանց զորեղ ու կարող թվալու մտադրությունն ու ձգտումը կարող են Տիրոջ հանդեպ ուրացումի և նույնիսկ դավաճանության տանել, այսինքն՝ հավերժ կորստի:

Դա կլինի մարդկանց, մեր դեպքում՝ հայերի այն աշխարհիկ հիմարությունը, որ աշխարհը շահելու համար կորցնում են հոգին...

Բայց հանգիստ լինենք, չվիատվենք. խոսենք սրտանց, եղբայրաբար, համբերությամբ, սիրով ու նաև հույսով, որ հավատավոր հայր կանի ամեն բան, որը բարի է՝ Աստվածահան:

Ուրեմն՝ հառաջ Նրա պարզեցած շնորհով՝ կատարելու Նրան հաճելի գործերը:

Երեքշաբթի, 02 - 01 - 1996թ., ժամը 19:00

**ՄԵՆՔ ՀԱՆԳԻՊԵՑԻՆՔ ԹՇՆԱՄՈՒՆ՝ ԶԱՐԻՆ,  
ԵՎ ՃԱՆԱՋԵՑԻՆՔ. ԱՅՆ ՄԵՐ ՄԵԶ ԵՌ  
(Թշնամուն՝ չարին, շատ հեռու չփնտրենք, վտանգը միայն  
դրասում չտեսնենք)**

Թշնամու՝ չարի սատանայական բնույրի հատկություններից է կերպարանափոխվելը: Տարբեր ժամանակներում կործանարար նպատակով ու տարբեր մոտեցումներով, ձևերով, տարբեր տեղերում, պայմաններում, տարբեր դիրքերից է դարանակալում և տարբեր միջոցներով է հարձակվում, որի բացասական հետևանքն ու արդյունքը միշտ չէ, որ ճիշտ, ամբողջությամբ, մինչև վերջ ու անմիջապես է երևում:

Դարց է առաջանում՝ կենսական հարց, թե ի՞նչ կերպարանքով, ձևերով, մեթոդներով և միջոցներով, ե՞րբ, ի՞նչ դիրքից, ինչպես և ինչքանո՞վ է թշնամին՝ չարը, իր սատանայական կեղծիքներով ու կեղծավորությամբ հավատարիմ հայի տեսքով է հանդես գալիս և նրա փոխարեն էլ դատում, արտահայտվում է, գործում ու հայությանն էլ ճանապարհ է ցույց տալիս: Իսկ երբ դա լինում է, նա այդպես գործում է, այդ պարագայում ինչպիսի՝ դրություն է առաջանում և ի՞նչ վիճակ է տիրում հայության հայաստանյան և սփյուռքյան հատվածներում, մեր պետական ու հասարակական, հոգևոր ու աշխարհիկ հաստատություններում... Եվ այդ դրությունը մեր պետական և նույնիսկ ազգային գոյության համար ինչպիսի վտանգ է առաջանում, և **ինչպես կարելի է ու պետք է անհապաղ վերացնել այդ վտանգը:**

Բայց ովքե՞ր են, ո՞ւր են ազգի, հայրենիքի և պետության կոռումպազերծ ու հոգեկանությամբ լի, սրտացավ, գիտակից, հարազատ պատասխանատուները, որ որպես կենսական, լինել-չլինելու խնդիր և որպես իրենց հոգու պարտք՝ անհապաղ և հմտորեն լծվեն այդ խնդիրի կատարմանը՝ այդ վտանգի կասեցմանը կամ չեզոքացմանը:

Մենք՝ որպես մարդ և հայ, նկատո՞ւմ ենք ու մեր ազգը վտանգող հարուցիչները բացահայտելու հարցում ցուցաբերո՞ւմ ենք անհրաժեշտ վերաբերմունք: Չէ՞ որ նույնիսկ անզեն աչքով պարզ երևում են ախտահարման տարբեր նշանները հայկանքում՝ Դայաստանում և Սփյուռքում:

**Ու ևս մեկ հարց.** Երբ ազգը, երկիրն ու պետությունն այդպիսի խնդիրների առջև են գտնվում, որտե՞ղ է սկսվում և վերջանում պատասխանատվությունը՝ ազգի, պետության և հոգևոր իշխանության, դեկավարության, մտավորականության, հայ անհատի ու համայն հայության: Եվ պատասխանատվություն ո՞ւմ նկատմամբ, ո՞ր չափանիշներով, ու արդյո՞ք այդ պատասխանատվության անդրադարձը «մտրակի կամ կարկանդակի» ազդեցությամբ պիտի լինի. հայ մարդուն վայելուրիշ շարժարիթ, մոտիվ չկա՞ չպե՞տք է լինի...

Եվ ի՞նչ վիճակում են հայ ազգը և մասնավորապես հայաստանյան հայությունն այս հարցերի ճանաչման և դրանց լուծման համար: Ու եթե այդ լուծումը՝ որպես ազգային և պետական օրակարգային խնդիր, չի բարձրացված ու չի լուծվում հաջողությամբ, ո՞վ է հաշվում դրա շարունակական հետևանքների կորստաբերության աստիճանը: Այս պայմաններում նի՞թե մեր մտքով, սրտով ու հոգով չպետք է աղաղակենք՝ խնդրենք, աղաշենք, պաղատենք, որ Աստված մեզ հասնի, օգնի:

Այո՛, այդ է մնում ամել, և այդ օգնության մեջ կլինեն նաև մեր խղճի արթնանալը, պետականորեն ու պետականամետ մտածելը՝ հոգևոր իմաստությամբ հանդերձ:

Իսկ այս դեպքում էլ էական նշանակության այլ հարց է ծագում. Աստված ինչո՞ւ պիտի մեզ հասնի: Մենք ինչպիսի՞ն պետք է լինենք, որ կարողանանք փոխվել ըստ մեր նախնիների՝ մեծերի, սրբերի, նահատակների պատգամների և օրինակի, որպեսզի Աստված մեզ հասնի, օգնի:

Մի՞թե սա ազգային, պետական ու նաև հոգևոր կարևորագույն հարց ու խնդիր չէ, նաև առաջնային ու ռազմավարական հարց ու խնդիր: Այդ դեպքում ինչու հարցի պատասխանը չի՝ տրվում, և խնդիրը չի՝ լուծվում ազգի ու պետության դեկավարության կողմից, նաև մտավորականության և մանավանդ հոգևորականության կողմից:

### **Ինչո՞ւ, ի՞նչ է եղել:**

Դարձյալ հուսահատության մատնվելով՝ մարդիկ նորի՞ց պիտի սկսեն քարեր գցել հորի մեջ, որ դժվար կամ անհնար լինի հանելը. ինչպես մեր իրականության մեջ հաճախ տեղի է ունեցել, և մինչև հիմա էլ նետված քարերը ազգի փոսից լրիվ չեն հանվել...

15 - 01 - 2016թ.

## ՆԵՐԱԶԳԱՎՅԻՆ ԹՇՆԱՄՈՒԹՅՈՒՆ (Ազգային տկարության սերմնացանում)

Ներազգային անհիմն կասկածամտությունը, անվստահությունն ու բաժանումը հայ ազգի թշնամիներն են եղել ու կան: Այդ թշնամիներին մենք հիմնականում ինքներս ենք ստեղծում, սնում, աճեցնում ու «մեջտեղ գցում», գործարկում:

**Ինչո՞վ** նախևառաջ ազգի, հայրենիքի և պետության հանդեպ անտարբերությամբ, անազնվությամբ ու, ի վերջո, խորրությամբ:

Մենք և հիմնականում մենք ենք այդ «ներդրումն» անում մեր դեմ՝ դրա մեջ նկատի ունենալով մեր անձնական շահադիտությունը և կամ ինքնապահովումը (самостраховка), և մեծացնում ենք մեր անվստահությունը, կասկածամտությունը՝ դրանով զորացնելով մեր թշնամիներին, նրանց դաշնակիցներին և նրանց՝ մեր մեջ ունեցած գործակալներին:

Քանի որ անվստահությունն ու կասկածամտությունն անտարբերությամբ, տգիտությամբ ու անազնվությամբ են առաջանում ու գործում (առաջացնելով նաև թե՝ զգոնության և թե՝ մարդկային օգտակար ռեսուլտսների սահմանափակումներ), ու երբ դա մեր ազգային ու պետական համակարգում է լինում, ապա խաթարվում են մեր ներազգային ու ներպետական հոգեբարոյական մթնոլորտը, նվիրումի գիտակցությունն ու տրամադրությունը և կազմակերպվածությունն ու գործառույթները: Եվ դրանք հստակ, արագ և բարձր արդյունավետության լինելու փոխարեն ապարդյուն խճվում, կաշկանդվում են անտարբերության, տգիտության ու անազնվության բյուրոկրատական, մեր իսկ («սեփական») սրիկաների կողմից պատրաստված լարիդինքոսներում, որոնք ներկայացվում են իրեն թե հանուն «զգոնության պաշտպանության համար»:

**Ու այդ դրվագքը, մոտեցումը դառնում է մեր միասնության ու առաջընթացի հոլյսերին, ծգողումներին և ջանքերին շղթայ-վելով՝ տաժանակրության դատապարտվածների ոտքերին կապված և շարժումը կաշկանդող թուժե գունդ:**

Իսկ իրենց պարտականություններն արագ, ճիշտ, որակով ու բարձր արդյունավետությամբ կատարելու հանձնառությամբ ազնիվ ծառայողները, ընկնելով այդ «զգոնություն» բանեցնողների «դրբի» տակ, կամ ընկճվում, հուսալքվում, թևաթափ են լինում, կամ ընդգում ու «ավել-պակաս» բաներ են անուն ի վնաս իրենց ու նաև իրենց հավատացածի ու սիրածի հանդեպ, կամ էլ թափառականի ցուաց ձեռք բերելու մասին են մտածում....

Իսկ մի՞թե այսպիսի վիճակում կարելի է զարգանալ, հզորանալ և ոչ միայն ընտանիք, այլև երկիր ու պետություն պահել, պաշտպանել. ու ոչ միայն պահել, պաշտպանել, այլև զարգացնել, բարձրացնել, երջանկացնել՝ համաշխարհային բարձրագույն աստիճանի՝ միշտ հաղթական դուրս գալով կյանքի տարբեր բնագավառներում, պարագաներում...

Մինչդեռ այդպիսի ողբերգական ու նաև կատակերգական վիճակից (որը նաև բավական նուրբ է) դուրս գալու համար ի՞նչ կարելի է անել, ինչպես անել, ովքե՞ր անեն ու ե՞րբ անեն, երբ մեր դեպքում վերելքի կամ անկնան տանող ժամանակն արդեն իսկ ընթանում է, և հաշվիչը միացված է... Ուրեմն՝

**- Ե՞րբ անեն:**

**- Այժմ, անհապաղ:**

**- Ինչպե՞ս անեն:**

**- Ազնվանալով ու ազնվացնելով:**

**- Ինչպե՞ս ազնվանան ու ազնվացնեն:**

**- Դավատքո՞վ:**

**- Ինչպե՞ս այդ հավատքը ստանան, հավատան:**

**- Աստվածապարզե շնորհով:**

**- Ինչպե՞ս արժանանան այդ շնորհին:**

**- Մաքուր սրտով, խնդրելով ու Աստվածապատգամ կյանք ապրելով:**

Այստեղ մեր Երկնային ու հոգեկան, աշխարհիկ ու նյութական զգացումները, գիտակցությունը և կամքը պետք է համատեղ ու միմյանց լրացնելով գործեն, ինչպես և մեր եկեղեցին ու պետությունը:

Փա՛ռք մեզ շնորհներ պարզենող Երկնային արարիչ Յորը, Որդուն և Սուրբ Հոգուն:

Կիրակի, 22 - 09 - 2013թ.

## ԷՎԿԱՆ, ԿԵՆՍԱԿԱՆ ՎԱՂԵՄԻ ՀԱՐՑ

- Ի՞նչ է ճշմարտությունը, քանի՞ ճշմարտություն կա:

- Հավատքով ընկալված ճիշտ պատասխանն այն է, որ մեկ ճշմարտություն կա, որը երկու ձևով կարելի է արտահայտել: Մեկը՝ շատ ճշմարտություններ կամ, որոնք բխում են մեկ ճշմարտությունից, և մյուսը՝ մեկ ճշմարտություն կա, որից բխում են բոլոր ճշմարտությունները:

**Եվ ինչպես որ համարյա ամեն ինչի և հատկապես բարու հանդեպ կա ընդդիմություն, ճշմարտության հանդեպ ընդդիմությունը սուտն է:**

- Եվ դա՞ էլ մեկն է:

- Այո՛, մեկն է, որը երկու ձևով կարող է արտահայտվել: Մեկը՝ կամ շատ ստեր, որոնք բխում են մեկ ստից, և մյուսը՝ կամ մեկ սուտ, որից բխում են բոլոր ստերը:

- Ուրե՞մն:

- Ուրեմն՝ ճշմարտությունը Աստուծոն խոսքն է, որը սրբություն է և սրբացնում է՝ Յիսուսի Աստվածության ճանաչմամբ:

Իսկ սուտը, որից բխում են և որի վրա հիմնված են բոլոր ստերը, Յիսուսի Աստվածության չճանաչելը, մերժելն ու չընդունելն է, որը հոգեզրկում է: Ու այդպիսին եղողները՝ հոգեպես կույրերը, շատ են և շատանում են: Ինչպես շատ է և շատանում է չարությունը:

Մեզ՝ հայերիս (ինչպես և այլ ազգերի), շնորհ արվեց ճանաչելու **ծշմարտությունը** և հաղորդվելու, ապրելու ու գործելու այդ **ծշմարտությամբ**:

Այդ **ծշմարտությունը** ճանաչվել ու գործել է մեր ազգի մեջ դարերի ընթացքում՝ հասնելով մեր օրերը, մեր սերնդին՝ որպես մեծագույն ու սրբագույն ժառանգություն, որից օգտվելը, սակայն, պահանջում է համապատասխան հատկություն, որն զգալի չափով նվազել է մեր մեջ, և պետք է վերականգնենք...

Դարերի ընթացքում **ծշմարտության** հայ ազգային ընկալումն ու կյանքի ապրումը երբեմն զորացել են, երբեմն՝ տկարացել: Հայության մերօրյա սերնդի մեջ նախնիների այդ ընկալումը տկարացել է՝ թե՛ մեր հավատքի տկարացման, թե՛ մեր հոգեբարոյական իմունիտետի՝ վարակամերժ կարողության տկարացման և թե՛ մեր վերջին սերունդների վրա ստիքազմակողմանի, բազմաբնույթ հարձակումների առավել սաստկացման պատճառով:

- Եվ ի՞նչ է պետք անել նման ռազմավարական հեռահար վտանգից չազդվելու, չտարվելու և պատմականորեն լինել-չլինելու այս վիճակից ֆիզիկապես և հոգեպես կենդանի ու առողջ դուրս գալու համար:

- Անկասկած, հիմնական անելիքը նախևառաջ մեր հավատքի զորացումը և ազգային հոգեբարոյական և գաղափարական իմունիտետի՝ վարակամերժ կարողության բարձրացումն է:

- Իսկ դա ինչպե՞ս:
- Հոգևոր վերածննդով:
- Ինչպե՞ս:
- Մեղա գալով, ապաշխարելով և Աստուծո գթությամբ ու շնորհով իսկապես վերահավատավորվելով:
- Կստացվի՞:
- Անպայման:
- Ինչո՞ւ, ինչպե՞ս:
- Կան մի քանի պատճառներ:

**Առաջինը՝** Աստված դեռ սիրում է հայ ազգին: Այլապես վաղուց գրկված լինելով համարյա բոլոր կարգավիճակներից՝ դուրս քշված կլինեինք աշխարհի բեմից:

**Երկրորդ՝** շատ երևույթներ ապացուցում են, որ մեր հոգևոր եռանդը, այնուամենայնիվ, դեռ չի սպառված, խղճի հետ միասին որոշ չափով դեռ առկա է: Այսինքն՝ մեր նախնյաց, մեր մեծերի, սրբերի, նահատակների հավատքին հավատարին մնալու վարձը, որ մեզ փոխանցվել է որպես սուրբ ժառանգություն երկնային «բանկում», մենք դեռ լրիվ չենք ծախսել կամ չենք վատնել, և այդ հոգևոր եռանդի գորության հաշվեկշիռը՝ «բալանսը», թվում է, թե դեռ դրական է:

- Սակայն մենք ի՞նչ պետք է անենք, որպեսզի արժանի լինենք դրանից՝ այդ հաշվեկշիռից օգտվելու՝ ի վիճակի դառնալով կատարել դրա համար պահանջվածը:

- Դարձյալ նույնն անել, ինչ վերը նշվեց՝ հոգևոր վերածննդով փոխվենք բոլորս՝ տարեց ու երիտասարդ, այր ու կին, գյուղի, քաղաքի կամ արտերկրի բնակիչ, հարուստ կամ ոչ, պաշտոնատար կամ ոչ... բոլորս փոխվենք...

- Ինչպես կարող է լինել հոգու թելադրանքով և հոգու պարտաճանաչությամբ պայմանավորված այդ զանգվածային փոփոխությունը:

- Այդ նասին ճիշտ կլինի նախնառաջ հարցնել մեր պետությանն ու եկեղեցուն, աշխարհիկ ու հոգևոր իշխանություններին:

- Այլ աղբյուր, միջոց կա՝, որ 21-րդ դարասկզբին լինի համարյա այն, ինչ եղավ 301 թվականին:

- Աղբյուրը հայության հանդեպ Աստուծո սերը, քարեհաճությունը, օրինությունն ու օգնությունն է:

Միջոցը հայության Աստվածաշնորհ հավատքը և դրանից բխող ու դրա վրա հիմնված Յայ Ազգային Գաղափարը, բարոյականությունը, և ըստ այնմ՝ կենցաղն ու ապրելակերպն է: Ընդ որում՝ այդպիսի գաղափարը մեր հավատքի քաղաքացիականացումը և քաղաքականացումն է, որը տանում է ազգի համընդհանուր համարյա կատարելության:

Եվ այդ բոլորի հետ հոգով առաջացած հայ ազգային ինքնագիտակցությունը, պարտաճանաչությունը, պատրաստականությունն ու պատրաստականությունը, երկնաշնորհ ամեն տեսակ հմտության հետ, կազմում են հայի և հայության իմաստությունը, ուժն ու կարողությունը:

Եվ դրանց հետ է նաև մեր նախնիների՝ մեզ թողած հոգեբարոյական ժառանգությունը, որ կարող է թթվածոր լինել հայության սրբացնան համար 21-րդ դարասկզբում:

Այս և նման օղակներով կազմված հայ ազգի գոյության կենարար շղթան կփակվի, կամբողջանա, և հայոց բոլոր-բոլոր հարցերը կլուծվեն, առկա և պատմական խնդիրները կկատարվեն, իղձերը կիրականանան, ու ազգի, հայրենիքի և պետության հարատև ապահովությունն ու վերընթացը կլինեն **Երկնային աջակցությամբ ու Երաշխավորությամբ:**

Կիրակի, 03 - 02 - 2013թ., ժամը 12:00

## **ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲՆՔԱՎՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՄԵՐ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՄՐՑ, ԹՇԱՎՄԻՆԵՐԻ ԴՐԴՄԱՆ ՄՐՑ, ԹԵՇ ԱՅԼ ՓՈՐՁՈՒԹՅԱՆ ՄՐՑ**

Յայ իրականության մեջ ու Յայաստանում վաղուց ի վեր սկսվել է ազգային կրթության և մշակույթի խեղման գործընթաց:

- Իսկ ինչպիսի՞ն է վիճակն այսօր, շարունակվո՞ւմ են դրսից ու ներսից այդ խեղումն ու աղավաղումը:

- Ինքնասպանություն գուցե տեղի չի ունեցել (դեռ), սակայն ազգային կրթության և մշակույթի հատկապես որոշ տեսակետից խեղված, աղավաղված վիճակը փաստ է, ինչպես և փաստ է, որ այդ վիճակը շարունակում է խորանալ:

- Իսկ դրա հետևանքը. մի՞թե հայ ազգային ինքնության աղավաղումն ու խամրումը և հայ մարդու ազգային ինքնագիտակցության այլափոխմամբ դրա տկարացումը չէ: Եվ սա

**նաև հոգևոր, գաղափարական, բարոյական և մտավոր առումներով:**

- Ակնհայտորեն այդպես է, և այդ խամրումի և տկարացման շափն ու ձևը, բնականաբար, պետք է ստուգվեն, ճշտվեն և օրակարգային հարց դառնան, թե ուր ենք գնում այս վիճակով։ Ինչի՞ կարող է հանգեցնել մեր այսօրվա այդ ընթացքը և ի՞նչ հետևանքներ կունենա հայոց ազգային ինքնազիտակցության, պետական մտածելակերպի և նույնիսկ ազգային ինքնության համար, եթե անզեն աչքով իսկ ակնհայտ է, որ դրանց ընթացքն ու հեռանկարը դրական չեն։

- Այդ պարագայում ի՞նչ հետևանքներ կարելի է ակնկալել հայ ազգի և հատկապես դրա երկու երրորդը կազմող աշխարհասկյուռ հայության ազգային ինքնության պահպանման համար ու նաև Յայաստանի կենսունակ ու ամեն ինչում մրցունակ գոյության համար։ Այս հարցերի արագ և ծզգրիտ պատասխաններն ունենալը ու ըստ այն անհապաղ կազմակերպվելն ու գործելը մի՞թե առաջնահերթ խնդիր չէ ազգի, երկրի և պետության համար։

- Անտարակույս, Էապես կարևոր է և պատմական նշանակությամբ կարևոր։

- Իսկ այդ դեպքում ինչո՞ւ դա չի կատարվում։ Մի՞թե մենք բավականին հասուն չենք և կամ անուղղելի անտարերներ ենք դարձել. թե՞ մեզ զոմբիացնում, ապակողմնորոշում են, որ պեսզի այդ անելու անհրաժեշտությունը չզգանք և չանենք այն, ինչ մեր գոյությանն է վերաբերում, մեր պետության ու նաև ազգային գոյության համար է։ Ո՞րն է դրա չկատարվելու իսկական պատճառը։

- Այդ պատճառի բացահայտումը, իհարկե, շատ կարևոր է, սակայն մինչ այդ, ինչն էլ լինի պատճառը, մենք պետք է անհապաղ կենտրոնանանք ու իրազեկվենք, գիտակցենք մեր այսօրվա վիճակի, դրա ընթացքի ուղղության և դրա հնարավոր հետևանքների մասին։ Եթե մենք այդ մասին իրազեկ ու գիտակ չլինենք, ինչպես կկարողանանք այսօր ճիշտ ապրել, ճիշտ աշխատել, ճիշտ պատրաստվել՝ պայքարելու մեր զավակների,

թոռների կրթության, զարգացման, ըստ այնմ՝ մարդացման-հայացման և նրանց ու բոլոր սերունդների ազգային արժանավոր ապագայի համար...

Ծաբաթ, 26 - 11 - 2011թ., ժամը 23:30

## **ԼՍԵԼՈՎ՝ ԻՄ ՀՈԳԻՆ ԱԼԵԿՈԾՎԵՑ, ԵՎ ՄՏԱԾԵՑԻ<sup>2</sup>**

ԽԵՂԾ Կոմիտաս վարդապետ և թշվա՛ռ վիճակ հայության, երբ նրան անխղճորեն խոցում ու վիրավորում են: Բայց ո՞ւր են նրանք, որ դա թույլ չտան, պաշտպանեն ու մեկ անգամ ևս, եթե ոչ ամբողջ աշխարհին, ապա գոնե համայն հայությանը հայտարարեն, որ Կոմիտաս վարդապետի երաժշտությունը սև չէ, որ ուզում եք այն գունավորել, քանի որ բյուրեղյա աղբյուր է նրա լույս աշխարհի բերած հայ ազգային երաժշտությունը: Գուցե դա արվում է չհասկանալո՞վ, որ չի կարելի խաղալ Կոմիտաս վարդապետի (որով և հայ ազգային երաժշտության) հետ, կամ գուցե արվում է հաճույքի<sup>3</sup> համար, կամ որպես մարզա՞նք, կամ էլ սեփական ես-ի հաստատման համար...

Ու այսպես մտածելուց հետո նաև ուզեցի ասել, որ Կոմիտաս վարդապետը հայ ազգային երաժշտության գոյությունն ապացուցեց՝ մաքրելով այն օտար ու խորք մեղեդիներից, որոնք այնքան խորն էին ներթափանցել ու աղավաղել հայ ազգային երաժշտությունը, որ ոչ միայն երաժշտական աշխարհը, այլև նույնիսկ հայ հայտնի երաժշտագետները չէին կարողանուն զգալ, հասկանալ հայ ազգային երաժշտությունը:

<sup>2</sup> **Կազմողի կողմից.** այս հոդվածն անդրադարձ է Երգի պետական թատրոնում 2011 թվականի նոյեմբերի 26-ին կայացած՝ Կոմիտասի երգերի «ուրույն» մեկնաբանությամբ հատուկ համերգին, որին հեղինակը ներկա էր եղել:

Դրա արդյունքում հայտարարվում էր, թե գոյություն չունի, չկա՛ հայ ազգային երաժշտություն, ու այն մեղեդիները, որոնք հնչեցնում են հայերը, դրանք հայ ազգային չեն, այլ պարսկական, թուրքական, ասորական ու այլ երաժշտությունների ազդեցությամբ առաջացած երաժշտական խառնուրդ են։ Ու այս բոլորի դեմ Կոմիտաս վարդապետն էր, որ իր Աստվածատուր հանճարով, ազգասեր սրտով և մարդասեր զգացմունքներով ապացուցեց, որ գոյություն ունի՝ եղել է և կա՛ հայ ազգային երաժշտություն։ Եվ ոչ միայն ապացուցեց այդ գոյությունը, այլ նաև ապացուցեց, որ այն շատ բարձր մակարդակ ու արժեք ունի...»

Երկար տարիների անձնվեր ու անխոնջ աշխատանքից հետո՝ 1900-ական թվականների սկզբներին, երաժշտմերի միջազգային համաժողովներում Կոմիտաս վարդապետի ունեցած գեկուցումների ապացույցներով երաժշտմերի միջազգային միությունը հայտարարեց Դայ ազգային երաժշտության գոյության մասին՝ միաժամանակ ըստ արժանվույն գնահատելով Կոմիտասի հանճարը։

Դիմա Կոմիտաս վարդապետի երաժշտությունը, որ օտարամուտ խորթություններից սրբված, մաքրված հայ ազգային երաժշտությունն է, չի՛ կարելի, հարկ չկա՛, բոլորովին չկա այն զարգացնելու, գունավորելու, աշխուժացնելու և ինչ-որ ժամանակակից դարձնելու, ինչպես և հարկ չկա մեր միջնադարյան շարականների հետ այդպես վարվելու։ Այլապես ինչպե՞ս զգանք ու պահենք մեր ազգային ինքնությունը, գիտակցությունը, հավատամքն ու էությունը, թե՞ դրանք էլ պետք է մոդեռնիգացնել։ Բայց ազգի սիրույն՝ դա պետք չէ, դա հույժ վտանգավոր է, վնասակար, քայլայող, սպառող և կորստյան մատնող։

Պետք է գգույշ լինենք, շատ դեպքերում մենք սխալ ենք հասկանում արդիականացումը։ Օրինակ՝ ո՞վ տրամաբանական կիամարի և կիամարձակվի մոդեռն դարձնել Միքելանջելոյի կամ Լեոնարդո դա Վինչիի գործերը՝ «Մոնա Լիզա» նկարը կամ «Երիտասարդ Դավիթը» արձանը, կամ մի երևելի ճարտարապետ և շինարար վարպետ սկսեն վերակառուցել,

նոր՝ «ժամանակակից» տեսքի բերել Ակրոպոլի Պարթենոնը: Եղբայր, ով ուզում է Դա Վինչիի, Միքելանջելոյի կամ Ֆիդիասի նման գործեր անել, ազատ է, թող անի, բայց նրանց գործերին ո՞վ կարող է ձեռք տալ և ձևափոխել՝ ինչ-որ բաներ ավելացնելով կամ պակասեցնելով, ինչ է թե ժամանակակիցներին ավելի հասկանալի դարձնելու համար նրանց գործերը: Այդ դեպքում նոր սերունդն ինչպես ճանաչի, հասկանա ու հաղորդվի իր տոհնիկ ինքնությանը...

Արդեն սկսել ենք մոդեռնիզմացնել նաև մեր զգացումները, մեր հավատքը, մեր բարոյական արժեհամակարգը և դրանց մեջ՝ նաև սերն ու հարգանքն ընտանեկան հարաբերություններում, ծնողների ու զավակների միջև, ընկերության ու հարևանության միջև, ու արդեն սկսել ենք մոդեռնիզմացնել նաև հայի հայրենասիրությունը, ազգասիրությունը և դրանց հանդեպ պարտաճանաչությունը, որով և ավելանում են ազգային այլասերումը, պարտազանցությունը, դասալքումն ու փախուստը հայրենիքից...

Աերջերս հայաստանյան մի հեռուստաշնկերությամբ մոդեռնիզմացված էր հնչում ՀՀ օրիներգը՝ «Մեր հայրենիքը». այն օտարուտի երաժշտական երանգներով էին մատուցում Շայաստանի հայտնի երգիչները: Մի ուրիշ հեռուստահաղորդմանբ էլ Սասն խրոխատ պարերն էին մոդեռնիզմացված հաղորդվում Շառլեմի սևամորթների գլխիվայր պարաձևերով: Կամ դրանց առաջ մի այլ հեռուստաշնկերություն մոդեռնիզմացրել էր զորավար Սուլք Վարդան Մամիկոնյանի և նրա զորականների կերպարները. նրանցից մեկը միասեռականի շարժուձևով էր, իսկ ոռւսական առօգանությամբ հայերեն խոսող մի կին վրանի միջից կանչում էր Վարդան Մամիկոնյանին, թե արի, սիրելին, ինչքա՞ն սպասեմ, ել չեմ դիմանում: Վարդան Մամիկոնյանի արտաքինը ևս մոդեռնիզմացված էր, նա բաղնիքի խալաթով էր ներկայացված, վրան ստվարաբղբե մի թուր կապած... Ըստ երևոյթին, դժվար չէ պատկերացնել, թե այսպես ուր կհասնենք, ու ինչպիսին կլինի մեր արդեն իսկ ոչ միշտարական վիճակը՝ բազում չափանիշներով: Ազգի թշնամիները, որոնք զգաստ

հետևում են այս բոլորին, շատ են ուրախանում և մեզ «խրախուսելով»՝ այդ ուղղությամբ մղելու նորանոր միջոցներ են հնարում ու կիրառում:

Օտարասիրությունը լավ է, օտարամոլությունը՝ ոչ: Մանավանդ, երբ այն լինում է ի հաշիվ ազգային հարազատ ինքնության, որը լի է տառապանքներով և բազում դարերի ինքնապաշտպանական մարտերից արյունաքամ է լինում...

Եթի՛ հասկանանք մինյանց: Մենք, մեր նախնիները միշտ ել եղել ենք օտարասեր, որովհետև միշտ եղել ենք Աստվածասեր, որով և մարդասեր: Աստվածորդու պատգամով սիրել ենք մեր մերձավորին, բայց օտարամոլ չենք եղել, որովհետև օտարամոլությունը համարել ենք մեր սեփականի, մեր ազգային ինքնության հանդեպ դավաճանություն, իսկ դա լավ բան չէ, որովհետև ամեն ինչի հետ նաև հոգու կորուստ է, իսկ ո՞ր հայր կուզենա կորցնել իր հոգին՝ գիտակից կամ անգիտակից, կամա թե ակամա դավաճանության համար:

**Զգաստություն, զգոնություն:** Եթե մեր 18 տարեկան տղաները պետք է օր ու գիշեր զգոն և զգաստ լինեն հայրենիքի սահմանային խրամատներում, դիտակետերում, մենք առավել ևս պետք է զգանք ու զգաստ լինենք՝ պահելու համար մեր հոգևոր, զաղափարական և բարոյական դիրքերը, և դա նաև մեր մատա՛ղ սերնդի համար: Գիտակցենք, որ մեր կյանքի որոշ ոլորտներում զգոնության ու զգաստության պակասը հարվածի տակ է դնում շատ բանի հետ նաև մեր տոհմիկ կենցաղից հազիվ մնացածը, մեր մարդկային-ազգային պատիվը, ինքնությունն ու հետևապես մեր պաշտպանունակությունը թշնամու դեմ՝ սահմաններում և հենց մեր երկրի ներսում, հատկապես մեր մանուկների, պատանիների ու երիտասարդների կյանքում:

Այս պայմաններում Աստված օգնի մեզ և տա հավատք, ազնիվ սիրու, իմաստություն ու նաև քաջություն՝ չպարտվելու համար չարին, չապակողմնորոշվելու նրա փորձություններից, չգերվելու նրա բակարդներից, այլ միշտ ու ամենուր հավատարիմ մնալով մեր հայրերի հավատքին՝ անսասան պա-

հելով մեր Աստվածասիրությունը և մարդկային ու ազգային ինքնությունը:



Ամեն ինչ կապի մեջ է, մեկը մյուսի հետ կապված է. նույնապես անցյալը կապված է ներկայի հետ, ու ներկան՝ ապագայի հետ. չխարվենք, չպակողմնորոշվենք, չտարվենք, չգերվենք, չպարտվենք:

Կյանքը և պայքարը, համատարած համադրմամբ լինելով հանդերձ, տարբեր են, բազմաբնույթ և բազմատեսակ, բայց բոլոր տեսակները կապված են միմյանց ու անմիջականորեն փոխազդում և փոխազդվում են թե՛ պարտության և թե՛ հաղթանակի արդյունքում: Չխարվենք, զգոն և զգաստ լինենք, որովհետև այս պայքարի մեջ ևս մեր թշնամին գործածում է խորամանկություն՝ նաև հոգեբանական զգացական գենքերով և մարտավարությամբ:

**Եթե չլինեն զգայունությունն ու զգացողությունը մեր հայ տոհմիկ հնչյունների հանդեպ, եթե չլինեն զգացողությունն ու ըմբռնումը Կոմիտաս վարդապետի մաքրած, հստակեցրած ազգային հնչյունների փիլիսոփայության ազգային հասկացողության հանդեպ, այնժամ Կոմիտաս վարդապետի երաժշտությունն անպայման ինչ-որ անտեղի գունավորումներով ներկայացնելը գուցեն հետաքրքիր ու նաև զվարճալի երևա, բայց երբ կա հայ տոհմիկ, հարազատ հնչյունների զգայունության ու զգացողության ըմբռնումը և ըստ այնմ դրանց արժնորումը, այդ դեպքում չես կարող հանգիստ տեսնել սրբությունը պղծելը կամ մոր կաթի մեջ ինչ-որ գույներ և հավելանյութեր ավելացնելը:**



### **Ստորև**

**Արագ տեղեկություններ Կոմիտաս վարդապետի մասին՝ քաղված Երուսաղեմի Յայոց պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի «Կոմիտասի համճարը» գրքից (Նյու Յորք, 1985թ.):**

Գիտենք որ ան ուսումնասիրած է քրտական երգը, երաժշտութիւնը, վրացիներու երաժշտութիւնը, պարսիկներու երաժշտութիւնը, արաբներու երաժշտութիւնը, բիւզանդական երաժշտութիւնը: Երբ Երոպա ուսանող էր, հետզհետև կը ծանօթանայ ֆրանսիականին, գերմանականին, ռուսականին: Այս ամբողջ ծանօթութիւնները պիտի գործածէր զուտ, մաքուր հայկական երաժշտութիւնը գտնելու իր նպատակին ի սպաս: Եւ այդպէս ըրաւ:

Ուսումնասիրութիւն մը կը ներկայացնէ Երաժիշտներու Միջազգային Յամաժողովի մը, քաջալերութեամբը իր ուսուցիչին որ տեսած էր Կոմիտասի աշխատանքը: Երոպացի Երաժիշտները առաջին անգամ կ'իմանային Յայ Երաժշտութեան մը մասին: Եւ Կոմիտաս կը դառնայ անդամ միջազգային Երաժշտական այս ընկերութեան: 1900-էն մինչեւ 1914 քանի մը անգամ կ'երթա այդ համաժողովներուն նասնակցելու: Եւ ամէն անգամուն ալ ուսումնասիրութիւնները կը կարդայ, երգեր կը ներկայացնէ, ինքը կ'երգէ: Մինչեւ անգամ օտարներէն պզտիկ խումբեր կազմած՝ հայկական երգերը, մեր գեղջկական երգերը կը ներկայացնէ: Այսպէս՝ առաջին հանդիպումով, Եւրոպական, միջազգային արժեք ունեցող Երաժիշտներ իրենց աչքը կը բանան Յայ Երաժշտութեան՝ որ նոր չէր՝ այլ դարերէն կու գար: Եւ իրենք անծանօթ էին անոր:

Ի՞նչ ըրած է Կոմիտաս վարդապետ: Ըսինք որ ծայնագրած է: Եւ ինչպէս: Ուղղակի գիւղերը երթալով, մտիկ ընելով, գիւղացին կեանքին մասնակցելով: ...Եւ այսպէս 3000 եւ աւելի Յայ երգեր արձանագրած է: ....Բայց կ'ըստինք որ պար-

զապէս ձայնագրել եւ երգել չեր իր գործը: Ինքը գիտնական երաժիշտը եղաւ: Մեր ձեռագիրները ուսումնասիրած է: Եւ անոնց մէջն գտած եւ գտած է ճշմարիտ Հայ երգին օրենքները: Նախ գիտենք որ մեր իին երգերուն, շարակնոցներուն մէջ հայկական նօթաներ կան, խազեր կան՝ որոնց իմաստը կորսուած էր դժբախտաբար: Եւ հետեւաբար, 1834 թուականին, Պոլսոյ մէջ, կարգ մը Հայ երաժիշտներ ստեղծեցին նոր խազային գրութիւն մը, հայկական ձայնագրութիւն մը՝ այն՝ որ Կոմիտասն ալ սորվեցաւ եւ գործածեց: Նշաններ են, որոնցմէ ամէն մէկը իմաստ մը ունի, երաժշտական արժեք մը ունի, ժամանակ, չափ, տեսողութիւն, բարձրութիւն, դադար եւ այլ պաշտօններ կը մատնանշէ: Կոմիտաս ոչ միայն այս սորվեցաւ, այլ նաև կորսուածը գտնելու ետևէ էր: Եւ տեղ մը կ'ըսէ. «Ես գտած եմ միայն 113 հատ»: Միայն այսինքն դեռ շատ կայ որ պէտք է գտնեն. Եւ իմ նպատակս այդ է: «Եւ ոչինչ պիտի շեղեն՝ զիս իմ նպատակէս»:

Գտած է նաև որ հայկական երաժշտութիւնը եւրոպականին չի նմանիր: Եւ այս կարեւորն է... Կոմիտաս կ'ըսէ. «Հայկական չէ այդ»: Հայկական երաժշտութեան օրենքները ուրիշ են: Հայ երաժշտութիւնը իհմնուած է քառեակներու, «քերաբորտ»-ներու վրայ, եւ ոչ թէ ուրբնեակներու դրութեան:

... Ի՞նչ եղած է Կոմիտաս Վարդապետի նպատակը: Կոմիտաս Վարդապետի նպատակը եղած է Հայ ժողովուրդի կեանքը վեր բերել, ցոլացնել, հայ գեղջկական երգերուն միջոցաւ: Իր նպատակը եղած է Հայ ժողովուրդին հասկցնել, որ ան ինքնուրոյն Հայ երաժշտութիւն ունի: Ապահովցնել, վստահեցնել, որ ունի: Որովհետեւ եղած են հայեր, որոնք ըսած են, որ Հայը երաժշտութիւն չունի: Անոր ունեցածը արեւելեան երաժշտութիւն է: Արեւելեա՞նը ինչ է: Արաբական եալելի՞ն. արեւելեան է: Թրքական քաշքութե՞նը. արեւելեան են: Կոմիտաս Վարդապետ կը սէ. «Ո՞չ»: Արեւելեան է՝ այո՛, քանի որ այդ մթնոլորտին եւ շրջանակին մէջ կ'ապրի. բայց ինքնուրոյն է: ... Խեղճ Հայ ժողովուրդ. ազգ ես եւ ինքնուրոյն այնքան, որքան միւսները. այդ ոչ ոք կարող է հերքել: Ունիս յատուկ

լեզու, կը խօսիս: Ունիս յատուկ ուղեղ, կը դատես: Ունիս յատուկ մարդաբանական կազմ, որով կը զատուիս այլ ազգերէն ու անոնց կազմէն: Սակայն սիրտդ, որ զգացնանցդ աղբիւրն է, քուկդ չէ եղել, այլ մի ինչ որ ասորա-բիւզանդական եւ հնդկապարսկական է եղել: ճանապարհ կայ, ճանապարհ կայ: Բերնէն ականջ շատ կարծ է. բանեն փաստ՝ շատ երկար» (*Կոմիտաս, Յօդուածներ եւ Ուսումնասիրութիւններ, Երեւան, 1941, էջ 47- 50:*)

Կոմիտաս Վարդապետ չի դիմանար: Եւ գրած է. «Ճայը ինքնուրոյն երաժշտութիւն ունի»: Եւ կապացուցանէ: Կապացուցանէ այդ բոլոր օրէնքներով:

Ուրեմն Կոմիտաս Վարդապետի նպատակը եղած է նաև Ճայ երաժշտութեան միջոցաւ ազգային ինքնագիտակցութիւն արթնացնել կամ զարգացնել: Եւ նաեւ Ճայ երաժշտութեան գեղեցկութիւնը տարածել ուրիշ ազգերու մէջ: Ըրա՞ւ ատիկա: Ըրա՞ւ: Կոմիտաս Վարդապետի նպատակն էր ինքնուրոյն հայ երգը գտնել, յայտնել եւ յայտարարել ու տարածել: Գտաւ Ճայ երգը՝ քառեակներու, «թէրաքրորտներու» դրութեամբ, գտաւ՝ կշռոյթի օրենքը յստակելով, գտաւ՝ շեշտի այդ հարցը լուծելով: Եւ սկսաւ գրել: ....Եւ 1910-ին Պոլիս կ'երթայ: Պոլսոյ մէջ իր երգչախումբը կ'ունենայ: 300 հոգինոց գոհւսն երգչախումբը: Եւ երբոր հայ այդ երգերը բեմ կը բարձրանան, այլս խանդավառութիւնը, ազգային գիտակցութիւնը, ուրախութիւնը, հպարտութիւնը բարձրացող ալիքի պէս ետեւ ետեւի, յաղթական գնացք մը կդառնան: Եւ ոչ միայն Պոլսոյ մէջ, այլ այս անգամ ուր որ կրնար երթալ, Եւրոպա՝ ամէն անգամ որ գացած է Պէրլին, Փարիզ, Ժնևե, Իտալիա, Միջին Արեւելքի մէջ՝ Եգիպտոս-Աղեքսանդրիա, Գահիրէ, Թիֆլիս, Պաքու, երգչախումբեր կազմած է եւ այդ երգչախումբերով ներկայացուցած է Ճայ երգը: Անշուշտ նաեւ կրօնական երգերը:

...Կարծես ցեղային երաժշտական վերապրոյ հանճարէ մը իր ստացած յայտնատեսութեան լոյսովը կը զատէ հարազատ Ճայ եղանակները օտարամուտ երգերէն: Այդ ընտրուած երգերն ալ իրենց կարգին նոյն յայտնատեսութեան լոյսով կը

**յղկէ, մաքրելով զանոնք անոնց վրայ խաւ կապած ու անոնց բնութիւնը եղծող օտարամուտ կամ ժողովրդական աղաւաղումներէ եկած տարրերէն. Եւ կ'ունենայ զանոնք իրենց սկզբնատիպ, առոյգ վայելչագեղութեանը մէջ:** Մասնաւորաբար, այսպէս, մեր կրօնական երգերը: Իր բացարձակ ծաշակին անվերադառնալի վճիռներուն տակ, կը ձգե իրենց վրայի վերջամուտ, բայց թերեւս դարերէ ի վեր խաւացած անհնաստ երկարաձգումները, արեւելեան զարդուորումները, մեղկ ու բառորդ ձայնային (էնհարմոնիգ) ծամծնուքները:

«Այսպէս մէջտեղ եկած հարազատ հայ եղանակը՝ կրօնական ըլլայ թէ ժողովրդական, պարզ է, ժումկալ եւ առնացի գիծերով, զուարութեանը մէջ իսկ լուրջ, ու տիրութեանը մէջ իսկ երանական, բանաւոր՝ կառուցուածքով, բայց եւ զարմանալիօրէն կենդանի, խորեռանդն՝ միեւնոյն ատեն կորովի ու շնորհալիօրէն քաղցր, եւ գերագոյն գաղտնիքը իր անասելի հմայքին (պիտի ըսեմ սուրբ հմայքին) դէպի խորիրդաւոր, աստուածային ներկայութիւն մը թեւող թռիչքով մը՝ վսեն, խոռվիչ: Կոմիտաս Վարդապետի այսպէս մեզի բերած Յայ եղանակը իր բնական պայծառութեամբը, եւ իր առնացի կորովովը, իր մաքուր զգաստութեամբը յայտնապէս արեւմտեան-արհական է, բայց եւ իր արեւահամ քնքշութեամբը, իր երազայնութեամբ՝ արեւելեան միեւնոյն ատեն: Ու ի վերջոյ՝ ոչ այդ եւ ոչ այն. ինչո՞ւ չըսել մէկ բառով՝ հարազատորէն եւ ինքնուրունապէս Յայկական է. հայկական միստիգէ մը բխած» (Ծահան Ռ. Պէրպէրեան, Կոմիտաս Վարդապետ, Անձը եւ Գործը, իր ծննդեան հարիւրամեակին արիթով, 1969, Նիւ Եորք, Առաջնորդարան Յայոց Ամերիկայի, էջ 27, 28):

Այս երգերուն մէջ կայ բովանդակ կեանքը Յայ ժողովրդին: Ծահան Պէրպէրեան հանդիպած է Կոմիտաս Վարդապետին շատ հետաքրքրական պայմաններու մէջ: Փարիզ, 1906-ին, Սորբոնի մէջ ուսանող է, եւ Ելուպական բոլոր երաժշտները, երաժշտութիւնները գիտցող հայկականին մասին արհամարհանք ունեցող, որովհետեւ «իմ ամբողջ լսածը Պոլսոյ կոյ-կոյ-

Աերն էին» կը սէ, մեր Եկեղեցիներու տիրացուները՝ իրենց թոյլ, մեղկ, քաշքուք եղանակներով, եւ եթէ հայրենասիրական երգ մըն ալ կար, ան ալ եւրոպական «մարշ» ոճն էր: Այս Շահան Պէրպէրեանը հրաւեր կը ստանայ Օր. Մարգրիտ Բաբայեանէ հանդիպելու Կոմիտաս Վարդապետի մը՝ որ Յայաստանէն եկած է եւ պիտի խօսի Յայ երաժշտութեան մասին եւ Յայ երգը պիտի ներկայացնէ: Կասկածելով, անտարերութեամբ գացի, կը սէ Շահան Պէրպէրեան, սակայն երբ բերանը բացաւ եւ իր առաջին ձայնը արտաբերեց եւ ներկայացուց մեր այդ գեղջկական երգերը, այն ատեն զգացի, որ ուրիշ տեսակի ներկայութեան մը մէջ են: Ուրիշ բան է այս: Եւ ճիշդ այն բանն է որ ես կարծես հոգիին մէջ կը զգայի, կը սպասէի, կ'ուզէի տեսնել ու լսել: Եւ ի վերջոյ՝ իբրև Սողոս մը ներս մտայ եւ իբրև Պօղոս մը դուրս ելայ, այս անգամ ինքզինքս առաքեալը, աշակերտը նկատելով Կոմիտաս Վարդապետի: Եւ այնտեղէն իր բարեկամութիւնը կը տեսէ: Եւ Կոմիտաս Վարդապետ շատ մօտիկ եղած է Պէրպէրեան ընտանիքին ալ: Կոմիտաս Վարդապետի այս ամբողջական գործին արդէն տեղեակ, ծանօթ, երբ 1935-ին կը վախճանի Կոմիտաս Վարդապետ, Շահան Պէրպէրեան այդ առիթով կը գրէ իր գրքոյկը՝ ուր կը սէ. «Ու մեր զմայլած հոգիներուն առջեւէն, աւելին՝ խորէն անցուց Վարդապետը, շարան շարան այդ երգերը, որոնց մէջ բովանդակ կեանքն է Յայ ժողովուրդին. ուրախութեամբ աշխատող, զմայլագին երազող, մաքրորէն ու խորագին սիրող, անուշ թախճութեամբ մը կարոտացող, հրաշէկ հոգիով դիւցազնացող, ու միշտ ու էապէս հաւատացող Յայ ժողովուրդին. աշխատանքի արի ցնծերգները, լուսնալուսային պարերգներն ու հարսներգները, միեւնոյն ատեն զգաստ ու խոռվիչ այն սիրերգները, անհուն ու խոր կարուտերգներն ու ողբերգները, իսկապէս աստուածաթոիչ տաղերն ու շարականները: Բովանդակ հոգեկան կեանքը Յայ ժողովուրդին՝ երաժշտացած, ու այս անգամ Վարդապետին Արուեստին մէջ վերստեղծուած, պայծառակերպուած, պայծառածայնուած...» (Շահան Ռ. Պէրպէրեան, Կոմիտաս Վարդա-

պետ, Անձը եւ Գործը, իր ժննդեան հարիւրամեակին առիթով, 1969, Նիւ Եորք, Առաջնորդարան Դայոց Ամերիկայի, էջ 32-33):

Ուրբաթ, 03 - 06 - 2011թ., Ժամը 08:40

## ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻՑ ԱՄԵՆԱՍԵԾԸ

Մարդու ինչքան էլ գորեղ լինի, ինչքան քաջ, հարուստ, առողջ, իշխանավոր և պաշտպանված լինի, այնուամենայնիվ, շատ տկար է ու ենթակա կորստաբեր փորձությունների, փորձանքների:

Ամենահզո՞ր, ամենակարո՞ղ մարդն իսկ անպաշտպան է, եթե նրան չի պաշտպանում Աստված: Մարդն անպաշտպան է տարրեր փորձանքներից՝ վիրուսների ախտահարումից, այլ պատճառներով առաջացած անբուժելի հիվանդություններից, անակնկալ բնական աղետներից, տրանսպորտային կամ այլ պատահարներից, նենդ դավաճանությունից, մատնությունից կամ ավելի ուժեղ թշնամուց պարտվելուց, նրա ողորմածությանը թողնվելուց և այլն:

Բայց այդ և նման փորձանքներից էլ ավելի մեծը և կորստաբերն այն է, երբ մարդ այդ փորձանքներից ոչ մեկին չի ենթարկվում, մնում է զորեղ՝ առողջ, հարուստ, իշխանավոր, տիրակալ, գիտուն ու այս աշխարհի գորեղներին բարեկամացած, նրանց կողմից պաշտպանված և... ամբարտավանանում, ազահանում, կոռումպացվում է, սկսում անիրավություններ գործել՝ մոռանալով, որ Աստված կա, ու հեռանում Նրանից: Ու այնժամ առաջանում է հոգեբարոյական, գաղափարական և խղճնտանքի անկում՝ լինի անձի, լինի հասարակության, լինի ազգի կամ մարդկության:

- Իսկ ի՞նչն է պաշտպանում, փրկում այդ անկումից, կորստից և կյանք պարզեցում՝ խաղաղ, երանելի ու հավերժական:

- Աստուծու սերը, գութը և ներումը՝ Իր Միածին Որդու միջոցով՝ Խաչի վրա հեղված արյամբ, Նրա Յարությամբ, Նրա Ավետարանով, Խաչով և դրանց հանդեպ հավատքի մեր հետևողական ու հարատև հավատարմությունը:

- Ուրեմն՝ մենք արդեն իսկ ստացել ենք պաշտպանությունն ու փրկությունը կորստից, քանի որ ունենք Աստուծու սերը, գութը, ներումը՝ Իր Միածին Որդու միջոցով, և Աստվածային գերագույն շնորհը՝ պաշտել Ավետարանն ու Խաչը: Ել ի՞նչ է մնում:

- Մնում է պահելով հավատքը՝ չվատնենք Աստվածաշնորհ բարիքները: Ինչ ել լինի, չմոռանանք, չուրանանք չմերժենք հավատքը՝ իրապուրվելով չարի տարբեր հնարքներից, խոստումներից: Միշտ ու հարատևեն հավատարիմ լինենք հավատքին. ոչ մի դեպքում չտարվենք և որևէ կերպ չարին չերկրպագենք՝ ի կորուստ:

- Ո՞րն է չարը:

- Այն է, ինչ Աստվածությունից դուրս է և մեզ տանում, հեռացնում է Աստծուց՝ դեպի նյութապաշտություն:

Կիրակի, 25 - 01 - 2004թ., ժամը 07:10  
(Երրորդ անգամ Յայաստանում հաստատվելուց  
երկու շաբաթ հետո)

## ԱՅՍ ԼՈՒՍԱՎՈՐՅԱԼ ՀՈՐՁՈՐՁՎՈՂ ԴԱՐՆ ՈՒ ԴԱՐԱՇՐՋԱՆՔ

Պետք է հսկել, զգույշ ու աչալուրջ լինել, որ խավարը լույս և լույսը՝ խավար չկարծենք:

Նույնպես պետք է հսկել, զգույշ լինել, որ ստեղծելու փոխարեն չկործանենք և ստեղծագործելու փոխարեն չարից կորստաբեր բաներ չկապկենք ու նաև կեղտաջրի հետ հարազատ մանկանը ցեխի մեջ չշպրտենք: Ըստ երևությին, մենք դաշտ ենք արել: Յոնքը սարքելու տեղ մեր աչքն ենք հանել,

որով աչքացավից էլ «պրօնելու» փոխարեն աչքից ենք «պրօել»:

Ինչո՞ւ: Որովհետև խաբվեցինք: Եվ խաբվում ենք...

Ինչպե՞ս: Թուլամորթությամբ, երբեմն էլ մեծամտությամբ ու փառասիրությամբ, որով և ուրացնամբ ու մասամբ նորին:

Հետևա՞նքը: Խորթացանք մեր սրբություններից, մեր արժեքներից, որը, վերջին հաշվով, նշանակում է ուրացում, դավաճանություն՝ մեր ինքնության և գոյի նկատմամբ:

Իսկ դրա՝ հետևանքը. թուլացանք, տկարացանք, մասնատվեցինք և մեծ չափով զրկվեցինք մեր երկրից, մեր կենսունակությունից ու մեր վարականերժ կարողությունից:

Այսպիսով, նրանք շատացան, տարածվեցին, զորացան ու հաստատվեցին, իսկ մենք քչացանք, սեղմվեցինք և խախտվեցինք մեր հիմքերից՝ թե՛ ֆիզիկականի և թե՛ հոգևորի առումով:

Բայց ո՞վ ենք մենք: Նրանք՝ նրանք են և կան, ով որ էին: Իսկ մենք՝ մենք արդյո՞ք այն ենք, ինչ որ էինք...

Ավագակը մնացել է ավագակ, բայց սպիտակ ձեռնոցներ է դրել, որ արյունը չերևա ու իր սև գործը շարունակի: Եվ նա ընդունվում է լայնորեն՝ որպես «հաջողակ տեր ու տիրական»...

Իսկ մենք: Արդյո՞ք մենք այն ենք, ինչ որ էինք մեր տոհմիկ էությամբ՝ հավատավոր, գաղափարական և սկզբունքային, ազնիվ, ժրածան ու ստեղծագործ. ազգասեր, մարդասեր ու Աստվածասեր: Թե՛ շարունակուն ենք խորացնել մեր ստրկամտության, օտարամոլության, փոքրոգության, փառամոլության, պաշտոնամոլության և ընդհանրապես նյութապաշտության ու կոռումպացվածության ախտահարվածությունը, որով էլ գերագույն ու անանց արդարությամբ ընկալվում ու համարվում ենք արժանի մեր այսօրվա վիճակին:

Սրանք հարցեր են, որոնք ճիշտ ու անհապաղ պատասխան են պահանջում, որովհետև եթե հարցերի պատասխաններն «այո՛» են, այդ դեպքում ազգի և հայունիքի կործանարար աղետի ահազանգը պետք է վաղուց հնչեցված լիներ՝ զորա-

հավաքի ենթարկելու համար համայն հայության և յուրաքանչյուր հայի, նախ՝ հոգեկան ու բարոյական կորովը և դրանով՝ ամբողջ ազգի ուժն ու ներուժը՝ բազմակողմ ու բազմաբնույթ կարողությունը...

Իսկ եթե պատասխանները «ո՛չ» են, այն ժամանակ գուցե կարող ենք դեռ շարունակել մեր մեջ բավականին տիրական դարձած «Ուր հաց՝ այնտեղ կաց», «Աշխարհը դմակ է...», «Կերած-խմածդ կմնա, պոկիր, քե՛ֆ արա» հոգեբանությամբ ու մտայնությամբ՝ մեր նյութապաշտական ընթացքը...

Բայց ո՞ւր են հարցերը, որ լինեն նաև պատասխանները: Քանի որ բացակայում են հարցերը, չեն լինի նաև պատասխանները: Եվ ովքե՞ր են պարտավոր ներկայացնել հարցերը և իրավունք ունեն պահանջել պատասխանները:

Ո՞ւր են հայոց հոգևոր ու աշխարհիկ իրապես հավատավոր, գաղափարական, բարոյական, ազնիվ ծառաները, որ աշխատեն, պայքարեն՝ ազատագրելու ազգն ու հայրենիքը նախ հոգեբարոյական, գաղափարական և մտավոր շարունակվող կաշկանդումներից, շեղումներից ու այլասերումից, որից հետո մեր քաղաքական, տնտեսական կենսամակարդակի ու ապրելակերպի արժանապատիվ դրության ստեղծումը շատ կարծ ժամանակի հարց կլինի միայն:

Բայց ո՞ւր է, ի՞նչ անենք, ինչո՞ւ չի հառնում մեր նախնյաց սուրբ, իմաստում, հզոր ոգին, որ զարթնեցնի՝ մեզ հոգեբարոյական թմբիրից ու մեղա գանք, նաև սաստի մեզ և ներգործելով առաջնորդի, դուրս հանի կորստյան ճամփից, որին կուլ չգնանք՝ դեպի կործանում, այլ գնանք Աստվածակերտ բարձունքներին:

Երեքշաբթի, 01 - 12 - 2015թ., ժամը 08:15

## ՀՈԳԵՎՈՐ ԲԱԼԱՆՄ ՀԱՇՎԵԿԾԻՌ

Բոլոր մարդկանց մեջ, ըստ Երևույթին, կա թե՝ լավը և թե՝ վատը, թե՝ բարին և թե՝ չարը, թե՝ իմաստունը և թե՝ հիմարը, և, ի վերջո, կա թե՝ անմեղը և թե՝ մեղավորը: Մեկ խոսքով՝ մեր մեջ կան թե՝ դրական և թե՝ բացասական հատկություններ: Եվ քանի որ դա, ըստ Երևույթին, բնական վիճակ է, ուրեմն դա չէ հարցը, այլ հարցը մեր միջի դրականի և բացասականի հաշվեկշիռը՝ «բալանս» է, դրանց որ հատկության ինչ չափով գերազանցելն է... Ու նաև հարց է, թե ե՞րբ, **մեր ո՞ր վիճակում** են մեր այս կամ այն հատկությունները գլուխ բարձրացնում, գերակշռում, տիրում մեր մեջ և մեզ ուղղում խոհերի, խոսքերի ու արարքների՝ դրական կամ բացասական:

Երկի թե ինչպես վիրուսը յուրաքանչյուր մարմնի մեջ կա, սակայն չի ազդում մարդու վիճակի, տրամադրության ու գործունեության վրա այնքան ժամանակ, քանի նրա օրգանիզմը որոշակի աստիճանի չի տկարացել, այնպես էլ մարդու մեջ չարը, բացասականը (հոգևոր վիրուսը) չի կարողանում գլուխ բարձրացնել, քանի դեռ մարդը, մեր դեպքում՝ հայը, չի չարաշահում իր Աստվածաշնորհ ազատությունը, իրեն տրված ազատ կամքը, չի մեղանչում և **առողջ, գորեն՝ և պահում իր հոգերարոյական իմունիտետը, կորովը, վարակամերժ հատկությունը:**

Իսկ չի՝ կարելի արդյոք այս պատկերն ու նրա համեմատությունները բացատրել մարդու, հայի սրբության աստիճանով, մարդու սրբության և մեղավորության հաշվեկշռով, նրանով, որ մարդու մեջ ինչքան «բարձր» է սրբությունը, այնքան նա զերծ է մեղքից, մեղք գործելու գայթակղությունից՝ փորձությունից:

Եվ, ըստ երևույթին, մի հանգամանք ևս. թշնամին՝ չարք, մեղքի խայթոցով հարվածում և տիրում է մարդուն, երբ նա «քնած» է, երբ նրա մեջ բուլացել, պակասել կամ վերացել են հոգեկան ու ըստ այնմ՝ գաղափարական ու բարոյական զգոնությունն ու հատկությունը, կարողությունը և քիչ-քիչ տեղի տալով փորձություններին, գայթակղություններին՝ աստիճանաբար ընկղմվում է «քաղցր» մեղանչնան մեջ՝ հարվածի տակ դնելով իր իսկական ես-ը՝ անմահ հոգին:

Ուրեմն, եթե մարդու մեջ բարու և չարի հաշվեկշիռ՝ բալանսը, 100%-ով սրբության օգտին է, ապա մարդու անխոցելի է: Բայց մարդը բացարձակ 100%-անոց վիճակում չի կարող լինել, քանզի բացարձակ է միայն Աստված՝ Արարիչ Հայրը, Միածին Որդին և Սուրբ Հոգին: Դրա համար մարդը՝ քրիստոնյան, հայը պետք է միշտ արթուն, զգոն և գրահավորված լինի հավատքով և հավատքի գործերով՝ ծառայելու Աստծուն, ծառայելով իր ազգին՝ հայությանը այնպես, որ հայությունն էլ ծառայի Աստծուն՝ ծառայելով մարդկությանը այնպես, որ մարդկությունն էլ ծառայի Աստծուն՝ միշտ, ամենուր, ամեն ինչում:

Ու այս դեպքում ամբողջանում է Հայ Ազգային Գաղափարախոսությունը, որը բխում է և հիմնված է Աստուծո հավատքի վրա՝ Ավետարանով և Խաչով. «Հայը ծառայում է իր Արարիչ Հորը՝ Աստծուն՝ ծառայելով հայ ազգին, հայությանն ու հայկականությանը, որպեսզի դրանք էլ ծառայեն Աստծուն՝ ծառայելով մարդկությանը, որպեսզի մարդկությունն էլ ծառայի Աստծուն՝ միշտ, ամենուր, ամեն ինչում»:

Ծաբաթ, 12 - 12 - 2015թ., ժամը 08:30

**ՍՏԵՂԾԵԼՈՎ (աշխատել, մշակել, արտադրել)  
ՀԱՏՈՒՑՎԵԼ (սնվել, աճել ու բազմանալ),  
ԵՐՉԱՆԿԱՆԱԼ (սիրելով մերձավորին)**

Մի՞թե այս նպատակով, օրենքով և բնությունով չի ստեղծվել մարդը, մարդկությունը:

**«Առավոտ լուս, արեգակն արդար...»  
Ներսէն Ծնորհայի**

Մարդը, մարդկությունը կարիք ունի իրազեկվելու, մանավանդ՝ իմանալու իր ով լինելը:

Օրինակ՝ վերջին շուրջ կես դարի ընթացքում աշխարհի առօրյայում ինչպես է բավարարվում յուրաքանչյուր երկրի մարդկանց տեղեկացված լինելու կարիքը, պահանջը: Մինչդեռ ազգի, հասարակության և որոշակիորեն նրա որոշ խավերի տեղեկության և զվարճանքի մատակարարումը հարածունորեն վերահսկող հեռուստատեսության առևտրային, գովազդային գործարարությունը՝ առավելագույն շահ ստանալու (Երբեմն նաև քաղաքական ու այլ) ձգտումով, ըստ երևույթին, իհմնականում իհմնական նպատակ է հետապնդում՝ գրավել մարդկանց ուշադրությունը, որով և **ժամանակը**, ու այդ ընթացքում որոշակի իրազեկությամբ համոզել, հավատացնել և դրանով նրանց մեջ ցանկություն, տրամադրություն, նպատակ, ձգտում առաջացնել՝ անելու բաներ, որ առաջ մտադիր չէին անել...

Եվ հեռուստատեսային այդպիսի գործարարությունը (բիզնեսը) ընդհանրապես հասարակության և նասնավորապես որոշ խավերի ուշադրությունը և ժամանակը գրավելու համար հրամցնում է որոշակի հաղորդումների թիրախ դարձած հեռուստադիտողին համապատասխանող տեղեկատվական, զվարճանքի, ուսումնական, մշակութային ու այլ հաղորդումներ,

որոնցով նրանք արդեն շահագրգռված են կամ կարող են շահագրգռվել, հետևապես և դրա համար **վճարել**: Վճարել ինչո՞վ, **իրենց ժամանակով**: Այն ժամանակով, որը պատկանում է և կարող է տրամադրվել մարդկանց կողմից, ինչը հատկապես սպառողական հասարակությունների համար **փող է** (Time is money):

Ու այս դեպքում արդյո՞ք չի կարելի եզրակացնել, որ անձն ու հասարակությունը իրենց ունեցած արժույթով վճարում են, որպեսզի տեղեկացվեն, համոզվեն ու հավատան այնպիսի բաների, որոնք մինչ այդ իրենց պետք չեն, և մղվեն կատարելու այնպիսի՝ արարքներ, որոնք մինչ այդ չեն ցանկացել անել:

Ու արդյո՞ք չի կարելի եզրակացնել նաև, որ եթե անձի, հասարակության, ազգի ժամանակը հատուցվեց այնպիսի բաներով, որ իրենց պետք չեն, գուցեն վճարակար են և կամ պետք են, բայց ոչ առաջնահերթ, այդ դեպքում չէ՝ որ ժամանակ և միջոցներ չեն մնում կամ քիչ են մնում վճարելու այն բաների համար, որոնք իրենց պետք են, գուցեն էականորեն պետք են՝ իրենց առողջության կամ առաջադիմության, անվտանգության և կամ ընդհանրապես իրենց կյանքի զարգացման ու բարեկեցության համար... Ել չասած իրենց հոգևոր կարիքների բավարարման համար:

Ու այսպիսով, շահույթի ստացումը, մասնավորապես «սպառողական հասարակության» նպատակներից բխող գործունեությամբ, հաճախ լինում է նաև միջոցների մեջ խտրություն շղմող նախահարձակման նման:

Եվ սա եղել է, կա, ու ըստ ակնհայտ միտումների՝ գորանում, ընդարձակվում է նորանոր նվաճումների համար:

Օրինա՞կ: Օրինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում մինչև վերը նշված վերջին շուրջ կես դարը քաղաքներում, գյուղերում, տարբեր վայրերում թվով տասնյակներից սկսած մինչև տասնյակ հազարավոր երիտասարդ ու տարեց կանայք և տղամարդիկ շատ հաճախ տասնյակ մղոնների հեռավորությունից հավաքվում էին մեծ սրահներում, մինչև իսկ մարզա-

դաշտերում՝ ժամերով լսելու ժամանած այս կամ այն այցելու քարոզի կողմից ներկայացվող, մեկնաբանվող և ուսուցանվող ավետարանական խոսքը, պատգամը: Սակայն որոշ ժամանակ անց այդ խոսքն ու պատգամը լսողներն սկսեցին մեծ չափերով նվազել. այն փոխարինվեց հեռուստատեսային հաղորդումներով, շատացան ավետարանական հեռուստաքարոզները (tele-vangelists): Եվ ԱՄՆ հեռուստատեսությամբ անձի ու հասարակության ժամանակը գրավելու մրցակցության մեջ որոշ ժամանակ այն գրավեց իր ուրույն տեղն ու բաժինը: Բայց դա էլ երկար չտևեց: Ժամանակի ընթացքում այն աստիճանաբար սկսեց իր տեղն ու բաժինը զիջել աշխարհիկ նպատակներին՝ «գործարարությանը»:

Բայց ո՞ր, ինչպիսի՞ նպատակներին: Այդ նպատակներն այս կամ այն ձևով և շահագրգռվածությամբ գործում են թե՝ հայաստանյան և թե՝ արտերկրի մեր հասարակություններում:

**Սակայն հարց.** մեր աշխարհիկ ու հոգևոր պատկան հաստատությունները գիտե՞ն այդ նպատակների մասին, զգո՞ն են, հաշվի առե՞լ են դրանց իրազործման հետևանքները, որոնք սպառնում են ոչ միայն հողի կորստով, այլև սպառնում են մեր մտածելակերպին, պատվին, նկարագրին, ինքնությանը՝ հոգու կորստով, որով և ամեն ի՞նչ կորած կլինի: Մտածվո՞ւմ է այդ մասին, մտահոգություն և գործուն դիմադրություն կա՞ դրա դեմ: Գաղափարակա՞ն պայքար, բարոյակա՞ն պայքար, մանավանդ հավատքի՝ պայքար... ինչի՞ն կարելի է վերագրել այդ հարցերում մեր պետական, եկեղեցական և մտավորական պասիվությունը, որ այս գործին նույնիսկ միայն մոտենալն իսկ արվում է «մատների ծայրով», կարծես քաշվելով, ամաչելով: Փոխանակ ամաչել՝ չանելու համար, այլ ոչ թե ամաչել՝ անելու համար: Այս ի՞նչ վիճակ է: Ինչպե՞ս անվանել առկա այս երևույթը հայ ժողովողի մեջ և հայաստանյան հասարակությունում:

Մեր տատերն ու պապերը, մեր նախնիք ինչպե՞ս կանվանեին այս երևույթը, և ինչպե՞ս կանվանի երկինքը: Սա էական, ռազմավարական և պատմական նշանակության հարց է: Ո՞վ, ովքե՞ր են պարտավոր պատասխանել այս ու ննան հար-

ցերին: Եթե այս հարցի հստակ պատասխանը բացակայում է մեր իրականությունում, մի՞թե չպետք է անլռելի դաշնա ազգային ահազանգը...

Երեքշաբթի, 01 - 02 - 2011թ., ժամը 07:00

## **ՄԵՐ ՄԵԾ ԲԱՑՔ՝ ՑԱՎԱԼԻ, ԱՄՈԹԱԼԻ ԵՎ ԿՈՐՍԱԲԵՐ**

Դայ իրականության մեջ մի մեծ մոլորություն է տիրում երկա՞ր ժամանակից ի վեր, որն արտահայտվում է հայ ազգի և հայրենիք Հայաստանի պայմաններին (ու նաև հայ մարդու տոհմիկ ոգուն) անհարիր մտածողությամբ, դիրքորոշմանը ու վարմունքով։ Ասվում է՝ ես անում եմ, մենք անում ենք, մենք պետք է անենք, ինչ որ կարող ենք։ Նոյնիսկ երեմն (այդ մեր «ինչ-որ կարող ենք» անելիքի մասին) նաև ասվում է, թե դա արվում է կամ կարվի մեր կողմից՝ իբր անմնացորդ։

- Իսկ դա ճի՞շտ է. այդպես մտածելը, արտահայտվելը և ըստ այնմ վարվելը ճի՞շտ է։

- Ոչ, ճիշտ չէ, որովհետև դա հարիր չէ հային ու նաև չի համապատասխանում հայության ու Հայաստանի ներկա իրավիճակին, տեսանելի ապագային և ըստ այնմ՝ կենսական պահանջներին։ Եվ չի համապատասխանում նաև հայի տոհմիկ ոգուն, մեր ապուպապերի, մեր մեծերի, մեր մարտնչող հայի ոգուն...

- Դապա ի՞նչն է ճիշտը։

- ճիշտն այն է, որ պետք է մտածենք, ասենք և գործենք, անենք **ոչ թե այն, ինչ կարող ենք, այլ այն, ինչ պետք է**։ Եվ եթե խոսքը վերաբերում է նաև ինչպես անելուն, ապա այդ **պետք եղածը** հարկ է, որ անենք նաև **անմնացորդ՝ շատ ավելի լավ**։ Յետևապես՝ հայ մարդը, աղջիկն ու տղան, այրն ու կինը, աշակերտն ու ուսանողը, բանվորը, գյուղի աշխատողը, մտավորականը և մանավանդ հայ հոգևորականը, զինվորականը և պետական պաշտոնյան, պետք է անեն անմնացորդ, ոչ թե **ինչ**

**որ կարող են, այլ ինչ որ պենոք է:** Ինչ որ պենոք է անել հայության, Մայր Հայաստանի և պետության պաշտպանության համար. ազգի հոգևոր, գաղափարական, բարոյական, կրթական, մշակութային, կենցաղային, քաղաքական, տնտեսական և ֆիզիկական գոյության դեմ ամեն տեսակի ոտնձգություններից, խարդավանքներից, դավադրություններից և հարձակումներից պաշտպանելու համար:

Ի դեպ, այդ հարձակումներն արվում են հարածունորեն ու համարյա ազատորեն՝ առանց հանդիպելու պատշաճ, վճռական դիմադրության, կարծես թե մենք չկանք, մտածող, մտահոգվող և դրա համար պատասխանատվություն կրող էլ չունենք և ինչ-որ համակարգ էլ չունենք. կարծես թե անմեղսունակ, հոգեպես մեռած կամ էլ եսակենտրոնությամբ, նյութապաշտությամբ ու անտարբերությամբ մինչև ուղնուծուծը վարակված, այլասերված խալիս լինենք:

Բայց մեր սահմանների վրա ցրտին ու տոթին հարազատի անձնուրացությամբ ու հավատարմորեն կանգնած մեր արծիվները և նրանց մատակարարումը, կեցությունն ապահովող, նրանց պատրաստակամությունը, պատրաստականությունն ու մարտունակությունը բարձրացնող հրամանատարությունն իսկ բավական չեն մեր գոյատևման, մեր փրկության ու էլ չասած՝ մեր այսօրյա զարգացման, զորացման, մեր բազում կենսական կարիքների բավարարման համար:

Յապա ի՞նչը կօգնի, կփրկի մեզ այս վիճակից: Ի՞նչը, եթե ոչ Արարիչ Յոր գութը, սերը, որ բարձր է ամեն ինչից և որին վերստին արժանանալու համար հարկ է, որ փոխվենք՝ առաջին հերթին մեր միջից իսպառ վերացնելու համար նյութապաշտությունն ու կոռումպացումը, և երկրորդ՝ պարզապես ազնվանալու համար: **Յայ ազգը պենոք է, պարտավոր է ազնվանալ՝ ըստ Յայկյան տոհմիկ, հարազատ, Աստվածաշնորհի հոգեկան, գաղափարական ու բարոյական կերպարի:**

Այդ են ազդարարում հայոց անլուելի զանգերը՝ մաքուր սրտով ընկալելի:

Չորեքշաբթի, 27 - 06 - 2018թ., ժամը 07:30

## ՄԻՐԵԼԻ ՀԱՅ ՄԱՐԴ

Տարեց, երիտասարդ և մանուկ հայ, եղբայր, քույր ու հարազաւ սերունդ, փառք Աստուծո, որ մնացել ենք, կանք և հույս ունենք, որ դեռ կլինենք Տիրոջ հովանու ներքո: Եվ այդ հույսը, որ վեր է ամեն ինչից, անսասան երաշխիք է ներկա ու հավերժ իրական կյանքի:

Եվ մեր բոլորի և մեզանից յուրաքանչյուրի պարտքն ու խնդիրն է դառնալ-լինել հարազաւ, հավատարին ու հաճելի այդ հույսը մեզ պարզեցնին՝ մեր Արարչին և Փրկչին, **որ իր Միաժին Որդու արյանք մեզ հնարավորություն տվեց ազատագրուելու կորստարեր մեղքից:**

Զգտում ես անարատ, առողջ սննդի<sup>՝</sup>, ճիշտ սննդառության ու ապրելակերպի<sup>՝</sup>, որ ունենաս, տեր լինես առողջ, բարեկազմ ու եռանդուն նարմնի<sup>՝</sup>: Շատ լավ ես անում, որ ջանում ես այդպես խնամել, պահել քո արտաքին (ոչ իսկական) ես-ը, թեև այն ժամանակավոր է ու ենթակա աստիճանաբար սպառվելու և կորչելու (կամ մեկ ակնթարթում իսկույն կորչելու) ընդմիշտ:

Իսկ քո հոգու համա՞ր, որ քո ներքին, իսկական ես-ն է՝ շնորհնկալը՝ մշտական, անսպա՛ռ, հավերժական կյանքի, ջանո՞ւմ, անո՞ւմ ես՝ ինչ հարկն է, որ նույնպես լինի առողջ, բարեկազմ (բարվոք վիճակում) ու եռանդուն: Քո հոգին, որն աննահ է ու ապրելու է ընդմիշտ, միայն թե անհայտ է՝ ի՞նչ վիճակում (կարգավիճակում), որը և խիստ մտահոգիչ է, եթե չլինի հույսը և ըստ այնմ՝ մեր ապրելակերպը:

Օրդ սկսելուց առաջ լվացվում, մաքրվում, մարզվում, սնվում, հագնվում, զարդարվում ու հայելու առաջ քեզ նայում, ստուգում ես, թե արդյոք հաճելի կրվա՛ս ծանոթներին ու նաև անծանոթներին և մանավանդ քո մերձավորներին և նախա-

սիրած էակին:

Սակայն մտածո՞ւմ ես, ջանո՞ւմ ես, միջոցներ և ժամանակ տրամադրո՞ւմ ես, որ հաճելի երևաս Նրան, Ում պարտական ես ամեն ինչի համար, որ ունես ու երազում, ցանկանում և ամբողջ գորությամբ ձգտում ես դեռ ունենալ՝ տեսք ու փայլ, առողջություն և կեցվածք ու նաև խելք և քեզ ներկայացնելու շնորհը, կարողություն ու այդպես շարունակ:

Այս հարցի ազնվությամբ ու խղճով պատասխանը, ըստ երևույթին, ոչ է, որովհետև փաստն այն է, որ մենք չենք անուն (գոնե մասամբ) այն, ինչ պետք է անենք, որն առաջնայինն ու հիմնականն է, և անուն ենք այն, ինչ չպետք է անենք (կամ այն չափով ու ծևով, որ անուն ենք, չպետք է անենք):

Եվ կյանքում (այս կարծ և որոշ տեսանկյունից ակնթարթային կյանքում) ակնհայտ է, որ ճիշտ ու օգտակար չեն մեր այդպիսի վարքը, ուղին ու ընթացքը: Բայց ինչպես գտնենք ճիշտ ու օգտակար ուղին և ընթացքը, երբ բոլորը կամ առնվազն այս աշխարհի շատ հզորները, իշխանավորները, հարուստները, առավել ուսուալները, գիտակները, խոսք ու տեսք ունեցողները՝ երևելիները, և բոլոր նրանց նմանվողներն այդ ոչ ճիշտ ուղղությամբ, ոչ օգտակար ընթացքով են գնում ու մեզ էլ տարրեր շրջապտույտների մեջ առած՝ մեր արմատներից՝ էռությունից պոկել, տանել են ուզում կորստաբեր, «անտեր, ամայի» ճամփերով. մանավանդ մեր մատաղ սերնդին, որն արդեն իսկ այնպես է ստացվել, որ ավելի շատ նրանց է նայում ու լսում և նրանցից է ստվորում ու ըստ այնմ վարվում, քան մեր ազգի մեծերից, հայրերից, սրբերից և վասն հավատու ու վասն հայրենյաց նահատակվածներից, որոնք Աստվածաշնորհ հավերժական երանությունն են վայելում:

Այս իրավիճակում ի՞նչ անենք, ինչպես անենք, եր՞բ սկսենք անելը, ինչո՞վ, ինչպիսի՞ առաջնորդությամբ:

Այս հարցերին հայ մարդը ո՞ր գիտության, ո՞ր ուսմունքի, ո՞ր խրատ ու պատգամի հիման վրա պատասխանի: Դրա համար ինչքա՞ն ժամանակ ու միջոց տրամադրի (ներդնի):

- Էջմիածինը՝ Մայր Աթոռն ի՞նչ է ասում:

- Իսկ մեր գիտությո՞ւնը՝ ազգային ակադեմիայով, ակադեմիականներով, համալսարաններով՝ համալսարանականներով:

- Եվ մեր Սփյո՞ւռքը՝ իր համաշխարհային փորձով:

- Իսկ գրողների ու ստեղծագործական այլ միություններով...

Ո՞ւր է ազգի հարազատ հոգևոր ու մտավոր խոսքն ու խրատը, որ չի լսվում: Այլ լսվում է միայն օտար, խորթ, կեղծ ու կորստաբեր՝ հոմերոսյան *սիրենների* ձայնով կանչը՝ խարող, հրապուրող, մոլորեցնող, ապակողմնորոշող, գլխահան անող և միտքը, հոգին ու բնածին ինքնությունը վարակող, աղավաղող, սրբապղծող՝ ստրկացնող, փչացնող ու կորստյան մատնող:

Աստված մեզ հասնի, և Նրա՝ մեզ շնորհած հույսը մեր սրտերում երբեք չմարի, այլ միշտ վառ մնա, ապրի: Եվ մեր խոհերը, խոսքերը, գործերը և միմյանց սիրելը, հավատալը, վստահելը և օգնելը լինեն այդ հույսով՝ միշտ վերասլաց ու երկնային անքեկաննելի երաշխիքով:

Ուրբաթ, 24 -11 - 2017թ., ժամը 02:20

## **ՔՐԻՍՏՈՆՅԱ ԿՈՉՎՈՂ ՀԵԹԱՆՈՄՆԵՐՆ ԱՄԵՆԱՎԿՈՐՈՒՅՅԱԼ ՀԵԹԱՆՈՄՆԵՐՆ ԵՆ**

Պաշտամանքելու և չվնասվելու համար քրիստոնյա կոչվող ծայրահեն վտանգավոր այդախի հեթանոսներից, որոնք կարևոր դիրքեր գրաված հարածունորեն վխտում են աշխարհում և մեր շուրջը, ըստ երևույթին, երկու միջոց կա.

**առաջինը՝** հատուկ մաղի ստեղծմամբ նրանց մաղել և Աստվածաշնչում ասված «քանակատեղիից դուրս» հանելով՝ մաքրվել նրանցից,

**երկրորդը՝** քրիստոնյաների խնդրանք-աղաչանքն Աստծուն՝ արժանացնելու նրանց փրկության միակ միջոցին՝ իր գրությանն ու ներումին, որով և հնարավորությանը՝ վերակեն-

դանացնելու իրենց մեռած և մեռցնող հոգիները, էությունը:

Դավատարիմ քրիստոնյաները պետք է ուշադի՛ր, շատ ուշադիր և զգո՞ն լինեն, որ նրանց (քրիստոնյայի դիմակ հազած հեթանոսների) նման դիմակավորված քրիստոնյա չդառնան՝ փորձության մեջ ընկնելով և կորստաբեր մեղք գործելով:

Եվ հայությունը, մենք՝ հայերս, յուրաքանչյուր հայ պետք է այդ զգո՞նությունն ունենա. և մեր հոգեսոր ու աշխարհիկ դեկավարությունն ու մտավորականությունն այդ հատկությունն առավել ևս ունենան, որպեսզի կարողանան իմաստուն, հարազատ, հավատարիմ, քաջ ու հմուտ ծառայություն կատարել Աստուծո, հայ ազգի ու հայրենիք Յայատանի համար: Ու նաև կարողանան այդպիսի ծառայություն մատուցել յուրաքանչյուր հայի համար՝ այր ու կնոջ, տարեցի ու երիտասարդի, հայրենաբնակի թե օտարաբնակի և ինչ սոցիալական խնդիր էլ պատկանի՝ նրա հայ մարդկային-ազգային հոգեկանության, գաղափարականության, բարոյականության ու ըստ այնմ՝ ապրելակերպի պաշտպանության համար:

Չէ՞ որ չարը, մարդակերպ գազանն ու բանսարկուն ուշիուշով հետևում են ազնիվ քրիստոնյային՝ խարելու, ապակողմնորոշելու, տկարացնելու, թմրեցնելու ու հոգեքամությամբ հավերժ մահվան ենթարկելու համար:

Եվ այժմ, փա՞ռք Տիրոջը, որ դարձյալ պետականացանք. հարկ է ու արդար է, որ մեր ազգային պետականության պաշտպանությունը ևս պետականանա ու դառնա նաև համազգային՝ համայն հայության (ներառյալ անպայման բոլոր խավերի, կառուցմերի և հատվածների) հարազատ, գործուն, հմուտ ու հարատև մասնակցությանք:

Եվ այնժամ արևն ուրիշ լույս կտա հայության համար,

Եվ նրա ճառագայթիները ևս՝ ուրիշ ջերմություն.

Եվ հայրենի հողն էլ ուրիշ պտղաբերություն կունենա,

Եվ որանցով սնվող հայությունն է՝ այլ կարողություն՝

Առավել օգտակար նաև մարդկության համար,

Եվ հաճելի բոլորի Արարիչ Յո՞ր համար:

Եվ ամենայն փառք ու պատիվ Նրա՝ համար:

28 - 06 - 1997թ., ժամը 17:10

## **ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՀԵՐ (Վաշինգտոնում Հեյդար Ալիևի դեմ առաջին ցույցը)**

1997 թվականի հունիսին էր, որ Ադրբեյջանի Հանրապետության իշխանությունը գրաված Յեյդար Ալիկի՝ որպես նախագահ Վաշինգտոն այցելության առիթով Վաշինգտոնի հայ համայնքը տպավորիչ ցույց էր կազմակերպել նրա դեմ, և սա տարրեր չափանիշներով իսկ բոլորի համար տրամաբանական ու հասկանալի էր: Բայց այդ ցույցի մեջ արտահայտվում էր նաև որոշ դժգոհություն Միացյալ Նահանգների հանդեպ, և սրանում էր, որ տարակույս առաջացավ, թե ինչքանով է տեղին այդ դժգոհությունը:

Ո՞ւր է գտնվում և ո՞ւր է գնում հայությունը, մասնավորապես ամերիկահայությունը:

Ամերիկահայությունը (ինչ պատճառով էլ լինի) եթե գնում է Ամերիկայի պետական շահերի դեմ, որոնք պաշտպանվում ու արտահայտվում են մասնավորապես ամերիկան իշխանությունների վարած քաղաքականությամբ, դիվանագիտությամբ, այդ դեպքում որևէ հույս ունի<sup>o</sup>, որ իր այդպիսի գործունեությունից կօգտվեն հայությունն ու Յայաստանը: Ինչի<sup>o</sup> վրա կարող է հիմնված լինել այդպիսի հույսն ու դրա հաջողության գրավականը:

Եվ այս հարցադրումը վերաբերում է հայկական սփյուռքի բոլոր գաղութների տրամաբանությանն ու վերաբերմունքին՝ իրենց հյուրընկալող երկրների պետական շահերի հասկացողության հանդեպ, բացառությամբ, եթե տվյալ երկրի հայկական գաղութն իր գործունեությամբ կարողանա փոխել այդ երկրի պետական շահի հասկացության ուղղությունը՝ համապատասխանեցնելով այն Յայաստանի ու հայության կենսական շահերին: Ի դեպ, դա դյուրին չէ, բայց անհնարին էլ չէ: Որոշ ազ-

գերի սկյուռքի կողմից դա լինում է բավականին երկար ժամանակից ի վեր:

Մեր գաղթօջախների քաղաքականությունը և գործնական վերաբերմունքը երբեք, ոչ մի դեպքում չպետք է հակասեն, այլ պետք է հաճապատասխանեն կյուրընկալ երկրի պետական շահերին, և մեր այդպիսի վերաբերմունքն անպայման պետք է հստակ ընկալելի լինի տվյալ երկրի դեկավարության համար և ոչ պակաս՝ ժողովրդի գոնե մեծամասնության համար:

Սա հայ գաղթօջախների գոյության կենսունակ ու արդյունավետ պահպանման հիմնական կանոններից էր նախորդ դարերի ընթացքում և, ըստ երևույթին, այդպիսին պետք է լինի միշտ, քանի դեռ հայությունը չի դադարել գաղթօջախներ ունենալուց: Մի վիճակ, որը ողբերգական է, սակայն կարող է և հույժ օգտակար դաշնալ՝ հաճապատասխան կազմակերպվածությամբ և բազմատեսակ հնարավորությունների հնարամիտ օգտագործմամբ... Թեև հնարամիտն էլ բավական չէ, եթե չուղեկցվի տվյալ գաղութի գոնե մի մասի (կրիտիկական զանգվածի) հոգեկան և դրանից բխող գաղափարական ու բարոյական պարտաճանաչությամբ, պատրաստականությամբ ու պատրաստականությամբ:

Տարակուս չկա, որ այդ ցուցի մեջ Ամերիկայի նկատմամբ ի հայտ եկած որոշակի դժգոհության պատճառը Յեյդար Ալիսին ցուցադրված հարգալից ընդունելությունն էր (ցուցարարները համարում էին, որ նա ու նրա երկիրը արժանի չեն դրան), սակայն այդ դժգոհությունն ամերիկահայությանը ոչ մի օգուտ չէր բերում, այլ միայն զգացումների տարերային արտահայտություն էր, որը ոչ մի կապ չուներ հայությանն ու Յայաստանին օգտակար որևէ քաղաքական հաշվարկի հետ: Եվ հայկական այս քրոնիկ դարձած երևույթը շատ է կրկնվում. մեր միջոցներով ու մասնակցությամբ ջանքեր ենք կատարում՝ անօգուտ և նույնիսկ որոշ վնասներով մեզ համար:

**Երկի երկրորդ կարծիք չի կարող լինել,** որ այս երևույթը պետք է բացառվի, փոխվի և կանոն դաշնա, որ Յայաստանից դուրս հայերի և նրանց օտար բարեկամների քաղաքական

կեցվածքն ու արտահայտությունը երբեք չպետք է հակասեն, առավել ևս ընդհարվեն, կոնֆլիկտի մեջ մտնեն տվյալ երկրի վարած քաղաքականության հետ և չվնասեն այդ երկրի (ի՞ր հասկացողությամբ) պետական շահերին:

Եվ սրանում է, որ հայկական պետական (պաշտոնական) ու նաև հանրային դիվանագիտությունը (վերջինս, ցավոք սրտի, դեռ չկա, չի՝ կազմավորված կամ տարերային, շատ թույլ է՝ իր բոլոր հետևանքներով) պետք է համակարգված, համադրված և ճիշտ ժամանակին գործեն, որպեսզի հայ ազգին կենսականորեն անհրաժեշտ հայանպաստ քաղաքականությունն առաջ տանող՝ հայության արդար ու բոլոր հատվածները նախ՝ հմտորեն մասնակցեն ու նաև նրանց ջանքերն օգուտ բերեն, այլ ոչ թե տարբեր, ներառյալ բարեկամ երկրների իշխանությունների հետ կոնֆլիկտի մեջ մտնելով՝ վատնվեն նրանց ջանքերը, չեզոքանան և նույնիսկ վնաս բերեն: Փորձը ցույց է տալիս, որ դրա հետևանքը լինում է մեր հիմնական նպատակների իրազրծման խառնաշփոթ և ժամանակի ու թանկագին հնարավորությունների կորուստ... կորուստ՝ ի ցնծություն մրցակիցների, հակառակորդների և մանավանդ՝ հանցագործ, ոխերին՝ թշնամիների, որոնք փորձում են ոչ միայն խորացնել մեր կորուստները, այլև օգտագործել մեր դեմ՝ զանազան, նույնիսկ՝ հանցավոր միջոցներով:

**Եվ հա՛րց.** հապա Աստված ինչո՞ւ է մարդուն խելք տվել և հային էլ դրանից բավական շատ բաժանել: Տվել է առաջընթացի ու զարգացման համար, թե՝ հետընթացի ու ինքնառչացման... Մեր նախնիները մեծ չափով և հիմնականում զարգացման ու պաշտպանվելու, ստեղծագործելու և կառուցելու համար են իրենց տրված խելքն օգտագործել: Դրա համար էլ մենք դեռ կանք, և որպեսզի մեր սերունդներն էլ լինեն, պետք է սովորենք մեր նախնիներից, նրանց լավագույն օրինակին հետևենք՝ Աստուծո հաճությամբ ու Նրա օգնությամբ: Եվ դա նաև հօգուտ համայն մարդկության ու ի փառս մեր սուրբ հավատքի:

## ԱՌԱՆՁԻՆ ՆՇՈՒՄ

Այս և հաջորդ հողվածը հանդիսանում են  
հիշեցումներ, կարծիքներ, տեսակետներ,  
մի քիչ էլ համեստ խորհուրդներ

Սեպտեմբեր, 1993թ.

### **ԼԵՆԵՆՔ ԿՈՂՄՆԱՎԿԻՑ «ԱՂՎԵՍԱՍԻՏ ՌԵԱԼ ՓՈԼԻԹԻՔՍԻ», ԹԵՇ ԵՐԿՆԱՅԻՆ «ՄԱՆԿԱՎՏՏՈՒԹՅԱՆ»**

Միջազգային հարաբերությունների մի ամերիկահայ դասախոս (որ միջազգային զարգացումներին հատուկ շահագրգությանը էր հետևում և միջազգային դիվանագիտության պատմությունը հատուկ մոտեցումով էր ուսումնասիրում) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարցում ԱՄՆ-ի վարածքաղականության վերաբերյալ ամերիկացի մի բարձրաստիճան դիվանագետի (որի հետ ծանոթանալով՝ բարեկամական անկեղծ երկխոսություն էր հաստատվել) հայտնում էր տեսակետներ, որոնք նոր ու շատ զարմանալի էին թվում նրան:

Այդ ամերիկահայը ամերիկացի բարձրաստիճան դիվանագետին ասում էր. «Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ինչ-որ հաշվարկներով մշակված ԱՄՆ-ի քաղաքականությունը մեր՝ ամերիկյան ազգային շահերին ասե՞նք թե ինչ-որ չափով համապատասխանում է: Սակայն Աստուծո՛ Արքայությա՞ն «Չահերին» ու նաև աշխարհի քրիստոնեության պատմական նշանակությամբ շահերին համապատասխանո՞ւմ է, ու եթե ոչ, ապա արդար ու հետևապես օգտակա՞ր է Լեռնային Ղարաբաղի հանդեպ մեր՝ ամերիկյան (ու նաև քրիստոնյա ու մեր դաշնակից երկրների) քաղաքականությունը և դրա այս կամ այն ակտիվությամբ գործադրումը:»

Ու եթե այսօր մեզ օգտակար թվացող մեր այդ քաղա-

քականությունը իրականում կայսերապաշտական, անհոգի ու անարդար է, ապա վաղվա՛ Ամերիկայի՝ մեր երեխաների և բռնների Ամերիկայի համար ինչպիսի՞ հետևանքներ կունենա այն. արդյոք նրանց քրից դուրս չի՞ գա մեր այդ «օգտակար» քաղաքականությունը: Եվ արդյո՞ք նպատակահարմար է, որ մենք ուզենանք այսօր օգտակար թվացող մի բան անել, որի համար վաղը մեր երկիրը, մեր երեխաներն ու բռններն անպայման պիտի դառնորեն հասուցեն:

Եվ մենք էլ այդ մասին հիմնականում գիտենք, բայց պետք է նաև համոզված ու հետևողական լինենք դրանում: Սակայն այդպիսին կլինենք, եթե, իհարկե, մենք՝ Ամերիկան դեռևս շարունակում ենք լինել նախազահներ՝ Ձորջ Վաշինգտոնի, Արքահամ Լինքոլնի ու նրանց նմանների արժեքներով գոյացած, պաշտպանված, պահպանված երկիրն ու պետությունը, և հետևապես հավատում ենք թե՛ երկնային արդարությանը (որ չի անտեսի Ղարաբաղի հանդեպ կատարվող անարդարությունը) և թե՛ երկնային գորությանը (որ կփրկի Ղարաբաղը և անպայման կհասուցի նրա հանդեպ կատարվող անարդարության համար):

Նետևապես, քանի որ ամերիկան մեր այդ քաղաքականությունն ու դրա գործադրումը չի համապատասխանում Երկնային Արքայության «շահերին», այդ դեպքում մի՞թե այն կարող է համապատասխանել մեր՝ Ամերիկայի շահերին:

Ու նաև արժեքների ներկայիս արժեզուկման (ոեգրադաշիայի) պայմանների ազդեցությամբ, եթե Ամերիկան, այնուամենայնիվ, ցանկանա շարունակել այդպիսի՞ քաղաքականությունը «համապատասխանեցնել» իր շահերին, այդ դեպքում Ամերիկան, իր ժողովուրդը (և իրեն հետևող դաշնակիցներն ու բարեկամներն էլ հետք), ո՞ր կողմում կգտնվեն: Դաշվի առնվո՞ւմ է, որ այդ կողմը Աստուծո հակառակ կողմն է: Այսինքն՝ լիովին կորստաբեր խավարի կողմն է:

Եվ մի՞թե վայել է, մի՞թե կարելի է թույլ տրվի, որ ազտության ու արդարության ջատագով և ծաղկալ ապագա

**Կերտել ծգողող, «հնարավորությունների երկիր» մեծ Ամերիկայի քաղաքականությունն այդպիսի հետևանք ունենա:**

Եվ մի՞թե այդպիսի կորստաբեր վախճանի համար է, և պիտի լինի ամերիկյան քաղաքականությունը, որի կիրառման համար գործածում է իր ունեցած (կամ, եթե հավատում ենք՝ ավելի ճիշտ կլինի ասել՝ իրեն շնորհված, տրված) բազմակողմանի հզոր միջոցները:

Եվ մի՞թե այդպիսի վախճանն է վայել ամերիկյան հիմնականում հավատավոր, ազնիվ, ջանասեր ժողովրդին ու նրա սերմնդին:

Եվ մի՞թե կարելի է անտեսել, որ ազահությունը, նյութապաշտությունն ու գոռողամտությունը նաև քաղաքական կարճատեսությունն է և դրանից էլ շատ ավելի վատ՝ հոգու կուրությունն է:

**Ամերիկայի բարեկամներն այդպիսի վիճակ և հետևանք ոչ մի դեպքում չեն ցանկանա Ամերիկային և նրա հետ՝ նաև հենց իրենց»:**

Ամերիկացի բարձրաստիճան դիվանագետն իր ծանոթբարեկամ դարձած ամերիկահայի այս ասածները մեծ ուշադրությամբ լսելուց հետո ասել էր.

«Զեր այս մտքերը և դատողությունները, նաև խրատները և ցանկությունները միանգամայն, հարազատորեն ու նաև շնորհակալությամբ կը նդունվեին մեր պետության հիմնադրման ժամանակներում, սակայն այժմ, ցավոք, այդպես չեն: Ու եթե երբեք մտադիր լինեք Զեր այդ ասածները հոդվածի վերածելով մեր մամուլում հրապարակել, ապա իմ բարեկամական խորհուրդը կլինի դրանից հանել «Երկնային թագավորություն», «Նրա արդարություն, զորություն», «Երկնային հատուցում» և նման արտահայտությունները. ներկայիս ԱՄՆ-ում դրանք կվնասեն հոդվածի ճիշտ ընկալմանն ու արդյունավետությանը. հոդվածն առնվազն պատշաճ ուշադրության չի արժանանա...»:

Ամերիկացի բարձրաստիճան դիվանագետն իր ծանոթբարեկամ ամերիկահային այդ ասել էր ներողամիտ ժպիտով, և

նրա կողմից ասվածը ոչ մի դեպքում չէր համարել կյանքի ճշմարտությունից կտրված անգործնական մտայնություն՝ քաղաքական մանկամտություն, այլ ուզեցել էր նրան պաշտպանել, որ ուրիշները նրան այդպիսին չհամարեն:

Իսկ ամերիկահայ դասախոսը, որն արդեն իսկ քաջ ծանոթ էր այդպիսի գնահատումներին, ինքը, այնուամենայնիվ, «մանկամտությունը» որպես մանուկի, այսինքն՝ մաքուր սրտով մարդու մտածողություն համարելով, շատ գոհ էր մնացել, որ իր տեսակետները կարող են և «մանկամտության» վերագրվել: Իսկ դրանց «անգործնականության և կյանքի ճշմարտությունից կտրված լինելու» գնահատականի մասին մտածել էր. ի՞նչ ճշմարտության, ո՞ր ճշմարտությունից կտրված լինելու մասին է խոսքը: Այս աշխարհի այսօրյա կոնյուկտուրայի՞ն ճշմարտության, թե՞ Երկնային հավերժ ճշմարտության՝ Հիսուսի Աստվածության ճշմարտության, որից բխում են բոլոր ճշմարտությունները, և որի վրա է հիմնված նաև մեր հավատքը՝ մեր եռթյան գոյությունն իմաստավորող ու նաև պահպանող լույսը, սրբությունը, իսկական կյանքի իսկական երաշխիքը: Եվ դա՝ է հարցականի տակ դրվում՝ իբրև անհամապատասխան այս կյանքին, այս աշխարհի **«ռեալ փոլիթիքսին»**: Ի՞նչ տխուր ու ահավոր մոլորություն՝ դեպի անհույս կորուստ:

Բայց չէ՝ որ հենց այստեղ է՝ հենց սրանում է գոյացել **մարդկության մեծ քաժանումը**. քաժանում «հնի» (որը միշտ նոր է, կենսունակ ու կենսատու) և «նորի» (որը թվացյալ է, կեղծ, անկենսունակ, անհեռանկարային) միջև:

**Ու այդ իրականությունում էական հարց.** հայությունը, հայրենիք Քայաստանը, հայոց պետությունը և մեզանից յուրաքանչյուրը ո՞ր կողմում ենք, **ո՞ր կողմն ենք բռնել և ո՞ր կողմում պիտի լինենք ու մնանք** և մնանք անդրդվելի, հաստատուն հավատարմությամբ՝ միշտ, ամենուր, բոլոր պայմաններում ու պարագաներում:

17 դար առաջ հայ ազգի, հայ մարդու և հայոց պետության համար **այդ կողմը** Երկնաշնորհ լուսավորությամբ ցույց է տրվել. նրանք հիմնականում այդ լույսով են ընթացել, պաշտ-

պանվել, գործել ու ապրել և ապրում են ու պիտի՝ ապրեն, եթե և քանի դեռ այդ լույսին հավատարիմ են:

Ու այս խոհերով էլ այդ ամերիկահայը հարցադրել է. աշխարհում ո՞վ կարող է ավելի ուրախ լինել այն հայից, ով զգում է, որ իր ուրախությունը երկնաշնորհ է՝ առաջացած իր հոգու աննահության Աստվածապարզն հավատքից: Դավատք, որը շնորհված է ամեն մարդու, որ կարող է ունենալ անխախտ հավատարմություն այդ հավատքին:

Ամերիկահայի այդ երկխոսությունը իր ծանոթ-բարեկամ (յոթ սերունդ) ամերիկացու հետ հատկանշական է նաև այն իմաստով, թե Ամերիկայում ինչ վիճակում են հոգևոր-բարոյական ընկալումները: Դիշյալ ամերիկացի բարձրաստիճան դիվանագետը, լինելով հանդերձ այն շատ քչերից, որ հավատարիմ լինելով իրենց կոչումին ու պաշտոնին, հավատարիմ են մնացել նաև ամերիկյան հոգևոր պետականաստեղծ արժեքներին, բայց նա, նաև հաշվի առնելով ամերիկյան այսօրյա հասարակության ճնշող մեծամասնության՝ այդ արժեքների հանդեպ ունեցած փաստորեն բացասական (կամ առնվազն ոչ լուրջ) վերաբերմունքը, ազնվորեն բարեկամական խորհուրդ էր տալիս իր ամերիկահայ ծանոթ-բարեկամին՝ իր հոդվածներում չիշատակել հոգեկանության, հավատքի և դրանցից բխող արդարության նասին, **Եթե հարցը վերաբերում է այս աշխարհի,** տվյալ դեպքում՝ Միացյալ Նահանգների քաղաքական գործերին և ազգային-պետական շահերին<sup>3</sup>...

<sup>3</sup> Ամերիկյան այդ երևույթը հիշեցնում է ձևով տարբեր, բովանդակությամբ շատ նման մի եղելություն մեր՝ հայ իրականությունում: Դայ առաքելական եկեղեցին հայաստանյան թեմերից մեկի հարգված և շատ գործուն առաջնորդը մտերմիկ խորհուրդ էր տալիս իր բարյացականությանն արժանացած մի հայ հավատացյալի, որ նրա ելույթներում «հարկ չկա շատ հիշատակել Յիսուս Քրիստոսի անունը և ընդհանրապես հավատքի մասին»: «Այլապես ազդեցիկ ու ընդունելի չեն լինի Զեր ելույթները, գրվածքները...»: Թե ինչ է նշանակում այս երևույթը հայ իրականությունում ու հատկապես ինչպիսի հոգեբարոյական վիճակ և վտանգ է ցույց տալիս, այդ նասին թվում է՝ կա մեկ եզրակացություն՝ բաղկացած երկու նասից: **Առաջին՝ Եթե մենք մեր**

Արդյո՞ք սա չի կարող լինել վկայություններից մեկն ամերիկյան (և ոչ միայն ամերիկյան) հասարակության այսօրյա՝ առնվազն հոգեբարոյական մտայնության վիճակի ու ըստ այնմ՝ նրա ընթացքի, թե դեպի ուր է գնում:

Ավելի լավ պատկերացնելու համար ներկայի ու տոհմիկ Ամերիկայի միջև տարբերությունը, հավանաբար նպատակահարմար է հիշատակել Միացյալ Նահանգների պատմականորեն հանրահայտ նախագահ Աբրահամ Լինքոլնի՝ 1863 թվականի մարտի 30-ի «Ազգային ծոնապահության օր» հայտարարությունը (Մարիան Ուիլյամսոնի «The healing of America» գրքից՝ հայերեն թարգմանված ՀԱՅՔ հաստատության կողմից):

*Մենք այս երկար տարիների ընթացքում գոյատևել,  
պահպանվել ենք խաղաղության և քարգավաճման մեջ:  
Մենք աճել ենք քանակապես, հարստությամբ և  
զորությամբ՝ առավել քան երրու որևէ այլ ազգ:  
Բայց մենք մոռացել ենք Աստծուն:  
Մենք մոռացել ենք այն քայլի ձեռքը,  
որ պահպանեց մեզ խաղաղության մեջ,  
և քազմապատկեց, և հարստացրեց, և զորացրեց.  
ինչ մենք, մեր սրտերի խարկանքով,  
ունեցանք այն վճասակար պատկերացումը,  
թե բոլոր այդ օրինություններն առաջացել են մեր անձի  
ինչ-որ գերազանցող իմաստությամբ ու առաքինությամբ:  
Ախտահարված (լինելով) հարատև հաջողություններից՝  
մենք դարձել ենք այնքան անճնապաստան և այնքան  
հաղարտ,  
որ չենք զգում քավության, շնորհի և  
մեր Արարիչ Հորն աղոթելու անհրաժեշտությունը:  
Ուստի դա մեզ պարտավորեցնում է՝*

---

*հայրերի հարազատ որդիներն ենք, այս վիճակն անընդունելի է:  
Երկրորդ՝ անհրաժեշտ է ազգային հոգեբարոյական (և դրան հարակից) համընդհանուր ու անհապաղ փոփոխություն:*

*Խոնարիվել մեր մեղանշած Զորության առաջ,*

*Խոստովանել մեր ազգի մեղքերը և*

*աղոքել գրասրտության և ներման համար:*

*Նախազահ Արքահամ Լիմքոլճ*

*30-ը մարտի, 1863թ.*

Միացյալ Նահանգներում (ինչպես և աշխարհի շատ երկրներում) Աբրահամ Լինքոլնին ճանաչում, շատ հարգում և հաճախ են հիշատակում ու փառաբանում բազում արիթներով՝ պետական, հասարակական դեկավարների ճառերում, դասագրքերում, տոնական տարբեր միջոցառումների ժամանակ, սակայն նրա պատգամները հաշվի առնվո՞ւմ են, կատարվո՞ւմ են: Ինչպես կատարվեն, երբ դրանք փաստորեն «մանկամիտ» են համարվում՝ հեռու «ռեալ փոլիթիքսից»:

Իսկ մե՞ր երկրում՝ Սուլը Յայաստանում (կամ որտեղ էլ գտնվենք), մենք ո՞ր արժեքներով ենք ապրում, գործում և մանավանդ սերունդ դաստիարակում և որ արժեքներով պիտի ապրենք, պիտի գործենք և մանավանդ պիտի սերունդ դաստիարակենք՝ Երկնային «մանկամտությանք», թե՞ այս աշխարհի «աղվեսամիտ ռեալ փոլիթիքսով»: Վերջինիս հեռանկարը խարուսիկ է, տանում է դեպի խավար, ճահճակորում: Իսկ մեր հավատքով հույսը՝ ամենազոր հույսը և դրանով ընթացքը, տանում են դեպի հայ ազգային-պետական լուսավոր վերելք և մեր բոլոր աշխարհիկ ու Երկնային նվիրական իղձերի կատարում:

Փա՛ռք մեր հավատքին:

## ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (Բրականություն և պատրանք)

CNN-ը որպես արտակարգ նորություն հաղորդում է Թոնի Բլերի՝ Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետի հանրային հարցաքննությունը Իրաքի պատերազմում Մեծ Բրիտանիայի ներառման մեջ նրա ունեցած դերի մասին:

Հատուկ ստեղծված մի հանձնախումբ, որը բաղկացած է Բրիտանիայի հայտնի իրավագետներից, հեռուստատեսությամբ ուղիղ եթերով հանրորեն հարցաքննում է աշխատավորական կուսակցության այն ժամանակվա առաջնորդ Թոնի Բլերին, ով պատմության մեջ առաջին անգամ հաղթեց վարչապետի երեք իրարահաջորդ ընտրություններում և 10 տարի պաշտոնավարեց որպես Մեծ Բրիտանիայի վարչապետ:

Դոյակա՞ա, սքանչելի երևոյթ է, այս ի՞նչ ժողովրդավարություն է տիրում Մեծ Բրիտանիայում, ուր այսպիսի ժողովրդավարական գործողություն է տեղի ունենում:

CNN-ի հեռուստաեկրանի վրա մինչ ցուցադրվում է նախկին վարչապետ Թոնի Բլերի հարցաքննությունը հատուկ հանձնախմբի անդամների կողմից, էկրանի տարբեր անկյուններում գրվում են հարցաքննության կարևոր արտահայտությունները, և միաժամանակ կրկնվում են վիճակագրական տվյալներ, որոնցից մեկը հաղորդում է, թե երբ և ինչքան բրիտանացի զինվորականներ են ուղարկվել Իրաք, և դրանցից քանի՞սն են զոհվել (զոհվե՞լ ինչո՞ւ զոհվել, ավելի ճիշտ՝ քանի՞սն են սպանվել) Իրաքում իրենց շուրջ 7-ամյա ռազմական գործողություններում:

Ի դեպ, ուղարկված գործի թիվը 45.000 է եղել, իսկ սպանվածների թիվը՝ 179: Այս տվյալներն այլ տվյալների հետ շարունակ ներկայացվում էին էկրանի վրա, սակայն զարմանալի է (ու նաև, ի վերջո, ոչ զարմանալի, որովհետև բավական ծանոթ է

այդ «խոհանոցը»), որ այդպես էլ չտեղեկացվեց, թե բրիտանացի 179 սպանվածների, վիրավորների (վերջիններիս թիվը չեղ նշվում) և մյուս բրիտանացի զինվորականների կողմից քանի հրաքցի է սպանվել (այստեղ արդեն տեղին է նաև անվանել զոհվել)` ներառյալ կանայք ու երեխանները:

Բայց ինչո՞ւ չեղ նշվում: Սա հարց է, որը կասկածի տակ է դնում մեր վերոնշյալ գովասանքը Բրիտանիայի հոյակապ ժողովրդավարության մասին:

Այդ հարցաքննության ամբողջ ընթացքն ակնհայտ էր դարձնում, որ Թօնի Բլերին հարցաքննում են մեղադրական երանգով, որովհետև Մեծ Բրիտանիան իրաքում վարած պատերազմի ընթացքում տվել է 179 զոհ (մի՞թե զոհ) և ծախսել է 10 միլիարդ 700 միլիոն դոլար՝ իրենց կարծիքով՝ առանց արդարացնելու այդ կորուստների գինը: Իսկ թե իր՝ Մեծ Բրիտանիայի՝ իրաք ներխուժելու պատճառով սպանված և հաշմված իրաքցի զինվորականներից և խաղաղ բնակիչներից (ներառյալ կանայք, երեխաններ, տարեցներ) բացի, քանի միլիարդ դոլարի վնասներ են հարուցվել, այդ մասին ոչ մի խոսք, ոչ էլ, առավել ևս՝ մեղադրանք, թեկուզ և ձևական մեղադրանք:

Ինչո՞ւ, ինչպե՞ս է լինում սա: Բրիտանացիները, բրիտանական իշխանությունները մոռացել են այդ մասին կամ իրաքի ու իրաքցիների հանդեպ գուցե թե պարզապես անտարբե՞ր են և դրա համա՞ր ոչ մի ցավ, ոչ մի պատասխանատվություն չեն գգում, գոնե չեն էլ զղում:

Դրա մասին ոչ մի բացատրություն չի տրվում, գուցե մնում է կրահե՞լ, որ իրենց այդ ժողովրդավարությունն անկեղծ չէ, այլ դիմակ է՝ խարելու, ապակողմնորոշելու ում որ պետք է, դարձյալ, իհարկե, իրենց շահի համար:

Սակայն իրենց ո՞ր շահի: Ասվում է՝ ազգային շահի: Արդյոք ա՞յն շահի, որը ինչպես և այլ երկրներ (եթե ոչ բոլորը, ապա զգալի մասը) համարում են գերակա ամեն ինչից (ինչպես օրինակ՝ Deutschland, deutschlond über alles-ը...) և հետևապես «արդարացված» են համարում անել ամեն ինչ, ամեն միջոցներով: Ու այդ առումով՝ «գրողի ծոցը» թե՝ ժողովրդա-

Վարությունը, թե՛ մարդու ու ազգի իրավունքները և թե՛ արդարությունն ու միջազգային իրավունք կոչվածը:

**Եվ հիվանական հարց.** Եթե դա սովորական գործընթաց է ու բավականին հանրահայտ, ապա ինչո՞ւ այդ մասին նորից նշել, հիշեցնել:

Ինչո՞ւ, որպեսզի մեծ մասամբ միամիտ և կամ անտարբեր դարձածներս զգաստ լինենք, բոլորս, հատկապես ազգի և պետության պատասխանատուները, ղեկավարները:

Չխարբենք այլևս, բավակա՞ն է... և դրա համար չշարունակենք տուժել, կորուստներ ունենալ՝ հետ շպրտվելով ու խճճվելով որոշ պետությունների հանցագործ ագահությանը հագուրդ տվող քաղաքականության նենգ ու կեղծավոր լարի-րինթոսի գործարքների մեջ:

Եվ վերոնշյալ հիշեցումները մի՞թե նաև ահազանգ չեն՝ ուղղված բոլորին թե՛ մտքերին և թե՛ սրտերին:

Աստված մեզ գքա ու օգնի:

02 - 02 - 2003թ., Երևան

## ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՊԱՀՈՅՔԸ

Եվրոպայի ու ընդհանրապես Արևմտյան պատմական քրիստոնեական քաղաքակրթության և Եերկայիս ժողովորակարություն հասկացությունների միջև տարբերության ու հատկապես դրանց ներկայիս բախման պատճառների հիմքում, ըստ Երևային, սեռական բարոյականության վերաբերյալ համոզմունքների, տեսակետների անհամատեղելիությունն է, որից և բխում են կենցաղավարության, հասարակական ու ընտանեկան հարաբերությունների, Երկրի որոշ գրված և չգրված օրենքների և այլ տարբերությունները: Այդ առումով հավատքի կրոնական ապրումի առկայությունը կամ բացակայությունը և տարբերություններն այդ անհամատեղելիության առանցքներն են: Դրանք կամ պիտի գոյատևեն՝ որպես առանձին առանցք-

ներ, մի բան, որը հարածունորեն «փոքրացող» աշխարհում աստիճանաբար դժվարանում ու անհնարին է դառնում, կամ էլ ներառվեն (գլոբալացվեն), կազմեն մեկ առանցք:

Եվ մեծ հարցն այն է, թե այդ առանցքներից որն է հաղթահարելու, նվաճելու և ներառելու մնացած առանցքները:

Եթե դա անի բնական, հետևապես առողջ ու կենսունակ առանցք, ապա, բնականաբար, այն իր ամբողջ բովանդակությանք կգոյատեսի, կզարգանա և նույնիսկ, ի վերջո, կձգտի կատարելության: Իսկ եթե **անքնականը**, հետևապես արհեստական, հիվանդ, անառողջ ու անկենսունակ առանցքը հաղթի, նվաճի ու ներառի իր մեջ (գլոբալացնի) մնացած առանցքները, դա կլինի ժամանակավոր ու, բնականաբար (իր ստացած առավելությամբ հանդերձ), կգոյազրկվի, կքայլայվի և կվերածվի... ոչնչության:

Առանցքներն ազգային են, տարածաշրջանային և համամարդկային:

Դայ ազգի մեջ գոյություն ուներ մեկ բնական, հարազատ, կենսունակ առանցք, որի շուրջն ընթացող կյանքը դրանից մղվում էր դեպի կատարելություն: Դա մեր ազգի (շատ այլ ազգերի նման) երկնային շնորհով էր առաջացել և պահպանվում էր Նրա հանդեպ մեր տածած սիրով, հավատարմությամբ ու ըստ այնմ՝ ապրումով:

Բավական ժամանակ է, որ մեր ազգային կյանքում այդ առանցքի խախտվելու, տկարանալու պատճառով ավելացել են «ներմուծումն» ու նաև ներածումը խորթ, նենգ ու վնասաբեր մեկից ավելի առանցքների: Եվ այժմ դրանց չարանպատակ ու չարամիտ հատկությունները հարածունորեն գորանում և տարաբնույթ միջոցներով ու մեթոդներով ձգտում են չեզոքացնել, այլասերել և ջնջել մեր խախտված, տկարացած ազգային տոհմիկ առանցքը, որով և մեր գոյությունը՝ այսօր ու հավիտյանս:

Եվ հ՞նչ պետք է անենք, որ պաշտպանենք մեզ, մեր եռթյունը, մեր գոյությունը, որն այժմ այսպիսին է, և դեռ չգիտենք, թե ինչպիսին կլինի մեր համընդիհանուր վայրընթաց վիճակը, դրությունը: Մանավանդ որ այս հարցը, չարժանանալով մեր ո՛չ

հատուկ, ոչ էլ համաժողովրդական համապատասխան ուշադրությանը, անհայտ է մնում դրա պատասխանը, և մենք, որպես ժողովուրդ, մեծ մասամբ անիրազեկ լինելով, չգիտենք, թե ինչ պետք է անենք ու ինչ չպետք է (այլևս) անենք:

Ու այդպիսով իրականում ընթանում ենք ոչ թե մեզ եապես անիրաժեշտ նպատակային ուղղությամբ, այլ խարիսափուն ենք անորոշության ու անհերեթ իրարամերժության մեջ, կամ էլ արդեն իսկ լրիվ շեղվելով մեր ազգային մարդկային բնածին եռթյունից, հայտնվել ենք կորստաբեր դատարկության մեջ...

Ու այս վիճակում, եթե դեռ ինչ-որ չափով մենք մեզ զգում ենք, ի՞նչ անենք՝ բանաստեղծի ասած՝ «Դիմի՝ էլ լոենք»... և թմրած ու անզոր մնանք, ինչպես ճագարն օձի առաջ...

Թող դոդանջեն զգաստացնող հարազատ զանգերը մեր սուրբ նախնյաց հոգիների... Բայց քանի որ դրանց դոդանջները ևս, լինելով սուրբ, ընկալելի են հայերի սուրբ սրտերին, ապա ուրեմն՝ մաքրենք մեր սրտերը և միասնաբար՝ լծվենք մեր ազգի հոգեկանության, դրանից բխող ու դրա վրա հիմնված գաղափարականության, բարոյականության ու ըստ այնմ՝ կենցաղավարության վերականգնման, վերակայացման սրբազան գործին՝ համոզված լինելով, որ եթե այդ գործում հաղթական դուրս գանք, կապահովենք մնացած հաղթանակները հայ կյանքի բոլոր բնազավաներում՝ ներկա ու պատմական, նյութական ու հոգեկան՝ ի ցնծություն մեր նախնիների հոգիների և մեր սերունդների կյանքի: Եվ դա նաև հօգուտ մարդկության և ամենաեականը՝ ի փառս Սուրբ Երրորդության՝ Աստուծու:

Մեր այս վիճակում Տե՛րը մեզ հասնի, գքա և շնորհ պարգևի: Խնդրենք:

Ծաբաթ, 20 - 09 - 2014թ., ժամը 08:30

## **ՈՉ ՄԻԱՅՆ ԵՐԳԵՐԸ, ՊԱՐԵՐԸ, ՀԱԳՆՎԱԾՔՆ ՈՒ ԿԵՑՎԱԾՔԸ, ԱՅԼԵՎ ԽԱՂԱՎԼԻՔՆԵՐՆ ԷԼ ԸՆԴԴԵՄ ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹՅՅՆ**

Դարերով ու դարերով աշխարհում (գոնե քրիստոնեական աշխարհում) և հայ աշխարհում աղջիկների ծնողները՝ որպես ինքնըստինքյան հասկանալի, գուցեև միակ առաջնային ընդունելի խաղալիքը համարել են տիկնիկը (պուպիկը, «կուկլան»): Եվ դա համարել են թե՝ խաղալիք և թե՝ վաղ ուսուցման միջոց՝ մայրության և տնավարության (պարտականությունների) համար:

Վիկտոր Շյուգոյի «Թշվառները» հանճարեղ վեպում նկարագրված է մանկահասակ Կոգերի հայացքը խանութի ցուցափեղկի հետևում ցուցադրված պուպիկին և նրա բերկրանքը, երբ այն ստացավ ժամ Կալժանից: Իսկ մեր հայ բյուրավոր ընտանիքներում, որոնք հեռու էին պուպիկ վաճառող խանութներից, և չէին էլ կարող գնել, մայրիկներն իրենց աղջիկների հետ իրենք էին քրծերից պատրաստում, որպեսզի երեխան խաղա՝ պատկերացնելով մանկան խնամքը, և այն **սիրելով** երեխա սիրի:

Խաղի միջոցով նաև երեխա սիրելու, խնամելու, գուրգուրելու բնագրն էր խրախուսվում, զարգացվում, և հոգեբանորեն ապագա մայրեր էին դաստիարակվում ու վարժեցվում...

Եվ 70 տարիների ընթացքում քրիստոնյա Հայաստանն արեխատական՝ անաստված Հայաստանի վերածելու բազում դաժան փորձերից հետո, այդ փորձերը գիտակցաբար կամ անգիտակցաբար նոր ձևերով, նոր մեթոդներով անողները մեր աղջիկ երեխաների համար Հայաստան են ներմուծում «բարբի» տիկնիկներ, որոնք ոչ թե միամիտ, անուշ աչքերով,

կարմրաթուշ մանուկների կերպարով ու ազգային ավանդական հագնվածքով խաղալիք-տիկնիկ-պուպիկներ են, այլ մինի շրջագետով՝ ներքևից և վերևից մերկացած, պոռնկաբարո շպարված, էրոտիկ հայացքով ու տեսքով «գեղեցկուհի» տիկնիկ-պուպիկներ, որոնց ձևությունը ու տեսքը ոչ թե մայրության և տնավարության սեր ու հակում են վարժեցնում, այլ... նայք քլարների, բարերի հաճախորդ ու ամեն տեսակ միասեռականության հանդեպ «հանդուրժողականություն» վարժեցնելու ձգուում են ցուցաբերում, միայն թե ոչ հայ կին, բաղաքացի, ամուսին և մայր (մանավանդ՝ բազմազավակ): Եվ ի՞նչ: Դրանք վաճառվում են Հայաստանի խանութներում...

Հապա մեր հավա՞տքը, ազգի գաղափա՞րը, բարոյականությո՞ւնը...

Հապա մեր զավակների, թոռների ու ազգի ապագա՞ն...

Հապա մեր նախնիների հոգինե՞րը և մեր հոգինե՞րը և Աստվածային հատուցո՞ւնը՝ պատի՞ժը:

06 - 03 - 2006թ.

## **ՆԱԽՔԱՆ ՈՒՏԵԼՆ ԻՄԱՆԱԼ, ԹԵ Ո՞ՒՄ ԿՈՂՄԻՑ, ԻՆՉՈ՞Ւ Է ԵՓՎԱԾ ԵՎ ԻՆՉՈ՞Ւ Է ՄԵԶ ԶՐԻ ՏՐՎՈՒՄ**

Զանգվածային լրատվական և տեղեկատվական միջոցներ... Բայց այդ թանկարժեք միջոցները ստեղծվել են զանգվածներին լրատվական, տեղեկատվական բարեգործությո՞ւն անելու, թե՞... բիզնես անելու, փո՞ղ շահելու համար...

Իհարկե՝ շահույթի համար: Բայց արդյո՞ք միայն այդ է նպատակը: Նույնը և ժամանցի նյութերը, ինչպես նաև տարբեր ֆիլմերը, երգ ու պար ներկայացնող տեսահոլովակները, միայն բիզնես և փող շահել է: Ուրիշ նպատակ չե՞ն հետապնդում:

Նախ, եթե նպատակը գրւած շահույթն է, դարձյալ անվերապահորեն մաքուր չի կարելի ընդունել այդ «ապրանքը» կամ

«ծառայությունը», որովհետև գոնե բոլորը չեն, որ մաքուր բիզնես են Ենթադրում, օրինակ՝ մարմնավաճառության «բիզնեսը», որը հասարակական թշվառություն է, և որպես բիզնես՝ մանկապղծությունը, որն ամեն տեսակ սեռական այլասերության սահմաններն անցնում է, և մարդկության ամենադաժան ու սրբապիշտ երևույթն է: Կամ թմրադեղերի «բիզնեսը», որը քայլայում է մարդուն, հասարակական կյանքը և այլն: Բայց շատ կասկածելի է, որ նպատակը, այդ կործանիչ այլանդակություններով հանդերձ, միայն նյութական շահն է. կարող է լինել նաև գաղափարական ու քաղաքական, գուցեն դեռ այլ կողմ գնացող նպատակ: Ո՞րն է այն: Ովքե՞ր են այդ նպատակի տերերը և կիրառողները... Ինչո՞ւ:

\* \* \*

Մոտ յոթ տարի առաջ Միացյալ Նահանգներում՝ Ֆլորիդայի նահանգի Ֆորդ Լոդրիջը քաղաքում, ամերիկյան մի հանրահայտ եկեղեցու նախաձեռնությամբ գումարված գիտաժողովում գեկուցողներից մեկը նաև որոշ վիճակագրական տվյալներ հաղորդեց. «Մեր ընկերաբանական ուսումնասիրությունների համաձայն՝ Միացյալ Նահանգների տեղեկատվության՝ լրագրողների և խմբագիրների 85 տոկոսից ավելին աթեհստ են կամ քրիստոնամերժ այդ դեպքում, ի՞նչ եք կարծում (հարց տվեց զեկուցողը), ինչպիսի՞ն են մեր բերթերի, հանդեսների, ռադիոյուվ, հեռուստատեսությամբ ու այլ միջոցներով հաղորդվող նյութերի գաղափարական բովանդակությունը և դրանց բարոյականությունը»:

Գուցե կարելի է հարցականի տակ դնել այս հայտարարության տոկոսային թիվը (այն կարող է լինել ավելի փոքր կամ նույնիսկ ավելի մեծ), դա այլ հարց է, սակայն հարցադրումը, թե «Ինչպիսի՞ն է հաղորդվող նյութերի գաղափարական բովանդակությունն ու դրանց բարոյականությունը», դժբախտաբար, ճիշտ և հույժ կարևոր է ու գործնական:

*Այդ իմաստով դա ի՞նչ կարող է նշանակել հայության համար, մեր երկրի համար... Ի՞նչ կասեին այդ մասին հայոց*

**աշխարհիկ և հոգևոր պատասխանատուները...**

Պետք է ահազանգե՞լ, արտակարգ դրությո՞ւն հայտարարել, թե՞ համարել, որ ոչ մի վտանգ չկա, կարելի է հանգստ քնել և նույնիսկ մեր սահմանափակ ժամանակից ու էներգիայից կարելի է «բլուտ» ու այլ խաղերի համար մեր հատկացրած ժամանակն էլ բավկանին ավելացնել...

Մենք ե՞րբ պիտի զգաստանանք, պատասխանատվություն զգանք, պարտաճանաչ հայ դառնանք՝ վերականգնելով մեր խի՛ջն ու հավատքը, որպեսզի Տերն էլ մեզ օգնի:

Կիրակի, 04 - 06 - 2010թ., ժամը 08. 10

## **ԳՈՎԱԶԴ ՀԱՐԱՁԱՏ, ՕԳՏԱԿԱՐ ԵՎ ԽՈՐԹ ՈՒ ՎՆԱՍՍԱԿԱՐ**

Յայաստանում ի՞նչ կարելի է գովազդել և ի՞նչ՝ ոչ, այսինքն՝ ի՞նչ գովազդելով շահ տալ և շահ ստանալ ռադիո և հեռուստատեսային ընկերություններից, պարբերական նամուլից, գովազդային վահանակներ տեղադրողներից՝ ձեռնարկությունների ապրանքը կամ ծառայությունները հասարակության «աչքի, ուղեղի մեջ մտցնելով»: Ո՞վ է կազմում «կարելիների» և «չի կարելիների» ցուցակը և գուցե նաև չգրված բարոյական օրենքները:

Օրինակ՝ թմրադեղ՝ հաշիշ, հերոին և նման բաներ, ինչպես նաև հասարակաց տներ (բորդելներ) կամ հայրենիքը, ամուսնությունը, ծնողներին, երեխաներին ինչպես ուրանալու, դավաճանելու դասընթացներ, ուսուցում չի կարելի գովազդել: Բայց դրանք՝ անուղղակիորեն գովազդվող նյութերը, իրենց կեղծ, նենգ թշնամական ու ավերիչ երանգով, այնուամենայնիվ, պակաս չեն մեր գովազդային նյութերում: Արդյոք դրանցից ամբողջովին գե՞՞օ են մեր կրթական ձեռնարկներն ու մեթոդաբանությունը: Սա մեծ և կարևոր հարց է, սակայն, որ մեր մշա-

կույթը, արվեստը և կրթությունն էլ հետք գերծ չեն դրանցից, ակնհայտ է...

### *Ո՞վ կփրկի մեզ...*

\*\*\*

Յատկանշական է, որ որոշ հեռուստաշնկերությունների կողմից գովազդվող պոռնո և կիսապոռն երգերի ու պարերի «շոուները» զգալիորեն հովանավորվում են (ըստ հեռուստահայտարարությունների) խաղատների կողմից: Ի՞նչ բարեհոգություն, ի՞նչ հոգատարություն...

Այս վիճակն ինչպես կոչել, անվանել. գուցե ազգի հոգեկան, գաղափարական և բարոյական հաշմանդամություն կամ անդամալուծություն կամ... ինքնասպանության սինդրո՞մ, ինչ-որ տեսակի ԴԱ՞Վ, «սպի՞դ»...

\*\*\*

Ինչպիսի՞ն է, ի վերջո, վիճակը հայ ազգի և Յայաստան երկրից կոտորակված Յայաստանի Յանրապետությունում:

Ի՞նչ աստիճանի են մեր ինքնագիտակցությունը, խիղճը, ոգին ու հոգեկան կորովը. բարձր, զորեղ ու առո՞ղ են, թե՝ տևար ու հիվանդ: Եթե հիվանդ են, ապա ի՞նչ հիվանդությամբ, ո՞րն է դրա աղբյուրը, և որո՞նք են հետևանքները: Իսկ եթե հիվանդ չեն, առողջ են, ապա ինչո՞ւ տեղի չի ունենում այնքան ցանկալի ու այնքան անհրաժեշտ մեր բարձրացումն այն շատ անկումային վիճակներից, որոնցում գտնվում ենք:

Առաջընթացը երկու տեսակետից ու մոտեցմամբ պետք է ընկալվի և գնահատվի. մեկը՝ առանձին, մյուսը՝ էական, գործնական. այսինքն, մեկը՝ մեր առաջընթացը՝ համեմատությամբ մրցակիցների, էլ չասած՝ հակառակորդների ու թշնամիների ունեցած առաջընթացի հետ: Եվ երկորդը՝ էականն ու նաև առավել գործնականն առաջընթացի արագացման մեջ մրցունակ լինելու է, երբ միավոր ժամանակահատվածում հայության առաջընթացի արագությունը գերազանցում է մրցակիցների առաջընթացին, առավել և՝ հակառակորդների, թշնամիների:

Այս հարցերը պետք է դրվեն, ըստ այնմ՝ դրանց պատասխանները վերլուծվեն, ու եզրակացությունները գործադրվեն: Որպեսզի իրականում ապահով, անվտանգ լինես, իրական առաջընթաց ունենաս, առաջ անցնես և գոհությամբ ապրես՝ արժանանալով Աստուծոն օգնությանը:

Սակայն ո՞ւն առաջ դրվեն այս հարցերը, ո՞վ դնի, ե՞րբ...

Երկուշաբթի, 12 - 04 - 2010թ., ժամը 08: 00

## **ԳՈՎԱԶԴ - ՊՐՈՊԱԳՆԱԾ**

Պրոպագանդան, որն ըստ երևույթին սխալ է թարգմանվում՝ քարոզչություն, որովհետև քարոզելը, եթե բացատրելը, սովորեցնելը ու համոզելն է, ապա պրոպագանդան ճշմարտությունը թաքցնելը և ինչը որ ծեռնտու է՝ միայն այն ներկայացնելն է չափազանցված, այսինքն՝ սուտ չափերով, քաղաքական նպատակով: Իսկ գովազդն իր մեջ (այս կամ այն չափով) պարունակում է նույն սուտը՝ մեծ մասամբ տնտեսական նպատակով, նյութական շահույթի համար: Գովազդի միջոցով ապրանք կամ ծառայություն առաջարկողը ոչ միայն թաքցնում, չի ասում, եթե իր թանը թքու է, այլև ներկայացնում է որպես շուկայում եղածի և հնարավորի ամենալավը: Այսինքն՝ սուտ է խոսում: Բայց...

Բայց եթե սուտն իսկապես թանի մասին է (որը որպես պատահական օրինակ բերեցինք), և խարվածի կամ այլ տեսանկյունով գոհի փողը միայն կարող է մի քիչ ցավել, ապա նյութական շահի համար այլասերման, անառակության, դասալքության, անաստվածության և մասամբ նորին գովազդումը, խարվածի (գրիի) ոչ թե կարող է փողը մի քիչ ցավեցնել, այլ կարող է մարդկային ազգային-հայկական կերպարը աղավաղել. հավատամքը, գաղափարականությունը, բարոյականությունը, ազնվությունը, պարտաճանաչչությունը, հավատարմությունը խաթարել, ընտանիքի, Յայրենիքի և ի վերջո՝ Աստուծոն

հավատքի հանդեպ կասկած, տարակույս ու ընդհուած մինչև խսկ հակառակություն առաջացնել:

Ո՞ւմ է պետք այդպիսի գովազդը, սուտը, խարդախությունը: Ու եթե գովազդային տարբեր կամ այլ իմաստներով գաղափարական բովանդակություն կա, քիչ թե շատ ամեն կինոֆիլմի, երգի, պարի, նկարի ու արձանի, հոդվածի, պատմվածքի, գրքի և այլնի մեջ, ապա հասարակությանը և մանավանդ մատաղ սերնդին դրանք ներկայացնողները պետք է լուրջ մտածեն, խղճով ու ազգային և քաղաքացիական ինքնագիտակցությամբ մտածեն: Նույնը և ավելին՝ ազգի, երկրի ղեկավարները, պաշտոնյաները, մտավորականությունը, հոգևորականությունը, ամբողջ հասարակությունը, ազգը և դրանց մեջ ոչ վերջին հերթին՝ գործարար հայը, քաղաքացին:

Որպեսզի զերծ մնանք միանգամայն հայտնին և բազմիցս կրկնվածին նորից անդրադառնալուց, միայն ասենք, որ եթե մեր հասարակությունում ընդունելի է դարձել (որովհետև ինչ-որ մեկին շահավետ է) մեր ազգային կենցաղի փոփոխությունն իբր թե մարդու (ներառյալ կանանց, երեխաների) իրավունքները պաշտպանելու համար ու ավելի առաջադեմ, երջանիկ հասարակություն ստեղծելու համար ֆիլմերով, երգերով, հագուստի նորաձևություններով մեր աղջկներին կամաց կամաց (վերջերս արդեն նաև արագ) մերկացնելը, տղաներին մեղկացնելը («պիժոնացնելը»), գովազդելն անպարկեցտ նստելածն, կեցվածք ու շարժուձեր, մարմնի վրա դաջվածքներ անել և պարեր, պարեր ու պարեր, և դա **ժիշտ, լավ ու շահավետ** է համարվում, **ապա ինչո՞ւ** մեր հեռուստատեսությամբ հաղորդվող ֆիլմերով, շոուներով, «Երիտասարդական» կամ թեկուզ և «մեծահասակների համար նախատեսված» ծրագրերով չեն գովազդվում գիրք կարդալը, դաս սովորելը, դպրոցում, բուհում բարձր գնահատականներ ստանալը, ընդհանրապես սովորելը, աշխատասեր լինելը, հավատարմությամբ և ստեղծագործաբար աշխատելը, ծառայելը, վերջապես՝ Ավետարան կարդալը, Աստծուն սիրելը, Յայրենիքը սիրելը, պետությունը հարգելը, սպա՛ դառնալը, ընտանիքի մայր և հայր

դառնալը... Ի՞նչ է՝ այս բաները գովազդելը, գոնե նույն չափով, ինչ չափով որ անամոթություն, մեղկություն ու անպատասխանատվություն են գովազդվում, վերը նշվածի պես ճիշտ, լավ ու շահավետ չէ։ Բայց ո՞ւմ համար։ Եվ ո՞վ, ովքե՞ր են շահագրգուած և որոշում են Յայց աշխարհում ու հայ կյանքում այս հարցերը։

**ԵՎ ՄԻ ԿՈՆԱՐԵՍ ՕՐԻՆԱԿ.** իր մասին լավ կարծիք ունեցող և հասարակության մեջ բարի համբավ փնտրող մի հեռուստաշնկերություն մեր նոր սերմնի համար առավոտ ու երեկոյան, ցերեկ ու գիշեր գովազդում է մարմնի վրա դաշվածքներ անել, գիշերային ակումբ այցելել, որտեղ «Հուրի փերիները» «ստրիպտիզմ» են ցուցադրում, կամ մի ինչ-որ «իշխանական» միջավայրում պոկեր ու այլ բախտախաղեր փորձել (ի դեպ, մինչև իսկ ժամերով պոկերի մրցում-դասավանդում էր ցուցադրում)։

23 - 05 - 2017թ., ժամը 00:30

## ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ԵՎ ՉԵԶՈՔԱՑՆԵԼ ԳՈՂԻԱՐՆԵՐԻՆ

Գովազդի անկեղծությունն արդեն իսկ կասկածելի է, բայց այն լինում է նաև բոլորովին ստահող, խարդախ, խարուսիկ։ Եվ այդ տեսանկյունից Յայաստանի Յանրապետությունում իր ստեղծման օրից մինչև հիմա ԶԼՍ-ների միջոցով տեղի ունեցող գովազդ-պրոպագանդան մի՞թե տարբեր տեսակի մոլությունների և մասնավորապես խաղամոլության օգտին չէ։ Ու եթե այդպես է, ովքե՞ր են այդ անում իրենց օգուտի համար։ Ովքե՞ր են շահագրգուած ու աջակից դրանում։ Եվ ովքե՞ր են անտեղյակ և կամ տեղյակ, բայց անտարբեր։ Եվ չարը շահում է, հրճվում, ուրախանում, իսկ ազգը տուժում է, խեղճանում, տկարանում...

Ովքե՞ր են այդ վիճակի պատասխանատուները. խիղճ, պարտաճանաչություն և պատասխանատվություն կա՝, թե՝

չկա, մնացե՞լ է, թե՞ չի մնացել հայ ազգային իրականությունում, հայ «աշխարհում»: Իսկ լույս հավա՞տքը, հավատքն ի՞նչ վիճակում է հայ կյանքում:

Եվ դա Տիրոջ՝ Երկնավոր Տիրոջ հարցումներից կարող է լինել հայությանը, որ ինքն ստեղծել, պաշտպանել է, բազում անգամ ներել է և դարձյալ պահել, պաշտպանել է, որովհետև սիրում է հայ ազգին:

Դայ ազգ... դու սիրված ես և կյանք ունես, ցնծա՛, ուրախացի՛ր, գոտեպնդվի՛ր և աշխատի՛ր, աշխատի՛ր ու աշխատի՛ր հոգով, սրտով ու ամբո՞ջ էռությամբդ, որ չկորցնե՞ս այդ սերը, կյանքը և հոգեպես չսնանկանաս՝ այժմ և հավիտյանս:

Դարկ է իիշել պատանի Դավթի խոսքերը, որ նա ասում է հսկայակերպ ու անհավատ Գողիաթի մասին, թե ով է նա, որ համարձակվում է նախատել կենդանի Աստծո գորքերին (*Աստվածաշունչ մատյան, Թագավորների Ա գիրք, 17:26*):

Դետևապես, ովքե՞ր են մեր օրերի այն գողիաթները և նրանց թիկունքները, որ ջանում են ներսից ու դրսից, բարեկամի դիմակով կամ թշնամու բացահայտ լավիշությանը մեզ հանել մեր դեմ, անգամ մեր հավատքի, Տիրոջ դեմ, և դրանով տիրանալ թե՛ մեր սրտերին ու մտքերին և թե՛ մեր ինչքին ու կոտորակված հայրենիքին: Բայց եթե հավատքի հանդեպ մեր հավատարմությունն անխախտ է, դա չի լինի, երբե՞ք:

Դավթի պարսատիկը չի հնացել, հավատքով այն միշտ գործուն է և բոլոր ժամանակների գողիաթներին չեզոքացնող: Միայն թե միշտ լինի մեր հավատարմությունը մեր Սուրբ հավատքին:

01 - 11 - 2010թ.

## ՈՒՄ ԶԵՌՔԻՆ Է

Ում ձեռքին է մեր նոր սերնդի, հատկապես 6-8, 8-10, 12-14 և մինչև 20-25 տարեկան աղջիկների ու տղաների՝ կյանքի հանդեպ «քիմքի համի» պատրաստումն ու մատուցումը՝ որպես առաջադեմ ուրախ կյանքի ժամանց և նույնիսկ մշակույթ:

Երկուշաբթի առավոտ է, ժամը 9:30: Աստծու լույսը բացվել է ՀՀ մայրաքաղաքի վրա: «Բարև երկիր» ծրագրով հայկական մի հեռուստաընկերություն հաղորդում է երգ, որի բառերը թեև հայերեն, սակայն երաժշտության պատկանելությունն անհայտ է, բոլոր դեպքերում շատ հեռու է հայկականից: Երգում է անչափահաս մի աղջիկ, որի ոչ թե դեմքն ու երգող շրթունքներն են ցուցադրվում այլ... քանակը և (մինչև վեր) մերկ ոտքերը: Խե՞ղճ հայ աղջիկ, որ երջանիկ դեմք է ցույց տալիս, խե՞ղճ ծնողներ, որ համակերպվում կամ գուցեն տոնն են տալիս իրենց դստեր այդ վիճակին, և խե՞ղճ ազգ ու պետություն՝ իր դեկավարությամբ, հոգևորականությամբ և մտավորականությամբ:

Չնչում է գովազդ՝ «Ամենասկանդալային պատմությունները միայն...», ու եթերում հնչում է «առաջադիմություն» ցուցաբերող այդ հեռուստաընկերության անվանումը: Յետո էլ հայտարարություն. «Ներկայացնում ենք աստղերի կյանքը»:

- Այդ ո՞ր աստղերի, ի՞նչ աստղերի... Եվ հոլիվույշան շրջապատի թափթփուկները ներկայացվում են որպես հերոսներ:

- Յերո՞ս, ինչո՞ւ, ի՞նչ են արել:

- Մի քանի անգամ են ամուսնացել, թմրադեղ օգտագործել, «սիրային» (այլանդակ) հարաբերությունների համար 11 ամիս բանտարկության են դատապարտվել, իսկ երգի մի

«կուռքն» էլ իր մահից հետո 245 միլիոն եկամուտ է բերել... և նման այլ բաներ են արել:

Այդ «լուսաբանումներից» հետո, ի՞նչ լավ է, որ հաղորդվեց նաև տեղեկություն ՀՀ տարածքային չափերի և պետական խորհրդանիշների մասին:

Ինչո՞ւ նույն աղբյուրից բաղցո ջրի հետ նաև դառը ջուր է բխեցվում: Այդ հարկավոր է ռեյտինգից չընկնելու համար: Բայց մի՞թե «ռեյտինգի» համար պետք է մեղսակցել, փոխանակ այնքան խելացի, հմուտ ու աշխատասեր լինել, որ սեփական բարոյական, իմաստալի ու օգտակար մոդա ստեղծել և դրանց թողարկումով ռեյտինգ բարձրացնել. շատ բարձրացնել:

Կարող է ասվել, թե սա մեկ հեռուստաընկերության գործ չէ, դրա համար պետք է պետական և համազգային ընդգրկումով անխոնջ աշխատանք կատարել, պայքարել, գուցես օրենք ընդունել, որովհետև մեր հարազատ դիրքերն այդ հարցերում շատ են բուլացել, տկարացել...

Եթե այդ է պետք, ուրեմն՝ այդ անելու համապատասխան ջանքեր պետք է կատարել: Կարևորը, որ ազգի պահպանմանը, ամրապնդմանն ու վերելքին վերաբերող խնդիրները ճշտորեն և ժամանակին թիրախավորվեն, կատարվեն:

Երկուշաբթի, 27 - 06 - 2011թ., ժամը 01:40

## АМЕРИКАНСКИЙ ПИРОГ - ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿԱՐԿԱՆԴԱԿ

Ուրիշ անգամ էլ պատահական տեսել եմ, սակայն այս գիշեր ճամփորդության պատրաստվելիս (ժամը 01:40-ի մոտերը) տեսա, որ մեր հեռուստաընկերություններից մեկը դարձյալ ցուցադրում էր ամերիկյան միջնակարգ դպրոցի աշակերտների դպրոցական ու արտադպրոցական կենցաղը ներկայացնող ֆիլմ (ըստ երևույթին սերիալ), որն առաջին հերթին պետք է հետաքրքրի նրանց հայ տղա ու աղջիկ հասակա-

կիցներին: Եվ ո՞րն է ֆիլմի «գաղափարական» բովանդակությունը (որի տարածումը ցուցադրման հիմնական նպատակն է). տղաների և աղջիկների՝ սեռական հարաբերությունների («սեքսի») մասին մտածելը բնականոն, ընդունելի և խրախուսելի երևույթ համարելը:

Եվ ամերիկյան այդ դպրոցականների կյանքն աֆրոամերիկյան երաժշտության ներքո ցուցադրող ֆիլմում աղջիկները, հագնված կիսաբաց կրծքերով, ազդրերը մերկ, մոտենում են տղաներին՝ ցույց տալով իրենց կրծքերը, հպվում են տղաների սեռական անդամներին, իսկ տղաներն էլ դրանցով ցցված տաբատներով ման են գալիս դպրոցի միջանցքներում՝ աղջիկների հրճվալից հայացքների ներքո: Ժամանակ առ ժամանակ էլ ցույց է տրվում, թե միասեռական աղջիկներն ինչպես են կրցոտ իրար համբուրում, այս անգամ՝ տղաների՝ հրճվալից հայացքների ներքո: Ցուցադրվող այդ ֆիլմում բողոքականների եկեղեցին՝ ժողովարանը, և կրոնականը՝ պատվելին, գոեհիկ և ծիծաղելի վիճակի են հասցված:

Աղջիկների հագնվածքը, սանրվածքը, դիմահարդարումը «հոլիվուդյան» է:

Մի խոսքով (գուցե մի քիչ կոպիտ հնչի, բայց արդար ասված), հայկական հեռուստաալիքով հայ եթերում կեսօհշերից անմիջապես հետո (Վաղ առավոտներն էլ) ցուցադրվող ամերիկյան այդ ֆիլմում հանդես են գալիս բարոյագուրկ ուսուցիչների և ծնողների բարոյալքված կամ բարոյագուրկով աղջիկներ, տղաներ ու նաև աղջիկներ՝ միասեռական հարաբերություններով: Եվ դա, հավանաբար, բացատրվում է որպես ժամանակակից, առաջադեմ կրթության «նմուշօրինակի և փորձի օգտակար» փոխանակում «գերզարգացած» կողմից:

Զգվանք է զգացվում: Զգվելի պարտականություն կատարվեց՝ նկարագրելով այդ հեռուստահաղորդումը: Բայց պետք էր ներկայացնել դրա ահավոր տգեղությունը և բացահայտել դրա այլասերող, փչացնող նպատակը: Ափսուն, որ դրա համար հայկական հեռուստաալներությունների միջոցներ են տրամադրվում:

Ֆիլմն անգլերենից է թարգմանված և հնչում է ռուսերեն. լսվում է տղա աշակերտների միջև զրույցն իրենց համադասարանցի աղջիկների մասին. „С начало я трахну ее медленно, а патом быстрее”, և մարմնական շարժումներով փորձում է նկարագրել իր անելիքը...

Ների՞ր իրենց ու նաև մեզ, Տե՛ր Աստված, որ անտարբեր ենք այսպիսի քայքայիչ այլանդակություններով մեր երկիրն էլ լղոգելու հանդեպ, որ միտված է այլասերելու, քայքայելու և կորստյան նատնելու հատկապես մեր նոր սերունդը՝ որով և մեր ապագան՝ մեր ազգը, երկիրը և պետությունը:

Այդ անողները, ըստ ամենայնի, չեն ներվելու. նրանց ներում չկա՛, իսկ մեզ՝ անտարբերներիս և կամ վախկոտներիս, կա՞ ներում և փրկություն:

Դժվար է ասել, թե կա: Որովհետև տվյալ հանցավոր մեղքը գործվում է ոչ թե անգիտության, այլ անտարբերության, վախսկոտության, որով և մեղսակցության հետևանքով, ինչը նշանակում է մեր հավատքի ու ինքնության հանդեպ անհավատարմություն, ուրացում և դավաճանություն:

Ների՞ր, Տե՛ր Աստված, տուր մեզ ինաստություն, գիտակցություն ու նաև խիղճ և քաջություն, որ զգաստանանք, արիանանք և դարձի գանք, բոլո՞րս: Եվ դիմադրենք, չհանձնվենք...

Երկուշաբթի, 23 - 10- 2010թ., ժամը 21:30

## **ԱՆԱՐԺԱՆ ՀՆԱՐՔՆԵՐԻ ԿԱՄ «ԵՐԵՔ ՄԱՆԵԹԱՆՈՅ... ԾԻԾԱՂԻ» ՄԱՍԻՆ**

Յայաստանյան որոշ հեռուստավճնկերություններ, այն էլ ամենաարդիական ու ազգի համար ամենամտահոգ և հոգատար հորջորջվող հայ հեռուստադիտողին հրամցնում են ամերիկյան հեռուստարվեստի ամենաարժան այն հնարջները, որոնք ամերիկյան շահամոլ բիզնեսը մի ժամանակ կիրառում էր, սակայն հեռուստադիտողների բացասական անդրադարձի ազդեցության տակ նրանք ևս եզրակացրին, որ այդ հիմարությունն ու անբարոյականությունը պետք է դադարեցնել (թեև «դեղին» հեռուստաալիքները գուցե երբեմն իին նյութերով դաշտունակում են)...

### **Բայց ինչի՞ մասին է խոսքը.**

Վաղեմի տխուր բարքերի «Երեք մանեթանոց» լացը 21-րդ դարասկզբին Յայաստանի անկախ Յանրապետությունում «Երեք մանեթանոց» ծիծաղի վերածելու մասին է խոսքը:

**Պատկերացնո՞ւմ ենք,**թե ինչպիսի արդյունաբերություն՝ «ինդուստրիա», և ըստ այդմ՝ ինչպիսի՝ աշխատատեղեր են ստեղծում այդ մեր «փառապանձ» հեռուստաալիքները երիտասարդ աղջիկների, տղաների համար՝ նրանց քրթոցներով «մի դիրիժորի» փայտիկի տակ: Դա անարգանք է հեռուստադիտողի և հատկապես երիտասարդության ու երկրի պատվի հանդեպ:

**Զարթնենք.** «բիզնես անելը», «փող շինելը» չի՝ նշանակում ամեն մի անարժան, անամոթ ու անճաշակ բան անել և ժողովողին հրամցնել...

Երեքշաբթի, 21 - 06 - 2011թ., ժամը 09:10

## **ԽՈՐԱԿԱՆԿ ԵՎ ԴԱԺԸՆ ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

Կասկածից վեր է, որ կան նպատակներ և դրանք իրագործող ուժեր, կողմեր, որոնք ֆիլմերի, ներառյալ հեռուստաֆիլմերի, հեռուստասերիալների, ռոմանտիկայի, ռոմանտիզմի շղարշի ներքո զգույշ, բայց հետևողականորեն դրանց խառնում են պոռնո բովանդակություն, միաժամանակ այդ ուժերը, կողմերը մշակույթը, արվեստը և գանգվաճային տեղեկատվությունը գործածում են՝ աղավաղելու և քայքայելու համար դարերի ընթացքում արմատավորված քրիստոնեական ավանդույթները, քրիստոնեական բարոյականությունը և ընտանեկան-բարոյական արժեհամակարգը: Այդ համաշխարհային, գլոբալ դավադրության մեջ ֆիլմարտադրությունը, հեռուստատեսությունը և մասնավորապես վերջին ժամանակաշրջանի սերիալ-ֆիլմերը հարածուն դերակատարություն ունեն:

Այդ նպատակի իրագործման համար գործածվող միջոցներից է արտաամուսնական սեռական հարաբերությունների («սեքսի»)՝ որոշակի (թաքուն) գովազդով տարածումը՝ միաժամանակ աստիճանաբար նվազեցնելով դրա տարիքային շեմը: Եվ պատանեկան ու երիտասարդական տարիքի համար սեռական սանձարձակությունն ու ամենաբողոքությունը, լինելով բավական հրապուրիչ ու գայթակղիչ, հնարավոր է դառնում ավելի դյուրությամբ զանգվածայնորեն տարածել հատկապես այդ տարիքային և սոցիալական խավերի մեջ: Եվ Արևնտյան «առաջադեմ» երկրների **նոր ժամանակների** կենցաղավարության լուսավոր թվացող այս խավար նպատակն ու գործընթացը հարածունորեն տարածվում են նաև «զարգացող կողմերի», ներառյալ՝ հայության ու Հայաստանի մեջ:

Եվ դրա համար էլ հատկանշականն ու վտանգավորն այն է, թե արդյո՞ք մեր այն կառույցները և դրանց պաշտոնյաները, որ իրենց կոչումի համաձայն պատասխանատու են անձի, ընտանիքի ու ազգի բարոյական ապրելակերպի պաշտպանության համար, ինչ-որ չափով իրենք են վարակված և կամ արժեզրկված ու չեղոքացված...

Եվ ո՞վ կփրկի մեզ: Ո՞վ կփրկի մարդուն, հային: Ո՞վ: Եվ մանավանդ ո՞վ կփրկի մեր երեխաներին ու սերունդներին: Արդյո՞ք նրանք այդ փրկության հարկը կզգան, կիմանան և կուզենան, կձգտեն փրկվել, թե՞ իրենք էլ հոգեբարոյական ընդարձացմանք չեղոքացված՝ կիանձնվեն կամ նույնիսկ այդ փրկության դեմ իսկ կգործեն՝ ի կորուստ հավերժական:

Եվ մնում է, որ այս վտանգի առաջ մարդը, հայը, արայք և կանայք, տարեց ու երիտասարդ, որ դեռ չեն ազդված կամ լրի՛վ չեն ազդված այդ կորստաբեր վարակից, զգաստանան, հոգեպես կազդուրվեն, կազմակերպվեն և աներկյուղ ու առանց որևէ տարակույսի, ինքնական ու հաստատակամ պայքարի՝ ելնեն՝ միշտ հիշելով, որ վախն ու տարակույսը թերահավատության նշան են, իսկ թերահավատությունը տանում է կենսազրկության, տկարության, ու ի վերջո՞ւ ստրկության ու կորստի: Սակայն քանի որ թերահավատությունը, հանձինս մեր նախնյաց, մեր ազգը վաղուց էր վերացրել, ապա որպես նրանց հավատարիմ ու արժանի ժառանգորդներ, մենք էլ վերացնենք, հեռացնենք մեզանից ու անվախ գործենք, պաշտպանվենք և պայքարենք մեր հավատքով, գաղափարականությամբ, բարոյականությամբ ու Աստուծո օգնությամբ: Փա՞ռ Նրան:

06 - 06 - 2016թ.

## ԱՐԴՅՈՒՔ ԷՎԿԱՆԸ ՉԻ ՎՐԵՊՈՒՄ ՄԵՐ ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

**(Հատկապես մատադ սերնդի կրթության ասպարեզում)**

Ո՞վ, ովքե՞՞ր, ե՞րբ ու ինչպե՞ս են որոշում, թե հատկապես պատմության և գրականության դասագրքերով ինչ պիտի սովորի, ինչ պիտի գիտենա՝ հայ աշակերտը, որպեսզի դրանով ճանաչի, գիտակցի իր հայկականությունը և տարրեր տարիքային շրջաններում հաստատում համոզումով գիտենա հայի և մարդու իր պարտականություններն ու իրավունքները հայ կյանքում ու ընդհանրապես մարդկային կյանքում: Այլ կերպ ասած, ի՞նչ պետք է գիտենա, որ ըստ այնմ՝ պարտք զգա՝ անպայման անելու կամ պարտք զգա՝ անպայման չանելու:

Ինչպե՞ս, ի՞նչ նապատակով, ի՞նչ աշխարհայացքով, ի՞նչ տեսլականով ու ապագայի կանխատեսման ինչպիսի՝ չափանիշներով են ընտրվում պատմության և գրականության դասագրքերի նյութերը և հատկապես դրանց գաղափարական բովանդակությունը:

Այս հարցերը լիովին հստակեցված են մասնագետների, ուսուցիչների ու պաշտոնյաների, իշխանությունների կողմից և այնուհետև արդյոք իրազեկվել, արձարձվել, քննարկվել, գնահատվել են մեր հասարակության մեջ՝ համապատասխան մասնագիտական բարեկիրծ գեկուցումների և ԶԼՄ-ների տեղեկատվության միջոցով: Դայ մարդիկ, հայությունը և մասնավորապես ծնողները, տատերն ու պապերը տեղեկացված են և պարզ ու հստակ ընթանում ունեն այդ հարցերում, հնարավորություն ունեն հարց տալու ու նաև կարծիք և նախասիրություն հայտնելու:

Այլապես, եթե այս պայմանները չապահովվեն՝ մարդ և հայ մարդ կրթելու, ձևավորելու համար, ապա մեր ազգի, հայ-

րենիքի և պետության համար էական գործընթացները (մանավանդ, երբ մեր շուրջը վխտում են սուտը, կեղծիքն ու խարդախությունը, ոչ միայն մեր պատմական անցյալի, այլև մեր ներկայի ու ինքնության իսկ վերաբերյալ) անհիմն, սխալ և վնասակար ուղղություններով են ընթանալու, ինչպես բավականին երկար ժամանակ արդեն իսկ ընթացել են և շարունակում են ընթանալ...

Նույն նպատակադրմանը հարցադրումները վերաբերում են հայ կյանքի նաև այլ բնագավառների, որոնց ընթացքն ակնհայտորեն շեղված է: ԶԷ՞ որ ծառն իր պտղից է ճանաչվում, ինչպես և գործը՝ իր արդյունքից: Յետևապես հայության ջանքերն ու դրանց ուղղությունն էլ հայ ազգի ու Յայաստան հայրենիքի վիճակից պետք է ճանաչվի:

Կիրակի, 18 - 06 - 2000թ., 09:00

## **ԱԶԳԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՑԵՍՈՒԹՅՈՒՆ (Հավատամքով ազնվություն, քաջություն, անկաշառություն, բարոյականություն)**

Ազգային հաղորդակցության համար կարևոր նշանակություն ունեցող հայկական հեռուստատեսությունն իր խնդիրը կատարելու համար, բացի որոշակի մասնագիտական և քաղաքացիական հատկություններ ունենալուց, պետք է լինի նաև ազնիվ, քաջ, բարոյական ու անկաշառ: Այն չափուի վախենավտանգությունը և չընկրկի դժվարությունների առջև, որոնք կարող են առաջանալ որոշ պատճառներով՝ առկա ներքին ու արտաքին տգիտության, չարության, նախանձի, հայացքների ու սկզբունքների տարբերության և ընդհանրապես հակադիր շահերի բախնան պատճառներով:

Թեև ամենամեծ և դաժան միջոցներով հակամարտությունն ու դիմադրությունն առաջանում են սկզբունքների և,

մանավանդ, շահերի տարբերության, անհամատեղելիության պատճառով (որն ինչ-որ տեսակետից կարելի է բնական համարել), սակայն ամենացավալին տղիտության, նախանձի, չարության ու նաև թյուրիմացության պատճառով առաջացող դժվարություններն ու վտանգներն են:

Ինչո՞ւ ցավալի: Որովհետև դրանք առաջացնողները, սովորաբար, յուրայիններ են լինում, որոնք տարբեր դաստիարակության, տարբեր մտածելակերպի կամ նկարագրի ու բնավորության պատճառով (գոնե սկզբում) միանգամից ի վիճակի չեն լինելու ընթացքում ծշնարտությունը, լույսը, օգտակարը, նորը, մանավանդ, երբ հակադիր կողմը ջանում է ստել, խարել և իր շահերի համար միջոցների մեջ խտրություն չդնել:

Տեղեկատվության, դրա վերլուծության և քննարկումների արդյունքը, երբ որոշակի մարդկանց գիտեցածին և ընդունածին համապատասխանում է, նրանք հիմնականում դյուրությամբ և հաճույքով են ընկալում: Իսկ երբ դրանք լրիվ նորություն են, դրանց ընդունումն առհասարակ միանշանակ չի լինում, բայց և մեծապես ցավոտ ել չի լինում, այսինքն՝ առանձնակի դիմադրություն չի լինում: Սակայն երբ տեղեկությունը, դրա վերլուծությունն ու քննարկումների եզրակացությունները չեն համապատասխանում, ավելին՝ հակառակ են իրենց գիտեցածին, մտածածին, հայացքներին և մանավանդ գաղափարներին ու համոզումներին, ել չասած՝ շահերին, արդեն անկախ նրանից, թե ինչքան ծիշտ ու կարենոր կարող են լինել դրանք, չեն ընդունում. դիմադրում են, աշխատում են չեղած տեղից անգամ հակառակ «ապացույցներ գտնել», չարախոսել ու ամեն կերպ վնասել:

Գուցե սա ել կարելի է բնական համարել, բայց դրանք հույժ անբնական, ցավալի և վնասակար են դաշնում, երբ փորձում են վարկաբեկել, վնասել, ընդհուա՝ կործանել այդ նորը՝ տարբեր ձևերով, տարբեր միջոցներով և ուժգնությամբ՝ կախված իրենց նկարագրից, քաղաքակրթական ու բարոյական մակարդակից և ոչ վերջին հերթին՝ իրենց հավատամքից:

Հետևապես, տեղեկատվական և վերլուծական աղբյուրն հնչ դիրք պետք է բռնի, հնչ վերաբերմունք պետք է ցույց տա. հաճոյանալո՞ւ, բարեկամներ ու աջակիցներ ստեղծելու իր նպատակի՞ն հետևի՝ ճշմարտությունը չասելով, այն թաքցնելով կամ աղավաղելով և օգտակարը չբացահայտելո՞վ՝ դրան վնաս հասցնելու գնով: Թե՞ ճշմարտությունն ու օգտակարը բացահայտի և հասարակության կողմից դրանց ընդունման ու կիրառության անհրաժեշտությունն ապացուցելու անսակարկ նպատակին հետևի՝ դրա համար պատրաստ լինելով վճարել նաև բարձր գին:

Ակնհայտ է, որ հարցի ճիշտ, բարոյական արժեքների համաձայն՝ պատասխանը երկրորդն է: Եվ դրա հետ, հավանաբար, շատերը կհամաձայնվեն: Բայց արդյո՞ք շատերը կիետնեն, պատրաստ կլինեն՝ գիտակցորեն դիմագրավելու և կրելու ներությունը, դժվարությունը, անկանխատեսելի զրաբարտիչ վարկաբեկումներն ու վտանգները՝ հանուն հանրային, ազգային, երկրի և պետության լավի, օգտակարի և նույնիսկ հանուն նրանց, ովքեր դիմադրում, պայթարում են այդ ճշմարտության սիրույն:

Այստեղ արդեն գալիս է այն, ինչն սկզբում նշեցինք՝ ազնվության, քաջության, անկաշառության և բարոյականության նաև: Դրան ավելացնենք նաև հավատանքի ամենակարևոր ու էական գործոնը:

Ազգային ազնիվ, հետևապես և օգտակար հաղորդակցության իրազեկման հարցում հայկական հեռուստատեսությունը լրագրության մասնագիտական հատկություններից բացի, մի՞թե պետք չէ որդեգրի նաև վերը նկարագրված հոգեբարոյական հատկանիշները: Որովհետև ազնիվ, պատվավոր ու հաղթական ծառայությամբ անցնելու համար հատկապես մեր ազգին վիճակված, փշոտ, քարքարոտ ու փոսերով լի ճանապարհը, հարկ է պատրաստվել, զինվել միջազգային ու ազգային լրագրության արհեստավարժության բարձրագույն չափանիշներով, մարդկային հայկականության բարոյական արժեքների ամենաբարձր չափանիշներով ու ամենաեականը՝ Աս-

տուո՞՝ մեր սուրբ հայրերի դավանած հավատքով, և դրանից բխող ու դրա վրա հիմնված գաղափարախոսությամբ ու բարոյականությամբ:

\*\*\*

Երանի ունենանք գովազդից զերծ («մաքուր») հեռուստաալիք՝ համահայատանյան և համահայկական, որը գործի վերը նշված չափանիշներով ու էապես տարբերվի բոլորից իր ծրագրերի բովանդակությամբ ու նաև մատուցմամբ:

Եվ հիմնական ծրագրերի բովանդակությունը լինի.

- Կրթամշակութային, հանրամատչելի գիտական, հայագիտական և հայրենասիրական-մարդասիրական ու բարոյագիտական:

- Ազգային (համահայկական) և միջազգային նորություններ, տեղեկություններ և դրանց վերլուծություններն ու մեկնաբանությունները:

- Ուսումնական՝ տնտեսական զարգացման, ձեռներեցության հմտության ու գործարարության եթիկայի նշանակության ընթացման վերաբերյալ:

- Քաղաքացիական հասարակության, օրենքի գերիշխանության, հասարակական ու անձնական հարաբերությունների բարոյականության ու ազգի, հայրենիքի և նարդու իրավունքների քաղաքացիական հասկացությունների և ընդհանրապես հոգևոր-գաղափարական արժևորման ու մտավոր ընդհանուր զարգացման ուղղությամբ:

- Հոգևոր և բարոյական արժեքներով հայ ազգային տոհմիկ կերպարի վերակերտման, ազգային ինքնագիտակցության վերահաստատման և ժամանակակից քաղաքական ու քաղաքացիական մշակույթի դաստիարակման վերաբերյալ:

**Ծրագրերի մատուցումը՝**

- «պարզ» գրական հայոց լեզվով,

- բարդ և զուտ մասնագիտական նյութերի հանրամատչելի շարադրանքով,

- լրագրական միջազգային բարձր արհեստավարժության մակարդակով և ժամանակակից բարձրորակ տեխնիկայով,

- հայկականության մարդկային շնչով, ոգով, գաղափարով և բարոյականությամբ, որոնք բխում են ու հիմնված են մեր հավատամքի վրա՝ Ավետարանով և Խաչով:

## ՄԱՐԴԸ ՄԻՇՉԵՎ Ո՞ՒԹ ԿԱՐՈՂ Է ՀԱՄՆԵԼ

*Երանի նրանց, որ պառպ մաքոր են,  
որովհենու նրանք Աստծուն պիտի  
տեսնեն:*

(Սատրենս 5.8)

Մարդիկ իրենց սրտի մեջ (ու ընդհանրապես) կարող են շատ տարբեր լինել՝

- բարի կամ չար,
- ուրախ կամ տխուր,
- տարբեր չափանիշներով՝ հարուստ կամ աղքատ,
- երջանիկ կամ դժբախտ,
- ու նաև, ամենաէական նշանակությամբ, կարող են լինել

Տիրոջ կողմից կամ թշնամու՝ չարի ճանքարից:

Այսինքն՝ լինել լույսով, սիրով ու արդարությամբ պարուրված՝ դեպի վերելք, կյանք, կամ էլ չարությամբ ու ատելությամբ լինել խավարապատ՝ դեպի անկում և կորուստ:

Եվ դա կախված է Աստծուց ու նաև մարդուց՝ ըստ նրա հավատամքի:

Եվ մարդուն այս էական պարագայում շնորհված է լինել գործակից Աստծուն:

Ի՞նչ մեծ փառք, պատիվ և կարևորություն մարդուն...

- Յետևապես կարո՞ղ է հայ մարդը, իոգևոր շնորհով՝ հավատքի հոգեկանությամբ, իմաստնությամբ ու գիտությամբ, դառնալ հարազատ ու հավատարիմ գործակիցն իր Արարիչ

Յոր՝ ի փրկություն իր անձի, իր յուրայի մասների, նաև իր ազգի և նույնիսկ համայն մարդկության:

- Այո՛, իհարկե, հայն ու հայ ազգն այդպիսի շնորհալի հատկություններ ունեցել են, ունեն և դրանցով միշտ ունենալու են նաև այն Աստվածատուր կարողությունը, որի կարելիություններով և միջոցներով կարող են համախումբ, ապահով ու ինքնաբավ կյանքով երջանիկ լինել ու նաև երջանկացնել ուրիշներին, երբ նորից դառնան իրենց նախնյաց պես՝ պարուրված վերամբարձ լույսով՝ գիր-գրականություն, մշակույթ, ճարտարապետություն, արհեստներ, առևտուր սովորեցնելով և նույնիսկ ամենակարևորը՝ հավատք ու հավատքի ապրում փոխանցելով ուրիշներին՝ Աստուծո արարածներին՝ եղբայր ու քույրերին՝ «մերձավորին»:

- Իսկ դա կապ ունի<sup>o</sup>, պայմանավորվա՞ծ է մեր ազգի, երկրի և պետության այսօրյա քաղաքականության հետ, աշխարհիկ ու հոգևոր ղեկավարների ընտրությունների հետ, մանավանդ՝ մեր սրտերում եղածի հետ, մեր նոր սերնդի և նրա ապագայի հետ:

- Այո՛, ունի կապ ու առնչություն և պայմանավորվա՞ծ է ավելի շատ, քան կարելի է երևակայել: Ինչո՞ւ, որովհետև այդպիսով՝ հավատքի առկայությանք ու մղումով առաջացած զարգացումները նաև երկնային բնույթ ունեն: Եվ դրա ընթանումը, կիրառումն ու արդյունքը, հետևանքը Աստվածաշնորհ իմաստությամբ ու գիտությամբ են:

Ուրբաթ, 06 -11 - 2015թ.

## **ՏԵՍԱ, ԼՍԵՑԻ, ՎՐԴՈՎՎԵՑԻ, ՄՏԱՅԵՑԻ ԵՎ ՀԱՐՑԵՐՈՎ ԼՑՎԵՑԻ. ՀՈԳԻՄ ԹՉԱՅ**

Լսվեց „Կառու կօշունտե՞՞՞” («Ի՞նչ սրբապղծություն») և որա անդրադարձը. «Ի՞նչ սրբապղծության մասին է խոսքը, ո՞չ մի սրբապղծություն», - ասաց ֆրանսիական „CHARLIE HEBDO” օրաթերթի խմբագիրը և շարունակեց (թարգմանված ռուսերեն). „Մա լուսաւում աշխարհիկ, ժողովրդավարական ու արեհստական (անաստված) լրագիր ենք»:

Այս խոսակցությունը (ըստ Rossия 1 Вести -ի, 06. 11. 2015թ. հաղորդման) տեղի է ունեցել ռուսական „Airbus 321” օդանավի կործանման լուրն այդ շաբաթաթերթում ծաղրանկարներով հաղորդելու կապակցությամբ: Եվ տվյալ հրատարակումը եղել է 3 միլիոն տպաքանակով: Այդքան մեծաթիվ, քանի որ այդ թերթի սկանդալային հրապարակումների պահանջարկը մեր օրերում ու այդ վայրերում, դժբախտաբար, մեծ է:

**Սակայն այդ կապակցությամբ հարկ է հարց տալ.** ինչպիսի՞ն է այդ պահանջարկը. արդյո՞ք մեծ մարոկային ողբերգությունն ու ցավը ծաղրելու, վրան ծիծաղելո՞ւ «պահանջարկ» է: Այդ դեպքում ինչպիսիմերի՞ կողմից է դրվում, և ովքե՞ր են բավարարում այդ «պահանջարկը». վերոհիշյալ խմբագրի ասած աշխարհիկ, ժողովրդավար անհավատների՞, արեհստների՞ կողմից է բավարարվում: Եվ մի պահ նաև պատկերացնենք, թե 3 միլիոն տպաքանակով այդ շաբաթաթերթը կարդալու պահանջարկն ունեցողների կողքին դեռ քանի՞-քանի՞ միլիոն այդ պիսիները կան, որ նրանց փոխանցվում է այդ թերթը, որ կարդան:

Եվ ինչպիսի՞ն են նրանք, ովքեր բավարարում են այդ-

պիսի պահանջարկը: Դու կարո՞ղ ես բավարարել. ո՞չ, ապա ովքե՞ր կարող են, «աշխարհիկ, ժողովրդավար աթեխստ անաստվածնե՞րը» կարող են բավարարել:

Բայց և դարձյալ գանք այն հայ մարդկանց, որ ցանկանում, երազում ու իրենց հայրերի պես պատրաստ են ամեն գնով պաշտպանել, պահպանել. նախնառաջ իրենց հոգևոր, գաղափարական, բարոյական ինքնությունն ու ըստ այնմ՝ ապրելակերպը. ովքե՞ր են բավարարում կամ պատրաստ են բավարարել սրանց պահանջարկը:

Թե՞ նրանք, որ պարտավոր են այդ անել՝ տարբեր միջոցներով ու ձևերով բավարարել, արդեն իսկ խարված, չեզոքացված են կամ առնված-գերված են՝ անկարող իրենց կոչումի համաձայն իրենց պարտքը կատարել:

Ո՞ւմ առաջ պարտքը կատարել:

Չգիտե՞ք, ցավալի է, շա՞տ ցավալի, որ այն, ինչը դեռ որովայնում եղած ժամանակից պետք է իմանայինք, ստացվում է, որ պետք է մեզ հիշեցվի, որովհետև մոռացե՞լ ենք... իսկ եթե ոչ թե մոռացել ենք, այլ բավական ժամանակից ի վեր չզիտեինք և հիմա էլ շատերս գիտենալու կարիքը չենք զգում, որովհետև մենք ինքներս վաղուց այլևս չկանք՝ որպես մարդ, որպես հայ, որպես Աստվածակողմ էակ:

Ու այս վիճակում արդյոք կարելի՞ է հոգեկան ու ֆիզիկական խաղաղության մեջ լինել, մանավանդ մեր մատադ սերունդը՝ հոգեբարոյական ապականումից զերծ ու ապահով լինել:

Մեր ազգի աշխարհիկ ու հոգևոր դեկավարությունը, պատասխանատուները կարո՞ղ են այս հարցերին դրական պատասխանել, ասել այո՛, կարելի է: Իսկ եթե «չեն կարող» և չեն էլ ձգտում ընդհանրապես այս հարցերին առնչվել, կարո՞ղ է պատճառը նրանց այն մտայնությունը լինել, որ դրա կարիքն այլևս չկա, քանի որ «կորածներին» հնարավոր չէ հետ բերել...

Ու վերոնշյալ և դրանց նման այլ պատկերների ֆոնին մի՞թե հոգուց, խղճից և մեր մարդկային ու ազգային գիտակցությունից բխող հարց չի առաջանալու այն մասին, թե արդյո՞ք

հայ մարդու՝ արանց և կանանց, Երիտասարդների ու տարեցների, պաշտոնյաների ու շարքային հայերի համար մտահոգվելու, նախանձախնդիր լինելու, պատասխանատու զգալու ու ահազանգ հնչեցնելով ոտքի կանգնելու և 21-րդ դարասկզբի հայությանը «Ավարայրի» դաշտ հրավիրելու համար հոգևոր, գաղափարական և բարոյական **պահանջարկ** չկա: Եթե այդպիսի պատրաստակամության ու պատրաստության պահանջարկ չկա, այդ դեպքում դրանից ավելի մեծ ազգային ողբերգություն և կորստարեր վիճակ կարող է լինել: Իսկ եթե կա այդպիսի պահանջարկ, ապա կարևորագույն հարց է, թե ես ու դու՝ մենք, արդյո՞ք այդ պահանջարկը բավարարողներից ենք...

Նայենք դեպի մեր ներսն ու Երկինք, նաև մեր հոգուն, խղճին, գիտակցությանը և պատասխանենք: Պատասխանենք մեր նախնիներին ու մեր Երեխաներին, թռոներին, սերունդներին և **Աստծուն**:

Եվ դա կանենք, պատասխանատվության զգացումով կպատասխանենք, եթե հայոց հարազատ նախնիների՝ մեր մեծերի, սրբերի, նահատակների հավատքից գեր մի նշույլ իսկ մնացել է մեր մեջ:

Կիրակի, 14 - 04 - 2013թ., ժամը 22:30

## **ՀՍՏԱԿԵՑՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ, ԴԱՍՎԱՐԳՈՒՄ ՈՒ ԸՍՏ ԱՅՆՄ ՈՐՈՇՈՒՄ**

Գիտենք, չէ՞ որ աշխարհում, հետևապես և բոլոր Երկրներում ու ազգերի մեջ կան բարին և չարը: Եթե գիտենք, որ կան, ապա (խոսելով նախևառաջ մեր ազգի ու Երկրի մասին) տրամաբանութեն նապատակահարմար, հույժ կարևոր ու օգտակար է կատարել որոշ հարցադրումներ՝ գտնելու համար դրանց պարզ ու հստակ պատասխանները բոլորի համար.

- Մեր ժողովողի մեջ, Քայաստանում կա՞ն: Եթե կան թե բարին և թե՛ չարը, այդ դեպքում՝ մի՞թե պետք չէ հանրամատ-

չելիորեն պարզաբանել ու լայնորեն իրազեկել բարու և չարի սահմանումները, բնորոշել դրանց հատկությունները: Ի՞նչ է նշանակում բարի, ինչպես բնորոշել այն և նույնը անել չարի պարագայում. Ի՞նչ է չարը, ինչպես բնորոշել այն: Եվ բացահայտել նաև հայ իրականության մեջ դրանց տարածման միջոցը (միջոցները), չափը, դերը ու նաև հետևանքները:

- Չարի առկայությունը (թեկուզեւ մեր ընդհանուր պատկերացմանը) բացասաբար՝ է անդրադառնում յուրաքանչյուրիս և մեր ազգի ու երկրի վրա, թե՞ ոչ: Եթե բացասաբար է անդրադառնում, ապա մի՞թե չպետք է ձգտել ազատվել չարից: Թե՞ պետք է վերջերս հաճախ կրկնվող այդ «հանդուրժողականությունը» ցուցաբերել և թույլ տալ, որ չարը շատանա, զորանա և իր ազդեցությունը հարածունորեն տարածի յուրաքանչյուրիս վրա և մեր ազգի ու երկրի վրա: Ու մենք անդրադառնանք, երբ «Դանակը ոսկորին է հասել» և կամ մեր հասարակության ուղնուծութին է հասել:

Աշխարհում, ինչպես և մեր ազգի մեջ շատ պարագաներում չարի ձեռքերն ազատ են և առանց խոչընդոտների ու սահմանափակումների հանդիպելու գործում է՝ ունենալով նաև պաշտոնական աջակցություն՝ իրավաբանական հաստատություններ, մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպություններ, ԶԼՍ-ներ ու նաև ոչ նվազ հզորությամբ մի շարք երկրներ, պետություններ՝ մեր հանդեպ նրանց վարածքադրականությամբ, վերաբերմունքով, կիրառվող ակտերով ու իրենց դեսպանություններով:

Միաժամանակ մեր իրականությունն ակնհայտորեն ցույց է տալիս, որ բարու հանդեպ (որ ամոթխածորեն ձգտում է իր համապատասխան դերն ու ազդեցությունն ունենալ) ազատորեն կիրառվում են տարբեր սահմանափակումներ, խոչընդոտներ, և մարդու իրավունքները կարծես թե բարուն չեն վերաբերուն:

Եվ կան նաև զարգացած, ժողովրդավար ու օրինակելի հորջորջվող երկրներ, որտեղ մանկապիտությունը վճռական ու գործուն դատապարտողներին և այն կենցաղի մասի վերածելու

ձգտումների դեմ դուրս եկողներին «խորհուրդ» է տրվում, հիշեցվում և պարտադրվում է հանդուրժողականություն: Նույնը կատարվում և օրենքով հարգանք ու հավասարություն է պահանջվում նույն սեռի միջև «ամուսնությունների» և նրանց կողմից երեխաներ որդեգրելու իրավունքի դեմ հանդես եկողների դեպքում: Եվ քանի որ սա, այսպես կոչված, զարգացած և ժողովրդավար երկրների կենցաղի հարածուն մաս է կազմում, ապա տրամաբանական ու նաև օրինական է համարվում մեր հասարակությանը ևս վարժեցնել ու նմանեցնել իրենց. այնպես, ինչպես կենդանիներին վարժեցնում են կրկեսի համար, կամ ինչպես թմրադեղի վաճառականները թմրամոլություն են գովազդում, խրախուսում ու տարածում, իսկ կավատներն էլ, կարիքավոր կամ միամիտ աղջիկների և տղաների թակարդելով, պոռնկության վարժեցնում:

Չարի գործածած ծներն ու մերողները շատ են և բազմազան: Ու եթե մի ժամանակ հայ անհատն ու հասարակությունը պատվախնդիր էին, պատիվը՝ «թասիբը», էական էին համարում և դրա համար նաև պատասխանատվություն էին զգում իրենց ընտանիքների, հասարակության, ազգի համար ու նաև պատասխանատվություն իրենց Արարիչ Յո՛ր առաջ, և գոնե ինչ-որ չափով հնարավորություն ունեին կազմակերպվելու, դիմադրելու և նույնիսկ հակահարված տալու չարին, ապա այժմյան վիճակում, երբ այլևս չեն մնացել այդ պատվախնդրությունն ու նախանձախնդրությունը, դրանց փոխարեն, դժբախտաբար, «հանդուրժողականության ու արդիականության» կեղծ տեսություններով մեծ չափով տիրում են անտարերությունն ու անզգամությունը: Ու այս դրության մեջ բացասական զգալի դեր է կատարում նաև մարդկանց և հատկապես ծնողների կողմից նախկինում ամոթ, անքարոյականություն ու խայտառակություն համարվածի հանդեպ «աչքի սովորելը»: Իսկ «մողա» համարվածը և դրա գովազդներն էլ հօգուտ չարի իրենց հատուկ դերն են կատարում:

Սակայն ո՞ւր ենք գնում այսպես անգիտակից ու անտարբեր այդ ցավալի և կորստարեր վիճակի հանդեպ, որում

Վտանգված են մեր և մեր երեխաների, թոռների ու սերունդների անաղարտ, մարդավայել, հայավայել, էլ չասած՝ Աստվածապատգամ կյանքն ու ապագան:

**Եվ մի հարց էլ:** Այդ ցավալի ու կորստաբեր իրականությունը տեսնելուց հետո՝ միայն պետք է մենք զգաստանանք ու անդրադառնանք, գործենք: Մեզանից յուրաքանչյուրն իր ընտանիքում զոհեր տեսնելուց հետո՝ միայն, թէ՝ մինչ այդ, այժմ ևեր, թեկուզն որոշակի ուշացումով, պետք է գործենք՝ վերացնելով նաև նախկին ցավալի բացքողուները: Որովհետև եթե դա չանենք, նույնն է, որ մենք մեր տղաներին բանակ չուղարկենք, մեր նույնիսկ տարբեր կարիքներից գումարներ չկտրելով նրանց զգինենք, պահանջված նակարդակի բանակ և սպայակույտ չպահենք, այլ գիշեր-ցերեկ հաճախտ բլուտ ու դրա նման բաներ խաղանք և «լավ զգալու» մասին մտածենք, քանի որ թշնամին մեր նկատմամբ դեռ ռազմական առավելություն չի ստացել, մեր տղաներին դեռ չի գերել ու գլխատել կամ ստրուկ դարձրել և մեր տուն ու երկիր դեռ չի ներխուժել:

Մեր պատմության ընթացքում այսպիսի ցավալի ու ամոթալի մտքեր, տրամարանություն, կեցվածք ու վերաբերնունք քիչ, բայց երբեմն ունեցել ենք, որոնց հետևանքներն այնքան կորստաբեր էին, որ հասնում են մինչև մեր օրերը:

Այս ցավալի երևույթը մի կողմից հիմար, զավեշտական, իսկ մյուս կողմից՝ ցավալի, ողբերգական է ընկալվում բարու կողմը եղողներից, այսինքն՝ բարու մտածելակերպը, կեցվածքը և վարմունքն ունեցողների կողմից:

**Եվ այդ առումով կա մի մեծ ու էական ծշմարտություն՝ երկսայրի սոնը արդարությամ.** Աստված նայում, հաշվի է առնում ինչպես անհատի, այնպես էլ ազգի ու երկրի մեջ բարու և չարի հաշվեկշիռը՝ «բալանսը», և դրա սահմաններն ու աստիճանները: Ու երբ հատվում է բարու և չարի հարաբերակցության հաշվեկշիռի սահմանը, աստիճանը, դրանից հետո Աստծու գործը, բարությունն ու զորությունը գործում են արդեն պատժելով, պատիժների միջոցով խրատելով՝ փրկության համար:

**Սողոմն ու Գոմորը կործանվեցին,** որովհետև իրենց անթույլատրելի, չար արարքներով այդ հաշվեկշռում անցել էին աստիճանը, խախտել էին սահմանը. Աստուած համբերության սահմանը: Եվ սա մեր կյանքի ամենաէական ու հավերժական նշանակության երևույթն է. միշտ պահպանել դրական «հաշվեկշիռ», երբեք, ոչ մի դեպքում չխախտել սահմանը: Քանզի Տերն ասել է. «Գրված է. քո Տեր Աստծուն չպիտի փորձես» (Մատթեոս 4. 7):

**Ու այս կապակցությամբ հետևյալ հարցը.** մեր կրթությունը, գիտությունը, մշակույթը, աշխարհիկ ու հոգևոր ղեկավարության նպատակն ու դրա գործադրման քաղաքականությունը և, այսպես կոչված, «զարգացումը» արդյո՞ք մեզ՝ շարքային հայերիս, բավարարում են, տալիս են՝ ինչ որ պետք է՝ կարողանալու այդ երևույթը հաշվի առնել ու դրականը պահպանել: Իսկ մեր կյանքն ի՞նչ է ապացուցում. մեր գործնապաշտ (պրակտիկ) լինել ուզողները մի՞թե հիշում ու հասկանում են, որ կյանքում ամենապրակտիկն ու կենարարն այդ երևույթին հավատալը, այն հաշվի առնելը և ըստ այնմ վարվելն ու ապրելն է:

Եվ այս ճշմարտության ընկալման ու ըմբռննան պակասը և դրա հետևանք հանդիսացող մեր վիճակը մի՞թե չպետք է համազգային ահազանգ դառնա ու նաև էական դաս դառնա մեզ համար, բոլորին համար:

Չէ՞ որ անտարբերությամբ ու անպատասխանատվությամբ, նաև անխղճությամբ դրանց անտեսումը սկիզբն է տկարության, պարտության և մեծ ու բազմաթիվ կորուստների, շատ ցավալի՛ կորուստների, որովհետև դրանց պատճառ եղող այդ անտարբերությունն ու անպատասխանատվությունը խորքում ուրացում են: Ուրացում, հեռացում ու անջատում մեր նախնիներից մեզ սուրբ ժառանգություն տրված Աստվածաշնորհ հավատքից և մարդկային-ազգային ինքնությունից:

Բայց Հայկյան ազգը պետք է հոգեկան զարթոնք ունենա, դրանով զգաստանա, բոթափի իրեն պատող չարաբնույթ թմբիող և զգա, տեսնի Տիրոջ՝ մշտապես իրեն պարզած փրկիչ, վերակենդանացնող, վերականգնող ձեռքը ի փրկություն հայ ազ-

գի, հօգուտ նաև մարդկության, ու ամենաէականը՝ ի փառս մեր հավատքի:

Ծաբաթ, 06 - 10 - 2012թ., ժամը 08:00

## ՀՈԳԵՎՈՐ ԴԻՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՂԹԱԿ

Անաստված գիտակցությունը գուրկ է Աստվածային իմաստությունից ու Աստվածային շնորհից: Այն կարող է օժտված լինել աշխարհիկ գիտությամբ (ամեն տեսակի արհեստագիտական՝ տեխնոլոգիական), հնտությամբ և կարող է ունենալ նյութական ամեն տեսակի երկրային հաջողություններ (առաջընթաց ու վերելք, նվաճումներ և հնարավորություններ), սակայն ոչ ներքին երջանկություն՝ հոգեկան նվեր, շնորհ, հոգևոր բավականություն, որ ստացվում է հոգեկան հավատարմության և հոգևոր գործերի դիմաց:

Դայաստանում ընդհանրականից առաջացող մի մեծ ու կարևորագույն իրադարձություն է տեղի ունենում «ընդհատակյա» ընդհարման արդյունքում: Ընդհարում, որը միակողմանի է: Դրա մեջ մի կողմը միշտ հարձակվում է, մյուս կողմը՝ համարյա առանց (քիչ թե շատ) դիմադրության, մանավանդ՝ կազմակերպված, համադրված և կառավարվող դիմադրության, ել չասած՝ հակահարձակման, կարծես հանձնվում է:

Ու այս իրադրությունում, թվում է, թե Բարու, Արդարի և Կյանքի՝ Աստվածորդու հետևորդները դարձել են մի կողմից խեղճ, թույլ, շվարած, իներտ, իսկ մյուս կողմից՝ թվում է, թե դարձել են եսակենտրոն, անհետևողական, անպատճախանատու, անտարբեր, անուշադիր և, վերջին հաշվով, ոչ պիտանի՝ կրելու Տիրոջ Խաչը և հետևելու Նրան՝ կատարելով Նրա պատգամները՝ միշտ, ամենուր, ամեն ինչում:

Ինչպես կարելի է փոխել այս վիճակը դեպի հոգևոր արքացում և դեպի հավատարմության ուղղություն՝ Աստվածասեր

գիտակցությամբ: Դուրս գալ Տիրոջը պիտանի չլինելու պարտվողական վիճակից:

Ո՞ւմ դիմես, ինչպե՞ս դիմես. խնդրե՞ս, թե՞ պահանջես, համոզե՞ս, թե՞ պարտադրես, թեկուզ բարոյապես ու հատկապես Աստծո խոսքով, որի պարագայում, կարծ ասած, կստացվի՝ լրիվ մոռանալով եսը, մի՞թե լավ չէ լինել «գեշ», քան (այն մեծ գլխով անասունը), որովհետև այս դեպքում «գեշ» լինելուց զգուշանալը նման է ավետարանական հարցադրմանը՝ ում հաճելի թվալու կարևորության մասին՝ Աստծո՞ւն, թե՞ մարդկանց: Դարցադրում, որի պատասխանը հավատացյալի համար աներկրա է:

Պետք է զգույշ լինել. «գեշ» չլինելու՝ մարդկանց հաճելի թվալու մտադրությունը և ձգտումը կարող են Տիրոջ հանդեպ ուրացումի և դավաճանության տանել, այսինքն՝ անխուսափելի հավերժ կորստի:

Դա կլինի աշխարհիկ այն հիմարությունը, որ աշխարհը շահելու համար կորսվում է հոգին...

Լա՛վ, չվիատվե՛նք. խոսենք սրտանց, եղբայրաբար ու համբերությամբ. հոգով, սիրով և հույսով տեսնելով, որ հայր կանի, կհաստատի ամեն բան, ինչ որ բարի է ու Աստվածահաճո:

Դառա՛ջ՝ Նրա գործը կատարելու և Նրա պատգամներով ապրելու հավատքի կամքով ու վճռականությամբ:

Ծաբաթ, 09 - 09 - 2011թ., ժամը 09:00

## ԿԱՌՈՒՑՈՒՄ ԱՌԱՑՑ ԱՍՏՈՒԾՈ ԵՎ ԱՍՏՈՒԾՈ ԴԵՄ

Առանց Աստուծոն ու առավել ևս Աստուծոն դեմ դիրքորոշմամբ մարդկանց գործերը ինչպիսի գաղափարով, նպատակով և ծրագրերով ու ինչպիսի գորեղ կամքով, գիտությամբ, տարբեր միջոցներով, կազմակերպվածությամբ ու վճռականությամբ էլ կատարվեն, կենսունակ լինել չեն կարող, անկենսունակ են:

Բազում ազգերի սերունդների վրա ծայրահեղ ճնշումների ու զրկանքների գնով 70 տարիների ընթացքում աճեցված և պետական աննախադեալ կենտրոնաձիգ հզորությամբ ստեղծված գիտությունը, կրթությունը, մշակույթը, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, շինարարությունն ու այլ կարողություններն ամուլ գտնվեցին ժողովրդի բարեկեցության ու երջանկության համար:

Ընդհակառակը՝ ծնեցին անարդարություն, բռնություն, կոռումպացում ու լճացում: Եվ դա բնական է, քանի որ ուր և ինչի մեջ աստվածամարտություն կա, ու Աստված չի ընդունվում, ապա վախճանը դա է՝ լճացում, փչացում և կորուստ:

Եվ սա ընդհանրական ու հավերժական ծշմարտություն է, բայց բավականին երկար ժամանակ մարդկության զգալի մասը չէր գիտակցում ու երբեմն ավելի վատ՝ այդ ծշմարտության դեմ էր գործում՝ փորձելով իր ափով արևը ծածկել՝ խավարեցնել:

Նժբախտաբար, 1920 թվականին այդ դրության մեջ ներքաշվեցին նաև մեր ազգի մնացորդի մի մասը և խորհրդային կոչված Հայաստանի Հանրապետությունը՝ մեր Հայաստան երկրից կոտորակված մասը, բայց, ըստ Ավետարանի, «Որտեղ մեղքը շատացավ, այնտեղ Աստուծոն շնորհն ավելացավ»: Ու այդ շնորհը մեզ փրկեց: Մենք ազատվեցինք ու դուրս եկանք (ոմանց համար լուսավոր թվացող) խավարից և 1991 թվականին կանգնեցինք լայն ու լուսավոր ճանապարհի վրա՝ ըն-

թանալու ազատորեն՝ ըստ մեր կամքի, համաձայն մեր հավատքի, գաղափարի ու բարոյականության, այսինքն՝ համաձայն իրական կյանքի այդ երեք հիմնասյուների՝ հավատք, գաղափար ու բարոյականություն. հավատքը Աստծու հանդեպ՝ Դիսուս Քրիստոսի Ավետարանով ու Խաչով, այդ հավատքից բխող և դրա վրա հիմնված գաղափարականությունը՝ Դայ Ազգային Գաղափարախոսությամբ, ու բարոյականությունը՝ Դայ Ազգային Տոհմիկ բարոյական արժեհամակարգով:

Բայց ընթացա՞նք և ընթանո՞ւմ ենք այդ ճանապարհով՝ համաձայն մեր մարդկային-ազգային էությունը կազմող և դրա գոյությունը երաշխավորող երրորդության՝ հավատքի, գաղափարականության և բարոյականության: Արդյո՞ք մենք չենք տարվել չարի՝ մեր էության թշնամու՝ նոր փաթեթավորմանը հրապույրներից և դրանով դարձյալ չե՞նք գայթակղվել, շեղվել:

Արդյունքում մտածում ենք և գլխակորույս, հաճախ տրորելով ամեն մի արժեք՝ փորձում ենք արագացնել մեր ընթացքը, առանց գիտակցելու, որ մեր հավաքած արագությունն ու արագացումը հեռացնում են մեզ մեր կյանքի հարազատ հանգրվանից դեպի դրա հակառակ կողմ՝ թունավոր ճահիճ:

Եվ ո՞ւր են երկնային կոչումով մեր ազգի, մեր երկրի պատասխանատուները, առաջնորդները՝ Աստծուն հավատքով տոգորված, իմաստնացած, զարգացած ու զորացած:

Ո՞ւր է հայի՝ մեր հավատքով կազմված ծիշտ ճանապարհի քարտեզը, որ ըստ իրենց կոչումի՝ նրանք պարտավոր էին պատրաստել:

Եվ ո՞ւր է նաև մեր ազգային գաղափարական ու բարոյական կողմնացույցը՝ պատրաստված մեր ազգի մեծերի, սրբերի հավատքով, նրանց ապրած կյանքի օրինակներով և նրանց պատգամներով, որպեսզի մեր ժողովուրդը կարողանար դիմանալ (և այժմ էլ դիմանա) բազում փորձություններին ու արհավիրքներին՝ չսայթաքելու, չշեղվելու, չտարվելու համար դեպի կյանքի «օտար, ամայի» ճամփաներ, այլ իր հավատքին հավատարմությամբ արժանանալով երկնային փրկարար օգ-

նության՝ իմաստնանա, գորանա ու վերելք ունենա սուրբ հայրենիքում ու նաև դեպի երկնային գոյություն, երանություն:

21 - 04 - 2012թ.

## **ՀԱՅ ԱզգաՅին ՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՏՄԱՌՄՈՒԹՅՈՒՆ**

Դայի և հայության կողմից ազգային ու հոգևոր ինքնության գիտակցությունը և դրա հանդեպ հավատարմությունը գաղափար՝ է՝ հայ ազգային գաղափար, որն անանց է և միշտ հաղթական, եթե ունենա հոգեկան և դրանից բխող ու դրա վրա հիմնված գաղափարական և բարոյական ինքնաճանաչում, ընդունում ու կիրառում համայն հայության կամ առնվազն նրա «կրիտիկական զանգվածի» կողմից:

1918թ. մայիսին (ինչպես և 1994թ. մայիսին) հայ հոգևոր ու ազգային ինքնության գիտակցության ու հավատարմության, այն է՝ Դայ Ազգային Գաղափարի և բարոյականության գիտակցության կամ Ենթագիտակցության առկայությամբ՝ ամենաանբարենպաստ պայմաններում ու նվազագույն միջոցներով հանպատրաստից ի մի բերված հայկական զորախմբերը հաղթանակներ տարան՝ պարտության մատնելով քանակով ու զինվածությամբ գերակշիռ՝ մի դեպքում՝ Օսմանյան կայսրության զորքերին, մյուս դեպքում՝ թուրք-ադրբեջանական և նույնիսկ ինչ-որ ժամանակահատվածում նաև բոլշևիկյան զորքերի հանդեպ:

Բայց երբ Դայ Ազգային Գաղափարը, բարոյականությունը, հայ հոգեկան ու ազգային ինքնության գիտակցությունն ու հավատարմությունը բացակայում են (կամ որոշակի չափից տկար են) հայության մեջ, հայությունն արժանանում է ոչ թե հաղթանակի, այլ պարտության, ինչպես Դայաստանի Դանրապետության պարտությունը 1920թ. աշնանը, երբ 1918 թվա-

կանի գարնանն անձնազոհաբար կերտված հաղթանակները 1920 թվականի աշնանը համապատասխան արժեքների բացակայության պատճառով ի չիք դարձան, կորան: Այդ առումով, սակայն, մի ճշմարտություն պետք է բացահայտվի: ճշմարտություն, որը նենգաբար, գուցեև տգիտորեն, վաղուց ի վեր անտեսված կամ թաքնված լինելով, հարկ է, որ վերջապես բացահայտվի, պարզաբանվի: Եվ դա այն է, որ Հայաստանի Հանրապետության բանակը քենալական «բաշիբոզուկներից» չպարտվեց, այլ պարտվեց հավատազուրկ, գաղափարազուրկ, բարոյազուրկ, անխիղճ, ավազակաբարո ու Աստծուն ուրացած, Աստծու հանդեպ թշնամացած, մի խոսքով՝ անաստված ու օտար, դավադիր ուժերի գործակալ խորթ հայերից և նրանց կողմից խարվածներից:

Հայոց Աթաջին Հանրապետության բանակի և հայ ժողովրդի ու Հայաստանի դեմ պատմական նշանակության հաղթանակ տարան սուտը, խարդախությունը, անխղճությունը, դաժանությունը և դավաճանությունը: Դավաճանություն՝ ընդդեմ մեր քրիստոնեական հավատքի, հայ ազգային գաղափարի, բարոյական արժեհամակարգի, կենցաղավարության, որով և ընդդեմ պետության, պետականության ու հայ ազգի:

Այժմ նորից պատմական նշանակության հարց է առկա. այդ դավադիր երևույթը՝ քայլայիչ, դավաճանական մքնոլորտն ու կործանարար ընթացքը, դեռ կա՝ 21-րդ դարասկզբի մեր օրերի իրականության մեջ, թե՝ չկա: Այս հարցն էական է, որովհետև թշնամին մեծապես դրա վրա է հիմնում իր անարգ նպատակի իրագործումը՝ մեր մեջ նենգադրած հինգերորդ շարասյան ավելի գորացում, տարածում և խոր ներթափանցում հայության մեջ՝ ներքուստ առաջացնելու գաղտագողի ազգայացություն, թշնամություն և առնվազն ազգի ու հայունիքի հանդեպ անտարերություն՝ ստով, ապակողմնորոշմամբ, մոլորությամբ և ոչ վերջին հերթին՝ «պիտոնական» այլասերմանբ (նյութապաշտության ժամանակակից տարբերակներից մեկը):

Նզոր համարվող Խորհրդային Միության խարդախակերտ պրոպագանդան, որը, ինիջիայլոց, նպատակ ուներ տկարաց-

նելու, շշմեցնելու, քնեցնելու հայ ազգային գգոնությունն ու գիտակցությունը, գործում էր նաև կիսածշմարիտ արվեստով, ներառյալ Խորհրդային Հայաստանի կինոֆիլմերը (որոնցից մեկում, որն ազատ, անկախ Հայաստանի հեռուստաալիքներով մինչև այժմ էլ լայնորեն ցուցադրվում է), անհասկանալի անամորությամբ մի կողմից մեղադրվում են Հայաստանի Առաջին Հանրապետության իշխանությունը, բանակը, հատկապես սպայությունը, որ իբր քենալական թուրքերին թողեցին Ղարսը, Խզդիրը, Արդահանը, Օլթին, Սարիղամիշը, մինչև իսկ Ալեքսանդրապոլը (Գյումրին), մյուս կողմից՝ որպես ճիվաղ է ներկայացվում հայ սպայությունը նրա համար, որ ուզում և ձգտում է համալրել կրիվ մղող հայոց բանակի նոսր շարքերը հայ երիտասարդներով. Ֆիլմում տանջադեմ հայ գեղջկուիին բացականչում է. «Ո՞ւր եք տանում էս երեխեքին...»:

Կարելի<sup>o</sup> է լրիվ պատկերացնել, հաշվել ու գնահատել վնասն իրականացված այն սարոտաժի, այն վնասարարության, որ այժմ էլ կարող է կատարվել մեր օրերում՝ այսօր, Հայաստանի Հանրապետության գինված ուժերում և դրա դեմ՝ փորձելով եթե ոչ անհնարին դարձնել, ապա մեծապես դժվարացնել նրա արդեն իսկ դժվար խնդիրը՝ զսպել և չեզոքացնել իրենց պապերի կիսատը լրացնելու մոլուցքով լցված, քանակապես և գինվածությամբ գերակշռող ցեղասպանների թռներին:

Եվ դա, երբ մեր իսկ հասարակության մեջ դիրքեր գրաված որոշ կողմեր խոսքի ազատության և քննադատության շղարշի ներքո ապակառուցողական, թշնամական վերաբերմունք են ցուցաբերում՝ հատկապես թիրախավորելով պարտաճանաչ, նվիրված գինվորականներին:

Ինչո՞ւ: Որովհետև եթե առանց այդպիսի գինվորականների բանակը տկար լինի կամ բոլորովին չինի, ապա երկրի պաշտպանությունն էլ տկար կլինի կամ բոլորովին չի լինի, այլ կլինեն, կիրականանան հինգերորդ շարասյան և նրա տերերի ցանկությունները: Եվ այդ իսկ պատճառով բոլշևիկյան այն կեղծ ու խարդախ իբր սրտացավությունը՝ արդարություն, հա-

Վասարություն, ժողովողի բարեկեցություն և այլն, այդ բոլշևիկյան դեմագոգիան այժմ գործում է նոր՝ «առաջադեմ, զարգացած» կողմերի դիմակի տակ, բայց նույն նպատակներով՝ վարկարեկել, բարոյագրել, ապակողմնորոշել ու եթե կարելի է, նաև այլասերել հայ սպայությանը և ոչնչացնել այն, եթե ոչ, ինչպես այդ արվեց 1921-1924 թվականներին՝ կացնահարությամբ, գնդակահարությամբ և սիրիյան աքսորներով, այսօր այդ անել «փափուկ» մեթոդներով ու միջոցներով՝ ոչ վերջին հերթին՝ ապակողմնորոշմամբ ու այլասերնամբ:

Բայց մենք, մեր ազգը, որի մի մասն այն ժամանակ խարվեց և մեծ մասամբ էլ ստիպված խարվեց, այժմ նորից պետք է նույն ձևով խարվի և նորից զոհ դառնա, զոհվի:

Այն ժամանակ մենք պետական հարաբերություններում շատ բան չգիտեինք, ավելի միամիտ ու դյուրահավատ էինք, մեր վիճակն էլ անելանելի էր թվում, բայց այժմ. այժմ գուցե, մեր մեծ մասն արդեն որոշ փորձառություն ունի, սակայն այժմ էլ թշնամին հոգեբարոյական և մտավոր-գաղափարական մի անդամալուծող վիճակ է ստեղծում մեր ժողովողի մի ստվար հատվածի համար, որը հասկանալով հանդերձ՝ կարող է խարվել կամա թե ականա՛, խարվել նաև ժամանակակից, արդիական, առաջադեմ, զարգացած հորջորջվող կողմերից:

Սակայն ազգային ու նաև արդեն պետական մեր միտքը պետք է այդ բոլորն անհապաղ բացահայտի, գնահատի, ճիշտն ու օգտակարը որդեգրի և գգույշ ու զգնն լինի, պետականորեն մտածի, ժամանակին հասկանա ու նաև ժամանակին իրազեկի, հասկացնի ու համայն հայությանը ներարի հայրենիք Հայաստանի պաշտպանության սուրբ ու վճռական գործում, հատկապես նոր սերնդի գիտակցությանը հասցնելով ազգի փրկարար ծշմարտությունը: Ու նաև այն, որ այդ ծշմարտության շավիդներով ընթանալը նախապայման է ազգի, հայրենիք Հայաստանի և պետության իրական, իսկական գոյության, ապահովության, նաև ծաղկման և վերելքի համար:

Աստուծո օգնությամբ:

Երեքշաբթի, 06 - 06 - 2016թ., ժամը 22:40

## ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ, ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՐՈՅՑԱԿԱՆ ԶԳՈՆՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Օհանյանը՝ Թուրքիո Դիարբեքիր քաղաքի (Տիգրանակերտի) հայկական եկեղեցվո հոգաբարձուների ատենապետը, Երևանում հարցազրույց էր տալիս թուրքերնից հայերեն թարգմանությամբ...

Ինչպես կարելի է բնորոշել այս երևույթը՝

**«Կորած, աննշան» հունդը ծիլ տալով ծակում անցնում է ապառած քարը և դուրս է գալիս դեմ առ դեմ՝ արևին:**

Ի՞նչ կարելի է ասել ու անել՝ այս տեսնելով:

Ճա՞տ բան, իսկապես, շատ բան կա ասելու, անելու, հուսադրվելու ու նաև փառավորվելու, երջանկանալու համար... Թեև այս պահին դրա համար կարծես ժամանակ էլ չունենք, այլ բաներով ենք զբաղված (հապա հաճույքներն ում համար են)... բայց մի բան անպայման պիտի ասել. չի՝ կարելի չասել. **զգո՞յշ լինենք:**

Յայեր, շա՞տ զգոն ու զգույշ լինենք, որ մեծագույն մեղքի տակ չընկնենք նրանով, որ մեր խոսքերով և կամ արարքներով, վերաբերմունքով գայթակրենք մեր հայրենակիցներից որևէ մեկին՝ Հովհաննես Օհանյանի նմանին, որ նա «կորած էր և գտնվեց, մեռած էր և ողջացավ»՝ հասուն տարիքում խավարից դեպի լուսը գալով. նրա հարազատ ազգային գոյությունը հարություն առավ՝ մկրտվելով Յայ առաքելական սուրբ եկեղեցու ավազանում և դառնալով «հրավացի» հայ քրիստոնյա:

Յայեր, մենք թեև օրինված ենք նրանով, որ հայկական անուն, ազգանուն, հայրանուն ունենք, գիտենք և խոսում ենք մայրենի լեզվով ու նաև (թեկուզ ինչ-որ չափով) գիտենք մեր պատմությունը և գիտենք, թե ինչ է նշանակում մեր հայ ազգային ինքնությունը և դրանով ապրելով՝ գիտենք նաև, որ

պարտավոր ենք այն պահել ու փոխանցել մեր զավակներին, սերունդներին, այնուամենայնիվ, այս բոլորով հանդերձ, զգո՞ն և շա՞տ զգույշ լինենք, որ (Աստված մի՛ արասցե) մեր պատճառով հովհաննես օհանյաններից որևէ մեկը, նրա նման վերահայացածներից մեկը հանկարծ զղա: *Մեր մտածումների ու արարքների պատճառով զղա,* որ կրկին հայացել է՝ մկրտվելով հայ քրիստոնյա:

Յա՛ բարեկամ, Եղբայր, քո՛ւր, զավակ, թռոնիկ, նաև շա՞տ մեծ խորհուրդ ունի մեր զգո՞ն և զգո՞ւշ լինելը, որ հանկարծ, Աստված մի՛ արասցե, մեր անազնիվ վարքութարքով և հավատքի, ազգի ու հայրենիքի հանդեպ մեր անպարտաճանաչությամբ այդպիսի վերահայացածի, վերաքրիստոնեացածի համար դարձյալ հայագրկվելու ու հավատագրկվելու պատճառ չդառնանք: Մեր բարձր զգոնությունից բացի մենք պետք է մեծ ջանքեր գործադրենք ու աղոթքով օգնություն խնդրենք՝ նման փորձությունների ու փորձանքների մեջ չընկնելու համար...

Մի բան էլ կա, որ պետք է ասվի, անպայման ասվի. փորձություններից ու փորձանքներից մեզ զերծ պահողը, պաշտպանողն ու պահպանողը նա՛ է՝ Աստված՝ իր Միածին Որդու հեղած արյան գնով, Ով ասել է. «**Դավատա՛ և կիրկվես»:** Դավատա՛ և կապրես. կապրես Աստվածահածո արժանապատվությամբ ու երանության մեջ՝ հավիտյան հավիտենից:

**Յա՛ բարեկամ, սիրելի հայրենակից, շա՞տ-շա՞տ կարևոր է, որ այս թեմայով խոսակցությունը շարունակվի...**

Ավագ Շաբաթ, 23 - 06 - 2011թ.

## **ԻՆՉՈ՞Վ ԵՆ ԶԲԱՂՎԱԾ ՄԵՐ ՄԻՏՔՆ ՈՒ ՄԻՐՏԸ**

Ինչո՞վ են հիմնականում զբաղված մեր՝ հայության մտքերն ու սրտերը: Ո՞ւմ և ինչի՞ն են տրված մեր մտքերն ու սրտերը ժամանակի մեջ մասում: Ի՞նչ նպատակով, ինչպիսի՞ ակնկալություններով, ինչի՞ հասնելու համար:

Ու այդ բոլորի մեջ ինչքանո՞վ է ներկա Աստված: Ինչքանո՞վ են իմացվում Նրա խոսքն ու կամքը:

Մենք ինչքանո՞վ ենք նպատակադրվում ու ջանում կատարելու Նրա կամքը, պատգամները՝ չանելով հակառակը:

Մեր կյանքի յուրաքանչյուր պահի ի՞նչ կարող ենք ասել այդ հարցերի մասին՝ մեր մտքով, սրտով ու նաև խղճով՝ մեր զավակներին ու թռռներին, մեր նախնիների հոգիներին և... Աստծուն, մանավանդ, երբ կանգնելու ենք Նրա դատաստանի առաջ:

Մեր մտքի և սրտի մեջ տեղ բռնելու կամ դրանք լիովին գրավելու պայքար է մղվում, ոտնձգությունները մեծ, մշտական ու հարատև են, մինչդեռ դրանց ելքից կախված է շատ բան՝ նույնիսկ մեր Էւրեյան ինչպիսին լինելը, ինչ վիճակում լինելը և ինչին արժանանալը:

Մեր մտքերն ու սրտերը գրավելու, տիրապետելու, ստրկացնելու և օգտագործելով՝ փչացնելու համար բազմակողմանի ու բազմաբնույթ, հզոր, խիստ հրապուրիչ, բայց և հույժ խարդախ ու շատ կործանարար միջոցներով պայքար է մղում չարը՝ թշնամին:

Իսկ մեր ազգային ահազանգը ինչո՞ւմ է այդ մասին: Պաշտպանված են մեր մտքերն ու սրտերը մեր հավատքի զգոնությամբ ու գիտակցությամբ, գաղափարականությամբ ու բարոյականությամբ:

Եթե ոչ՝ պաշտպանված չեն, ինչպես հարկն է, ապա ստրկությունը, չարին ծառայությունը և հավերժական կորուստն անխուսափելի են: Իսկ եթե այո՛ պաշտպանված են, դա խաղաղություն, ազատություն, փառք ու երանելի կյանք է՝ այժմ և հավերժ:

Դրա համար անձնապես ու ազգովիճ, սիրով, նվիրումով ու հավատարմությամբ՝

**«Յիսուսին նայենք, միայն Յիսուսին»:**

Ծաբաթ, 18 - 04 - 2015թ., Ժամը 09:00, Վիեննա

## **ԹՈՂ ՆՈՐԻՑ ՈՒ ՆՈՐԻՑ ԱՍՎԻ**

Մշտապես պետք է մտածել, հաշվարկել, ծրագրել և գործել՝ իրազեկելու, ուսուցանելու (և դրանով պաշտպանելու) համար մեր ազգին, հատկապես նոր սերնդին և մասնավորապես՝ հայության առանձին խավերին ու հատվածներին:

- Զի՞ կարելի հանդուրժել ներկայիս վիճակը, որ գոյություն ունի հայության՝ մասնավորապես կրթության, տեղեկատվության ու նաև մշակույթի, արվեստի ու հասարակական հարաբերությունների բնագավառներում:

- Զի՞ կարելի հանդուրժել, թույլ տալ, որ ազգի կրթության, տեղեկացվածության և կենցաղի ձևավորման գործունեությամբ զբաղվողների գիտակցության մեջ արմատավորվեն և դերակատար լինեն հեթանոսությունն ու նյութապաշտությունը:

- Զի՞ կարելի հանդուրժել, թույլ տալ, որ այդ բնագավառների գործունեությունը ծրագրվի և ղեկավարվի հոգեկանությունից զուրկ, կեղծ, խարդախ, նյութապաշտ, հետևապես և գաղափարագուրկ ու բարոյագուրկ անձանց և հաստատությունների, կառույցների կողմից:

- Զի՞ կարելի թույլ տալ, որ արվեստի գործիչները, տեղեկատվություն հաղորդողները, գրականություն ստեղծողները և մանավանդ նոր սերնդի դաստիարակությամբ և կենցաղային

ճաշակի ձևավորմամբ գրադպողները, էլ չասած՝ երկրի ղեկավար դիրքերում եղողներն ու օրենսդիրները ժողովրդի և մանավանդ նոր սերնդի հոգու, սրտի ու մտքի մեջ տարբեր խաբեություններով աստվածամերժություն պատվաստեն:

- Չի կարելի հանդուրժել, թույլ տալ, որ հայ հեթանոսաց ուսուցիչը և դասախոսը, հաղորդավարը, լրագրողը և նրանց խմբագիրները, ծրագրողներն ու ղեկավարները, ինչպես նաև մշակույթով ու, մանավանդ, նոր սերնդի իրազեկմանը և նորաձևությամբ ու կենցաղային իբր նոր ճաշակի ձևավորմամբ գրադպողները հայ ազգի և մանավանդ մատաղ սերնդի հոգիներն ու մտքերն աղավաղող նյութապաշտություն ու աշխարհաքաղաքացիություն քարոզեն, տարածեն, տարբեր խարկանքներով անաստվածություն սերմանեն և դրա արդյունքում դեպի այլասերում տանող գաղափարներ, մտածելակերպ, հասկացություններ, կենցաղավարություն, որով և պղծություն պատվաստեն:

Չի կարելի, որովհետև վերոնշյալ բացասականը, կործատաբերը, որն արդեն իսկ բավականին լայն ընդգրկմամբ կատարվում է, եթե կանգ չառնի, չդադարի, չվերանա, ապա մեր ազգի հայկականությունը մեծ չափով և գործնականում կշարունակի մնալ մոռացված, ուրացված, որով և հայության կյանքը կշարունակի ինաստագրկվել, խորթանալ և դառնալ ունայն ու անպիտան իենց իր իսկ հայի ու հայության համար, ինչպես և մարդկության համար, ու ամենակորստաբերը՝ մենք կդառնանք զզվելի Աստծուն՝ հավիտյան կորուստ մեր անձերի ու հայ ազգի:

Դրա համար, ըստ ավետարանական պատգամի, հարկ է ունենալ հոգևոր, որով և՝ գաղափարական ու բարոյական արթնություն. զգոն ու զգաստ լինենք՝ ինչպես գրված է՝ «Դաստատուն մնացեք հավատքի մեջ, քաջ եղեք, զորացեք, ծեր ամեն ինչը թող սիրով լինի» (Ա. Կորնթացիներին, 16.13-15):

Ավետարանական այս պատգամը հայ մարդու, համայն հայության և նրա ղեկավարության ամենօրյա, ամենժամյա նպատակ-պարտականություն-խնդիրը պետք է լինի, ինչպես

Եղել է դարերի ընթացքում մեր ազգի մեծերի, սրբերի ու ամեն հայի համար, որ հարազատ ու հավատարիմ է Եղել իր հոգեոր ու ազգային ինքնությանը, և որի շնորհիվ այսօր դեռ գոյություն ունի հայությունը, և հույս կա, որ կվերածնվի՝ Աստվածատեղծ ու Աստվածահաճո՛ հայկականությունը:

Աստուծո բարեգո՞ւթ օգնությամբ: Փա՛ռ Նրան:

Կիրակի, 8-ը հունվարի 2023թ., ժամը 06:00

## **ԱՐԱԳ ՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՆԴՐԱՇԱՐՁ ՄԵՐ ՀԱՅ ԲՆՔՆՈՒԹՅԱՆՔ**

Արարիչ Յայր Աստված ու Միածին Սուրբ Որդին սիրեցին հավատավոր ու հավատարիմ Յայկին ու նրան դարձրին նախահայրը հայոց, որին և օժտեցին բազում շնորհներով, բարիքներով և մանավանդ քրիստոնեական հավատքով:

Եվ հայ ազգն իրեն շնորհված ինքնության անդաստանի պատուղները տալիս էր Երկնային Տիրոջը՝ Յայկյան հավատքով ու հավատարմությամբ:

Բայց չարը կարողացավ սոլոսկել իր մեջ և գերել, հպատակեցնել շատերին, նույնիսկ ազգի գլխավորներին, ու թեև եղան ուրացումներ, լոկ շրթներով դավանումներ, անտարբերություն և խորթացումներ, սակայն ազգի մեծ մասը միշտ հավատարիմ մնաց հավատքին: Եվ դարերի ընթացքում բոլո՞ր պայմաններում հայությունը որպես ազգ, քրիստոսապատգամ ու քրիստոնեավայել հավատարմությամբ ապրեց, սուրբ համբերությամբ կրելով բազմաբնույթ տառապանքներ ու հաղթահարելով բազում տարբեր փորձություններ: Եվ Տերը պահպանեց հայ ազգին. հայրենիքի արևմտյան մասի բզկտումից և արևելյանի մեծ մասի բզկտումից հետո իր սիրով, բարությամբ ու ամենակալ զորությամբ ազգի վերապրումի անհուսալի պայմանները չեղոքացրեց, վերացրեց և երկրի ու ժողովրդի մի **մնացո՞րդ** պահեց:

Եվ Տերը գոհացել էր, որ այդ **մնացորդը** հավատքին ու իր ինքնությանը հավատարիմ մնաց մինչև վերջ:

Սակայն հուսու օրերի փայլից շլացած և դրա հետ չարի նորոգ ներգործությամբ՝ ուրացումի որդը դարձյալ ներթափանցեց՝ սկսելով դարձյալ առաջնորդներից, ղեկավարներից: Եվ բարեկամները (դաշնակիցները) լքեցին, դավաճանեցին ու հեռացան, իսկ ամեն տեսակ թշնամիները շատացան, շրջապատեցին ու մնացորդին էլ տիրեցին:

Բայց մեզ սիրող Արարիչ Յայրը մեզ նորից գթաց՝ մի հնարավորություն ևս տալով ինքներս մեզ գտնելու, մեր հավատքին ու մեր ինքնությանը լիովին հավատարիմ մնալու և նորոգվելու՝ համաձայն մեր տոհմիկ արժեքների: Այդ ուղղությամբ սակայն, մեր ընթացքը շատ մասնակի եղավ ու շատ կարծ տևեց: Դրա փոխարեն արագ տարածվեցին մամոնայի սերն ու նյութապաշտությունը՝ իրենց հետևանքներով հանդերձ, և ազգն արժանացավ... **Չախչախ նախազահների:**

Այս դրության մեջ **մեր հույսը**, մեր իրական փոփոխությունն ու փրկությունը, **Աստվածասեր և հավատքին ու ազգին հավատարիմ մեր մեծերի, սրբերի, նահատակների հոգիների՝** մեր մեծ ու փոքրի մեջ, մանավանդ՝ հոգևոր ու աշխարհիկ պատասխանատուների մեջ **հառնումն է՝** մեզ սիրող, գթառաւ Տիրոջ հովանու ներքո:

Փա՞ռք և մեր հավերժ սերն ու հավատարմությունը Նրան՝ մեր Արարիչ Երկնավոր Յորը՝ Աստծուն:

ԳԼՈՒԽԱ ԵՐԵՎԱՐԴ

ՄԵՐ ՓՈԽՎԵԼԸ  
ԼԻՆԵԼՈՒԹՅՈՅՑԱՆ  
ՊԱՅՑՄԱՆ

19 - 05 - 1996թ.

Զորջ Մեյսոնի համալսարան, Վաշինգտոն, ԱՄՆ

## ԻՆՉՊԵ՞Ս ՀԱՐՑԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Շատ բան հնացած է:

Շատ բանի ժամանակն անցել է:

Շատ բան այլևս պիտանի չէ, նույնիսկ վնասակար է, անհամատեղելի ներկա իրադրությանը, ներկայի և մանավանդ՝ ապագայի պահանջներին:

**Ինչպե՞ս պիտի նորոգվեն այդ բոլորը:**

**Մենք մեզ փոխելով, մեզ նորոգելով:**

Մեր մեջ հաճախ լսվում է, որ «մերն այլևս անցել է, անելիք չունենք, հույսը նոր սերնդի վրա է, երիտասարդները պետք է անեն»:

Սա սխալ է, անարդար է և վնասակար:

Չէ՞ որ տարեցները՝ ավագներն են սերունդ ստեղծում, պահում, կրթում, դաստիարակում, սովորեցնում, և նրանք են անմիջականորեն նոր սերնդի առաջ, նրա հայացքի տակ գտնվում ու օրինակ դառնում: Այլ բան, որ կան և այնպիսի այլասերված տարեցներ, որոնք գործում, փորձում են մեր նոր սերնդին խորթ ու անառողջ նպատակներով իրենց կողմը քաշել, իրենց հպատակեցնել, իրենց նման այլասերել ու օգտագործել, սակայն դա այլ բան է: Այնուամենայնիվ, նոր սերունդն ազգի ավագ սերնդի օրինակից ու ազդեցությունից դեռ լրիվ դուրս չի մնացել: Եվ դա շատ լավ է, այդպես էլ պետք է լինի: Յետևապես սխալ, անարդար և հույժ վնասակար է ավագ սերնդի ամեն տեսակի իրաժարումն իր պատասխանատվությունից ու պարտականությունից՝ ազգի՝ առաջ, հայրենիք Յայաստանի՝ առաջ, մարդկության առաջ ու մանավանդ՝ Աստուծոյ՝ առաջ:

Եվ այդ ճշմարտությունից բխող հայ ավագ սերնդի պատասխանատվության ու պարտականության մեջալի մյուս կողմն իր այդ պարտականությունը կատարելու պատրաստակամություն, հնտություն և պատրաստականություն ունենալու հարցն է: *Արդի հայ ավագ սերունդը նոր սերնդի համար հայելու դեր է կատարել, կատարում է և գոնե տեսանելի ապագայի համար շարունակելու է կատարել:* Դետևապես ո՞վ, ովքե՞՞ր, հայ ազգային ու պետական ո՞ր կառույցները պիտի ապահովեն, որ հայկականության գոնե այդ հայելին ծիչտ ու արդար գործի՝ արտացոլի իրականությունը: *Դայելի,* որը նոր սերնդին, բացի ցույց տալուց, թե նա ինչ վիճակում է և թե ինչ վիճակում պետք է լինի, միաժամանակ ցույց տա՛ նաև, թե ինչպիսին է լինում օտար, խորթ, պիղծ ու չար կողմի թշնամական, կորստարեր կերպարը և դրանից զերծ ու անվտանգ մնալու կերպը:

Դետևապես, հայ տարեցները, ամեն տեսակի պարտքից բացի, ունեն նաև հոգեկան պարտք՝ անելու համար ինչ-որ պետք է, որպեսզի հայ նոր սերունդն ու սերունդներն ունենան հստակ, գորեղ, հարատև կարողություն ու դրա հետ նաև երկնային կայուն, ամանց ու հավերժական «ապահովագրություն»՝ զերծ մնալու այլասերումից, և իրենց հավատարմությամբ հայ մեծերի, սրբերի ու նահատակների դարավոր հավատքին, նաև հավատարիմ մնան և տեր կանգնեն *հայկականությանը*, որով և հայրենիք Յայաստանին, որով և իրենց մարդկայնությանը և ամենին, ինչ բխում է դրանցից՝ արժանավայել, հայավայել կյանքի համար՝ Տիրոջ հավերժական հովանու ներքո:

Իսկ դրա համար մեկ ու միայն մեկ միջոց կա, որը պարտավոր է հայ ազգը կատարել ավագ և մատաղ սերունդների միասնական ջանքերով. Լիովին փոխվել՝ նորոգվել, վերածնվել, վերահաստատվել ու ընթանալ Աստվածապատգամ ուղիով՝ հայացքը երբեք չկտրելով ազգի մեծերի, սրբերի, նահատակների ապրած կյանքից, կատարած գործերից ու հաստատակամ կողմնորոշի, առաջնորդի սերունդը, սերունդներին՝ *ի գոհություն երկնային Յոր:*

Կիրակի, Սուլր Զատիկ, 24 - 04 - 2011թ., ժամը 09:20

## ՄԵՆՔ ՉԳԻՏԵ՞ՆՔ, ՉԵՆՔ ճԱՆԱՀՈՒՄ ՄԵԶ

*Ծանեա' զբեզ (Ճանաչի՛ր քեզ)  
Բարսեղ Կեսարացի  
(Բարսեղ Մեծ)*

Դայը, ըստ երևույթին, այլս լավ չի՝ ճանաչում իրեն, և հայությունը ևս լավ չի՝ ճանաչում իրեն: Լավ չի ճանաչում այն, ինչն իր սկիզբն է եղել ու ըստ այնն է ճանապարհ անցել՝ Աստվածապատգամ: Եվ լավ չճանաչելով իրեն՝ լավ չգիտի նաև, որ այդ ճանապարհը հիմնականում անցել է սիրով ու հավատարմությամբ իր Արարչին և կատարելով Նրա կամքը, պատգամները՝ իր Աստվածատուր, վեհ կոչումի գիտակցությամբ: Եվ հայության համար այդ բոլորը փառավոր էր ու կենսատու, որովհետև Աստվածապատգամ էր ու Աստվածահածո:

**Սակայն ի՞նչ է առաջացել այս պարագայում:** Առաջացել և կատարվում է այն, որ ում շատ է տրված, նրանից շատ էլ պահանջվում է: Ու ըստ դրա՝ հայն ու հայությունն ուրիշներից ավելի շատ պիտի հետևեն Տիրոջ պատգամներին, ավելի շատ ու ճիշտ կատարեն դրանք ու ապրեն դրանցով՝ միշտ հավատարիմ հավատքին: Մյուս կողմից, սակայն, ովքեր շատ բարեխիղդ ու լիարժեք կատարում են Աստուծո պատգամները, ընթանում են Նրա ճանապարհով, չարը՝ սատանան, իր գլխավոր թիրախը դարձնում և դավերն ու փորձություններն ուղղում է հենց նրանց՝ **Աստծուն առավել հավատարիմների դեմ** (ինչպես Աստվածաշնչյան պատմությունում՝ Հոր Երանելիի պարագայում):

Եվ հետևապես ստացվում է, որ արդարության կողմնակիցները՝ հավատքին հավատարիմները՝ որպես Տիրոջ որդիներ, պետք է լինեն հավատքով՝ շատ ավելի զորե՛ղ, ու ըստ

Ավետարանի՝ «աղավնիների պես միամիտ» (որ յուրայինների նկատմամբ լինեն լիովին համերաշխ ու ազնվորեն համագործակցող) և «օձերի պես խորագետ» չարի, թշնամու հանդեպ, որ խուսափեն կամ դիմանան նրա որոգայթներին, դավերին, փորձություններին, հարվածներին ու երբեք չենթարկվեն նրան...»

*Ու այս պատերազմը, այս կրիվը հայի ու հայ ազգի ամենաերկարատև, ամենամեծ, ամենաբարդ և լինել-չլինելու նշանակությամբ կրիվն է եղել միշտ և է, որի մեջ կենսատու հաղթանակների հետ նաև կորստաբեր պարտություններ կրեցինք՝ պարտությանը բնորոշ ծանրագույն հետևանքներով<sup>4</sup>...*

Ու այդ հետևանքները դեռ շարունակվում են՝ դրանց վերացման համար պահանջելով մեծ ջանքեր ու առավել հավատ, վստահություն ու հավատարմություն մեր հավատքի զորագլուխ Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի հանդեպ:

Եվ որպեսզի ազգը ի վիճակի լինի ճանաչելու, հասկանալու և կատարելու այդ պահանջը, հարկ է, որ փոխվի: Փոխվի՝ վերածնվելով, վերականգնվելով հավատքով ու ըստ այնմ՝ գաղափարականությամբ, բարոյականությամբ, Վարքութարքով ու կենցաղով: Կարո՞ղ ենք, ուրեմն փոխվել, քանի որ նախ և առաջ ու վերջին հաշվով դրանցով են պայմանավորված մեր ազգի, երկրի և պետության անվտանգությունը, պաշտպանությունը, ապահովությունն ու ամենայն բարեկեցությունը. տնտեսություն, կրթություն, մշակույթ, գիտություն ու ամեն ինչ՝ մինչև մեր ազգային, մեր համահայկական համախոհությունը, միաբանությունն ու միասնական գործունեությունը՝ ի փառս մեր ազգի, հայրենիք Յայաստանի, պետության, նաև մարդկության ու ամենակարևորը՝ Էականը՝ ի փառս մեր սուրբ հավատքի:

<sup>4</sup> Այս մասին առավել մանրամասն՝ Վարդան Գրիչենցի «Յայացք ներսից և դրսից» գրքում. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատարակչություն, Երևան, 2002:

Կիրակի, 25 - 10 - 2015թ., ժամը 12:00

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԹԵԼԱԳՐԱՆՔ

Մտածելով մեր ազգի, մեր հայրենի հասարակության և մանավանդ մեր մատաղ սերնդի՝ հայ ազգային-պետականամետ տրամադրվածության ու առավել ևս կարողականության բարձրացման մասին մինչև այն աստիճանի, որ նա ի զորու լինի հաղթանակներ տանել տարածաշրջանային և համաշխարհային մրցակցության, ինչպես նաև մեր ազգի, հայրենիք Դայաստանի և պետության պաշտպանության ու բոլոր բնագավառներում զարգացման ու բարգավաճման մեջ: Այդ մտածումների ընթացքում առնչվեցի ռուս հրապարակախոս Վասիլի Կատկովի<sup>5</sup>, ըստ իս, օգտաշատ ու մինչև իսկ համճարեղ մտքերին: Վասիլի Կատկովն այդ մտքերը հայտնել է՝ դրանց համար նշանաբան ընտրելով ֆրանսիացի (թեև անհավատության քարոզիչ) փիլիսոփա Վոլտերի ասածներից՝ Բեյլի մասին<sup>6</sup>. «Նա անհավատ չէր, սակայն շատ ուրիշների անհավատ դարձեց»: Ի դեպ, սա մի ցավալի և կորստաբեր երևույթ է, որը համընդիանուր լինելով՝ բավական տարածված է նաև հայ իրականության մեջ:

Իսկ Կատկովն այդ համընդիանուր երևույթի կապակցությամբ ասում է.

<sup>5</sup> **Վասիլի Կատկով**. ծնվել է 1867թ. ապրիլի 26-ին, մահվան ստույգ թվականն անհայտ է. ենթադրաբար 1918 կամ 1919 թվական: Ռուս նշանավոր հրապարակախոս և իրավագետ, տարբեր ժողովուրդների իրավաբանական համակարգերի մասնագետ, պրոֆեսոր: Իր աշխատություններում հիմնավորել և պաշտպանել է ռուս ժողովրդի ազգային ինքնության հիմքերը և քրիստոնեական ու հասարակական ավանդական արժեքները:

<sup>6</sup> **Պիեռ Բեյլ** (1647-1706). ֆրանսիացի աստվածաբան և փիլիսոփա:

- Զկա ավելի գուր, անօգուտ աշխատանք, գործ, քան կյանքի արտաքին ծեփ լավացման համար կատարվածը՝ առանց հոգ տանելու, լավացմելու մարդու ներքինը:

- Զկա ավելի գուր, խարուսիկ հույս, քան հույսը ավելի լավ ժամանակների ու երջանիկ կյանքի համար՝ առանց հասարակության բարոյական և մշակութային վերելքի:

- Եվ մարդասիրական բոլոր կայուն բարեփոխումները պետք է սկսվեն մարդու ազնվացմանն ուղղված կրթությամբ:

Տարակույսից վեր ու հատկանշական է, որ կրթություն ասելով՝ Վ. Կատկովը նկատի ունի առաջին հերթին ու հիմնականում ոչ թե ֆիզիկայի, մաթեմատիկայի, կիբեռնետիկայի և նման առարկաների ուսուցումը, այլ հիմնականում մարդու ազնվացմանն ուղղված կրթությունը:

Ու այդ հանգանանքը մեզ հանգեցնում է այն **եզրակացության**, որ Կատկովի այդ բոլոր հանճարեղ ու օգտաշատ մտքերը մարդու, ազգի, հասարակության վերելքի մասին կմնան թղթի վրա և կյանքի ապրում չեն դառնա, եթե չեն համակված ու չեն կիրառվում հավատքով և հոգեկանությամբ, գաղափարականությամբ, բարոյականությամբ ու դրանց համապատասխան կենցաղավարությամբ, ապրելակերպով, հարաբերություններով:

**Ի վերջո, այս եզրակացությանն եմ հանգում, և այս եզրակացությունն է ինձ համակում, որքան մտածում եմ մեր ազգի, հայրենիք Դայաստանի, պետության ու պետականության մասին:**

Ու եթե այդ իմ **եզրակացությունը** ճիշտ է, ուրեմն ի՞նչ հետևություններ պետք է անել դրանից՝ մեր ազգային կրթության, մշակույթի, գիտության, գրված և չգրված օրենքների, ներքին ու արտաքին քաղաքականության և հայ անհատի ու հայ ժողովուրդ-հայրենիք-պետություն հարաբերությունների մասին: **Պե՞տք է վերանայվեն դրանք, ու եթե այո, ապա ինչ-պիսի՞ փոփոխություններ պետք է կատարել նախքան այդ կամ միաժամանակ՝ փոխելով մենք մեզ՝ համաձայն մեր կոչումի,**

պաշտոնի, դիրքի, պատասխանատվության և խղճի ու գիտակցության:

**Ովքեր համաձայն են, թող ասեն՝ ԱՄԵՆ և գործի անցնեն՝ նախնառաջ միմյանց («նմանն զննանն») փնտրելով, ճանաչելով, հաղորդակցվելով, միանալով ու գործելով ՏԻՐՈԶ ԱՌԱՅ:**

Բայց անպայման հարկ է նկատի ունենալ մի էական հանգամանք. մեր այդպես մտածելու, գործելու և փոխվելու ու փոխելու մտքերը, գիտակցությունը, ցանկությունը, կամքը, ծրագրերն ու դրանց կենսագործումը պետք է շաղախված լինեն Դայ Ազգային Գաղափարախոսությամբ: Գաղափարախոսություն, որը բխում է և հիմնված է Աստուծոն հավատքի վրա՝ Ավետարանով և Խաչով:

Եվ մի շատ կարևոր հանգամանք ևս. հարկ է հաշվի առնել ժամանակի կարևորության ու նշանակության գործոնը՝ առանց այն էլ սահմանափակ մեր ժամանակը չվատնելը և անհրաժեշտ անելիքի ժամանակը բաց չթողնելը, չկորցնելը:

Պատմությունն ասում է, որ Նապոլեոն Բոնապարտը Վաթեռլոյի ճակատամարտում պարտվեց, որովհետև իր հրետանին ինչ-ինչ պատճառներով (իսկ պատճառն արդեն այլ հարց է) մի քանի ժամ ուշ հասավ ճակատամարտի վայր: Եվ դրանով էապես փոխվեցին ոչ միայն Ֆրանսիայի, այլև համարյա ամբողջ Եվրոպայի ու հավանաբար այլ աշխարհամասերի պատմությունը, աշխարհագրությունը և շատ այլ բաներ:

Իսկ մենք ժամանակի ու հատկապես նախապատրաստության կարևորությունը շատ ենք անտեսել տարբեր ժամանակներում, տարբեր հարցերի լուծման, տարբեր խնդիրների կատարման և տարբեր նպատակների ու ծրագրերի կենսագործման ընթացքում:

Այդ մեր ախտակիր ու կորստարեր հատկության և վերաբերմունքի համար ազգային խղճի ու գիտակցության ահազանգը վաղուց է հնչում, և մենք գոնե այժմ ու այսուհետ պետք է լսենք այն: Լսենք՝ առանց ժամանակի վատնումի...

Երեքշաբթի, 12 - 01 - 2021թ., ժամը 01:00

## «ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՌԴԴԻՏԻ» ՄԱՍԻՆ

*Աստված մարդու, ազգի խելքը չառնի  
և խոտորումի ու պղծորյան մեջ  
չքոլմի:*

Յայը, հայությունն ու Յայաստանը դարձան ազատ և հնարիավորություն ստացան վերականգնելու իրենց ազգային կյանքը, բայց դեպի ո՞ւր նայեցին, սրտով ո՞ւմ հետևեցին, հավատքին ինչքանո՞վ հավատարին մնացին, ինչքանո՞վ մարդկային-ազգային ազնիվ կենցաղով ապրեցին...

Ազգը (թեև ոչ ամբողջությամբ, այլ մի հատվածը և դրա որոշ մասը) մարտեր մղեց, հաղթանակներ տարավ, իր համար ամնախարեա հնարավորություններ ստացավ.

- բայց դրանք իրեն շնորհող հավատքի Զորագլխին ինչքանո՞վ շնորհակալ եղավ,

- ինչքանո՞վ շնորհապարտ մնաց Նրան և ինչքանո՞վ կատարեց Նրա պատգամները և դրանցով ապրեց ու գործեց,

- ստացած հնարավորություններն ինչքանո՞վ պատերազմի հարթական լիարժեք ավարտին ծառայեցրեց, այնուհետև բարձրագույն արդյունավետությամբ ազգի, երկրի ու պետության ապահովության, զարգացման և բարգավաճման համար դրանք ինչքանո՞վ օգտագործեց:

Այս «հաշվապահությունն» ո՞վ, ովքե՞ր, աշխարհիկ ու հոգևոր ո՞ր հաստատությունը կամ հաստատություններն արեցին. դրա մասին ե՞րբ, ո՞ւմ, որտե՞ղ գեկուցեցին և ի՞նչ գնահատական ու հետագա անելիքների ցուցումներ, խնդիրներ, պարտականություններ ստացան:

Եթե այս ու նման «ազգային հաշվապահությունը», հետև էլ «ազգային առլիիտը» չի արվել, սակայն, այնուամենայնիվ,

խոսվում է ակնհայտ պարտազանցությունների՝ խախտումների, յուրացումների, չարաշահումների և դրանց հարուցած վնասների (կամ ավելի ծիշտ կլինի ասել՝ բալանների, ավագակությունների, գողությունների և դրանց պատճառով երկրի ու ժողովրդի կրած նյութական ու բարոյական վնասների զրկանքների) մասին, ապա հարց է նաև, թե արդյոք խոսվածը, ներկայացվածը համապատասխանում է կատարվածի իսկական չափերին, մասշտաբներին:

**Մեկը կարո՞ղ է ասել, թե ինչքանով է կարևոր այդ հարցը:**

**Պատասխան.** մինչև որ ախտածանաչումը և դրա հետևանքները լիովին չպարզվեն, չճանաչվեն, բուժում հնարավոր չէ: Իսկ բուժումը ոչ միայն կարևոր ու օգտակար է, այլև բարոյապես պարտավորեցնող, եթե հայոց զորեղ բարոյականությունից դեռ մի՛ բան մնացել է...

Իսկ սա արդեն, ամենայն հավանականությամբ, ազգի, երկրի աշխարհիկ ու հոգևոր իշխանություններին է վերաբերում...

Ո՞ւր են Յայկը և նրա հետևորդները, ո՞ւր են մեր ժամանակների Վարդաններն ու Ղևոնդները:

Վարակամերժ մեր կարողության հետ արդյոք գեների<sup>o</sup> կորուստ էլ ունենք: Եվ դրանք ամբողջությանք են հափշտակել, գողացել մեզնից, թե՝ դրանք էլ են այլասերվել, ու մենք այլևս մենք չենք. ձևը դեռ կա, բայց բովանդակությունը՝ ո՛չ:

**Ո՞վ հասնի մեզ: Ի՞նչը փրկի մեզ:**

Մի ժամանակ մեր արժանապատիվ նախնիները դա շատ լավ գիտեին, դրա համար էլ դարավոր պետականազորկության խիստ դժվարին պայմաններում վերապրում էին, նույնիսկ ստեղծագործելով, որոշ չափով էլ՝ ածելով... Մենք ինչո՞ւ հոգեպես հեռացանք նրանցից և օտար ու խորթ ճանապարհներում խարիսափելով՝ մոռացանք նաև, թե Ո՞վ կարող է հասնել մեզ, ի՞նչը կարող է փրկել մեզ:

Ամեն հիվանդության համար իր բուժումը կա: Ամեն տկարության համար իր վերականգնումը կա: Մեր այս դեպքում դրանք կոչվում են **զղում, խոստովանում և փոփոխում:**

25-ը օգոստոսի, 2010թ.

## **ՄԵՐ ԱՅՍ ՎԻՃԱԿՆ ԱՐԴՅՈՒՆՔ Է ԱՆՀՐԱԳՈՒԹՅԱՆ, ԴԱՍԱԼՔՈՒԹՅԱՆ, ՈՒՐԱՎՅՈՒՄԻ ՈՒ ԴԱՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ**

**Մեր այս վիճակում՝**

- Երբ մեր պետական գերիշխանությունը մեր բնիկ հայրենիքի այսօրվա շրջափակված, մեկուսացված, շատ բանով անկենունակ դարձած պատառիկի վրա է միայն, որը բնակեցված է, ինզ է տարվում և պաշտպանվում ջարդված, ցեղասպանված, նահատակված մեր ազգի մեկ երրորդով միայն, որոնցից դեռ շատերի էլ աչքերն ու հույսերը դրսերն են ուղղված, իսկ ազգի երկու երրորդն էլ օտարության մեջ մեծ մասամբ արդեն իսկ ուժացած է կամ ուժացման ընթացքում է,

- Երբ մեր Հայաստանի տնտեսության կայացման խնդիրը դեռ չլուծված է մնում, և բնակչության համարյա երեքից մեկը չքավոր է,

- Երբ առողջապահությունը բոլորին հասու չէ, և հիվանդությունները ծավալվում են,

- Երբ կրթությունը կաղալով ապազգայնանում ու անմարդկայնանում է, և մշակույթն էլ՝ հետը,

- Երբ գյուղացիության զգալի մասը, հույսը համարյա կորցնելով, որպես աշխատավորություն դեգրադացիայի է ենթարկվում, և համարյա անհետացող բանվոր դասակարգից մնացած արհեստավորները՝ նույնպես,

- Երբ վախն ու ամոթը կորցրած պաշտոններության ազահյուրացումները, լայն հասարակության կողմից արդեն սովորական դարձած լինելով, որպես բնական երևույթ են ընդունվում,

- Երբ մեր ազգային միասնությունը, ինչպես և մեր եկեղեցու միասնությունը դեռ չի ավելանում, այլ պակասում է՝

քողարկված հակառակությամբ ու, կարծես, կեղծավորությամբ,

- երբ մեր հոգևոր ու ազգային ինքնությունը, ինչպես և երկրի ու պետության գոյությունն ըստ հարկի ու ամբողջ ազգի մասնակցությամբ չի՝ պաշտպանված,

- երբ մեր այս և այլ բնագավառներում փոխանակ զարգացում, առաջադիմություն լինի, այն էլ մեր ոխերիմ թշնամիների համեմատությամբ, իրականում **ավելի արագ տեմպերով** տեղի է ունենում հակառակը (վատից վատը), և դա, ինչպես հարկն է, չի՝ մտահոգում, չի՝ անհանգստացնում և համապատասխան վերաբերմունքի ու ջանքերի չի՝ մղում ոչ միայն ազգի լայն շերտերին, այլև աշխարհիկ ու հոգևոր դեկավարությանը՝ ընտրությամբ ու կոչումով ազգի ու Տիրոջ առաջ պատասխանատուներին:

Եվ ինչպես անվանել այս վիճակը, եթե ոչ ազգային ու նաև մարդկային զգնաժամային թշվառություն, որն ահազանգվում է, սակայն որպես հոգեկան նախազգուշացում. իսկ մենք կորցրել ենք հոգեկան լսողությունը, ինչպես և տեսողությունը, քանի որ շատացան, մեծացան մեղքն ու հավատքին անհավատարմությունը՝ մեր հոգեկան ու ազգային ինքնության ուրացումը...

Ի՞նչը մեզ դուրս կբերի այս վիճակից, եթե ոչ Տիրոջ գութը, մեր՝ մեղայի գալը, հոգևոր վերածնունդը և մեր նախնիների, մեծերի, սրբերի, նահատակների՝ հավատքին իրենց հավատարմության դիմաց ստացած շնորհի՝ մեզ թողած հոգևոր ժառանգությունը, որը կստանանք արժանիորեն:

Ուրեմն արժանի՝ դառնանք, Տիրոջ օգնությամբ:

Երեքաբթի, 24-ը հունվարի, 2012թ., ժամը 06:40

## ՆԵՐՔԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՅ

Աստուծո արարած մարդու հոգեկանությունը երբ ճնշվում է **մարմնավոր ես-ից**, այսինքն՝ ներքին հոգևոր, **երկնային ես-ը** ճնշվում է ներքին աշխարհիկ, **երկրային ես-ից** և գերվում, իրավագրկվում ու կաշկանդվում է անազատությամբ և դրանից բխող տարրեր սահմանափակումներով, գրկանքներով, այնաման մարդու հոգևոր երկնային հատկությունը (հոգևոր՝ երկնքից տրված ունակությունը) նվազում, տկարանում և մինչև իսկ լիովին չքանում է՝ առաջին հերթին անհնարին դարձնելով նրա հաղորդակցությունը երկնքի հետ, Սուրբ Հոգու՝ Աստուծո Հոգու հետ:

Դրա հետևա՞նքը:

Ուսումը, կրթությունը, խելքը, գիտությունը կարող են ավելանալ, զորանալ ու ընդունակ լինել նույնիսկ մեծ ու հիշատակելի գործերի, սակայն խիղճը, գութը, բարությունը կնվագեն, կտկարանան մինչև ի չքացում: Այդպիսով, մարդու և ազգի գործերը մեծապես կլինեն զուր, ամուլ ու ի վերջո՝ կազմաքանդող (դեստրուկտիվ), կործանարար:

Ու այս դրության մեջ ի՞նչ է մնում անել, եթե ոչ հեղափոխություն. մարդու ներքին աշխարհի ազատագրական հոգևոր հեղափոխություն ու ըստ այնմ՝ արտակարգ վիճակ: Այն է՝ ներքին հոգևոր ազատագրական հեղափոխական պայքար ու ըստ այնմ՝ ներաշխարհի արտակարգ վիճակի հաստատում:

**Առաջինը՝** այդ պայքարն ուղղվում է անձի ներքին՝ աշխարհիկ, երկրային ես-ի բռնատիրությունից՝ ստրկությունից ազատագրվելուն:

**Երկրորդը՝** ներաշխարհի արտակարգ վիճակը պետք է «կարանտինի» համար՝ թույլ չտալու, բացառելու համար ներ-

քին չարի իշխանությունը և դրան դրսի աշխարհում տիրություն անող չարի օգնությունը՝ «մարդու հոգեսոր ներքին գործերին չարի միջամտությունը»:

- Իսկ օգնություն որտեղի՞ց կարող է ստանալ հայի ներքին հոգեսոր ծնշված, գերված, ազատազուրկ ես-ը:

- Երկնքից և նրան հավատարիմ երկրային, բարի ու հոգեաես ազատ մնացած կողմերից, ուժերից:

- Ինչպե՞ս:

- Ապաշխարությամբ՝ զղջումով, աղոթքով ու Աստվածահաճո գործերով, որով և ծառայությամբ Արարիչ Յորը, Աստծուն՝ ծառայելով հայ ազգին, հայրենիք Յայաստանին և հայոց Աստվածասեր պետությանը:

Ու այդ ծառայությունն է, որ կառաջացնի *արգասարեր, երջանկաբեր ու վերասլաց հայկականություն*:

Ու այդ ծառայությունն է, որ պետք է ազգային ու պետական խրախուսանքով զորանա, բազմանա, իսկ դրա անտեսումը՝ ահազանգվի:

Երկուշաբթի, 07 - 03 - 2011թ., Ժամը 09:00

## **ՄԵՐ ԱՍՏՎԱԾԱՇՆՈՐՀ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ** (Փ<sup>՝</sup>նչ վիճակում է. ինչպե՞ս պահենք, պահպանենք)

Յայաստանում՝ մեր իսկ հայրենիքուն, որպես հասարակություն թեև ունենք ծեռքբերումներ, բայց որպես ազգ՝ մեր մեծով ու փոքրով, հատկապես մեր երիտասարդության մի զգալի մասով, գտնվում ենք մեծ դժվարությունների մեջ, որոնցից ամենավնասակարն այլասերման ու անկումային ընթացքով քշվել-տարվելն է: Եվ դա մեր աչքի առաջ, օրը ցերեկով տեսնում ենք, երբեմն-երբեմն վրդովվում, բողոքում ենք, սակայն ոչինչ չենք անում կամ անել չենք կարողանում:

Դրա պատճառը. մեր աշխարհիկ ու հոգեսոր դեկավա-

րությամբ ու նաև մտավորականությամբ հանդերձ այնքա՞ն ենք անզորացել կամ անելու կամք ու ցանկություն էլ արդեն չի մնացել, որովհետև հոգեբարոյապես և գաղափարապես էլ ենք տկարացել, կամագրկվել, հանձնվել, գերվել ու այլևս մենք մեզ լիովին պատկանելուց էլ ենք զրկվել: Ու հետևապես համարյա անզոր ենք նաև կատարելու, իրագործելու ներկայացված, առկա ազգային ու պետական ամենահամեստ ծրագրերն անգամ, որոնք իրականում ծրագրեր իսկ չի կարելի անվանել, այլ ինքնախարեական ցանկություններ և մեր անզորության փաստի դրսենորումներ:

Միակ լավն այն է, որ դեռևս համատարած հուսահատության մեջ չենք գտնվում: Ու երկի երբեք էլ չառաջանա այդպիսի հուսահատություն, որովհետև հուսահատությունը, ինչպես և վախը, թերահավատության նշան է: Իսկ մենք մեր ազգի մեծերի, սրբերի, նահատակների նման, հաղթահարելով բոլոր փորձությունները, մեզանից կվանենք նաև թերահավատությունը Տիրոջ օգնությամբ, որը լուսավոր, կենսատու և անգերազանցելի օգնություն է, և որով ապրել ենք, ապրում ենք ու պիտի՝ ապրենք, **Եթե փոխվենք:**

**Ու երբ փոխվենք,** և դրանով վերահաստատվի մեր Աստվածաշնորհ մարդկային-ազգային Յայլյան ինքնությունը, որով և՝ հավատի լույսով ու հույսով Աստվածային հաստատուն օգնությունը, այնժամ մենք նորից ու նորից մտածենք, ըստ այնմ միմյանց հետ հաղորդակցվենք, խորհրդակցենք և միասնաբար ու որակապես գործենք, գործենք ու գործենք՝ ի վերելք մեր ազգի, հայրենիք Յայլյաստանի, պետության՝ հօգուտ նաև մարդկության ու ի փառս մեր սուրբ հավատքի:

## ՅՈՒՂԱԲԵՐ ԿԱՆԱՅՔ

Այս կանայք կոչվեցին Յուղաբեր, որովհետև Տիրոջ թաղումից հետո, ըստ իրեական սովորության, անուշահոտ յուղի սրվակներ առած՝ գնացին Նրա մարմինն օժելու: Յուցաբերելով մեծագույն արիություն, Խաչի մոտ լուր կանգնած մինչև վերջ հավատարիմ մնացին Յիսուսին և իրենց հավատարմության ու նվիրվածության համար արժանի եղան առաջինը տեսնելու հարուցյալ Քրիստոսին՝ դառնալով Տիրոջ հրաշալի հարության առաջին ավետաբերները:

Բայց... բայց նրանց հիշատակմամբ արդյոք ասվո՞ւմ է նաև կանանց այն դերի մասին, որը խորհրդային ռեժիմի յոթ տասնամյակների ընթացքում (հատկապես դրա մոտավորապես առաջին կեսում) վճռական, կառուցողական ու անանց նշանակության հոգևոր վերապրում և վերակերտում ունեցավ ռուս ժողովրդի կյանքում: Դա հատկապես տատիկների, պարզ, հասարակ մարդկանց (և ոչ միայն) կողմից հավատքի պահպանումն էր:

Իսկ հայ կյանքում այն կանանց (մեր մեծ մամիկների) դերի մասի՞ն, ովքեր գաղտնի կամ կիսահայտնի, չվախենալով իրենց ընտանիքների համար կործանարար հետևանքներից պահում էին Աստվածաշունչ ու Նարեկ մատոյանները, մկրտում էին քոռներին, աղոթում նրանց համար և սովորեցնում էին նրանց հավատալ ու աղոթել:

Յավատքի ու ազգային ինքնության հանդեպ հավատարմության այս և նման եղելությունները (թեև մեր ժողովրդի ոչ շատ մեծ մասի կողմից) նշանակություն ունեցա՞վ հայոց պետության վերականգնման համար, անկախության հրչակման ու այսօրվա մեր վայելած ազատության համար:

Այս հարցին (որը շատ լայն ենթատեքստ ունի) հավատացյալի պատասխանն անտարակույս «այո՛» է, իսկ անհավատի պատասխանը հավանաբար կլինի. «Այդպիսի բան չկա՛,

չի՝ լինում», գուցեն. «Դա տերտերական, պառավական խոսակցություն է»...

Ո՞վ է ճիշտ: Մեր մեծամասնությունն այժմ էլ, այսքանից հետո ի՞նչ է ասում այդ հավատարմության մասին, հատկապես Աստուծոն հավատքին հավատարմության մասին:

Չէ՞ որ դրանից պիտի ի հայտ գա, երևա նաև, թե ի վերջո խելքի եկե՞լ ենք, թե՞ ոչ: Որով և մեր ընթացքը փոխելո՞ւ ենք դեպի վերելք, թե՞ ոչ: Թե՞ մեր ընթացքը շարունակելու է լինել անկումային...

Մտածենք այդ մասին, որովհետև ժամանակը չի սպասում, դեպքերի զարգացման ընթացքը չի կասեցվում, և դրա ուղղությունը փոխելուն էլ համարյա անհնարին է դառնում, *հարկ եղած միջոցները ձեռք չեն առնվում՝ անտեսելով, արհամարիելով ազգի հոգու և հոգով ընկալելի ահազանգերը*:

Անցյալում մեր ազգի կյանքում այդպիսի կորստաբեր դեպքեր եղե՞լ են: Այո՛, եղել են և ըստ երևույթին նորից են լինելու, եթե չզգաստանանք, չփոխվենք, մեր իսկական արժեքներին հավատարին չմնանք ու ըստ այնմ չապրենք, չգործենք, չպայքարենք:

Կիրակի, 16 - 07 - 2017թ., ժամը 14:00

## **ՀԱՎԱՏԱԲՄՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵՎՈՐ ԻՆՔՍՈՒԹՅԱՆԸ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ**

Բոլշևիզմը՝ խորհրդային ռեժիմը (կոմկուսը), օգտագործեց ռուս ժողովրդի (և Ռուսիո տիրապետության տակ գտնվող այլ ժողովուրդների) մարդկային-ազգային ազնվությունը, իրենց հայրենիքի հանդեպ սերը և հավատքը ապագայի նկատմամբ:

Բոլշևիզմն իր գոյության ընթացքում ճնշեց, շահագործեց, չարաշահեց և իր կործանումից հետո դրանցից փշրանքներ քողեց, որոնք արագ խժովում են աղավնու կերպարանք առած

դրամապաշտ-նյութապաշտ արտաքին և նորելուկ ներքին անգղերի կողմից:

- ԵՎ Ի՞նչ. ԿԵ՞ՌՉ:
- Ո՞չ:
- Ինչպե՞ս թե՝ ո՞չ:
- Ո՞չ, որովհետև այդ փշրանքների ինչ-որ կերպ մնացող-ների մի փոքր մասն իսկ ավելի զորեղ է կենսունակությամբ և փյունիկյան իր վերածնվելու հատկությամբ, քան այն ամենը, որ ունի և դեռ կարող է ունենալ նախկին ու ներկայիս նյութապաշտությունը:

Եվ ինչպես նուրբ ծիլը ծակում դուրս է գալիս բազալտ քարից, նույնն էլ ու ավելին Աստուծոն հավատքով՝ Ավետարանով և Խաչով՝ մարդու Աստվածաշնորհ հավատքով կյանքի ծլարձակումն է: Դրա մեծացումը, զորացումը և կենսատվությունը սահման չունի. ինչպես ամեն Աստվածայինը, այն անսահման է ժամանակի, տարածության և կարողության մեջ, **երբ անձը, հասարակությունը, ազգը զղումով դարձի է գալիս, այնժամ սրբագրծվում և դառնում է շնորհընկալն այդ անսահմանությամ:**

Ուստի ազգը, որ ընկած էր պատմական մեծագույն փորձություններից մեկի մեջ, ըստ երևութին, իր աշխարհիկ ու հոգևոր դեկավարության մի զգալի մասով **ծգուեց և ծգուում է դեպի Աստվածային այդ անսահմանությունը**, որով և աշխարհի իրականությունում առաջացնում է Տիրոջ հայտնած պետարանական ճշմարտություններից այն, թե՝ «Վերջիններ կան, որ առաջին կլինեն, և առաջիններ, որ կլինեն վերջին»:

Իսկ մե՞նք, որ (չնայած հատկապես 20-րդ դարում մեր մեջ եղած բավական ուրացումների ու շեղումների) բազմամիլիոն մարտիրոսներով Տիրոջ հավատարիմ մնացած Յայկյան ազգի մերօրյա ժառանգներն ենք, պիտի կարողանա՞նք արժանի լինել՝ մնալու 17 դար առաջ մեզ շնորհված Աստվածաշնորհ հոգևոր առաջնության մեջ, որ և հոգեկան սրբությամբ ու նաև աշխարհիկ արժանապատվությամբ ժառանգություն թողնենք

մեր զավակներին, թռոներին, սերունդներին այնպես, որ նրանք երբեք վերջինների մեջ չհայտնվեն:

Եվ ի՞նչ կա դրանից ավելի ցայտում, ճշգրիտ ու արդար չափանիշ՝ գնահատելու մեր՝ այսօրյա հայերիս ով լինելը, ինչ լինելը և ընթանալը (կամ ավելի ճիշտ՝ դեպի ուր քշվել-տար-վելը) մեր ժառանգական հոգեկերտվածքին խորթ, օտար ու վնասաբեր, բայց քաղցրաձայն թվացող հողմերից: Ու նաև գնահատելու դրա նշանակությունն ու հետևանքները...

Ու այդ ամենի կատարման համար մեր կյանքն ունի մեզ տրված սահմանափակ ժամանակ ու եռանդ, որոնց վատնումը մեղք է՝ կորստաբեր, քանի որ այդ ժամանակն ու եռանդն Աստվածատուր են՝ սուրբ և կենսառապ: Դետևապես, դրանց ըստ այդմ օգտագործումը մեր անձնական, ազգային և պետական կյանքում Աստվածապատգամ է, Աստվածահածո է ու առավելագույնս կենսատու:

Դանրահայտ է, որ շախմատի խաղում անկախ (նույնիսկ հաղթական) դիրքից, եթե սահմանված ժամանակի ավարտով ժամացույցի դրոշական ընկնում է, ապա խաղը տանուլ տրվում և պարտություն է գրանցվում: Քավ լիցի, որ մեր ազգը, հայրենիք Դայաստանը, պետությունը Աստվածատուր ժամանակի աննպատակ վատնումի պատճառով պարտություն կրեն:

Եվ առաջնային ի՞նչ է պետք, որ դա չկինի, եթե ոչ՝ հավատքով հոգևոր զարթոնք, հոգու տեսողություն, հոգու զգաստություն և հավատքով անխոնց ու հմուտ ջանքեր, աշխատանք՝ վայել հայոց մեծերի, սրբերի ժառանգորդ ներկայիս հայ մարդուն, հայ ազգին և հայոց պետությանը:

**Մյս է ահազանգում և պատզամում Դայոց աստվածաշնորհ Դայկյան հոգին:**

21 - 01 - 2018թ., ժամը 01:00, Արենք

## Ե՞ՐԲ Է ՀԱՅՑ ՀԱՅ

Յայի՝ Եկեղեցի հաճախելը և մոն վառելը շատ լավ բան է, սակայն եթե հայ մարդու սիրտը մաքուր չէ, ու Ավետարանի խոսքը չի լսում կամ լսում է, բայց արհամարհում, չի կատարում և դրա համար չի մտահոգվում, չի զղում ու Երկնային Յորից շնորի ու օգնություն չի խնդրում, որ կարողանա կատարել, ապա մնացած ինչ էլ անի, ապարդյուն է: **Նա մի՞թէ հայ քրիստոնյա է...**

Յայի համար հայերեն գիտենալը, խոսելը, իր պատմությանը գիտակ և ազգային մշակույթին հաղորդ լինելը շատ լավ է, սակայն եթե նա ազգային Եկամուտ չի ստեղծում, ազգին հարկ եղած կերպով հարկ եղած ծառայությունը չի կատարում՝ որպես իր բնիկ հայրենիքի հավատարիմ քաղաքացի՝ անկախ իր տարիքից, սոցիալական վիճակից, ապրելու վայրից և քաղաքացիությունից, և դա նրան չի անհանգստացնում, չի մտահոգում ու իր Վերաբերմունքը հայ ազգի ու հայրենիք Յայստանի հանդեպ չի ձգտում փոխել ու չի ձգտում ծառայել, ապա նրա հայ լինելն ապարդյուն է: **Նա մի՞թէ հայ մարդ է...**

Բայց նա պետք է լինի հայ մարդ վերակիղևելով: Ու եթե դա շատ դժվար է, ինքը չի կարողանում անել, ապա դրա համար պետք է **օգնություն** փնտրի՝ խնդրելով Աստծուց, նորից թող ջանա անձնապես ու նաև Յայստանյաց սուրբ Եկեղեցու խսկական հոգևորականության միջոցով ու օգնությամբ. **Նաև օգնությամբ** հայ ազգից ու հայոց պետությունից՝ յուրաքանչյուր ազնիվ հայ մարդուց՝ մերձավորից:

Եվ քանի որ ծիշտ ու օգտակար են բնականը, խսկականն ու արդարը, որով և Աստուծո ուզածն ու հաճելին, ապա յուրաքանչյուր հայ ծնված մարդ կյանքում հայ մարդ լինելու համար պետք է անկեղծորեն հաղորդվի իր ազգային արմատներին.

ճանաչի հայկականությունը, իր տոհմիկ ազնվությունն ու բարությունը՝ սիրով ու հավատարմությամբ իր Արարչին ու ըստ այդմ՝ չանտեսելով իր մերձավորին:

Եվ հայը, դառնալով հայ, երկրայինից բացի կդառնա նաև երկնային էակ՝ հավերժական:

**Եվ ի՞նչ: Այն, որ հայն իր հաղորդակցությամբ և սիրով իր Արարչին ու մերձավորին՝ փոխվելով կհամակվի երանությամբ՝ այժմ և ընդմիշտ: Նույնը կլինի հայ ազգի, հայրենիք Դայաստանի, պետության ու պետականության համար:** Եվ դա նաև՝ հօգուտ համայն մարդկության և ի փառս Սուրբ Երրորդության՝ Աստուծոն:

Ուրբաթ, 13 - 05 - 2016թ., Ժամը 07:30

## ՀԱՇՎԵԿԾԻՌ՝ ԲԱԼԱՆՍ

**Եվ նրամք եղան ու քարոզում էին, որպեսզի մարդիկ ապաշխարեն: Եվ քազում դևեր էին հանում, քազում իիվանդների օծում էին յուղով ու նրանց բժշկում:**

(Մարկոս 6.12.13)

Աշխարհի ու յուրաքանչյուր ազգի, երկրի հասարակական մթնոլորտում հոգեստ սնանկության ու ապաշխարության հաշվեկշիռ՝ բալանսը, ինչքանո՞վ է դրական, կայուն, ոչ փոփոխական: Խսկ եթե հաշվեկշիռ փոխվում է բացասականորեն, ինչո՞ւ է այդպես լինում, ինչի՞ արդյունք է դա և ինչպիսի՞ հետևանքներ է ունենում մարդու, ազգի և ազգերի, մարդկության համար, հատկապես այդ երևոյթի կիզակետում հայտնվածների համար:

Գիտնականներն ասում են, որ օդի բաղադրության մեջ որոշ տարրերի չափերի ավելացման պատճառով եղել են մթնոլորտի ջերմաստիճանի փոփոխություններ, և դրա արդյունքում

Էլ երկրագնդի թևեռներում սառցահալումների ավելացում է լինում, և օվկիանոսների, ծովերի մակարդակը բարձրանում է՝ առաջացնելով համաշխարհային սպառնալիքներ:

Իսկ մարդկության հոգեբարոյական մթնոլորտում փոփոխություններ եղել են վերջին երկիազարանյակում: Մի ժամանակ խոսքով, խոսքի զորությամբ, յուղի օծումով, ձեռքի հպումով ու նման միջոցներով մարդիկ բուժվում, առողջանում և կամ ապաքինվում էին անդամալուծությունից, ցավերից, մարմնի անդամների տկարությունից: Դիմա և բավական ժամանակից ի վեր այդ չի լինում: Ինչո՞ւ: Ի՞նչն է պատճառը, ի՞նչն է այժմ պակասում, որ դա չի լինում, և ինչպե՞ս կարելի է նախկինը վերականգնել, վերսկսել...

Ի՞նչ պետք է անել դրա համար, ի՞նչը պետք է փոխվի, ի՞նչը ավելացվի, ու ի՞նչը պակասեցվի, որ առաջներում այդ եղածը՝ օգտակարը, փրկարարը, նորից լինի: Եվ լինի նաև մեզ՝ հայերին համար և մեր հայրենիք Հայաստանում լինի: Որովհետև, եթե այդ լինի, դրա հետ շատ ուրիշ դրական բաներ էլ կլինեն:

Ի՞նչ պետք է անել ու ի՞նչ չպետք է անել դրա համար: Ո՞վ կասի: Կասի հայոց կառավարությունը, հայոց խորհրդարանը, հայոց իրավական համակա՞րգը կամ հայոց գիտությունն ու մտավորականությունը... Իսկ ասողների առաջին շարքում թվում է, թե պետք է հայ հոգևորականությունը լինի. Նա ինչո՞ւ է լրում:

Եթե այս հաստատություններն այդ մասին և դրա հետ ուղղակի կապ ունեցող բազում այլ բաների մասին լրում են, հարկ եղածը չեն ասում, ապա ո՞վ, ովքե՞ր ահտի ասեն, որ պեսզի ազգը և հատկապես նոր սերունդը չապակողմնորոշվի. հարազատ, սուրբ, կենսատու պատգամների փոխարեն օտար, խորը և մեծ մասամբ կեղծ, պիղծ ու կորստարեր խորհուրդներ չլսի, որոնք մղում են դեպի անխղճություն, անամոթություն, մեղք և կորուստ:

Բա՛վ է, ինչքան այդ հատկություններն զգացել, մեղք գործել և կորուստներ ենք ունեցել: Բա՛վ է, վե՛րջ, այլևս այդպես

չպետք է լինի, ասում են ազգային խիղճը, գիտակցությունը, ասում են մեր սուրբ նախնիների հոգիները, ու ամենաէականը՝ ասում են մեր բազմագույք Երկնավոր Հայրը, Նրա Միածին Որդին՝ Փրկիչը, և Սուրբ Հոգին՝ Աստված:

Խնդրենք, աղոթենք, որ մեզ շնորհ տրվի՝ լսելու, տեսնելու, հասկանալու և միայն ըստ այնմ ապրելու, վարվելու և ընթանալու:

Հինգշաբթի, 18 - 10 - 2017թ., ժամը 00:50

## ՎԻՃԱԿ

(ճգնաժամային կորստաբե՞ր, թե՞ կենարար)

Քրիստոնեական աշխարհում պատմականորեն մեծագույն և լայն առումով բարոյական ճգնաժամը մի՞թե իր գագաթնակետին չհասավ 20-րդ դարում և հարածունորեն չի շարունակվում մեր ժամանակներում՝ 21-րդ դարասկզբում։ Եվ ինչո՞ւ եղավ ու ինչպես եղավ։

Ո՞րն է, ի՞նչ պատճառով է այդ ճգնաժամը և ի՞նչ հետևանքներ է ունենում և դեռ կարող է ունենալ։ Առաջին հայացքից գուցե թվա, թե դա համամարդկային հարց ու խնդիր է, և մեր՝ հայերիս ի՞նչ գործն է։ Սակայն հենց որպես այդպիսին էլ, բնականարար, այս վերաբերում է նաև համայն հայությանը և մասնավորապես դեռ խիղճ ու հոգու գիտակցություն ունեցող յուրաքանչյուր հայի։ Ու եթե զգացվի, հասկացվի, որ այս կամ այն չափով ու ձևով այդ ճգնաժամի մեջ են նաև քրիստոնյա հայությունն ու Հայաստանը, ապա արդար ու հրամայական է, որ մենք՝ հայերս, նախևառաջ ու անհապաղ անդրադառնանք այդ եղելությանը և բացահայտենք, թե նշյալ ճգնաժամն ինչ աստիճանի է համակել մեր ազգն ու հայրենիք Հայաստանը։ Ի՞նչ աստիճանի և ինչպիսի՞ հետևանքներ, ազդեցություն է ունենում այն մեր ազգի տարբեր հատվածների և սոցիալական, սեռային, տարիքային խնբերի վրա ու հատկապես մեր ղեկա-

Վարության, հոգևորականության, մտավորականության, պետության ու պետականության վրա:

Այս հարցերին էլ Տիրոջ օգնությամբ հարկ է անպայման անդրադառնալ (և դա նաև որպես հայ քրիստոնյաների բնական պարտականություն), բայց մինչ այդ, այս պահին անմիջապես հարկ կա սրտաբուխ խոսք ուղղելու հատկապես հոգով՝ ընթացողներին. «...Հոգով՝ ընթացեք և մարմնի ցանկությունը մի՛ կատարեք» (Գաղատացիներ 5.16), այն մասին, որ մեր ազգի ու մեր հայրենիքի վերելքը, բարգավաճումը ու նաև պաշտպանությունը և մեր հոգիների բարեխնամությունը **Այութական ածի միջոցով չեն կարող լինել.** քարը քարի վրա դնելով և զարդարելով չէ, որ կարող է լինել, այլ հայ մարդու, հայության և, հատկապես, ներառյալ մատաղ սերնդի՝ Աստուծո հավատամքը, ազգային գաղափարը, բարոյականությունը, ինչպես և սիրտը, միտքը և հոգին փորձություններից, վարակներից, պղծություններից մաքուր պահելով է լինում՝ թույլ չտալով, որ դրանք աղավաղվեն, խամրեն:

Եվ հոգու զգոնությամբ, ինչպես նաև քաղաքական, ռազմական ու սոցիալական զգոնությամբ դա պետք է կատարվի նախքան դանակը ոսկորին հասնելը, նախքան վերոնշյալ պատճառներով հաշնված, թուլացած, տկարացած, անկարող վիճակին հասնելը և մեր ու մեր մատաղ սերնդի՝ հոգնոր և ֆիզիկական կորսույան մատնվելը:

Չետևապես այն, ինչ որ անհրաժեշտ ու անհետաձգելի պիտի համարենք, ամեն գնով այն ժամանակ՝ այդպիսի՝ ժամանակում անել, **անհապաղ՝ հիմա անենք՝** արձակուրդներից, տարրեր հանդիպումներից, ատամնաբույժի մոտ գնալուց, հյուրեր ընդունելուց, հարսանիքների, քեֆերի մասնակցելուց առաջ անենք՝ հետաձգելով, եթե հարկ լինի՝ ամեն ինչ, բացի աղոթելուց, բացի մինչև հիմա մեր գոյության համար շնորհակալություն հայտնելուց և մեր մեղքերի համար քավություն ու չարին հաղթելու համար օգնություն խնդրելուց՝ մեր **Արարիչ Յորից, մեր հավատքի Զորագուխ Աստվածորդուց և կյանքի շունչ հաղորդող Սուրբ Յոգուց՝ Աստծուց:**

**Եվ դա անենք, ինչպես անում էին և մեզ պատգամել են անել հավատքին հավատարիմ հայության ու մարդկության սուլը նահատակները, մարտիրոսները:**

09 - 03 - 2005թ., ժամը 09:10, Վաշինգտոն

## **ՏՈՀՄԻԿԸ, ՆՈՐԸ ԵՎ ՀԱՎԵՐԺԱԿԱՆԸ**

Ամեն ինչ փոփոխական է, ամեն ինչ փոխվում է. և մենք ենք փոխվում՝ մեր տարիքը, մեր ֆիզիկական վիճակը, մեր հասարակական, ֆինանսական ու այլ դրությունները: Փոխվում են մեծություններ ու նաև կարողություններ և այն ամենը, ինչ կա մեր մեջ, մեզնից դուրս և մեզ մոտ ու հեռավոր շրջապատճերի հետ մեր հարաբերություններում: Դրանք փոխվում են մեզ համար՝ մասամբ դրական և ուրախալի, մասամբ էլ բացասական և ոչ հաճելի: Մի բան միայն չի փոխվում այս աշխարհում, տիեզերքում և դեռ ուր էլ լինի՝ Աստվածությունը՝ Աստված, որ Ալֆան է ու Օմեգան, Սկիզբը և Վերջը: Ու եթե հավատանք և սիրենք Նրան մեր ամբողջ հոգով, ամբողջ սրտով, ամբողջ մտքով ու ամբողջ զորությամբ ու հետևապես նաև Նրա Միածին Որդում՝ Յիսուս Քրիստոսին, և կատարենք Նրանց պատգամները, ապա մենք էլ՝ մեր իրական եսք՝ մեր էությունը, չենք փոխի, կլինենք անփոփոխ Աստվածայինի նման՝ հավիտյանս:

Սակայն այս աշխարհի՝ մարդն ինչ է ասում: Չի՞ ասում, որ այդպես անողն ու դրան հավատացողն առնվազն միամիտ է, նեղ մտածող, չեղած բաների հավատացող, իսկ այդպես չասողը՝ դրան չհավատացողը՝ խելացի և լայն մտածող է՝ զարգացած և շրջահայաց, ռեալ բաների հավատացող...

Անհավատ խեղճ մարդ, չասելու համար՝ թշվառական, գիտես, որ քո շրջապատում՝ տանը և երկրում, եթե նույնիսկ ոչ կատարյալ կարգ ու կանոն, օրենք և օրենքի կիրառություն չինեն, քառոս կլինի: Իսկ եթե դա գիտես, ինչո՞ւ չգիտես և կարծում

ես, որ տիեզերքի, աշխարհի, մարդկության, ազգի, ընտանիքի և մարմնի մեջ՝ արյանդ շարժման, ճնշման ու պարունակության մեջ, եթե քառո չէ, դա պատահական է, և դեռ ամեն ինչ, որ կատարյալ է, բարի է և քեզ ապրեցնում է, պատահական է: Դրա համար իբրև թե օրենք, կարգ ու կանոն և դրանք պաշտպանող ու կատարող պետք չէ. ամեն ինչ ինքնըստինքյան եղել է, լինում է ու կլինի: Եվ նույն կերպ կարծում ես, թե քո թշվառական մեծամտությունը և նույնիսկ ամբարտավաճությունը ներման կարիք չունեն, որովհետև եթե դու սիսալվում էլ ես, ապա կարող ես պատահական, ինքնաշխատ՝ «ավտոմատ» կերպով խելքի գալ, չարին և ունայնությանը կուլ չգնալ և փրկվել: Փրկվել՝ առանց խաչի<sup>6</sup>, խաչի վրա բափած Յիսուսի արյա՞ն... խեղճ մոլորյալ... և զո՞հ ի կորուստ: Բայց փա՞ռ մեր Յորը և Տիրոջն ու Փրկչին, որ սիրում է, ներում է, և ինչքան էլ մենք «անառակ որդի» լինենք, մեզ կգրա և կընդունի, եթե «անառակի» պես խելքի գանք, Յորը վերադառնանք և մեղայի գանք:

Յաղթահարենք մեր խղճուկ մեծամտությունը, նաև ծուլությունն ու անտարբերությունը՝ ճանաչելու մեր մեծերին՝ սուրբ հայրերին. կարդանք, լսենք, ճանաչենք նրանց. մտածենք, հավատանք ու հետևենք նրանց Աստվածատուր շնորհին, նրանց ինաստությանն ու պատգամներին, որ ապրենք իսկական կյանքով, սուրբ ու իսկական, ազատ՝ այժմ և հավիտյան:

...Աստվածորդին, դիմելով իր Յորը, ասում է. «Սրբացրու նրանց քո ճշմարտությամբ, որովհետև քո խոսքը ճշմարտություն է» (Յովիաննես, 17.17): Ու նաև.

...«Եվ ճանաչեցի նրանց քո անունը ու պիտի ճանաչեցմեմ, որպեսզի այն սերը, որով ինձ սիրեցիր, նրանց մեջ լինի, և ես՝ նրանց մեջ» (Յովիաննես, 17.26):

\* \* \*

Ազգին ու հայրենիքին մեր օգնելը կամ ավելի շուտ՝ նրանց նկատմամբ մեր պարտքը, հոգու պարտքը ու նաև

մարդկային-ազգային քաղաքացիական պարտքը (և դրանից հետո միայն, եթե մեկը ցանկանա՝ նաև մարդասիրական, կուսակցական կամ որևէ այլ պարտքը) կատարելը սկսվում է նախ և առաջ ծառայությամբ հայ ազգի հոգեկան, գաղափարական և բարոյական ամրությանն ու վերելքին: Եվ դրանից հետո է, որ պարտքի կատարումն ավելի արդյունավետորեն կարող է շարունակվել՝ ծառայելով ազգի ու հայրենիքի կարողության, անվտանգության ուղղությամբ, որն իր հերթին հաջող ճանապարհ կիարքի նաև ազգի ու հայրենիքի տնտեսության, գիտության, կրթության, այլ բնագավառների և ընդհանրապես վարքի բարձրացման գործին ծառայելու համար:

Հա՞տ է այս բոլորն անելը, դժվա՞՞ր է, համարյա անհնա՞ր: Իհարկե, շատ է, նաև դժվար է ու համարյա անհնար, եթե հայը չգիտի կամ լիարժեքորեն չի ընթառնում և գիտակցում դրանք անելու իմաստը, ինչպես նաև՝ թե՛ ֆիզիկական և թե՛ հոգեկան էական կարևորությունը և այդ անելու նշանակությունն իր ֆիզիկական ու հոգևոր գոյության համար՝ այժմ և հավիտյանս:

Եվ հայի մեջ նշյալ իմաստի ընթրնման պարապությունն է, որ հարցադրում է մոտավորապես հետևյալը.

- Իսկ ինչո՞ւ պետք է դրանք անել, և ինչո՞ւ ես պետք է անեմ, որ ի՞նչ լինի:

Դոգու պա՞րտք: Ի՞նչ հոգու պարտք, ո՞վ է հնարել այդ պարտքը և ընդհանրապես այդ հոգի ասվածը:

Ովքեր որ հնարել են կամ կո՛ւ են գնացել այդ հեքիաթին, թող նրանք էլ գնան, ազգին ու հայրենիքին ինչ-որ պարտք տալու մասին նտածեն:

Թեև, ըստ երևույթին, չի բացառվում, որ նշվածների նման անելիքներ կան, բայց դրա մասին ինչո՞ւ ես պետք է մտածեմ. Ես անկախ մարդ եմ, ազատված ամեն տեսակի հոգի, ազգ, հայրենիք, գաղափարախոսություն, բարոյականություն և նման այլ նախապաշտումներից՝ աշխարհի այս գլոբալ կյանքում: Եթե առաջներում, ինչ-ինչ պատճառներով ու հանգամանքներում, այդպիսի ծառայությունների պարտք զգացողներ եղել են, ապա հինա՝ մեր այս լուսավոր դարում, այդպիսի միա-

միտներ (չասելու համար՝ խավարամիտներ կամ հիմնովին խարվածներ, ապակողմնորոշվածներ) հազիվ թե գտնվեն...

- Ո՞րն է ճշնարտությունը. ովքե՞ր են միամիտ և ովքե՞ր են խելամիտ, ովքե՞ր են լուսամիտ և ովքե՞ր՝ խավարամիտ:

Ոչ շատ վաղ անցյալում կային հայեր, որ երգում էին (լսել ենք).

**«Քա՞մք որոտան,**

**Սերդիվանեն փայդր-քյուտուր (քուրքերեն՝ աստիճանեն անկարգ կերպով) վար ինկավ,**

**Արին, տարին իիվանդանց,**

**Յորդան-դոշեկ փոեցին,**

**Փորը ճորեցին, բրինձ լեցուցին,**

**Դեկմեկ (քացի) մը տվին,**

**Դուրս զլորեցին»:**

Եվ մի այլ երգ.

**«Անդրանիկը քաջ,**

**Բենիմ քարնմ աճ (քուրքերեն՝ իմ փորը սոված),**

**Կուզե պատերազմ,**

**Կսազան զարնան,**

**Մոտ է գարունը...**

Եվ երբ խոսքը նաև իմաստի մասին է, ապա ո՞րն է այդ իմաստը, կյանքի իմաստը ու այս կամ այն կերպ ապրելու իմաստը, և ո՞վ է որոշում այն: Եվ ո՞ւմ բնորոշնանք է որոշվում այն իմաստը, որը մենք պետք է ընկալենք ու հասկանանք:

Այս հարցերն ունեն շարունակական բովանդակություն ու տրամաբանություն, և դրանց պատասխանները կան՝ թե՛ հավատքով, թե՛ գիտությամբ և թե՛ պարզ կյանքի պարզ ապացույցներով, սակայն, ցավոք, դրանք մեծապես ծածկվել են մատյանների խորքերում և նյութապաշտությամբ թանձրացած հոգիներով մարդկանց համար դարձել անհետաքրքիր ու անտեսանելի:

Բայց պետք է հասկանալ, որ այդ հարցերի պատաս-

խանճերի ծշմարտությանն անհաղորդ լինելը կենսագրկություն է՝ տանող դեպի իսկական մահ՝ ավելին, քան ֆիզիկական մահը: Եվ այդ կենսագրկության վտանգը (խոսելով մեր մասին), ըստ երևույթին, տարածվում է մեր ազգի, երկրի, մեր հաստատությունների և նույնիսկ մեր տների մեջ՝ անգույն, անհոտ ու անտեսանելի վիրուսի նման վարակելով մեր գիտակցական զգայարանները, թմրեցնելով մեր մարդկային-ազգային Աստվածատուր էռթյունը, թողնելով անպաշտպան մեր ներքին հավիտենական եսը՝ հոգին:

Մարտահրավերը կա՛, հոգևոր, գաղափարական ու բարոյական կրիվը շարունակվում է, սակայն դիմադրությունը՝ նվազած, ճակատը բաց է, պաշտպանությունը՝ խախտված, և մենք մեծ մասամբ ոչ թե կազմակերպված նահանջի և վերախմբավորման, այլ անկանոն ու կանագուրկ փախուստի մեջ ենք՝ մահացու թշնամուն թողնելով մեր անպաշտպան տարածքները, սրբությունները... և սերունդը:

Եվ ի՞նչ է պետք, ի՞նչ պետք է անել.

Զարթնի՛ր, Լա՛ո, և մի՛ վախեցիր:

«Քանզի վախը թերահավատության նշան է...»:

Չո սուրբ նախնիք վանե՛լ էին այն,

Դու էլ վանի՛ր և հավատա՛ Նրան:

Այդ հավատքով ճանաչի՛ր քեզ, ու ապրի՛ր արժանավայել՝

Նրա պատգամներով և ջո սուրբ հայրերի օրինակով:

Եղի՛ր միշտ ու ամե՛ն ինչում հոգով պարտաճանաչ:

Իմաստավորի՛ր քո ժամանակավոր կյանքը, որ այն հավերժանա:

29 - 04 - 2013թ.

## **ԱՍՏՎԱԾԱԾՆԱՀՈՒՄԸ** **ՄԵԾԱԳՈՒՅՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԳԵՐԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ** **ԳՈՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ-ԵՐԱԾԽԻՔ**

Մարդու, մարդկության ամենամեծ ու ամենաէական նշանակությամբ գիտությունը, որ բարձր է ու աննատչելի մարդկային աշխարհիկ ընդհանրական նոտածողության, դատողության և տրամաբանության համար, դա Սուլր Յոգու շնորհած Աստվածաշունչ մատյանով Աստվածանաշունչ՝ Աստուծո բնության ճանաչումն է, որը **գերգիտություն է:** Դրանով պայմանավորված են մարդու և մարդկության գոյությունը և դրա ինաստը ճանաչելը, չարը բարուց զանազանելը և բարին չարից զատելը: Այո՛, Աստվածային բնության գիտությունը գերգիտություն է Ալֆայի և Օմեգայի մասին, որի մեջ է ամեն ինչ, որն իր մեջ կյանք ունի ու նաև կյանք է տալիս, ապրեցնում է...

Այդ մասին ի՞նչ է ասում աշխարհին ի՞ր գիտությամբ և կյանքի փորձառությամբ: Եվ ի՞նչ են ասում մարդու Աստվածատուր հոգին և հոգևոր գիտությունն ու տրամաբանությունը, թե որն է ամենամեծ, ամենաէական և կենսատու գիտությունը, որ մարդն ու մարդկությունը (մեր դեպքում հայ մարդը և հայությունը) եթե գիտենան, ծիշտ կապրեն, լավ կապրեն ամեն ինչում՝ թե՛ ֆիզիկապես՝ առողջությամբ, վայելչությամբ, թե՛ նյութապես՝ տնտեսությամբ, հարստությամբ և թե՛ հոգեպես՝ ունենալով սիրեցյալ, բազմանդամ, ուրախ, երջանիկ ընտանիք, ինչպես նաև՝ ջերմ, լավ, իմաստուն, հարազատ ընկերներ ու համայնք, ազգ ու հայրենիք՝ գյուղ, քաղաք, պետություն և պետականություն՝ խաղաղ, ապահով, ինքնարբավ ու երջանիկ:

Իր մասին գիտությունն Աստված առավելապես տվել, շնորհել է մարդկությանը՝ իր Միածին Որդու մարդեղացմամբ ու իր ընտրած ազգերի միջոցով: Յայ ազգ, դու այդ ընտրյալների

մեջ ես, դա նշանակում է, որ շատ բան է տրված քեզ, և ուրեմն՝ շատ բան էլ քեզնից պահանջվում է: (Երբեք չմոռանաս այդ մասին, որ ասված է՝ ում շատ է տրված, նրանից շատ էլ պահանջվում է):

Իսկ քանի որ սա պարզ, բայց գերգիտություն է ու հետևապես՝ գերկենասատու, ապա էական հարց. այս գերգիտությանն ինչքանո՞վ են հասու հայ մարդը, հայ հասարակությունը, մտավորականությունը, դեկավարությունը, պետությունն ու հայ ազգն ամբողջովին: Իսկ եթե հասու չեն կամ դրանում էական պակաս կա, այդ դեպքում այդ պակասն ինչպե՞ս ու ինչքանո՞վ է տրվում կամ լրացվում Հայաստանյաց առաքելական սուրբ Եկեղեցվո կողմից՝ ըստ նրա կոչումի և պարտականության:

Հակառակ դեպքում, եթե նրա կողմից այդ չի տրվում, և պակասը չի լրացվում, ու հայության մեջ այն բաց է մնում, և գուցե նաև աստիճանաբար մեծանում է այդ բացը, ապա.

- ովքե՞ր, մեր ազգային, պետական ու կրոնական ո՞ր հաստատությունները, կառույցներն են պատասխանատվություն զգում դրա համար, անհանգստացած են դրանով և ի՞նչ ջանքեր են գործադրում՝ լրացնելու այդ բացն ու վերացնելու այն վիճը, որ բաժանում է հայ մարդուն ու հայությանն Աստվածածանաչումից և դրանով՝ Աստվածահան կյանքից, գործերից, որով և **հոգևոր-մարդկային հայկականությունից (որը գոյացած է Աստվածածանաչմամբ)**, ու նաև բաժանում է հայ ազգային ժառանգական սրբությունից՝ փրկությունից ու իրական կյանքից՝ այժմ և հավիտյան:

Իսկ եթե չկան այդ բացը լրացնողներ, ապա ովքե՞ր են շահագոգոված դրանում և տարբեր խորամանկ, դավադիր ու դաժան միջոցներով ջանում են մեծացնել այդ բացը, խորացնել հայ մարդուն բաժանող վիճն Աստվածածանաչումից և իր հոգևոր-մարդկային հայկականությունից:

Ու երբ մեր ազգի և յուրաքանչյուրիս կյանքի համար այդ բացը լրացնելն է **հարցերի հարցը**, ապա պետք է հետևի դրան առնչվող մի շատ պարզ ու հստակ հարց. մենք բոլորս՝ որպես ազգ, հասարակություն, Եկեղեցի և պետություն, որևէ տրամա-

բանության մեջ տեղավորվո՞ւմ ենք և իրավունք ունե՞նք զբաղվելու որևէ այլ խնդրով, եթե *հարցերի հարցին* չենք անդրադառնում: Իսկ երբեմն, եթե նույնիսկ ինչ-որ չափով անդրադառնում ենք, բայց դրանում այնքան ենք տկարացել, որ չենք կարողանում լուծել, և դրանից ավելի վատ՝ մեր փոխարեն մեր այդ կենսական հարցը գործում ու հետևողականորեն աշխատում են «լուծել» ուրիշները, որոնք այնքան էլ անկեղծ չեն և բարի նպատակներ չունեն մեր նկատմանք: Այդ դեպքում ինչո՞ւ չենք ձգտում *զանազանել նրանց ու զատվել դրանցից*, անկախ նրանից, թե նրանք ինչ տեղ են բռնում այս աշխարհի հարուստների կամ հզորների մեջ:

Ո՞ւր են մեր ազգի ֆիզիկական ու առաջին հերթին հոգևոր գոյության պատասխանատուները, ո՞ւր են մեր ազգի մեջ հեղինակություն վայելող մեծերը՝ մեր հոգևոր ու աշխարհիկ հովիվները, որ ազգային հոտը Աստվածածնաշմանք կողմնորոշելով փրկեն վիհի ճանապարհից՝ առաջնորդելով հոտը դեպի իրական կյանք, այժմ և հավիտյանս:

**Արոյոդ շատ խոսվեց մեր այս վիճակի մասին:**

Եթե արդեն անտարբեր ենք, օտարացած ու խորթացած մեր ինքնությունից, այո՛, շատ խոսեցինք: Իսկ եթե ազգի, մեր սերունդների և մեր իսկ հոգիների համար նախանձախնդիր ենք ու հանձնառու ենք մինչև վերջ ծառայել, պաշտպանել դրանք, ապա ասվածը նույնիսկ շատ քիչ է. դրա մասին նորից ու նորից՝ անհատապես և հավաքարար դեռ շատ պետք է մտածենք, խոսենք, խորհրդակցենք, մինչև հասկանանք և հաստատապես համոզվենք, որ հայության, հայրենիք Դայաստանի, պետության և մեր երեխաների, մեր սերունդների, այսինքն՝ մեր ազգային գոյության շարունակականության փրկարար ընթացքը նախևառաջ Աստվածածնաշման գիտությամբ՝ գերգիտությամբ, որով և Աստվածապատգան ուղղությամբ է՝ հավատարմությամբ մեր հավատքին:

Իսկ այսքանով բավարար խոսվե՞ց, և խնդիրն ու լուծումը պատշաճ ճանաչում գտա՞ն մեր այս վիճակի մասին:

Այս հայցումը համառորեն թակում է մեր ազգի խղճի և գիտակցության այլևս ժանգոտած նիգերով կողպված դուռը՝ առանց արձագանքի: Եվ սա մի ազգային պատմական նշանակության վիճակ է, որը պետք է անպայման ընկալվի և շտկվի՝ որպես ազգային, պետական ու հոգևոր առաջնահերթ, կարևորագույն խնդիր և պարտականություն: Եվ դա անհրաժեշտ պայման է *հայության ազգային, պետական ու հոգևոր լիարժեք շնչառության համար...*

\* \* \*

Աստվածային՝ Աստուծոն բնության մասին կյանքի գիտությունը՝ գերգիտությունը, ամենաբարդ (մարդու համար անհասանելի) և միաժամանակ շատ պարզ (հստակ), ոյուրամատչելի ու ոյուրըմբռնելի գիտությունն է, որովհետև այն մարդու ուղեղի կարողության արգասիք չէ, այլ Աստվածային շնորհի, որ ում տրվեց՝ լինի հովիվ թե թագավոր, երիտասարդ թե տարեց, գրագետ թե անուս, նշանակություն չունի, երբ Աստվածային շնորհն է գործում մարդու մեջ: Որովհետև այդ շնորհն է, որ բացում է հոգու լսողությունն ու տեսողությունը, տալիս է իմաստություն և մարդու համար անձայնը դարձնում լսելի, անտեսանելին՝ տեսանելի ու անհասկանալին՝ հասկանալի: Տալիս է նաև կամք, զորություն ու կարողություն՝ հասկացածը կյանքի ապրում դարձնելու և գործի վերածելու՝ ըստ Աստվածային կամքի, ծրագրի...

Դայն ու հայությունը (խոսենք մեր մասին) սկզբից ի վեր այդպիսի՝ շնորհիվ էին օժտվել: Եվ եթե նրանց տրված այդ շնորհի մի կարին իսկ մեր մեջ մնացել է, ապա մեր ազգային, պետական, հոգևոր, գաղափարական ու բարոյական առաջնային, հրատապ, ամենաէական խնդիրը պետք է լինի ազգովին հայտնաբերել, զգալ, տեսնել ու Աստվածապատգամ գործերով արժանի դառնալ այդ կարիլին, որի սրբությանը դարձյալ համակվելով՝ օծվենք, օրինվենք հոգեպես, ֆիզիկապես ու ըստ այնմ ապրումով սնվենք դրանից, որպեսզի փոխվենք, նորոգվենք, հոգեպես, գաղափարապես և բարոյապես վերա-

ծնվենք ու փոխենք կյանքի մեր ընկալումը, ընթռնումը, ընթացքը, նպատակը, գործերը:

Աստուծո օգնությամբ:

Երեքշաբթի, 12 - 07 - 2016թ.

## **ՄԵՐ ՍՐՏԵՐԻ ՓԱՓԿԵՑՈՒՄԸ՝ ԿԵՆՍԱԿԱՆ ՄՆՀՐԱՄԵՇՏՈՒԹՅՈՒՆ**

Լո՞ւս չկա, մո՞ւթ է, խավա՞ր է և հույս ու ապագա չերևալու պատճառով մնում է պայքարե՞լ, կռվե՞լ կամ թողնել-փախչե՞լ և մոռանա՞լ, խորթանա՞լ, օտարանա՞լ:

Ոչ, բարեկամ, ոչ, իարկ չկա ոչ խոռվահույզ կրիվներ սարքելու, ոչ էլ փախչելու՝ դիմագրավելով դրանց կորստաբեր հետևանքները: Որովհետև այդ հետևանքները, որոնց պատճառով ուզում ես կրիվ տալ կամ էլ փախչել, սրտի խնդիր են: Սակայն սրտի խնդիր են ոչ թե բժշկական, այլ հոգևոր, գաղափարական ու բարոյական առումով: Որովհետև, երբ սրտերը կարծրանում են, հետևանքը լինում է այն, որ մարդիկ մտածում և պատրաստվում են կրիվ տալ (առանց ընթռնելու, թե ի վերջո ո՞ւմ դեն է և ո՞ւմ է վնասում դա, մեզ ննանի՞ն...) կամ փախչել (բայց ումի՞ց, մեզ ննանի՞ց...): Եվ մի եական հարց. երեխաներիդ թողնես երկրում անտե՞ր, թե՞ փախցնես քեզ հետ դեպի կորուստ:

**- Ո՞րն է ելքը:**

- Սա սրտի այն խնդիրներից չէ, որ մեր առողջապահության բժիշկներն իրենց ախտաճանաչումներով տարբեր բուժումներ են նշանակում դեղորայքով, կենցաղային ռեժիմով կամ վիրահատությամբ, այլ սրտի խնդիր է, որն առաջանում է խղճի պակասից կամ կարծրացումից և **սրտի բարացումից**, ճշնարտությունից հեռանալու պատճառով, այսինքն՝ մարդկային-ազգային հոգեկանությունից հեռանալու, մարդկային-ապազգային հոգեզուրկ նյութապաշտության անցնելու և Տիրոջ

փոխարեն Նրա թշնամում՝ չարին հետևելու պատճառով։ Բայց մեզ սիրող, բարեգութ, արարիչ Յայրը, որ իր խոսքին հավատարիմ է, իր շնչով գրված մատյանում՝ Աստվածաշնչում, ասել է. «**Ձեզ նոր սիրտ և նոր հոգի եմ տպու»։**

Ոչ մի բժիշկ, ոչ մի դեղ, ոչ մի վիրահատություն չի կարող բուժել մեր սրտերը, եթե դրանք **քարացած են անհավատարմությամբ՝** հավատքին ու Աստվածային պատգամներին, ընդդեմ մեր մարդկային-ազգային ինքնության, մեր հոգեկերտվածքի ու դրանք Կերտողի։

**Սեր քարացած սրտերը միայն մենք կարող ենք փակիկեցնել՝ հավատքով ու հավատքի գործերով՝ Աստուծո օգնությամբ։**

Ու այնժամ հայ իրականության մեջ ոչ իրարամերժ պայքար, ոչ էլ փախուստ կլինի դեպի օտարություն, այլ ապահովություն, ամենայն վերելք, զորացում և սեր ու երջանկություն՝ ժառանգելով և գործադրելով մեր նախնյաց Աստվածապարգև շնորհները։

- Սա ազգային, համազգային ու պետական նպատակինդի՞ր է։

- Այո՛։

- Սա նաև այդ նպատակ-խնդիրի կատարո՞ւմ է։

- Այո՛։

- Եվ սա թե՛ վարակամերժություն, առողջություն և թե՛ ապահովություն ու ամենայն վերելք, զորացում և սեր ու երջանկություն է նշանակում։

- **Դարձավ, այսինքն՝ կրկնակի՛ այո՛:**

Եվ այս նպատակ-խնդիրը նաև հայ ազգային, հոգեկան, գաղափարական և բարոյական դրոշ է, որը պետք է ծածանվի ազգի և, մանավանդ, նոր սերունդների վրա ու առաջնորդի։

**Սակայն էական հարց.** այդ դրոշը ովքե՞՞ր պետք է վերցնեն, ծածանեն. ովքե՞՞ր են պարտավոր վերցնել, ծածանել այդ դրոշը՝ համաձայն իրենց **կոչումի և ընտրության,** որ այն առաջնորդի նախնյաց ժառանգությամբ լուսավորված ազգի

հոգին, խիղճն ու միտքը դեպի մարդկային-հայկական Աստվածապատգամ կյանք ու գործունեություն:

Իսկ եթե շեղվել ենք այդ ուղղուց, չենք ուզում ընթանալ դրանով, *ովքե՞ր են պարտավոր ահազանգել և ուղել այդ ընթացքը դեպի իրական ու հարատև վերելք:*

**Ամենայն արդարությամբ՝** պարտավորը խկապեն ազատագրված, խկապեն քաղաքացիականացած և խկապեն իր իրավունքներին տեր դարձած մեր ժողովուրդն է: Նա՛ է իրավասու ու նաև պարտավոր հնարավորինս անհապաղ կատարել ընտրությունն այդ պատմական առաքելության դրոշակակիրների:

Եվ քանի որ ամենայն արդար ելքը սա է ու նաև կենսատու, այն պետք է կիրառվի, կատարվի ամեն գնով և բոլոր դեպքերում, դարձյալ՝ հնարավորինս անհապաղ և, իհարկե, Տիրոջ օգնությամբ: **Փա՞ռ Նրան:**

Երեքշաբթի, 16 - 10 - 2017թ., ժամը 00:40

## ՇԱՏԵՐԸ ԿՎԱՍԱՅԱՅՆԵՆ, ԲԱՅՑ ԱՅԴ ՄԱՍԻՆ ԶԻ ԽՈՍՎՈՒՄ

Կան ճշմարտություններ, որոնց մասին եթե չի՝ խոսվում և ոչինչ չի՝ արվում, հետևանքը լինում է կյանքից դրանց հեռացում՝ դեպի պարապություն ու ամենայն հավանականությամբ՝ կորուստ:

Եվ այդ ճշմարտություններից է այն, որ եթե մեր պապերը, տատերը և նրանց պապերն ու տատերը մինչև մեր հայրենի պետության՝ 1918 թվականին նորոգ ստեղծումը այսօրվա հայերիս ննան մտածեին, մեզանից շատերի հավատքով, գաղափարականությամբ ու բարոյական արժեքներով ապրեին ու ըստ այնմ վերաբերվեին մեր ազգի ու հայրենիքի խնդիրներին, կարիքներին, ապա բնիկ Հայաստանի՝ Հայաստանի Հանրա-

պետություն կոչվող այս մասնիկը, հավանաբար, Յայաստան աշխարհագրական անվանք իսկ չէր մնա, և մենք էլ դրանում որպես հայ գոյություն չէինք ունենա, և հետևապես Յայաստանի ու Արցախի Յանրապետություններն էլ հաստա՛տ չէին լինի:

**Իսկ իհմա ի՞նչ կլինենք,** ու ի՞նչ կլինեն մեր, մեր զավակների, բոռների, սերունդների ապագան և Յայաստան հայրենիքի վիճակն ու ապագան:

- **Եթե չփոխվենք** մենք բոլորս կամ չփոխվենք հայրենիքում ու արտերկրում ապրող առնվազն մեր ծնշող մեծամասնությամբ և չփերականգնվենք մեր ազնիվ նախնիների պես հավատքով և ըստ այնմ՝ գաղափարականությամբ, բարոյականությամբ, պատվախնդրությամբ և դրանց համապատասխան կենցաղավարությամբ:

- **Եթե չփոխվենք** նաև մտայնությամբ, տրամադրվածությամբ, պարտաճանաչությամբ, գործերով և վերաբերմունքով՝ մեր ազգային ինքնության առողջ պահպաննան և այդպիսով մեր ազգի, հայրենիք Յայաստանի և մեր ազգային պետականության ու պետության հանդեպ մեր հոգեկան պարտքի կատարմամբ: Ինչպիսի՞ն կլինեն դրա հետևանքները, ու ըստ այդն ինչպիսի՞ պատասխանատվության ու հատուցման կենթարկվենք մենք՝ և որպես հայ, և որպես մարդ՝ մեր հոգիներով հանդերձ՝ այժմ ու հավիտյանս. **Եթե չփոխվենք:**

Եվ մի՞թե այս հարցումների և դրանց պատասխանների մասին չպետք է մտածել և համապատասխան անելիքներին տեր կանգնել, եթե, իհարկե, ավետարանական առակում Աստվածորդու կողմից բնորոշված «ժայռի վրա և կամ փշերի մեջ ընկած ցորենի հատիկների» վիճակում չենք:

Եվ մի՞թե չպետք է մտածենք, ժամանակ գտնենք, կա՞նք ցուցաբերենք ու գործենք այս հարցերի լուծման համար...

Եվ մի՞թե չպետք է **հավատանք**, որ դրանով մեր հոգու տեսողությունը կբացվի, և մենք շատ բան կտեսնենք, կհասկանանք, ի վիճակի, ի գորու և մանավանդ արժանի՝ կլինենք բոլորովին այլ կյանքի՝ Աստվածապատգամ ու Աստվածահաճութեան մասին:

կյանքի՝ մարդկության ապահով, կենսունակ, բարոյական ու ամեն ինչում բարձրադիր շարքերում:

Ծաբաթ, 06 - 07 - 2019թ., ժամը 08:40

## **ՀԱՎԱՏՔՈՎ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ (Կամ հայրենասիրություն՝ հավատքից)**

Կատարյալ հայրենասիրությունը հավատքով է:

Եվ հայի կատարյալ՝ ազնիվ, անշահախնդիր, պատասխանատու, հետևողական և հարատև հայրենասիրությունը, որը նաև գրագետ է ու հմուտ (որովհետև այդպիսի հայի խիզճն ու գիտակցությունը թելադրում են անընդհատ սովորել, կատարելագործվել), լինում է միայն ու միայն Ավետարանի ու Խաչի հավատքով:

Եթե սա չեն հասկանում հայ հոգևոր ու աշխարհիկ ղեկավարը, պաշտոնյան, մտավորականը, գիտնականը, ուսուցիչը և ծնողը կամ աղոտ, իմիջիայլոց և տարակույսներով են հասկանում, նա, ո՞վ էլ լինի, չի կարող լինել ոչ թե միայն ղեկավար ու առաջնորդ, այլև չի կարող լինել լիարժեք հայ քաղաքացի, լիարժեք հայ ծնող և լիարժեք հայ աշխատավոր, ծառայող, պաշտոնյա:

Եվ այս հաստատումն Աստուծո հավատքից բխող և դրա վրա հիմնված գաղափար է (Յայ Ազգային Գաղափարախոսություն), որը թե՛ թելադրում և թե՛ պարտավորեցնում է, որ հավատքով հայրենասիրությունը միշտ ու հաստատապես պետք է առկա լինի մեր ազգի և երկրի ներքին ու արտաքին քաղաքականության, ինչպես և հատկապես կրթության, գիտության, մշակույթի, ընկերային հարաբերությունների ու կենցաղավարության մեջ՝ հստակորեն արտացոլվելով դրանցում, ու նաև տարբեր կերպերով արտահայտվի համայն հայության կյանքում՝ միշտ, ամենուր, ամեն ինչում:

Ու այնժամ ավելի կպարզվի նաև այն ճշմարտությունը, որ *առանց Ավետարանի և Խաչի չկա՛ հայություն*, հետևապես և չկա իրական, հետևողական ու հարատև ազգասիրություն ու հայրենասիրություն, պարտաճանաչություն ու պատրաստակամություն և հարազատությամբ ազնիվ ծառայություն, որոնց մասին խոսք իսկ չի կարող լինել:

Եվ քանի որ առանց հավատքի չկա՛ իսկական գաղափար, ապա առանց այդպիսի գաղափարի էլ չի կարող լինել այնպիսի բարոյական արժեհամակարդ, որից բխող ինքնագիտակցությամբ, ուր էլ լինի, ինչ էլ լինի, ազգային պարտականություններն ինքնական կկատարի հայ մարդը ամբողջ կյանքի ընթացքում, կյանքի բոլոր պայմաններում, պարագաներում, հանգըրվաններում՝ այն համոզումով, որ դրանով իմաստավորում է և իր երկրային կյանքը՝ հասնելու, մտնելու Երկնային հավերժություն:

Եթե հայ մարդն այս չինացավ, չհասկացավ, դրանում չհամոզվեց և ըստ այնմ չապրեց ու չգործեց, նշանակում է իր կյանքն իգուր վատնեց, և ինքը չկա: Իսկ հակառակ դեպքում նրա կյանքը նորոգվեց, լուսավորվեց, ու ինքը կա՛ հավերժ:

Սա վերաբերում է ամեն մարդու ու ամեն ազգի, որոնց մեջ առաջիններից են հայն ու հայությունը:

Ուրբաթ, 30 - 06 - 2010թ., ժամը 21:00

## **ԻՍԿԱՎԱՆ ՈՒ ՀԱՐԱՏԵՎ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ, ՍԶԱՏՈՒԹՅՈՒՆ, ՀԱՐԱՏՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ**

Յավատքն է հայ մարդու ու հայ ազգի իսկական ու հարատև զորությունը, ազատությունը, հարստությունն ու երջանկությունը, որոնցից վերջինը դառնում է երանություն՝ հավիտյանս հավիտենից:

Դայ մարդ, հայ տղա ու աղջիկ՝ մեր նոր սերունդ, մեր ապագա՝, մեր ուրախություն ու երջանկություն, միշտ զգանտեղք և հավատացեք Աստծուն, հավատացեք այն հավատքով, որը մեզ՝ հայերիս (ինչպես և բազում այլ ազգերի), Աստվածաշնորհ Ավետարանով և Խաչով է տրվել ու միշտ տրվում է: Եվ դուք կլինեք ապահով, պաշտպանված և բավարարված ամեն ինչով, որ պետք է մարդկային կյանքին՝ սեր, բարեկամություն, բարեկեցություն և պաշտպանություն ամեն չարից ու փորձանքից: Դուք ձեր կյանքը և ձեր ջան-հայրենիք Յայատանը նախևառաջ հավատքով ու այդ հավատը կյանքի ապրում ու գործ դարձնելով կարող եք հզորացնել, պաշտպանել, փրկել, ծաղկեցնել, գեղեցկացնել ու երջանկացնել, և ինքներդ էլ ըստ այնմ վայելել: Եվ դա կլինի նաև ձեր ընտանիքների, ձեր ժողովրդի և սերունդների համար, ընդմիշտ:

«Յավատա՛ և կիրկվես», -ասաց մեր հավատքի Զորագլուխը՝ Աստվածորդին՝ մեր Տեր Յիսուս Քրիստոսը: Եվ դա ճշմարիտ է, որովհետև ասողն ինքը ճշմարտությունն է: Եվ ով հավատաց Նրան, նա ճանաչեց Աստվածային ճշմարտությունը, որով և կյանքը: Քանի որ դա՝ է կյանքը՝ իսկական, հավերժական:

Արարիչ Աստուծոն ողորմածությամբ ավելի քան 1700 տարի առաջ մեզ՝ հայերիս շնորհված հավատքով մենք ճանա-

չեցինք ճշմարտությունը և կյանք ունեցանք մինչև հիմա՝ ի հեծուկս դարերի ընթացքում մեզ բռնատիրած տարբեր իշխանությունների՝ շահերի, կայսրերի, խալիֆների, խաների, սուլթանների, ցարերի ու ամեն տեսակ քարտուղարների: Այդ ընթացքում, սակայն, աստիճանաբար սպառեցինք մեր մեծերի, մեր սրբերի՝ հավատքի հանդեպ իրենց ունեցած հավատարմության համար արժանացած շնորհների՝ մեզ բողած ժառանգությունը:

Իսկ այժմ ի՞նչ պետք է ամենք: Պետք է մաքրենք մեր սրտերն ու մտքերը այդ ազատազուրկ ժամանակների և մինչև հիմա դեռ գործող ապազգային ու անմարդկային նստվածքներից, որպեսզի մեր նախնյաց սուրբ հավատքը վերածաղի մեր մեջ, և դրանով ծաղկեն ու պաշտպանվեն նաև մեր ազգային գոյությունը՝ կյանքը, մեր հայրենիք Յայաստանն ու պետությունը՝ մոտ ու հեռավոր նոր կայսրությունների և ամեն տեսակ նոր ու հին գաղափարական «իզմերի» (մարքսիզմ, լենինիզմ, ստալինիզմ, ֆաշիզմ, նացիզմ, դարվինիզմ, կապիտալիզմ և մասսամբ նորին) քաղաքական խարդավանքներից ու այլասերնանք կատարվող կորստարեր «փափուկ» ճնշումներից ու բռնություններից...

### **Ինչպե՞ս անել:**

Դիմել, աղորել Աստծուն մաքուր սրտով, մաքուր մտքով ու անկեղծ հավատքով. «Յա՛ր, մեղա՛, ների՛, ընդունի՛ր մեզ. այսուհետև քեզ համար ենք ապրելու և քո՛ ծանապարհով ենք ընթանալու, քո Որդու պատգամներով ու Նրա սուրբ օրինակով»: Կարո՞՞ղ ենք այս կամ նման պարզ, բայց մեր հոգուց բխող անկեղծ խնդրանքն ուղղել մեր Արարիչ Յորը՝ հաղթահարելով ու մաքրվելով յոթանասուն տարվա անաստվածության կրթական, մշակութային, սոցիալական և տեղեկատվական տուտալ նախահարձակումից, ինչպես նաև այդ տեսակի, դրանցից առաջ և հետո՝ մինչև մեր օրերը, հարածունորեն շարունակվող բաքուն ու «փափուկ» միջոցներով ներարկվող աստվածամերժությունից:

**Եվ ի՞նչ:**

Այն, որ այդպիսով հայությունը կարդարանա, կլինի Աստուծոն ժողովուրդ՝ մաքուր ու գերծ ամեն անարդարությունից և չարի ամեն որոգայթներից, փորձություններից, և ոչ մի կոռում-պացված, լկտիացած, անօրեն իշխանավոր ու պետություն չեն կարողանալու վախեցնել, տիրել մեզ. ոչ մի կրթական, մշակութային հորջորջված խարդախն ծրագիր չի կարողանալու գլխահան անել մեզ, և ոչ մի կեղծ «ազատամտություն, հանդուրժողականություն» կամ նման այլ նոլություն չի կարողանալու այլևս ապակողմնորոշել, խոտորել ու այլասերել մեզ, հատկապես՝ մեր երիտասարդությանն ու մատաղ սերնդին:

Ինչո՞ւ, ինչպե՞ս կլինի դա:

Դա կլինի, որովհետև Աստված կլինի մեզ հետ, և Նա՝ կպաշտպանի մեզ: Իսկ երբ Աստված մեզ հետ է և պաշտպանում է, ո՞վ կարող է մեր դեմ կանգնել, մեզ վճասել...

**Ասվել է. «Դավատքը փրկություն է: Դավատա՛ և կփրկվես»:**

Գ Լ Ո Ւ Խ Զ Ո Ր Բ Ո Ր Դ

Վ Ե Ր Ա Գ Ա Ր Զ  
Ա Կ Ո Ւ Ն Ք Ն Ե Ր Ի Ն  
(Չափորոշիչների ուղղագծում և  
փարոսների տեղորոշում)

Շաբաթ, 01 - 05 - 2004թ., ժամը 07:10

## **ԱԶԳԻ, ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱՔԱՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈԳԵՔԱՄՈՒԹՅՈՒՆԸ**

Ընդհանրապես այս գործընթացը հակառակ ուղղությամբ է լինում: Սկզբում տեղի է ունենում հոգեզրկությունը՝ հոգեթամությունը: Ազգը, առնվազն նրա զգալի մասը, ենթարկվելով հոգեքամության, որով և հավատքի կորստի (կամ խիստ տկարացման), դրա արդյունքում ենթարկվում է գաղափարազրկության՝ գաղափարաքամության ու բարոյագրկության՝ բարոյաքամության, և դառնում է նյութապաշտ, հետևապես և կոռումպամետ ու կոռումպացված:

Եվ այս վիճակը, առաջացնելով գաղափարազրկություն ու բարոյագրկություն, այլ խոսքով՝ առաջացնելով դրանց արժեզրկում (ինֆյացիա), պատճառ է դառնում, որ նյութն իշխի, պաշտվի (նյութապաշտություն տիրի): Եվ գաղափարն ու բարոյականությունը, ծառայելով նյութին, արդեն ամեն ինչ առնվում և ծախսվում է. արդեն ամեն ինչ կարելի է առնել, կարելի է անել փողով և իշխանությամբ՝ փողի, իշխանության ու նաև հաճույքի համար: Այսպիսով, հավատազուրկ, գաղափարազրկությունը բարոյագուրկ իշխանությունը բռնությունից բացի, միայն նյութն ու նյութականն է պարունակում. ոչ խիղճ ունի, ոչ գիտակցություն (ազգային ինքնագիտակցություն), ոչ էլ օրենք, հայրենի ու պետական օրինապահություն: Հետևապես ամեն ինչ ունենում է իր գինը. վճարի՛ և կարող ես ուզա՞ծդ ստանալ կամ ուզա՞ծդ անել, նույնիսկ ճնշել, հարստահարել, կողոպտել, սպանել կամ բռնաբարել և վճարելով պատասխանատվության չենթարկվել, նույնիսկ հարզվել և անգամ հերոս ու հայրենասեր կոչվել... Ամեն ինչ կարող ես առնել, ամեն ինչ կարող ես անել և ամեն ինչ կարող ես լինել, եթե կողոպտել, հափշտակել, ձեռք ես բերել, ունես ու կարող ես վճարել...

Եվ սա այն վիճակն է, որն ազգը, հասարակությունն ազգային հոգեկան, գաղափարական և բարոյական արյունաքամության է ենթարկում, որը տկարացնում, նվաստացնում, պղծում և... հասցնում է կորստյան...

Ազգ, ո՞ւր ենք մենք: Ո՞ւր ենք կանգնած, ո՞ւր ենք նայում և ո՞ւր ենք գնում... Արդյո՞ք գնում ենք մեր ազգի մեծերի, սրբերի հարազատ ուղիով ու չենք շեղում դրանից: Եվ ո՞վ է մեզ առաջնորդում և ո՞վ է մեզ հովանավորում կամ պաշտպանում, որ չշեղվենք, չճահճախրվենք, չկորչենք:

Ո՞ւմ հավատանք, ո՞ւմ վստահենք, ո՞ւմ լսենք, ումի՞ց ի՞նչ սովորենք և ո՞ւմ ու ինչի՞ն հետևենք:

Աստված մեզ փրկի... և բոլորին փրկի:

Բայց դրա համար նախ սրափվել է պետք...

Կարծես բոլորս ենք թմրած և բոլորս ենք ինչ-որ կերպ ու ինչ-որ չափով արատավորված կամ արատներից ազդված: Մեկս մյուսին մատնացույց չանենք, այլ մեր ներսը նայենք, մեր ներքին մարդուն ճանաչենք՝ «Ծանիր զքեզ»: Վերջապես, ամեն մեկս, ինչպես մեր Տերն է ասել. մեր աչքի միջի գերանը տեսնենք, հանենք, որպեսզի կարողանանք մեր մերձավորի աչքի շյուղը տեսնել: ճանաչիր քեզ՝ անձ, հասարակություն, ազգ, իշխանություն և... կղերականություն, մանավանդ՝ կղերականություն՝ հոգևորականություն:

Եվ ինչո՞ւ մանավանդ վերջինս:

Որովհետև եթե ազգի, երկրի նյութական, ֆիզիկական (տնտեսություն, ֆինանսներ, կրթություն, գիտություն, մշակույթ, արդարադատություն, պաշտպանություն, արտաքին ու ներքին քաղաքականություն, Հայաստան-Սփյուռք հարաբերություններ) և այլ պակասների համար նրանց հետ ու ավելի շատ աշխարհիկ իշխանություններն են պատասխանատու, ապա հոգեկան և բարոյական պակասների համար ավելի շատ մեր կղերականությունն է պատասխանատու, մանավանդ՝ առաջնորդ դասը, իրենց հոգով ու խղճով: Եվ նրանցից մի քիչ պակաս պատասխանատու է մտավորականությունը, եթե այն մնացել է, կա:

Անձի, հասարակության ու ազգի հոգեկան, գաղափարական ու բարոյական արյունաքանություն է լինում, որ եթե հաջողվի դրան համապատասխան արյուն գտնել ու ներարկել, կփրկվեն: Բայց կա նաև արյունաքամության մի աստիճան, որի դեպքում ոչ մի ներարկում այլևս չի փրկի, մանավանդ եթե ներարկվող արյունն էլ է վարակված, մաքուր չէ:

Արյունաքամության այդ ճգնաժամային վիճակը միանգամից չի լինում, գուցե միանգամից չի էլ զգացվում, հասկացվում, բայց ունի իր սկիզբ, գաղտնի շրջանը և ընթացքը՝ մինչև «հասունացումը», ինչպես և մարմնի քաղցկեղը կամ բարոյական քաղցկեղը, ինչպես և հավատազրկությունը, գաղափարագրկությունը, բարոյազրկությունը: ճատրակի (շախմատի) ժամացույցի դրոշակը երբ ընկնում է, այդ կողմի խաղն արդեն վերջանում է պարտությամբ՝ անկախ նրանից, թե տախտակի վրա ինչ դիրք ու հնարավորություն, կարողություն ունի: Այդպես է լինում նաև ազգերի, հասարակությունների, երկրների և պետությունների պարագայում: Միայն թե ճատրակի ժամացույցի դրոշակի անկման ընթացքը տեսնում ես, այն երևում է բոլորին, իսկ ազգերի, հասարակությունների, երկրների, պետությունների, ինչպես և անհատների «դրոշակի»՝ կյանքի անկման ընթացքը չի երևում, մանավանդ անզեն՝ հոգեզուրկ աչքով, այլ երևում է հոգու տեսողությամբ ու իր ժամանակին: Իսկ հոգու տեսողությունը, մաքուր մտքի՝ զգաստությունը, խղճի արթնությունը և ամեն ինչ, որ պետք է այժմյան կյանքի և հավիտենականի համար, լինում է հավատքով: Զկա հավատքը՝ չկան և դրանք, հետևապես և դրանց արդյունքը:

Դրա համար իսկ նայենք մեր ազգի իրավ մեծերին, նայենք մեր սրբերին, նահատակներին, մարտիրոսներին, ճանաչենք նրանց էռությունը և վերականգնենք, վերահաստատենք մեր մեջ նրանց սուլր հավատքը՝ մեր անձնական, ազգային, պետական կյանքում, ըստ այնն գործելով ու ապրելով նաև հօգուտ մարդկության և ամենաէականը՝ ի փառ Սուլր Երրորդության՝ ԱՍՈՒԾՈ:

Ուրբաթ, 04 - 09 - 2020թ., ժամը 06:20

## **ԻՍԿԱԿԱՆ ՈՒ ԼԻԱԿԱՏԱՐ ԱՊԱՔԻՆՈՒՄ<sup>7</sup>**

Վիրուսներ կամ, որոնք տարիներով օրգանիզմի մեջ են լինում (օրգանիզմը վարակած են լինում), բայց հիվանդություն կամ զգալի տկարություն չի առաջանում, մինչև ինչ-ինչ պատճառներով դրանց սաստկացում կամ օրգանիզմի դիմադրողականության (վարակամերժ կարողության) անկում՝ նվազում կամ վերացում չի լինում: Եվ այս հանգամանքը, այս երևոյթը բժշկագիտությունն ապացուցել է:

Իսկ ինչպիսի՞ն է լինում անձի, ազգի, մարդկության վիճակը, երբ իրենց մեջ գոյություն ունեցող վիրուսներն առաջնում են հոգեկան, գաղափարական ու բարոյական վարակներ, որով և տկարություններ, հիվանդություններ: Ո՞ւմ կողմից և ինչպես պետք է կանխվի այդ վիրուսների ավելացումը կամ եղածների սաստկացումը, զորացումը, որպեսզի դրա պատճառով ու նաև անձի, ազգի (մարդկության) ներքին շեղումների, ներքին խախտումների և դրանից այլասերման պատճառով չառաջանան անձանց կամ ազգերի (մարդկության) հոգեբարոյական ու գաղափարական դիմադրողականության և վարակամերժ

<sup>7</sup> **Խմբագրի կողմից.** քանի որ միմյանց փոխլրացնող այս և հաջորդ չորս հոդվածներում, ի ոենս COVID 19 (կորոնավիրուս) անվանումը ստացած հիվանդության, հեղինակն իրեն բնորոշ պատկերավոր մտածողությամբ և դիպուկ համեմատություններով դիտարկում է մարմնական ու հոգևոր ախտերի փոխկապակցվածությունը՝ անառարկելիորեն առաջնային համարելով հոգևոր և գաղափարական առողջապահության միջոցով մարդու միտքը ու հոգին ամեն տեսակ վիրուսներից գերծ պահելը, ուստի նպատակահարմար համարվեց այս հինգ հոդվածները հաջորդաբար գետեղել գրքի չորրորդ՝ «Վերադարձ ակունքներին (Չափորոշիչների ուրվագծում և փարոսների տեղադրում)» գլխում:

կարողության տկարացում, անկում, մինչև իսկ վերացում իրենց կործանարար հետևանքներով:

Դրա համար պետք է այդ վիրուսները հատկապես դրանց տկար, «խաղաղ» ժամանակ հայտնաբերել, ընդմիշտ վերահսկել, չեզոքացնել ու եթե հնարավոր լինի, իսպահ վերացնել դրանք: Որի համար, ըստ երևույթին, անհրաժեշտ է հետևողական ու գործնական նպատակառուղղվածություն՝ ծրագիր, բուժման մարտավարություն, ռազմավարություն, կազմակերպություն, կառավարում, և դրա համար էլ համապատասխան ազգային պատասխանատվություն, պարտաճանաչություն և կատարել իսկական ղեկավարության իսկական ընտրություն՝ հավատքով, հույսով և սիրով:

Ու երբ մեր ազգն իր բոլոր հարցերը լուծելու, բոլոր խնդիրները կատարելու համար այս և սրա՛ նման ճանապարհներով ընթանա, այնժամ կունենա ամենակարևորը, էականը՝ Արարիչ Յոր հաճությունն ու օգնությունը, որով և իր ընթացքի առաջ միշտ կանաչ լույս կլինի, և (Աստվածաշնչյան արտահայտությանք) բոլոր ծորերը կլցվեն, ու բոլոր բլուրները կխոնարհվեն:

Եվ հայ ազգը կհասնի իր բոլոր կարիքների բավարարմանը, իր բոլոր իղձերի կատարմանը, և դա կլինի նաև հօգուտ համայն մարդկության ու ամենա-ամենա կարևորը, ինաստալիցն ու էականը՝ կլինի ի հաճություն և ի փառս Սուրբ Երրորդության՝ Աստուծուն:

10 - 04 - 2020թ., ժամը 00:25

## **ՎԵՐՈՒՄ, ԱԽՏ, ՍՐԲԱՊՂԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ**

Ինչքանո՞վ է մարդը, մարդկությունը, մենք՝ հայերս էլ մեծը, խելացի, տրամաբանող: Մենք կորոնավիրուսից վախենում, զգուշանում, պաշտպանվում ենք և ճիշտ ենք անում, դա լավ է: Սակայն մեղքի՝ վիրուսից. մի՞թե նույնն ու ավելին չպետք է անել, եթե խսկապե՞ս խելացի ու տրամաբանող ենք... ու նաև մի քիչ էլ հավատք մնացել է, կա՛ մեր մեջ:

Աշխարհը խառնվել, իրար է անցել. մոռացվել կամ հետաձգվել է հազար ու մեկ բան, նույնիսկ այս աշխարհի «սրբություն սրբոց» բիզնեսը. փակվել են ձեռնարկություններ, հաստատություններ, առաջվա պես չեն գործում բանկերը, երկարաժամկետ հետաձգվել են բազում միջոցառումներ, ու անմատչելի դարձել բազմաթիվ զվարճանքներ միայն նրա համար, որ կորոնավիրուսի վարակից մարդիկ փրկեն իրենց թոքերը, այլ օրգանները և դրանով՝ այս աշխարհում կարծ կյանքը:

Իսկ մեղքի՝ վիրուսի վարակից հոգին և դրանով հավերժական կյանքը փրկելու մասին: Դրա մասին մտածել, մտահոգվել և միջոցներ ձեռք առնել պետք չէ<sup>9</sup>: Թե՞ դեռ շարունակում ենք կարծել (փաստորեն, մեր արարքներով, ինչպես 70 տարի մեզ ստիպելով սովորեցնում էին) և մտածել, թե նման հարցադրումը լուրջ չէ, գիտական չէ, անտեղի է, որովհետև այդպիսի հոգի չկա, որ դրա վարակվելու, էլ չասած դրա մեռնելու կամ ապրելու (այն էլ հավիտյանս ապրելու) մասին մտահոգություն լինի: Եվ այդպիսի մտածողություն կար և դեռևս կա, թեև այս «խելքից պատուհաս» աշխարհը հոգե-«բանների», հոգե«բույժների» բանակներ է պատրաստում, պահում, «գործի» դնում:

**Եվ մեծամասության մտածողությունից դուրս էր մնում հարցը.** իսկ եթե իսկապես հոգի կա՞։ Եթե մեր ես-ը ոչ թե մեր չոր մնալիք կմախքը, հետոն էլ չոր մնալիք գանգն է (որ ինչ-որ պայմաններում, ինչ-որ ձևով կարող են և մի քիչ էլ երկար դիմանալ ու մեր մնացածի պես շատ արագ հող չդառնալ), այլ մեր իսկական եսը մեր հոգին է՝ անմահ, հավերժական հոգին (միայն թե, ըստ մեր հավատքի, հարցական է, թե դրա հավերժականությունն ի՞նչ «կարգավիճակում» է լինելու՝ հավերժ երանելի<sup>6</sup>, թե՝ հավերժ կակծալի): Ու երբ դարերի՝ ընթացքում այսպես էին մտածում մեր մեծ, մեր սուրբ նախնիները, մեր բոլոր մատենագիր-հեղինակները՝ ազգի ուսուցիչները, ապա այսօր ի՞նչ անուն տանք մեզ, երբ նրանցից շեղվելով՝ այլևս այդպես չենք մտածում ու ըստ այնմ չենք վարվում ու ըստ այնմ չենք ապրում... Յապա ո՞ւր մնացին մեր խելքն ու գիտությունը. աղքանոցներո՞ւմ կամ նայթ կլարբներո՞ւմ, սառւնաներո՞ւմ, կազինոներո՞ւմ մնացին, թե՝ սուտ երազներում...»

Եվ աշխարհում, ներառյալ «զարգացած» երկրներում ու մեր հայրենիքում ևս, «COVID 19»-ի երևույթը համարյա նույնն է. պետական-կառավարական ու այլ բազում խորհրդակցություններ, որոշումներ, ամեն տեսակի միջոցառումներ, հերոսական բուժօգնություն ու մարդասիրական բարեգործություններ և այլն, որոնք տեղի են ունենում, թեև համարյա հաստատ գիտենք, որ այդ «կորոնա» կոչվող վիրուսն անցողիկ է, ընդմիշտ չի լինելու, երկար չի նեղելու, շատ երկար չի զրկելու և վնասելու մեզ: Ի՞նչ լավ է, որ այդպես է (how nice), կասեին անդրօվկիանոսյան մեր բարեկամները. ի՞նչ լավ է, որ շուտով դրանցից «կարծնենք», արձագանքում ենք և մենք:

Իսկ այն մյո՞ւս վիրուսը, մեղքի՝ վիրուսը (որի մասին նույնպես պետք է գիտենանք), որ համայն մարդկության և մե՛ր ազգի ու երկրի միջից էլ երբեք չի հեռանում և համար, խորամանկ ու դաժան հարատև հետևողականությամբ նորանոր կերպերով, մեթոդներով զանգվածային զոհեր է ճարակում. այդ վիրուսի, այդ քրոնիկ, աննահանջ ու քաղցկեղակերպ տարածվող, գործող հոգեսպան վիրուսի դարավոր համավարակը.

ինչո՞ւ ոչ միայն մեր ազգի ու Երկրի պատասխանատուների՝ իշխանությունների, հետն էլ քաղաքական ընդդիմադիրների ու նաև գիտնականների և հասարակության լայն խավերի, այլ նաև (ով զարմանք և ցավ), ըստ էռթյան, (գործնականորեն) հոգևորականության իսկ ուշադրությունը պատշաճորեն չի գրավում: Եվ ինչո՞ւ, ինչո՞ւ չի գրավում, թեև ով-ով՝ հոգևորական-ները քաջ գիտեն (նրանք պետք է գիտենան), որ իրենց օժումի, կոչումի և ընտրության համաձայն՝ իրենց առաջնային, իրենց անմիջական խնդիր-պարտականության մեջ է մտնում հսկել, թույլ չտալ, որ հայոց հոգիներից նույնիսկ մեկն իսկ կորչի՝ զոհ գնա մեղքի վիրուսի վարակին:

Եվ մի հայոց ևս այն մասին, թե ուր են մեր խելքն ու տրամաբանությունը, մեր դատողությունն ու արդարամտությունը, և այս դեպքում նաև ո՞ւր են մեր խիղճն ու կոչումին մեր հավատարմությունը... և ո՞չ թե նախաձեռնությունը միայն բիզնեսի մեջ, այլ նախանձախնդրությունը, նախևառաջ հավատքի՝ գործերի մեջ... Այս վիճակում ազգի ո՞ր զանգակատները պարտավոր են անհապաղ ահազանգել. հայոց խիղճն ու ազգային ինքնազգացողությունը զգաստացնել, թույլ չտալ, որ խամրի, նվազի, մեռնի, մանավանդ ազգի աշխարհիկ ու հոգևոր դեկավարների, պատասխանատուների՝ խիղճն ու ազգային ինքնազիտակցությունը:

Ակնհայտ է, որ Աստծուց շատ բան ունենք խնդրելու, բայց ըստ Երևոյթին շատ քիչ ենք խնդրում կամ այն չենք խնդրում, որ պետք է խնդրենք և կամ մաքուր սրտով չենք խնդրում:

Եվ ո՞ւր նայենք, որ ճիշտը տեսնենք, ընդօրինակենք, հետևենք, եթե ոչ մեր մեծերի, մեր սրբերի, մեր վասն հավատու և վասն հայրենյաց բյուրավոր նահատակների կյանքին ու ըստ այնմ ապրենք, ընթանանք Տիրոց ճանապարհով՝ հեռու նայք կլարներից, անառականոցներից, կազինոներից ու խաղամուլությունից և նման այլ մոլություններից, վարակներից, կորստյան թակարդ փորձություններից, որ ավելացնում են

Եղած նյութապաշտությունը, շահամոլությունը, կոռումպացվածությունը ու նաև կորստաբեր այլասերությունը...

Եվ ո՞ւմ խնդրենք ու հավատանք, որ կիաղթահարենք ամեն տեսակի վիրուսների վտանգները և հոգով ու մարմնով, հոգեպես ու ֆիզիկապես կիրկվենք, վերելք կապրենք, կրաքանանք: Ո՞ւմ, եթե ոչ մեր հավատքի Զորագլխին՝ փորձություններից ու փորձանքներից փրկող, իր լույսին ու հույսին արժանացնող Աստվածորդուն՝ մեր մաքրասիրու, հետևողական ու հարատև հավատարմությամբ Աստվածաշնորհ հավատքին:

Եվ ի՞նչ է սա: Սա մեր ազգային համաժողովրդական ու պետական գոյության՝ հավատք, գիտակցություն, ռազմավարական նպատակ և դրանցով կյանքի՝ ապրում է: Չկա սրանից ավելի կենսականը, պետականը, քաղաքականը, ռազմավարականը և ուրիշ ի՞նչ էլ լինի, քանի որ այսպիսի կյանքի ապրումը երկնապատզամ է՝ երկնահսկողությամբ ու երկնապաշտպանվող է՝ դեպի անանց հաջողություն, երջանկություն ու երանություն հավիտյանս հավիտենից:

Փա՛ք այն մեզ պարզենող Սուրբ Երրորդությանը՝ Աստծուն:

Երեքշաբթի, 26 - 02 - 2020թ., ժամը 23:50

## **ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՏԸ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ**

Կորոնավիրուս կոչվող համավարակի աշխարհատարած լուրը, սկզբում մեծ մասամբ անհավատալի, շատ արագ դարձավ ակնհայտ հավատալի ու ենթարկվեց համապատասխան վերաբերմունքի մեծագույն թվով մարդկանց ու համարյա բոլոր երկրների կողմից:

Եվ սարսափը տիրում է՝ օրավուր աճ վարակվածների և վարակի պատճառով մահացածների: Սակայն կառավարությունների սարսափը, ըստ երևույթին, մեծ է ոչ միայն իիվանդացածների և կյանքից հեռացողների հարածուն թվի համար, այլև տնտեսությունների վնասների, ձեռնարկությունների շահի

պակասեցման, բյուջեների նվազման, գործազրկության ավելացման ու ննան այլ բացասական երևույթների համար...

Եվ աշխարհում միլիոնավոր վարակվածների և մահերի կտրուկ աճի դեմ հանդիման ի՞նչ են առաջարկում Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը և առողջապահական ազգային ու այլ հաստատություններ, որոնք առայժմ հիմնականում վիճակագրությամբ են զբաղվում, կարծիքներ են հայտնում և համավարակի դեմ դեղամիջոցների փնտրութիւններ առաջնականում անձի ձեռքի, դեմքի, շնչառության ու նաև շրջապատի պաշտպանության վերաբերյալ, որը և արվում է:

Իսկ շատ ավելի երկար ժամանակից ի վեր գոյություն ունեցող և բժշկագիտության կարողությունից դուրս մնացող ու անհամեմատ ավելի տարածված ու ավելի կորստաբեր մեղքի՝ համաճարակի դեմ, որը երկար դարերի ընթացքում միլիոնավոր կյանքներ է հնձում՝ ոչ միայն մարմնապես, այլև հոգեպես, որևէ միջոց տրամադրվում է կամ օգտակար խորհուրդ տրվում է այս աշխարհի դեկավարների ու ամեն տեսակի պաշտոներին կողմից, թե ինչու և ինչպես պետք է ախտահանվել, պաշտպանվել և մանավանդ կանխարգելել՝ այլևս մեղքի ախտահարման չենթարկվելու համար:

Երկրների դեկավարները, հոգեոր իշխանավորները և մտքի տիտանները՝ ակադեմիկոսները, պրոֆեսորները ու այլ մտավորական բարձունքների հասածներն էլեկտրոնային կամ այլ զանգվածային լրատվամիջոցներով պատշաճ բացատրություններ, նախազգուշացումներ, խորհուրդներ, հորդորներ, հրահանգավորումներ տալիս են մարդկանց զանգվածներին, մանավանդ գիտակցորեն ախտահարվողներին սպասվող հետևանքների՝ պատիժների մասին: Խոսո՞ւմ, զգուշացնո՞ւմ են մարդու իսկական ես-ի անվերականզնելի՝ կորստի մասին, թե ինչպես կարելի է չենթարկվել այդպիսի ողբերգության (ուրիշ բար չգտանք, ողբերգություն բառն էլ անկարո՞ղ է ներկայացնել կորստի, խորտակնան մեծությունն ու ահավորությունը):

Բայց ո՞վ կարող է մարդուն, ազգերին, մարդկությանն այդպիսի վիրուսի՝ մեղքի քրոնիկ ախտահարումից ախտահանել և բուժել, եթե ոչ երկինքը, այն էլ ոչ թե որևէ հեղուկով կամ կրակով կամ ինչ-որ դեղորայքով, այլ **ողորմածությամբ և ներումով:**

Այդպես է լինում, երբ երկնային Դայրը ներում է մարդկանց՝ նրանց խոհերով, խոսքերով ու արարքներով կատարված մեղքերը, մեղանչումները, որով այնժամ նրանք ախտահանվում, բուժվում են նույնիսկ ամենասարսափելի ու ամենակորստաբեր վարակից՝ մեղքից...

Ու երբ այդ է միակ միջոցը, միակ հնարավորությունը փրկվելու և փրկելու նաև մեր երեխաներին, թռոներին ու մատադ սերունդներին այդ քրոնիկ ու ամենակորստաբեր վարակից, մենք արդյոք դիմո՞ւմ ենք այդ միջոցին: Ցուցաբերո՞ւմ ենք նվազագո՞ւյն իսկ տրամաբանություն, ողջամտություն, էլ չասած՝ սեր ու երախտագիտություն՝ բազումողորմ Արարիչ Դոր նկատմամբ և խնդրելու ոչ այլ ինչ, քան հավերժական փրկություն: Խնդրելու հավերժական այն կեցությունը, գոյությունը, որի արժանիքի, լույսի, երանության մասին մարդկային ամենայն զարգացմանը իսկ անհնարին է ընթանել ու բարձրագո՞ւյն իսկ լեզվամտածողությամբ արտահայտել:

Կիրակի, 05 - 02 - 2011թ., ժամը 20:50

## **ՀԱՄԱԺԱՐԱԿԻ ՊԱՏճԱՌԻ ՃԱՆԱՋՈՒՄԸ՝ ՕԳՏԱԿԱՐ, ՀԱՂԹԱԿԱՆ**

Քողարկում՝ կամուֆլյաժ, գաղտնիություն ու ապակողմնորոշում, թվում է՝ սրանք ռազմական նշանակության միջոցներ են և կիրառվուն են կամ կարող են կիրառվել հակառակորդ գործերի միջև, ու եթե նրանք առավել «զարգացած», կարողունակ ու կազմակերպված են, ապա ի վիճակի են լինում նաև գործածելու միկրոբները, վիրուսները՝ անչափ փոքր մարդկային տեսողության համար, և դա կատարում են՝ ի զարմանս և ի վնաս մեզ բոլորիս՝ մարդկությանը...

21-րդ դարասկզբին աշխարհի զարգացած առողջապահությամբ շատ երկրներում՝ մի դեպքում մի քիչ ուշ, մի դեպքում՝ բավականին շուտ, ճանաչվում, հաստատվում էր տարվա գրիպի վիրուսի շտամն ու ըստ այնմ՝ պատրաստվում էր դեղորայք, որը բազմահազար մարդկանց կյանքն էր փրկում կամ թերևացնում:

Սակայն այսօր բժշկագիտությունն ու գիտական կոչումներով բժիշկներն անզոր են կրկնելու իրենց նախորդ հաջողությունը՝ բնորոշելու արդեն իսկ ավերներ գործող գրիպի հատկանիշները՝ շտամը, ու ըստ այնմ, արագացված կարգով, արտադրել անհրաժեշտ դեղը՝ կանխարգելելու և փրկելու մահից կամ առողջական լուրջ բարորություններից ազգաբնակչության զգալի մասին: Ինչո՞ւ: Որովհետև անզեն աչքով անտեսանելի այդ անարյուն, անուղեղ մանրէները՝ վիրուսները, «զգալով», որ իրենց հատկությունը հայտնաբերվել և համապատասխան դեղերի մշակմանը ու կիրառմանը իրենց ավերիչ գործողությունը կասեցվել է, որոշ ժամանակից հետո նոր վարակահարույց հատկություններով են սկսել իրենց գրոհը կանանց ու արանց, տարեցների ու երիտասարդների, ունկորների

ու չունենորդների և ղեկավարների, պաշտոնատարների ու շարքայինների վրա:

- Իսկ չէ՞ր կարելի կանխատեսել դրանց փոփոխությունն ու ըստ այնմ նախապատրաստվել համապատասխան դեղորայքի արտադրությանը:

- Գիտնականներն ասում են՝ ո՞չ, անկարելի էր կանխատեսել, թե ինչպիսի տարբերությամբ ու նոր հատկություններով են կատարելու տվյալ տարեշրջանի իրենց հարձակումը:

- Ի՞նչ է, այդ «անարյուն ու անուղեղ» մանրէները մարդկանցից և նրանց միջի գիտնականներից ավելի «խելացի՝ են», որ կարողանում են իրենց հաջորդ հարձակումը քողարկել և դրա գաղտնիությունը պահելով՝ ապակողմնորոշել ու հանկարծակի բերել զարգացման այսքան բարձր սահմանների, այսքան մեծ նվաճումների հասած այս աշխարհին՝ հարվածելով նրան և նորանոր գոհեր պատճառելով:

- Տարօրինակ է, զարմանալի ու անհավատալի, բայց փաստը մնում է փաստ՝ ապացուցված մարդկային առաջավոր գիտությամբ, որը, սակայն, անզոր է առ այսօր ոչ միայն այդ չարիքի առաջն առնել ու պաշտպանել մարդ էակին, այլև անզոր է բացատրել, թե ինչն է այդ անարյուն, անուղեղ ու անզեն աչքով անտեսանելի մանրէներին մարդկության ոխերիմ և շատ դժվարիադրահարելի թշնամի դարձնում:

- Ու եթե թժկագիտությամբ դա չի լինում բացատրել ու առավել ևս՝ հաղթահարել, ապա գուցե փիլիսոփայությա՞մբ այդ արվի... Բայց, ըստ երևույթին, դա՛ էլ չի լինում գոնե մինչև հիմա: Ի՞նչ անել:

- Ինչ անե՞լ. դիմել հավատքին, որը միշտ պետք է արվի: Ճավատքո՞վ մոտենանք հարցին, հավատքո՞վ մտածենք այդ մասին, որպեսզի լավ հասկանանք, լավ ճանաչենք այդ Վիրուս կոչվող թշնամուն, ինչպես և դրա ծագումը: Եվ ճանաչենք մեր վրա հարձակվելու նրա դրդապատճառը և գուցե նաև դրա ուղղողողին՝ չարիքի հորը:

- Իսկ ինչպե՞ս հասկանանք, ճանաչենք այդ չարին:

- Դա անկարելիի չափ դժվար է և միաժամանակ՝ բավականին դյուրին:

Սակայն դրա մասին բավականին խոսել ենք արդեն և դեռ կխոսենք: Մինչ այդ, գալով վարակին, մինչև դրա վիրուսների հատկությունների՝ շտամի ճանաչումը, սահմանումը և ըստ այնմ՝ դեղորայքի, պատվաստումների հայտնաբերումն ու պատրաստումը, եթե անպայման ուզում ենք փրկվել այդ չարիքից, այդ դեպքում զորացնենք, կոփենք մեր օրգանիզմները ճիշտ սննդառությամբ, կենցաղավարությամբ և մարզումներով՝ առանց թուլացնելու և տկարացնելու դրանք նաև մեր տարբեր չարաշահումներով, ինչ է թե՝ հաճելի են: Թվում է, թե հաճելի են, սակայն կամք, գիտակցություն և խիլդ ցուցաբերելու պարագայում կիասկանանք, որ այն, ինչ վնասակար է մեր անձին (նաև մեր շրջապատին) և մինչև իսկ մահաբեր է, չի՛ կարող և չպետք է լինի հաճելի:

Եթե սա համոզիչ չէ, այդ դեպքում պետք է պարզաբանել, թե ինչ է հաճույքը, հաճելի կոչվածը, բայց պարզաբանել ո՞չ թե ունայն գիտությամբ, այլ հաստատուն, հավերժական հավատքի՝ գիտությամբ:

Ու այդ, ինչպես նաև վերոնշյալ բոլոր երևույթների պարզաբանումը ու ըստ այնմ պաշտպանվելու և հաղթելու համար ամեն հարկ եղածը պետք է կատարի հատկապես ազգի հոգևոր ու աշխարհիկ դեկավարությունը ու ըստ այնմ էլ գործի: Իսկ եթե դա շարունակում է չկատարվել, **ազգն անհապաղ պետք է անլոելիորեն ահազանգի...**

\* \* \*

### **Առանձին նշում.**

Ծուրջ տասը տարի առաջվա՝ 2011 թվականի փետրվարի այս գրությանն այժմ՝ 2022 թվականին, անդրադառնալու և հրատարակության պատրաստելու կապակցությամբ հարց առաջացավ. մի՞՞թե դրանում արտահայտված դատողությունները նաև ներկայիս մեծագույն համավարակ COVID 19-ը երևութին չեն վերաբերում:

Մի՞թե այդ երևույթը ժամանակի և տարածության մեջ ինչ-որ օրինաչափության չի՝ առնչվում:

Եվ մի՞թե այս ու նման հարցերի պարզաբանման ավելի հետևողական ու հանգամանորեն շարունակումը գերիմաստալից և շատ կարևոր չէ:

20 - 05 - 2012թ.

## **ՀՈԳԵՎՈՐ ՎԵՐԱԿԵՆԴԱՎԱՑՈՒՄ (Реанимация)**

Հայության, հայ ազգի և հայրենիք Հայաստանի հոգևոր, գաղափարական, բարոյական, կրթական, մշակութային ու գիտական (ներառյալ հայագիտական) վիճակը մեծ մասամբ այնպիսի անկնան մեջ է, որ դրա վերականգնումը վաղուց ի վեր պահանջում է **վերակենդանացում՝ քրիստոնեական (բայց իրական) հավատքի բուժմամբ:**

Հետևապես հայության ու հայրենիք Հայաստանի հոգևոր, գաղափարական ու ըստ այնմ՝ Բարոյական Ազգային Առողջապահության (ՀԳԲԱԱ) կազմակերպումը ազգային ու հատկապես պետական էական պարտականություն-խնդիր է, որը ներկա պայմաններում պահանջում է անհապաղ ու անպայման որակյալ կատարում:

Սակայն այս իրականության ճանաչման պարագայում էական հարց է առաջանում. ազգի պատասխանատուները ե՞րբ են սկսելու այդ ՀԳԲԱԱ-ի կազմակերպումն ու գործարկումը. չէ՞ որ խնդիրը վերոնշյալ ու նման բնագավառների վերակենդանացնանն է վերաբերում ոչ թե որպես ՄԱԿ-ի կամ միջազգային այլ կազմակերպության կամ էլ այս աշխարհի հզորների, այլ որպես Երկնային պահանջ:

Այդ առումով (ինչպես և շատ այլ առումներով) արդար, էական ու օգտաշատ է նկատի ունենալ, որ հայության մեջ, հայ կյանքում Երկնային Բանականության կենդանի, պարզ, հստակ

արտահայտության համար պահանջվում է ժողովրդի և հատկապես հոգեոր ու աշխարհիկ առաջնորդության շիտակություն, որով և **Աստվածային Ծերշնչում:**

Կարո՞ղ ենք մեր այս վիճակում ունենալ այդ **Ծերշնչումը:** Եթե ո՞չ, ի՞նչ պիտի անենք ու նաև չանե՞նք՝ այն ունենալու համար: Ու այդ ունենալու մասին մեզ ո՞վ կասի, կտեղեկացնի, կխրատի, եթե ոչ Աստվածային Խոսքը՝ Աստվածորդու Ավետարանով և Խաչի խորհրդով:

- Ուրեմն՝ մեզ ամեն ինչ ասվա՞ծ է, հայտնի՞ է, պա՞րզ է:
- Բարեբախտաբար, այո՛: Ասված է, հայտնի՞ է, պարզ է և մեզ շատ մոտ է:

- Բայց չի՞ երևում, չենք տեսնում, առնվազն մեր զգալի մասը: Եվ ինչո՞ւ չենք տեսնում, ի՞նչ անենք, որ տեսնենք:

- Մաքրե՞նք մեր սրտերը, որը ոչ մի «քիմնաքրմանք» հնարավոր չէ, բայց հնարավոր է Տիրոջ ողորմածությանք շնորհված հավատքի ապրումով, հավատքի գործերով և դրանց արդյունքով՝ նաև հոգու տեսողությամբ:

Կիրակի, 15 - 09 - 2013թ., ժամը 09:00

## **ԾԱՆԵԸ ԶՔԵԶ (Ծանաչիր քեզ)**

Եթե դա՝ մեզ ճանաչելը չկա՛, ուրեմն, մեզ համար ո՛չ մի բան չկա:

Եթե ես ինձ չճանաչեմ, ո՛չ մի բան չեմ կարող ճանաչել, որ կա: Ու եթե ես ինձ չհաստատեմ, ո՛չ մի բան չեմ կարող հաստատել (ստեղծել, գոյացնել)` որպես մարդ, որպես հայ և որպես ընտանիքի (տոհմի) անդամ:

Եվ իրական ինքնաճանաչումն ու ինքնահաստատումը ծնվում են հավատքով, հոգու իմաստությամբ և ապրում դառնում հոգեկանությամբ, գաղափարականությամբ, բարոյականությամբ ու ավարտվում հոգու անմահությամբ, երբ ամեն ինչ փոխվում է, և որտեղ ամեն ինչ այլ է:

Դայ իմաստասիրությունը հայ կյանքի գոյության կարևորագույն պայմաններից է համարել հայի ինքնաճանաչումը: «**Ծանեա՝ զքեզ** (Ծանաչիր քեզ)», - ասել է հայ իմաստասիրությանը հոգեհարազատ Բարսեղ Կեսարացի Մեծը:

Ավելացնենք. «**Ճանաչիր քեզ, որպեսզի ապրես մարդակայել ու հայավայել**»:

**ԵՎ ՃԱՆԱՉՈՒՄ ԱԿՍՎՈՒՄ Է ՀՈԳԵԿԱՄԻՋ.**

- Դոգով ու սրտով ճանաչիր քո հավատանքը, այն, ինչին հավատացել են քո նախնիները և պաշտպանել ու պահպանել են, որի արդյունքում էլ դու այսօր կաս և հայ ես: Ու եթե դու էլ այն պաշտպանես ու սրբությանք պահպանես, կլինես նաև վաղը հայ և ընդմիշտ, հավերժ երանելի:

- **ՃԱՆԱՉԻՐ քո նախնյաց պատմությունը՝ հայոց պատմությունը (մարդկության պատմության հետ միասին):**

- **ՃԱՆԱՉԻՐ հայ հոգու և մտքի մշակների արտացոլումները՝ հայ մշակույթը (համաշխարհայինի հետ միասին):**

- **ճանաչի՛ր** հայության ու նրա պետականության վերելք-ների ու անկումների, առաջընթացների ու հետընթացների խորքային պատճառները (համամարդկայինի հետ միասին):

- **ճանաչի՛ր** հայկականության հոգևոր գործոնը, որը լուսավորում, բացում է միտքը, հարստացնում և գաղափարականացնում, բարոյականացնում, վեհացնում է հայ մարդկային-ազգային կյանքը՝ բարի, ստեղծագործ, կառուցողական և միշտ վերընթաց գործերով... մինչև հավերժություն:

15 - 10 - 2010թ.

## **ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ** **(Ինչքանով է պաշտպանվել և պահպանվում)**

Յայ ազգի Աստվածատուր օրբան Յայաստանը, գտնվելով մարդկության երկու աշխարհների՝ Արևելքի ու Արևմուտքի թե՛ սահմանազատման և թե՛ միացման գոտում, հայ ազգը թե՛ Արևելքից է առել, սնվել ու տվել նաև Արևմուտքին և թե՛ Արևմուտքից է առել, սնվել ու տվել է նաև Արևելքին: Եվ տվել է սրտաբաց, հարազատությամբ, սակայն առնելիս իր մարդկային-ազգային **մաղով՝ մաղել, ֆիլտրով՝ ֆիլտրել, զսել՝ է իրեն մատուցվածը կամ իր փնտրածն ու վերցրածը: Յայությունը՝ որպես մարդկության հարազատ մասնիկ-անդամ, միշտ հարաբերվել, գործակցել ու առել-տվել է, սակայն երբե՛ք չի հափշտակել, չի գողացել, այլ ստացածի համար ըստ արժանվույն փոխհատուցել է, վարձատրել է՝ նաև այդ հարաբերություններում տեսածը չկապկելով, այլ ամեն ներմուծածն ազգային հոգևոր, գաղափարական և բարոյական մաղերով անցկացնելով, մաղվածը՝ արդեն որպես իրեն հարազատ մարդկային տարատեսակ, բեղմնավորել է իր ազգայինով և ստեղծագործաբար բազմացրել, կիրառել ու նաև տարածել է: Մի բան, որ միշտ ու ամենուր պետք է արվի:**

**Իսկ այժմ ինչպիսի՞ն է վիճակը:**

Յայության շուրջ երկու երրորդի (որ Յայրենիքից դուրս Սփյուռք է դարձել) մեծ մասը երկար ժամանակից ի վեր ձեռքերը վեր բարձրացրած, օտարի ու խորթի ազդեցության տակ հանձնվում է: Եվ մինչ Յայրենիքի մեկ պատառիկի վրա կազմավորված Յայաստանի Յանրապետությունում գոյատևող հայության մեկ երրորդի մեջ ներմուծվող նյութական համարյա ամեն ինչ (մանկահասակ երեխաների խաղալիքներից մինչև մեծահասակների պերճանքի առարկաներ) մասնագիտական բավականին մանրակրկիտ ստուգման է ենթարկվում՝ բացահայտելու և թույլ չտալու համար վնասակարի մուտքը երկիր, ապա այն ներմուծվողը, որ ոչ թե մեր հագնելու, մեր որովայնը լցնելու, մեզ զարդարելու կամ մեր հարմարությունն ավելացնելու համար է, այլ մտնում է մեր հոգիների, մտքերի, բարոյական արժեքների, գաղափարական ըմբռնումների ու ըստ այդմ՝ կենցաղավարության մեջ, կարծես թե մեր անհոգությամբ, անտարբերությամբ ու չգիտես ուրիշ ինչով՝ թողնված է դարձյալ օտարին ու խորթին, սակայն թողնված է նաև ու կարծես ավելի մեծ չափով թշնամուն և չարին:

Այսպիսով, ստացվում է, որ մեր կյանքը՝ հայի արժանավայել կյանքն ապահովելու խնդրում հայրենաբնակներս ոչ միայն ձեռքներս վեր ենք բարձրացրել, ինչպես արտերկրի մեր եղբայրների ու քույրերի ճնշող մեծամասնությունը, այլևս հնարավոր դարձնելով պղծության վարակների մուտքը մեր մեջ՝ ախտահարում ենք մեզ, մեր երեխաներին, թուներին, սերունդներին ու նաև ազգի ապագան:

**Ինչո՞ւ: ինչո՞ւ ենք հայտնվել այս թշնամության մեջ՝ կորստաքեր վիճակում:**

Ինչո՞ւ, որովհետև զգալիորեն վնասվել, կենսագրկվել է մեր հոգեկան ու դրանից բխող և դրա վրա հիմնված գաղափարական ու բարոյական վարակամերժ կարողությունը, մեր հայկական օրգանիզմի մարդկային-ազգային իմունիտետը՝ իմուն համակարգը

Որովհետև խարվել ենք. կուլ ենք տվել խայծը՝ առաջադեմ, հզոր, հարուստ և արդար կոչված կողմերի «խրատներն»

ու խոստումները... Օրինակ, երբ նրանց իսկ ջանքերով ու «օգնությամբ» փշացրել, վերացրել կամ ձևական ենք պահել մեր հայրերի հոգևոր, գաղափարական և բարոյական ազգային մաղերը, ֆիլտրերը, որոնցով են հարազատի և բարու ճանաչումը, ընտրությունը, ընդունումը, որով և վերընթացը դեպի իսկական կյանք:

Օտար ու խորթ կողմերից օրինակներ ենք վերցնում, որոնց զգալի մասը մեզ համար վնասակար է: Սակայն մեր նման ուրիշն էլ կա, որ օրինակներ է վերցնում, այն էլ շատ, սակայն դրանք (մեզ նման, ինչպես և մենք) ստեղծագործաբար զարգացնում, կիրառում և դրանց սկզբնաղբյուրներին էլ (ոչ մեզ նման) թամկ վաճառում է՝ ամեն տեսակի տեխնիկականից մինչև ամեն տեսակի գյուղատնտեսականը, էլ չասած քաղաքական, տնտեսական, ֆինանսական ու այլ գաղափարների, տեսությունների փոխանցման, տարածման մասին: Բայց իր հավատամքին ու այն վա՛ռ, կիրառական պահող խորհրդանիշներին, ծեսերին, ավանդույթներին հազարավոր տարիներ հավատարիմ է մնացել:

Ու եթե ինչ-որ պատմական շրջափուլում գերարտակարգ պայմանների կամ կենսական անհրաժեշտության բերումով շեղվել է, ապա առաջին իսկ առիթով մեծագույն նախանձախնդրությամբ ուղղվել, ինքնահաստատվել, վերականգնվել է ավելի մեծ զորությամբ ու արդյունատվությամբ: Եվ դա արել է մեծ մասամբ նույնիսկ անհայտնիք, պետականագուրկ ու ոչ բարյացական պայմաններում: Շատ անգամներ անիծվել է, ճնշվել, հարստահարվել, տառապել, նույնիսկ կոտորվել է, սակայն պահպանել է իր հոգևորն ու գաղափարականը, որ շատ դեպքերում իր ամբողջության համար կարող էին լինել ոչ լրիվ հասկանալի և հաճախ էլ՝ արհամարհելի ու դատապարտելի իր հանատարած, զանգվածային բնույթ կրող ծիսակատարումները, տոնակատարությունները և նույնիսկ հագնվածքը, սննդառությունը ու մասամբ նորին:

Նա իր արտաքինով ու արարքներով շատ հաճախ դուրեկան չէր տիրական շրջապատին, բայց լուր կրում էր այդ

անդուր լինելու հետևանքները՝ հավատարիմ մնալով իր հավատամքին ու ինքնությանը:

Մեր ժամանակներում էլ նրան իր երկրում, ինչպես և Եվրոպայի, Ամերիկայի ու այլ մայրցամաքների երկրներում կարելի է տեսնել սև գույնի տաք զգեստով, թաղիքե ծանր գլխարկով երթևեկելիս, նույնիսկ ամառային շոգ եղանակին: Կարելի է տեսնել նաև հատուկ պատրաստված սննդամբերքը որոշակի խանութներից միայն գնելու՝ ինչ-որ տեղ բարդ, դժվար և ինչ-որ չափով թանկ արժեցող սովորույթը:

- Արդյոք բոլո՞րն են հետևել ու այժմ էլ հարյուր տոկոսով պահո՞ւմ են այս ավանդույթները:

- Ոչ հարյուր տոկոսի կողմից, սակայն դրանք **պահպանվում են մեծամասնության և մի «կրիստիկական» զանգվածի (թվի) կողմից, որն ապահովում է մի կենսական անհրաժշտություն ամբո՞ղջ ազգի համար:**

Եվ որոշ ժամանակներ առաջ մեր ազգի՝ հայության կողմից էլ գոյություն ուներ որոշակի նպատակով այդպիսի դրություն ու այդպիսի վերաբերնունք, սակայն ձևով մոտավորապես ննան, իսկ բովանդակությամբ բոլորովին այլ՝ Քրիստոսակոչ՝ կատարյալ, ձգտող ու անհաղթահարելի: Ու եթե նորից ցուցաբերենք, կիրառենք այլ մեր վերաբերնունքը, նորից կամրանանք, կդիմանանք ամեն ինչում, կապահովվենք և կարժանանք նույնիսկ աննախադե՛ա բարձունքների՝ մարդկության մեջ ու Արարիչ Յոր առաջ:

Ի վերջո, երկաթը պողպատի վերածելու համար ընդամենը 0,3-1,2% ածխածին է ավելացվում: Ու երկաթը դաշնում է պողպատ՝ շատ ավելի կարևոր հատկություններով ու շատ ավելի մեծ կիրառությամբ: Իսկ պողպատն էլ հրակայուն, ժանգակայուն կամ այլ անհրաժեշտ հատկություններով օժտելու համար նույնական շատ փոքր չափով (բայց ճիշտ) բաղադրամասերի հավելումներ է պահանջվում...

Կյանքը, պատմությունը որոշակի ընկալմամբ ցույց են տալիս, որ վերոնշյալը վերաբերում է նաև մարդկանց ու ազգերին: Այլ ձևով ու այլ հարթության վրա լինում է նաև դրանց

պարագայում, երբ նրանք հասունանում են (արժանի դառնում), և նրանց անողներ են ուղարկվում (անողներով են շնորհվում):

Եվ դա մեզ՝ հայությանը, հայ ազգին էլ է վերաբերում... Ու այդ մասին ազգի հոգևոր զանգերը վաղուց են դողանջում. միշտ կոչում, ազդարարում են և հիշեցնում: Բայց ժամանակն անցնում է, և ի՞նչ պետք է անենք, որ մեր հոգու լսողությունը բացվի, ինչպես և տեսողությունը: Այլապես ինչպես հաղորդակցվել մեր Տիրոջ հետ: Իսկ առանց այդ հաղորդակցության ինչպես ապրել, գոյատևել և բարձրանալ...

15 - 09 - 2009թ.

## **ԴԻՑՈՒԹ, ՄԻ ՊԱՀ**

### **(Վերաբերում է ավելի շատ մեր անհավատներին)**

Դիցուք, մի պահ (մեղա՝, մեղա՝) պատկերացնենք ու ընդունենք, որ Աստված կա: Եվ կա՝ այնպիսին, ինչպես Աստվածաշունչ մատյանում՝ Նոր ու Յին Կտակարաններում է, ու ըստ այնն հավատացել են ու այդ հավատքով ապրել, գործել, պայքարել, ու երբ հարկ է եղել, այդ հավատքով ու այդ հավատքի համար նահատակվել, մարտիրոսացել են մեր միլիոնավոր ազգակիցները, որի մասին խոսում, փաստում է մեր ու համաշխարհային պատմագիտությունը, շատ ուրիշ աղբյուրներ, բայց ամենահիմնականը՝ խոսում և փաստում է մեր հավատքը, որով և՝ մինչև այսօր մեր գոյություն ունենալը և դեռ ապագայում ևս գոյություն ունենալու մեր հույսը:

Ուրեմն, եթե թեկուց մի՝ պահ, դիցուք (մեղա՝, հազա՞ր մեղա), ընդունեցինք, որ Աստված կա՝ Արարիչ հզոր, արդար, բարի ու ամենակալ և ամենահաս, ապա ևս իր արդարությամբ ու ամենազորությամբ ի՞նչ պետք է անի մեզ (ինչպես վարվի մեզ հետ)՝ տեսնելով մեր արածները, որ ըստ իր պատգամների՝ մենք չպետք է անեինք, և մեր չարածները, որ ըստ իր պատգամների՝ պետք է անպայման անեինք:

Մեր նախնիները հոգու Աստվածաշնորհ տեսողությամբ, հանձարով, կարողությամբ Աստվածորդու տաճարներ կառուցեցին, որտեղ աղորում, հոգով հաղորդակցվում էին Նրա հետ և կյանք ունենում, իսկ մենք մեզ պարտադրված հավատամերժության 70 տարիների մեջ նասի ընթացքում դրանք անարգեցինք, պղծեցինք և կամ կործանեցինք (թեև դրանք էապես անբիջ, անկործան են): Եվ դա երբեմն արեցինք ավելի մեծ ջանասիրությամբ ու հրճվանքով, քան օտար նվաճողն էր արել: Մինչև իսկ փորձեցին ծաղրուժանակի ենթարկել, բամբասել Աստուծոն Միածին Որդուն՝ մեր ու համայն մարդկության Փրկչին, հալածեցին, տանջեցին ու սպանեցին Նրա հոգևոր ու աշխարհիկ հավատարիմներին, հետևողդներին ու սպասավորներին: Նրանցից ոմանք էլ սարսափազդու սպառնալիքների ազդեցության տակ այլասերվեցին ու ի չարս գործածվեցին:

Այդ և դեռ նման բազմաթիվ հանցանքների համար Աստված ի՞նչ կանի մեր ազգին, մեզ: Ի՞նչ անի, որ արդար լինի:

Սեզանից ամեն մեկն ի՞նչ կաներ, եթե այդ չար, ահավոր, զարդելի գործերի մի փոքր մասն իսկ մեր անձերի դեմ արվեին, և մենք կարողություն ունենայինք հատուցելու:

Այս մտածումներով, այս ճշմարտությունն ի մտի ունենալով և դրա նշանակությունն ու հետևանքները հասկանալով՝ մեծ հավանականությամբ կհասկանանք նաև մեզ: Ո՞վ ենք մենք: Ի՞նչ ճանապարհ ենք անցել: Ի՞նչ վիճակում ենք գտնվում այժմ: Ո՞ւր է տանում մեզ այս վիճակը: Եվ հավատքով ի՞նչ պիտի անենք այսուհետ, որպեսզի դառնանք մեր նախնիների, մեր մեծերի, սրբերի, նահատակների արժանի ժառանգորդները և իրական կյանքն ունենանք ազգովին՝ մեր ապահով, արժանապատիվ և կենսունակ Հայաստան հայրենիքում՝ ի հաճություն մեր նախնիների ու ամենաէականը՝ մեր Արարիչ Յոր՝ Աստուծոն:

Դայ ազգային ու պետական ռազմավարական (և դեռ դրանցից էլ հեռահար ու ավելի նշանակալից) նապատակը՝ ներքին ու արտաքին քաղաքականությունը և դրանց իրագործման

համահայկական ջանքերը, մի՞թե այդպիսի *կյանքի* ստեղծման համար չպետք է լինեն:

15 - 10 - 2006թ., ժամը 09:30

## ԿԱՅԱՑՈՒՄ

Յայության ազգային (և դրան առնչվող ամեն ինչի) կայացման գրավականը Աստուծոն հավատքն է՝ Ավետարանով և Խաչով:

Յայությունը չի կարող կայանալ և կայացնել համախումբ, կազմակերպված, ժողովրդավար, զարգացած, զորեղ, մրցունակ, պաշտպանունակ, անվտանգ, բարգավաճ և համայն հայությամբ բնակեցված հայունիք ու պետություն, եթե չփոխի իր բնածին հոգեկանությունից շեղված այսօրյա իր աշխարհընբռնումը և իր արժանավայել գոյության համար չկառուցի իր կյանքը որպես հավատքին լիովին հավատարիմ ազգ: Յայությունն այդպիսի համախմբում, ապահովություն և վերելք կարող է ունենալ՝ ճանաչելով, ընդունելով ու ապրելով ըստ իր Յայ Ազգային Գաղափարախոսության (ՅԱԳ)<sup>8</sup>, որը բխում է և հիմնված է Աստուծոն հավատքի վրա՝ Յիսուս Քրիստոսի Ավետարանով և Խաչով:

Զգույշ լինենք, ըստ Երևույթին, ասվածը, դժբախտաբար, անսովոր, տարօրինակ ու անընդունելի կամ անմարսելի լինի հայության այժմյան զգալի մասի «սեկուլյար ստամոքսի» համար, չշտապենք այն պիտակել և մեր ականջների կողքից

<sup>8</sup>Տե՛ս ՅԱՅՔ հաստատության կողմից հրատարակված «Յայ Ազգային Գաղափարախոսություն (ՅԱԳ), հստակեցման և ճանաչման քայլեր» գրքույկը, Երևան, նոյեմբեր, 1995թ., վերահրատարակված՝ հոկտեմբեր, 1997թ., ինչպես նաև «Յայ ազգային գաղափարախոսություն. հայության կենսունակ հարատևման գրավական» գիրքը, Երևան, 2009թ.:

անցկացնել որպես «արմատական ազգայնական», «տերտերական» կամ «հնառող պառավական» և այլն:

**Զգույշ լինենք, համբերո՞ղ և ուշադի՞ր լինենք, որպեսզի զգանք և հասկանանք, որ մեր սուրբ հայրերի հավատքի իմաստությամբ, գիտությամբ և հույսով ու սիրով միայն կունենանք գիտակցություն, ցանկություն, կամք և կորով՝ փնտրելու ու նաև գտնելու մեզ անհրաժեշտ հմտությունն ու գորությունը՝ մեր թե՛ անձի, թե՛ ազգի, թե՛ երկրի և թե՛ պետության փրկության և վերելքի ուղին ու միջոցը:**

Եվ այդ բոլորը մեր հավատքով պարունակված են մեր ազգի տոհմիկ գաղափարի՝ Յայ Ազգային Գաղափարախոսության մեջ, որն իմաստավորում է հայկականությունը՝ հայ ազգային կյանքը, և նպատակառությունը է դրա ընթացքն այժմյան աշխարհի՝ մեծ մասամբ (որը և տիրող է) հավատագործել, գաղափարազորել, բարոյագործել՝ նյութապաշտական, կոռումացված իրականության մեջ, որից բխում են առկա բոլոր ու ամեն տեսակի քայլայիչ մոլությունները, վարակները՝ առաջացնելով մեր մարդկային-ազգային հոգեբարոյական եւթյան գոյության իմունազրկում, և հոգին ախտահարվելով՝ ծառայեցվում է մարմնին, նյութին: Այսինքն՝ ծառայեցվում է մշտականը ժամանակավորին, կենսունակը՝ ամլությանը, և կյանքը հպատակեցվում է մահվանը՝ հավիտյանս:

Յայ Ազգային Գաղափարախոսության հիրավի ճանաչման, ընդունան և կյանքում ապրումի վերածելու միջոցով այդ կորստաբեր մթնոլորտը մեր կյանքից մենք կարող ենք չեզոքացնել և դրանից պաշտպանվել՝ վերակերտելով մեր Յայկյան բնածին տոհմիկ ինքնությունը, որով և արժանի ու ի գորուդառնալ անձնական, ազգային և պետական կյանքի բարձրագույն վերելքի՝ իր ներկայի անցողիկ ու հավերժ ապագայի անանց բոլոր երանություններով:

24 - 08 - 2011թ.

## ԱՎԵՏԱՐԱՆԻ ԽՈՍՔԸ՝ ԿՈՂՄՆՈՐՇՈՂ ՇՆՈՐՀ ԵՎ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ

**Նոր Կտակարանում գրված է. «Չատ անգամ չար ոգիմ կրակի և ջրի մեջ է նետում նրան, որ կործանի. արդ, եթե մի կերպ կարող ես, օգնի՛ր մեզ, Տե՛ր՝ զքալով մեզ»:**

**Եվ Հիսուս նրան ասաց. «Ասացիր՝ եթե կարող ես. ամեն ինչ հնարավոր է նրա համար, ով հավատում է»: Երեխայի հայրը իսկույն աղաղակեց ու ասաց. «Հավատում եմ, օգնի՛ր իմ անհավատությանը» (Սարկու 9.21-23):**

Այն, որ «ամեն ինչ հնարավոր է նրա համար, ով հավատում է», ասվել է աշխարհին, բոլոր նարդկանց. ավելի քան 1700 տարի առաջ ասվել է նաև մեր ամբողջական ազգին ու մեր պետությանը, և մենք մեր հայրերի, մեր մեծերի, մեր սրբերի առաջնորդությամբ, ուսուցմանը ու օրինակով հավատացինք ու սիրեցինք մեր Տիրոջը և Նրա սիրով ապրեցինք ու դեռ ապրում ենք՝ հակառակ տարբեր ժամանակների և հատկապես մեր ժամանակի բազում արգելքների, վտանգների ու նաև մեր ունեցած մոլությունների ու մոլորությունների, ուրացումների ու այլ շեղումների:

**Ավետարանում ասվում է. «Սերը Երկայնամիտ է... Ամեն բանի դիմանում է, ամեն բանի հավատում է, ամեն բանի համար հույս ունի, ամեն բանի համբերում է: Սերը Երբեք չի վերջանա...» (Ա Կորնթացիս 13.4-8):**

Սակայն այժմ հավատո՞ւմ ենք այնպես, որ ամեն բանի դիմանանք, ու ամեն ինչ հնարավոր լինի մեզ համար, եթք հրամայական կարիքներ ունենք՝ ազգի, հայրենիք Հայաստանի ու պետության ամեն տեսակի անվտանգության, պաշտպանության, ապահովության համար, և մեծ կարիք ունենք նաև

մեր ժողովրդի միախոհության, միասնության, ազգահավաքի և կամ իսկական համագործակցության համար: Կամ էլ եթե այնքան ենք շեղվել, փոխվել՝ աղավաղվել, որ իրականում հավատագրկվել ենք ու չենք կարողանում հավատալ, ապա գոնեք թերահավատորեն գոչո՞ւմ, աղաղակո՞ւմ ենք մեր Տիրոջն ու Փրկչին. «*Օգնի՛ր իմ անհավատությանը»:*

*Մրանք ավելորդ հարցադրումներ չեն,* ընդհակառակը՝ ամենակենսական հարցերն են յուրաքանչյուրիս, ինչպես նաև մեր ազգի ու մանավանդ դեկավարության համար, որ մեր նախնիները, մեծերը, սրբերը նիշտ հարցադրել են ու դրանց դրական պատասխանները՝ որպես անանց ժառանգություն, փոխանցել են մեզ:

*Եվ դրանք անլոելի կրչո՞ւմ են, որ մենք էլ այդ ժառանգությունը պաշտպանենք, պահպանենք և փոխանցենք մեր զավակներին, թռոներին ու սերունդներին:* Եվ դա անենք այնպես, որ նրանք էլ նախ՝ ուզենան, պարտականություն, պատասխանատվություն զգան և երկրորդ՝ կարողանան, ի վիճակի՝ լինեն իրենց սերունդներին փոխանցել այդ ժառանգության անանց ինաստն ու արտահայտությունը՝ որպես ժամանակակից առողջ, կենսունակ ազգ, հայրենիք, պետություն, պետականություն ու ազգային ինքնություն՝ Աստվածաշնորհ հավատքով և Աստվածորդու օգնությամբ, որով, ինչպես ասված է՝ «*ամեն ինչ հնարավոր է»:*

Երկուշաբթի, 04 - 06 - 2012թ., ժամը 09:45

## ՀԱՍԿԱՆԱԿՐՈՒԹԻՒՄ (Խոսքը մե՛զ է վերաբերում)

Առաջարկում ենք, խնդրում ենք, աղաչում ենք հասկանալ, լավ հասկանալ, հոգով ու սրտով հասկանալ, որ մեր ազգին (ինչպես և յուրաքանչյուր ազգի ու մարդկությանը) օդի պես անհրաժեշտ են **բարոյական արժեքներ՝** հստակ և հասկանալի բոլորի կողմից (բոլոր հայ մնացածների և կամ հայորեն ապրել ցանկացողների կողմից):

Գուցե ասող լինի, որ դա հասկանալի է, բոլորն էլ գիտեն, և նորություն չեն:

Ծան լավ կլինի, որ այդպես լինի, սակայն զգույշ, շատ զգույշ լինենք, որ խևապես այդպես լինի, իսկ դրա համար, ըստ երևույթին, նախևառաջ հարկ կլինի ճշտել, թե որ, ինչպիսի բարոյական արժեքների մասին է խոսքը, որոնք խևական են, իրական են, հետևապես և մարդկայնորեն կենսատու՛, միավորո՛ղ ու մեր ազգն առավել հաստատող և հարատևորեն բարձրացնող:

Դանաձայն Դայ Ազգային Գաղափարախոսության՝ հայոց բարոյական արժեքները ազգային և համամարդկային արժեքներ են, որոնք հակադիր են ոչ հեռու անցյալի ու այսօրվա ազգուրացներին, ազգի պարտազանցներին, դասալիքներին և այն նորաթուխ չարչիներին, որոնց ունեցվածքը ոչ թե իրենց մտքի տաղանդով, ազգօգուտ, հանրօգուտ աշխատանքով ու արդյունատվությամբ է, այլ (լավագույն դեպքում կիսադաշտապահիր ու կիսահանցագործ համաձայնություններով)` ազգի, երկրի և պետության հարստահարմանը:

Մեր ազգի բարոյական արժեքները քրիստոնեական արժեքներն են, որոնք էապես առկա էին մեր ազգի մեջ նրա Աստվածակերտ սկզբնավորումից ի վեր. իսկ 301 թվականին

դրանց սրբագործումն արտահայտեց Ավարայրի (բացի միասնությունից, զորությունից, քաջությունից) հոգեկանությունը, սրբությունը, որը միշտ գերակշռում էր ազգի մեջ և տարբեր աստիճաններով շարունակվեց մինչև Սարդարապատ ու նաև հասավ, տարածվեց Արցախի գոյամարտում:

Սակայն արդար լինելու և դրա արդյունքին էլ արժանանալու համար հարկ է ճշտորեն վերհիշել, վերընդունել և բժախնդրությանք կիրառել հայ ազգի քրիստոնեական արժեքները: Արժեքներ, որոնք իրենց էությամբ ծնունդ են առել հայ ազգի Աստվածակամ կերտումից ի վեր, սրբագործվել են 301 թվականին ու իրենց երկվորյակ հարազատությամբ Յայ Ազգային Գաղափարախոսությանը, միասին բխում են և հիմնված են Աստուծո հավատքի վրա Յիսուս Քրիստոսի Ավետարանով և Խաչով:

Եվ ամբողջ աշխարհում քրիստոնեական բարոյական արժեքների նույնիսկ ներկայիս համարյա համատարած արժեգրկման (ինֆլյացիայի) պայմաններում իսկ, Աստուծո հավատքին հավատարմությամբ՝ մեր հայկականության վերականգնմանը և մեր հայրերի՝ նախնիների՝ մեզ ժառանգություն թողած քրիստոնեական բարոյական արժեքների նորո՞գ գիտակցմամբ, ճանաչմանք ու կիրառմամբ՝ մենք այդ իմաստով ազգովին և պետականորեն կվերածնվենք, կվերակենդանանանք ու կարժանանանք Աստվածատուր բարիքներին, որոնցով են բոլոր-բոլոր հարցերի լուծումը, խնդիրների կատարումը, և որոնցում է իսկական կյանքը՝ այժմ ու հավերժ:

Ուղբար, 15 - 08 - 2008թ., ժամը 23:55

## Ո՞Ր ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ, ԻՆՉԻ՞ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

*Ո՞վ Աստված, մաքուր սիրու առեղծիր  
մեջ և իմ մերսում շիտակ հոգի՝  
նորոգիր:*

*(Սաղմոս 51.10):*

Խոսվում է հայ ազգի մեջ հոգևոր վերածննդի անհրաժեշտության մասին: Դժբախտաբար, քիչ է, խոսվում, բայց, այնուամենայնիվ, երբեմն խոսվում, նշվում է այդ մասին: Դա լա՞վ է: Այո՛, իհարկե, լավ է, բայց քիչ է, լրի՛կ չէ, թերի է. մենք պետք է շատ ավելի լուրջ և էականորեն, գործնականորեն խոսենք այդ հարցի շուրջ և մանավանդ հստակեցնենք, թե հոգևոր վերածնունդ ասելով՝ արոյոք հասկանո՞ւմ ենք այն որպես հավատքի՝ վերածնունդ, այլ ոչ թե որպես ծեսերի, ծիսակատարությունների ու տոնակատարությունների վերականգնում կամ ավելացում:

Եկ բացի դրանից, պետք է հստակ ասենք, հաստատագրենք, հայտարարենք, որ մեզ, ինչպես շնչելու օդ՝ պետք է նաև քրիստոնեական հավատքի, քրիստոնեական գաղափարի, քրիստոնեական բարոյականության, քրիստոնեական կենցաղի ու այդպիսով՝ քրիստոնեական կյանքի վերածնունդը: Վերածնունդ, որը մեզ կդարձնի ըստ այդմ նորոգված ազգ և մարդ, հայ մարդ՝ նորոգված սրտով, նորոգված հոգով ու սրբացած մտածումներով, արարքներով, գործերով: Որով և կառաջանա իսկական քրիստոնեական կյանք՝ մեր անձերի, մեր ընտանիքների՝ երեխաների, թոռների և մեր հայ ազգի, հայրենիք Հայաստանի ու պետության համար, որը կլինի նաև ի օրինակ և հօգուտ համայն մարդկության, ու ամենաէականը՝ ի փառս մեր Արարիչ Յոր՝ ԱՍՏՈՒԾՈ:

Պետք է նաև պարզաբանվի, հստակեցվի՝ ասվի, թե մեր այդ վերածննդի համար ի՞նչ պետք է անենք. ինչպե՞ս պետք է վերածնվենք անձնապես ու մեր ընտանիքներով, ազգովին և մեր երկրով ու պետությամբ:

Սա, լինելով շատ դժվար և նույնիսկ անհնարին թվացող, միաժամանակ շատ դյուրիհն է, որովհետև, եթե **անկեղծ հավատանք ու այդպիսի՝ հավատքով զգտենք դրան**, և դա անենք՝ սիրելով մեր Արարիչ Հորը՝ Աստծուն, մեր ամբողջ հոգով, սրտով, զորությամբ ու էությամբ սիրելով, ապա այդ դժվարը շատ կդյուրանա, ու անհնարինը միանգամայն հնարավոր կդառնա, քանի որ Աստված բարի է, մեզ սիրում է, և Նրա համար անհնարին բան չկա:

Աստված մեր ազգին մի անգամ, այն էլ մարդկության մեջ առաջնությանք շնորի արեց՝ մեր նախնյաց հոգու աչքերը բացելով, որ տեսնեն. և տեսան Փրկիչ Աստվածորդուն, իրենց պետությամբ հանդերձ:

Դավատանք, որ այժմ Նա նորից կհեղի մեզ վրա իր շնորհը, և մենք նորից կտեսնենք իր Որդու՝ Դիստուսի Աստվածության փառքը, որը մեզ ճանապարհ ցույց կտա և մղում կհաղորդի՝ անձնական, ընտանեկան, ազգային ու պետական հոգևոր վերածննդի համար, մեր քրիստոնեական հավատքի և քրիստոնեական կյանքի, վերածննդի համար և մեր նախնիների, մեր մեծերի, մեր սրբերի նման ծառայելու համար իրեն՝ կատարելով իր պատգամները, իր կամքն ու գործերը:

Սա մեր մեծ ու սուրբ նախնիների ժառանգական անլռելի պատգամն է մեզ՝ ժամանակակիցներիս, որը պետք է լինի նաև հիմքը մեր ազգային ու պետական ներկայիս ծրագրերի, որոնց կատարմանը հայ կյանքը դարձյալ կստանա իր երբեմնի գեղեցկությունն ու ամենայն ապահովությամբ կվերածաղկի, կլիանա աշխարհի ամենակենսատու պտղաբերությամբ՝ ի վերելք ու երջանկություն մեր ազգի, ի օրինակ և ի բարօրություն նաև մարդկության, ու ամենաէականը՝ ի փառա Սուրբ Երրորդության՝ ԱՍՏՈՒԾՈՒ:

Ծաբաթ, 13 - 04 - 2013թ., ժամը 24:00

## ԷԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԸՄԲՈՆՈՒՄ

Մարդու, ազգի և մարդկության եական հասկացողությամբ, էապես ապրելու համար հարկ է **հասկանալ**, ըմբռնել Քիուս Քրիստոսի կյանքի, Նրա կատարածների ու տառապանքների **հոգևոր** (ու նաև գաղափարական և բարոյական) **իմաստը**:

Սակայն ինչպես կարելի է այդ հասկանալ առանց հավատքի, եթե հավատքը չկա: Եվ ինչպես կարելի է հավատալ, հավատք ունենալ, եթե այն Աստված չշնորհի: Ու ինչպես կարելի է Նրա այդ շնորհին արժանանալ, եթե սիրտը չմաքրվի, մաքուր չլինի:

Եվ այս երեք «ինչպեսները» և դեռ սրանց նմանները ազատվում են հարցադրումից՝ դադարում են հարց լինելուց և դառնում են դրական ու կիրառելի, կատարելի՝ **Աստուծոն Սիրով**:

**Ուրեմն՝ հասկանալ հոգևոր իմաստը՝ Աստուծոն Սիրով:**

Բոլոր «ինչուները» և «ինչպեսները» կենտրոնանում ու իրենց լրումին են հասնում **հոգով, հոգևորով ու Աստուծոն սիրով**:

Ուրեմն: Ուրեմն՝ «Չոգով ընթացեք և մարմնի ցանկությունը մի՛ կատարեք, քանի որ մարմննը հոգու հակառակն է ցանկանում, իսկ հոգին՝ մարմնի հակառակը», - ասված է Ավետարանում: Եվ մարդը՝ հայը, հոգով պետք է աղոթի, խնդրի Աստուծոն Սիրո համար: Սակայն Աստուծոն Սիրո հրաշքն արդեն իսկ է, կա, եթե Աստուծոն Սիրո համար հայն աղոթում է, նա արդեն իսկ Աստուծոն Սերն ունի՝ Աստուծոն Սերն իր մեջ գործում է, եթե ու եթե հայը սրտանց աղոթում է:

Ուրեմն՝ հայ, եթե ու եթե աղոթում ես՝ Աստվածորդու ավետարանական պատգամի համաձայն (սենյակիդ դուռը փակած,

այսինքն՝ մաքուր սրտով, անկեղծ ու առանց ցուցադրության և ծիսակատարության), նշանակում է Աստված քեզ ընտրել է, դու Աստուծո ընտրյալ ես, այսինքն՝ Աստուծո Սերը քեզ հասել է, քո մեջ կա՛, և դու Աստուծո որդի ես:

Իսկ որդին հասկանում է Յիսուս Քրիստոսի՝ Աստվածորդու Երկրային կյանքի կատարածների և տառապանքների հոգևոր իմաստը, որովհետև արդեն որդի է, ծառա չէ (Ժառան չգիտի Տիրոց բնությունը, հետևապես և կամքը, նպատակն ու գործերը, իսկ որդին գիտի): «... Այլևս ձեզ ծառաներ չեմ կոչում, որովհետև ծառան չգիտե, թե տերն ինչ է անում, այլ ձեզ բարեկամներ կոչեցի, որովհետև այն բոլորը, ինչ իմ Յորից լսեցի, հայտնեցի ձեզ» (Հովհաննես 15.15):

Աստուծո որդիները ժառանգներ և ծառա-տերեր են աշխարհի:

Եվ Աստուծո հայ որդիները ժառանգներ և ծառաներ-տերեր են Յայաստանի: Ո՞ր իշխանության, ո՞ր հաստատումով: Դա Տիրոց կամքով է՝ ըստ հայկականության արժանիքի՝ Երկնային իշխանության «կաղաստրի» հաստատումով: Իսկ Երկնային Արքայության «կաղաստրում» երե Երկիր Յայաստանը հայինն է, ո՞վ կարող է դեմ կանգնել հային՝ ունենալու, ծաղկեցնելու և վայելելու իր հայրենի Աստվածառուր ժառանգություն հայրենիք Յայաստանը: Դեմ կարող է կանգնել միայն ու միայն ինքը՝ հայը՝ Աստվածանորի հավատքին անհավատարմությամբ՝ մեղանչելով Արարիչ Յոր դեմ:

Բայց դա չի լինի. դրա ժամանակներն արդեն իսկ անցնում են, որովհետև Աստուծո սիրո լույսն է ծագում հայության ու Յայաստանի վրա:

Յավատանք այդ լույսին, հավատարիմ լինենք այդ հավատքին և մնանք այդ լույսի մեջ՝ միշտ ու ամենուր: Եվ մեր հավատքից բխող ու դրա վրա իհմնված Յայ Ազգային Գաղափարախոսությունն ասում է, թե սա է մեր ազգային-պետական առաջնային ու իհմնական «քաղաքականությունը», որը նաև հօգուտ մարդկության է: Կատարենք այն՝ միշտ, ամենուր,

ամեն ինչում Տիրոջ շնորհով ու օգնությամբ: Եվ ի փառս Նրա բարության, արդարության ու զորության:

Ծաբաթ, 30 - 04 - 2016թ., ժամը 08:00

## **ԷԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԴՐՎԱ՞Ծ Է ԱԶԳԱՅԻՆ ՍԵՂԱՆԻՆ**

Յարցն այն է, թե ով, ինչու և ինչպես է ղեկավարում իայ ազգը՝ հայությունը, նրա հայրենիք Յայաստանը և պետությունը:

Եվ ի՞նչ է արդյունքը, հետևանքն այդ ղեկավարման ու ըստ այնմ՝ ընթացքի, որով քշված գնում ենք...

Այդ անբողջի՝ հետևանքի, ընթացքի մեջ հոգի կա՞: Աստվածային, Սուրբ Հոգի կա՞: Ի՞նչ աստիճանի կա. ըստ երևոյթին, այդ աստիճանը հարածունորեն նվազում է:

Ու եթե այն նվազում է, ապա ավելանում է նրա հակառակը՝ չա՛ր ոգին՝ նյութո՞վ, նյութականությամբ, որ տիրում, հպատակեցնում ու իրեն պաշտել է տալիս գերված հոգիներին, մտքերին ու սրտերին:

Եվ այս ընթացքը պետք է նախ կանգնեցվի, կա՞նգ առնի և հետո իսպա՛ռ դուրս մղվի մեր իայ կյանքից, մեր ամեն ինչից հեռացվի, որպեսզի մեր հոգիները, մտքերը և սրտերն ազատագրվեն, մաքրվեն, նույնիսկ սրբացվեն, որով և այդպիսին լինեն մեր հոգևոր ու աշխարհիկ կյանքը, կյանքի ապրունք, մեր երկիրն ու պետությունը:

- Ո՞վ կարող է անել այդ: Մե՞ր բարեկա՞մը կամ ուրիշ մե՞նք:

- Ո՞չ, ո՞չ, ո՞չ:

- Յապա՞ ո՞վ:

- Աստված: Որ արդեն իսկ արել է իր Միածին Որդու միջոցով:

- Ուրեմն՝ ի՞նչն է հարցը, ինդիրը:

- Վերածնվելը:
- Ինչպե՞ս:
- Մեր ներսի նյութական մարդու՝ իին ես-ի մահով և մեր մեջ հոգևոր մարդու՝ նոր ես-ի ծնունդով՝ Աստվածորդու հարության հետ («Ամեն ժամ Յիսուսի մահը մեր մարմնում կրում ենք, որպեսզի Յիսուսի կյանքն էլ մեր մարմնում հայտնվի» (ԲԿորնթացի 4.10):

«Ով որ իմ խոսքը լսում է և կատարում է, նա՛ է ինձ սիրողը, և ինձ սիրողն իմ Յորից կսիրվի, և ես կսիրեմ նրան և ինձ կհայտնեմ նրան» (Հովհաննես 14.21):

«... Եթե մեկը ինձ ծառայի, նրան կպատվի իմ Յայրը» (Հովհաննես 12.26):

Եվ հայ իրականության մեջ տեղի կունենա ամենակարևորը, ամենակենսականը, նաև ամենասուրբը՝ հայի հոգևոր վերածնունդը՝ Աստուծու որդի դառնալը՝ սրբաշնորհ հատկությամբ, երկնային իմաստնությամբ, Յիսուսի Հոգով:

Այնժամ հայը կսիրի իր Արարիչ Յորը՝ Աստծուն՝ իր ամբողջ սրտով, ամբողջ հոգով, մտքով ու էությամբ: Եվ դրանով կսիրի նաև իր մերձավորին՝ իր անձի պես:

Եվ Աստվածորդին է մեզ տեղեկացրել, որ այդ սերը պարփակում, պարունակում է ամեն ինչ, որ սուրբ է, կատարյալ և կյանք է իրական՝ այժմ ու հավերժ:

Իսկ թե ո՞վ է մեր մերձավորը, մեր Տերն այդ էլ է մեզ տեղեկացրել. կարդանք Նրա ավետարանած խոսքը, հիշենք և կատարենք, այդպես ապրենք մենք, մեր զավակները և նրանց զավակները՝ աշխարհի մեր բոլոր քույր-եղբայրներով միասին՝ փառավորելով միշտ, ամենուր ու ամեն ինչում Սուրբ Երրորդությանը՝ **Աստծուն:**

Եվ մեր ազգային սեղանին մշտապես դրվելիք այս և նման հարցերի պատասխանների հիմնան վրա պետք է գիտակցվի ու ճանաչվի, թե ո՞վ, ինչո՞ւ, ինչպե՞ս և ի՞նչ հետևանքներով, արդյունքներով է դեկավարում, կառավարում հայ ազգը, նրա Յայրենիք Յայաստանն ու հայրենի պետությունը:

19 - 12 - 2016թ., ժամը 07:10, Մոսկվա

## ՄԵՐ ԱՌ-ՁԵՎ ԴՐՎԱԾ ԶԵՆՔ ՏԵՍՆՈՒՄ

Հայոց ու առավել ևս հայկականության միտքը (որ գոյանում, կյանքի ապրում դաշնում և պտղաբերում է Աստվածանաշմամբ ու հավատքով Նրա պատգամների կատարմամբ) արդյոք այժմ գործո՞ւմ է, իսկ արթո՞ւմ է, որ գործի:

Միտքը կա՛, բայց մեջը կյանք կա՞՝, որ արթուն լինի ու գործի: Եվ գործո՞ւմ է, որ պտղաբերի կամ՝ ոչ: Այդ մասին հայությունը և նանավանդ հայկականությունը պետք է լավ՝ մտածեն, բայց ընդհանրապես մտածողներ կա՞ն, որ այդպես մտածեն կամ՝ ոչ:

Մտածելու բան է նաև այն, թե արդյո՞ք հայկական ու հայկականության մտքի արգասիք կարելի է համարել «Մենք նավք չունենք, բայց Սփյուռք ունենք», «Մենք..., բայց «Ձերմուկ» ունենք» կամ այլ նման դատողությունները:

Խոսվում է նաև դրսից՝ այստեղից-այնտեղից, սրանից-նրանից օգնություն ստանալու կարևորության, անհրաժեշտության (ու նաև դրա «երանության») մասին, ինչո՞ւ: Ըստ երևույթին՝ այն պատճառով, որ շատ բան մեզ ազգովին չի բավարարում, պակաս է, մեծ կարիքների մեջ ենք. սակայն փոխանակ պակասների լրացման հնարավորությունը մեր մեջ փնտրենք կամ նորոգ ստեղծելու մասին մտածենք ու ազգովին, բարձրագույն կազմակերպվածությամբ, մեծագույն հմտությամբ և բացարձակ ազնվությամբ (ու կոռումպագերծությամբ) դրան նվիրվենք, լծվենք, ջանանք, կատարենք, կարծես ընդարձացած՝ երազում ենք ինչ-որ տեղից, ինչ-որ մեկից ստանալ:

Այս մտորումներից հետո նաև միտք առաջացավ խոսքը կենտրոնացնել մեր մարդկային-ազգային ժառանգության գիտակցումի, արժևորումի, օգտագործման և ըստ այդմ ապրելու, գործելու ու ստեղծելու խնդրի վրա:

Արդյոք գիտակցո՞ւմ ենք մեր նախնիների, մեր մեծերի, մեր սրբերի թողած հոգևոր, մտավոր, գաղափարական և բարոյական ժառանգության նշանակությունը, ըստ հարկի, պատշաճորեն արժենորո՞ւմ ենք այն. և նպատակադրվա՞ծ, նպատակաւողվա՞ծ ու կազմակերպվա՞ծ, պատրա՞ստ ենք որպես մեր գոյության նախապայման այդ ժառանգությունը կյանքի կոչելու, այն էլ անհապան կոչելու և շեշտակի՝ տեմպերով կիրառելու՝ **նախքան բանը բանից անցնելը**: Որովհետև, երբ նախապայմանը կորչի, դրանից հետո ոչ անող, ոչ էլ անելիք կլինի: Եվ մեր ժառանգության օգտագործման՝ մեր էական բացերի լրացման և կենսական ու այլ տեսակի կարիքների բավարարման մասին խոսելու տեղ իսկ չի լինի, խոսելն իսկ ավելորդ կլինի:

Իսկ ինչո՞ւ ենք թերանում պատմական նշանակությամբ իսկ անհրաժեշտ, օգտակար, սակայն և համեմատաբար շատ դյուրին այս բանն անել: Ինչո՞ւ: Մի՞թե դրա համար, որ այն, ինչով մեր ազգը հարուստ էր, բավական ժամանակ է, որ աղքատացել է. նվազում է հոգեկանությունը, հետևապես և հոգեկան զգացողությունն ու ընկալումը: Պակաս, որը բերում է հոգեկանության ընդարձացման, անզգայացման: Ու եթե դա մեր «գլխից» է սկսվում (ժողովրդական ասացվածքի պես, թե ձուկը գլխից է...) և, ըստ այնմ, մեր կրթությամբ, դաստիարակությամբ, մշակությով, գաղափարով ու նաև աշխարհիկ և հոգևոր դեկապարությամբ, մտավորականությամբ ու նրանց անձնական օրինակով է լինում, ապա նշանակում է, որ ընթացող այդ ընդարձացումն ազգային ծառի բնից տարածվել է մինչև ճյուղեր՝ հասարակության տարբեր խավերը, որով դրանց պտուղն էլ լինում է թե՛ սակավ և թե՛ որդնոտած, անորակ՝ ազգային-հասարակական ու պետական, ներկայիս ու հեռագնա փուչ արդյունքով...

Մինչեռ մեր ազգային ժառանգությունը մեծ է, հզոր է ու մանավանդ շատ կենսատու... Միայն թե պետք է ունենալ դրա օգտագործման «բանալին»՝ արժանին արժենորելը և արժանին արժանի դառնալը: Ինչո՞վ, ինչպես արժանանալ. մտածենք

այդ մասին... Ու հավատքով ահազանգենք դրա բացակայության մասին նախնառաջ մեր հոգիներում և մեր ազգային խղճի ու գիտակցության մեջ: Եվ աղոթքով ներում ու օգնություն խնդրենք մեր Արարիչ Երկնային Յորից:

15 - 06 - 2011թ.

## **ՄԵԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆՔ՝ ՇԱՏ ԿԱՐՃ ԱՆԴՐԱԾՄԱՐՁ**

21-րդ դարասկզբին ի՞նչ վիճակում են Յայաստանյայց եկեղեցին, մեր ազգը, պետությունն ու հասարակությունը և նրանց գոյությունն ու ապրումը: Սնվո՞ւմ են մեր ազգի հավատանքից ու ըստ այնմ հոգևոր ժառանգությունից, թե՞ գուցե ձևով և մակերեսորեն սնվում են, սակայն բովանդակությամբ ու իրականում՝ ոչ: Աստված մի արասցե, եթե վիճակն այդպիսին լինի՝ իր հետևանքներով հանդերձ:

Եվ դրա համար էլ այդ իրավիճակի ճշգրիտ ճանաչումն էապես կարևոր է և հույժ անհրաժեշտ, որպեսզի դրա պատասխանատուներն ի վիճակի լինեն, կարողանան վիճակը դարձնել բնականոն՝ հարազատ մեր հավատանքին, որի հետևանքը կլինի անկումի ծիշտ հակառակը՝ ամեն ինչում վերելք:

Եվ մի՞թե դա չէ, որ պետք է մեզ, մեր երեխաներին, թռոներին ու սերունդներին... Մանավանդ որ Աստված և մեր սուրբ նախնիք են ակնկալում դա մեզանից: Դա՛ են պահանջում, սպասում մեզանից և ուզում են տեսնել: Տեսնել, որ հայ ազգը, Երկիր Յայաստանը և հայոց պետությունը վերելք են ապրում այս աշխարհում ու նաև վերելք դեպի Երկնային կյանք՝ Աստուծոն Արքայություն:

Սակայն, դժբախտաբար, կարծես թե այս ճշմարտությանը մեր ազգն այլևս լիարժեքորեն հաղորդ չէ: Ու եթե այս ճշմարտության դրւս մղումը մեր՝ ժամանակակիցներիս սրտերից և մտքերից հետևանք է նաև մեր այսօրվա ուսումնառության, գի-

տուրքան, մշակույթի, կենցաղավարության և հասարակություն-պետություն հարաբերությունների, ապա հարկ է զգա՞ստ, զգո՞ն և գիտակից լինել՝ փոխելու այդ ուսուցում, գիտություն, մշակույթ, կենցաղավարություն և հարաբերություններ կոչված-ները՝ փոխարինելով դրանք այն լուսավորով ու առողջով, որ մի ժամանակ մենք ունենք ու այժմ էլ կարո՞ղ ենք ունենալ, եթե ճանաչենք ու հավատարիմ մնանք մեր նախնիների՝ մեզ թողած հավատքի ժառանգությանը:

Կիրակի, 10 - 07 - 2016թ., Ժամը 22:00

## **ԽՈՍՔՆ ԻՍԿԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ Է (Տիրոջ ինը երանելիների ոգով)**

Իսկական քրիստոնյան և, բնականաբար, նաև իսկական հայ քրիստոնյան (խոսենք նախ և առաջ մեր մասին) նյութապաշտ չէ (չի՝ կարող լինել): Նա անբողջ կյանքում ծառայում է ծշմարտությանը և մահից չի վախենում, քանի որ երկրային կյանքում ծիշտ՝ սուրբ ապրումներով այս կյանքի ավարտը՝ մահը, սկիզբ է դնում իր նոր ու երանելի հավերժական կյանքին:

Եթե մեր հոգևոր ժառանգության տեսանկյունից դիտարկենք հայությունն ու հայկականությունը, ապա հայ քրիստոնյան **Տիրոջ ասած՝ երկրի աղմ է ու աշխարհի լույսը**: Աղ, որը չպետք է երևէ անհամանա, որպեսզի «մարդկանց ոտքի կոխան չդառնա», և Լույս, որը պետք է միշտ փայլ տա մերձավորներին, ամեն մեկին ու մանավանդ մեր ազգին, հայրենիք Հայաստանին, նրանց նպատակներին, գործերին, ընթացքին ու արդյունքին՝ հօգուտ նաև համայն մարդկությանը և ի փառս մեր Տիրոջ՝ Փրկիչ Հիսուս Քրիստոսի:

Հայ քրիստոնյա, զարթնիր, ուշքի եկ, վե՛ր կաց, կանգնիր ամբո՞ղջ հասակով, ի՞նքո՞ւ զգա քո լույսը, տարածիր այն ու

անհապաղ փայլեցրո՛ւ քո ազգի մեջ՝ ամենօրյա ծառայությամբ Արարիչ Հորը:

Ու այդ ծառայությունը կլինի նաև հոյակապ ծառայություն ազգիդ, հայությանը, Հայաստանին: Եվ քո այդ ծառայությունը կլինի գերպտղաբեր, որովհետև կլինի ճշմարտության Հոգով, որով և Սրբությամբ ու ըստ այնմ՝ գործերով ու քո ամեն տեսակի վերաբերմունքով:

Եվ Երկնավոր Հայրը կգոհանա քեզանից, դու կդառնաս Հոր հարազատ որդի, իսկ ազգո՞ւ Նրա ժողովուրդո՞ւ: Եվ ազգերը, մարդկությունը, տեսնելով ու օգտվելով հայության՝ հավատքին հավատարմությամբ ստացած լուսեղենությունից, լուսավոր գործերից, ապրած լուսավոր կյանքից՝ **Կիառավորեն բոլորի ՇՈՐԸ, ՈՐ ԵՐԿՆԹՈՒՄ Է:**

Հայության ի՞նչ աննկարագրելի մեծություն, բարձրություն, փա՛ռք, պատիկ ու կյանքի երանություն... Շնորհովն Տիրոց:

01 - 10 - 2016թ.

## **ԻՆՉԻ ՄԱՍԻՆ՝ ԻՆՉՆ ԵՆՔ ՄՈՌԱՑԵԼ**

Խոսում ենք մեր ազգի ու Երկրի տարբեր բնագավառների ու ամբողջական զարգացման մասին, բայց առաջին հերթին՝ Հայաստանի տնտեսության զարգացման մասին ենք խոսում, ու հետո՝ և կրթության, և գիտության, և մշակույթի, և, և, և... Եվ շատ լավ է, որ խոսում ենք նաև «և»-երի մասին, բայց միայն խոսելով այդ «և-և»-երը գործ ու արդյունք արդյոք կդառնա՞ն: Սակայն խոսելն ել վատ չէ, նույնիսկ շատ կարևոր է, որովհետև եթե չխոսես, ինչպես հասկացվես, ու եթե չհասկացվես, հասկացողություն չառաջանա, ինչպես կարող են գործ ու արդյունք առաջանալ:

Ուրեմն՝ լավ է, որ խոսում ենք շարունակե՞նք խոսել, բայց... (դարձյալ մի «բայց»): Եթե խոսելը լավ է, ապա մեր ազգի ու Երկրի տնտեսական զարգացման, այլ զարգա-

ցումների նաև պատշաճ պաշտպանության և սոցիալական առաջընթացի մասին խոսելուց բացի ինչո՞ւ չենք խոսում, այն էլ որպես անհետաձգելի խնդրի և պահանջի՝ մեր ազգի, մեր երկրի և պետության հոգեկանության, գաղափարականության և բարոյականության բարձրացման մասին, որը ոչ միայն վաղուց ի վեր չի բարձրանում, այլև ընկնում, նվազում է, և դա մեծ մասամբ հենց մեր պատճառով, մեր ջանքերով, մեր ձեռքի գործերով է լինում՝ օրը ցերեկով և մեր աչքի առաջ, սարսափելի արագ ընթացքով:

Իսկ ինչո՞ւ դա չենք տեսնում, չենք զգում ու այդ մասին, ինչպես պետք է, չենք խոսում ու ինչպես հարկն է՝ չենք գործում:

Կարո՞ղ է այն աստիճանի ենք ընդարմացել և կամ այլասերմամբ խորթացել ու բթացել, որ կարող է մտածենք ու ասենք. «Դա ինչ կարևոր է որ: Յոգեկանությամբ հավատքը, գաղափարականությունը, բարոյականությունը ոչ ուտում, ոչ խնում, ոչ էլ հագնում են. դրանք հարաբերական հասկացություններ են, որ ժամանակի ընթացքում նաև հնանում են, մոդայի հետ դրանց ժամանակն էլ անցնում է, և դրանք փոխվում են»:

Մենք գուցե դեռ բոլորս այդպես չենք մտածում ու արտահայտվում, սակայն, դժբախտաբար, մեր արդի ազգային ու նաև պետական մտածելակերպն ու արարքներն ապացուցում, հաստատում են, որ մեզանից շատերն են այդպես մտածում, արտահայտվում ու ըստ այդմ են գործում, ապրում: Եվ ի՞նչ սարսափ՝ մեզանից այդ շատերի մեջ ցցված երևում են մեր ազգային ու պետական դեկավարների (և մեծագույն սարսափ), նաև մեր կղերականների, մտավորականների ականջները: Իսկ դրանք արդեն չե՞ն կազմում մեծամասնություն...

Սա ինչ վիճակ է, ինչ է՝ քարե դա՞րն ենք կարոտել, այնտե՞ղ ենք ուզում գնալ: Բայց մեզ համար այդքան ջանք գործած, այդքան զոհողություններ կրած մեր մեծերի, մեր սրբերի, մեր նահատակների (որ առանց մեր Աստվածաշնորհ հավատքի և դրանից բխող ու դրա վրա հիմնված ազգային գաղափա-

րականության և բարոյականության չէին կարող լինել) համար ցավալի է, որ մեր տոհմիկ արժեքների (որ մեր մարդկային ու ազգային ինքնության գոյության միսը, արյունը և հոգին են կազմում) ժխտմամբ, ուրացմամբ մենք այլասերման այնպիսի աստիճանի կիասնենք, որ անկենսունակությունը մեզ կփտեցնի, իսպառ նեխնան կենթարկի՝ տանջալից վախճանով և ի կորուստ ընդմիշտ:

Սակայն այդպիսի հեռանկարը թող հեռու լինի մեզնից, մեր ազգից, մեր երեխաներից, թռոներից, սերունդներից, որովհետև մեր սուրբ և հաճախ նահատակված հայրերն ու մայրերը դարերի ընթացքում իրենց Աստվածասեր հավատարմությամբ՝ Աստվածապատվեր արարքներով ու ըստ այնմ կյանքի ապրումով, մեզ անանց, անկորնչելի՝, կենսատու ժառանգություն են թողել՝ ամենայն փորձություններից, նեղություններից պաշտպանող, պահպանող ու առաջնորդող դեպի լույս, որով և կյանք՝ այժմ և հավիտյանս հավիտենից: Այդպիսի ժառանգությամբ ինչպես հասնել այս վիճակին և նրանց Աստվածասեր հավատարմությամբ չնվիրվել հավատքին: Ու դրանից բխող և դրա վրա հիմնված գաղափարականությամբ, բարոյականությամբ ու Աստվածապատվեր արարքներով և կյանքի ապրումով չդառնալ նրանց հարազատ, արժանի հետևորդներն ու ժառանգները:

Մինչեռ հայի, հայության ու հայկականության հավատքը քրիստոնեական հավատքն է, ըստ Յայաստանյաց առաքելական սուրբ Եկեղեցվո Յավատամքի:

Մեր գաղափարականությունը Յայ Ազգային Գաղափարախոսությունն է, որը բխում է՝ և հիմնված է Աստուծո հավատքի վրա՝ Ավետարանով և Խաչով:

Եվ մեր բարոյականությունը հայոց հավատքից և գաղափարախոսությունից կերպավորված կյանքի ապրումը՝ ապրելակերպ, կենցաղավարությունն է:

Կարո՞՞ղ ենք մենք այդպիսին լինել և այդպիսով էլ մեր երեխաներին, թռոներին, մատաղ սերնողին կրթել, դաստիարակել, որ այդպիսին լինեն:

Այս հարցի պատասխանը, ըստ Երևույթին, թե՝ «այո՛» է և թե՝ «ո՛չ»:

«Ո՛չ» է, եթե շարունակենք ուրանալ, մոռանալ ու անտեսել հայ մարդու՝ մեր ժառանգական հարազատ մարդկային-ազգային ինքնությունն ու հավատքով հոգու պարտքը:

Եվ, այո՛, անպայման «այո՛» է հարցի պատասխանը, եթե հավատարիմ մնանք Աստվածաշնորհ մեր հավատքին, մեր Աստվածակերտ մարդկային-ազգային ինքնությանը և այդ հավատքով գաղափարական ու բարոյական պարտաճանաչությամբ պատրաստակամ լինենք կատարելու մեր հոգու պարտքը ազգի, հայրենիք Յայաստանի, պետության, որով և մեր ընտանիքների ու մարդկության հանդեպ:

Եվ այդ պատրաստակամությամբ՝ միշտ, ամենուր, ամեն ինչում, մեր արածը լինի **ի փառս Սուրբ Երրորդության՝ Յոր, Որդու և Սուրբ Յոգու՝ ԱՍՏՈՒԾՈՒ**:

Երկուշաբթի, 20 - 12 - 2015թ., ժամը 01:30

### **ՀԱՅՈՅ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՈՒ ՀԵՐՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԸ ՀԻՄՔ**

### **ՀԱՅ ՍԵՐՈՒԴՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ, ՈՐՈՎ՝ ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՄՏԱՎՈՐ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՒ ԱՌՈՂՋ ԿԵՆՑԱՊԱՄԱՐՈՒԹՅԱՆ**

Երիտասարդությունը կրթվում է տանը՝ ծնողներից, ուսում է ստանում դաստիարակվում, սովորում դպրոցում, նախնական փորձառություն է ձեռք բերում փողոցում ու այդ ամենով ձգտում է նմանվել հասարակության (սեփական կամ միջազգային հասարակության) հերոսներին՝ ֆիլմերի դերասանների կերպարների, գրական կերպարների, երգիչների և այլն: Այդ կերպարները Սփյուռքում, պարզ է, թե ովքեր են՝ մեծ մասամբ՝ ոչ հայեր, սակայն տարօրինակ ու անբնական է, որ հայոց հողում, հայ բնակչության, հայության մեջ ևս դրանք ոչ

հայեր են լինում (կամ հայեր են, որոնք հոգեբարոյապես ու գաղափարապես ծևավորվել են ոչ հայորեն և ոչ հայկականությամբ):

**Այս խնդիրը կարևոր է մեր ով լինելու և մեր ապագայի ինչպիսին լինելու համար.** Իետևապես առաջին հերթին խնդիրը և դրա լուծումը վերաբերում են մեր պետությանը և բոլոր ազգային կազմակերպություններին, համայն ժողովրդին, բայց հատկապես (շատերին կարող է տարօրինակ թվալ) Յայաստանյաց առաքելական սուրբ Եկեղեցուն: Ու եթե մեր Եկեղեցու պարտականությունը չէ կամ իր հնարավորությունները բավարար չեն այդ հարցի լուծման համար հիմնարկներ, հաստատություններ, կառույցներ և այլն ստեղծելը, ապա, ըստ նրա կոչումի, իր պարտքն ու գործն է **խոսե՛լ, աղաղակե՛լ, քարոզե՛լ, ուսուցանե՛լ և հավատքի վրա հիմնված գիտակցություն ու համոզում առաջացնե՛լ...**

Այս հարցը ինչպես կարելի է գործի վերածել՝ լուծել, իր լրումին հասցնել: Որտեղի՞ց, ումի՞ց կարելի է և պետք է սկսել, ե՞րբ...

**Ե՞րբ ու ինչպե՞ս ենք կասեցնելու մեր՝ հատկապես մատաղ սերնդի զգալի մասի հոգեբարոյական և գաղափարական այլասերման ընթացքը, որի հետ կապված են անձնականից ու ընտանեկանից սկսած՝ մինչև ազգային ու պետական էական շան հարցեր:**

Եվ կասեցումից հետո էլ, այլասերումից լիովին գերծ ընթացքով, մեր մեջ վերականգնենք մեր նախնյաց՝ մեր մեծերի, մեր սրբերի (Ներկայիս համապատասխան տեսքով) մարդկային-ազգային Աստվածատուր ինքնությունը:

**- Իսկ ի՞նչ կտա դա, ի՞նչ կստացվի դրանից:**

- Դա կտա, դրանից կստացվի վերականգնված, վերահաստատված հայ ազգ ու հայունիք Յայաստան՝ իր հուսալիուրեն պաշտպանված (ոչ թե արհեստական, «բզկտված, բռնաբարված» սահմաններով), իր բնիկ, պատմական, բնական ու կենսական սահմաններով, կենսունակ աշխարհագրական դիր-

քով, ուղիներով, միջազգային կարևոր կշռով և իր ժողովրդի միջազգայնորեն բարձր կենսամակարդակով:

**- Ինչո՞ւ կլինի դա:**

- Դա կլինի, որովհետև հայն ու հայությունը, վերականգնելով իրենց մարդկային-ազգային Աստվածատուր ինքնությունը, կտողորվեն, կհամակվեն նաև Աստվածաշնորհ հոգեկանությամբ, խղճով, գաղափարականությամբ, գիտակցությամբ, բարոյականությամբ, որով և ազնվությամբ ու ազնվականությամբ և կունենան ըստ այն կյանքի ապրում՝ վերաբերմունք, կենցաղավարություն, գործունեություն ու ստեղծագործություն, որը կլինի նաև հօգուտ համայն մարդկության ու ամենաէականը, կլինի ի փառս Սուրբ Երրորդության՝ ԱՍՏՈՒԾՈՒ:

\* \* \*

Յայի (ինչպես ամեն մարդու) հոգենոր ուսուցումն ու դաստիարակությունը պետք է միշտ և բոլորին, սակայն այն հատուկ նշանակություն ունի Երեխաների, մատադ սերնդի համար:

Նոր սերնդին այն պետք է՝ ճիշտ կողմնորոշվելու հատկապես կրթության, դաստիարակության, ընկերական շրջապատի, ընտանիք կազմելու համար ու նաև դառնալու հավատքով, խղճով, կամային հատկություններով և գիտակցությամբ՝ կազմակերպված, օրինապահ, կարգապահ, ազգասեր, հայրենասեր և մանավանդ Աստվածասեր հայ մարդ-քաղաքացի՝ ծառայելու համար իր Արարիչ Աստծուն՝ ծառայելով հայ ազգին, հայկականությանն ու հայրենիք Յայաստանին:

Դրա համար Երեխայի մկրտությունից սկսած՝ հարկ է նաև հաղորդել հոգենոր ուսուցում ու դաստիարակություն, ազգի և մարդկության ճշմարիտ պատմություն, ինչպես նաև՝ ապահովել պատշաճ հաղորդակցություն-ծանոթություն ծնողների, հատկապես պապերի և տատերի ու նաև ազգականների, հատկապես նրանց ազգային, հոգենոր ու բարոյական դրական փորձառությանը:

Յայի ազգային և քաղաքացիական այս ըմբռնումով, այս սկզբունքով ու նաև պետական մոտեցմանբ ու կազմակերպմանբ՝ մարդկային-հայեցի կրթությունը, դաստիարակությունը,

ինչպես և մշակույթը, հայրենիքում թե Սփյուռքում, կլինեն օգտաշատ՝ անձնապես, ազգորեն և պետականորեն:

Ու այդ կրթությունը, դաստիարակությունը կտան այն արդյունքը, որ բոլոր գիտակից, անկեղծ, հարազատ հայերը փնտրում են իրենց ազգի, հայրենիքի և պետության քաղաքական, պաշտպանական, տնտեսական, կրթական, սոցիալական, ազգային միասնության ու նման այլ կարողությունների և արարքների մեջ: Եվ դրանց համար այդ շատ ցանկալին մեծ չափով գոյանում ու գտնվում է հայ ազգի և մասնավորապես նոր սերնդի հոգևոր կրթության, ուսուցման, դաստիարակության ու ըստ այնմ՝ հավատքին հավատարմությամբ կյանքի ապրումի և մասնավորապես քաղաքացիական պարտաճանաչության, պատրաստակամության, պատրաստականության ու նաև կենցաղավարության մեջ:

Հետևապես դրա կենսագործումը անձնական-ընտանեկանից բացի ոչ միայն կղերական ու հասարակական, այլև ու առաջին հերթին ազգային-պետական հարատև նպատակ, խնդիր և գործ է՝ *Տիրոջ օգնությամբ*:

Եվ դրա ո՞րևէ չափի բացակայությունն իսկ ազգի, հոգու և մտքի մեջ պետք է հարատև հետևողականությամբ անլոելիորեն ահազանգի:

Շաբաթ, 30-ը հունիսի, 2007թ., ժամը 22.20

## **ՀԱՅ ՀԵՐՈՍՆԵՐ, ՈՎՔԵՐ ՊԵՏՔ Է ՇԱՆԱՉՎԵՆ. ՆՐԱՆՅ ԿԵՐՊԱՐԸ ԵՎ ԿՅԱՆՔԻ ՕՐԻՆԱԿՆ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԿԱՐԺԵՔ ԺԱՌԱԳՈՒԹՅՈՒՆ Է**

1. Յայց իին պատմություն
2. Միջին դարերի պատմություն
3. Նոր շրջանի պատմություն
4. Նորագույն շրջանի պատմություն
5. Ժամանակակից պատմություն

**Մերոնշյալ չորրորդ կետով** արդար կլինի՝ հիշենք «Մշո ճառընտիր» մատյանը՝ եղեռնագործված Սուրբ Առաքելոց վանքից դեպի փրկություն տանող «բեռնակիր» դարձած մշեցի կանանց: Նրանց ազգային ու նաև մարդկային սիրամքը՝ հավատքով և հույսով բարու ու ապագայի նկատմամբ: Ինչպես և նրանց անձնվիրությունը՝ սրբությունների և նաև մարդկային ու ազգային նշակութային արժեքների նկատմամբ...

**Մերոնշյալ հինգերորդ կետով** Յայաստանում խորհրդային ռեժիմի ժամանակ իրենց մարդկային ու ազգային գիտակցությունը, պարտաճանաչությունն ու բարոյական հատկություններն անձնագորհաբար պահպանած և գործով ապացուցած հերոսների շարքում արդար կլինի հիշել (մանավանդ որ անարդարացիորեն մոռացված է) Յայաստանից դուրս եղեռնապուրծ ծնողներից դաստիարակվելուց հետո խորհրդային Յայաստանի դեկավար դարձած Յակով Նիկիտայի Զարոբյանին: 1960-ական թվականների սկզբին, լինելով խորհրդային իշխանական խավի վերին աստիճաններում և տալով իր տուլքը նյութապաշտ կայսերական Մոսկվային՝ խղճով, կամքով և գիտակցությամբ ու նաև քաղաքական հնտությամբ, **որպես մարդ և հայ՝ կատարեց ազգային սիրամք՝** խորհրդային Յայաստանի մայրաքաղաք Երևանում Յայց ցեղասպանության (Յայց մեծ

եղեռնի) հուշահամալիրի կառուցման գաղափարի իրականացմանք:

Անկախ Հայաստանի ղեկավարությունը պետք է բարոյապես մեծ պարտք զգա՝ հայության համար լրիվ բացահայտելու և ճանաչել տալու Յակով Նիկիտայի Զարոբյանի ու, ցավոք, նրա նման սակավաթիվ գործիչների հայկական ինքնությունը, էությունը, արդար ու ճշմարտորեն գնահատելով՝ արժևորելու և արժանի հարգանք ձևավորելու նրանց կյանքի ու գործի նկատմանք: Եվ հարկ է զգույշ լինել՝ չգերազնահատելու ոմանց որոշ ազգօգուտ գործունեությունը՝ լրության մատնելով նրանց կատարած բացասական (այն էլ՝ անհարկի), ամենակն էլ ոչ ազգօգուտ գործերը: Եվ դա միայն նրա համար, որ վերջիններս, ի տարբերություն իսկական նվիրյալների, այժմ զորեղ «լորբի» ունեն:

Ամեն ինչ պետք է անել, որ հայ իրականության մեջ գերիշխեն պատիվն ու արդարությունը: Դա մե՛ծ օգուտ է մեր ազգի, պետության ու սերունդների համար, և հաճելի է մեր Աստուծո համար, որ միշտ ըստ այնմ հատուցում է:

Իսկ հակառակի գերիշխունը անկենսունակություն է, խեղճություն, տառապանք և կորուստ, և, Տիրոջ օգնությամբ, հեռու մեզնից:

Ծաբաթ, 17 - 09 - 2011թ., ժամը 05:40

## ԽՈՍՔ (Որք չի՝ կարելի անտեսել)

Ժամանակակից հայը հային մաղթում է՝ «առողջ լինես»՝ հաճախ ավելացնելով նաև, թե դա «ամենակարևոր բանն է, դրանից կարևոր բան չկա»։ Սակայն հայը հային այդ մաղթանքն անում է, ըստ երևույթին, նկատի ունենալով նրա սիրտը, թոքերը, երիկամները, ոտքերը, ձեռքերը, գուցես տեսողությունն ու լսողությունը, բայց ոչ միտքն ու հոգին։ Ինչո՞ւ։ Որովհետև չենք մտածում այդ մասին, հաշվի չենք առնում միտքն ու հոգին, այնպես, ինչպես սիրտը, թոքերը, ձեռքերը, ոտքերը և այլն։ Որովհետև հոգին չի՝ երևում, ոչ մաղթողն է այն տեսնում, ոչ իսկ որևէ բժիշկ կամ այլ մասնագետ, փորձագետ կամ գիտնական է տեսնում, բայց եթե հիշեցնես հոգու մասին, հավուր պատշաճի կպատասխանի. «Դե, իհարկե, ո՞վ չգիտի, որ հոգին կարևոր է և պետք է...»։

Թե ինչի՞ է պետք, շատ չի խորանում, դրան շատ տրամադիր չէ։

Պարզվում է՝ ժամանակակից, համեմատաբար ավելի գրագիտորեն, զարգացած հայի համար կարևոր է այն, ինչ տեսնում կամ զգում է (որից և ըստ իրեն կազմված է անձը)` իր առերևույթ անձը, որի մասին ինքը նաև հաստատ, առանց ո՞րևէ տարակույսի գիտի, որ անցողիկ, ժամանակավոր է։ Իսկ իր ներքին իսկական անձը՝ հոգին, որ չի երևում, սակայն հավատքն ասում է, որ անմահ, հավերժական է, պարզվում է՝ երկրորդական տեղ էլ չունի. ընդհանրապես տեղ չունի, գուցե մինչև չի գալիս դրա՝ իր մարմնից բաժանվելու պահը։

- Ուրեմն՝ ժամանակակից հայի համար միտքն ու հոգին ի՞նչ են, վերացական մի բա՞ն։

- Ցավոք, այդպես է ստացվում։

- Դապա մեր Եկեղեցի՞ն. կոչումն ու գործը: Դայի հոգու հետ զբաղվելը չէ՞:

- Այո՛, և ոչ թե միայն զբաղվելը, այլև գործելը՝ հոգին կրթելը, դաստիարակելը, ուսուցանելը, մարզելը, առողջ պահելը, և ամենակարևորը՝ այն պաշտպանելն ու փրկելն է:

- *Փրկել, ինչի՞ց:*

- Այո՛, այո՛, հոգին փրկել. և ոչ միայն առողջ, զորեղ, հավատարիմ ու գործուն պահել, այլև փրկել ապակողմնորոշումից, չարի թակարդներից գերվելուց ու մահից:

- *Ի՞նչ է Եկեղեցին՝ առողջապահական հաստատությո՞ւն և միաժամանակ արտակարգ վիճակների ծառայությո՞ւն:*

- Երբ հարցը հոգուն է վերաբերվում, կարելի է և այդպես բնութագրել:

- *Ուրեմն՝ առանց Եկեղեցվոր հայությունը փրկություն չունի՞:*

- Կարելի է և այդպես բնորոշել, եթե հասկացվի, որ Դայաստանյաց սուրբ Եկեղեցին (որպես Քրիստոսի ընդիանուական, առաքելական սուրբ Եկեղեցվոր հարազատ մասնիկ), կարծ ասած, գոյացել և գործել է հայ ժողովրդի հոգևոր սնուցման, կրթության և հոգու անվտանգության ու փրկության համար:

- *Ուրեմն՝ Եկեղեցին այցելելու, մոմ վառելու, նրա ծիսակատարություններին, սովորակատարություններին մասնակցելու, ձուկ ու չամչով փլավ ուտելու, խառովովի վրայից ցատկելու և նման բաների հիշեցման, կազմակերպման համար չէ՞ միայն:*

- Իհարկե, ո՛չ. դրանք միջոցներ են, եթե կուզեք՝ «մեթոդական ձեռնարկներ» են՝ հային սովորեցնելու հիմնականը՝ էականը՝ իմաստավորել իր երկրային կյանքը, որն է՝ ծառայել Աստծուն, կատարել Նրա կամքը, պատգամները, ծրագրերը, որոնց մեջ մեզ՝ հայերիս համար, առաջնայինը՝ ծառայել մարդկային ցեղի հարազատ ընտանիք հայ ազգին, նրա հայրենիք Դայաստանին, որ ստեղծվի ազգային Աստվածասեր, մարդասեր, արդարասեր, պատվասեր և դրանով կենսունակ պետություն, և ինքն էլ անձնվիրաբար ծառայի այդ պետությանը,

որպես պայման՝ արժանանալու հոգու անմահությանը, հավերժական կյանքին՝ Աստուծո Երկնային արքայությունում:

- *Բայց դա շատ մեծ բան է՝ գերեւական է. դրանից էլ ի՞նչ ավելի կարևոր բան կա ու կարող է լինել հայի համար:*

- Այո՛, այդպես է. մեր Եկեղեցին՝ Յայաստանյաց առաքելական սուրբ Եկեղեցին, իր սրբությամբ ամենամեծ ու եական Եղելությունն է հայ ազգի կյանքում, ինչպես և մարդկության կյանքում:

- *Եթե այդպես է, ուրեմն ի՞նչ պետք է անել մեր Եկեղեցու համար:*

- Սուրբ պահել այն՝ մեր սուրբ լինելով, մեր սուրբ մնալով, սուրբ պահելով այն, մեր սրբությամբ ապրելով ու գործելով:

- *Այսի՞նքն:*

- Այսինքն, որպեսզի Յայաստանյաց սուրբ Եկեղեցին կարողանա իր Աստվածատուր սուրբ առաքելությունն ու գործը, իր այդ Աստվածապատգամ պարտականությունը, ամեն բանից առաջ, կատարել սրբությամբ. Եկեղեցին սուրբ պետք է լինի իր ծառայողներով, կղերականներով, հոգևորականներով: Եվ դրանով է նաև, որ ճանապարհ կրացվի և կոյուրանա իր հոտի՝ հայ ժողովրդի սրբանալը, սուրբ մնալը և սրբությամբ ապրելն ու գործելը՝ հօգուտ ազգի, հայրենիքի, պետության, նաև համայն մարդկության ու ամենաէականը՝ ի փառս Սուրբ Երրորդության՝ Աստուծո:

- *Կարծես խնդիրը մի քիչ բարդացավ:*

- *Ինչո՞ւ:*

- *Յապա այդքան շատ սրբություն կլինի՞:*

- Իսկ ինչո՞ւ չի լինի, դա ի՞նչ դժվարություն է որ, եթե դա մեզ կարժանացնի ծառայել Արարիչ Յորը, կատարել Նրա պատգամները, կամքը և դառնալ Նրա որդիները, որով և արժանանալ ազնվորեն ծառայելու հայ ազգի, հայրենիք Յայաստանի և հայ պետականության Աստվածապաշտպան գոյության համար: Եվ դրան հասնելու, դրան արժանանալու համար կարիք չկա ո՛չ միլիարդավոր դոլարների ներդրումների, ո՛չ մի-

լիարդներ արժեցող զենք ու զրահի, ո՞չ էլ արտասահմանյան թանկարժեք ուսումնառությունների և նման բաների: Միայն թե մենք առավել զնահատենք, զորացնենք և ուզենանք մեր մեջ նորոգ պատվաստել մեր պապենական քրիստոնեական սուրբ հավատը, նրանից բխող ու նրա վրա իհմնված մեր գաղափարականությունը և բարոյականությունը (Յայ Ազգային Գաղափարախոսությունն ու Յայ Ազգային Տոհմիկ Բարոյականությունը) և, ըստ այնմ, կենցաղավարությունը: Եվ մենք մեր այդպիսի հավատքով, զործերով, կյանքի ապրումով կսրբանանք և սուրբ կպահենք մեր Եկեղեցին, ինչպես նաև է մեզ սուրբ պահում՝ պաշտպանելով աշխարհի շատ ու շատ որոգայթներից, որ տանում են դեպի պղծություն, այլասերություն և հավերժական կորուստ՝ մահ:

- *Ուրեմն՝ Եկեղեցու դերն այդքան կարևո՞ր է:*
- Եկեղեցու դերն առաջնային է, շատ մեծ է, էական ու վճռական: Եվ միշտ այդպիսին է լինում նրանով, որ որպես ամեն բարու կորիզօք՝ թթվածորի դեր է կատարում, զարթուն է մնում ու մեզ զարթուն պահում, նաև մեզ առաջնորդում՝ ինչպես հարազատ և քաջ ու հավատարիմ հովիվ՝ մեր Տիրոց՝ Յիսուս Քրիստոսի պատգամով ու օրինակով:

Եվ փառքը Նրան ու Նրանը եղողներին, այժմ ու հավիտյանս հավիտենից:

Երկուշաբթի, 11 - 11 - 2013թ., ժամը 05:40

## **ԱՍՎԱԾԱՅԻՆ ՄԻՐՈՎ Է ԿՅԱՆՔԸ ԿԵՆԱՐԱՐ**

Սիրովն Աստվածային, մարդուն տրվեց Շնորհն Աստվածային՝ փրկվելու և Աստվածանալու համար:

Յավատք Աստվածորդու հանդեա՞՝ Ավետարանով և Խաչով, ու դրանով՝ գաղափար, որ արտահայտվում է մեզ՝ հայերիս համար, Յայ Ազգային Գաղափարախոսությամբ ու այդ հավատքը կյանքի ապրումի վերածելով՝ քաղաքացիականացմանբ ու քաղաքականացմանբ:

- Եվ գաղափարը (գործերով), որպես հավատքը գործի վերածող միջոց, ծնում է բարոյականություն՝ կիրառելով բարոյական չափանիշներ՝ դրանց կատարման (կյանքի վերածման) նորմաներով:

- Այդպիսի բարոյականությունից ծնվում է կենսատու ու ազգակերտ, պետականակերտ մշակույթ:

- Այդպիսի մշակույթն առաջացնում է նաև ազգային կենցաղ-կենցաղավարություն, որն ըստ իր բարոյականության և մշակույթի՝ ստեղծում, ստեղծագործում, կառուցում, նաև պաշտպանում է և դրանով նաև պատվավոր, պտղաբեր, ինքնարավ կյանք և առաջանում՝ ձևավորելով մարդկության մեջ կենարար ինքնություն՝ անձի, ընտանիքի և ազգի, մեր դեպքում՝ հայության:

Եվ այդպիսով, հավատքը դառնում է ապրում՝ հետադարձ կապ հավատքի՝ միշտ նորոգ, ներթափանցող և կյանքը նորոգող իր կենսակերպով ու գործերով: Եվ արդյունքը լինում է թե՝ երկրային և թե՝ երկնային՝ մեր ազգի, յուրաքանչյուր հայի, հայրենիք Յայաստանի ու հարազատ պետության համար:

\* \* \*

Ու այդ բոլորի հիմքը, սկիզբը, լույսը, եռանդը (էներգիան) Աստվածային սերն է: Այն գալիս է մարդու մեջ ու ապրում (տնավորվում) է, երբ մարդը դառնում է հավատարիմ (հարազատ) տնտեսն իր գոյության (իրեն հանձնված անդաստանի) և Աստվածային սերը գործում է նրա մեջ՝ համաձայն նրա հոգևոր բնության, որով իր անդաստանի պտուղներն (ըստ ավետարանական օրինակի) ինքնարուիս, ինքնական տալիս է Տիրոջը, Արարիշ Յորը, այսինքն՝ իր գոյությամբ Նրա պատգամը, կամքն ու գործերն է կատարում, ինչպես Որդին է անում:

«Եվ Որդին Յոր գործերն է անում», - ասված է Ավետարանում: Եվ Որդուն հավատացող հայն էլ այդպես է վարվում՝ ուսուցանված Յայ Ազգային Գաղափարախոսությամբ, որը բխում է և իհմնված է Աստուծո հավատքի վրա՝ Որդու Ավետարանով և Խաչով:

Եվ *Աստվածային սերը* դառնում է *շնորհ*, ու շնորհը՝ *հավատք*, հավատքը՝ *գաղափար*, ու այդ գաղափարով այնպիսի՝ բարոյականություն, որ առաջացնում է գորություն, գործ ու ստեղծագործություն և վերամբարձ կյանք՝ լույսից, լույսով ու լույսի համար:

Եվ գաղափարով (մեզ համար Յայ Ազգային Գաղափարախոսությամբ) առաջացած բարոյական արժեհամակարգով և չափանիշներով ստեղծվում է ըստ այնմ՝ կենցաղ-կենցաղավարություն՝ ճիշտ, առողջ, արդար ու կենսատու ապրումով:

Սակայն հակառակը չի լինում, չի՝ կարող լինել. չի կարող առանց Աստվածային սիրո և նրանց բխող կենարար շղթայի՝ շնորհ, հավատք, գաղափար, բարոյականություն, լինի այնպիսի՝ ապրում՝ կենցաղավարություն, որ դրանով լինի լույս դեպի Լույսը:

Սա նշանակում է նաև, որ ոչնչից լույս՝ եռանդ (էներգիա) չի ստացվի: Այսինքն՝ նյութից սեր, հոգի չի ստեղծվի, բայց Սիրուց, Յոգուց կատեղծվի ամեն ինչ, նաև՝ նյութ:

\* \* \*

**ԵՎ ԻԽ Ազգային ահազանգը պետք է գորեղ ու անընդհանուր հնչի,** որովհետև մեր ազգի մեջ (նաև ինչպես մարդկության մեջ) սիրո պակասն է տարածվում, տիրում: Ո՞չ թե պակասը արհեստական, կեղծ ու եսակենտրոն, այլ Արարչային, Աստվածորդու կենարա՞ն սիրո պակասն է տիրում: Պակաս, որից ցանաքում է ամեն ինչ, առաջին հերթին՝ մարդկանց սրտերը, ավելի, քան ամենաչոր անապատում:

Ու եթե դեռ մենք կանք, դա նրանից է, որ Աստվածորդու գութը է մեզ պահում:

Եվ ազգի, պետության, հասարակության ամեն տեսակի գործունեություն, ռազմավարություն, քաղաքականություն ու նաև ամեն տեսակի ջանքերն ապարդյուն են, եթե Աստվածորդու՝ մեզ պահող, պաշտպանող գութի հանդեպ չարբնացնենք մեր հոգեկան լիարժեք երախտապարտությունը՝ որպես կյանքի շնորհի ընկալում, և չկատարենք մեր հոգու պարտքը:

Ուրեմն՝ իԽ անհատի և իԽ ազգի հոգու պարտքի կատարումը անձնական ու ազգային կյանքի ամենահմաստալից, ամենաէական կատարումն է: Եվ այդ կատարման պայմանը՝ միակ հնարավորությունը հավատքին լիակատար հավատարմությամբ ապրելն ու գործելն է:

Սրանք են մեր մեծերի, սրբերի, նահատակների՝ հավատքով մեզ թողնված ժառանգ-պատգամները, որ ինչում են որպես հոգևոր անլուելի զանգեր:

## ՈՐՈՇ ՀԱՄԵՍԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դնդկաստանը թեև ժողովրդավար է, բայց չքավորությունը շատ տարածված է և համեմատաբար դանդաղ է վերանում: Ինչո՞ւ: Իսկ Զինաստանը գուցե այնքան էլ ժողովրդավար չէ, սակայն աղքատությունն արագ է վերանում: Ինչո՞ւ: Պատճառները, ըստ երևույթին, միայն քաղաքական համակարգի մեջ չեն, այլ նախնառաջ՝ հոգու և հոգևոր մշակույթի մեջ, իսկ եթե պատճառները նաև քաղաքական համակարգի մեջ են, ապա դա վերաբերում է այդ համակարգի **գաղափարականության առաջադրած կազմակերպական կառավարման տարրերությանը**:

Իսկ եթե որպես գաղափարականության ակունք ընկալվի Աստուծո հավատքը և մեր դեպքում, մասնավորապես, հավատքն Ավետարանով և Խաչով, ու ջանք գործադրվի՝ այն կյանքում կիրառելու համար, ապա ոչ միայն չքավորության վերացումն ու հարստացումը, այլև հասարակության, ազգի, երկրի և պետության թե լուսավոր և թե կայուն ու հարատև վերելքն ավելի քան երաշխավորված կլինեն երկնային օրինականությամբ:

Քայերս այս կենսատու ճշմարտությունը պետք է շատ շտապենք գիտակցել, կամ ավելի ճիշտ՝ վերագիտակցել, իիշել, հաշվի առնել և միայն ու միայն այդպես ապրել: Մեր նախնիները, մեր մեծերն ու սրբերն այդպես ապրել են, հակառակ իրենց դիմագրաված ավերիչ ու կորստաբեր բազում արհավիրքներին: Նրանց կյանքը հավատքին հավատարմությանք է ընթացել, որի համար էլ մենք դեռ կանք: Եվ որպեսզի միշտ լինենք, և լինեն մեր թռոները, նրանց թռոները և հայ սերունդները, հօգուտ նաև համայն մարդկության և ամենաեականը՝ ի փառս Սուլբ Երրորդության՝ Աստուծո, մենք պետք է վերա-

փոխվենք՝ ի կատարյալ հավատարմություն մեր Սուրբ Հավատքի:

Ծաբաթ, 20 - 09 - 2014թ., ժամը 08:00

## ՀՈԳԵՎՈՐ ՄՆԴԱՌՈՒԹՅՈՒՆ

*«...և իմ չափոյ, որ չափում եք,  
նրանով պիտի չափվի ձեզ համար»:  
(Մատթեոս 7.2)*

Ավետարանական այս ճշնարտությամբ արդար և շատ օգտակար է, որ մարդն ինքն իրեն (իր ներքինը) կարողանա չափել, կշռել և գնահատել, որպեսզի ըստ այնմ իմանա, թե ինչ չափով է ինքը չափվում, և իր չափն ինչքան է: Եվ դա գիտակցելով՝ ասի. «Տե՛ր ու Կրարի՛ Հայր, խնդրում եմ՝ ների՛ ինձ, անտեսի՛ իմ մեղքերը, ինչպես ես այդ անուն եմ իմ դեմ մեղանչողներին»:

Եվ մեր կյանքը կփոխվի անձանաչելիության աստիճանի՝ դեպի լավը: Որովհետև դրանով կատարված կլինի Տերունական աղոթքով մեր շնորհընկալումը:

Վերակառուցում ենք մեր եկեղեցիներն ու վանքերը, որոնք, մեկ խոսքով ասած, չարը խոնարհեցրել եր, վնասել, կործանել եր: Եվ այդ վերակառուցումներն անուն են հիմնականում **անպաշտոն, չնշանակված հայ մարդիկ՝ ինքնաբուխ ցանկությամբ:**

Սակայն ո՞ւր են պաշտոնյա՛, **նշանակված հայ մարդիկ՝** որ հավաքեն, վերականգնեն, կազմակերպեն, գործի դնեն համապատասխան մշակներին, վարպետներին՝ վերակառուցելու, վերականգնելու մեր՝ հայերիս ներքին տաճարները: ԶԵ՞ որ նաև ասվել է. «**Զգիտե՞ք, որ Աստծոն տաճար եք դուք, և Աստծոն Հոգին է բնակվում ձեր մեջ»** (Ա. Կորնթացիներ 3.16):

Չորեքշաբթի, 04 - 08 - 2010թ., ժամը 24:20

## ՀՈՎՈՒ (ՀՈՎԵԿԱՆ) ՕՐԳԱՆԻԶՄ

*Չկա մի քան, որ դրսից մարդու մեջ  
մտնի և կարողանա նրան պղծել, այլ  
այն քաները, որ նրանից են դուրս  
գալիս, դրանք են պղծում մարդուն:*  
(Սարկոս 17.5)

**Կյանքի ճշմարտության հիմքը, առանցքն ու էությունը.**  
մեր Տերն ասում է, որ ինչ ելնում է մարդուց, այն է պղծում մարդուն: Եվ քանի որ այդ «այն» ասվածը գոյանում, «արտադրվում» է մարդու մեջ ոչ նյութապես, ուրեմն՝ երկի պետք է հասկանալ, որ դա, նախնառաջ, հոգեկան գործընթացի արդյունք է, և խոսքը հոգուց բխածի մասին է: Ուրեմն հոգին՝ մարդու հսկական ես-ը, ունի իր օրգանիզմը, և այն «արտադրում» է: Իսկ որո՞նք են դրա «արտադրական օրգանները», և ի՞նչն է հումքը, որ «մշակվում է ու արտադրվում»:

Ես չգիտեմ, բայց գգում, տրամաբանում, գիտակցում եմ, որ մարդու հոգին (կամ այլ կերպ ասում ենք սիրտը) ունի իր «խոհանոցը», իր «արտադրամասը», որտեղ պատրաստվում է հոգու լավը կամ վատը... «Այն, ինչը ելնում է մարդուց»:

Երկի եական խնդրի կատարում է իմանալը, թե ինչ վիճակում են ընդհանրապես հայության ընդհանուր հոգեկան «խոհանոցի» կամ «արտադրամասի սարքավորումը» և սանիտարական վիճակն ու արտադրությունը, ինչպես նաև դրա բաղադրամասերի (խավերի՝ հոգևոր ու աշխարհիկ, մտավորական և աշխատավորական, տարբեր սեռերի տարեց ու երիտասարդ)՝ հոգեկան «խոհանոցների» կամ «արտադրամասերի սարքավորումների» և սանիտարական վիճակը, և արտադրությունը, նաև կենսունակության ու կազմակերպական վիճակը: Ի՞նչ «սննդամթերք» կամ «հումք» են օգտագործում, ինչպես

Են այն «մշակում» ու, ի վերջո, ի՞նչ որակի է ստացվում այն, ինչը ելնում է հայության տարբեր խավերից, յուրաքանչյուր հայից և, միջին հաշվով, մեր բոլորից՝ համայն հայությունից: Այն պղծո՞ւմ է հայությանն ու յուրաքանչյուրիս, թե՝ սրբագրութում է ու փառավորում:

- Եվ մի՞թե կարևոր չէ այդ մասին իմանալը:

- Ազնիայտորեն՝ այն: Նույնիսկ հույժ կարևոր է: Եվ կարևոր է յուրաքանչյուր հայի համար, բայց մանավանդ՝ մեր հոգևոր ու աշխարհիկ դեկավարության համար:

- Իսկ ո՞վ, ովքե՞՞ր պիտի կատարեն ստուգումը, ուսումնասիրումը և գտնեն ու տան պատասխանը:

- Անտարակույս, նա՛, նրանք, ովքեր ամենաշատը պետք է շահագրգուված լինեն դրանում՝ որպես իրենց կոչում և պարտականություն:

- Ուրեն՛ սպասե՞նք:

- Այո՛, սպասենք ու նաև հույսով լինենք, որ չեն ուշանա այդ պատասխանները, որոնք էական նշանակություն ունեն մեզ համար, մեր ազգային ինքնաճանաշման ու, ի վերջո, գոյության համար: Այդպիսով, հայը վերոնշյալ իմաստով իսկ վերջապես պետք է ճանաչի, իմանա, թե ով է ու ինչ վիճակում է ինքը: Ի՞նչ խնդիրներ ունի կատարելու՝ կատարելագործելու համար իր ընթացքը, պահպանելու իր գոյությունը և իմաստավորելու իր կյանքը: Եվ դա՝ որպես իր նախնիների Աստվածապատվեր, հավերժական, կենսական պատօնամ: Եվ հայի այդպիսի Աստվածատուր իմացությունը, այդպիսի գիտակցությունը կյանքի է կոչվում իր ազգի դավանած քրիստոնեական հավատքով և դրանից բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ ու բարոյականությամբ:

Ընկալե՞նք ու ընդմիշտ մեր սրտում պահենք այս իրականությունը: Թող հեռու գնան մեզանից երկարամյա հոգևոր կուրությունն ու խլությունը, և թող լույս ծագի, լուսավորի, մաքրի ու եռանդ հաղորդի, եռանդ առաջացնի մեր ազգի ու յուրաքանչյուրիս հոգեկան «խոհանոցներում», «արտադրամասերում», որպեսզի մեր ներսից երբեք որևէ պիղը բան դուրս

չգա, այլ միշտ, ամենուր ու ամեն ինչում դուրս գա միայն ու միայն մաքուր, սուրբ և կենսատու «արտադրանք» ի կյանք՝ հօգուտ համայն հայության, նաև համայն մարդկության և ի փառս ու ի հաճույս մեր Արարիչ Յոր՝ Աստուծո:

Ուրբաթ, 16 - 09 - 2016թ., ժամը 19:10

## **ԵՎ ԴԱՐՁԱԾ ԱՆԴՐԾԴԱՐ ՆՈՒՅՆ ԷՎԿԱՆ ԽՆԴՐԻՆ**

Խաղաղությունն ու բարեկեցությունը, ինչպես և ազատությունն ու անկախությունը ձրի չեն տրվում: Դրանք իրենք իրենց չեն գոյանում ու վայելք դառնում: Մեզ՝ հայերիս համար դրանք այնքան դժվար են եղել. հատկապես մեր մարդկային-ազգային ինքնության պաշտպանումն ու պահպանումը, որի համար պահանջվել է և հիմա էլ է պահանջվում գի՞ն, այն էլ՝ շատ բարձր գին:

Մեր հայկական և հարածունորեն նաև մարդկային ինքնությունը բազում և բազմարնույթ ծանր ճնշումների ներքո է: Ու այդ առումով իսկ մեր մարդկային-ազգային դիմադրությունը ոչ միայն համապատասխան ուժ, զորություն ու բազմաթիվ կարողություններ է պահանջում, այլև ու առաջին հերթին՝ հավատք և դրանից բխող հոգևոր իմաստություն և հոգեկան կրորով:

Մեր նախնիներն ավելի ծանր պայմաններում կարողացան այդ տեսակի կարողություններով դիմադրություն ցուցաբերել ու շատ դեպքերում հաղթել՝ պաշտպանելով և պահպանելով իրենց մարդկային-ազգային ինքնությունը՝ իրենց մարդկայնությունն ու հայկականությունը և որպես անզին ժառանգություն փոխանցել սերունդներին՝ հասցնելով մինչև մեզ:

Եվ եթե մեր նախնիք՝ մեր պապերն ու տատերը, հիմնականում հաղթական էին դուրս գալիս իրենց մարդկային ու ազգային ինքնության պահպանման ծանր, բարդ ու երկարատև

փորձություններից, պայքարներից, ապա մենք՝ նրանց ժառանգ ժամանակակից հայերս, այլ կերպ վարվելու, որով և այլ արդյունքների հասնելու իրավունք չունենք:

Եվ դրա համար էլ, որպեսզի մենք ևս անպայման հաղթական դուրս գանք և դրա հետևանքները՝ որպես անփոխարինելի ժառանգություն, թողմնենք մեր զավակներին, թուներին, սերունդներին, պետք է և պարտադիր պայման է, որ տոգորվենք ու ապրենք նախնիների, մեր մեծերի, մեր սրբերի հավատքի հոգեկանությամբ, զաղափարականությամբ, բարոյականությամբ ու ըստ այնմ՝ կենցաղավարությամբ (հասկանալի է, որ ժամանակակից ծևով, տեսքով):

Ու այդ դեպքում է, որ մենք կդառնանք այն միասնական ու կարող ազգը և կունենանք այն ապահով, խաղաղ, բարգավաճ երկիրն ու պետությունը, որի նասին երբեմն ցանկություններ ենք հայտնում, հորդորներ անում և նույնիսկ խոստումներ ենք տալիս հոգևոր ու աշխարհիկ բարձունքներից, սակայն, ըստ երևութին, մեր սրտերի պարունակությունը՝ մեր խոհերը և մեր գործերը, չեն հանապատասխանում հայտնված ցանկություններին. դրանք այլ բան են ասում:

Իսկ ի՞նչ են ասում, և ի՞նչն է պակաս արվում. ի՞նչ պետք է արվի, որ այդպես չլինի: Պետք է արվի այն, ինչ թելադրում է մեր Աստվածաշնորհ հավատքը. ապրել ու գործել Աստվածային պատգամներով և մեր ազգի մեծերի, սրբերի, նահատակների ապրած կյանքի իմաստով ու օրինակով: Այսինքն՝ ապրել ու գործել այն հոգեկանության, այն հոգեբարոյական իմաստով, արժեքներով, որ մեզ թողել են առ ի գիտություն ու առ ի կատարում և դրանցով ապրում, և մեր որակական հատկությունները ոչ թե աշխարհի չորս կողմերից մեզ վրա մղվող ամեն տեսակ՝ ինչպիսի օրինակներով ընդունենք և դրանց չափանիշներով գնահատենք, այլ մեր ազգային տոհմիկ օրինակներով և չափանիշներով:

Մենք ազգովին, ըստ երևութին, տարբեր պատճառներով, հատկապես վերջին ժամանակներում մեծ նասամբ ըստ հարկի չենք ուսումնասիրել, սերտել ու մանավանդ առաջնորդվել մեր

իսկական պատմությամբ ու ըստ այնմ դիրքորոշվել այս անհոգի, խարդախ աշխարհում ու նաև դրա՝ համար էլ մեծ ու բարդ խնդիրներով բեռնավորված ենք մնում: Ամեն մի օտար անուն-ազգանունով հեղինակված, գրությունների վրա ստորագրված թղթերին հարգալից ուշադրությամբ ծանոթանում ենք, իսկ մեր՝ մեր նախնիների հոգով, սրտով, մտքով և կյանքի փորձառությամբ մեզ կտակված պատվերները, պատգամները հիմնականում և գործնականում փոշոտված մնում են դարակներում. դրանք ոչ միայն ուսում, հրահանգավորում և ազգային ու պետական ճանապարհային քարտեզ չեն դառնում, այլև պարզ ուշադրության իսկ չեն արժանանում, արհանարիվում, անտեսվում են:

Որպես օրինակ՝ մեկ փաստ. Մատենադարան ենք ստեղծել (թշնամիների կողմից կողոպտված ու ավելի վատ՝ վառված, փչացված ձեռագիր մատյաններից հարյուրներից մեկը, զոհողություններ պահանջող դժվարություններով փրկելով, հավաքելով, ուսումնասիրելով, դասակարգելով, դասավորելով, պահպանելով), և փառք ու պատիվ նաև նրանց, որ վերջին տարիների ընթացքում իրենց բարեգործություններով և կազմակերպական ջանքերով Մատենադարանի տարածքը զգալիորեն մեծացրին, արդիականացրին, պայմանները բարելավեցին, բայց մեր ազգի հայրենի ու արտերկրի հատվածներում քանի՝ հոգի ավելացավ հայրենի ու նաև սփյուռքյան մատենադարանների բովանդակությունը հասկացողների, դրանով առաջնորդվողների մեջ...

Մոտավորապես նույնը կարելի է ասել Երուսաղեմի Յայոց պատրիարքության ու Մխիթարյան միաբանության մատենադարանների մասին ու նաև մեր տաճարների, եկեղեցիների ու այլ նվիրական արժեքների մասին:

Ինչո՞ւ է այստեղ այդ մասին նշվում, այն էլ՝ այդպիսի տարակուսանքով: Նշվում է, որովհետև այս աշխարհում ջանքը, արարքը, գործն իրենց արդյունքով են որոշվում: Որովհետև Յայատանում, փառք Աստուծո, վերականգնվող և նորոգ կառուցվող եկեղեցիների ու կղերականների քանակի աննա-

խաղեա ավելացումը և Մատենադարանի էլ ավելի մեծացումը, որ ունեն մեր ազգի (թե՛ հոգևոր և թե՛ աշխարհիկ) ամենանվիրական արժեքներն արտահայտելու շատ մեծ կարողություն, պետք է մեր մեջ ավելացնեին ազնվությունը, առաքինությունը, շիտակությունը, սկզբունքայնությունը, գաղափարականությունը, բարոյականությունը, ուղղամտությունը, գրասրտությունը, ճշմարտախոսությունը և սրանց նման շատ այլ հատկություններ: Եվ դրանց արդյունքում պետք է տարակուսանք առաջացնող վերը նշվածները, մեր ազատազուրկ անցյալի հիշողության մեջ միայն մնալով, իայ կյանքում դադարեին ամեն տեսակի անպատասխանատվություն, անպարտաճանաչություն, վատնում ու էլ չասած՝ բոլոր չարիքների աղբյուր հավատարմագրկությունն ու նյութապաշտությունը և դրանց առաջնային հետևանքը՝ գաղափարագրկությունը, բարոյագրկությունը, արատավոր կենսակերպը, կոռուպցիայի տարբեր դրսերումների տարածումը և դրանց ամրապնդումը՝ վերևից ներքև և ներքևից վերև...

Ու եթե սա է մեր ազգային՝ հարածունորեն անկում ապրող վիճակը, նշանակում է, նախ՝ այդ ընթացքը կանգնեցնելու և վերամբարձ ընթացք որդեգրելու համար անխախտ պայման է արմատական վերափոխությունը: Փոփոխություն բոլոր կողմերից, որն սկսվում է հավատքի հանդեա մեր վերաբերնունքից, որով և որոշվում է ազգի (հետևապես և երկրի ու պետականության) գաղափարի ու բարոյականության ինչ լինելը. այսինքն՝ ազգի ներքին որակով ու հարաբերություններով ինչը արող և միցունակ լինելն արևի տակ ազատ, անկախ, ինքնաբավ (բարգավաճ) ու նաև պատվով՝ Աստվածահան կյանքով ապրելու համար:

Ուրբար, 18 - 11 - 2011թ., ժամը՝ 24:00

## **ԴՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Դրականն ու բացասականը, լավն ու վատը, և վերջապես բարին ու չարը աշխարհում ամեն տեղ կան՝ պայքարի կամ որևէ իրարամերժության մեջ։ Այդպես է նաև մեր մարմնի մեջ, մեր արյան մեջ, մեր բջիջներում և մեր զգայարաններում ու զգացմունքներում։ Ու այդպես է նաև մարդկային հարաբերությունների մեջ՝ ընտանեկան, ընկերային, ազգային, ինչպես նաև ազգերի՝ համայն մարդկության հարաբերությունների մեջ։

Երբ երկու կողմերի հարաբերությունը հանդարտ է լինում՝ դրականի, լավի, բարու գերակշռությամբ, այդ վիճակը կոչում ենք խաղաղություն, այսինքն՝ **ծնունդ և բերկրանք առաջացնող կյանք**։ Ու այդ խաղաղությունը փոխադրում է ալեկոծության և փոթորիկների՝ դրականի, լավի, բարու տկարանալով, թուլանալով, հիվանդանալով ու ի վերջո՝ պարտությամբ։ Եվ դա լինում է ֆիզիկականից մինչև հոգեկան, գաղափարական, բարոյական ու ըստ այնմ՝ կենցաղային վիճակներում։ Որպես կանոն՝ չի լինում մանավանդ երկարատև համընդհանուր հանդարտություն, խաղաղություն՝ դրականի, լավի, բարու չեզոքությամբ, անհոգությամբ ու անտարբերությամբ։ Չի լինում, որովհետև դրականի, լավի, բարու հակադիր կողմը միշտ զգոն ու պատրաստ է լինում ուժով հարվածելով և կամ խարեւթյամբ ապակողմնորոշելով ու այլասերելով ոչնչացնելու և դրանով իր նպատակն իրականացնելով գերիշխելու համար։ Այդպիսով, պայքարը լինում է շարունակական...

Իսկ երկնային, տիեզերական գոյավվիճակի (հարաբերությունների) հավասարակշռությամբ խաղաղությունը մասշտաբով ու բովանդակությամբ (թեև անշափ մեծ տարբերությամբ, սակայն) նույն է ձևով՝ մարդու ժառանգակիր (անշափ փոքր) բջիջներում։

Երբ այսպիսին կամ մոտավորապես այսպիսին է վիճակը թե՝ տիեզերքում և թե՝ մարդկային կյանքում. հարց՝ ինչո՞ւ մեր ազգն ընկավ երկարատև թշվառության մեջ՝ մինչև իսկ ցեղասպանություն ու աներևակայելի ցավ, նվաստացում, տառապանք, կորուստներ, ազտագրկություն, պանդխտություն ու զրկանք: Զրկանք և զրկանք, այն էլ երկարատև զրկանք: Զրկանք բնականոն կյանքից՝ անձնապես ու ազգովին զարգանալու, աճելու, ազատ հայրենիք ունենալու, այն շենացնելու և վերջապես առանց ճնշման, ցավի, տառապանքի ու նաև ամորի երջանիկ ապրելու հնարավորությունից: Ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ:

Եվ իինա էլ հուրախություն թշնամիների՝ բաժան-բաժան վիճակն ու իրար դեմ դառնությամբ լի դավերն ու նաև կարիքն ու անապահովությունը: Ինչո՞ւ: Ինչո՞ւ է մեր այս և դրանից էլ վատ վիճակը, և ինչպես պետք է դուրս գալ դրանից:

Շատ զրկանքներ կարելի է կրել, տանել և շատ նեղությունների համբերել, եթե հասկանալի, տրամաբանելի և ընդունելի լինի դրանց պատճառը և ինչուն: Այն, թե ի վերելք ազգի՝, հայրենիքի՝, պետականության կատարվեցին անասելի ցավը, զրկանքները, նեղությունները, թե՝ հուրախություն մեզ ոչնչացնել ուզողների...

Մեր կրած և շարունակվող դժվարությունների ու ցավերի պատճառների մի մասը (որ ինչ-որ չափով մեզնից դուրս կարելի է համարել) գուցե մեզ համար հասկանալի, տրամաբանական և դրա համար էլ ընդունելի լինի, հետևապես՝ տանելի ու նաև ամոքելի: Սակայն մեր սաստկացող ցավալի դժվարությունների մեջ մասն ակնհայտորեն ներսից՝ մեր իսկ պատճառով լինելով, անօգուտ է դրա համար ընդունելի հասկացողություն, տրամաբանություն ու առավել ևս՝ արդարացում ու համակերպում փնտրել:

Եվ սա, լինելով շատ վատ ու կրկնակի՝ ցավալի, մյուս կողմից էլ զավեշտալիորեն ուրախալի է թվում, քանի որ իինականում մենք լինելով կործանումների պատճառը, մենք էլ կարող ենք և պարտավոր ենք այն վերացնել՝ վերակառուցելով, վերականգնելով, եղածից նույնիսկ ավելի կենարարն ու

Վերասլա՞ցը ստեղծելով: Ուրեմն՝ մեզնից է կախված մեր մարդ, իսկական հայ մարդ դառնալը, իսկական հայ ազգ դառնալը ու նաև հավատավոր, արդար, կենսունակ, ապահով ու բարգավաճ հայկական պետություն ունենալուն արժանի դառնալը: Ուրեմն՝ մեր գործն ավելի դյուրին է դառնուն նրանով, որ մեր նախնիներն այդ աստիճանի բարձրացել էին... Ուրեմն՝ մեր ժառանգակիր բջիջներն էլ կարող են գործի անցնել:

Այո՛, միսիքարվելու բավականին բան կա, և հուսահատվելու, լքելու, ուրանալու այնքան էլ բան չկա: Եվ չի լինի, եթե ազգն ազնիվ տերեր ունենա, որ իրենց տիրությունը ծառայությամբ են կատարում՝ սովորելով Տիրոջից և Նրան հավատարիմ՝ անցյալի մեր մեծերից: Իսկական մեծերից: Տիրոջ առաջ պատասխանատո՛ւ, Նրան հարազա՞տ ու հավատարի՞ն ծառայած հայոց մեծերից:

Եականորեն կարևոր է, ուրեմն, որ մեր ազգի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունները գտնեն և մեր ժողովրդին ներկայացնեն այս իրականության պատճառներն ու անհայտ մնացած հարցերի պատասխանները:

Դրա համար, թեև ուշացած, գուցե պետք է քննել ու գնահատել նախնիների արարքնե՞րը ու նաև հատկապես նրանց ու մեր մոտ անցյալի և ժամանակակիցների շեղումնե՞րը: Եվ շեղումներից հետո համառորեն դրանք չուղելու, չվերացնելու անզգամությո՞ւնը, հետո էլ՝ անտարբերությո՞ւնը և կամ հուսահատությունն ու դասալքո՞ւնը: Եվ այդ քննությունից, գնահատականից և համապատասխան եզրակացության գալուց հետո մի՞թե չպետք է օրինակ վերցնել **Անառակ որդուց կամ Յոր Երանելուց և կամ Գևորգ Մարգարետունուց և նրանց նմաններից, բայց հատկապես ու անպայման մեր Տիրոջից՝ Յիսուս Քրիստոսից:**

Ծաբաթ, 19 - 12 - 2015թ., ժամը 13:30

## **ԶԱՆՔԵ՞Ր, ԱՅՈ՛, ԲԱՅՑԻ ԻՆՉՊԻՍԻ՞ ԵՎ ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ**

Անկախացած Հայաստանում զբոսաշրջության համար կատարվող համեմատաբար մեծ ջանքերի ու միջոցների ներդրումը շատերին գուցե տարօրինակ թվա, եթե ասվի, որ ըստ երևոյթին՝ այնքան էլ ճիշտ և նպատակահարմար չէ՝ տարբեր առումներով:

Հայաստանի Հանրապետությունում տնտեսության այդպիսի ճյուղի շեշտակի մեծացումը, առաջին հերթին, նշանակում է «սպասավորության մասնագիտության» խրախուսում, որն այնքան էլ նպատակահարմար չէ մեր երկրի համար, երբ պետք է արտադրական արդյունաբերություն զարգացնել, այն էլ՝ բարձրակարգ տեխնոլոգիական՝ բարձրակարգ տեխնոլոգիաներով:

Երկրորդ. մեղմ ասած՝ լավագույնս չի ազդում մեր ազգային նկարագրի, հոգեկանության ու նաև կենսաձևի վրա:

Եթե զբոսաշրջության զարգացումն ինչ-որ տեսանկյունից և ոնանց համար էլ ենթադրում է նաև փիառի (PR) ննան մի բան՝ ուղղված մեր երկրի՝ օտարների կողմից ճանաչվածության ընդարձակմանը, մեր մշակույթին, ճարտարապետությանն ու այլ արժեքներին ծանոթացնանը, որով և մեր ազգի ու երկրի նկատմամբ դրական կարծիքների, տրամադրությունների ավելացմանը, ապա դա, ինչքանով էլ իրականության ինչ-որ բաժին ունենա, այնուամենայնիվ, մեղալի միայն մեկ կողմն է. մեղալի մյուս կողմն ասում է. եթե քո պատմական անցյալը բարձրակարգ է, գեղեցիկ ու արդար է, սակայն ներկան այդպիսին չէ՝ ցածր է, ապա դրական տպավորության ու կարծիքի մասին խոսք չի՝ կարող լինել՝ այն տրամաբանությամբ, որ եթե անցյալդ խեղճ է, և քո ներկան էլ խեղճ է, ապա քո պատաս-

խանատվությունը մասամբ է դրա համար: Սակայն եթե քո մեծ, հանձարեղ և սուրբ նախնիների շնորհիվ քո անցյալը եղել է վեհ՝ մեծապես արդարությամբ, գեղեցիկ ու պտղաբեր, իսկ ներկադաշտությունը ամբողջությամբ քեզ վրա է, մանավանդ որ արդեն ազատ ես ու պետականացած: Բացի դրանից, քեզ պարտավորեցնում է նաև այն, որ ուրիշները գրո ժառանգությամբ են շոշափելի արդյունքի հասնում, իսկ դու քո հարուստ ժառանգությամբ չես կարողանում անել նույնը, ու նաև ավելին...

Ու այդ փաստի առաջ «հանցանաց» մեղմացուցիչ հանգամանքների մասին պիտի խոսել՝ անողոք թշնամիների շատություն, բազում նեղ, անազատ օրեր և այլն, թե՞ պետք է զգաստանալ, փոխվել, նորոգվել ու անցյալի դասերը (և ոչ միայն անցյալի) լավ սերտելով ու այլևս չփխալվելով՝ դուքս գալ համարյա անկումային վիճակից, անհապաղ լուծել անլուծելի բվացող հարցերը, կատարել խնդիրները և հասնել բարձունքների: Մանավանդ որ ամեն տեսակետից անթույլատրելի է ազգային ու պետական այսպիսի վիճակ քողնել մեր բոռներին, սերունդներին:

Ինչպես կարելի է համակերպվել այն իրականության հետ, որ քառորդ դարից ի վեր այլևս ազատ և համեմատաբար շատ ավելի ապահով ու անկաշկանդ ենք, սակայն մեծ մասամբ (ինչպես տաղանդաշատ Յակոբ Պարոնյանն է ժամանակին ասել) «Յառաջ, հառաջ կպոռանք, հետ-հետ կերթանք»: Եվ, դժբախտաբար, ոչ միայն քանակական հետընթաց, այլևս ու հիմնականում՝ որակական, քանի որ այլասերում է տեղի ունենում. հոգեպես, գաղափարապես, աշխարհայացքով և բարոյականությամբ, ու մեր մի մասն էլ մարդկայնությունից ու հայկականությունից է հեռանում նաև ազահությամբ, պաշտոնի չարաշահումներով ու բալանով... Ու այն մասնակի գարգացումն էլ, որ ունենք (բացառությամբ գուցե մեր քանակի՝ զինված ուժերի), ավելի շատ մակերեսային է, ձևի, մի քիչ էլ քանակի մեջ է, քան բովանդակության:

**Ուրեմն՝ Եգրակացությունն աշխարհասփյուռ և մասնավորապես հայրենի հայությունը, այո՛, անպայման պետք է տնտեսապես ու բազմակողմանիորեն զարգանա՛՝ դրա բոլոր դրական հետևանքներով, բայց դա պետք է լինի մեր երկնաշնորհ՝ մարդակայել ու հայավայել սկզբունքով՝ հնարանտությամբ, փութաջանությամբ և մեր ավանդական ազնիվ վերաբերմունքով ու աշխատանքով։ Որը և մեր համապարփակ հաջողության գրավականն է։**

Այս Եգրակացությանը մի՞թե չպետք է հայությունն իրացել լինի ու մեր այս իրականության պատմական ճշմարտությամբ առաջնորդվի։ Եվ դրա համար հայ հոգևոր ու աշխարհիկ դեկավարները, իրենց հաստատություններով հանդերձ, մի՞թե պարտավոր չեն իրազեկել, հասկացնել համայն հայությանը և յուրաքանչյուր հայի՝ սկսած իր մանկությունից, որ հայրենի ստեղծվող տնտեսությունն ու ժողովրդի ցանկալի կենսանակարդակը չի կարելի բարձրացնել՝ շատացնելով խաղատները՝ կազինոները և «տոտոնները», «վիվարոնները», «լոտոնները», ջակուգիններով կասկածելի «ռեստորան-հյուրանոցները» և նման այլ փաստացի պարապությունները, դատարկությունները և կամ չարիքները։

Այս և նման այլ արատավոր ու անիրավություններով հագեցած հանցավոր միջոցնե՞րն են կոչվելու «հայրենիքի զարգացման ուղի»։ Եվ այդ «զարգացման մը» է ստեղծվելու ազգի ու հայրենիքի պաշտպանության հարածուն կարիքների ու նոր սերնդի կրթության, ժողովրդի առողջապահության, շինարարության և նրա այլ կարիքների բավարարման բյուջեն։ Դրա՞նք են հայկական տոհմիկ, ավանդական արժեքներով, բարենասնություններով գործարարությանը փոխարինելու եկած՝ ժամանակակից «հնարամտությամբ, ստեղծագործությամբ ու աշխատասիրությամբ բիզնեսները»։ Մինչդեռ դրանք հայության համար, հայ հասարակության համար ախտակիր ու վնասակար, հանցավոր ու անհեռանկար «բիզնեսներ» են, և պետությունն էլ դրանք պիտի խրախուսի՞։

Ի՞նչ պետք է անել: Բավականին շատ բան պետք է անել, որ մոռացել ենք անել, և շատ բան այլս չպետք է անել, որ սովորել ենք անել՝ սկսած հոգեկանից, գաղափարականից, բարոյականից՝ ազնիվ ու պատվավորից և ըստ այն՝ կրթությունից, դաստիարակությունից, մշակույթից, ներազգային պետական ու հասարակական հարաբերություններից: Մինչդեռ հրամայական է բոլորին՝ նորից սովորելը (հատկապես մոռացված ազգայինը) և հոգեկան ու բարոյական տոհմիկ արժեքներով հայավայել ապրելը, գործելը, աշխատելը, միշտ, ամենուր, ամեն ինչում պետական շահերը պաշտպանելը և իսկական արդյունավետ տնտեսություն ու իսկական արտաքին ու նաև ներքին՝ ազգային հարաբերություններ վարելը:

Եթե վաղ շրջանի մեր նախնիք այնքան հնուտ էին, որ կարող էին բարձրորակ ապրանք արտադրել և գետերով արտահանել, իսկ ավելի ուշ՝ առանց որևէ պետական աջակցության՝ Նիդեռլանդներից և մեզ ավելի մոտ վայրերից մինչև Յնդկաստան և դեռ այն կողմ վաճառականությամբ գրադկել՝ դրա համար, բացի ուղտերի քարավաններից, նաև հեռավոր նավարկության առագաստավոր նավատորմ ստեղծելով ու գործարկելով, ապա ազգային-պետական առումով մեր այսօրվա խեղճությունն արդյոք կարո՞ղ է արդարացում ունենալ: Մանավանդ որ հիմնականում դա տեղի է ունենում մեր էությունը բովանդակող հոգեկան, գաղափարական ու բարոյական արժեքների՝ մեր նախնիների կողմից մեզ թողած ժառանգության անտեսման և մեծ չափով նաև ուրացման պատճառով:

### **Ուրացման հետևանք ինչպիսի՝ թշվառություն:**

Եվ «Զարթնիր, լա՛ո»-ն այսօր շատ բարձրաձայն և շատ հաճախ մեր մեջ մենք մեզ պետք է ասենք, մեր հոգիներում, մեր սրտերում, մեր մտքերում ու նաև որպես *ահազանգիշեցում-զգուշացում* գոչենք՝ տեսնելու ու արմատախիլ անելով հեռացնելու համար մեր ներազգային հարաբերությունների մեջ մտած, հաստատված և տիրական դարձած դրւշմանին՝ մեր հոգեկանության, գաղափարականության, բարոյականության

ու ըստ այնմ՝ ազգային կենցաղավարության ու ներազգային հարաբերությունների թշնամուն:

Ինչպես անել դա. զարթնեցնելով մեր հոգիներն ու վերահաստատելով մեր հավատարմությունը՝ հանդեպ Երկնավոր Արարիչ Յոր, ամենայն Փրկիչ Աստվածորդու և շնորհատուր Սուրբ Յոգու՝ մեր անձերի ու ազգի հավատքով, դրանից բխող և դրա վրա հիմնված գաղափարականությամբ, բարոյականությամբ և դրանցով՝ վերականգնելով, բարձրացնելով ու վերահաստատելով մեր մարդկային-ազգային նվիրումը, անկեղծությունը, պատվախնդրությունը, պատասխանատվությունը և մեր ուղղահայաց ու հորիզոնական հարաբերություններում՝ սերն ու ազնվությունը, որոնք, լինելով Աստվածապատգամ և Աստվածահածո, լինում են նաև Աստվածապաշտպան:

**Ու երբ մենք այդպիսին ու այդ վիճակում լինենք, որով և Աստված մեր ազգի հետ կլինի՝ ո՞վ, ո՞ր չարն ու անարդարը կարող են հայության առաջ կանգնել:**

Ընդհակառակը՝ կլինի այնպես, որ մեր բարեկամները կշատանան, հակառակորդներն ինքնըստինքյան կնվազեն, ու մեր մեծ ընտանիք մարդկության անդամները կցանկանան իրենց եղբայրակից հայությունից սովորել, նրա հետ լինել և միշտ գործակցել: Յայությունն էլ սրտաբուխ պատրաստականությամբ միշտ կընդառաջի, քանի որ այդ էր ու այդ էլ կլինի իր նոր «կոչումն ու ընտրությունը»՝ տրված իրեն մշտապաշտպան Յորից:

Սա միայն տեսլական չէ հայության համար. սա նրա խւկական, բնածին Յայ Ազգային Գաղափարախոսության ու հայ ազգային-պետական ներքին ու արտաքին դոկտրինների առանցքն է, որի մասին պետք է յուրաքանչյուր հայ համապատասխանորեն իրազեկվի, որով և ընկալի, սովորի մանկապարտեզներից մինչև ամենուր, ամենայն «Վերևները» և Քրիստոսավկա հավատարմությամբ կենսագործի ազգովին՝

- ազգային պետական ծրագրավորմանը,
- ազգային քաղաքացիական ու գինվորական կարգապահությամբ,

- հավատքից բխող հոգու պարտքի գաղափարական ու բարոյական հարատև հետևողականությամբ:

Ու երբ սա լինի, կլինի նաև՝

Երկնային գոհություն, օրինություն, օգնություն և

հաջողությունների, հաղթանակների երաշխավորություն՝  
ԱՍՎԱԾՈՒՅՑ:

Երեքշաբթի, 14 - 01 - 2014թ., ժամը 19:00

## **ԽՈՐՀՐԴԱՆԻՇ**

### **(Սուրբ և սրբացնող՝ կյանք հաղորդող)**

Խորհրդանիշը՝ սիմվոլը, կարևոր է նաև նրանով, որ տեղեկություն է տալիս, իրազեկում է. խորհրդանշվողը գուցեն անհայտանում, վերանում, կորչում է, սակայն խորհրդանիշը մնում է, ապրում, հարատևում:

Եական է, երբ խորհրդանիշը խորհրդանշում է բարի ստեղծագործություն, նվիրական գործունեություն և սուրբ եռություն:

Խորհրդանիշների կարևորությունը, ինչպես և դրանց նշանակությունն ու ընդունումը մարդկային կյանքում սկսեց փոխվել աշխարհայացքների փոփոխության հետ ու նաև՝ բարոյական արժեքների փոփոխության հետ, բայց հիմնականում սկսեց փոխվել հավատքը պակասելու հետ:

Ի՞նչ խորհրդանիշներ մենք՝ հայերս, կարող ենք վերականգնել, որդեգորել մեր անցյալից, մեր նախնիներից կամ նորոգ ստեղծել հիմա, հոգեբարոյական մեր այս վիճակում, որ կարող լինեն մեզ օգնել մեր ունեցած այնքան էական նպատակների ու խնդիրների կենսագործման համար:

Ե՞րբ ու ինչպիսի՞ն են եղել մեր նախնիների, մեր հայրերի նվիրական խորհրդանիշները:

Եվ ինչպես ենք վերաբերվում մեր գլխավոր, առաջնային և կյանք նշանակող ու նվիրող խորհրդանիշին՝ Սուրբ Խաչի

Աշանին: Արդյո՞ք այս դարձրել ենք ավելի շատ զարդ և գնահատում ենք նրա պատրաստման նյութի, զարդարանքի ու որպես արվեստի գործի արժեքով...

Մեր կյանքում ու առօրյայում գոյություն ունեցող հարցերի, խնդիրների մեջ գուցե թվա, համարվի, թե «պարզունակ, տասներորդական ու նաև ոչ շատ հասկանալի» հարց է շոշափվում: Եվ իենց դա՝ է խնդիրը, որ տվյալ հարցը կարող է և այդպես ընկալվել: Բայց մի՞թե այդպես է: Շատ ափսոս, որ, ըստ երևույթին, մեր մեծամասնությունն այդպես կարող է մտածել կամ «լավագույն» դեպքում՝ դրա նկատմամբ անտարբեր լինել...

Ի՞նչ անենք, ինչպե՞ս մտնենք կյանքի ճիշտ հունի մեջ: Ո՞վ կամ ի՞նչը մեզ կօգնի, եթե ոչ իենց այդ խաչի հավատքը: Սակայն ինչպե՞ս հավատավորվենք անկեղծորեն՝ առանց ձևականության և պահի ազդեցության ներքո: Այլ հավատքն ունենանք լի ու անսասան, դրան հավատարիմ լինենք մեր ամբո՞ղջ եռթյամբ և դրանով ապրենք ու գործենք միշտ, ամենուր ու ամեն ինչում՝ բոլո՞ր պայմաններում:

- Եվ դրա համար ի՞նչ է պետք անել:

- Պետք է աղորել, Արարիչ Երկնավոր Յորը խնդրել է պետք՝ մաքուր սրտով, որով և հետևողական, հարատև ու ազնիվ ծառայություն է պետք ազգին, հայրենիքին, պետությանը ու անընկրկուն հավատարմություն մեր հավատքին:

- Ուրե՞մն:

- Ուրեմն՝ մաքրենք մեր սրտերը խաչի հավատքով՝ ստանալու համար անհրաժեշտ շնորհը, իմաստությունը, գիտությունն ու կարողությունը՝ հաղթահարելու ամեն փորձանք ու փորձություն, չարի որոգայք ու գայթակղություն և... մեր ստացած Սուրբ Յոգու շնորհներով սրբացած սրտով ընդմիշտ ապրենք վերելք այժմ՝ այս կյանքում ու ապրենք երանությամբ հավիտյան՝ Երկնային կյանքում:

Եվ սա ազդ է հային ու հայությանը, որ գալիս է ոչ այնքան ահազանգից, ինչքան սուրբ ղողացներից՝ ուղղված մեր սրտերին, հոգիներին ու մտքերին. մաքրված սրտերին և հա-

Վատավոր հոգիներին ու ամենայն պղծությունից զերծ մտքերին, որ ունեին մեր բազում նախնիները, մեր մեծերը, սրբերը, նահատակները, որոնցով և արժանացած իրական, հավերժական կյանքին, որը և ժառանգություն բողեցին մեզ՝ իրենց հետնորդներին՝ պայմանով, որ հավատարիմ լինենք Սուրբ հավատքին:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ  
(Հավելված)

Ա Հ Ա Զ Ա Ն Գ,  
Ո Բ Է Զ Ե Ն Ք Լ Ս Ո Ւ Մ  
(Մինչև ե՞րբ ու մինչև ո՞ւր)

## ԱՆԴՐԱՊԴԱՐՁ ԱՐՅԱԽ-ՂԱՐԱԲԱԴ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆՔ

**Եթե հայսնի է, որ կա Լեռնային  
Ղարաբաղ, ապա պետք է հայսնի  
լինի, որ կա նաև Դաշտային Ղա-  
րաբաղ և ընդհանրապես Ղարաբաղ՝  
Արցախ, որի մասին միշտ պետք է  
լինեն հայկական միտք, խոր ու  
արարք, գործ:**

### ԱՐՅԱԽ-ՂԱՐԱԲԱԴ

Ու այդ Արցախ-Ծնդհանրականը ոչ միայն պատմականութեն, այլև մինչև մեր պապերի և նոյնիսկ մեր այսօրյա տարեցների ժամանակ ճնշող մեծամասնությամբ եղել է հայա-  
րնակ՝ ԴԱՅԿԱԿԱՆ՝ հակառակ ամեն տեսակ երկարատև թշնա-  
մական արշավանքների, բազում փորձությունների և տարբեր  
կողմների, այսպես կոչված, «հաշտարար, խաղաղասիրական»  
քաղաքականության, ու ըստ այնմ՝ մոտեցումների, միջանտու-  
թյունների ու նաև բռնությունների:

Ինչո՞ւ: Ինչո՞ւ է հայկական Արցախ-Ղարաբաղն այդ  
ամենին դիմացել ու մնացել է հայկական: Դրա համար, ըստ  
բազում փաստերի, կա երկու հիմնական պատճառ (որոնց հա-  
մար պետք է ամեն ինչ անել, որ դրանք լինեն մշտական ու  
հաստատուն):

- առաջին՝ արցախցի (իսկական, հավատքով արցախցի)  
հայը շատ է սիրել իր հայրենի Արցախը, նրա հողն ու  
ջուրը...

- երկրորդ ու ամենաէականը (իսկական)՝ արցախցի  
հայն իր պապենական ժառանգություն-ծննդավայր Արցախն  
ամբողջ սրտով, հոգով ու մտայնությամբ համարել է ու այժմ էլ  
(գոնե իր մեկ մասով) համարում է

**ԴԱՅԿԱԿԱՆ ԱՍՎԱԾԱՇՆՈՐԴ ՈՒ ԱՍՎԱԾԱՌՈՒՐ,**

որով և դրա հանդեա իր հարազատությունը, պարտաճանաչությունն ու պատասխանատվությունը՝

### **ԱՍՏՎԱԾՄԱՌԱՍՎԱ:**

Դետևապես հայի համար այդպիսի հայրենիքը **անփոխարինելի ու անզիջելի էր, և և լինելու և այնքան ժամանակ, ինչքան երկրագնդի վրա կլինի հայի Դայկյան շունչը՝ օգնությանը**

### **ԱՍՏՈՒԾՈՒ:**

Եվ հայի այս դարավոր ըմբռնումն ու նվիրումը նաև են կազմում հավերժական

### **Յայ Ազգային Գաղափարախոսության,**

որը բխում է և հիմնված է Աստուծոն հավատքի վրա՝

### **Ավետարանով ու Խաչով:**

Մեզ՝ հայերիս, այս ասվածին ու այդ մասին աշխարհին հայտարարելուն հարկ է ավելացնել նաև

### **ԼեռնաՅին Ղարսը Ու ճշՄԱՐՏՈՒԹՅԱՆ**

(մասին) քաղաքական էական փաստերը:

04 - 04 - 2016թ.

### **ՀՈՒՇԱԳԻՐ՝**

**ուղղված հայության, Հայաստանի և հատկապես Արցախի**

**հանդեա նաև հոգեկան**

**գիտակցությամբ ու հոգու պատասխանատվությամբ**

**շահագրգիռ կողմերին**

Ծուրջ քառորդ դար հայ և միջազգային իրականության մեջ բավականին ակտիվ են արձարժուում **Լեռնային Ղարաբաղի քաղաքական կարգավիճակին** վերաբերող հարցերը, որոնցից ճշմարիտը, իրականն ու արդարը, բնականաբար, մեկն է և **համապատասխանում է Լեռնային Ղարաբաղի Դամրապետության (ԼՂԴ)** ու **հայ ժողովրդի կենսական շահերին**, բայց դրանով հանդերձ՝ **ԼՂԴ-ի օրինական, ծիշտ ու արդար**

**Կարգավիճակը**, մեր, մեղմ ասած, որոշակի շփոթվածության և բացքողումների պատճառով հակառակորդը (հակառակորդ-ները) դիվային աճպարարություններով (հակառակ ԼՂՅ-ի և հայ ժողովորդի կենսական շահերի) մինչև հիմա կարողանում է նենգափոխել ու այդպես ներկայացնել աշխարհին՝ շահագրգիռ երկրներին, պետություններին, կազմակերպություններին և նույնիսկ մեզ: Ու այդ անում է, դժբախտաբար, նաև **մե՞ր իսկ՝ հայկական կողմի որոշակի գիտակից ու անգիտակից մասնակցությամբ:**

Դա արվում է՝ մեզ օցելով **անհիմն վիճաբանության ծուղակը**, թե **միջազգային ո՞ր իրավունքն է գերակա՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը**, թե՝ պետությունների տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքը: Եվ մենք, հիմնականում գիտենալով, որ այդ երկու իրավունքներն էլ ԼՂՅ-ի դեպքում ոչ մի կապ չունեն Աղրբեջան կոչվող պետության հետ, այնուամենայիվ, թույլ ենք տալիս, որ Աղրբեջանը խլի, յուրացնի դրանցից մեկը՝ իրեն չպատկանող, չվերաբերող տարածքային ամբողջականության սկզբունքը, որով **մենք ավագակաբարո ագրեսորին նվիրում ենք այդ սկզբունքից օգտվելու հնարավորությունը՝ դարձնելով նրան ոչ միայն դարաբաղյան «հակամարտության» քննարկման և բանակցությունների կողմ, այլև պահանջատեր:**

Մինչեւ ստեղծված այս իրավիճակը որոշակի ճշտությամբ փոփոխված **Արցախ-Ղարաբաղի ճշմարտության** տեսանկյունով դիտելիս ակնհայտ է դառնում, որ դարաբաղյան հարցի ներկայիս ծևաչափով ու օրակարգով բանակցությունները **հայկական կողմի դեմ լարված քաղաքական-դիվանագիտական ծուղակ են**, որոնց մեջ ընկած՝ մենք բազմաթիվ, բազմաբնույթ վնասներ ենք կրում, թեև եղել է դեպք, երբ մեր կողմից ամենաբարձր մակարդակով հնչեցվել է իրականությունը, թե **Աղրբեջանը ի՞նչ կապ ունի, որ գործ ու իրավունք էլ ունենա Ղարաբաղի հարցով բանակցությունների մասնակցելու:**

Բայց տարիներ առաջ արված այդ ճիշտ և հույժ կարևոր

հայտարարությունն այլևս ոչ ինչում է, ոչ էլ գործադրվում է՝ տեղը զիջելով Բաքվի և նրա աջակիցների, ինչպես նաև անտարբերների կամ խարվածների և կամ խնդրին անտեղյակների (լավագույն դեպքում) այն վարկածին, թե դարաբաղյան խնդիրը պետք է կարգավորվի՝ հարգելով թե՛ Աղրբեջանի տարածքային ամբողջականությունը և թե՛ Լեռնային Ղարաբաղի ժողովունի ինքնորոշման իրավունքը: Մինչեւ այդ ինքնորոշումը արդեն իսկ կատարվել է միջազգային իրավունքի բոլոր կանոններով և միաժամանակ՝ բոլորովին չխախտելով Աղրբեջանի տարածքային ամբողջականությունը, այն պարզ պատճառով, որ Լեռնային Ղարաբաղը երբեք Աղրբեջանական Ղանրապետության օրինական մաս չի կազմել:

**Յետևապես, հարցի այդ կերպ ներկայացումը սիսալ է, կեղծ է, անհիմն է և ոչ մի կերպ չի համապատասխանում փաստացի իրականությանը՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ճԸՍԱՐՏՈՒԹՅԱՆԸ, որովհետև ի տարբերություն Աղրբեջանի՝ փաստորեն, ԼՂԴ-ին են վերաբերում և պատկանում երկու իրավունքներն ել՝ թե՛ ժողովուրդների ինքնորոշման միջազգային իրավունքը և թե՛ պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը:**

**Սրան հակառակ պնդումը, ինչպես ասվեց, սուտ է, կեղծ է, անհիմն է և ոչ մի կերպ չի համապատասխանում փաստացի իրականությանը՝ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ճԸՍԱՐՏՈՒԹՅԱՆԸ, քանի որ ըստ ճԸՍԱՐՏՈՒԹՅԱՆ՝**

- **Արցախ-Ղարաբաղը և տվյալ դեպքում Լեռնային Արցախ-Ղարաբաղը երբեք չեն եղել Աղրբեջան կոչվող երկրի մաս, առավել ևս՝ Աղրբեջան կոչվող պետության տարածաշրջան:**

- **Լեռնային Ղարաբաղի Ղանրապետության (1991 թվականից ի վեր) գոյությունը, ի տարբերություն Աղրբեջանի, իհմնված է միջազգային իրավունքի վրա: Նրա գոյությունը միջազգային իրավունքի համաձայն է, քանի որ այն իրականացվել է ըստ ԽՍՀՄ Սահմանադրության՝ միակ փաստաթղթի, որով աշխարհը և մասնավորապես ՄԱԿ-ը, Արևմտյան**

**Երկրները ճանաչում են խորհրդային նախկին հանրապետությունների անկախությունը, սահմանները և այլն:**

Սա՛ է իրականությունը, որն ինչքան շուտ հասկանան, ըմբռնեն հայկական կողմն, բոլոր արդարամիտ և շահագրգիռ կողմներն ու նաև հակառակորդները (եթե ուզենան հասկանալ), ապա այնքան շուտ կրտադարձն, կվերանան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանդեպ ապօրինությունները, ազրեսիվ հանցագործությունները, և դրանց հետ՝ երկկողմանի ու ընդհանրական տառապանքները, զոհերը, ինչպես նաև՝ տեսանելի ու անտեսանելի տարբեր ավելի մեծ վտանգները՝ թե երկու կողմների և թե՝ տարածաշրջանի համար ու նաև դրանից բավականին հեռու:

Ու այս իրականության գիտակցությամբ համակված Լեռնային Ղարաբաղ-Արցախը և համայն հայությունը աշխարհի արդարամիտ կողմների աջակցությամբ, մեկընդիշտ կյանքի կկոչեն Լեռնային Ղարաբաղի ճշմարտությունը:

Այս ճշմարտության լույսի ներքո ապրող, աշխատող, արարող և իր բնածին, արդար իրավունքները պաշտպանող Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության դեմ որևէ երկրի, տվյալ դեպքում՝ Աղբեքանի ու նաև Թուրքիո կողմից բացահայտորեն կատարված և շարունակվող ռազմական ու թշնամական այլ գործողությունները **նախահարձակում են** կամ դրա նախապատրաստումն են՝ ուղեկցված պատերազմական հանցագործություններով:

Դետևապես, այդ առումներով պետք է՝

- դրանց պատասխանատունները վճռականորեն զսպվեն, դատապարտվեն և պատժվեն՝ համաձայն միջազգային օրենքների,

- փոխվեն բանակցությունների ձևաչափը, օրակարգը, մասնակցությունը, կամ ընդհանրապես փոխվեն բանակցությունները՝ համաձայն վճռական նոր ջանքերով բացահայտված ճշՄԱՐՏՈՒԹՅԱՆ, որ Ղարաբաղը և տվյալ դեպքում Լեռնային Ղարաբաղ-Արցախը երբեք չի՝ պատկանել, չի՝ պատ-

կանում և մարդկության բոլոր օրենքներով չի՝ կարող պատկանել Ադրբեյջան կոչվող պետությանը,

- Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետությունն անհապաղ ճանաչվի, պաշտպանվի ու աջակցություն ստանա աշխարհի բոլոր արդարամիտ, օրինապահ, ժողովրդավար ու մարդու իրավունքները հարգող և պաշտպանող երկրների, պետությունների ու միջազգային համապատասխան կազմակերպությունների կողմից,

- Հոգու պատասխանատվությամբ շահագրգիռ մարդկանց կոչ անել համախմբվելու՝ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ, ՏԱՐԱԾԵԼՈՎ ԵՎ ԿՅԱՆՔԻ ԿՈՉԵԼՈՎ ճշՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽ-ՂԱՐԱԲԱԴ ՄԱՍԻՆ՝ որպես աշխարհի անհետաձգելի, կարևորագույն խնդիր և պարտականություն,

- անհապաղ գործել՝ համապարփակ իրականություն դարձնելու Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության միջազգային ճանաչումը:

Ու այդ բոլորը՝ Աստուծո օգնությամբ:

Երեքշաբթի, 09 - 07 - 2019թ., ժամը 23:05

## **ԴՐԱԿԱՆ, ՕԳՏԱԿԱՐ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ**

Վրաստանում, հատկապես մայրաքաղաք Թբիլիսիում, հակակառավարական բուռն ցույցեր են տեղի ունենում՝ պահանջելով ղեկավարների հրաժարականներ: Այդ ընթացքուն հնչում են հակառակական մեղադրանքներ ու վիրավորանքներ՝ «Ռուսաստան-օկուպանտ», «Ռուսաստանը մեր թշնամին է» և այլն:

Այս կապակցությամբ Ռուսիոն կողմից եղան տարբեր ձեռնարկումներ Վրաստանի դեմ, նաև՝ նախագահ Պուտինի կողմից որոշ անդրադարձներ, որոնցից մեկում առավել ուշագրավն այն էր, որ Ռուսաստանի Ղաշնության ղեկավարը վրացական կողմի ղեկավարների հակառական արտահայտու-

թյունները բացատրեց որպես նրանց՝ իրական պատմությունը չինանալու կամ էլ այն արհամարհելու հետևանք:

Բազում լրագրողների և նրանց նկարահանող սարքերի առաջ կանգնած՝ Վլադիմիր Պուտինն սկսեց մանրանասն իշխատակել Վրաստանի, Արխազիայի, Հարավային Օսեթիայի և Ռուսիո քաղաքական կարգավիճակների պատմական առնչությունները՝ սկսած 1700-ական թվականներից: Նշելով, թե ինչպիսի անկախ վիճակում էին Արխազիան և Հարավային Օսեթիան Վրաստանից, և վերջինիս կողմից ինչ դաժան, անմարդկային միջոցներով դրանք բռնակցվեցին Վրաստանին խորհրդային իշխանության հաստատումից հետո: Նախագահ Պուտինը նշեց նաև, որ դա կատարվում էր նաև Չեկայի միջոցով՝ Ստալինի ցուցումով և Բերիայի ղեկավարությամբ:

Այսինքն՝ Ռուսիո Դաշնության ղեկավարը, քաղաքական-դիվանագիտական իր խոսքում հակադրձելու համար թշնամաբար տրամադրված ու արտահայտվող վրաց ղեկավարների և ժողովրդի միջից հակառակական մեղադրանքներին, բավականին երկար ու մանրանասն վկայակոչում էր Ցարական Ռուսաստանի և Խորհրդային Միության գոյության ժամանակաշրջանների պատմությունը:

Եվ դա մեզ հատկանշական երևաց, որովհետև ոչ միայն Ադրբեյջանի հերոյուրանքներին որպես պատասխան, այլև ընդհանրապես՝ որպես Ադրբեյջանի նենգավոր արարքների ու ագրեսիվ նպատակների բացահայտման միջոց, վաղուց պեսք է մեր գիտական, ակադեմիական, տեղեկատվական և մանավանդ քաղաքական, դիվանագիտական ու նաև (ղերևս կարգին չձևավորված) հանրային դիվանագիտության միջոցներն ավելի տարածուն օգտագործեն, տեղեկացնեն մեր և այլ երկրների, մանավանդ հանրահայտ պատմաբանների, գիտնականների, հասարակական գործիչների, գրողների վկայությունները, հայ ժողովրդի ու Հայաստանի պատմության, տարածաշրջանի պատմության, ինչպես նաև՝ համաշխարհային պատմության մասին:

Եվ դա անեն բոլո՞ր այն ղեպերում, երբ դրա հարկն

ակնհայտորեն կա՝ առանց տեղի տալու ընդիմադիրների և «բարեկամների»՝ այդպես չվարվելու «խորհուրդներին», իբրև թե դա «դուրս է» դիվանագիտական ընդունված գործառույթներից: Եվ դա մեզ մատուցվում էր 1990-ականների սկզբից և եթ, ու մենք շատ եինք ենթարկվում որպես խորհուրդ տրվող այդ, մեղմ ասած, անհեթեր հրահանգավորումներին՝ զգալիորեն վնասելով մեր գերխնդրի լուծմանը: Այդ վիճակը, ըստ երևույթին, էապես չի փոխվել նաև այժմ:

Բոլորովին վատ չի լինի, որ մեր համապատասխան շրջանակները (առնվազն) ծանոթանային նախազահ Պուտինի «բրի-ֆինգներին»՝ սովորելու և օգտվելու դրանցից: Նույնը վերաբերվում է և մեր պատմաբաններին, վերլուծաբաններին, մարդու իրավունքների մասնագետներին և բոլոր նրանց, ովքեր կոչված և կամ շահագրգռված են հայոց և մասնավորապես Արցախի ճշնարտության համաշխարհային, նպատակային իրազեկմանը, բացահայտմամբ, ճանաչմամբ՝ ի պաշտպանություն արդարության, որով և՝ խաղաղության ու համընդիհանուր շահերի:

Ու այդ իրազեկումից դուրս չքողնել մանավանդ Ադրբեցանի և Թուրքիո կողմից պատմության նենգափոխումները և հատկապես դրանցից ու տարրեր այլ մերկապարանոց ստերից խարված, ապակողմնորոշված, ուղեղները լվացված կամ կաշառված և հայության ու Հայաստանի հանդեպ թշնամացած մեղսակից-հանցագործ կողմներին, դրանց տարրեր խավերին ու անհատներին:

Թուրքաբարո քաղաքականությունը, դիվանագիտությունը և միջազգային հարաբերությունները վաղեմի ժամանակներից հայտնի են նենգությամբ, խարդախությամբ և ճշացող ստերով: Դա ծածկելու, կոծկելու համար Թուրքիո և (նրա կողմից հանցավոր կերպով, անգամ ոչ թե պատմական, այլ ժամանակագրական առումով համեմատաբար վերջերս ստեղծված և նրան կցորդ դարձրած) Ադրբեցանի կողմից, առանց միջոցների խտրության, հանցավոր շատ մեծ ջանքեր են գործադրվում, և շատ մեծ գումարներ են կաշառք տրվում՝

առավելագույնս ապակողմնորոշելու, խաբելու և իրենց հանցավոր նպատակներին ծառայեցնելու ինչքան կարող են շատ կողմերի:

Ու այդ առումով միջազգային (քայց խոսենք մեր մասին) հայ պետական դիվանագիտության (ու անպայման ստեղծվելիք գործուն) հանրային դիվանագիտության (և ոչ միայն դրանց) մշտական կարևորագույն խնդիրն է՝ մերկացնել այդ **մեծ սուսոր**, հակահայկական, հակամարդկային, հակակառուցողական, վնասաբեր թուրք-ադրբեջանական (թուրքական պետության) սուսոր:

Երբեմն խոսվում է քաղաքականության ու դիվանագիտության կեղծավորության մասին: Բայց պետք է հանգանանորեն, հստակորեն բացահայտել ու ողջ աշխարհին իրազեկել, որ թուրք-ադրբեջանական սուսոր այլ «շտամ» է՝ մինչև հիմա անգերազանցելի և, դժբախտաբար, անխոցելի: Դրա հակաթույնը՝ պատվաստանյութը, դեռ հայտնաբերված չէ: Կարո՞ղ են դա անել հայկական գիտությունը, հայկական իմաստությունը, հայկական ազնիվ միտքն ու ո՛չ վերջին հերթին՝ հայոց պետությունն ու աշխարհի օրինապահ, արդարամիտ երկրները՝ Տիրոջ օգնությամբ:

Տիրոջ համար անկարելի բան չկա:

Որտեղ Տերն է, այնտեղ հաղթանակ է: Մնում է, որ մենք արժանի լինենք Նրա՝ մեր մեջ ներկայությանը:

Եվ համընդհանուր իրազեկման այդ խնդիրի կատարման գլխավոր չափանիշը պետք է լինի այն, որ այդ երկու ֆաշիստորեն հանցագործ պետությունների ներկայացուցիչների՝ միջազգային որևէ հավաքում երևալը բոլոր մասնակից երկուների ներկայացուցիչների կողմից ընդունվի որպես ահազանգ՝ «Ստախոսները եկան», «Ստախոսն սկսեց խոսել», «Ուշադիր եղեք՝ ստախոսն է խոսում»: Թուրք-ադրբեջանական ներկայացուցիչներին այդպես և նման կերպ ընդունելը, գնահատելը, անվանելն ու դա ընդհանրական դարձնելը ճշմարտության ու արդարության համընդհանուր հաղթանակը կլինի: Նաև՝ գուտ հայկական հաղթանակը, որը, ի դեպ, դուռ կբացի հայոց

բազում այլ հաղթանակների և կարևորագույն խնդիրների կատարման համար:

Ու այդ բոլորը՝ արդարության հաստատմամբ և Տիրոջ փառքի համար:

Յինգաբթի, 21 - 11 - 2019թ., ժամը 08:30

## **ՀԱՅ-ԱԴՐԵՑԱՆԱԿԱՆ ՀԱՐՍՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Յայ-ադրեցանական հարաբերություններում հայ ազգի ու Յայատանի գիշումներն աներևակայելի մեծ են, բազմակողմանի և շատ՝ սկսած Ադրեցանի տարածքի շատ քաղաքներում և շրջաններում հայերի անշարժ ու շարժական գույքի հակիշտակումներից, հոգևոր և մշակութային արժեքների պղծումներից, ոչնչացումներից և հատկապես ցեղասպանական նպատակներով և կամ դրդումներով անցյալ դարի սկզբից ի վեր հայերի կյանքի ու առողջության դեմ կատարած հանցագործությունների դիմաց Ադրեցանի ժողովրդի հանդեպ ոխ ու վրեժիսնդրություն չունենալուց մինչև Ադրեցանի հանցագործ դեկավարությանը մինչև հիմա միջազգային դատի չուալը և համապատասխան հատուցում չպահանջելը:

Նույնիսկ համեմատաբար վերջերս կատարված հայ սպաԳուրգեն Մարգարյանի թե՛ տմարդի և թե՛ գազանային սպանության համար ցմահ ազատազրկման դատապարտվածին կաշառքով և ստով ազատ արձակելը և որպես օրինակ՝ Ադրեցանի նոր սերմնին՝ «հերոսացնելը», Նախիջևանում Յին Զուլայի գերեզմանատան հնագույն խաչքարերը վայրագաբար ոչնչացնելը և գետը լցնելը, Արցախի Եկեղեցիները հրթիռահարելը, այլ սրբություններ ու պատմամշակութային հուշարձաններ պղծելը և այդքանից հետո այդ երկրի դեկավարների հետ հանդիպումներ ունենալը, բանակցելը և նույնիսկ այդ բոլորը դեկավարող իլիամ Ալիսի ծեռքը սեղմելը և միշտ պատրաստակամ լինելով՝ այդպես շարունակելը:

Նույնը վերաբերում է նաև Արցախի Հանրապետության Աղրբեջանի պատճառած բազմաթիվ, բազմաբնույթ ու բազմակողմանի տագնապներին, նրա հարուցած բազում ու բազմատեսակ տառապանքներին, մարդկային կյանքերի խեղումներին ու կորուստներին: Եվ հայ ժողովրդի ու Հայաստանի կողմից մի մե՞ծ (գուցեև անարդար, անիմաստ ու վնասակար) զիջումն էլ այն է, որ Հայաստանը համաձայնվել է Արցախի հարցով տարբեր ու նույնիսկ պետությունների դեկավարների մակարդակով և դիվանագիտական հավասարազոր ձևաչափով բանակցել Աղրբեջանի դեկավարության հետ՝ Լեռնային Ղարաբաղի հարցին «խաղաղ լուծում գտնելու» խաղին:

Բայց որպեսզի իրատեսորեն արագ այդ «խաղաղ լուծումը» խաղալիք չմնա, այլ իսկապես տեղի ունենա (և ներկայիս կարգավիճակով ու ձևաչափով բանակցությունները երազի կամ ողբերգական կատակերգության շատ չնմանվեն), հարկ է, որ.

Հայաստանը ո՞չ թե պայման դնի կամ առաջարկի, որ Արցախի Հանրապետությունը լիիրավ մասնակցություն ունենա հայ-աղրբեջանական բանակցություններին, այլ համաձայնի Աղրբեջանի հետ բանակցել որպես կողմ և ո՞չ այն հարցով, թե Աղրբեջանը ճանաչո՞ւմ է Արցախի Հանրապետությունը (որն արդեն հանրահռչակ փաստ է) և պատրա՞ստ է բարիդրացիական հարաբերությունների, թե՞ ոչ, այլ մինչև այդ տեղի ունենալը՝ այն հարցով, թե Աղրբեջանը երբ է ընդունելու իր հանցագործությունները, ցավակցություն հայտնելու, ներողություն խնդրելու դրանց համար և պարտավորվելու հայտարարել, որ այլև երբեք այդպիսի հանցավոր արարքներ չի կատարի Արցախի, Հայաստանի ու հայության դեմ: Այլ, նոր էջ բացելով Հայաստանի ու Արցախի Հանրապետությունների հետ, փոխադարձ շահավետությամբ գործակցության և անկեղծ ու օգտաշատ հարևանության քաղաքականություն կվարի:

Ամփոփելով՝ այսօրվա անմիջական դրությամբ հայ ժողովրդի և Հայաստանի դեկավարության մարդասիրական և քաղաքական ու դիվանագիտական մեծագույն զիջումը՝ Արցախի

և Հայաստանի Հանրապետությունների ներկայացուցիչների՝ Աղրբեջանի ներկայացուցիչների հետ լիրավ ծևաչափով անկեղծ բանակցությունների սեղանին նստելու, բանակցելու պատրաստակամությունն է:

Եվ Հայաստանը չէ, որ պետք է առաջարկի, պայման դնի Արցախի Հանրապետության մասնակցության մասին՝ Արցախի հարցով տարվող բանակցություններին: Այլ Աղրբեջանը պետք է խնդրի Արցախի Հանրապետության հանդեպ իր առաջացրած հակամարտության խաղաղ լուժնան բանակցություններին որպես կողմ՝ իր մասնակցության համար՝ խոստանալով դրական վերաբերվել համանախազահների խորհուրդներով ու համաձայնությամբ հայկական կողմի ներկայացրած օրակարգին:

04 - 10 - 2020թ.

## ՄԵՂԱՌ...

### ԱՅՍ ԻՆՉ ԱՆԱՄՈԹՈՒԹՅՈՒՆ Է

«Մեղա՛, այս ի՞նչ անամոթություն է». այսպես արտահայտվեց Արեգնազ Մամբրեի Վարդանյան-Գումրյանը, երբ 1938 թվականի ամառային մի երեկո իր ամուսին Վաղարշակ Վարդանյանը նրան ու անդրանիկ որդուն տարել էր Մելանիկի (Սալոնիկ, Յունաստան)` ծովափնյա հրապարակում տեղի ունեցող հռչակավոր շոուին, որտեղ մի դերասանուիի բեմից հնչեցնում էր մի երգ այս բառերով. «թα τον παρω... պիտի α'ռնեմ, պիտի ա'ռնեմ, պիտի ա'ռնեմ Ռամոն Օվարոյին: Մանաշան, պիտի խենթանա՛ն, պիտի սպանվե՛մ (բայց), պիտի առնե՛ն Ռամոն Օվարոյին»: Այսինքն՝ պիտի անուսնանամ նրա հետ (նկատի ուներ այդ ժամանակների հանրահայտ (պարող) դերասանին): Եվ դեռատի հայ կնոջ՝ Արեգնազի սրտից ականաթռավ. «Մեղա՛, այս ի՞նչ անամոթություն է, այսքան անամոթություն կըլլա՞»:

1915թ. երեք տարեկան հասակում ցեղասպան ջարդերի պատճառով առանց հոր մնացած և իր հինգ տարեկան Ռուբեն Եղբոր ու քսաներեք տարեկան Հոհիսիմե մոր հետ «քուրքի տունը» բռնափակված այդ աղջնակը, մոտ հինգ տարի հետո առանց մի բար հայերեն իմանալու, իր տանջահար մոր անձնվեր քաջության և հնարանտության շնորհիվ, բայց երկնային օգնությանը «քուրքի տնից» փախցվել, ազատվել և Սեբաստիայի (Արևանտյան Հայաստան, Փոքր Հայք) հայ որբերի ամերիկյան որբանոցում էր հայտնվել: Այնտեղից ոչ շատ ուշ, նույն դժոխքներով անցած իր տասը տարեկան Եղբոր (ով վտանգավոր փորձություններից հետո) ու այլ որբերի հետ Հունաստանի Սիրա կղզու ամերիկյան որբանոց տեղափոխվելով՝ այնտեղ հայերեն ու քրիստոնեություն էր սովորել, մեծացել: Այն ժամանակ հյուրընկալ Հունաստանում և սփյուռքյան պայմաններում իրենց մոր հետ միանալուց հետո, իրեն բախտակից՝ յաթաղանից ու վառվող մարագմերից հրաշքով փրկված, բոլորովին որբ մի մշեցու հետ ամուսնությամբ երեք երեխայով իսկական հայ ընտանիք կազմած այդ դեռատի կինն էր, որ նախ վերոնշյալ շոուի այդ երգի բառերից զարմացել, հետո վրդովվել, ապա ցավ էր զգացել, թե ինչպես կարող է մի աղջիկ համարձակվել իր մորն այդպիսի զգացմունքով դիմել, ցանկություններ հայտնել, այն էլ հրապարակավ ու անամոթ հպարտությամբ. և հարյուրավոր մարդիկ էլ՝ պատվավոր տեսրով կանայք ու արայք, կարող են հրճվանքով ծափահարել այդ անամոթությանը...

Արեգնազ Մամբրեի Վարդանյանի ընտանիքը թեև շատ հեռու էր հայրենիքից, և պայմանների բերումով անհնար էր հայրենիք գնալ կամ նրա հետ բնականոն հաղորդակցվել, հարաբերվել, այնուամենայնիվ, իր ընտանիքում ամեն օր, իսկ հատուկ առիթներով մասնավորապես հիշվում էր Հայաստան հայրենիքը: Երեխաններին, հատկապես իր մոր ու ամուսնու կողմից, մանրամասն պատմվում էր Երգի՝ Մշո և Սեբաստիայի կյանքից, դեպքերից և վերջում հույս հայտնվում, թե՝ «Ուր որ է,

դուք մը կբացվի, կերթանք՝ «Օդդ սիրուն, ջուրդ սիրուն, դուն սիրուն, հայրենիք Հայաստան»:

Անուսանը հիմնականում Տարոնի ֆիդայական և հայ դասական ու հայրենասիրական, հիմնականում հանրահայտ Երգեր էր Երգում, իսկ մայրը (տատիկ դարձած Շռիփսիմեն) ավելի շատ Սեբաստիայի՝ ազգագրական տեսակետից շատ հետարքիր Երգեր էր Երգում ու պատմություններ պատմում: Եվ դարձյալ՝ միշտ այդ խոսքը հնչեցնում. «Ուր որ է՝ հայրենիքին դուռները կբացվին, և մենք կերթանք»:

Բայց ամիսներն ու տարիներն անցնում էին, իսկ «բաց դուռ» դեռ չէր երևում, և հույսն աստիճանաբար մարում էր: Ու թեև այդպես, սակայն մի բան, մի հղո՞ր բան միշտ մնում էր՝ հայ քրիստոնյայի հավատքը, ազգային գիտակցությունը, ազգային արժանապատվությունը և սերն ու հավատարմությունն Աստուծո, հայ ազգի ու Հայաստանի հանդեպ:

\*\*\*

**Անամոթությո՞ւն. ի՞նչ է անամոթությունը:** Անամոթությունը մասամբ այն է, որ կազինոներում, «կաբարեներում», «նայթ քլաբներում», անառականոց-սառնաներում ու նման տեղերում է տիրում, և նախկինում էլ սովորաների ու նրանց վեգիրների, պաշտոնյաների հարեմներում էր տիրում՝ «պատիվներով զարդարված»: Իսկ անամոթության մյուս՝ ավելի՝ մեծ մասը եղել է ու կա այս աշխարհի ստախոս, կեղծ, խարդախ, դաժան, անարդար, անհոգի, նյութապաշտ ու կոռումացված դեկավարների և նրանց ստեղծած շրջապատճերի մեջ:

Եվ նոյն բնույթի անամոթությունն ավելի սաստիկ ու ավերիչ, կործանիչ է, երբ գողի, ավագակի, մարդասպանի ու ցեղասպանի ցինիկությունն այն աստիճանի է հասնում (և դա անամոթության, ամենաբռողության այնպիսի հետևանքով է), որ մի անձ բացահայտ ու աշխարհով մեկ, առանց ամաչելու և առանց վախենալու «հպարտությամբ» հայտարարում է, որ իր հայ գոհն ուրիշ ի՞նչ կարող է անել, բացի չարաշար պարտվելուց (ինա՞ ոչնչանալը) կամ թուրքին համակերպվելուց և դարձյալ

իր դարավոր ստրկական (ռայայի) վիճակին դառնալը: Եվ մեր ժամանակների ամենամեծ անամոքներից Ալիև կոչվող ղեկավարն ասում է, որ դա կլինի՝

- քանի որ իր երկրի ռազմական բյուջեն գերազանցում է իր զոհի (Հայաստանի) պետական բյուջեն,

- քանի որ իր երկիրն ունի հարյուրհազարանոց բանակ, որը կարող է բազմապատկվել,

- քանի որ ունի իրեն ամեն րոպե ու ամեն ինչում օգնող հզոր մեծ եղբայր՝ նկատի ունենալով Թուրքիան, որը դեռ առաջներում սովոր էր բոլորին խարել և հավատում է, որ կարող է այժմ էլ ու միշտ կեղծել, խարել, ցեղասպանել, պղծել ու նվաճել:

Եվ այս Ալիև կոչեցյալը նաև միշտ իիշեցնում է, որ իր երկրի նավթից ու գազից ստացած դոլարներն իրեն միշտ ապահովում են ունենալ նաև (իր հասկացողությամբ) բարյացակամ կողմեր, այսինքն, երբ իրեն պետք է՝ իրենց աչքերը փակող նույնական անամոք մեղսակից-դաշնակիցներ, կողմնակիցներ ու նաև «չեզոքներ»:

\* \* \*

Ըստ երևույթին՝ Իլիամ Ալիևի գլխում, նրա պատկերացման մեջ հայերը միշտ եղել են թուրքերի ռայաները (լծի տակ գտնվողները, հպատակները) և միշտ էլ պետք է մնան նրանց ռայան:

Եվ քանի որ հայերի պաշտպանունակությունը սպառնալիք է Ադրբեյջանի անվտանգությանը, ապա Հայաստանը միշտ պետք է գուրկ լինի պաշտպանունակությունից: Դա՝ է «պահանջում» Ադրբեյջանի անվտանգությունը: Եթե Հայաստանը փորձեր անի իրեն կենսականորեն անհրաժեշտ պաշտպանության համար գինվել կամ վերազինվել, ապա Ադրբեյջանն անհապաղ կոչնչացնի այդ գինվածությունը (*սպառազինությունը և տեխնիկան*), Հայաստանի ներքին որ տարածքում էլ այն լինի:

Այսինքն՝ Ազրբեյջանի արդեն 18 տարվա նախագահ Իլիամ Ալիևի հասկացողությամբ՝ հայերն իրապես կարող են

լինել նրա ռայան և կապրեն, եթե որպես երկիր, պետություն ու ազգաբնակչություն, շնչեն Աղրբեջանի ղեկավարության, ավելի հստակ՝ նախագահի՝ (որևէ Ալիկի) թույլտվությամբ ու իրամանով: Նրա մտքում ամրակայված (ֆիքսված) է, որ միայն այդ դեպքում հայ կոչվող այդ հավաքականությունը (այլ ոչ թե ազգը) կարող է ապրել իրենց ենթակա հարեւանությամբ. այդ դեպքում թուրքերը «մեծահոգաբար» միշտ մի փշրանք կգտն նրանց...

Եվ այս հիտլերյան, գերելսյան, հիմլերյան, ռոզենբերգյան գերհակաքաղաքական, գերհակամարդկային ու գերցինիկ համոզումներով ու պատկերացմանբ մարդը, որն իշխում է Աղրբեջան անունն առաջ երկրի վրա (իշխելով նաև բազում բնիկ ժողովուրդների վրա), փաստորեն, համարվում է «օրինավոր» երկրի **«օրինավոր ժառանգականությամբ»** ու ընթացակարգով ընտրված ղեկավարը, պրեզիդենտը: Եվ իրականում ըստ այնմ ընդունվում, վերաբերունք է գտնում աշխարհի համարյա բոլոր երկրների ղեկավարների կողմից և նրանց հետ գործարքներ, պայմանագրեր է կնքում ու նաև... փառաբանվում է:

Մի՞թե սա է աշխարհը: Ու եթե սա՛ է աշխարհը, ապա ի՞նչ ունեն անելու հայը, Յայաստանը և մասնավորաբար հայ ղեկավարությունը, ղեկավարը: Ի՞նչ անեն, ինչաե՞ս վարվեն: Ինչի՞ վրա և ո՞ւմ վրա հույսը դնեն կամ ջանան հասկացվել (եթե մինչև հիմա չեն հասկացվել), որ իրենց վաղեմի նպատակը, ցանկությունը, գոհողությունները և, արդեն ինչքան ժամանակ է, պայքարն ուղղված է իրենց Աստվածատուր ազգային ինքնության օրինավոր պահպաննանն ազգերի ընտանիքում, բնականոն պայմաններում: Եվ իրենց այդ Աստվածատիր իրավունքի համար, եթե եղբայր ազգերը, պետությունները օգնության դեռ չեն գալիս, ապա չպետք է մեզ նեղեն, խանգարեն և ֆաշիստ բռնակալին օգնեն կամ խրախուսեն, դրանով իրենք իրենց ֆաշիստ բռնակալի մեղսակից դարձնեն՝ առանց երկյուղելու և հիշելու, որ Արդարություն կա: Եթևապես Արդարության հատուցում էլ կա: Դրանից պետք է բոլորս վախե-

նանք, որովհետև Աստված կա: Ծնորհակալություն և փառք Նրան:

Քավանաբար մտածողներ լինեն, որ սա քաղաքական և քաղաքացիական խոսակցություն չէ, մինչդեռ իրականում սա իսկական քաղաքական ու քաղաքացիական ըմբռնումով խոսակցություն է, որովհետև Տերը Տեր է ամեն ինչի, միշտ ու ամենուր:

\* \* \*

Ասվել է. «Ասա ով է ընկերող (գործընկերող), ասեն, ով ես դու»:

**Զգույշ լինենք.** զգույշ լինեն բոլորը, ովքեր ուզում են լինել ճշմարտության կողմը, նաև նկատի ունենալով, որ անտարբերությունը ևս անզգուշություն է առաջացնում, որով և՝ ակամայից անամոթությամբ անկում՝ իր բոլոր կորստաբեր հետևանքներով...

Ո՞վ հավատակիցնե՞ր, ու ըստ այնմ՝ գաղափարակիցնե՞ր, բարոյակիցնե՞ր, զգույշ լինենք, թե ո՞ւմ կողմն ենք, ո՞ւմ ենք պաշտպանում, ո՞ւմ ենք աջակցում՝ ո՞ւմ դեմ: Չտարվենք մամոնայով, իրականում՝ դրա խարուսիկ գորությամբ, խարուսիկ կարողությամբ և խարուսիկ փառքով: Դարերի ընթացքում և բազում փաստերով ապացուցված է, որ դրանք սին են, անցողիկ ու նաև վարակող, պղծող և հետևապես՝ ի՛ վերջո՛ կործանող:

Եական է չլղոզվել այդ պղծություններից: Դրանցից գերծ լինելը շատ ավելի՝ անհամենատ ավելի կարևոր ու օգտակար է, քան այս աշխարհի անցողիկ կյանքի հարստությունն ու փառքը սին, որոնցով կորչում է իսկական կյանքը... Բայց պետք է ունենալ այդ կյանքը և կարելի՝ է ունենալ այն՝ Տիրոջ ողորմածությամբ ու օգնությամբ, նրա ճանապարհներից չխոտորելով:

Երկուշաբթի, 11 - 03 - 2019թ., ժամը 13:10

## **ՃՇՎԱՐՏՈՒԹՅՈՒՆ ՀՄՆՈՒՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՅԱՆ, ՀԵՏԵՎԱՊԵՍ ԵՎ ԽՍՂԱՊՈՒԹՅՅԱՆ ՈՒ ԲԱՐԳԱՎԱԾՄԱՆ**

Ավազակները, ավազակախմբերը ավելի շատ զայրանում, թշնամի, վոեժիննդիր դառնում և ձգտում են վնասել, ոչնչացնել իրենց այն զոհերին, որոնք քաջ սկզբունքայնությամբ ու նաև մարդասիրությամբ և հավատքով արդարության հաղթանակին, հարատև հետևողականությամբ ջանում են բացահայտել ավազակի, ավազակախմբերի իրենց դեմ կատարած հանցագործությունները և հատուցում պահանջել:

Իրենց զոհերի հանդեպ այդպես են վարվում նաև ավազակապետությունները:

Այդպես են վարվել և վարվում է թուրք պետությունը և նրա նման նաև՝ պատմականորեն նոր հայտնված, նրա ստեղծած ու նրան կամակատար իր «փոքր Եղբայր»՝ Ադրբեյջան կոչվող պետությունը:

Ու այդ երկու պետությունների, նրանց վարձկանների ու իրենց կողմից տարբեր կաշառվածների թշնամական արարքները, թշնամական հարձակումներն առաջին հերթին և մեծապես ուղղված են հայ ազգի և հայկական երկու պետությունների՝ Հայաստանի ու Արցախի Հանրապետությունների դեմ: Եվ դա կատարվում է տարբեր դաժան միջոցներով, մերոդներով ու ապօրինի գործողություններով, գործունեություններով, ինչպես նաև միջազգայնորեն արգելված՝ ապօրինի զինատեսակներով, որոնք գնվում են՝ իրենց շահամոլության պատճառով մարդկային իրավունքը, արդարությունը ու նաև իրենց խիղճն ու պատիվն անտեսած կողմներից...

Այդ երկու ավազակապետությունների՝ պատմականորեն գործածած մի այլ կորստաբեր գենք, որն, ի վերջո, եթե նրանց արգելվի գործածել, նրանք շատ կանգորանան, բացի ան-

մարդկային դաժանությունից ու պատերազմական հանցագործություններից՝ իրենց կողմից լայնորեն կիրառվող կեղծիքը, խարդախությունը և սուսն է:

Այդ երեք արատավոր ու հանցավոր միջոցներով՝ կեղծիքով, խարդախությամբ և ստով տարվող քաղաքականությամբ, դիվանագիտությամբ, տեղեկատվությամբ, պատմագիտությամբ, արվեստաբանությամբ ու այլ միջոցներով՝ միջազգային մասշտաբով խաբում են անիրազեկներին, միամիտներին (նաև իրենց շահի համար խարվել ուզողներին) և խաբում են նաև իրենց ժողովուրդներին ու հատկապես երիտասարդ սերնդին: Մինչև հիմա դրանից մեծ չափով օգտվում են այդ ավազակապետությունները (ինչպես նաև նրանց մեղսակիցները) և վնասվում ու էա՛պես տուժում են նրանց զոհերը՝ հայերը և Յայաստանը, Արցախն ու նրանց բախտակից ժողովուրդները, երկրները:

Ավազակապետությունների՝ կեղծիքի, խարդախության և ստի զենքով նղած պատերազմն ուրույն լինելով, դրա դեմ պահանջվում է համապատասխան «զենքի» (և մեթոդի) կիրառում, որը կոչվում է ճշմարտություն:

- ճշմարտությունը հայության և Յայաստանի մասին,
- ճշմարտությունն Արցախի մասին,
- ճշմարտությունն Արևմտահայաստանի և նրա վերաբերյալ վերջին շուրջ երկիրայուրամյա միջազգային միջամտությունների ու արդյունքների մասին,
- ճշմարտությունը երկու աշխարհամարտերում հայ ժողովորի (թեև հաղթող երկրների կողմում ակտիվ ու քաջությամբ մասնակցելուն) կրած անհամենատ մեծ տառապանքների, զոհերի և հողային կորուստների մասին,
- ճշմարտությունը Յայաստանի, Արցախի (ինչպես նաև մի շարք այլ ժողովուրդների, երկրների) հանդեպ Թուրքիայի ու Աղբքեջանի՝ Օսմանյան տիպի իմպերիալիստական և իրենց ժամանակակից ռեժիմների ֆաշիստական-նացիստական նկրտումների մասին:

Այդ ճշմարտությունները պետք ու օգտակար են համայն

մարդկության ու հատկապես հայության և նրա բախտակից ու այլ շահագրգիռ ժողովուրդներին, համապատասխան միջազգային հաստատություններին ու նաև հենց թուրք ժողովրդին ու ադրբեջանցի՝ կոչված ժողովրդին, բայց առաջին հերթին պետք և հույժ օգտակար են այդ ժողովուրդների երիտասարդ սերունդներին:

Եվ այդ կատարելը, այդ ճշմարտությունները լույսի ներքո բերելը ակնհայտորեն պայմանավորված են որոշակի՝ գործունեությամբ:

Դայ ազգի, Դայաստանի ու Արցախի վերաբերյալ այդ ճշմարտությունների բացահայտման, դրանց՝ աշխարհին իրագեկման ու ըստ այնմ՝ դրանց հարցերի արդար լուծման (որը և մարդկության հաղթանակն է) ապահովման համար, բացի ռազմական համապատասխան հզորությունից, զենքն ու զրահը (որն ակնհայտորեն անհրաժեշտ է իրենց արդար իրավունքների պաշտպանությանը ձգտող կողմերին), վերին աստիճանի անհրաժեշտ է նաև, որ առաջին հերթին գործեն այդ կողմերի քաղաքականությունը, պետական ու հանրային դիվանագիտությունը, գիտությունը և մասնավորապես պատմագիտությունը: Դարձ է, որ հայ պատմաբանները, իրենց բախտակից գործընկերները, ապա և բոլոր ազնիվ միջազգային իրավաբանները, լրագրողներն ու նաև այլ համապատասխան մասնագետները հետևողականորեն գործեն՝ նշյալ ճշմարտությունները հարատևեն իրազեկելու համար իրենց ու միջազգային լայն հանրություններին:

Ու այս գործունեությունների հաջողության մի կարևոր, մի խոսուն ու առավել ակնհայտ չափանիշն արդար ու նպատակահարմար է, որ լինի վերոնշյալ ավագակապետությունների պաշտոնատարների, ներկայացուցիչների որևէ միջազգային կամ այլ հանդիպումներում, ժողովներում ներկայացրած բոլորի կողմից համարվի, մեծ հավանականությամբ (ըստ պատմական փորձի), կեղծ, խարդախ, սուտ ու պարտադիր ենթակա հատուկ ստուգումների: Մասնակիցների մեջ և նրանց միջև հնչեն հետևյալ և համանման մտքեր. «Ստախոսները եկել են,

նրանք այստեղ են՝ գառան դիմակներով», «Դարձյալ խոսում են ստախոսները», «Ստախոսները դարձյալ ներկայացնում են իրենց կեղծ, խարդախս ստերը»...

Ի վերջո, այդ ավազակապետությունների զոհերը և նրանց բարեկամներն ու աջակիցները կարո՞ղ են կատարել այդպիսի և նման գործողություններ... Դա հայ և բազում այլ տուժած ու պահանջատեր ժողովուրդների համար կլինի ճշմարտության մեջազույն և կոնկրե՛տ հաղթանակներից՝ ըստ այնմ նպաստող, վերականգնող, վերահաստատող, երկար ժամանակից ի վեր նրանց անտեսված արդարությունն ու կազդուրման հնարավորությունը:

Ու այս բոլորն Աստուծոն օգնությամբ ու Նրա փառքի համար:

Երկուշաբթի, 13 - 06 - 2009թ., ժամը 08:00

## **ՊԵՆԹՈՒՐՔԱԿԱՆ ՆԱՑԻԶՄԻ ԾԱՎԱԼԱՊԱՇՏԱԿԱՆ ՎՏԱՆԳՔ ՀԱՐԱԾԵՎ Է (Եթե չկա այն վերացնելու միջոց ու հեկուղական պայքար...)**

Թուրքական պետական նացիստական վաղեմի միտքը, որը շարունակում ու հարածունորեն ծավալվում, տիրում է Թուրքիայում ու Արտքեզանում, ինչպես անցյալում, այնպես էլ այսօր նպատակառուղյամբ է հայությունը որպես ազգ և Հայաստանը՝ որպես պետություն ու երկրի անուն, վերացնել աշխարհի քաղաքական իրականությունից ու նաև պատմությունից և աշխարհագրական քարտեզից. այդ նպատակի իրագործումը հայ ժողովրդի հանդեպ վաղուց ընթացքի մեջ է և կատարվում է նաև միջազգային ընչափաղց ու դավադիր շոշանակների խորհրդատվությամբ ու աջակցությամբ: Այդ ոճրային նպատակի իրագործման համար, բացի յաթաղանից, բռնատեղահանումներից և տարբեր կողոպուտներից ու հարստահարումներից, գործածվում են թուրք-ադրեզանական պետա-

կան նացիստական քաղաքականությունը, դիվանագիտությունն ու միջազգային քարոզությունը, պրոպագանդան: Եվ դա արվում է՝ փորձելով նաև իրենց կողմից տարածվող ստահոդ տեղեկությունները ներկայացնել իրուս «փաստեր»՝ վարկաբեկելով հայ ազգը՝ որպես քոչվոր, հայրենիք չունեցող, խարդախ, շահամոլ, անգամ՝ ագրեսոր: Եվ այս չարախոսությամբ նացիստական դավադրությունը կատարվում է նաև որպես հայության ու Հայաստանի դեմ ռազմական նախահարձակման, ազրեսիայի նախապատրաստություն՝ պետական հզոր միջոցների կիրառմամբ, քաղաքական, դիվանագիտական ու այլ խարդախություններով միջազգային, հասարակական նենգափոխված կարծիքի շղարշ ստեղծելով՝ հայերի դեմ նոր ազրեսիվ գործողություններ, նոր ցեղասպանական արարքներ և տարածքային նոր զավթումներ կատարելու:

Հայկական պետության ու համայն հայության կյանքը, համընդիանուր նպատակները, ծրագրերն ու գործունեությունը պետք է համակված լինեն այս իրակա՞ն վտանգի գիտակցությամբ՝ դրա հարատև հասկացողությամբ, այն վերացնելու անխափան, անընկրկուն կամքով ու անսպառ կարողությամբ:

Առևտուր ես անում, գործի ես մեծացնում, խրախճանքների ես մասնակցում, հարսանիքի ես պատրաստվում, ռեստորաններ ես հաճախում, տունուտեղ ես կառուցում կամ վերակառուցում, մեծացնում, լա՛վ ես անում, հայ, բայց եթե թուրքադրբեջանական նոր ցեղասպանական ու զավթողական վտանգը չե՞ս զգում և քո անելիքներն ու ընդհանրապես քո կյանքն ըստ այդմ չես ծրագրում ու վարում, ապա ըստ Ավետարանի բնորոշման՝ արածի, կառուցածի ավագի վրա է, և գլուխութիւն էլ ավագի մեջ է, և համահունչ ջայլամի բնազդին՝ դու այլս չես կարող լինել հայ մարդ, այլ կլինես հայությունից, հետևապես և մարդկությունից խորթացած մարդ...

Եվ զգո՞ւյշ եղիր, ինացի՛ր, որ ըստ քո եղածի՝ կլինի նաև քո այդ լինելության հաստուցումը, որով գուցեն հայտնվես անմիտար ու անելանելի դրության մեջ, **անկենդան** միջավայրում...

### **Ուրեմն՝ ի՞նչ է պետք:**

Դայի կյանքում պետք է մշտական, հետևողական ու հարատև զգաստություն, զգոնություն, պատասխանատվություն և պարտքի գիտակցություն: Եվ գիտակցություն՝ նախ հոգեկան պարտքի, ու ըստ այնմ՝ ազգային, քաղաքական, քաղաքացիական ու նաև ռազմական-պաշտպանական պարտաճանաչություն, պատասխանատվություն: Իսկ դա կարող է լինել հավատքով՝ հոգով, սրտով ու ամբողջ եռթյանք հավատացյալ լինելով, ու ըստ այնմ՝ լինելով նաև գաղափարապես ազգասեր և բարոյական մարդ-հայ: Չխարվենք. ով Աստված չունի, նշանակում է, որ նա, վերջին հաշվով, հաստատապես ազգ էլ չի ունենա: Եվ գաղափար ու բարոյականություն էլ չի կարող ունենալ: Չպետք է խարվել. նմանն ինչ որ ունի, ինչքան էլ ունենա՝ ժամանակավոր է, սի՞ն է, ունայն է: Նրա ունեցածը, ու նաև վիճակը, եթե մի օր իրենից չխւեն էլ, ինքն է ուրանալու, գուցեն ծախելու՝ «Երեսուն արծաթով»: Քանի որ Աստուծուց ու իր ազգից հեռացողի համար գաղափարականության ու բարոյականության մասին չի՝ կարող խոսք լինել. առավել ևս խոսք չի կարող լինել դրանց հանդեպ հավատարմության մասին և դրանից առաջացող կյանքի կայունության, ներդաշնակության ու հավասարակշռության մասին: Որովհետև այդպիսինը ինչ-որ կարծում է, թե կա, և ինքն էլ ունի, իրականում, չկա՛, գոյություն չունի՛, չի՝ կարող լինել, և ինքն էլ չունի:

Եվ (խոսելով մեր մասին) հայր պետք է միշտ մտածի, գտնի իրեն, ճանաչի իրեն՝ իր մեծերի, իր սուրբ նախնյաց հոգեկանությամբ, խառնվածքով և ընթանա նրանց հավատքի հավերժական ճանապարհով, որ իր կյանքն էլ, իր ընտանիքի և ցեղի կյանքն էլ օրինյալ լինեն, երանելի:

Մեր ներկա՝ իրադրությունում, դժբախտաբար, չի բացառվում, որ կարող են գտնվել ասողներ.

- Այս ասվածները մի՞թե քաղաքական մտածելակերպ, քաղաքական կեցվածք և քաղաքական դեղատոմս կարելի է համարել մեր քաղաքական (մնացածն առայժմ թողնենք մի կողմ) անկումային ընթացքի կասեցման և վերելքի համար:

**Դրա պատասխանը՝ այո՛, կարելի՛ է այդպես համարել:** Ասվածները քաղաքակա՞ն են, այն էլ՝ գե՛րքաղաքական և դեռ ավելին են՝ աներևակայելի արդյունքներով՝ մեծագույն արդյունքներով: Ինչո՞ւ, ինչպե՞ս: Որովհետև այդ ասվածները, լինելով Երկնային սկզբունքների հիման վրա, դրանց կողմուն եղողներին աջակցում է նարդկության բարին, ու ամենաէականը՝ ունեն պաշտպան՝ Երկնքի սերը, արդարությունն ու զորությունը:

Փա՛ռ Տիրոջը, Արարիչ Հորը՝ դրանք պարզեցին:

Երեքշաբթի, 05 - 01 - 2007

**SENATOR JOHN MCLARIN R-ARIZONA  
ARMED SERVICES COMMITTEE RANKING MEMBER  
Սենատոր Ջոն Մկլարին՝ համբապետական Արիզոնայի  
նահանգից (ընտրված),  
Զինված ուժերի կոմիտեի կոչումով անդամ**

«Մարդկային պատմության մեջ չի եղել մի դեպք, երբ որևէ երկրուն հնարավոր է եղել առանց անվտանգության ապահովման՝ զարգացուն ապրել, վերելք ունենալ, կառուցել, բարգավաճել (մեր ժամանակներուն), ժողովրդավարություն հաստատել»:

Այս իրողության ըմբռնմամբ. «Որևէ երկրուն, որևէ պայմաններուն զարգացուն, վերելք և բարգավաճուն կարելի է ստեղծել (կամ ո՛չ), բայց եթե այդ երկրուն անվտանգությունն ապահովված չէ, ստեղծվածն էլ անհնար է պահել: Այն ավելի շուտ բաժին կդառնա թշնամուն»:

15 - 05 - 2006թ.

## **ՀԻՇԵՆՔ, ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱՆՔ ՈՒ ԼՍՏ ԱՅՆՄ ԳՈՐԾԵՆՔ, ԱՊՐԵՆՔ**

Մեր ներկայիս հայացքով հայրենիք Յայաստանում մենք կարող ենք տարբեր բնագավառների բազում հաջողություններ, բազում հաղթանակներ ունենալ և մեր պետության գոյությունն ըստ այնմ շարունակել, սակայն, եթե ռազմական մեկ պարտություն իսկ ունենանք՝ ելնելով մեր աշխարհագրական ներկա դրությունից, դիրքից, վիճակից, պայմաններից, մեր իրավական պետության գոյությունը կարող է հարցականի տակ դրվել, մինչև իսկ՝ դադարել:

**Իսկ այնուհետև՝** աստիճանաբար կարող է սկսել դադարումը մեր ազգային գոյության՝ հաջորդելով մեր իրավական պետության և հայրենիքից կոտորակված ներկա հայրենի տարածքի ինքնիշխանության կորստին:

Նման հեռանկարի հավանականությունը պետք է նկատի ունենա յուրաքանչյուր հայ, որտեղ էլ նա գտնվի, ինչպիսի վիճակում էլ լինի: Յատկապես Յայաստանի յուրաքանչյուր քաղաքացի, մանավանդ պետական, քաղաքական ու այլ բնագավառների գործիչ, պետք է այդ հավանականությունը հիշի և ըստ այնմ մտածի, վարվի, գործի, ստեղծի և մանավանդ սերունդ դաստիարակի՝ Աստուծո օգնությամբ:

Ո՞չ մի հապաղում, ո՞չ մի պատճառով, ո՞չ մի հետաձգում, այլ գաղափարապես, բարոյապես, քաղաքականապես, տնտեսապես, զինվածությամբ ու համազգային կազմակերպվածությամբ նախապատրաստվել ու միշտ պատրաստ լինել՝ ո՞չ մի դեպքում ռազմական պարտություն չկրելու համար՝ Աստուծո օգնությամբ:

Դեկտեմբեր, 2010թ., Մոսկվա

## ՆԱՀԱՆՁ ԿՈՐՈՒՏԱՆԵՐՈՎ. ՄԻՆՉԵՎ Ե՞ՐԲ

Դայ ազգը և Հայաստանը նվաճելու ու վերացնելու բազմամյա գործընթացն իր ավարտին հասցնելու պատերազմը (լրտեսություն, դավադրություն, վնասարարություն, քաղաքական սուտ, կեղծիք, խարդախություն, պատմության նենգափոխում և այլն) շարունակվում է՝ տարբեր ճակատներում, տարբեր կերպերով, մեթոդներով, և մենք, մեծ մասամբ կորուստներ տալով, նահանջում ենք:

**Ինչո՞ւ:** Մի շարք պատճառներով, որոնցից են՝

- ազգի՝ իր իրական վիճակի վերաբերյալ անհրաժեշտ իրազեկվածության պակասը,

- ազգի անտարբերությունը և պատասխանատվության զգացումի պակասը իր վիճակի, դրա վատթարացման ընթացքի և դրանց պատճառների հանդեպ,

- ազգի՝ իր ներկա ու հեռանկարային հավանական վիճակի համաձայն՝ համապարփակ, իրական ծրագրերի, դրանց իրագործման համապատասխան միջոցների, նախապատրաստության ու անձնակազմերի պակասը,

- հայության (ամենուր ու բոլոր պայմաններում) ազգային շահերի ու առավել ևս՝ իր իսկ գոյության համակարգված ու համահայկական միջոցներով պաշտպանության համակարգի և դրան համապատասխան կառույցի ու անձնակազմի պակասը:

Ու ազգի այս պակասները, որոնք հիմնականում հավատքի և դրանց բխող ու դրա վրա հիմնված գաղափարի և բարոյականի պակասի հետևանք են, պատճառ են դառնում նաև հայության պատշաճ գիտակցության, խղճի, պարտաճանաչության և պատրաստականության, պատրաստականության, ինչպես և միջոցների պակասի:

- Մեր այս վիճակում, մեր այս պայմաններում ինչի՞ վրա է մեր հույսը, ինչի՞ վրա կարող է լինել այն, և ի՞նչը կփրկի մեզ:

- Ի՞նչն է մեր հույսը, ի՞նչն է, եթե ոչ մեր հավատքը: Եվ ի՞նչը մեզ կփրկի. ի՞նչը, եթե ոչ մեր նախնիների, մեր սրբերի, մեծերի, վասն հավատու և վասն հայրենյաց նահատակների ունեցած հավատարմությունը հավատքին:

**Սակայն ինչպես կարելի է շրջադարձ կատարել այժմյան կորստարեր ընթացքից և լիարժեքորեն ընթանալ մեր այդ հավատքի հարազատ հունով, երբ նորոգ հզորացած չարը բազմաբնույթ և բազմակողմանի նենազ խարկանքներով գործում, աշխատում է ավելի շեղել մեր արդեն իսկ շեղված ընթացքը՝ դեպի վերջնական անկում և կորուստ: Եվ դա արվում է՝ փորձելով նաև կեղծ և պիղծ շղարշներով պատել, մեզնից թաքցնել մեր իսկական հավատքը և դրանից բխող ու դրա վրա հիմնված գաղափարախոսությունն ու բարոյականությունը, որպեսզի զրկվելով մեր ամեն ինչի ու նաև մեր եռթյան պաշտպանության հիմնական կովաններից՝ վերջնականապես հպատակվենք չարին, կորցնենք ամեն ինչ ու անհետանանք...**

Շրջադարձն ամենայն կորստարեր ընթացքներից և մեր փրկությունը նախ և առաջ հավատքով է և դրանից բխող ու դրա վրա հիմնված մեր Ազգային գաղափարախոսության ու ազգային բարոյական համակարգի հանդեպ հավատարմությանք ապրումով (ապրելակերպով):

Ուրեմն, որպեսզի մեր իսկական ու անանց գոյության աղբյուր հավատքից չշեղվենք և կյանք ունենանք, **պետք է պահենք, պահպանենք մեր ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ, լինենք հավատարին, ինչպես մեր հավատքի Զորագլուխ Սստվածորդին՝ Դիսուս, հավատարիմ մնաց իր Դորը՝ մինչև ի Խաչ, որով և ի հավերժ փառը՝ Դոր կողքին:**

Եվ նրա օրինակով հավատարիմ մնաց նաև հայ ազգը՝ գլխավորությանք ու առաջնորդությանք իր մեծերի, սրբերի, վասն Դիսուսի և վասն ազգի նահատակների:

Եվ այդ հավատարմությունն է, որ տալիս է իմաստություն, տալիս է մեծապատիկ ուժ, զորություն, կարողություն, ցրում,

անհետացնում է ամեն տեսակ թշնամիներին, տալիս է ամեն կողմից վստահելի բարեկամներ, աջակիցներ ու ամենաէականը՝ արժանացնում է Արարիչ Յոր՝ Ամենակալ Աստուծո շնորհին ու ամենահաղթ օգնությանը:

Փա՛ռք Յոր և Որդվո և Յոգվույն Սրբո, ամեն:

Երեքշաբթի, 11 - 07 - 2005թ., Ժամը 22:30

## ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Երկար տարիներ ի վեր և բավական հաճախ խոսք է գնում, թե հայությունը պետք է ունենա «Ազգային ծրագիր»:

Բայց ի՞նչ է նշանակում «Ազգային ծրագիր»: Մինչև հիմա եղած բազմաթիվ ծրագրերի մեջ մի՞թե չկա գոնե մեկ «Ազգային ծրագիր»: Եթե կա, ո՞րն է: Եթե չկա՝ ինչո՞ւ: Եվ ինչպե՞ս ու ովքե՞ն կարող են և պետք է ստեղծեն Ազգային ծրագիր:

Ինչպիսի՞ն կարող են լինել մեր Ազգային ծրագրի ուրվագծերը և կամ ծրագրի հարցադրումները:

Ազգային ծրագրի ստեղծման համար, ըստ Երևույթին, պետք կլիներ բարձրացնել ազգի, հայրենիքի և պետության գյատևանան ու զարգացման կարևորագույն խնդիրները և դասակարգել դրանք ըստ կարևորության ու դրանց կատարման հնարավորության աստիճանի: Օրինակ՝ խնդիր-պահանջներ ունենք, որոնց կատարման և բավարարման համար կամ հնտություն չունենք, կամ անհրաժեշտ միջոցներ, կամ կարողություն, կամ էլ բոլողը միասին չունենք, որովհետև օրինակ՝ կպահանջվեն այնքան մեծ գումարներ կամ այնպիսի հզոր բանակ կամ կառավարման անձնակազմ և կամ այնպիսի մեծ, գորեն ու հարմարավետ դիրքով երկիր, որը մենք չունենք (դեռ):

Բայց մեր ազգի, երկրի և պետության համար կան նաև այնպիսի եական նշանակության խնդիր-պահանջներ, որոնց կատարման, բավարարման համար ոչ մեծ գումարներ են պետք, ոչ հզոր բանակներ, ոչ անձնակազմ, ոչ էլ աշխար-

հագրական տեսակետից ավելի մեծ ու քաղաքականապես զորեղ երկիր, քան ունենք:

- Այդ դեպքում հ՞նչն է այն կենսականորեն անհրաժեշտը, որ կարո՞ղ ենք ունենալ:

- Առողջ ազգային ինքնագիտակցություն, պետական մտածելակերպ, քաղաքացիական պարտաճանաչություն, կարգապահություն, ազգային ծառայության անկե՛ղծ ցանկություն, պատրաստակամություն, պատրաստականություն, հմտություն, կամք, սրանց նման այլ հատկություններ ու ամենակարևորը՝ **հոգեկան պատվախնդրություն և զորեղ հավատք**: Բաներ, որոնց գոյությունը պայմանավորված չէ անպայման այն ամենով, որ մենք երազում ենք ունենալ, բայց չենք կարողանում և շատ հեռու ենք դրանցից: Մինչդեռ այդ մեր երազածը, ցանկացածը մենք կարող ենք լիովին բավարարել վերոնշյալ և նման հատկություններով՝ դրանք լրացնելով նաև էապես կարուր հայրենասիրությամբ, ազնվությամբ ու անշահախնդիր սիրով մեր մերձավորի հանդեպ: Որով և Աստուծո, մեր ազգի և մեր սերունդների հանդեպ:

02 - 09 - 2010թ.

## **ԱԶԳԱՅԻՆ ՃԻՇՏ ՄՈՏԵՑՈՒՄ**

Յայ իրականությունում, Յայաստանում, մասնավորապես ազգային անվտանգության և պաշտպանության հարցերում, ճիշտ ու օգտակար կլինի, որ հետևյալ հասկացությունը, տրամաբանությունը և մոտեցումը դաշնան համատարած, տիրական ու մշտական մեր ազգի, հայրենիք Յայաստանի և պետության համար անել, ապահովել ոչ թե այն ու այնքան, ինչ կարող ենք, այլ այն ու այնքան, որքան պետք է դրանց իրական անվտանգության, պաշտպանության ու նաև դրանց զարգացման, զորացման և վերելքի համար միջազգային բարձրագույն մակարդակի:

Կարող են լինել առարկողներ, թե իրատեսական չէ և ժամանակի կորուստ է հետամուտ լինել անելու այն, ինչ որ մեզ պետք է, բայց իրական հնարավորություն չկա այդ անելու: Այդպես ասողներին կտրվի հետևյալ պատասխանը՝ ոչ, վերոնշյալ մոտեցումը անիրատեսական չէ և ժամանակի կորուստ չէ:  
**Պետք է ծրագրել ու անել այն, ինչ-որ պետք է ու ինքը որ պետք է, այլ ոչ թե անել միայն այն, որ կարող ենք անել», ինչն առաձգական ու սուբյեկտիվ մոտեցում է:**

Եթե մեզ կենսականորեն անիրաժեշտ մի բան չենք կարողանում անել՝ պատճառաբանելով, որ դրա հնարավորությունը չունենք, այդ դեպքում հենց այդ հնարավորության արագ ստեղծումը, իրականացումը պետք է դարձնան նպատակ և ծրագրման ու կազմակերպական կառավարման խնդիր:

Խնդիր, որի կատարման համար, բացի մեր առերևույթ միջոցներից, կարողություններից, մենք կարող ենք ներառել, կիրառել մեր ազգային, հոգեկան, գաղափարական ու բարոյական (դժբախտաբար) նիրիի մեջ գտնվող այն ներուժը, որը դուր կրացի նաև փաստորեն մեր նույնպես չօգտագործվող բազմաբնույթ ու բազմակողմանի աշխարհատարած նյութական (ու նաև այլ) կարողության և ներուժի համար:

Առարկություն կարող է լինել, որ նշվածը մեծ գորություն կպարունակի՝ կատարելու, իրագործելու մեր ազգի բազում նվիրական իղձեր: Բայց դրա համար պետք է չմոռանանք, պարտավոր ենք երբեք չմոռանալ, որ երբ մենք ունենանք այդ և նման բարեմասնությունները, ապա բացի նշված այդ մեծ գորությունից, կա և մեզ հետ կլինի անհամեմատելիորեն մեծ մի գորություն, անանց, հարաւոև ու մշտահաղթ մի գորություն՝  
**Աստուծո՛ զորությունը:**

Չգիտե՞նք այդ մասին կամ մոռացե՞լ ենք. մեր նախնիները շատ լավ գիտեին այդ մասին ու երբեք չին մոռանում: Իսկ մե՞նք: Եթե ինչ-ինչ պատճառներով աստիճանաբար սկսեցինք մոռանալ (եթե ոչ ուրանալ) այդ մասին, ապա դա ազգային էական, մեծագույն խնդիր է, որ անհապաղ լուծում է պահանջում՝ որպես նախապայման մեր բոլոր կարիքների

**բավարարման և նույնիսկ արժանավայել գոյության ապահովման:**

**Աստուծո ողորմածությամբ ու օգնությամբ:**

Երկուշաբթի, 28 - 12 - 2020թ., ժամը 20:30

## **ԻՍԿԱՎԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ**

Բզկտված Հայաստանից կոտորակված Հայաստանի Հանրապետությունն այժմ՝ 2020 թվականին ևս բզկտվում է՝ այս անգամ թե՛ դրսից և թե՛ ներսից՝ ինքնարգկտմանք:

Հարցը, թե ինչու Հայաստանի Հանրապետությունը և նրա օրգանական մաս կազմող Արցախը ենթարկվեցին բզկտման (որը դեռ շարունակվում է), ունի բազմաթիվ բացատրություններ, որոնք մի խոսքով՝ կարելի է կոչել *ազգային անբավարարություն, ինչպես օրինակ՝ մարդու օրգանիզմում սրտի անբավարարությունը*:

Այդպիսի ազգային բացասական վիճակների մասին մեր պատմության կորստաբեր ժամանակներում խոսել են մեր ազգի մեծերը, սրբերը, նահատակները: Քիչ, բայց խոսվել է նաև մեր ժամանակներում, սակայն ամենաէականը՝ այդ մասին պարզ, հստակ և վճռական նիշտ ասում է մեր հավատքը, որը լսելու, ընթոնելու ու ըստ այնմ մտածելու, որոշումներ կայացնելու և գործելու համար անհրաժեշտ պայման է *ազգային սրտի մաքրությունը*. *ազգային ազնվությունն ու առաքինությունը՝ գերծ ամենայն նյութապաշտությունից*, կոռումպացումից, որով և՝ հոգեկան պոռնկությունից: Այսինքն՝ Աստվածաշնորհ մեր հավատքի ու Աստվածակերտ մեր էության համբեա ամիավատարմությունից:

Այդպիսով, մաքրված այդ ախտերից՝ հայ իրականությունում կառաջանա հոգեմտավոր, գաղափարական, բարոյական և կենցաղային բարեկիություն: Իսկ եթե այդ փոփոխությունը չլինի, և մնանք նույն վիճակում, ապա մեր հոգեկան կուրու-

թյունը, հոգեկան խլությունը և դրանց հետևանքները չեն վերանա, ընդհակառակը՝ կխորանան ու կավելանան...

Բայց երբ հավատքով ի վիճակի ենք դառնում տեսնելու Արարիչ Յոր և Միածին Որդու՝ հայ ազգի ու հայկականության հանդեպ գրառատությունը, այնժամ ահազանգը լորում է, Յույսը դառնում է անսպա՛ռ, և մեր ընթացքն առաջ՝ դեպի ամենայն բարձունք, որը նաև հօգուտ համայն մարդկության, ու ամենաէականը՝ ի փառ Սուրբ Երրորդության՝ Աստուծո:

Յինգշաբթի, 09 - 04 - 2020թ., Ժամը 08:30

## **ՄԻԱՄՏՈՒԹՅՈՒՆ, ԹՅՈՒՐԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ, ԽԱԲԿԱՆՔ**

Աերնագորում նշվածը, մեղմ ասած, թերություն, պակասություն է որևէ մեկի համար (ով էլ լինի), եթե նա նվիրվում և հանձն է առնում ոչ միայն պարզապես ծառայել ազգին՝ ազգօգուտ կեցվածքով ու կյանքի ապրումով, այլև նախաձեռնում, կատարում է գործուն ազգօգուտ արարքներ ու ծրագրային գործողություններ: Նոր ու նորագույն պատմության հայ իրականությունում այդպիսի գործիչների ջանքերը շատ հաճախ ուղղված են եղել հայ ազգի համար ազատություն ձեռք բերելուն և ազգային անկախ պետություն ստեղծելուն տարբեր գորեղ երկրների միջոցով՝ ընդհուած նորանց կողմից պատերազմի մղմամբ իրենց սիրեցյալ ժողովուրդն ու հայրենիքն ազատազրկող ու կեղեքող պետության դեմ: Եվ այդպիսի օգնություն ստանալու նպատակով ու հույսով ջանում էին ոիմել, խնդրել, համոզել (առանց բանակցելու, քանի որ դրա համար ոչ նախադրյալներ կային, ոչ էլ հնարավորություն) մեծ նասամբ Ռուս պետությանը, ցարական իշխանությանը, ցարին:

- Եվ ի՞նչ, նրանք մերժո՞ւմ էին:
- Իհարկե՝ ոչ:
- Ինչո՞ւ, որովհետև հուզվո՞ւմ էին քայսանձագիմ դիմումներից, խնդրանքներից և դրա համար ընդունում էին խնդրանքը

### *և համաձայնում օգնե՞լ:*

- Դարձյալ ո՞չ: Խնդրանքն ընդունվում էր, բայց գերպետության ձևով, նրա տեսանկյունից էր հաշվի առնվում ու «ազատագրական» պատերազմ մղվում (հայերի հնարավոր ամեն տեսակի մասնակցությամբ ու քաջություններով), սակայն դա լինում էր այն ժամանակ և այնպիսի պայմաններում, որը ձեռնոտու էր «աղա» պետությանը: Նա իր մարդկային, նյութական ռեսուրսներից բացի, նաև միջազգային իր քաղաքական կապիտալի ներդրումներ էր անում, կորուստներ էլ էր ունենում, սակայն միաժամանակ ամբողջ ներդրածը (և դեռ մի բան էլ ավելին) կորցնելու վտանգը (ռիսկը) նկատի ունենում...

Ու կյանքի իրականության այս լույսի ներքո եթե մեր վարժապետից, բանաստեղծից ազգային գործիչ դարձածները, նրանցից ոչ շատ տարբերվող քաղաքական-պետական կամ հեղափոխական գործիչները ու նաև ազգի իրապես հարազատները չեն հասկացել, որ «թղթե շերեփով հարիսա» չի լինի ստանալ, այնպես էլ չեն հասկացել, որ թղթե աղերսագրերի միջոցով ուրիշ կորուստների և դեռ ավելին կորցնելու ռիսկով ձեռք բերած հաղթանակից իրենց համար ազատ ու անկախ պետություն առավել ևս չի լինի ստանալ: Ոչ ոք այն չի տա: Կտա այն չափով ու այն ժամանակ, երբ ինքը կուգենա, ըստ իր պետական շահի: Աշխարհում չի՝ եղել, չկա՛ ու ամենայն հավանականությամբ չի՝ լինելու այդպիսի «բարեգործական» երկիր, այն էլ կայսրություն, որն իր բազմակողմանի ջանքերով, ներառյալ մարդկային կորուստները, և դեռ ավելին կորցնելու նաև քաղաքական, ռազմական, տնտեսական ու այլ ռիսկերով ձեռք բերած հնարավորությունները, արդյունքները նվիրաբերի որևէ խնդրողի (որքան էլ համակրելի լինի նա իրեն)՝ նախ և առաջ իրեն չվերապահելով հիմնականում իր միջոցներով և ռիսկերով կերտված հաղթանակի հնարավորությունները, արդյունքները:

- Ուրեմն՝ պետականության վերականգնման նպատակով աջակցություն ակնկալելն ապարդյուն երազա՞նք է, այդպիսի բան չի՝ լինում, չի՝ ստացվում:

- Ինչո՞ւ չէ, լինում է, շատ լավ էլ ստացվում է, եթե ու եթե «աղա» պետությունը (որի ձեռքում են բոլոր հաղթարդերը) հանդիպի ու որոշի, որ իր այդ աջակցությամբ, մեծ հեռանկարով, իր հարատև ազդեցության տակ բարեկամ պետություն է ստեղծվում, ճիշտ համապատասխան իր ազգային ու պետական շահերին, և ինքը երաշխավորված կոնկրետ օգուտներ կստանա դրանից:

- *Ուրեմն՝ օգտակար գործակցության ակնկալություն կարելի՞ է ունենալ այլ պետությունների և մանավանդ գերպետությունների (կայսրությունների) հետ:*

- Իհարեւ, կարելի է, շատ էլ նպատակահարմար է թե՝ գործակցել, թե՝ ակնկալել և թե՝ օգտվել, **բայց...** Բայց այնքանով, ինչքան կարող ես քեզ «գործընկեր» դարձրածդ գերպետությանը շահագրգռել քո իրական (ռեալ) եղածով, ունեցածով ու նաև դրանք հմտությամբ կիրառելու, գործադրելու, գործածելու կարողությամբ՝ տեղին և ժամանակին, ու անպայման նաև նրա ցուցումով և հաստատապես նրա օգտին:

- *Ու այդ դեպքում կստացվի՞:*

- Անպայման կստացվի, որովհետև, եթե այդ պետություններն այդքան մեծացել, հարստացել, հզորացել, «գեր» են դարձել, նշանակում է գիտեն «այս աշխարհի կանոնները (խաղերը)» և ըստ այնմ՝ իրենց շահը պաշտպանելը, իրենց օգտին գործելը: Ու եթե դու էլ խաղաս այդ կանոններով և մանավանդ միշտ ծիչտ խաղաս, այսինքն՝ արդարացնես նրանց ակնկալիքները և վստահություն շահես, որպես անկեղծ, նաև հմուտ (գործեն քաջ) խաղացող, անպայման կստանաս քո տեղը և քո բաժինը: Իսկ եթե ընթացքում տեղդ ու բաժինդ կարողանաս մեծացնել (ըստ խաղի կանոնների), դա էլ քո՛ պատիվը, որն ի դեպ կուղեկցվի, եթե ոչ բոլորի, բայց անպայման շատերի **«գործնական ծափողույմներով»**, այն է՝ փոխադարձ շահավետ գործակցության նոր ստեղծմամբ կամ եղածի վրա ավելացմամբ, և այդպես շարունակ:

Իսկ այդպիսի հնարավորությունն իրականություն դարձնելու համար քեզանից՝ մեզանից շատ բան է կախված, որի

կատարման համար **պետք է հմտանալ՝** համապատասխան ժամանակ տրամադրելով, այլ ոչ թե բլոտ և այլ խաղեր խաղալով:

- **Բայց ինչո՞ւ գոնե վերջին երկու-երեք հարյուր տարի-ներին այդպիսի բան չստացվեց:**

- Որովհետև պատրաստ չէինք: Յանահայկական և պետական միջազգային հարաբերությունների գիտելիք ու փորձառություն չունեինք, ազգը կորցրել էր իր այդ բնագավառների կառավարումն ու կազմակերպվածությունը և այդպիսի գործողությունների համար տեր ու առաջնորդ չուներ («Անեն գլխեն ձայն մը կելլար, լսող չկար»):

- **Բայց, այնուամենայնիվ, ինչո՞ւ 1828 թվականին Արևելյան Յայաստանի ազատագրմամբ անկախություն չստացանք, չէ՞ որ խոստացվել էր: Ուրեմն խարվեցի՞նք:**

- Այո՛, խարվեցինք, բայց ոչ թե որովհետև խոստում էինք ստացել, այլ խարվեցինք, որովհետև կարծեցինք, թե խոստում ենք ստացել: Մենք կարող էինք ստանալ և ստացանք միայն այն շրջանակի հնարավորություններից, որոնք մեզ հասանելի էին մեր կարողության համաձայն:

Այո՛, թեզ արժանի շրջանակից դուրս ոչինչ չեն կարող ստանալ (ըստ այս աշխարհի կանոնների), բայց միաժամանակ «հնարավոր» շրջանակի մեջ մինչև իսկ առավելագույնը կարող ես ստանալ, եթե պատրաստ ես. պատրաստված ես դրա համար, հնուտ ես ու նաև կարող ես, ի վիճակի ես ստացած կառավարելու, պահելու, զարգացնելու: Մենք ստացանք այնքան, ինչքան այս աշխարհի խաղի կանոնների համաձայն մեզ կարող էր հասնել ըստ մեր կարողության ու ըստ մեր վիճակի... Եթե ավելին չստացանք, **դա մեր խնդիրն էր: Խնդիր, որի կատարման համար, ի վերջո, հարկ էր, որ ներսից ու դրսից, մերոնցից և ուրիշներից դաս առնենք, ըստ այնմ փոխվեինք, պատրաստվեինք...** Սակայն դա արեցինք: Քիմա անո՞ւմ ենք... Թող դա պարզաբանվի, որ վերջապես հարկ եղածը անենք, ստեղծենք, ունենանք և մանավանդ նախապատրաստվենք, որ-պեսզի առաջիկայում մեր դեմ նոր որևէ նախահարձակման դեպքում (ինչի սպառնալիքն ակնհայտ է) հանկարծակի

չգանք, մենակ, «անտեր» չմնանք՝ դրանց կորստաբեր հետևանքներով։

Այս պարզ, բայց էական խնդիրը կատարվում էր (կամ ջանք էր գործադրվում կատարելու) հայոց թագավորների կողմից։ Մեր թագավորությունների անկման ժամանակ այդ կատարվում էր զորեղ նախարարների նախաձեռնությամբ։ Իսկ երբ նրանք էլ չկային, ասպարեզում դա այս կամ այն չափով կատարվում էր Յայաստանյաց Եկեղեցվո կողմից։

Մոտավորապես 120 տարի առաջ այդ կենսական խնդիր կատարումն սկսեցին իրենց վրա վերցնել հայ կուսակցությունները, բայց չկարողացան կատարել, ու այդ ուղղությամբ իրենց ջանքերն աստիճանաբար հասան գրոյի։

Խորհրդային Յայաստանն ի վիճակի չեր նման խնդիր կատարելու և չկատարեց, իսկ այն, ինչ որ կատարեց, գուրկ էր համազգային համադրումից և ընդհանրապես ազգային քաղաքականությունից։ 1991 թվականին հրչակված Յայաստանի անկախ Յանրապետությունը, տրամաբանորեն, պիտի անմիջապես լրացներ այդ բացը, բայց չարեց, ու այնուհետև դա էլ տեղի չունեցավ։

Եվ այժմ չի եկել արդյոք (ուշացած) ժամանակը, որ դա արվի։ Արվի պետականորեն՝ հայ թագավորների, նախարարների ցուցաբերած նախանձախնդրությունից և պատրաստականությունից նույնիսկ ավելի բարձր նախանձախնդրությամբ և պատրաստականությամբ, ու նաև հնտությամբ, որովհետև այլևս տեղ չկա ո՛չ սպասելու, ո՛չ էլ նահանջելու...

Ի վերջո, հայ ժողովրդին, Յայաստանին տնտեսական (և ո՛չ միայն տնտեսական) շնչահեղձության ենթարկելու թշնամական նպատակադրումը, ծրագրավորումը և տարբեր միջոցներով կիրառումը, որը տեսնում ենք 20-րդ դարավերջին ու 21-րդ դարասկզբին, նորություն չէ։ Այն սկիզբ էր առել շատ վաղուց և հիմնավորապես սկսեց գործադրվել 19-րդ դարի վերջին ու 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրության կողմից և շարունակվեց Թուրքիայի նացիստական, դրա «հոգեզավակ» Աղրբեջանի ռեժիմի ու Ռուսաստանի բոլշևիկյան կայսերապաշտ

քաղաքականությամբ, ինչպես նաև միջազգային անտարերության, շահանոլության և կամ անզորության պատճառով։ Ասվածի ճշմարիտ լինելը երևում է ինոն նրանից էլ, որ Հայաստանից կոտորակված Հայաստանի ներկայիս հանրապետությունը սեղմված, շրջափակված է և գրկված որևէ ծովային ելքից։

**- Այնուամենայնիվ, մենք ի՞նչ կարող էինք ստանալ այն ժամանակ, որ չստացանք, և որը հիմա՝ մեր այժմյան կարողությունների պայմաններում ստանալը կլինի հնարավորների մեջ լավագույնը (լավագույն տարբերակը), երբ ազգի երկու երրորդը ցիրուցան՝ աշխարհասփյուռ է և ազգային եկամուտ չի ստեղծում, Հայրենիք Հայաստանի և պետության պաշտպանությանն ու զարգացմանը (որպես պարտավորություն) չի մասնակցում, այլ ընդհակառակը՝ ինոն ի՞նքը շատ մեծ կարիքների մեջ է։ Նախ և առաջ՝ իր ազգային ինքնությունը, գոյությունը պահելու համար, և միաժամանակ Հայաստանի ու Արցախի Հանրապետություններն էլ բազում կարիքների մեջ են՝ համարյա լրիվ շրջապատված նախահարձակ թշնամիներով և գուրկ ազատ ելքից դեպի արտաքին աշխարհ։ Եվ բացի այս ու ննան դժվարություններից, խնդիրներից, նաև եական նշանակությամբ խնդիր է հավատքի, գաղափարականության, բարոյականության, կենցաղավարության ու ազգային միասնության մեր վիճակը, որի կատարումը նախապայման է մեր մնացած խնդիրների կատարման համար։ Եվ այս քաղաքական ազատությամ ու ինքնիշխանության նվազագույն գիջումով՝ մեր ազգային ու պետական անվտանգության և դրանց հնարավորինս շեշտակի՝ զարգացման ու հզորացման համար առավելագույն հարմարավետ պայմաններ ու աջակցություն ունենալ դրանով շահագրգուված մի շրջանակի մեջ (իհարկե, ոչ առանց մեր համապատասխան ջանքերի)։**

Եվ դա՝ որպես առաջին փուլ մեր առավել կենսունակ պետականացման նպատակի և մեր ազգային մնացած նվիրական իղձերի իրականացման համար։

Եվ դա նախևառաջ Աստուծո օգնությամբ ու Նրա փառքի համար։

Երեքշաբթի, 05 - 05 - 2020թ., ժամը 18:30

## **ԽՈՐՀՐԴՎՅԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՈՈՒՍԱՄԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ, ՈՈՒՍԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ**

Խորհրդային իշխանության գործնական ռուսականությամբ ազգապետականացումը տեղի ունեցավ փոլային եղանակով, ռուսական զգալի կորուստներով և դեռ անգամ ամեն ռուսականը կորցնելու ռիսկով:

Դամաշխարհային տիրակալության հասնելու նպատակով միջազգային դավադիր ուժերի մղած պայքարի մաս (գուցե գլխավոր մաս) էին կազմում ռուս և Ռուսական կայսրության տիրապետության ներքո գտնվող ժողովուրդների նախնառաջ հոգևոր ու ազգային ինքնությունն օտարածին գաղափարներով հանակելն ու ախտահարելը: Ախտահարում՝ ազդելու, աղավաղելու և հեռացնելու համար նրանց՝ Աստուծու և մեծ մասամբ հատկապես քրիստոնեական հավատամքից ու դրանից բխող և դրա վրա հիմնված մարդկային-ազգային գաղափարականությունից ու բարոյականությունից: Եվ, իհարկե, նաև ըստ այն ուսուցումից, կրթությունից, կենցաղավարությունից, մշակույթից ու ընկերային հարաբերություններից:

Ռուսական կայսերական ծառն իր ճյուղերով հանդերձ ենթարկվեց հենց այդպիսի՝ գենքի նվաճմանը և դարձավ այդ բնույթի նպատակի համաշխարհային իրագործման համար կայսրություն-գաղութ, առաջին հերթին՝ իր մարդկային ռեսուլտմերի չարաշա՞ր գործածությամբ ու անխնա՛ վատնումով, որը նախկինում երթեք չէր եղել:

Եվ այդ պայմաններում սկսվեց ներքին բաքուն, սակայն հետզհետե առավել հանրահայտ դարձած կենաց ու մահու դաժան պայքարը՝ թուլացած, տկարացած ռուսների (ինչ անվան

տակ էլ լինեհօ), նրանց հայրենիք Ռուսաստանի ու այն նվաճած, գաղութացրած օտարածին ղեկավարության միջև (որը սկզբում կոչվեց Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկյան (ՌՍԴ(բ)Կ), ապա Խորհրդային Միության կոմունիստական կուսակցություն (ԽՄԿԿ): Եվ դա պայքար էր պարտված Ռուսական կայսրության ամեն տեսակի ռեսուլսներին ու կառավարման լծակներին տիրապետելու համար:

Այդ պայքարում թեև ուժերի հարաբերակցությունն սկզբից ևեր թեքվել էր իշխանությունը մեծ նասամբ նվաճած, կրկնակի դավադիր օտարածին ուժերի կողմը, այդուհանդերձ մեծ փորձություններից, ռիսկերից, կորուստներից ու քաղաքական-գաղափարական վայրիվերումներից հետո Ռուսիո և նրա կայսերական «Ժառանգության» կառավարումն սկսեց աստիճանաբար «ազատագրվել» այդ օտարածին տիրակալությունից և դրա գաղափարների ու նպատակների ազդեցություններից: Արդյունքում՝ ձևով միջազգային (ինտերնացիոնալ), բայց բովանդակությամբ՝ պետական-ռուսամետ կողմնորոշմանը ուժը, տիրելով Ռուսիո կայսերական ժառանգության կառավարման լծակներին, ռեսուլսներին ու դրանք օգտագործելով իր ներքին իշխանության ամբողջացման համար՝ միաժամանակ կիրառեց նաև իր արտաքին՝ համաշխարհային նվաճումների համար:

Սակայն Ռուսիո կայսրության ժառանգության այդ «ապագաղութացման» գործընթացը տեղի էր ունենում այնպիսի՝ ցնցումներով, որոնք նոր կայսրությունում և հատկապես դրա ծայրամասերում շատ անգամ ստեղծում էին փլատակներ, որոնց չափն ու հետևանքները կախված էին այդ տեղերի ազգային ոգու, գիտակցության, կազմակերպվածության, քաղաքական ու քաղաքացիական գրագիտության, պատասխանատվության զգացման, նվիրվածության, պատրաստականության, պատրաստականության և նման այլ մակարդակներից:

Այդ և այլ պատմական անցքերի ու ըստ այնմ՝ պատմական նշանակության հետևանքների արդյունքում հայությունը և Հայաստանը եղան ամենաշատ վնասվողներից, եթե ոչ ամենա-

շատ վնասվողը՝ ազգերի, երկրների և պետությունների գոյության ու զարգացման չափանիշների հաշվով...

Եվ դա առավելապես տեղի ունեցավ Ռուսական կայսրության փոփոխման պատմական հաջորդ ժամանակաշրջանում՝ խորհրդային իշխանության գործնական ռուսականությամբ ազգապետականացմանք տեղի ունեցած զարգացումների ընթացքում, երբ նյութական վիճակից բացի, և դեռ ավելին՝ որոշիչ էր մեր ազգային հոգևոր, գաղափարական, բարոյական, մտավոր գոյավիճակը, և միաժամանակ, ըստ մեր հավատամքի, առավել քան որոշիչ էր Երկնային կողմից երկրային դասավորումը: Այդ առումով ինչո՞ւն, ինչպե՞ս ու հետո՞, ի՞նչը հարցերը ու նաև այդ առնչությամբ հայության, Յայաստանի և Օսմանյան, ցարական, խորհրդային ու այլ տիրակալությունների դերակատարության և դրանց հարակից հարցերը, Վերոնշյալ օրինաչփությունների հաշվարկումներով, հայ ներկայիս իրականությունում և նաևնավորապես հոգևոր ու աշխարհիկ դեկավարության կողմից պատշաճորեն ու անբողջությամբ, ըստ Երևույթին, չեն դոված: Մինչդեռ պետք է դովեն, ու այդ ինչունների պատասխանները ստացվեն: Պատասխաններ, որոնք հիմք կդառնան, լույս կսփռեն և ուղի կնշեն, թե հայն այսուհետև ինչպե՞ս պիտի հայ լինի, ինչպե՞ս պիտի հայկականությանք ապրի ու ըստ այնն ինքը պաշտպանելով, նաև իր հայրենիքն ու պետությունն էլ պաշտպանի և ածի, զարգանա ու բարձրանա... **իր հավատամքի համաձայն չափանիշներով:**

Եվ հայն ինչպե՞ս պիտի դա անի, երբ հայության, հայկականության ու հայրենիք Յայաստանի պատմականորեն բնականոն աստիճանի վերականգնումը նարդկության ամենաբարդ ու դժվարին խնդիրներից է: Յայն ինչպե՞ս կարող է այդ անել:

- Ինչպես:

- Տես հավատքի աղբյուր՝ կյանքի հրահանգավորումը՝ Տիրոջ ընծայած Ավետարանը, ուր ասվում է, թե «Աստուծոն համար անհնարին բան չկա»:

Քեզ համար էլ չկա, հայ, եթե հավատքով հավատարին լինես քո Արարչին:

Դիմումաբարի, 25 - 02 - 2010թ., ժամը 23:50

## **ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔ** (Հոգեկան պատկերացում)

Կարո՞ղ է պատահել, որ մի պահ պահանջ զգանք, անհրաժեշտ համարենք մի հայացք գցել, նայել, թե ինչ կասեին մեր մասին, մեր ընթացքի մասին մեր նախնիները, հայ ազգի իսկական մեծերը՝ երախտավորները, նվիրյալները, սրբերն ու նահատակները: Ելնելով նրանց եռարյունից՝ արտահայտված նրանց ապրած կյանքով ու գործերով, ամենայն հավանականությամբ, նրանք կասեին. մենք եթե դեռ մենք ենք և լրիվ չենք փոխակած ու հեռացած մեր հայկան եռարյունից, չենք աղավաղվել, չենք այլասերվել երկարատև ազատազրկությունից, պետականազրկությունից և հավատարիմ ենք Աստվածաշնորհ հավատքին, մեր ազգին շնորհիված հավատանքին, ապա մեր ազգային և պետական քաղաքականության հիմքում պետք է լինի այն սկզբունքը, որ հայոց երկիրը, պետությունը չի դաշնակցում, առավել ևս չի միանում ու միասնություն չի կազմում այն երկրների հետ, որոնք հեռացել են Աստծուց:

Դայ ազգային և պետական քաղաքականության այդ սկզբունքի կիրառումը վերաբերում է նաև այն երկրներին, որոնք ձևով՝ առերես, գուցեև իրենց Աստվածապաշտ են ցույց տալիս, բայց իրենց օրենքներով, քաղաքականությամբ, գործերով և կյանքի ապրումով չեն հետևում, այլ հակառակվում են Աստուծու ավետարանական պատգամներին:

Եվ այդ սկզբունքային կեցվածքում հայությունն ու Դայաստանը պետք է անկախ ու անվախ լինեն, քանզի այն Աստվածապատգամ, Աստվածահաճո ու Աստվածապաշտպան է: Դայությունը և հայոց պետությունը պետք է վախենան հարաբերվելուց ու առավել ևս դաշնակցելուց այն երկրների հետ, որոնց սահմանադրությունը, օրենքներն ու արարքները, ապրե-

լակերպը հակադրվում են Աստվածային բարոյական պատգամներին:

Այս առումով ՀՀ արտաքին գործերի և արդարադատության նախարարությունների կամ Սահմանադրական դատարանի միջոցով պետք է ծերնարկվի աշխարհի երկրների (պետությունների) դասակարգումը՝ ըստ Աստվածաշնչյան-Ավետարանական բարոյականության նորմերի գնահատականների (մոտավորապես այնպես, ինչպես ԱՄՆ պետական դեպարտամենտն է գնահատում և հրապարակում աշխարհի երկրներում մարդու իրավունքների, խոսքի, մամուլի ու այլ ազատությունների գնահատականները՝ իր սահմանած չափանիշներով): Եվ եթե հայոց պետությունը ինչ-ինչ պատճառներով դա չսկսի անել, ապա հասարակական կարգով դա պետք է անի հայությունը՝ իր սահմանած որոշակի չափանիշներով ու ըստ այնն գնահատելով մոտավորապես այնպես, ինչպես գնահատում և հրապարակում են աշխարհի տարբեր երկրներում խոսքի, մամուլի և այլ ազատությունների մակարդակը, այսպես կոչված „Freedom House“-ները՝ «Ազատության տները»:

Այդպիսով, Աստված կգոհանա, կօրինի, կօգնի և հաջողություն կտա հայությանն ու Յայաստանին: Եվ ովքեր հավատում են դրան, պետք է բարձրաձայնեն. «Յավատա՛ հայ, և մի՛ վախեցիր, քանզի ինչպես Սուրբ զորավար Վարդանն իր զորքին կոչեց, «Վախը թերահավատության նշան է», որն իրենք վաղուց են վերացրել իրենց միջից, և դրա հետ վախն էլ պետք է վերանա: Իսկ եթե մեր մեծ, սուրբ քաջ նախնիք վերացրել էին իրենց միջից թերահավատությունը, հետևապես և վախը, ապա մենք ինչո՞ւ չպետք է այսօր նույնն անենք. չէ՞ որ մենք, նրանց ժառանգները լինելով, պարտավոր ենք նրանց օրինակին հետևել: Մանավանդ որ վա՞որ Տիրոջը, ժառանգությամբ քրիստոնյա, Աստվածասեր ժողովուրդ ենք:

Դիմումագրքի, 30 - 04 - 2015թ., ժամը 23:00

## **ՄՈՍԿՎԱՇ, ՄՈՍԿՎԱՇ**

Իննսունիինգ տարի առաջ և դրանից հետո երեք տասնամյակից ավելի Մոսկվայի կողմից ուղարկված կամ նշանակված խորհրդային կոմիսարները (որոնք տարբեր բնութագրումներից բացի, նաև անաստված՝ աստվածամերժ ու աստվածամարտ էին), նահատակ Յայաստանում արգելում, վատարանում և դաժանորեն պատժում էին յաթաղանից դեռ սրտներն արյունահոսող հայերին՝ ոչ թե վրեժ կամ նույնիսկ բողոք, այլ իրենց զոհված հարազատներին և իրենց կորցրած երգիրն ու տները հիշելով՝ միայն ցավ իսկ հայտնելու համար...

Բայց հարյուր տարի հետո Մոսկվան ուղարկեց Կրեմլի տիրակալին՝ գալու խորհրդագերծ, ազատ Յայաստան ու աշխարհով մեկ և ջարդարարների երեսին հայտարարելու Յայոց ցեղասպանության՝ համանարդկային ոճրագործության մասին և սեր, համերաշխություն ու աջակցություն հայտնելու իրենց հավատքին ու ազգային ինքնությանը հավատարին նահատակ սրբերի սերունդներին՝ հայ ժողովրդին:

**Աստված ինչե՞ր ասե՞ս՝ չի մնում...**

**Իսկ մեզ ինչ է մնում անել:**

**Մեզ մնում է հոգեղենությամբ՝**

- նայելով՝ տեսնել,

- լսելով՝ իմանալ, հասկանալ,

- ու ըստ այնմ՝ զգաստանալ, վերահավատավորվել, վերագողափարականանալ, վերաբարոյականանալ, համապատասխանորեն կազմակերպվել, կառավարվել, հարաբերվել և գործել, գործել ու գործել՝

- ի վերածնունդ ու վերելք մեր ազգի, հայրենիք Յայաստանի և պետության,

- հօգուտ նաև համայն մարդկության,

- ամենաէականը՝ ի փառս Սուրբ Երրորդությամ՝ Աստուծուն և Նրա արդարության:

Երեքշաբթի, 13 - 09 - 2022թ., ժամը 11:30

### **ՀԱՐՑԵՐԻ ՀԱՐՑՈՎ ՈՒՄ ԵՆՔ ԴԻՄՈՒՄ...**

Երբ մեր սահմանային դիրքերի և սահմանամերձ բնակավայրերի, ճանապարհների, ենթակառուցվածքների վրա թշնամին կրակ է տեղում, մեր երկրի իշխանություններն արտակարգ միջոցների են դիմում, արտակարգ միջոցներ են ծեղը առնում: Եվ դրանցից առաջններից է տարբեր կողմերին դիմելը, նախ՝ դաշնակիցներին, սերտ գործակիցներին, հետո՝ սերտ բարեկամներին ու նաև բարեկամների և միջազգային կարևոր կազմակերպությունների դեկավարներին կամ պաշտոնական ներկայացուցիչներին: Եվ դա անում է մեր պետության դեկավարությունը՝ դիմելով աշխարհին:

Իսկ մե՞նք, որ ճանաչվում ենք որպես քրիստոնյա ազգ (այն էլ՝ առաջինը պետականացած) ու հետևապես ճանաչում ենք Երկնքի քաօպավորությունը՝ որպես աշխարհակերտ ու աշխարհատեր իշխանություն, որպես ամենաարդար ու ամենակալ զորություն, այդ դեպքում մեր դեկավարությունը և մանավանդ մեր հոգևոր իշխանությունը, ինչպես հարկն է, դիմում են Երկնային Տիրոջը, իրենց կողմից և մեր՝ ժողովրդի՝ կողմից: Եվ արդյո՞ք դիմում են՝ գիտակցելով ու վստահ լինելով, որ իրենց դիմումն ու խնդրանքը կատարվում են, երբ Տիրոջ կամքը, խոսքը, պատվիրանները կատարված են, կատարվում են:

Իսկ եթե չեն կատարվել ու երկար ժամանակ անուշադրության են մատնվել, անտեսվել, երթեմն և հակառակն է արվել, այդպիսի «Երեսով» կարո՞ղ են, համարձակություն կունենա՞ն վերստին դիմելու՝ դարձյալ գոյության պաշտպանություն ստանալու համար:

**Սա ի՞ր տեսակի մեջ հարցերի հարցն է, որի պատասխանը**

գտնելու համար պետք է հավատալ, որ անհրաժեշտ է դիմել պատմությանը և մանավանդ՝ Տիրոջ խոսքին, մեզ պարզեած իր Սիածին Որդու միջոցով, քանի որ ինքը բարի է, ողորմած է և սիրում է մեզ (ինչպես իր բոլոր արարածներին) և, անտարակույս, կպաշտպանի: Եվ ոչ միայն իր հովանու տակ կառնի, կպաշտպանի, այև կրարձրացնի և դարձյալ որդեգոյալ կարգավիճակի կհասցնի հավերժական երանության մեջ, եթե...

Եթե մեղայի գանք մեր և մեր այն նախնիների համար, որ ուրացան, հեռացան և հակառակվեցին իրեն՝ գործակցելով իր հակառակորդների հետ: Այն ժամանակ մեր նախնիներն է՝ մեր ազգի մեծերը, սրբերը և վասն հայրենյաց ու վասն հավատող արքերի ընթացքում բոլոր հավատարիմ մնացածներն էլ կցանկանան միանալ մեր խնդրանքին, աղերսանքին՝ մե՛ծ հույսով ստանալու Ամենակալ Տիրոջ աջակցությունն ու փրկությունը:

Հավե՛րժ փառք, պատիկ, հավատարմություն և սեր ու գոհություն Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն՝ ԱՍՏԾՈՒՆ:

Կիրակի, 27 - 09 - 2020թ.

## ԻՆՉՈ՞Դ Է ԱՅՍՊԵՍ

Ինչո՞ւ է այնպես, որ մեր հակառակորդների հետ ռազմական գործողություններն սկսվում են, երբ թշնամին իրեն ամենապատրաստ, ամենազորեղ ու քաղաքական, դիվանագիտական և այլ առումներով ամենահարմար վիճակում է զգում կամ համարում: Եվ կամ խնդրում, տարբեր միջոցներ ու այլոց միջամտությունն է «դասավորում» զինադադարի, մարտական գործողությունների դադարեցման համար, երբ իրեն արդեն տկարացած է զգում ու վերջնական պարտության ենթակա է համարում: Իսկ որոշ ժամանակ անց էլ, երբ այդ թշնամին իր պարտությունից դասեր է քաղում, աջակիցներ է ավելացնում, նորովի զինվում, մարզվում ու համարում է, որ հասել է մեր նկատմամբ ռազմական (ու նաև քաղաքական, դիվանագի-

տական, տնտեսաֆինանսական ու այլ բնագավառների) առավելությունների, նորից գաղտագողի կամ ստոր, նենգ պատճառներ բռնելով՝ դաժան միջոցներով հարձակվում է մեզ վրա: Եվ դա անում է նաև ամեն կերպ՝ միշտ պատրաստ լինելով անմիջապես գինադադար հաջողեցնել, երբ սկսում է պարտվել:

Ինչո՞ւ է այդպես, ինչո՞ւ ենք մենք «քնած» կամ «քրնած» մնում, իսկական, կենսական խնդիրներով գրաղվելու փոխարեն իրարամերժ հակասությունների մեջ սպառվում, մեր ազգի, երկրի ու պետության ժամանակն ու էներգիան վատնում և նանավանդ բոլոր բնագավառներում ու ամեն կերպ **նախապատրաստվելու մասին չենք մտածում**, մինչև «դանակը մեր ազգի և պետության ուսկորին է հասնում»:

Ինչո՞ւ է համարյա միշտ այդպես: Չէ՞ որ այդ «ինչու»-ին ճիշտ պատասխանելն ու ըստ այն մեր մեջ փոփոխություններ անելը մեր գոյության մեջ շատ բան կփոխի դեպի դրականը: Եվ դա կլինի նաև Տիրոջ հաճությամբ ու Նրա օգնությամբ:

\* \* \*

Ինչպե՞ս է լինում, որ մինչև Հայաստանի ատոմակայանի վրա հարձակվելու՝ Աղրբեջանի իրոք կատարած սպառնալիքի հազիվ տարածվելը Աղրբեջանն ամբողջ աշխարհով մեկ սկսեց տարածել իր ստահող տեղեկությունը, թե իբր Հայաստանը պատրաստվում է հրթիռահարել Մինգեչառուրի ջրամբարը: Այդ ինչպե՞ս է լինում: Ինչո՞ւ է այդպես:

\* \* \*

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում 2020թ. սեպտեմբերի 27-ին հնչած ելույթներն ու նաև դրանց համաձայն ծրագրերը, ջանքերը, գործերը պետք է այնտեղ լինեին (և ոչ միայն այնտեղ) առնվազն (գոնե) մի քանի տասնյակ տարիներ առաջ. «անվտանգության, պաշտպանության համագոյային կազմակերպմանը բոլոր դեպքերում հաղթանակների ապահովում և դրա համար ազգի բոլոր խավերի ու հատվածների միաբանություն, միասնություն, կամք, վճռականու-

թյուն և լավ հաշվարկված, նախապատրաստված, մատակարարված, կազմակերպված գործունեություն»:

\* \* \*

Տե՛ր, Տե՛ր, Տե՛ր, գրառաւ Տեր, ներո՞ղ ու փրկո՞ղ Տեր. մեզ մեծ մեղք մի՛ համարիր, որ ինչպես հարկն է, անկեղծորեն քեզ չենք դիմում, չենք աղոթում ու չենք խնդրում պաշտպանություն չարից՝ թշնամիներից, պիղը ու խավար ուժերից:

Ների՛ր, Տե՛ր, որ մենք քեզ հիշում ենք, այն էլ մասամբ և ըստ երևույթին միայն շրթումքներով, երբ լիովին անզոր ենք դառնում, իսկ երբ մեզ աջակցում, փրկում, հաջողություն ու հաղթություն ես տալիս, մենք սկսում ենք քեզ մոռանալ և նույնիսկ ուրանալ ու քեզանից հեռանալ՝ մեծամտանալով, գոռզանալով, ամբարտավաճանալով ու քեզ հակառակ մտածելով, քեզ հակառակ գործելով և քեզ հակառակ ապրելով, թե «Մենք ենք, որ կանք»... Մեղա՛ Տեր, մեղա՛ Տեր, մեղա՛, մեղա՛: Օգնի՛ր մեզ, որ ուղղվենք: Ծնո՞րհ արա մեզ, որ զգաստանանք, դարձի զանք և մեր մեջ վերագտնենք մեր նախնիների, մեր մեծերի, մեր սրբերի և վասն հավատո ու վասն հայրենյաց մեր նահատակների առաքինությունները, բարեմասնությունները, որպեսզի դարձյալ քո սիրեցյալ ժողովուրդը դառնանք. Տե՛ր գրառատ, Տե՛ր ողորմած, Տե՛ր ամենակալ, գրա՛ մեզ:

\*\*\*

Այսօր՝ կիրակի 2020թ. սեպտեմբերի 27-ի իրադարձությունների արիթրով վերիիշվող մտքերից է նաև այն, որ վերջին երեսուն տարիների ընթացքում ազատ ու անկախ Հայաստանի ղեկավար (հետևապես և հայության ազգապետ) դարձել են ոչ թե բոլոր նրանք, որ մեր հայրերի՝ մեր մեծերի, սրբերի, նահատակների հավատքով, ու ըստ այդմ՝ ազգին, պետությանը ծառայելու ձգտումով են եկել, ու նաև ազգի կամ գոմե Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մեծամասնության ընտրությամբ (ցանկությամբ) են հասել այդ պաշտոնին, դիրքին, այլ նրանք, ովքեր, օգտվելով ժողովրդի վստահությու-

նից ու նաև անփորձությունից ու միամտությունից՝ մի դեպքում՝ ճարպկորեն ու այլ դեպքում էլ՝ այդպես ու նաև խարդախ, հանցավոր ու կոպիտ միջոցներով են կարողացել դառնալ Հայաստանի ու հայության գոյությունը որոշողները:

Եվ ստացվեց, որ նմանների կառավարման ընթացքում մեր ազգային հոգեբարոյական արժեքները հիմնականում արհամարհվում կամ ծեականորեն էին ի հայտ գալիս, և հոգեբարոյական ու գաղափարական բարենասնությունները՝ նվազագույն չափով կիրառվում: Իսկ խորամանկություն, անազնվություն, ազահություն, խարդախություն ու տարբեր այլ ախտերն առավելագույն չափով էին համատարածվում և ազգը, երկիրն ու պետությունը ճնշման և սահմանափակումների մեջ պահում, տկարացնում ու խոցելի դարձնում:

Եվ սա ունի բազում պատճական ու ժամանակակից պատճառներ. բայց մի պատճառը, որը, ըստ երևույթին, գործում, ազդում է բոլոր ժամանակներում և բոլոր պայմաններում (տվյալ դեպքում և մեր հայ իրականությունում) այն է, որ ազգի և հատկապես Նրա ղեկավար ու մտավորական խավի փաստացի կյանքում (որոշումներում, ընտրություններում, արարքներում, գործերում, ապրելակերպում) ուրացվում է Աստուծոն գոյությունը, և անտեսվում են Նրա կամքն ու կանոնները, որ Նա պատգամել է տարբեր կերպերով և մանավանդ իր Միաժին Որդու մարդացմանք, Նրան աշխարհ ուղարկելով մեր փրկության համար: Փրկություն՝ ի գին իր տանջանքների և Խաչի վրա հեղած արյան:

Եվ հատկանշական է, որ այդպիսի վիճակում գտնվող անձը, հասարակությունն ու ազգն իրականում գտնվում են խավարի մեջ՝ զուրկ տեսողությունից, ընկալումից, հետևապես և կյանքից:

Հայ ազգ (խոսենք մեր մասին) և հայ մարդ, թոթափիր այլասերման թմբիրը քո Վրայից, որպեսզի Տիրոջ լուսավորության ճառագայթները քեզ մաքրեն, որով և ազնվանաս, որով և դարձյալ Աստծուն հարազատ դառնաս, Նրա կամքը կատարող

և Նրա ճամփով ընթացող, մինչև իրական կյանքի հավերժություն:

Երկուշաբթի, 02 - 04 - 2014թ., ժամը 24:00

## **ՄԵԾ ՈՒ ԷԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ**

(Որը դուքս է մնացել հայ ազգային

**և պետական տեսադաշտից ու հաշվի չի առնվում)**

Հայությունը՝ հայ ազգը, հայոց պետությունը մեծ մասամբ ազատ է, անկախ է ու ինքնիշխան է ոչ թե երբ զորեղ է՝ զինված ուժերով, տնտեսությամբ, կրթությամբ, գիտությամբ, մշակույթով, ներքին ու արտաքին քաղաքականությամբ, դիվանագիտությամբ և այլն, և այլն, այլ երբ ազատ ու անկախ է հոգով, ազգային ոգով, ըստ այդմ՝ գաղափարով, մշակույթով, կրթությամբ, մտայնությամբ, մտածելակերպով ու նաև կենցաղով: Երբ այս վերջինները լինեն, առաջին նշվածները և դեռ շատ ավելին կլինեն ու կլինեն գոյություն ունեցող ամենազոր օրինաչափությամբ:

Երբ ու եթե հայ ազգը՝ հայությունը, կորցնի (մոռանա, կամա թե ակամա ուրանա) և զրկվի իր հայրենի հավատքից ու հետևապես նաև այն ամենից, ինչ բխում է և հիմնված է այդ հավատքի վրա, ապա հայ ազգից և նրա ամբողջական հայրենիքից կոտորակված այսօրյա Հայաստանի անունները ի՞նչ-որ երկար ժամանակ գուցե կննան, սակայն կարծ ժամանակ անց ազգն ու հայրենիքն այլևս չեն մնա:

Եվ ի՞նչ: Ի՞նչ կմնա: Կմնա թախիծ, անեծք և արհամարհանք այն հայերի հանդեպ, որ հոգեբարոյական ախտահարմանք տկարացած՝ չկարողացան պահել, գիշեցին ազգն ու հայրենիքը: **Զկարողացան պահել բազում սերունդների բազում զոհաբերություններով ու նաև քաջազրություններով և ազնիվ ապրելակերպով պահպանված ու մեզ փոխանցված ազգն ու հայրենիքը:**

Եվ չպահպանելու ու կորցնելու հիմնական պատճառը միայն թշնամիների զորությունը, դաժանությունը, խարդախությունը կամ նման ինչ-որ բան չէ, այլ... Այլ հիմնականում նաև՝ մեր հավատագրկությունը, գաղափարագրկությունը, բարոյագրկությունը, որով և այլասերությունն ու բազմակողմանի կոռումպացվածությունը, պարտազանցությունը, նաև ծովությունը, անտարբերությունը և մարդկային ու ազգային ինքնության տկարացումը, մինչև իսկ կորուստը: Եվ այդ բոլորը եղավ, որովհետև դարձանք նյութապաշտ:

**Ի՞նչ է նշանակում նյութապաշտ: Առաջին հերթին՝ հոգեկանությունից գուրկ՝ եսապաշտ...**

Եվ հայության կորուստները (զգնանք շատ հետ)՝ 19-րդ դարավերջից համիլյան ջարդեր և 20-րդ դարասկզբից դրանց շարունակությունը՝ ջարդեր Տարոնում, Սասունում և այլն, մինչև Կիլիկիա՝ Աղանա և այլն, ու հետո համահայկական, համընդիհանուր ջարդ՝ ցեղասպանություն և հայրենազրկություն, Սփյուռք ու «սպիտակ ջարդ» և դրանց մինչև օրս հարածուն շարունակությունը սպիտակ և կարմիր գույներով:

Թեև օտարազգի թշնամիների ձեռքերով են այդ բաներն արվել մեր դեմ, սակայն այդ ձեռքերը շատ հաճախ մենք՝ հայ կոչվածներս ենք զորացրել և ուղղորդել ի վեաս մեզ՝ մեր շատ արածներով (որ երբեք չպետք է անեինք) և մեր շատ չարածներով (որ պետք է անպայման անեինք, պարտավո՞ր էինք անել, բայց չէինք անում): Ու այդ դրությունը, մեր այդ վիճակը, այս կամ այն ձևով, այս կամ այն չափով, դեռ շարունակվում է, ինչը հայ ժողովուրդն անվանել է «Թշնամու ջրաղացին ջուր լցնել» կամ «Մեր ծե՛ռքով մեր աչքը հանել»:

**Դրա համար ո՞ր դատաստանի առջև ենք կանգնելու: Ինչպիսի՞ մեղադրանքով:**

**Մեղադրանք, որին ինչպիսի՞ պատիժ է սահմանված:**

**Այդ պատժից պետք է վախենալ, որն ամենացավոտն ու կորստարերն է:**

Այս բաները հիմնականում գիտեին մեր մեծերը, մեր սրբերը, մեր վասն հավատու և հայրենյաց նահատակները:

Նրանք այս բաները նաև մեղք էին համարում և ոչ մի դեպքում այդպիսի մեղքի մեջ չէին ընկնում: Հաճախ մեր գտնվածից շատ ավելի ժամը պայմաններում նրանք շատ ժամը պարտավորություններ էին հանձն առնում և համակերպվում, նույնիսկ ենթարկվում դրանց, սակայն մեղքերից խուսափում, իեռու էին մնում:

Իսկ 19-րդ դարի վերջերից, այլոց օրինակներով իբր լուսավորված՝ հայությանը ազգային նոր քաղաքականություն պարտադրողները՝ կարծեցյալ լուսավոր, սակայն իրականում խավար ու անհեռանկար ճանապարհի համար պայքարի ելածները, ներկայանում էին նաև որպես գիտակներ և դեռ շատ բան գիտենալ ու լոգոներ՝ ազգի տվյալ բախտորոշ ծանր վիճակի մասին, սակայն ազգի ավագների՝ հոգևոր և դրանից բխող գաղափարական հիմքի վրա ազգային ավանդական քաղաքականության շարունակության բախտորոշ ու հրամայական անհրաժեշտության մասին հորդորները, խրատները չուզեցին լսել, դրանք սովորել և ազգն ըստ այնմ առաջնորդել, դիրքորոշել, պաշտպանել...

- Ինչո՞ւ այդպես եղավ: Ինչո՞ւ մենք այդ դրության մեջ ընկանը:

- Աշխարհիկ բազում բացատրություններ կամ՝ քաղաքական, ռազմավարական, տնտեսական և այլն, իսկ մեր հավատքն ասում է, որ հոգու կուրությունն ու դրա հետևանքներն են պատճառը:

- Ուրիշ էլ ի՞նչ պատճառ՝ հոգևոր անհավատարմությունն ու ուրացո՞ւմը...

- Բա՛վ է, հարկ չկա շարունակել: Արդարև, լրիվ բավ են դեպի անդունդ թունավոր ճահճախրման համար, որովհետև դրանք արդեն իսկ նշանակում են անխուսափելի համընդհանուր տկարություն, վայրընթաց, պարտություն և կորուստ:

- Ուրեմն ի՞նչ անենք, ինչպե՞ս փրկվենք, ի՞նչը մեզ կփրկի:

- **Ի՞նչը կփրկի. ի՞նչը, եթե ոչ հավատարմությունը մեր նախնիների անկեղծ հավատքին՝ Ավետարանով և Խաչով,**

**Դրանից բխող և դրա վրա հիմնված ազգային ու պետական գաղափարով ու ըստ այնմ՝ բարոյականությամբ, մշակույթով, կրթությամբ, դաստիարակությամբ, նոտածելակերպով, ներքին ու արտաքին քաղաքականությամբ, բնույթով տոհմիկ, ազգային կենցաղավարությամբ և ներքին միասնությամբ:** Սակայն մինչ այդ՝ **մեր մեղա գալը:**

- Դրանից հետո էլ ի՞նչ է մնում մեզ անել:
- Մեր 1700-ամյա հավատքին հավատարմությամբ ապրելու մեջ է ամենայն բարին, ներառյալ այդ հավատքով լուսավորվելով (կամ Վերալուսավորվելով) փոխվելը, նորոգվելը, որով և ամենայն ապահովությամբ ու վերելքի ընթացքով ապրելը, մինչև հավերժություն:

- Եվ դա կստացվի<sup>o</sup>:
- Անպայման կստացվի, եթե մեր սրտերը լինեն մաքուր և ձգտումն անկեղծ, հետևողական ու հարատև:
- Միայն այդպիսի սրտով ու ձգտումով կարո՞ղ է ստացվել այդպիսի հետևանք, այդպիսի արդյունք:

- Այո՛, կարո՞ղ է: Կարո՞ղ է ստացվել, որովհետև երբ մենք այդպիսին լինենք, հաստատ կլինի նաև Աստուծոն օգնությունը, որով և Վերոնշյալ ամենայն բարին ու նաև դեռ շատ ավելին, որ անհասանելի է մարդկային մտքին:

Երանի նրանց, ովքեր հավատում են հայ ազգի գլխավոր սահմանադրություն, կյանքի հրահանգավորում (կյանքի ինստրուկցիա)` Աստվածորդու Ավետարանին: Սուրբ Ավետարանն ասում է. «Աստուծոն համար անկարելի բան չկա»: Նույնը վերաբերում է հավատքով նրան հարազատ ու հավատարիմ եղող-ներին:

10 - 11 - 2020թ., ժամը 22:10

## **ԱՐԱԳ, ՍԱԿԱՅՆ ԽՈՐՔԱՅԻՆ, ՀԱՄԵՍ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆԵՐ**

2020թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10-ի հայ ազգային ողբերգությունը, որը պարունակում է ազգային տարբեր էական կորուստներ, ցավ ու նաև ամոթ, բնականաբար, ունի բազում տարբեր պատճառներ: Պետք է անպայման գտնենք, ճանաչենք, հասկանանք և խսպան վերացնենք այդ պատճառները, որ, ափսո՞ս, մինչև հիմա գոյություն են ունեցել, չեն վերացված: Մինչդեռ այդ պատճառները վերացնելու համար պետք է շատ բան անել ու առաջին հերթին՝ ազգովին ու պետականորեն շատ լավ հմտանալ ու կազմակերպվել. բայց, եթե դա լիովին հաջողվի էլ, մենք չենք կարողանալու լիովին ապահովել, որ ինչ-որ մի օր, ինչ-որ մի իրադարձության պայմաններում նորից չհայտնվենք 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբերյան օրերուն, եթե... եթե չնորոգվենք: Եթե չնորոգվենք ազնվությամբ, իսկ դրա համար՝ հավատքով հոգե՛պես, գաղափարապես և բարոյապես: Եվ դա կլինի՝ նորոգելով մեր հայ ազգային և պետական դաշինքը մի այլ իշխանության հետ՝ երկնային հավերժական, բացարձակ գե՛ր-գերպետության հետ, որով և կլինի մեր 17-դարյա հավատքի ուխտի վերականգնումը: Վերականգնում և ըստ այնմ՝ կյանքի ապրում՝ ազգովին և մանավանդ հոգևոր ու աշխարհիկ ղեկավարությամբ և մտավորականությամբ (վերջինների վերադարձով ազգային տոհմիկ ակունքներ): Իսկ դա՝ էլ կլինի հավատքին հավատարմությամբ և Տիրոջ օգնությամբ: Փա՛ռ Նրան:

\* \* \*

### ***Անսովոր դարձած մտքեր***

Եթե 2020թ. նոյեմբերյան այս նահանջն ու կորուստները մեզ պիտի մեր Աստվածատուր ինքնությանը բերեն ու եթե՝ մեր

ապաշխարությունը դառնալով՝ մեզ պիտի Տիրոջը մոտեցնեն, ուրեմն՝ գոհունակությանք ընդունենք դրանք՝ «դասերնիս» սովորած, և վերածնվենք, վերակենդանանանք՝ որպես հայ մարդ ու հայ ազգ՝ Աստուծոն:

1994 թվականին մեզնից բազմաթիվ, առավել հարուստ և զինված հակառակորդի դեմ մեր հաղթանակը, որով այնքան ենք հապարտացել ու մեզ գովերգել, իրականության մեջ Աստված էր մեզ պարզեցել: Ուղղակի շնորհել էր մեզ այդ հրաշանան հաղթանակը: Եվ պետք է հավատանք, որ դա մեր նախնիների՝ Տիրոջ հավատքին հաստատակամ ու նվիրյալ հավատարմության համար է ու նաև մեր հանդեպ Նրա գրաստության և սիրո:

Բայց միևնույն ժամանակ այդ հաղթանակը մեզ շնորհվեց, որպեսզի հայտնվի, երևան գա այդ իրադրության հանդեպ մեր վերաբերմունքը, անդրադարձը, թե մեզ տրված այդ շնորհն ինչպես կօգտագործենք: Շեղումներից կուղղվե՞նք, կլավանա՞նք, թե՞ ավելի կգոռզանանք, կամբարտավանանք ու կիեռանանք մեր Տիրոջից՝ նետվելով նյութապաշտության գիրկը՝ ենթակա՝ ու ծառա մամոնային՝ իր բոլոր հետևանքներով:

Եվ, դժբախտաբար, հետևանքներն ի հայտ եկան բացասական կողմով՝ առանց միջոցների խստրության՝ ազահորեն, անխիղճ ու անգութ հարստահարումով (թալանումով) մերձավորի (շատ հաճախ և խեղճի, նվաստի, ընկածի) ու նաև, փաստորեն, տկարացնելով հազիվ վերականգնվող մեր ազգի, հայրենիքի և պետության պաշտպանունակությունը, կարողունակությունը և դիմադրողականությունն ընդդեմ չարի, ոսխի, ոճրագործի, թշնամու:

**ԵՎ ցավ, և զարմանք:**

Մի՞թե բազում պատգամներ չենք ստացել, մանավանդ մեր Տիրոջից և մեր նախնիներից՝ մեծերից, սրբերից, թե սարսափելիորեն դժբախտաբեր է Տիրոջ բարությանն անարժան վերաբերվելը...

Երկուշաբթի, 12 - 10 - 2020թ., ժամը 06:00

## ԼԱՎԸ ՊԵՏՔ Է ԼԱՎԸ ԱՐՎԻ, ՄԻՆՉԵՎ ՎԵՐԶ ՈՒ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ

### **Այդ մասին մի հարազատ հիշեցում**

Լավ, բարի ու վեհ նպատակներն այդպիսի՝ մարդկանց՝ այդպիսի՝ արարքներով, գործերով ու այդպիսի՝ միջոցներով պետք է արվեն, որ այդպիսի հետևանքներ ունենան, այդպիսի արդյունքներ տան:

Եվ լավ, բարի ու վեհ նպատակ է հայ ազգին, նրա հայրենիք Յայաստանին և պետությանը Վարդանանց քրիստոնեական հավատքով, հավատքին հավատարմությամբ ու քաջությամբ, **Մաշտոցյան Երկնային շնորհի իմաստությամբ**, գիտությամբ և **Ֆիդայական Նվիրումով** ու ազնվությամբ ծառայելը: Մանավանդ որ դա **Աստվածապատգամ է ու Աստվածահածուն**:

Ու այդ առօւմով **խոնարհաբար որոշ հիշեցումներ** հայոց կորած արդարությունը փնտրողներին, վերականգնել ձգտող ներին և նրանց կողմնակիցներին ու աջակիցներին՝

- քանի որ Արցախի ու Յայաստանի Յանրապետությունների հանդեպ, ինչպես նաև համայն հայության ու շատ այլ երկրների ու ժողովուրդների համրեպ թուրք-աղորբեջանական նպատակները, ծրագրերը, քաղաքականությունը և դրանց գործադրումը, որպես կանոն, կատարվում են **հիտլերյան** անմարդկայնությամբ, **գերելսյան** ստերով, կեղծիքներով, խարդախություններով ու **հիմլերյան** դաժանություններով,

- քանի որ հայ ազգի և նրա հայրենիք Յայաստանի՝ **հայկական ցեղասպանության** միջոցով ոչնչացման, վերացման՝ երիտրուքերի գործողություններն օրինակ դարձան հիտլերականներին՝ հոլոքոստի միջոցով Եվրոպայի հրեա ժողովրդի ոչնչացման, վերացման համար (ինչպես նաև այլ ժողովուրդների ոչնչացման, վերացման համար),

• և քանի որ հայ ազգի ու այլ ազգերի դեմ ցեղասպանական չարագործությունների ու նաև մարդկության դեմ կատարած հանցագործությունների համար *Օսմանյան* իսկ դատարանի վճռով մահվան դատապարտված ու ի վերջո այդ պատիժը հայ վրիժառուների կողմից կրած ցեղասպան թալեաթ ու Ենվեր փաշանների (և նրանց պես պատժված նրանց գործակիցների) դժոխային ոգին հառնել ու արտահայտվում է այսօրյա Թուրքիո ու Աղրբեջանի դեկավարների (և նրանց գաղափարակիցների ու գործակիցների) նպատակներում, ծրագրերում և գործողություններում, գործելակերպում, ապա.

մարդկությունը, մանավանդ՝ հայությունը, Յայստանը և տարածաշրջանի երկրները, ինչպես նաև Թուրքիո ու Աղրբեջանի տիրապետության տակ ճնշումների, հալածանքների և սահմանափակումների հետևանքով առ այսօր կորուստներ կրող ժողովուրդներն ինչքան շատ և շուտ հաշվի առնեն այդ կորստարեր հանգամանքներն ու անհապաղ ըստ այն վերաբերվեն այդ երկրներին՝ Թուրքիային ու Աղրբեջանին, և հատկապես դրանց դեկավարներին, մանավանդ՝ *Երդողանին* ու *Ալիսին*, այնքան շուտ փորձանքներից ազատ, զերծ ու լավ կլինեն տուժող այդ երկրները, ժողովուրդները, միջազգային դրությունը, կամրապնդվի խաղաղությունը, կզարգանա օգտաշատ համագործակցությունը, կլինեն շատ այլ լավ զարգացումներ, ու կատարված կլինի նաև տուժող երկրների, ժողովուրդների մարդկային պարտքը:

### **ԵՎ որոշ հիշեցումներ ընթացիկ երևույթների վերաբերյալ**

Որևէ վայրում և հատկապես Սփյուռքում, Արցախի հետ համերաշխության ու աջակցության ցույցերի ընթացքում «Ղարաբաղը մերն է» կարգախոսը անընդհատ հնչեցնելու հարկ չկա: Դա օգտակար չէ, որովհետև շատ ու շատ դեպքերում ասողների նկատի ունեցած քաղաքական նպատակն ու իմաստն այլազգիների կողմից ճիշտ չի հասկացվում... Դրա փոխարեն նպատակահարմար է այլ կարգախոսներ, կոչեր հնչեցնել, օրինակ՝

- «Անհապաղ կանգնեցնենք Աղրբեջանի ֆաշիստական ազրեսիան՝ ընդդեմ Լեռնային Ղարաբաղի (Արցախի)»:

- «Վերականգնենք Լեռնային Ղարաբաղի (Արցախի) արդար իրավունքները և բնականոն կյանքը»:

- «Միասին փրկենք Լեռնային Ղարաբաղը (Արցախը) թուրք-աղրբեջանական նախահարձակումներից»:

- «Փրկենք Լեռնային Ղարաբաղը (Արցախը) թուրք-աղրբեջանական նացիստական ստերից, կեղծիքներից, դավադրություններից ու այլ անմարդկային հանցագործություններից»:

- «Բոլորս անհապաղ հասնենք. Լեռնային Ղարաբաղը (Արցախը) և նրա ժողովուրդը ենթարկվում են Թուրքիայի և Աղրբեջանի դեկավարության ֆաշիստական ազրեսիային»:

- «Լեռնային Ղարաբաղի (Արցախի) դեմ թուրք-աղրբեջանական պանթուրքիստական ազրեսիան նպատակաուղղված է տարածվելու նաև այլ երկրների ու ազգերի վրա»:

- «Լեռնային Ղարաբաղի (Արցախի) դեմ կատարվող թուրք-աղրբեջանական ազրեսիան շարունակությունն է հայոց ցեղասպանության»:

- «Լեռնային Ղարաբաղի (Արցախի) դեմ ազրեսիան շարունակում է տարածվել և դեռ կտարածվի շատ երկրների վրա»:

- «Լեռնային Ղարաբաղի (Արցախի) դեմ կատարվող թուրք-աղրբեջանական ազրեսիան շարունակությունն է երիտթուրքերի և նրանց այսօրյա հաջորդների՝ հայության դեմ կատարվող՝ պանթուրքիստական նպատակներով ու նացիստական մերողներով ցեղասպանության»:

- «Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Յանրապետության դեմ թուրք-աղրբեջանական ազրեսիան հաշվարկված է ամբողջացնելու, համահայկական դարձնելու Օսմանյան Թուրքիո կողմից նպատակաուղղված Յայոց ցեղասպանությունը»:

Այսպիսի և նման բովանդակությամբ կարգախոսներ գործածելուց բացի, գուցե անհրաժեշտ է նտածել նաև, թե օտար երկրներում բնակվող մեր հայրենակիցների կողմից տվյալ երկրների քաղաքներում ճանապարհների փակումները՝

- ինչքանո՞վ և միշտ կարող են խոչընդոտել հայոց հայրենիքի դեմ թուրք-աղորեցանական նախահարձակումը,

- ինչքանո՞վ և մի՞թե կարող են տեղի ժողովրդի ու իշխանությունների համակրանքը շահել:

Եվ տվյալ երկրի քաղաքացիներին հասցվող անհարմարությունը (գուցեև վիրավորանքը) մի՞թե թուրք-աղորեցանական ու նրանց վարձկան կոռումպացված պրոպագանիստների կողմից ընդդեմ հայության, Հայաստանի, Արցախի ու նրանց դատի չի գործածվի, թէ՝ «Տեսեր հայերն ինչքան անշնորհակալ, անհավատարիմ ու թշնամական են իրենց հյուրընկալող երկրների, ժողովուրդների հանդեպ և ինչ անհարմարություններ, վնասներ են տալիս նրանց իրենց հեռավոր երկրի շինուու, ապօրինի, անարդար շահերը պաշտպանելու համար»:

**Մենք պետք է շատ զգույշ լինենք.** չէ՞ որ թուրք-աղորեցանական և նրանց վարձկաններն այդպիսի ստորոտիքունների մեծ վարպետներ են, տասնամյակների և դարերի մեծ փորձ ունեն. դրանով մեզ և շատ ուրիշների շատ են վճասել և երբեք առիթը չեն փախսնի դարձյալ վճասելու համար:

Իհարկե, մեր ցավը մեծ է, ու այն ամոքելու և մեր բնականոն կյանքը հաստատելու համար դեռ շատ բան կա, որ չենք արել և պետք է ու պարտավոր ենք անպայման անել, բայց այդ անելու ընթացքում շրջահայացությունը, զգոնությունն ու զգուշությունը հաջողության պարտադիր պայմաններից են: Զարկ է մեր անելիքները մեծ ճշտությանք կատարել, որպեսզի մեզ նետված, մեր առաջ լեռնացած հին ու նոր մարտահրավերները չդիմագրավենք մեր քրոնիկ դարձած սխալներով, թերություններով, տկարություններով, այլ դիմավորենք ու հաղթահարենք մեր վերածնված սուրբ Հավատքի իմաստությամբ, զորությանք և համազգային միասնությամբ: Եվ դա՝ ի վերականգնում ու վերակիրառում մեր բազում տարբեր արժեքների, կարողությունների, ներուժի ու ի ամբողջացում մեր ազատ, անկախ հայրենիքի, որը և հօգուտ համայն մարդկության ու ամենաեւականը՝ ի փառ մեր սուրբ Հավատքի:

**Եվ մի «Վիոր» հիշեցում ևս.**

Տարբեր վայրերում ի պաշտպանություն Արցախի և կամ Հայոց ցեղասպանության ճանաչման համար կատարվող ցույցերում, երբերում հնչող կարգախոսների ձայները լավ կլինի, որ լինեն «հայկական ձայներ»:

Այլազգիները չեն հասկանում մեր հնչեցրած կարգախոսի բառերը, բայց ընկալում են հնչող ձայները: Նրանք չպետք է թյուրիմացության մեջ ընկնեն՝ լսելով այնպիսի ձայներ, որոնք իրենց տոնայնությամբ (և խռպոտությամբ) կարող են նման լինել տարբեր ծայրահեղականների ու ահարեկիչների վայրագ ձայներին... Ո՞չ էլ որևէ տեսակի ամբոխային սուլոցները կամ ավտոմեքենաների «համառ», անընդհատ ազդանշանները կարող են մեր նկատմամբ *հարկ եղած հասկացողությունը, համակրանքն ու աջակցելու տրամադրությունը, ցանկությունը առաջացնել այլազգիների մեջ:*

Չէ՞ որ Արցախի, հետևապես և Հայաստանի ու հայ ազգի ամեն տեսակի պաշտպանությունը, աջակցությունը սուրբ է, վեհ է ու նաև քաղաքակրթական, մարդասիրական: Այդպիսի հնչեղություն պետք է ունենան նաև դրանց պաշտպանության կամ աջակցության համար հնչեցվող ամեն տեսակի արտահայտություն՝ կոչ, կարգախոս, հիշեցում, դիմում ու նաև ըստ հարկի և ըստ տեղի՝ պնդում ու բարոյական պարտադրում:

Ու այդ բոլորը՝ հայի ու հայության Աստվածաշնորհ հավատքով, դրանից բխող ու դրա վրա հիմնված Հայ Ազգային Գաղափարախոսությամբ, բարոյականությամբ ու ըստ այնմ՝ երկնային իմաստությամբ, արդարությամբ ու ըստ այնմ՝ զորությամբ: Շնորհակալություն և փա՛ռք դրանք մեզ Տվողին:

Շաբաթ, 16 - 04 - 2013, ժամը 11:00

## ՄՇՏԱՐԹՈՒԽ ԶԳՈՆՈՒԹՅԱՄՔ ՊԱՇՏՎԱՆՈՒԹՅՈՒՆ

*Հոգևոր, գաղափարական և քարոյական արքաների գործությունները, պատմական անհարազատ միջավայրի, շրջապատի ու այնալու մեջ բռնամղող ընթացքի հանդեպ, որպեսզի չգերվեն մեր սիրտն ու միտքը, չայլասերվենք լիովին ու ամրողությամբ և չկորչենք այժմ ու ընդմիշտ:*

Ինչպիսի՝ պաշտպանություն (օборона, defence) պիտի մշտապես ունենանք հայերս, մեր հայրենիք Դայաստանը և պետությունը՝ դիմադրելու համար մեղքի գրոհներին, որոնք տեղի են ունենում (մի պահ չխսելով մարդկության նասին) մեր ազգի, մեր հասարակության և մանավանդ մատաղ սերնդի դեմ: Իսկ այդպիսի դիմադրության համար մի՞քև պետք չէ ունենալ մի՛ քանի պաշտպանական բնագծեր (էշելոններ), որպեսզի մեր պաշտպանության որևէ անհաջողության պարագայում չարն իր հարվածները՝ մեղքը չկարողանա հասցնել մեր միջնաբերդին՝ մեր հոգիներին, որով և ենթարկել մեզ վերջնական ու անվերադարձ ստրկացման: Այսինքն՝ չարը՝ մեր թշնամին, չկարողանա մահացնել մեր հոգին՝ հայ մարդու իսկական ես-ը, որը մեր Փրկիչն իր չարչարանքների ու արյան գնով փրկեց: Եվ մենք մշտարթուն, զգաստ պետք է լինենք, որպեսզի ոչ մի դեպքուն չստացվի, որ մեր անտարբերությամբ (որը մեր իսկ դեմ դասալքություն-դավաճանություն է) անպաշտպան թողնվի և կորստյամբ մահվան մատնվի մեր իսկական, հավերժական ես-ը՝ հոգին:

Իսկ ինչպես կարելի է ստեղծել մեր պաշտպանությունը. Ինչպես զինել, ամրացնել այնպես, որ այն լինի հուսալիորեն

Երաշխավորված: Դա, ինչպես նշվեց, կարելի է ամել նախևառաջ գգաստությամբ, զգնությամբ և մշտարթուն դիմադրությամբ (մեր բոլոր վիճակներում, պայմաններում) ամեն տեսակի մեղքի ցանկությունների ու ամեն ինչի հանդեպ, որ խթանում է մեղքի ցանկություն: Ցանկությունները պետք է միշտ ստուգվեն («ինքնաշխատ նաղերի» միջոցով անցնեն): Ստուգվեն նույնիսկ ավելի, քան, օրինակ՝ ստուգվում են ճանապարհորդների ուղեբեռները, ծեռքի պայուսակներն ու անձերը՝ նախքան օդանավ մտնելը...

18 - 04 - 2019թ.

## **ԱՐԺԵՎԱՄՎԿԱՐԴ**

### (Արժեք, չափանիշ, գնահատական, որոշում)

**Որո՞նք են մեր հայ ազգի մարդկային արժեքները, և ի՞նչ չափանիշներով են արժնորվում այդ արժեքները:**

Արժեք է շատերի համար առողջությունը և այն ամենը, ինչն ապահովում է մարդկային երջանկությունը՝ սերը, ընտանիքը, երեխաները, հայրենիքը, պաշտոնեական ու մասնագիտական առաջխաղացումը, հաջողությունը և, իհարկե, հարստությունն ու բարեկեցությունը, ազատությունը: Մրանք բոլորը կամ դրանց մեջ մասը միանշանակ ընդունում է ներկային աշխարհը: Իսկ հեռավո՞ր աշխարհը (որը նաև շատ մոտ է): Եվ մեր անցյա՞լն ու անցավորնե՞րը: Ընդունո՞ւմ են, կընդունե՞մ:

**Ժողովրդավարություն:** Ժողովրդավարությունն արժեք է, և մեր հայ ժողովուրդն ու մեր հայրենիք Հայաստանը կողմնակից են այդ արժեքին և դրա՝ կյանքի ապրումի վերածնանը: Շատ լավ, լավ է, որ այդպես է: Բայց ի՞նչ է ժողովրդավարությունը, եթե ոչ մեծամասնության ձայնը և նրա կամքի կատարումը: Իսկ մեր ազգի մեծամասնությունը ո՞ր արժեքների հաստատումն է համարում Հայ ազգային գաղափարի իրականա-

**ցում:** Եվ ինչպե՞ս է դա որոշում ու այդ ընտրում մեր ազգի մեծամասնությունը, որի ձայնը պետք է լսվի, և նրա կամքը կատարվի հայ կյանքում, մասնավորապես Հայաստանում՝ հայ ազգային գաղափարի իրականացման՝ կիրառման հարցում, և դա արվի այսօր և վաղը և մյուս օրը՝ մեր թոռների, նրանց թռների և նրանց թռոների թռոների համար և այդպես շարունակ, որովհետև, եթե արժեքն արժեք է, ապա այն նորածնության, մոդայի հետ չի փոխվում, այլ դարավոր է:

Իսկ այդ ձայն ունեցող մեծամասնության մեջ միայն տվյալ պահի իշխանության ընդդիմադիրնե՞րն են, թե՝ նաև ազգի ու Հայրենիքի բարօրության համար անկեղծորեն ծառայածները, և երբ հարկ է եղել՝ իրենց կյանքը զոհաբերածները։ Ու նաև դարավոր պետականազրկումից հետո Սարդարապատում, Ղարաբիլսայում, Բաշ Ապարանում ու այլ այդպիսի ճակատամարտերում իրենց կյանքի գնով հայոց հողն ազատագրողներն ու պետությունը վերակերտողները ևս, ու նաև վասն հավատու և վասն հայրենյաց՝ դարավոր մեր նահատակները...

**Ու արդյո՞ք անհավասար պայքարներում իրենց կյանքը զոհաբերածներին մենք գրկում ենք ձայնից, որովհետև նրանք զոհված լինելով՝ այլևս ֆիզիկական ձայն չունեն։ Իսկ մենք ձայն ունենք, որովհետև կանք, հաճախ նաև գուլս պահելով և դասալքելով, իսկ նրանք չկան, քանի որ նվիրումով ու քաջությամբ զոհվեցին... Արդյո՞ք այդպես է...**

Չափանիշնե՞ր, չափանիշնե՞ր, որոնք պետք է մշակվեն, ու որոնց հետ պետք է լինեն նաև տրամաբանություն, արդարամտություն ու նաև ազնվություն ու արիություն, առաքինություն ու խի՞ղճ։ (Ու նաև խի՞ղճ։ Եթե այդպես է, ապա ո՞ւր եք հայոց մեծեր...)։ Եթե այդ հատկությունները կան այս հարցերի որոշման մեջ, ապա պիտի մասնակցեն ոչ միայն ողջերն իրենց մեռած հոգիներով, այլև պիտի մասնակցեն զոհված հայերի կենդանի՝ հոգիները և նրանց ցանկությունները, ըստ իրենց հավատամքի, գաղափարի՝ և բարոյականի, որոնք կյանքի ապրում դառնալու համար զոհաբերեցին իրենց մարմինները և

դրանով կենդանի պահեցին իրենց իսկական ինքնությունները (իսկական եսը)՝ հոգիները՝ հավիտյանս:

Եթե մենք ձայն ունենք որոշելու մեր ազգի արժեքները և պաշտպանելու, հաստատելու ու կյանքի ապրում դարձնելու դրանք, ապա նրանք («մեծահոգաբար» ընդունենք), որ եթե ոչ ավելի, ապա գոնե մեր չափ ունեն այդ իրավունքը...

*Յետևապես, մենք պարտավոր ենք լսել նրանց ձայները և ըստ այնմ՝ լսելի դարձնել մեր ձայները, քանի որ նրանք են մեծամասնությունը:*

Ու այդ դեպքում մեր ազգի մեջ, մեր հայրենիք Յայաստանում և պետությունում հաղթանակած կլինի իսկական ժողովրդավարությունը՝ որպես աշխարհիկ, բայց ամենակարևորը՝ նաև Երկնային արժեք: Եվ դա՝ է վայել սուրբ հայ ազգին և նրա սուրբ հայրենիք Յայաստանին: Մի երանելի վիճակ, որ կարող է առաջանալ միայն Տիրոջ գքությամբ, օրինությամբ ու օգնությամբ:

Յայ և հայություն. ամբողջ հոգով, ամբողջ սրտով, ամբողջ զորությամբ ու ամբողջ երթյամբ սիրենք մեր Երկնային Յորը, կատարենք Յոր Միածին Որդու պատգամները և գնանք Նրա ճանապարհներով՝ արժանի դառնալու համար այդ վիճակին՝ նաև ի օրինակ և հօգուտ մարդկության, ու ամենաէականը՝ **Ի ՓԱՍՄ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ՝ ԱՍՏՈՒԾՈՒԹՅՈՒՆ:**

24 - 06 - 2011թ., ժամը 21:30, Արենք

## **ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ (Որը հետո ուրացանք, մոռացանք և կորցրեցինք)**

**Եվ Նա ասաց նրանց. «Այս պատկերը կամ զիրը ո՞ւնի է»: Նրանք ասացին՝ կայսրինը: Այն ժամանակ նրանց ասաց. «Գնացեք տվեր կայսրինը՝ կայսեր և Աստծունը՝ Աստծուն»:**

*(Մատթ. 22.21-22):*

Տիրոջ վերոհիշյալ խոսքը նաև քաղաքական փիլիսոփայության և կիրառական քաղաքականության դաս է: Եվ այդ դասը նա տվեց բոլորին՝ մարդկությանն ու առաջին հերթին նրանց, ում իր Յայրը շնորհ էր արել բացելու նրանց հոգու աչքերը և լսողությունը, որ ճանաչեն ճշմարտությունը՝ Աստվածորդուն, որ հաղորդակից լինեն Նրա Աստվածային խորհուրդներին: Եվ հայ ազգն ու հայոց պետությունը, որ առաջին շնորհներին էին, դարերով հավատարին մնացին այդ շնորհին և Աստվածային դասը սովորելով՝ կյանքում կիրառեցին, կողմնորոշվեցին:

Աստվածորդին ի՞նչ էր սովորեցնում մարդկանց՝ կողմնորոշվելու համար մարդկային կյանքում, հասկանալով այդ կյանքի օրինաչափությունները, որոնք Աստվածային անանց, հավերժական են և Նրա վերահսկողության տակ են:

Դրամանիշի վրա ճանաչում ենք կայսրի պատկերն ու գիրը և օգտագործում ենք այն, այսինքն՝ այս աշխարհի նյութական, ֆինանսական միջոցը և դրանից հարկ տալիս կայսրին:

Ինչո՞ւ, որովհետև նրա տիրապետության տակ, նրա

հպատակներն ենք: Իսկ եթե դրա համար «նրանը պետք է տանք նրան» և մենք դա անխափան անում ենք, գիտենալով, որ այլապես մեզ համար լավ չի լինի (քանի որ նրա դեմ խաղ չկա), ապա ինչո՞ւ ենք մոռանում մեր Երկնային Ամենակալ Հորը: Ում թե՛ ենթակա, հպատակ ենք և թե՛ պատկանում ենք մեր ամեն ինչով՝ կյանքով, սերունդներով և հավիտենական հոգիներով (մեր խկական, անմահ ինքնությամբ՝ ես-ով): Ինչո՞ւ ենք մոռանում, որ Նրա դեմ առավել ևս «խաղ չկա», և Նրանը զլանում ենք տալ Նրան:

Ինչո՞ւ ենք դառնում անզգամ և Նրա՝ մեզ հանձնած այգու (Աստվածաստեղծ մեր ինքնության) բարիքներից մեր հարկը չենք տալիս: Արդյո՞ք նրա համար, որ գիտենք մեր Արարիչ Երկնային Հոր բարի ու ներող լինելը... Այո՛, Նա բարի, գթացող և ներող է անսահմանորեն ավելի, քան մենք կարող ենք պատկերացնել, բայց մի՞թե Նա մեզ չի ասել, որ ատում է անզգամությունն ու ամբարտավանությունը և Իր տված բարին ի չարս գործածելը (որն Աստվածային բարության չարաշահում է՝ հոգեկան կորուպցիա՝ սարսափելի, պիղծ ու ամենակորստաբեր վարմունք):

Իսկ ի՞նչ է նշանակում մեր տալիքը, ի՞նչ պետք է տանք Աստծուն: Յայությունն այս պատգամով իր պարտականությունը շատ լավ հասկանում ու հարատև ճշտությամբ կատարում էր. կայսրինը տալիս էր այն կայսրին, որի տիրապետության տակ նրա (օգտավետ) հպատակն էր դարձել և դրանով պահպանում իր կյանքը ու այդ կյանքը նվիրում Աստուծո ծառայությանը՝ կատարելով Նրա՝ կամքը. Աստծունը տալիս էր Աստծում՝ իրեն հանձնած այգու բերքից (իր ազգային գոյության արդյունքից) ժամանակին տալիս էր հավիտենական Տիրոջ՝ Հորը և Փրկչին (հավատարմորեն ու հետևողականորեն) ջանալով պահպանել իր ազգային Աստվածատուր էության ինքնությունը՝ հոգեկանությունը, հավատքը, ազգային գաղափարը և բարոյական արժեհամակարգը, թեև ժամանակի ընթացքում ունենում էր և այդ ջանքերի տկարացում...

Ու այդպիսով մենք ոչ միայն գոյատևում էինք, այլև ինչ-որ

չափով աճում, զարգանում էինք նույնիսկ անազատ կամ երբեմն կիսաազատ վիճակում և տիրակալների մայրաքաղաքներում ու քաղաքներում, նրանց ծնշիչ, կեղեքիչ կառավարման «քրի տակ», այնուամենայնիվ, ազգային կրթություն էինք ստանում, ազգային գիտություն զարգացնում, մշակութային կյանքի որոշ վերելք ապրում և աստիճանաբար նաև (շատ կարևոր մի հանգամանք)՝ քաղաքականապես գրագետ դառնում, բայց... Բայց մենք փոխեցինք մեր ազգային քաղաքական կեցության կողմնորոշումը, շեղեցինք մեր ուղղությունը, մեր ընթացքը: Փոխեցինք մեր ազգային (թեև սահմանափակ, բայց) ազգային կառավարման սկզբունքները՝ փոխելով դրանց կառուցներն ու դեկավարությունը: Փոխանակ դրանք մաքրելու, զարգացնելու, կատարելագործելու, սկսեցինք «ազգային նոր քաղաքականություն» վարել՝ հեռանալով հայկականության քաղաքական փիլիսոփայությունից և որդեգրելով օտար, մեզ խորթ սկզբունքներ ու ըստ այնմ՝ խորթ քաղաքականություն:

Եվ այդ տեղի ունեցավ նաև առանց պատշաճորեն քաղաքականալու (քաղաքականապես աճելու, զարգանալու), ու ըստ այնմ մենք մեզ և մերը ճանաչելու, հասկանալու, գնահատելու և ուրիշներին էլ ճանաչելու, մանավանդ՝ ճանաչելու այս աշխարհի շահամոլությունը. շահի համար նույնիսկ մարդակերությունը:

Ու այդ վիճակում *բացահայտ պատերազմ հայտարարելով՝* ռազմական, քաղաքական, դիվանագիտական, քարոզչական... կռվի ելանք կայսրության և կայսրությունների դեմ՝ առանց պատրաստված զորք ունենալու (Էլ չասած ռազմական բյուջեի և գլխավոր շտաբի մասին՝ իր ենթակառուցվածքներով՝ կապ, հետախուզություն, սպառազինություն, պատրաստականություն, թիկունքի ապահովում և այլն): Ինչպես հայ ֆիդային, ով անհավասար կռվում հերոսարար զոհված իր ընկերոջը հողին հանձնելու դամբանականում ասում էր. «Մենք ապլանու ջնախ ենք, մեկուկես ֆըշանքով օսմանցու դեմ ելանք...» (Մենք առյուծի ցեղից ենք, մեկուկես փամփուշտով Օսմանյան կայսրության դեմ ելանք): Ու եղավ այն, ինչ եղավ՝ պարտվեցինք

չարաչար, մեծամեծ զոհերով ու հայրենիքի մեծ մասի կորստով, որոնց հետևանքները հարաճունորեն շարունակում են ամենավատ կերպով անդրադառնալ մեր կյանքի վրա սերնդեսերունդ, թե՛ Սփյուռքում և թե՛ կոտորակված հայրենիքում:

**Դետևանքների մասին այս երկու տողով ասվեց, մինչդեռ մի ամբողջ հոգեկան ու նյութական աշխարհի՝ Արևմտյան Դայաստանի մասին են դրանք, ու հետևապես՝ կարելի է առանձին խոսել դրանց մասին և պետք է խոսվի: Սակայն հետևանքները ճիշտ ու խորությամբ ճանաչելու, և մանավանդ դրանց պատճառները հասկանալու համար ասվածը աշխարհիկի հետ պետք է նաև հոգեկան լինի: Եվ դա՛ է, որ, ըստ Երևույթին, մինչև հիմա մեզ պակասում է:**

Մենք մեր պարտությունները փորձել ենք և փորձում ենք սեկույար՝ աշխարհիկ քաղաքագիտությամբ վերլուծել ու բացատրել, այն էլ, ըստ Երևույթին, ոչ պատշաճ մակարդակով: Լա՛վ է, որ անում ենք. բայց միայն այդպես անելը ժամանակի (այն էլ հայկական շատ բանկ ժամանակի) կորուստ է: Անվերականգնելի կորուստ է, եթե մեր պարտությունների պատճառները նախևառաջ հավատքով, ազգային հոգեբարոյագիտությամբ, ըստ այնմ՝ ազգային քաղաքագիտությամբ ու հատկապես Ավետարանական Աստվածային դասերի հիման վրա չուսումնասիրենք, չպարզենք, չկշռենք, չհաշվարկենք և չհասկանանք: Մինչդեռ հասկանալը էապես անհրաժեշտ է, որպեսզի օտարամուտ խորթ բանաձևերով ու հաշվարկներով կատարած մեր սխալները նորից չկրկնենք և դադարեցնենք արդեն իսկ տեղի ունեցող այդպիսի կրկնությունները...

Մեր ազգային հոգենորականությունը հայրենիքում ու աշխարհի տարբեր երկրներում իր աստվածաբանական ուսումնառությամբ և հայրենիքում ու աշխարհի տարբեր երկրներում իր հոգենոր ուսումնական հաստատություններով մի՞թե մեզ՝ շարքային հայերիս, հիմա՝ էլ չպետք է հայ ազգային հոգենոր «քաղաքագիտության» հիման վրա բացատրի, իրազեկի մեր պարտությունների և կորուստների պատճառները, հետևանք-

ները և հետագայում դրանցից խուսափելու պայմանները, միջոցները: Իհարկե, պետք է:

**–Իսկ ինչո՞ւ չի անում:**

–Ծատ կարևոր է այդ մասին հարցնելը: Ինչո՞ւ: Ըստ երևույթին, ոչ թե չի անում, այլ ջանում է, բայց չի՝ ստացվում: Եվ չի՝ ստացվում, որովհետև մեր հոգևորականությունը ևս այդ պատճառները կարծես փորձում է բացատրել ոչ թե մեր ազգային-հոգևոր, այլ օտարածին սեկուլյար քաղաքագիտությամբ: Եվ քանի որ այդ քաղաքագիտությունը մեր հոգևորականության ավելի շատ հայտնի չէ, քան մեզ՝ աշխարհականներիս, ապա նրանց ասածը ոչ մի բան չի ավելացնում մեր գիտեցածի ու ասածի վրա, այլ հակառակը՝ ավելի պակաս լինելով՝ հանգեցնում է նրան, որ նրանք մեր՝ փաստորեն ձախողվածներիս ասածին են նայում...

Իսկ մենք էլ «կոտրած տաշտակից» այն կողմ չենք անցնում՝ մնալով խարկանքի ու անորոշության մեջ:

Եվ ի՞նչը կփոխի մեր մեջ սեկուլյարության արմատացնան հետևանքով ազգային մեր այս և նման այլ ձախողությունը, թշվառությունը, եթե ոչ հոգեկանությունը՝ մեր հավատքից ու դրա վրա հիմնված գաղափարականությունը, բարոյականությունն ու ըստ այնմ՝ կենսակերպով զարթոնք ապրելը, մեղայի գալը և վերակազմակերպվելով ճիշտ ուղղությամբ վերընթացը՝ ձևով արդիական, ժամանակակից և բովանդակությամբ հարազան, տոհմիկ: Ու դրան կհամապատասխանի նաև մեր ազգին երկնային օգնությունը՝ լույս, իմաստություն, շնորհը, զորություն, որով և մեր օգտաշատ գործունեությունը՝ երջանկաբեր կյանքի համար: Որը կլինի նաև հօգուտ մարդկության ու ամենաէականը՝ ի փառս մեր քրիստոնեական հավատքի:

04 - 05 - 2021թ., ժամը 01:40

## ՆՇԱՆԱՎՈՐ ՓԱՍՏ, ՕԳՏԱՉԱԾ ՕՐԻՆԱԿ

Աստվածաշունչ մատյանից տեղեկանում ենք, որ Խրայելը, մեծ փորձության, ճգնաժամի և վտանգի մեջ լինելով, շփոթված էր, թե ո՞ր գերապետության կողմը բռնի. հյուսիսի՝ Ասորեստանի<sup>6</sup>, թե՝ հարավի՝ Եգիպտոսի: Եվ Խրայելում շատերը կային, որ դեպի հարավ՝ Եգիպտոս էին նայում, կողմնորոշվում և ճգում: Այն ժամանակ Խրայելի մարզարեները, որ Տիրոջ խոսքն էին փոխանցում Խրայելի ժողովրդին ու հատկապես իշխանությանն ու գինվորականությանը, *Տիրոջ կողմից ասում ու ամրելով հորդորում էին չգնալ դեպի «Դարավի կոտրած եղեգը»*, այլ գնալ դեպի «Առյուծացող Շյուսիսը»:

Ու երբ Խրայելը չէր կատարում *Տիրոջ խոսքը*, դառնապես սուսում էր երկար ժամանակ և մեծ չափով:

## ՃՇՄԱՐԻՑ ՃԱՆԱՊԱՄՀ

Կյանքում, աշխարհում, ազգի մեջ, երբ հոգևոր վերելքով կենտրոնացում է առաջանում, դրա գորությամբ առաջանում է նաև քաղաքական կենտրոնացում՝ առանձնահատուկ և բախտորոշ հզորությամբ:

*Սա ճշմարիտ է յուրաքանչյուր ազգի համար և գերճշմարիտ է հայ ազգի՝ հայության համար:*

Դայությունն այսօր և կարո՞ղ է սկսել ազգային հոգևոր կենտրոնացում: Դա սկիզբ կդնի նաև քաղաքական կենտրոնացման և դրանով կենտրոնացած հզորացման՝ համատեղված ազգային նոր որակի ու կարողության հետ:

Այս հարցադրումն ու հաստատումն առաջանում են Յայ Ազգային Գաղափարախոսությունից, որը բխում է և հիմնված է Աստուծոն հավատքի վրա՝ Ավետարանով և Խաչով։ Եթե ըստ այդմ մոտենանք տվյալ հարցադրմանն ու հաստատմանը և խորացնենք դրանք, կատանանք բազմաթիվ էական լուծումներ ու նաև էական ազդեցությամբ տարբեր, կարևորագույն խնդիրների լուծման, կատարման լծակներ։

Նոյեմբեր 1981թ., Լոս Անջելես, ԱՄՆ

## ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

**ԱՀԱԶԱԳ  
ԶԳԱՍՏՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱԲԱՆԱԿՄԱՆ  
ՈՒ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ  
(Հայոց Ազգային Գաղափարախոսության տեսակետից)**

Չկա ավելի մեծ իմաստություն, քան հոգևոր իմաստությունը, որի գագաթնակետը Աստուծոն Յավատքն է: Եվ ոչ թե ազգը պահպանելու համար է պետք պահպանել հավատքը տիեզերական, հավերժական ճշմարտության հանդեպ, այլ հավիտենական կյանքի հավատքով, այդ կյանքն ունենալու համար, իբրև առաջնային ուղիներից մեկը՝ պետք է պահպանել ազգը, տվյալ դեպքում՝ հայ ազգը, հայկական պետականությունը:

Ազգը փորձաքար է հավիտենական կյանքի ուղու: Յայերի համար հավիտենական կյանքի անցագրերը հայկական դրոշն ունեն, որ անհնար է զեղծել՝ առանց զրկվելու հավիտենական կյանքին արժանանալու Աստվածատուր շնորհից: Յային հայությանը կապող հիմնական ուժը հոգու պարտքի զգացումն է եղել. Անմահ հոգու պարտքի՝ տիեզերական հավիտենականության մեջ: Այս ճշմարտության գիտակցումը և դրանից բխող անկեղծ հավատքի վրա հիմնված ազգային ինքնագիտակցությունն ու պարտաճանաչությունը եղել են ու կմնան հայագոյության հզոր գործոններ ժամանակի ու տարածության մեջ:

Յայ ազգի համար որպես այս Յավատքի էության բովանդակություն եղել է քրիստոնեությունը: Յայությունն այսօր հոգևոր իմաստության մեկ ակունք ունի միայն՝ քրիստոնեություն

կամ... ոչինչ, պարապություն: Այս հանգամանքը որպես բացարձակ ճշմարտություն ընդունելով՝ կնոտենանք հոգևոր իմաստության ակունքին: Եվ դա է ազգի գոյատևման առաջնային անհրաժեշտ պայմանը, քանզի առանց հոգևոր իմաստության ազգն անկարող է ունենալ Ազգային Պետականություն: Հոգևոր իմաստությանն անհաղորդ ազգն անկարող է ազատ ու ինքնիշխան լինել. սպասավոր՝ թերևս: Սակայն ամուլ կլինի բնականոն կյանք, այսինքն՝ ազգապետություն կերտելու համար մեր ազգը, եթե իբրև ներքին ուժականություն դեռ շարունակի ունենալ, ինչպես երկար ժամանակ ունեցել է երկու ծայրահեղորեն տարբերվող մտայնություն. մեկը՝ ամենախելացի, ամենատաղանդավոր, ամենաառաքինի, ամենաաշխատասեր, ամենատառապած, ամենաքաջ և այլն, և այլն ազգ լինելու մտայնությունը, մյուսը՝ որպես ծառայամիտ, հավատարիմ ու օգտաշատ ծառա կոչված լինելու մտայնությունը: Այս ճշմարտության գիտակցությունն իբրև ուսմունք պետք է լինի մեր ազգային-պետական քաղաքականության փիլիսոփայության իհմքում, որպեսզի մենք նախ արժանի լինենք և հետո կարողություն ունենանք կառուցելու մեր իրապես ազգային, իրապես կայուն ու իրապես կենսունակ պետականությունը:

Մարդկության պատմությանը հայտնի՝ ազգային պետականության ստեղծման ամեն մի շարժում ունեցել է և պիտի ունենա իր գաղափարական իհմքը: Ո՞րն է չափանիշը որոշելու, թե որդեգրված Գաղափարն իսկապես այն է՝ միակը, ճշմարիտը, որ կոչված է և կարող է տվյալ շարժման իհմքը հանդիսանալ. իհմք՝ մշտական ու իրական, տվյալ շարժման հուսալի հենարանը: Ամենաեական չափանիշը, ըստ ամենայնի, Գաղափարի տարողությունն է: Այսինքն՝ Գաղափարը բոլոր դեպքերում պետք է անհամենատ ավելի մեծ ընդգրկում և արժեք ունենա, քան նրա վրա իենվող շարժումը: Ամեն անգամ, երբ շարժման նպատակն արժենորվում է ավելի, քան իհմքը՝ Գաղափարը, շարժման գաղափարական իհմքը թուլանում է. իրական իհմքը փախչում է շարժման տակից, և ժամանակի ընթացքուն շարժումն աստիճանաբար երևում է իր իսկական

տեսքով՝ օդից կախված, այսինքն՝ կենսագործման իրական նախադրյալներից գուրկ:

Գաղափարի կորստի այս քաղաքական իրադրությունն է, որ սովորաբար որակում են իբրև «անբախտություն», «անփորձություն», երբեմն՝ «դավաճանություն», «ներքին երկպառակությունների արդյունք», իսկ հաճախ էլ այլ ազգերի շահամոլություն, խարեթայություն, դաժանություն և այլն: Իրականում պատճառներն անհամեմատ լուրջ են ու խոր:

Սկսենք նրանից, որ հայ ազգային պետականության կառուցման գործընթացի մասնակիցն իբրև իր էռության անկապտելի մաս, իբրև միս ու արյուն պետք է ունենա Հավատքը՝ հավիտենականության մեջ անմահ հոգու արդար, այսինքն՝ իրեն արժանի հատուցման գաղափարի հանդեպ: Եթե չկա այս Հավատքը, կամ եթե այն առկա է սոսկ որպես մտային պարտադրանք, այլ ոչ որպես կյանքի բոլոր հանգրվաններում կողմնորոշման, դիրքորոշման և վերաբերմունքի սկզբունքային հիմք, ապա տվյալ անհատի մասնակցությունը շարժմանը դառնում է պատահականորեն օգտակար որոշ ժամանակաշնթացքում և որոշ իրադրություններում, բայց վերջին հաշվով՝ անտեղի ու անբավարար, քանզի այդպիսի անհատը, իր տալիքի պակասությամբ սոսկ տեղ զբաղեցնելով շարքերում, իր հավատագուրկ մասնակցությամբ ինքնարերաբար շարժումը խորը ու անծանոթ ճանապարհներով տանում է դեպի ճահճուտ:

Հայության ներկա խնդիրը՝ որպես մի ամբողջ ազգի գոյության պահպանման և պետականորեն բնականոն զարգացման խնդիր, մարդկային իրականության բարդ և կարևոր շարժումներից մեկն է: Սակայն այդ շարժումը պատշաճ տարողությամբ, ճիշտ ուղղությամբ տանելու և մինչև վերջ հասցնելու գործը իր իսկ հայության խնդիրն է առաջին հերթին: Ինչ մնում է մարդկությանը, ապա լավագույն դեպքում նրա բաժինը կարող է լինել լոկ օգնելը կամ չխանգարելը հայությանը՝ իր խնդիրը կատարելու: Իսկ ինչպես, ի՞նչ տեսանկյունով պետք է մոտենա խնդիրին գլխավոր կատարողը՝ հայ անհատը և հայ հավաքականությունը, առավելագույն օգտակար մասնակցություն բե-

թելու համար շարժմանը. արդյո՞ք իբրև անձնապես շահավետ մի գործ. թեկուզ և դժվար ու վտանգավոր, բայց ինքնահաստատման կամ այլ անձնական բավականության հագուրդ տվող, կամ հաճելի ու թեթև, և կամ հետաքրքիր ժամանց, թե՝ իբրև **Պարտք՝ Հավիտենականության** առջև:

Առաջին մոտեցման դեպքում քիչ բան կարելի է սպասել շարժման նասնակցից, քանի որ նմանօրինակ շարժումները քանի դեռ չեն հասել հաջողության, չեն ունեցել և չեն կարող ունենալ նյութական, բարոյական, դիրքի և հեղինակության նշանակալի հատուցումներ անհատական մասնակցության դիմաց, նրանք չեն տվել նման բաներ, այլ պահանջել ու վերցրել են ժամանակ, նյութական միջոցներ, խանգարել են տնտեսական բարեկեցությանը, ընտանեկան կյանքի կազմակերպմանը, որդիական և ծնողական պարտքի կատարմանը, մասնագիտական աճին և այլն: Հետևաբար՝ ստանալու, վերցնելու ակնկալություն ունեցող անհատը նման շարժմանը չի հարի, իսկ եթե թյուրիմացարար հարել է, ապա հետ կրաշվի գործից, հենց որ զօա, թե կորցնելիքն ավելին է, քան ստանալիքը. կամ՝ որպես ավելի վնասակար վիճակ, կմնա շարքերում սուկ ֆիզիկապես՝ լրացնելով քանակը, բայց ոչ ամենին որակը:

Երկրորդ մոտեցման դեպքում տրամաբանորեն արդեն պատճառաբանված է տուրքը. նենք **Պարտք** ենք տալիս, այլ ոչ թե նվեր: Եվ պարտքը տալիս ենք ոչ թե հանգիստ ծերության, ոչ թե 5-10-20-30 տարվա կյանքի հեռանկարով, այլ **Հավիտենական կյանքի** անցագրի դիմաց: Եթե հավատում ենք սրան, եթե ընդունակ ենք հավատալու սրան, ուրեմն՝ անկեղծ ենք Նայկ Նահապետի, Սուլր Սեսրովի, մինչև երեկովա Վարդանների՝ մեր գնահատումներում և արժևորումներում: Ընդունակ չե՞նք, չե՞նք հավատում՝ կեղծավոր են, ուրեմն, մեր գնահատումները և հետևապես, ըստ մեզ, հիմարապատումներ են Ավարայրներն ու Սարդարապատները, հիմարներ՝ ազգային հերոսները մեր...

Այսպիսով, այսօրվա մեր՝ իրականում հավատագուրկ վիճակը ոչ միայն նսեմացնում, այլև, ավելին, ի չիք է դարձնում

սուրբ Երախտիքը մեր ամբողջ պատմության միլիոնավոր նահատակների ու այսօր նրանց կեցվածքը ժառանգած հազվագյուտ ընտրյալների: Ինչպես կարող ենք հարգել նահատակների իշխատակը, ինչպես կարող ենք կոչել՝ հետևելու նրանց օրինակին, ում մոլորյալ պարզամտներ ենք համարում մեր հոգու խորքում՝ ըստ մեր այսօրվա մտածելակերպի, դատողության ու մեր փաստացի կեցվածքի ու վերաբերմունքի: Ո՞ւր մնացին հապա մեր գովերգված ազնվությունն ու ուղղամտությունը, որոնք փաստելու համար խոսքերի պակաս չենք զգում երբեք:

Իսկ եթե իսկապես անկեղծ ենք, եթե իսկապես ընդօրինակելի ենք համարում նախնյաց առաքինությունները, ինաստությունը, հանճարը, գործերն ու նվիրումը, ապա ինչո՞ւ մեր ազգային գոյության պայքարի քաղաքական փիլիսոփայությունը վերլուծելիս ոչ մի անգամ չենք հարցնում, թե որն էր նրանց այդ փիլիսոփայությունը սնուցող Ակունքը, պայքարի քաղաքականության ավիշը: Չենք հարցնում, որովհետև իբրև «լուսավորյալ» դարի զավակներ՝ ամաչում, երբեմն նույնիսկ վախենում ենք խոստովանել թեկուզ ինքներս մեզ, որ Հավատքն էր այդ Ակունքը. Լուսավորչի, Մեսրոպի, Վարդանի, Շնորհալու, Նարեկացու, Սեբաստացու և Նմանների Հավատք՝ Քրիստոնեությունը, քանզի այն փաստված է մարդկության պատմության ողջ ընթացքով:

Լինելով ուժեղ, ունենալով ուժերի ակնհայտ առավելություն՝ հարվածել, հաղթելը դժվարին խնդիր չէ: Բայց լինելով թշնամիներով շրջապատված, գտնվելով գորեղների շահերի բախման խաչմերուկում, օտար ու սեփական կրթերի հորձանուտում, լինելով ֆիզիկական ու բարոյական հարվածների թիրախ դարեր անընդմեջ և դիմանալ, ոչ միայն գոյատևել, այլև հարատևել, միաժամանակ ուժ և կարողություն գտնել՝ կերտելու ձեռակերտ ու անձեռակերտ կորողներ, գեղեցիկ ու վեհարվեստ և գրականություն... ներեցեք, բայց սա ոչ միայն թույլ, այլև միջին ուժականության ազգային հավաքականության իսկ գործ չէ. սա հավատքով ու ոգով գորեղ ժողովրդի պատմություն

Է: Որտեղի՞ց է, ո՞ւր գնաց այդ ուժը, որից այժմ զրկված՝ ուժասպառ և մոլորված, հետզիետե տկարանում, թուլանում և սպառվում ենք: Եվ ինչպես հետ բերենք այդ ուժը, արժանանանք դրան, որ դադարենք սեփական պարտքից փախչող, այսինքն՝ ոչ միայն մեր անելիքներից ու տալիքներից խուսափող, այլև ուրիշների՝ մեզ տվածը գողացող, մեր տունը փչացնող, մեր կյանքը ապականող, միմյանց դեմ դավեր նյութող թշվառականներ դառնալուց. դադարենք ուրացող, արհամարհող և հաճախ նույնիսկ թշնամի լինելուց համամարդկային չափանիշներով անգամ բարձր գնահատված մեր ազգային արժեքների նկատմամբ, որպեսզի մաքրվենք, առողջանանք, ինաստնանանք և հզորանանք, աճենք, բարգավաճենք ու ընդմիշտ արժանի լինենք վայելելու մեր հայրենի երկիրը, մեր ազատությունը, մեր լեզուն, մեր Աստվածատուր տաղանդի հոգևոր և ձեռագործ արյունքները:

Ո՞ւր է հասցրել մեզ այս ընթացքը և ո՞ւր է շարունակում տանել. ի՞նչ պետք է ասել և ի՞նչ պետք է անել, որ իրերն իրենց անուններով կոչվեն ի վերջո ու արժևորվեն ճշմարտորեն, և փնտրենք ու գտնենք մեր իսկական իիմքերը և հենվենք ու կառուցենք դրանց վրա և ընթանանք ճիշտ ուղղությամբ, մեր մեծերի, մեր սրբերի դավանած արժեքներին պատշաճ մթնոլորտում, որից հետո ազգային անվտանգ, պատվավոր և բարգավաճ գոյության ապահովումը ժամանակի հարց կլինի միայն:

Սակայն մինչ այդ շատ կարևոր է, որ լրջորեն հաշիվ տանք մեզ, որ մեր ներկա ընթացքը հասցրել է մեզ ստրկության և շարունակում է տանել ստրկահոգության, այսինքն՝ բարոյական ու ֆիզիկական վախճանի: Որովհետև ստրկական վիճակը՝ իբրև ազգային, քաղաքական, ընկերային և տնտեսական կարգավիճակ, դեռ ի գորու չէ բացարձակապես ստրկացնելու անձը և հասարակությունը. իրական, բացարձակ ստրկությունը սկսվում է ստրկամտությամբ և ավարտվում է ստրկահոգությամբ: Անձն ազատ է, եթե ստրուկ չէ հոգին: Ազատ հոգին, իր հերթին, հզոր գործոն է ստրկացած մտքի ազատա-

գրման համար, իսկ երբ ազատ է նաև միտքը, անձի կամ ազգի ստրկական կարգավիճակը դառնում է ժամանակավոր, ու լիակատար ազատագրումն իր բոլոր հետևանքներով՝ ժամանակի հարց միայն: Միևնույն տրամաբանությամբ, բոլոր այն դեպքերում, երբ ստրկամտության ախտը վարակելով միտքը՝ ախտահարում է և հոգին, ախտահարման աստիճանին համապատասխան նվազում և մինչև իսկ գրոյի է հասնում ազգի հոգեբարոյական վարակամերժ ունակությունը (իմունիտետը՝ ազատագրման հույսն ու կարողությունը: Ազատ կացությունը՝ ազատ մտքի, իսկ ազատ միտքը ազատ հոգու վրա կարող է հենվել միայն: Ուրեմն, վերջին հաշվով, ազատության հիմքն ու նախապայմանն ազատ հոգին է: Ազատ հոգու պահպանումը, փաստորեն, ազատ կեցության պահպանումն է, այսինքն՝ ազատության ձեռքբերման և պահպանման առաջնահերթ ու կարևորագույն գործոնը. հոգու ազատություն, որի առկայությամբ միայն կարելի է ստանալ, ունենալ ազգային կենսունակ պետականություն ստեղծելու բացարձակ իրավունքը և անընկրկուն կարողությունը:

Իսկ ո՞րն է հոգու ազատության ակունքը: Պատասխանը դարձյալ մեկն է և աներկմիտ՝ Հավատքը: Հավատքը Աստուծոն նկատմամբ, Հավատքը Նրա բարության, արդարության և տիեզերական ու հավիտենական գորության նկատմամբ: Անմահ է անձը կամ ազգը, որի գոյությունը խարսխված է այս հավատքի վրա. նա ենթակա չէ հոգեկան ստրկացման, քանզի այդպիսի ստրկությունը մահ է, վախճանը Գոյի, անհարիր անմահության հավատքին. իսկ Աստծոն Հավատքով տոգորված կյանքն իրապես անվախճան է, քանզի դրա բովանդակությունն է Ազատ Հոգին: Հետևաբար, Աստծոն Հավատքը կրող անձը կամ ազգն Ազատ Հոգի ունի. Եթե Ազատ Հոգի ունի, ստրկություն չի կարող ճանաչել. Եթե ստրկություն չի ճանաչում, Անմահ է նա: *Սիա թե ինչու են մեր նախահայրերը մեռել՝ ապրելու համար:* Հավատո՞ւմ ենք դրան, հավատո՞ւմ ենք, որ Վարդանանք Անմահ են, այսինքն՝ ապրում են իրական կյանքով՝ Տիեզերական ու Հավիտենական կատարելության կյանքով, և ոչ թե մեր

մտապատկերներում սոսկ, գրական կերպարներ իբրև, և կամ որպես քարոզության միջոց: Եթե հավատում ենք սրան, ապա պետք է հավատանք նաև, որ Աստված շնորհեց նրանց այդ կյանքը իրենց Հավատքի միջոցով, որով կարողացան ազատ պահել Հոգին: Եվ այդ իսկ պահից Անմահ էին նրանք արդեն, քանզի մերժեցին ստրկությունը, այսինքն՝ Մահը. Ազատ Հոգով ազատ պահեցին իրենց մտքերը. Ազատ Հոգու և Ազատ Մտքի թելադրանքով ընդունեցին նրանք Գիտակցական Մահը, այսինքն՝ հրաժարումը հոգևոր ստրկությունից, հետևաբար և անմահությունը՝ ըստ Աստվածային բնության, որ նրանք ճանաչեցին Հիսուս Քրիստոսի Ավետարանով ու Խաչով:

Չե՞նք հավատում սրան, ո՞ւր է, հապա ո՞րն է ճշմարտությունը... Հավատում ենք, սակայն սոսկ իբրև օգտակար մտահանգում, այլ ոչ իբրև բացարձակ ճշմարտություն: Այդ դեպքում ինչո՞ւ այդ «օգտակար մտահանգումը» օգտակար արդյունք չի տալիս:

Որովհետև սխալ է ու հակասական նմանօրինակ մոտեցումը: Այն, ինչ ճշմարիտ չէ, չի կարող օգտակար լինել. այն կարող է երբեմն թվալ օգտակար, բայց չի կարող օգտակար լինել գործնականում իր արդյունքով և մանավանդ տևականորեն: Եվ վերջապես, եթե հավատում ենք դրա թե՛ ճշմարտացիությանը և թե՛ օգտակարությանը, ապա ինչո՞ւ չենք որդեգրում գաղափարը՝ իբրև գործունեության ուղեցույց, ի գիտություն և ի գործադրումն: Անհավատը տեսածին է հավատում, հավատացյալը՝ չտեսածին, բայց մի՞թե իրականում տեսնելու բան չկա:

Ֆիզիկապես, այո՛, չկա, բայց կա հոգեպես: Անհավատը չունի հոգու աչքեր, որ տեսնի այն, ինչ գոյություն ունի հավատացյալի համար:

Պատանքներ հագնենք իհմիկվանից, այլ ոչ թե վերջին պահին, ինչպես Սարդարապատ կռվելու գնացող էջմիածնական միաբանները: Պատանքներ հագնենք մեր մարմնի վրա ժամանակ առ ժամանակ և մշտապես՝ մեր մտքի մեջ, որպես

խորհուրդ, որպես հիշեցում, որպես դաստիարակություն և... հոգեկան մարզում:

Եթե պատաճըներ հագներ ոչ թե ազգի հազարից մեկը, այն էլ ոչ թե օրիասական պահին՝ արյունաքամ ու անպաշտպան Երևանի նախադրութ Սարդարապատում, այլ հագած լինեինք մինչ Սարդարապատը՝ Կարինում կամ Կարսի բերդում... Եվ դեռ դրանից շատ առաջ, 1878 թվականից էլ շատ առաջ, և հագած լիներ ազգի գոնե մեծ մասը և ամբողջապես նրանց գլխավորությամբ, ովքեր պարտավոր էին այս մայրուղով ազգի ընթացքը պատշաճորեն առաջնորդելու ու նաև անձնական օրինակ ծառայելու ազգի համար: Այն ժամանակ կունենայինք մեր ազգային Մայիսը, ոչ թե հանկարծակի, շվարած, արյունաքամ վիճակում, շատ տեսակետներից անկենսունակ, մեկուսացած հողապատաժիկի վրա, այլ կունենայինք գիտակցորեն նախապատրաստված Մայիսը մեր հայրենի հզոր ու կենսունակ տարածքի վրա և համապատասխան որակական ու քանակական մեր ներկայությամբ, այն պաշտպանելու, հարաճունորեն զարգացնելու կարողությամբ և չինք ապրի ֆիզիկական ու բարոյական ազգային ողբերգությունը:

Պատաճք կարող է հագնել հոգու պարտք զգացող հայը, և քանի որ այդ պատաճումը հոգու հասկացողությամբ է, ապա դա նահիվան հագուստ չէ, այլ կյանքի, իսկակա՞ն, լիարժե՞ք կյանքի... Ու այժմ էլ, եթե այդ պատաճը հագնենք բոլորս և առանց սպասելու «տասնմեկերրորդ ժամի» (Վերջին պահի) ազդին՝ յուրաքանչյուրս լծվենք նախ և առաջ սեփական պարտականություններն ազնվորեն կատարելուն, այդ դեպքում մեր ազգային գոյությունն այժմյան հարցականի փոխարեն կստանա հաստատուն և կենսատու կյանքի հարատև երաշխիքը:

### **Եզրափակենք:**

Անձի, ազգի Ազատությունը պայմանավորված է հոգու ազատությամբ, հոգու Ազատությունը պայմանավորված է Աստծոն Հավատքով. հայ ազգի համար Աստծոն Հավատքը Հիսուս Քրիստոսի Ավետարանի Հավատքն է՝ Վարդանանց Անմահության և մեր այսօրվա ու վաղվա գոյության աղբյուրը. այդ աղ-

բյուրը տվել ու կրկին կարող է կյանք տալ մեզ. այդ աղբյուրում ցողված դրոշն է, որ կարող է մեզ առաջնորդել կերտելու մեր ազատ, ապահով ու բարգավաճ ազգապետությունը:

#### Անելիքնե՞րը:

- Վերանայումը մեր ազգի կենաց ընթացքի, որն ակներևորեն շենչել է բնականոն հունից:
- Վերանայումը մեր ազգային կառույցների և նրանց պարտավորությունների համակարգի:
- Վերանայումը հայ անհատի և մանավանդ հայ առաջնորդի պարտավորությունների դրույթների և գործունեության գնահատման չափանիշների:
- Վերանայումը այսօրվա մեր ընդհանուր վերաբերմունքի՝ ազգային ներկա և հեռանկարային խնդիրների նկատմամբ:
- Վերանայումը ազգի ու հայրենիք Հայաստանի նկատմամբ մեր պարտավորությունների չափերի, ծևերի և միջոցների:

Այս և նման վերանայումներն են, որ կառաջացնեն անհրաժեշտ փոփոխություններ մեր ազգային հոգեկան, գաղափարական, բարոյական վիճակի ըմբռնումների, ազգային հասարակական-քաղաքական հասկացությունների, ընկերային հարցերի մոտեցման և քաղաքացիական պարտաճանաչության մեջ, ինչպես նաև ազգային «մեծ» ու «փոքր», «առաջնային» ու «երկրորդական», «տեղական» ու «ընդհանրական» հարցերի և գործերի արժևորման մեջ՝ ստեղծելով ՊԵՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՆՔՍԱԲՈՒԽ ՈՒ ԱԶՆԻՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ, անկախ նրանից, թե տվյալ պահին ունե՞նք ազգային իրավական պետություն և կամ Հայաստանո՞ւմ ենք ապրում, թե՝ ոչ:

Ումի՞ց պետք է սկսվեն նշված վերանայումներն ու փոփոխությունները: Մեր կարծիքով, սկիզբը պետք է դնեն և իրենց խոսքով ու գործով օրինակ ծառայեն ազգային Ազատ Ոգին կրող, ազգի գիտակցությունն ու խիդճն ունեցող հայ անձերը և ազգային կառույցները:

Այս հարցում, նախաձեռնողների առաջապահների որպես, մեր հայացքները պետք է ուղղված լինեին նախ և առաջ Դայ Ազատ Եկեղեցու՝ մեր կողերի և ապա ազգային Ոգին կրող հայ աշխարհիկ մտավորականի ու ազգային գործչի վրա: Սակայն իրականում կարո՞ղ ենք այդ անել: Կարո՞ղ ենք նրանցից իրապաշտորեն ակնկալել վերոհիշյալ վերանայումների ու փոփոխությունների սկզբնավորման նախաձեռնությունը և մանավանդ իրենց կյանքով ու գործունեությամբ օրինակ ծառայելը... Այս պայմաններում մնում է, որ յուրաքանչյուրը քննի իրեն, ու եթե իր ազգային գիտակցությունը և Աստծո առաջ խիղճը թելադրում են իրեն, որ ինքը պարտավոր է և կարող է սկսողներից մեկը լինել, թող վերափոխի իրեն և փնտորի իր նմաններին: Եթե ստացվի անհրաժեշտ քանակը այդ որակի անձանց, թող միանան և սկսեն ազգի վերակենդանացման գործը Աստծո օգնությամբ:

\*\*\*

**Գուցե տարօրինակ թվա՝ քառասումնեկ տարի առաջ (Եղբ դեռ Խորհրդային Միությունը կար, Դայրենիքից շատ ու շատ հեռու՝ ԱԱՆ-ում) սփյուռքյան պայմաններում գրածս այս հոդվածի գետեղումն այժմ՝ անկախ Դայաստանի Դանրապետությունում հրատարակվող այս գրքում, այն էլ որպես վերջաբան, այսինքն՝ սույն գրքի իմաստային բովանդակությունն ի մի բերող, ամփոփող նյութ ու գուցե նաև՝ ներկա վիճակից դուրս գալու ճանապարհ հուշող մի սկզբունքային ծրագրի նախագիծ:**

Այնուամենայնիվ, կարծիք առաջացավ, որ դրա վերահրապարակումը կարող է այսօր էլ հետաքրքրական ու շահեկան լինել: Մանավանդ որ, ըստ երևութին, անհրաժեշտ քիչ դասեր ենք քաղել նաև անկախության անցած տարիների ընթացքում:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրի կողմից .....	5
Նախաբանի փոխարեն. Ե՞րբ և որ դեպքում է հնչեցվում համազգային ահազանգը .....	13
 ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
<b>ԱՐԱՏՆԵՐ, ԹԵՐԱՑՈՒՄՆԵՐ</b>	
ԱՐԱՋԱԾՎ Ազգի ու հայրենիքի գոյության վտանգի և ԿՈՉ Հավատքի՝ ազգային կենարար ժառանգության վերահաս- տատաման ու վերակիրառման.....	18
Կարևոր պարզաբանումներ .....	21
Ի՞նչ կարծատեսություն ու անշնորհիակալություն .....	22
Ո՞վ, ովքե՞ր .....	23
Եական խնդիրների տրամաբանություն .....	24
Գոյություն ունեցող մեծ բաժանումը .....	25
Արդյո՞ք «զարգացման» վայրընթացի մեջ չենք .....	29
Կողմնացույցների ճշգրտության հարց .....	32
Նախապատրաստված նավաբեկումներ .....	35
Դու ո՞վ ես, որ... .....	36
Ո՞ր լեզուն ենք ընդունում, հասկանում .....	37
Լրացնող կրկնություն .....	38
Մարդկության կյանքը զարթո՞նք է պահանջում .....	39
Հպանցյալ դիտարկում .....	41
Մուտքացիա .....	42
Կատարվածի հավատքով ընկալումը՝ հայկականություն .....	43
Հայկականություն .....	45
Հուշարձաններ՝ առանց հուշերի .....	51
Մեր պատմության և ինքնության կողոպուտը կասեցնել է պետք	

ԱՇԽ, մեր պատմությունը .....	52
Առաջ Ենք գնում, տեղբայլ անում, թե՞ հետ Ենք շպրտվում ...	54
Թունավոր «քաղցրություն» .....	56
Պատրանք մահաբեր .....	59
Ազգը մի՞թե հիանոսի մեջ է .....	60
Ապրել ո՞ր բարոյական արժեքներով .....	63
Երկուսից ո՞րն է ճիշտ .....	65
Հայտնություն Նոյին .....	67
Երաշխիք գիտության .....	68
Սնունդ. ախտահարող և տկարացնո՞ղ, թե՞ զորացնող .....	71
Չամտեսենք եականը .....	73
Կեղծ ու իսկական հոգեկանություն .....	75
Հայ մարդ, հայություն, Հայաստան, վեր կաց .....	79
Եվ դարձյալ ազգային հոգեբարոյական առողջապահության մասին .....	80
Զեական հավատքը՝ առավել վատ, քան անհավատությունը, իսկ շահադիտական հավատքը՝ ծայրահեղ անկում .....	81
Մեղքը տկարացնող ուժ է .....	83
Հոգու և մտքի զգաստացում .....	85
Եթե ճիշտ է, ապա պետք է կատարել .....	88
Եթե հոգիդ և միտքդ արձագանքում են, ինչպե՞ս զսպես ու լրես «Կոփշա»՝ տանիք .....	91
Մտքեր՝ իին ու նոր .....	96
Եվս մեկ ահազանգ .....	99
Հայաստանյան հեռուստատեսային հաղորդումների խորք արտահայտությունները .....	102
Մի պահ, երբ տրամաբանությունն առկա է .....	107
Ի՞նչ կլինի, եթե... .....	109
Մտքեր և հաղցեր մարդու իրավունքների պաշտպանության	

---

մասին .....	112
Սրափիվել, զգաստանալ .....	114
Մերժելի են բոլոր չարիքները .....	116
Երեսպաշտությունը՝ երեպաշտությամբ. զարգացած երկրներ, բայց ո՞ր հարցում .....	119
Իրավ ճանապարհ ու անելիքներ .....	124
	126

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ԶԳՈՒՇԱՆԱԼ ՏՐՈՅԱԿԱՆ ԶԻՌԻՑ

Լույս՝ իրական և կեղծ, կենսատու և կորստաբեր .....	132
Աստծուց վախենալ և մարդկանցից ամաչել .....	134
Աստուծու և մարդու մասին .....	136
Կուրություն .....	138
Աներևույթ առաջադիմական նվաճումներ, որոնք իրականում պիդ են ու կորստաբեր .....	149
Նենգություն .....	151
Դեպի հոգևոր հավատարմություն .....	153
Մենք հանդիպեցինք թշնամուն՝ չարին, և ճանաչեցինք. այն մեր մեջ էր .....	154
Ներազգային թշնամություն .....	157
Էական, կենսական վաղեմի հարց .....	159
Մշակութային ինքնասպանություն՝ մեր անտարբերությա՞մբ, թշնամիների դրդմա՞մբ, թե՞ այլ փորձությամբ .....	162
Լսելով՝ իմ հոգին ալեկոծվեց, և մտածեցի .....	164
Փորձանքներից ամենամեծը .....	174
Այս լուսավորյալ հորջորջվող դարն ու դարաշրջանը .....	175
Դոգլու բալանս՝ հաշվեկշիռ .....	178
ՍՏԵՂԾԵԼՈՎ (աշխատել, մշակել, արտադրել) ԴԱՏՈՒՑՎԵԼ (սնվել, ածել ու բազմանալ), ԵՐԱՎԱԿԱՆԱԼ (սիրելով մերձա-	

Վորիհն) .....	180
Մեր մեծ բացը՝ ցավալի, անոթալի և կորստաբեր .....	183
Սիրելի հայ մարդ .....	185
Քրիստոնյա կոչվող հեթանոսներն ամենակորուսյալ հեթա- նոսներն են .....	187
Տպավորություն և խոհեր .....	189
Լինենք կողմնակից «աղվեսամիտ ռեալ փոլիթիքսի՝», թե՝ «Երկնային մանկամտության» .....	192
Ժողովրդավարություն .....	199
Բարոյականության մեր ազգային առանցքը .....	201
Ոչ միայն երգերը, պարերը, հագնվածքն ու կեցվածքը, այև խաղալիքնե՞րն էլ ընդդեմ մեր ինքնության .....	204
Նախքան ուտելն իմանալ, թե ո՞ւմ կողմից, ինչո՞ւ է եփված և ինչո՞ւ է մեզ ձրի տրվում .....	205
Գովազդ հարազատ, օգտակար և խորթ ու վճասակար .....	207
Գովազդ - պրոպագանդա .....	209
Բացահայտել և չեզոքացնել Գողիաքներին .....	211
Ո՞ւմ ձեռքին է .....	213
ԱՄԵՐԻԿԱՆСКИЙ ՊԻՐՈГ - Ամերիկյան կարկանդակ .....	214
Անարժան հնարքների կամ «Երեք մանեթանոց... ծիծաղի» մասին .....	217
Խորամանկ և դաժան դավադրություն .....	218
Արյոյք եականը չի՝ վրիպում մեր ուշադրությունից .....	220
Ազգային հաղորդակցության հեռուստատեսություն .....	221
Մարդը մինչև ո՞ւր կարող է հասնել .....	225
Տեսա, լսեցի, վրդովվեցի, մտածեցի և հարցերով լցվեցի. հոգիս ճչաց .....	227
Հստակեցում, գնահատում, դասակարգում ու ըստ այնմ՝ որոշում .....	229

---

Հոգևոր դիմադրություն և հաղթանակ .....	234
Կառուցում առանց Աստուծոն և Աստուծոն դեմ .....	236
Յայ ազգային ու հոգևոր ինքնության գիտակցություն և հավատարմություն .....	238
Յայ հոգևոր, գաղափարական և բարոյական զգոնություն .....	242
Ինչո՞վ են զբաղված մեր միտքն ու սիրտը .....	244
Թող նորից ու նորից ասվի .....	245
Արագ ու անհրաժեշտ անդրադարձ մեր ինքնությանը .....	247

#### ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

##### **ՄԵՐ ՓՈԽՎԵԼԸ՝ ՄԵՐ ԼԻՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ**

Ինչպե՞ս հարցի կարևորությունը .....	250
Մենք չգիտե՞նք, չենք ճանաչում մեզ .....	252
Պատասխանատվության թելադրանք .....	254
«Ազգային հաշվապահության ու առողջապահության մասին» մասին .....	257
Մեր այս վիճակն արդյունք է անհոգությա՞ն, դասալքությա՞ն, ուրացումի ու դավաճանությա՞ն .....	259
Ներքին ազատագրական պայքար .....	261
Մեր Աստվածաշնորհ ինքնությունը .....	262
Յուղաբեր կանայք .....	264
Յավատարմությունը հոգևոր ինքնությանը՝ փրկություն .....	265
Ե՞րբ է հայը հայ .....	268
Յաշվեկշիռ՝ բալանս .....	269
Վիճակ .....	271
Տոհմիկը, նորը և հավերժականը .....	273
Աստվածանաչումը մեծագույն գիտություն՝ գերգիտություն և գոյության պայման-երաշխիք .....	278
Մեր սրտերի փափկեցումը՝ կենսական անհրաժեշտություն .....	282
Շատերը կիամաձայնեն, բայց այդ մասին չի խոսվում .....	284

Հավատքով հայրենասիրություն .....	286
Խսկական ու հարատև գորություն, ազատություն, հարստություն ու երջանկություն .....	288
<b>ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ</b>	
<b>ՎԵՐԱԿԱՐՁ ԱԿՈՒՍՔՆԵՐԻՆ</b>	
(Չափորոշիչների ուրվագծում և փարոսների տեղորոշում)	
Ազգի, հասարակության բարոյաքանությունը և հոգեքամությունը .....	292
Խսկական ու լիակատար ապաքինում .....	295
Վիրուս, ախտ, սրբապղծություն և փրկություն .....	297
Կորոնավիրուսը 2020 թվականին .....	300
Համաճարակի պատճառի ճանաչումը՝ օգտակար, հաղթական .....	303
Հոգևոր վերակենդանացում .....	306
Ծանեա՝ զքեզ .....	308
Մեր ինքնությունը .....	309
Դիցուք, մի պահ .....	313
Կայացում .....	315
Ավետարանի խոսքը՝ կողմնորոշող շնորհ և փրկություն .....	317
Հասկանանք .....	319
Ո՞ր վերածնունդը, ինչի՞ վերածնունդ .....	321
Էական հասկացողություն ու ըմբռնում .....	323
Էական հարցը դրված՝ է ազգային սեղանին .....	325
Մեր առջև դրված՝ չենք տեսնում .....	327
Մեծ իրադարձության՝ շատ կարճ անդրադարձ .....	329
Խոսքն իսկականի մասին է .....	330
Ինչի մասին՝ ինչն ենք մոռացել .....	331
Հայոց հերոսների ու հերոսությունների օրինակը հիմք՝ հայ սերունդների ազգային դաստիարակության, որով՝ հոգևոր և	

---

Մտավոր զարգացման ու առողջ կենցաղավարության .....	334
Հայ հերոսներ, ովքեր պետք է ճանաչվեն. նրանց կերպարը և կյանքի օրինակն ազգային թանկարժեք ժառանգություն է .....	338
Խոսք .....	340
Աստվածային սիրով է կյանքը կենարար .....	344
Որոշ համեմատություններ ու եզրակացություններ .....	347
Յոգնոր սննդառություն .....	348
Յոգու (հոգեկան) օրգանիզմ .....	349
Եվ դարձյալ անդրադարձ նույն էական խնդրին .....	351
Դրական և բացասական իրականություն .....	355
Զանքե՞ր, այո՛, բայց ինչպիսի՞ և ինչի՞ համար .....	358
Խորհրդանիշ .....	363

## ԳԼՈՒԽ ՅԻՆԳԵՐՈՂԻ

### (Յավելված)

#### ԱՐԱՋԱՍԳ, ՈՐԸ ՉԵՆՔ ԼՍՈՒ (Մինչև Ե՞րբ ու մինչև ո՞ւր)

Անդրադարձ Արցախ-Ղարաբաղ հասկացությանը .....	367
Յուշագիր .....	368
Դրական, օգտակար փորձառություն .....	372
Յայ-ադրբեջանական հարաբերություններ .....	376
Մեղա՛... այս ինչ անամորություն է .....	378
Ծշմարտություն հանուն արդարության, հետևապես և խաղա- ղության ու բարգավաճման .....	384
Պանթութքական նացիզմի ծավալապաշտական վտանգը հա- րատն է .....	387
Սենատոր Զոն Մկլարին հանրապետական՝ Արիզոնայի նահան- գից (ընտրված) Զինված ուժերի կոմիտեի կոչումով անդամ .....	390
Յիշենք, նկատի ունենանք ու ըստ այնմ գործենք, ապրենք .....	391
Նահանջ կորուստներով. մինչև Ե՞րբ .....	392

---

Ազգային ծրագիր .....	394
Ազգային ճիշտ մոտեցում .....	395
Խսկական բարեփոխում .....	397
Միամտություն, թյուրիմացություն, խարկանք .....	398
Խորհրդային նախնական կայսրությունից ռուսամետության ազատագրումը, ռուսականացումը և հայությունն ու Հայա- տանը .....	404
Քաղաքականություն և սկզբունք .....	407
Մոսկվա՝, Մոսկվա՝ .....	409
Հարցերի հարցով ո՞ւմ ենք դիմում .....	410
Ինչո՞ւ է այսպես .....	411
Մեծ ու եական ճշմարտություն .....	415
Արագ, սակայն խորքային, համեստ հետևություններ .....	419
Լավը պետք է լավ՝ արվի, մինչև վերջ ու ամբողջական .....	421
Մշտարթուն գգոնությանք պաշտպանություն .....	426
Արժեհամակարգ .....	427
Հայկականության քաղաքական փիլիսոփայությունը .....	430
Նշանավոր փաստ, օգտաշատ օրինակ .....	435
ճշմարիտ ճանապարհ .....	435
Վերջաբանի փոխարեն. Ահազանգ զգաստության, վերա- ճանաչման ու վերահաստատման համար .....	437


Վարդան  
Գրիգորյան

# ԱՀԱԶԱՆ ՊԱՀԱՆՁ

ՀԱՅԿՅԱՆՔԻ  
զգաստության  
վերաճանաչման  
վերահաստատման

Հրատ. Խմբագիր՝ Ա. Սահակյան  
Համակարգչային Էջադրումը՝ Վ. Պապյանի

ISBN 978-5-8080-1501-2



9 785808 015012

Հրատ. պատվեր № 1220  
Ստորագրված է տպագրության՝ 06.02. 2023 թ.:  
Չափսը՝ 60 x 84 ¼, 28,5 տպագր. մամուլ:  
Տպաքանակը՝ 1000 օրինակ:  
Գիրքը վաճառքի ենթակա չէ:

ՀՀ ԳԱԱ տպարան,  
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: